

ԲԻԻԶԱՆԴԻ ԹՈՐԻԿԵԱՆ



Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ Ա Յ

Մ Ա Ր Մ Ն Ա Կ Ր Թ Ա Կ Ա Ն Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր
Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

Հ Ա Տ ՈՐ Ե Ր Կ Ր ՈՐ Դ

(1940-1974)

Պ Է Յ Ր Ո Ւ Թ
1999



ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲԵԱՆ
Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՍԿԱՌԻՏԱՊԵՏ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Սրտի գոհունակութեամբ հրատարակութեան կը յանձնենք ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱ-ԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ հատորներու շարքին ներկայ երկրորդ համարը:

Առաջին հատորի հրատարակութենէն ի վեր սահած են ուղիղ չորս տարիներ, որոնց ընթացքին մեր պրպտումները հանդիպեցան նիւթերու աղբիւրներուն մասնակի գոյութեան կամ դիմուած աղբիւրներու դանդաղութեան ու յաճախ գրուածը ստուգելու եւ վերստուգելու մեր բժախնդրութեան:

Այսուհանդերձ հատորը այժմ իրականացած է: Կը մնայ որ ընթերցողը, յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ական պատանի, երիտասարդ կամ նորօք ղեկավարութիւն ստանձնած սերունդը լաւապէս օգտուի անցեալի փորձառութիւնները պարփակող հատորի սինակներէն: Այ՛դ պարագային մենք մեզ վարձատրուած պիտի զգանք եւ արժանի՝ հատորի իրականացման համար ցոյց տրուած քաջալերանքին:

Հատորի յառաջաբանը կազմող այս տողերու արձանագրութեան առթիւ, պարտք կը համարենք հրապարակաւ մեր երախտագիտութիւնը յայտնելու Հ.Մ.Ը.Մ.ի Պատուարժան Կեդրոնական Վարչութեան իր ցուցաբերած մնայուն քաջալերանքին համար:

Փակելէ առաջ ներկայ յառաջաբանը յայտնենք, թէ այս աշխատանքը կը նուիրենք զոյգ Վարդգէսներու յիշատակին:

Հարապատ եղբօրս ՎԱՐԴԳԷՍ ԳԱՌՆԻԿ ԹՈՐԻԿԵԱՆԻՆ, իբրեւ ճիւնիի մասնաճիւղի հիմնադրութեան ձեռնարկողներու կրտսերագոյնը եւ եղբայր ՎԱՐԴԳԷՍ ԳՐԻԳՈՐ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻՆ, որուն հետ ամենասերտ գործակցութիւնը ունեցանք Միութիւնը Համագաղութային Կազմակերպութեան վերածելու ժամանակաշրջանէն, 1973էն սկսեալ, անդրանիկ Կեդրոնական Վարչութեան եւ յաջորդող զոյգ կազմերու անդամակցութեան եւ կազմակերպական աշխատանքներու պարգացման տասն չորս տարիներու ընթացքին մինչեւ իր նահատակութեան թուականը՝ 31 Յունուար 1986:

Բ. ԹՈՐԻԿԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ներկայ հատորի հրատարակութեան առթիւ մեր երախտագիտական
վզացումները կու գանք յայտնելու բոլոր անոնց, որոնք սիրայօժար կերպով
նպաստեցին անոր իրականացման:

Տեղեկութիւններ, վկայութիւններ եւ նկարներ տրամադրողներուն

Փարիզէն՝ Վարդիվառ Յովհաննէսեանին

Աթէնքէն՝ Կարպիս Գոյունձեանին

Հալէպէն՝ Չաւէն Սապունձեանին

Պէյրութէն՝ Վազգէն Տէր Ղուկասեանին

Արիւիներու դասաւորումին նպաստող՝ Մակի Խաչերեանին

Սրբագրիչ եւ խորհրդական՝ Տիրան Աղապարեանին

Հրատարակչական մարմնի մեր գործակիցներուն Միհրան Շիմշիրեանին եւ
Կարպիս Գապասագալեանին

Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնատեղիի քարտուղարութեան անդամուհիներուն՝ Թամար
Աբովեան-Խանձիհանեանին եւ Թամար Նահապետեանին:

Բ.Թ.

Ընթերցողը հատորին վերջաւորութեան պիտի գտնէ «Գործնական Թելադրանքներ
Ընթերցողին» խորագրով մեր բացատրողականը, ուր յիշուած են հատորին մէջ
օգտագործուած աղբիւրներու թուագրումի ձեւերը:

ՆԻՄՇՆԱԿՆԵՐ

Հանրապետության Կոմկուսի կենտրոնը, ընդհանուր թվով, հարյուրամյակի ընթացքում անցել է մեծ փոփոխությունների և զարգացումների: Ստեղծվել են նոր կազմակերպություններ, փակվել են անհարկույթներ:

Որպեսզի քննարկենք նոր կազմակերպությունների ստեղծման և փակման հարցերը, հարկ է խոսել Կոմկուսի կենտրոնի կազմակերպության մասին:

Քանի որ կենտրոնը մեծ է, ապա հարկ է խոսել նաև նրա կազմակերպության մասին:

Քանի որ կենտրոնը մեծ է, ապա հարկ է խոսել նաև նրա կազմակերպության մասին:

Քանի որ կենտրոնը մեծ է, ապա հարկ է խոսել նաև նրա կազմակերպության մասին:

Քանի որ կենտրոնը մեծ է, ապա հարկ է խոսել նաև նրա կազմակերպության մասին:

Քանի որ կենտրոնը մեծ է, ապա հարկ է խոսել նաև նրա կազմակերպության մասին:

Քանի որ կենտրոնը մեծ է, ապա հարկ է խոսել նաև նրա կազմակերպության մասին:

Քանի որ կենտրոնը մեծ է, ապա հարկ է խոսել նաև նրա կազմակերպության մասին:

Քանի որ կենտրոնը մեծ է, ապա հարկ է խոսել նաև նրա կազմակերպության մասին:

Քանի որ կենտրոնը մեծ է, ապա հարկ է խոսել նաև նրա կազմակերպության մասին:

Քանի որ կենտրոնը մեծ է, ապա հարկ է խոսել նաև նրա կազմակերպության մասին:

Քանի որ կենտրոնը մեծ է, ապա հարկ է խոսել նաև նրա կազմակերպության մասին:

Ա. ՄԱՍ

ԴԱԴՐԱԾ ԵՒ ՓՈԽԱԿԵՐՊՈՒԱԾ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

– ՆԵՐԱԾԱԿԱՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Համաշխարհային Երկրորդ Պատերազմը, իր ընդհանուր բնույթով, ճակատագրական հետեւանք ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհատարած բոլոր մասնաճիւղերուն զանազան գործունէութեանց վրայ:

Ընդհանուր պատերազմը ծայր տուաւ Գերմանիոյ կողմէ Լեհաստանի գրաւումով՝ Սեպտեմբեր 1939ին, շուտով տարածուելու համար եւրոպական գրեթէ բոլոր երկիրներուն վրայ: Գերմանիա-Իտալիա դաշնակցային առանցքը ձեւով մը երկուքի բաժնեց եւրոպական աշխարհամասը:

Ֆրանսան, իբրեւ Եւրոպայի մէջ գործող Հ.Մ.Ը.Մ-ական կենսունակ շրջան, գերմանական գրաւումով անդամալուծուեցաւ: Մայրաքաղաքի եւ արուարձաններու Հ.Մ.Ը.Մ-ականներ, որոնք չէին ծառայեր բանակին մէջ, ցրուեցան երկրի զանազան շրջանները, յատկապէս հարաւային եւ արեւմտեան փոքր քաղաքները, եւ կապը խզուեցաւ իրենց միջեւ:

Եւրոպական այլ երկիրներու մասնաճիւղեր, ինչպէս Պելճիքա եւ Աւստրիա, ամբողջութեամբ դադրեցան գործելէ եւ ցրուեցան: Արեւելեան Եւրոպայի մէջ՝ Պոլկարիոյ եւ Ռումանիոյ վարչակարգերուն դէպի սովետականացում թեքումը հետզհետէ կասեցուց միութեանական ամէն գործունէութիւն: Յունաստանի Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութիւնը անհամեմատ տկարացաւ: Օրուան քաղաքական պահանջներուն ենթակայ՝ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերու պատասխանատուները ստիպուեցան քայլ պահել տեղական պայմաններուն հետ եւ դադրեցան գործելէ:

Ամերիկեան աշխարհամասի երկիրներու մասնաճիւղերը, եթէ ուղղակի չ'ենթարկուեցան պատերազմական թոհուբոհին, տնտեսական ծանր պայմաններու բերումով իրենց գործունէութիւնը սահմանափակեցին: Ոմանք գրեթէ դադրեցան

գործելէ եւ հայ ժողովուրդի քաղաքական դիրքորոշումներու պարտադրանքով անջատողական ուղիներ որդեգրեցին: Եղան վայրեր, ուր զոյգ Հ.Մ.Ը.Մ-ներու կարճատեւ գործունէութիւն արձանագրուեցաւ: Ուրիշներ պահեցին իրենց անուանական գոյութիւնը, նախկին արտօնատէրերու իրաւասութեամբ, առանց որեւէ գործունէութեան: Ամերիկեան աշխարհամասի վրայ վերոյիշեալ կացութիւնէն զերծ մնաց միայն Արժանթինի Պուէնոս Այրէսի մասնաճիւղը, որ իր հիմնադրութեան օրերէն սկսեալ հետզհետէ յառաջդիմեց, պահելով իր զուտ Հ.Մ.Ը.Մ-ական նկարգիրը եւ գործելակերպը:

Վերոյիշեալ շրջաններէն դուրս, Մերձաւոր Արեւելքի մասնաճիւղերն են, որոնք ո՛չ միայն իրենց գոյութիւնը պահեցին, այլ իրենց ցանցը տարածեցին, հաստատուելով Սուրիոյ եւ Լիբանանի զանազան քաղաքներու եւ գիւղաքաղաքներու մէջ: Պաղեստինն ու Յորդանանն ալ իրենց գործունէութիւնը շարունակեցին նոյն ձեւով: Իսկ Ֆրանսայի եւ Միացեալ Նահանգներու մէջ կարգ մը մասնաճիւղեր վերընձիւղման շրջաններ բոլորեցին:

Արդ՝ ներկայ հատորի բովանդակութեան մաս պիտի կազմեն Սուրիոյ, Լիբանանի, Յորդանանի, Պաղեստին, Յունաստանի, Ֆրանսայի, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաներու Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղային եւ շրջանային գործունէութիւնները՝ իբր հետեւողութիւն առաջին հատորի:

Ներկայ հատորին մէջ նաեւ տեղ պիտի գրաւեն 1940-1974 ժամանակաշրջանի ընթացքին նոր հիմնադրուած մասնաճիւղեր եւ շրջաններու կազմաւորումներ, ինչպէս՝ Իրաք, Գանատա եւ Աւստրալիա:

Պիտի արձանագրենք նաեւ պայմաններու բերումով դադրած կամ կառուցային եւ կազմակերպչական իմաստով փոխակերպուած Հ.Մ.Ը.Մ-ական շրջաններու եւ մասնաճիւղերու գործունէութիւնները, պահելով ժամանակագրական շարքը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԴԱԴՐԱԾ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ

- ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ
- ՖՐԱՆՍԱ
- ՊՈՒԼԿԱՐԻԱ
- ՌՈՒՄԱՆԻԱ
- ԼԻԲԱՆԱՆ

Նախորդ գլուխով, ընդհանուր գիծերու մէջ տեսանք Համաշխարհային Բ. պատերազմին պատճառով Հ.Մ.Ը.Մ.ի զանազան շրջաններու գործունէութեանց խափանուիլն ու դադրիլը:

Ներկայ գլուխին տակ պիտի տեսնենք այդ շրջաններու գործունէութեանց դադրեցման զանազան փուլերը, պատճառները, հետեւանքներն ու վերջնական իրավիճակները, հետեւելով իրենց հիմնադրութեան ժամանակագրական շարքին:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

1940էն առաջ, Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ գործած են տասնեակ մը Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր, որոնցմէ Ուեսթ Հոպոքըն, Գամտէն եւ Բաթերսոն, Նիւ Եորքի մօտակայ շրջաններու մէջ գործած են քսանական թուականներէն մինչեւ Համաշխարհային Բ. Ընդհանուր Պատերազմ: Այս շրջանները, ուր հայեր կեդրոնացած էին ճարտարարուեստական կեդրոններու մէջ գործելու համար, 1940ական թուականներուն սկիզբը հետզհետէ նօսրացան՝ զինուորագրութեան, տնտեսական կացութեան կամ այլ պատճառներով: Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերն ալ այս վայրերուն մէջ դադրեցան գործելէ:

Արեւելեան Մ. Նահանգներու գլխաւոր քաղաքներէն՝ Նիւ Եորք, Ֆիլատելֆիա, Պոսթըն, Բրոքլիտէնս, իսկ արեւմտեան շրջանէն՝ Լոս Անճելըս եւ Սան Ֆրանսիսքօ պահ մը եւս պահեցին իրենց գոյութիւնը: Սակայն, շրջանային կառույցի մը շուրջ (Նիւ Եորքի մասնաճիւղի որակումով՝ կեդրոն) իրենց բոլորուիլն ու գործակցութիւնը ենթակայ դարձան ներքին կուսակցական կամ քաղաքական դիրքորոշումներու պատճառած անհասկացողութեանց:

Իւրաքանչիւր քաղաքի մէջ Հ.Մ.Ը.Մ. գործեց անջատաբար: Ոմանք, պահելով հանդերձ Հ.Մ.Ը.Մ. անունը, հեռու մնացին հիմնադիրներու գաղափարական ուղեգիծէն, իսկ ուրիշներ իրենց մարդուժն ու մարզական խումբերը լու-

ծեցին Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան (A.Y.F.) կազմակերպութեան մէջ, որ իր կարգին մարզական լայնատարած եւ կարեւոր գործունէութիւն պիտի ունենար Միացեալ Նահանգներու հայաշատ կեդրոններէն ներս, տասնամեակներ շարունակ:

1951ին, Մեքսիքոյի մէջ Քերոբ Առաքելեանի նախաձեռնութեամբ կը կազմուի «Հայ Մարմնակրթասիրաց Միութիւն»ը, որուն առաջադրանքն էր Հիւսիսային Ամերիկայի հայաշատ քաղաքներուն մէջ Հ.Մ.Ը.Մ.ի ծանօթացումը եւ մասնաճիւղերու հիմնումը՝ Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանային Վարչութեան հետ խամախորհուրդ: Հետագային այս նախաձեռնութիւնները ճամբայ պիտի հարթէին Միացեալ Նահանգներու մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու վերընձիւղման:

Հայ Մարմնակրթասիրաց Միութեան գործունէութեան մասին մանրամասն պիտի անդրադառնանք Բ. մասի տասներեքերորդ գլուխին տակ:

ՖՐԱՆՍԱ

Ֆրանսայի մէջ, ժամանակի ընթացքին եւ գործի բերմամբ տեղափոխութիւններու պատճառով, հայկական փոքր կեդրոնացումները կը տկարանան: Այս տկարացման պատճառ կը դառնայ նաեւ 1930ական թուականներու միջազգային տնտեսական տագնապը: Ֆրանսայի հայութիւնը կը հաւաքուի համեմատաբար աւելի կարեւոր կեդրոններու շուրջ, յատկապէս միջին եւ հարաւային Ֆրանսայի մէջ:

Բ. Աշխարհամարտի տարիներուն, գերմանական գրաւման պատճառով, Փարիզի եւ արուարձաններու մասնաճիւղերը կը դադրին գործելէ: Նոյնիսկ զինադադարէն ետք, Փարիզի արուարձաններու աւելի քան տասնեակ մը մասնաճիւղեր չվերակազմուեցան: Փարիզի մօտակայ Ալֆորվիլը պահեց իր Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը, սակայն առանց շրջանային կառույցի մը կապուածութեան:

Այսպէսով, 1939-1945 ժամանակաշրջանէն ետք, Ֆրանսայի տարածքին Հ.Մ.Ը.Մ-ի անունով գործող խումբեր մնացին Մարսէյի, Տեսինի, Լիոնի, Վալանսի, Վիէնի եւ Ալֆորվիլի մէջ:

Մնացեալ բոլոր մեծ ու փոքր մասնաճիւղերը, եթէ յիշուէին անգամ, միայն անուանական գոյութիւններ եղան, առանց գործունէութեան: Միութեան յիսնամեակին առթիւ Գարլօ Շահինեանի եւ Գրիգոր Մերճանօֆի՝ Ֆրանսայի շրջանի վերակազմութեան ճիգերը անհետեւանք մնացին:

Միւս կողմէ, Գրիգոր Յակոբեանի առողջական անձուկ վիճակը չներեց իրեն հիմնական նախաձեռնութիւններու դիմելու: Անոր շուրջ բոլորուած երիտասարդ գործակիցները փորձեցին սկստական կարգ մը խումբերու կազմութեամբ վերականգնել Հ.Մ.Ը.Մ-ի անունը Ֆրանսայի տարածքին: Փորձերը, սակայն, շատ համեստ արդիւքներու յանգեցան: Այս ճիգերուն իրենց բաժինը բերին Վազգէն Անդրէասեան, Ժիրայր Մինթանճեան, Սերոբ Սերոբեան, Յովհաննէս Պապէսեան, Գառնիկ Յովհաննէսեան, Հայր Կ. Տէրմոյեան եւ ուրիշներ:

Հ.Մ.Ը.Մ. - Հայ Արի սկստական շարժումներու ղեկավարութիւններու միջեւ հակամարտութիւններն ալ իրենց կարգին տկարացուցին երկու կազմերու ձեռք բերած արդիւքները:

Հատորի Բ. մասի գլուխներուն տակ պիտի լսենք յետ-պատերազմեան Հ.Մ.Ը.Մ-ական գործունէութիւններու մասին, հոն՝ ուր անոնք իրենց գոյութիւնը պահեցին:

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Պուլկարիան 1940ին գրաւուեցաւ գերմանական ուժերու կողմէ եւ երկիրը մնայուն կրակամարի դրութեան մէջ մնաց մինչեւ 1945ի Համաշխարհային Բ. Ընդհանուր Պատերազմի զինադադարը: Գերման իշխանութիւնները, ինչպէս բոլոր գրաւուած երկիրներու պարագային, խիստ միջոցներով արգիլեցին քաղաքական, ազգային եւ ընկերային բոլոր ձեռնարկները: Այս

կարգի արգելքներ դրուեցան նաեւ մարզական կազմակերպութիւններու դէմ, ասոնց կարգին Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերը, որոնց շարքերը արդէն անհամեմատ նօսրացած էին զինուորագրուած երիտասարդներու բացակայութեամբ:

Առ այդ, Պուլկարիոյ մասնաճիւղերու ղեկավարութիւնը ինքնալուծարքի ենթարկեց իրեն ենթակայ բոլոր մասնաճիւղերը: Եթէ մնացին փոքր տարողութեամբ ֆուլթպուլի թաղային խումբեր, անոնք եւս 1945էն սկսեալ, վերջնականապէս դադրեցան գործելէ այս անգամ սովետական թեքումով իշխանութեանց հաստատումով:

Հետեւաբար՝ Բլովտիվ, Սոֆիա, Վառնա, Պուրկապ, Սլիվէն, Ռուսճուք, Շումէն եւ տակաւին փոքրագոյն մասնաճիւղեր՝ Թաթար Պազարճըք, Սթարա Զակորա, որոնք Բ. Աշխարհամարտի նախօրեակին իրենց գոյութիւնը կը պահէին, վերջնականապէս փակեցին իրենց դռները:

ՌՈՒՄԱՆԻԱ

Ռումանիոյ մէջ, Համաշխարհային Բ. Ընդհանուր Պատերազմի օրերուն, պետական վարչակարգը ենթարկուեցաւ նոյն հոլովոյթին, ինչպէս Պուլկարիոյ մէջ: Գերմանական գրաւումով, թագաւորութեան անկումով եւ տիքթաթորիայի հաստատումով հալածանքներու շարք մը կը սկսի ամէն կարգի ոչ ֆաշիստ կազմակերպութիւններու դէմ: Այս կարգին մէջ կ'իյնան, բնականաբար, ազգայնական գաղափարաբանութեամբ գործող Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերը, որոնք ծայրագոյն զգուշութեամբ կը դադրեցնեն ամէն ձեւի գործունէութիւն:

1945ին, սովետական կարգերու հաստատումն ալ նպաստաւոր պայմաններ չէր ընձեռներ, որպէսզի սակաւաթիւ նախկին Հ.Մ.Ը.Մ-ականներ մտածէին վերակազմել Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղեր: Պուքրէշի, Գոնսթանցայի, Սիլիսթրէի, Կալացի եւ Պազարճըքի երբեմնի մասնաճիւղերը արդէն դադրած էին գործելէ:

ՊԱԱԼՊԷՔ

Պատմական Պաալպէքը, Լիբանանի հիւսիս արեւելեան շրջանի փոքր աւանը, ունեցած է փոքրաթիւ հայերէ կազմուած գաղուժ մը, եւ որպէս Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ, անոր գործունէութիւնը եղած է եղանակային, կեդրոնացած մասնաւորապէս ամրան եղանակի ամիսներուն վրայ:

Այս պատճառով ալ Պաալպէքի մասնաճիւղի մասին կարելոր արձանագրութիւններ կը պակսին մեզի: Մերթ գործող ու մերթ դադրած այս մասնաճիւղը անգամ մը եւս ի յայտ կու գայ 13 Օգոստոս 1944ին, անդամական եւ սկաուտներու ծնողական հաւաքոյթով մը, ուր ներկայ կը գտնուի Շրջանային Վարչութեան ատենադպիրը՝ Վահրամ Կիւրճեան: Տեղւոյն վրայ, մասնաճիւղի վարչութեան անդամներ կը նշանակուին Յ. Քելլէճեանի ատենադպրութեամբ՝ Գրիգոր Պահչէճեան, Հ. Չամուրեան, Յ. Մարտիրոսեան եւ Յ. Սեմերճեան: Սկաուտական ճիւղը կը վարէ Գէորգ Բանճարճեան, որուն մեկնումէն ետք գործը կը վստահուի Սիսակ Չպուքճեանի, ապա՝ Գրիգոր Պահչէճեանի: Համաձայն 12 Դեկտեմբեր 1944 թուակիր տեղեկագրին, մասնաճիւղի սկաուտական կազմի թիւն է 19, իսկ մարզիկ եւ օժանդակ անդամներունը՝ 22: Այս եղանակին մասնաճիւղը կ'ունենայ՝ մուտք 421 սուրիական դահեկան, ելք՝ 294, պատրաստ գումար՝ 127 ս.դ.:

Ծանօթ է որ 1944ի ամառը, Համաշխարհային Բ. Պատերազմի նախավերջին ամառնային եղանակն է, երբ պէյրուժաբնակ հայութեան մեծամասնութիւնը, խուսափելու համար գերմանական եւ գործակից վիշիստ Ֆրանսայի ռմբակոծումներէն, կ'ապաստանէր լեռնային շրջանները, ձմրան վերադառնալու համար քաղաք:

1944էն ետք, Պաալպէքի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին մասին որեւէ արձանագրութեան չենք հանդիպիր:

ՌԱՅԱՔ

Հ.Մ.Ը.Մ.ի Ռայաքի մասնաճիւղը, իր հնգամեայ գոյութենէն ետք, գիւղի հայութեան մեծամասնութեան մեկնումին պատճառով անհամեմատ կը տկարանայ: 1940ին մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Միսաք Մահտէսեան, իսկ ատենադպիրը՝ Նուպար Թերզեան:

Այդ օրերուն, մասնաճիւղի պետական արտօնագրի ջնջումը պատճառ կը դառնայ, որպէսզի մասնաճիւղը վերջնականապէս դադրի գործելէ:

ՇԹՈՐԱ

Շթորան Լիբանանի Պեքաա նահանգի դաշտային աւաններէն մէկն է, որ կեդրոնական դիրք կը գրաւէ՝ գտնուելով նահանգի գիւղերուն եւ քաղաքներուն, ինչպէս նաեւ դէպի սուրիական մայրաքաղաք տանող մայրուղիներուն խաչմերուկին վրայ:

Ժամանակի ընթացքին փոքրաթիւ հայեր կայք հաստատած են հոն, ինչպէս մօտակայ Զահլէի եւ Այնճարի շրջաններուն մէջ:

1941ին, Շթորայի մէջ կարգ մը մարզասէր երիտասարդներ, գլխաւորութեամբ Մուշեղ Գուտուլեանի, կը հիմնեն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ եւ կը կազմեն Ֆուլթպոլի գոյգ խումբեր, գլխաւորաբար ամառնային շրջանին գիւղագնաց Հ.Մ.Ը.Մ.ականներու մասնակցութեամբ: Խումբերը կ'ունենան բարեկամական հանդիպումներ տեղացի խումբերու դէմ:

1944ին մասնաճիւղը կ'ունենայ ակումբ, որու բարեգարդման համար Պէյրուժի մասնաճիւղէն կը ստանայ գոյքեր եւ նկարներ:

Նոյն տարուան Զատիկական միջ-մասնաճիւղային խաղերուն Ֆուլթպոլի խումբը կը մասնակցի իբրեւ Բ. դասակարգի խումբ: Մասնաճիւղի գործունէութիւնը կը ծաւալի ամբողջ ամրան եղանակին: Մնացեալ եղանակներուն աշխատանքները երկար ամիսներու վրայ կը սառին եւ

սկսուած նոր նախաձեռնութիւններ կը մնան կիսաւարտ: Այս պատճառով ալ, Շթորայի Հ.Մ.Ը.Մ.ը կարեւոր նախաձեռնութիւններ չի կրնար իրականացնել մարզական գետնի վրայ:

1942ին, մասնաճիւղի պատգամաւոր Մուշեղ Գուտուլեան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Շրջանային Պատգամաւորական Նրդ ժողովին: Այս տարեշրջանի անդամներու թիւն է 23, ունին Ֆութպոլի 2 խումբեր: Շուտով ի յայտ կու գայ, որ զուտ տեղական ուժերը անբաւարար են իրականացնե-

լու համար Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղէ մը ակնկալուած գործունէութիւնը հետեւաբար, Շթորայի Հ.Մ.Ը.Մ.ը միայն համեստ գործունէութիւն մը կ'ունենայ, երկու կամ երեք եղանակներու վրայ երկարած:

1944ի Շրջանային Տրդ Պատգամաւորական ժողովին մասնաճիւղը բացակայ է, եւ Շրջանային Վարչութեան ղեկուցումէն ի յայտ կու գայ, թէ մասնաճիւղը նիւթական անբաղձալի վիճակ մը կը պարզէ եւ Շրջանային Վարչութեան հետ հաղորդակցութիւն գրեթէ գոյութիւն չունի:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՓՈԽԱԿԵՐՊՈՒԱԾ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ

- ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
- ՖՐԱՆՍԱ
- ԿԻՊՐՈՍ
- ԵԳԻՊՏՈՍ



Թաւրիչի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր, ղեկավար, մարչիկ եւ սկաուտ անդամներու համանկար

Ժամանակի ընթացքին հետեւեալ երկիրներու Հ.Մ.Ը.Մ.ի զանազան մասնաճիւղերը, պարագաներու բերմամբ, դադրեցան Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր կառույցին մաս կազմելէ եւ գործեցին նոր անուանումներով.-

Պարսկաստանի մէջ՝ Թաւրիզն ու Թեհրանը Ֆրանսա՝ Վիէն, ԱլՖորվիլ, Մարսէյ (Տե՛ս Ֆրանսայի գլուխին տակ)

Կիպրոսի մէջ՝ Նիկոսիան եւ Լառնաքան - Հ.Ե.Մ.:

Այսուհանդերձ, փոխակերպուած այս մասնաճիւղերը շարունակեցին իրենց մարզական եւ սկաուտական գործունէութիւնները, հաւատարիմ մնալով Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութեան, անոր սկզբունքներու ամբողջական որդեգրումով:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ (ԻՐԱՆ)

1936ին, պետական հրահանգով Պարսկաստանի մէջ իրենց գործունէութիւնը կը դադրեցնեն հայկական բոլոր վարժարաններն ու կազմակերպութիւնները, որոնց կարգին նաեւ Թեհրանի, Թաւրիզի եւ Ռաշտի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերը:

Աւելի քան տասնամեակ մը դադարէ ետք, 1948ին, տեղւոյն ոստիկանութեան արտօնութեամբ եւ Արտաւազդ Հաճեանի նախաձեռնութեամբ կը սկսին գործել Թեհրանի եւ Թաւրիզի մասնաճիւղերու սկաուտական բաժինները:

1948ին, Թեհրանի մասնաճիւղի վարչական կազմի անդամներն են՝

- Նախագահ՝ Արտաւազդ Հաճեան
- Փոխ նախագահ եւ աթլետիք պատասխանատու՝ Վահէ Էքիպեան
- Քարտուղար՝ Խորէն Սարգիսեան
- Գանձապահ՝ Սեդրակ Սարուխանեան
- Գոյքապահ՝ Ժորա Իգնատեան
- Արենոյշներու պատասխանատու՝ Հեղինէ Պետրոսեան:

28 Հոկտեմբեր, 1949ին, տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան երեսնամեակի շքեղ հանդիսութիւն, գեղարուեստական եւ մարզա-

կան ճոխ յայտագրով: Օրուան բանախօսն է Վ. Արծրունի, նիւթը՝ Հ.Մ.Ը.Մ.ի նպատակը:

Նոյն ձեւի հանդիսութիւն մը կը կազմակերպուի Թաւրիզի մէջ: Ժողովրդական խանդավառութիւնը ծայր տուած էր Հ.Մ.Ը.Մ.ի շարժումին շուրջ, երբ 1948ի՝ ոստիկանութեան կողմէ տրուած բոլոր արտօնագրերը պետութեան կողմէ ջնջուեցան եւ արտօնագրերու սուլչութեան իրաւունքը փոխանցուեցաւ Իրանի կրթական նախարարութեան ենթակայ մարմնակրթութեան հիմնարկութեան:

1950ին, իրանեան բանակի սպայ Սեւակ Սագինեան, Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի հաւանութեամբ, կը դիմէ կրթական նախարարութեան, վերստանալու համար Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան արտօնագիրը:



Թեհրանի «Արարատ»ի ֆութպոլի խումբը, 1963ին

Արտօնագիրը կը մերժուի այն պատճառաբանութեամբ, թէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը Իրանէն դուրս կեդրոնով կը ղեկավարուի: Սագինեան կը շարունակէ հետապնդել արտօնագրի ստացումը: Ի վերջոյ, մարզական միութեան արտօնութիւնը կը տրուի «Արարատ» անուան տակ, Սեւակ Սագինեանի արտօնատիրութեամբ:

Տրուած ըլլալով, որ Համազգայինը եւ մշակութային այլ միութիւններ ալ արտօնագրի ստացման նոյն դժուարութեանց կը հանդիպէին, վերջնական լուծումը եղաւ անոնց միացումը



Պուա Գոլոմպի մասնաճիղի սկսուսական աստիճանաւորական կապւնը 1949ին

ԱՐԱՐԱՏին. այսպիսով վերակազմուեցաւ Հայ Մշակութային Արարատ Միութիւնը, որու անուան միութիւն բառը հետագային փոխարինուեցաւ կազմակերպութիւն բառով՝ Հ.Մ.Ա.Կ.:

Թեհրանի ԱՐԱՐԱՏը շարունակեց իր բարոյական կապը պահել Հ.Մ.Ը.Մ.ի մերձաւոր արեւելեան երկիրներու Շրջանային Վարչութեան հետ, իբրեւ գաղափարակից կազմակերպութիւն: Առաւել, Արարատի Ֆուլթայոլի եւ պասքեթբոլի կազմերը յաճախ մասնակցեցան Սուրիոյ եւ Լիբանանի միջ-մասնաճիղային խաղերուն: Նոյն կարգի կապեր հաստատուեցան սկսուսական բաժիններուն միջեւ:

Հ.Մ.Ա.Կ.ի երկարամեայ եւ բեղուն գործունէութեան մասին մանրամասնօրէն պիտի անդ-

րադառնանք Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան հատորներու շարքին վեցերորդ համարին մէջ:

ՖՐԱՆՍԱ

Ֆրանսայի մէջ, 1946ի յետ-պատերազմեան Շրջանային Պատգամաւորական Ժողովի նախօրեակին, Առժամեայ Կեդրոնական Մարմինը, չրջապսոյտի մը իբրեւ արդիւնք, Հ.Մ.Ը.Մ.ի հետեւեալ մասնաճիղերը կը ցանկագրէ, իբրեւ գործօն մասնաճիղեր՝ բաժնուած երեք ենթաշրջաններու - [Հ. 265]:

Պուշ Տիւ Ռոն - Մարսէյի ենթաշրջան.

Մարսէյ, Նիս, Քան, Լա Քապիւսէլ, Տրակինյան, Պուլլիար Օտտօ, Սէն Ժիւլիէն, Պոմոն,

Ֆրէզ, Սէնթ Մարկրիթ, Սէնթ Ան, Սենթանթ-
ուան, Էքս-ան-Բրովանս, Կարտան, Սէն ժերոմ,
Սէն Լու եւ Լա Սիոթա

Ռոն, Իզէր, Տրոմ - Լիոնի ենթաշրջան.

Լիոն, Տեսին, Վիէն, Վալանս, Փոնտեվէք,
Կրընոպլ, Սէնթ Էթիէն, Սէն Շամոն, Սէն Մո-
րիս, Փոն տիւ Շէրի, Ռոն, Ռոման

Սէն, Սէն Է Ուազ - Փարիզի ենթաշրջան.

Փարիզ, Պելվիլ, Պուա Գոլոմպ, Ալֆորվիլ,
Առնուվիլ, Իսի Լէ Մուլինո, Իթալի, Լիլա, Վեն-
սէն, Քաշան, Շաւիլ, Անկէն, Մէօտոն, Սելր եւ
Ռենսի:

Վերոյիշեալ 43 մասնաճիւղերէն համեստ
փոքրամասնութիւն մը ժամանակաւորապէս պի-
տի յաջողէր վերականգնիլ, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի
մասնաճիւղ: Ստուար մեծամասնութիւնը ան-
ուանական գոյութիւն միայն ունեցաւ: Կանգուն
մնացող Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու գործունէ-
ութեան մասին կ'անդրադառնանք Բ. մասի
երկրորդ գլուխին տակ: Մնացեալները, եթէ
պահ մը գոյութիւն պահեցին, եղան փոխակերպ-
ուած անուանումներու տակ, առանց իրարու
կամ կեդրոնի մը հետ կապեր ունենալու:

ԿԻՊՐՈՍ - Հ.Ե.Մ.

Կիպրոսի մէջ, Լառնաքայի եւ Նիկոսիոյ
Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու գործունէութեանց
դադարէն ետք, Հայ Երիտասարդաց Միութիւնը
գաղափարակից ժառանգորդը եղաւ կղզիի հայ
երիտասարդութեան մարզական շարժումին:

Անունի փոփոխութենէն անկախ, հիմնական
ոչ մէկ փոփոխութիւն կրեց մարզական շարժումը
Հ.Ե.Մ.ի անուան տակ: Սկսած տակաւն բաժինը,
նոյնպէս, գործեց Հ.Մ.Ը.Մ.ի սկզբունքներով:

Բացի փոխակերպուած մասնաճիւղի մը վե-
րածուելու արտաքին երեւոյթէն, Հ.Ե.Մ.ի իրե-
րայաջորդ բոլոր վարչութիւնները յաճախակի
կապեր հաստատած են Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ, Լի-
բանանի, Պաղեստինի եւ Յորդանանի Շրջանա-
յին Վարչութեան հետ:

1948ին, Կիպրոսի մէջ կը մտածուի վերահաս-
տատել Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր եւ Հ.Ե.Մ.ի
Կեդրոնական Վարչութիւնը փափաք կը յայտնէ
մասնակցելու Հալէպի միջ-մասնաճիւղային հան-
դիպումներուն: Վիզայի ստացման դժուարու-
թիւնները արգելք կը հանդիսանան այս մասնակ-
ցութեան:

1960ի Զատկական միջ-մասնաճիւղային խա-
ղերուն Կիպրոսի Հ.Ե.Մ.ի ֆուլթայոլի խումբը կը
մասնակցի «Բարեկամական Բաժակ»ի մրցումին,
մրցակից ունենալով Գամիշլիի կազմը: Մրցումը
կը վերջանայ առաջինին յաղթանակով՝ 6-4 ար-
դիւնքով:

1972ին, Պէյրութի մէջ կայացած 35րդ միջ-
մասնաճիւղային խաղերուն, Կիպրոսի Հ.Ե.Մ.ի
պատուիրակութիւնը կը մասնակցի սկստակա-
նական խումբով մը եւ կը մասնակցի ընդհանուր
տողանցքին:

Սերտ գործակցութեան այս դրութիւնը հաս-
տատել կու տայ, թէ Կիպրոսի մէջ Հ.Ե.Մ.ը կը
փոխարինէ Հ.Մ.Ը.Մ.ը, առանց ուղղակի մաս
կազմելու անոր կառոյցին:

Հ.Ե.Մ.ի տարիներու մարզական գործունէ-
ութեան մասին պիտի անդրադառնանք
Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան հատորներու շարքի
վեցերորդ համարին մէջ:

ԵԳԻՊՏՈՍ-ՀԵԼԻՈՊՈԼԻՍ

Գահիրէի արուարձան Հելիոպոլիսի Հ.Մ.
Ը.Մ.ի մասնաճիւղը, հիմնուած 1927ին Միու-
թեան հիմնադիրներէն Հայկ Ճիզմէճեանի նա-
խաձեռնութեամբ, ժամանակի ընթացքին կը մի-
անայ Գահիրէի Նուպար Մարզական Միութեան,
1946էն սկսեալ գործելու համար «Հ.Մ.Ը.Մ.-
ՆՈՒՊԱՐ» անուան տակ իբրեւ Հայկական բա-
րեգործական Ընդհանուր Միութեան մարզական
ճիւղի միաւոր:

«Հ.Մ.Ը.Մ.-ՆՈՒՊԱՐ»ի գործունէութեան
մասին պիտի անդրադառնանք Հ.Մ.Ը.Մ.ի պատ-
մութեան հատորներու շարքին վեցերորդ համա-
րին մէջ:



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԶՈՅ ԱՂՈՐԱԿԻՐՈՒԿԱՆ ՇՆՆԱՆԻ ՄԻՈՒԹԵԱՆ

Հելիոպոլսոյ Հ.Մ.Ը.Մ.ի անդամական ընդհանուր խմբանկար,
ձախէն առաջինը Հայկ Ճիլմէճեան

Բ. ՄԱՍ

ԳՈՐԾՕՆ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ

- ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ
- ՖՐԱՆՍԱ
- ՅՈՒՆԱՍՏԱՆ
- ԼԻԲԱՆԱՆ
- ՍՈՒՐԻԱ
- ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ (ԱՐԺԱՆԹԻՆ, ՈՒՐՈՒԿՈՒԷՅ, ՊՐԱԶԻԼ)
- ՊԱՂԵՍՏԻՆ
- ՅՈՐԴԱՆԱՆ
- ԻՐԱԲ
- ԵԳԻՊՏՈՍ
- ՄԵՔՍՈՒՔԱ
- ԳԱՆԱՏԱ
- ԱԻՍՏՐԱԼԻԱ

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Ներկայ հատորի Բ. մասը կ'ընդգրկէ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան պատմութիւնը 1940էն 1974ի աւարտը՝ մինչեւ Միութեան համագաղութային կազմակերպութեան վերածուելու թուականը: Պիտի անդրադառնանք նախապէս հիմնուած շրջաններու եւ մասնաճիւղերու գործունէութեան, որոնք ունեցան մերթ շարունակական, մերթ պայմաններու հարկադրանքով ժամանակաւոր դադարներ եւ վերսկսումներ: Պիտի արձանագրենք նաեւ նոր հիմնուած շրջաններու կազմութիւնները եւ մասնաճիւղերու զարգացումները:

Հիմնադրութեան ժամանակագրական շարքին հետեւելով այդ շրջաններն են՝

Ամերիկայի Միացեալ Նահանգներ

Ֆրանսա

Յունաստան

Լիբանան

Սուրիա

Հարաւային Ամերիկա՝ Արժանթին, Ուրուկուէյ, Պրագիլ

Պաղեստին

Յորդանան

Իրաք


Եգիպտոս

Մեքսիքա

Գանատա

Աւստրալիա

Յաջորդող գլուխներուն տակ պիտի ներկայացնենք վերոյիշեալ երկիրներուն զանազան մասնաճիւղերու գործունէութիւնները, ըստ կարեւորութեան, բաժնուած՝ կազմակերպչական, մարզական, սկստակական, ազգային, ընկերային, հրատարակչական եւ այլ մասերու, կամ այդ մասերու միացումով, առանց ընդմիջումի, երբ աղբիւրները արտօնած են զայն: Կարգ մը պարագաներու, աղբիւրներու սղութեան պատճառով, հակառակ մեր պրպտումներուն, պարտադրուած եղանք ուստումներ կատարելու: Այս պարագային, ընթերցողին ներողամտութեան կ'ապաւինինք:



ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

- ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ
- ՖԻԼԱՏԵԼՖԻԱ
- ՏԻԹՐՈՅԻԹ
- ՖՐԵՋՆՕ
- ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՕ
- ՊՈՍԹՐԸՆ
- ՈՒԱՇԻՆԿՐԸՆ
- ՄՈՆԹԵՊԵԼԼՕ



Լոս Անճելըսի մասնաճիղի 1967 տարուայ ֆութպոլի խումբը:
Ուոքի՝ Չարեհ Թողիկեան՝ Մարկիչ, Գալուստ Յակոբեան, Արա, Յակոբ Առաքելեան,
Չաւէն Ագեան, Վալի Արթինեան, Արտաշ Քէօլեան:
Նստած՝ Վալգէն Գապատայեան, Յակոբ Թողիկեան, Ճանի Սաքաճեան,
Գառնիկ Յարութին Սարգիսեան, Ռոպէրթ եւ Դաւիթ

1920ական թուականներէն մինչեւ 1974, Հ.Մ.Ը.Մ-ի համագաղութային կառոյցի կազմաւորում, Ամերիկայի Միացեալ Նահանգներու զանազան շրջաններու հայաշատ կեդրոններուն մէջ գործած են Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղեր: Այս մասնաճիւղերու կեանքը եղած է համեմատաբար կարճատեւ եւ ընդմիջումներով: Մերթ ներքին բաժանումներով տկարացած ու ճիւղաւորուած, մերթ մարդուժի պակասէն տառապող, երբեմն ալ մրցակցութիւններու ենթակայ՝ այս մասնաճիւղերու գործունէութիւնը զարգացած է անջատաբար, զուրկ՝ կեդրոնի մը հսկողութենէն եւ կառուցային կեդրոնաձիգ ուժգնութենէն:

ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

Ծանօթ է որ 1950ական թուականներուն Մեքսիքոյի մէջ հաստատուած Հայ Մարմնակրթասիրաց Միութեան գործունէութեան գլխաւոր առանցքը կազմեց Միացեալ Նահանգներու մէջ Հ.Մ.Ը.Մ-ի ծանօթացումը, հայաշատ քաղաքներու մէջ մասնաճիւղեր հիմնելու հեռանկարով: Յետ-պատերազմեան այս առաջին փորձերուն իբր արդիւնք՝ Լոս Անճելըսի մէջ, 9 Մայիս 1953ին, շուրջ հարիւր երիտասարդներ ժողով մը կը գումարեն Յակոբ Քարեանի նախագահութեամբ եւ կ'որոշեն տեղւոյն Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղը հիմնել: Ժողովի այս որոշումը 21 Մայիս 1953 թուակիր նամակով կը փոխանցուի Հ.Մ.Ը.Մ-ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան: Նամակը կը ստորագրէ առժամեայ վարչութեան քարտուղարը Յ. Մանճիկեան, խնդրելով որ Լոս Անճելըսի Հ.Մ.Ը.Մ-ը ընդունուի իբրեւ Միութեան ընտանիքի անդամ:

28 Յուլիս 1953ի նիստով, Շրջանային Վարչութիւնը կը վաւերացնէ նորակազմ մասնաճիւղը եւ 18 Օգոստոս թուակիր նամակով, շնորհաւորելէ ետք նորակազմ մասնաճիւղը, կը խոստանայ ղրկել Մրազիր-կանոնագիր, զինանշան եւ դրօշակ, միաժամանակ խնդրելով որ մասնաճիւղի հիմնադրութիւնը տեղեկացուի Մեքսիքոյի

Հայ Մարմնակրթասիրացի Վարչութեան եւ Տիթրոյիթի նորակազմ մասնաճիւղին:

Նոյն տարին, նորակազմ մասնաճիւղը իր գործունէութեան կը սկսի Ֆուլթոնի խումբով: Սակայն, այս գործունէութիւնը կը մնայ սահմանափակ, հակառակ Մեքսիքոյի կեդրոնի բարոյական ճիգերուն կանգուն պահելու համար նորակազմ մասնաճիւղը:

Յաջորդ փորձը պիտի յաջողէր աւելի քան տասնամեակ մը ետք, երբ, յետ-պատերազմեան սովետական վարչակարգերէն խուսափելով եւ ANCHA-ի (American National Committee to Aid Homeless Armenians) ճիգերով, եւրոպական կարգ մը երկիրներու հայեր փոխադրուեցան Միացեալ Նահանգներու զանազան քաղաքները, գլխաւորաբար Լոս Անճելըս: 1960ական թուականներուն նոյն կարգի գաղթ մը տեղի ունեցաւ Մերձաւոր Արեւելքի հայահոծ քաղաքներէն դէպի Միացեալ Նահանգներ: Նոր հաստատուող հայերու շարքին կը գտնուէին մեծաթիւ Հ.Մ.Ը.Մ-ականներ: Սարգիս Սարունիի գլխաւորութեամբ ռումանահայեր հիմնած էին «Րաֆֆի» մշակութային միութիւնը, որ նաեւ ունէր մարզական ճիւղ եւ Ֆուլթոնի խումբ:

22 Օգոստոս, 1967ին, ռումանահայ նախկին Հ.Մ.Ը.Մ-ական Յարութիւն Սարգիսեանի հրաւերով, իր բնակարանին մէջ հաւաքուած Հ.Մ.Ը.Մ-ականներ՝ Յակոբ Առաքելեան, Սարգիս Մ. Սարգիսեան, Յարութիւն Բելենկեան, Զարեհ Թողիկեան եւ Թորոս Քիպրիթեան (Բարսեղեան) կը մտածեն «Րաֆֆի»ի ֆուլթոնի խումբը Հ.Մ.Ը.Մ-ի անունով կոչել: Թէեւ այս ծրագրին հանդէպ վերապահութիւններ կը ծագին, սակայն ի վերջոյ հաւանութիւն կը ստացուի «Րաֆֆի»ի պատասխանատուներէն, որոնք կը կազմեն յանձնախումբ մը պատրաստելու համար ֆուլթոնի խումբին փոխանցումը Հ.Մ.Ը.Մ-ին: Այս յանձնախումբին մաս կը կազմեն Սարգիս Սարունի, Փայլիկ Առաքելեան, Անճելա Կոտիկեան, Վարդգէս Սահակեան, Ժիրայր Գալայճեան, Ֆլորա Պարութեան եւ Ստեփան Գապատայեան:

Խոսմբի պատասխանատուները, հետագայ յաջողութիւններու խանդավառութենէն առաջնորդուած, կը ծրագրեն հիմնել Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղ եւ այս ծրագրով կը դիմեն Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան, ստանալու համար անոր հաւանութիւնը: 1968 Յունուարի անդամահաւաքին, կ'ընտրուի առժամեայ վարչական կազմը հետեւեալ ձեւով-

Ատենապետ՝ Յարութիւն Բարսեղեան
Փոխ ատենապետ՝ Յարութիւն Սարգիսեան
Ատենադպիր՝ Վարդգէս Սահակեան
Գանձապահ՝ Յակոբ Առաքելեան

Ֆուլթոնի պատասխանատու՝ Զարեհ Թողիկեան

Խորհրդականներ՝ Սարգիս Մ. Սարգիսեան, Յարութիւն Բելենկեան, Էտուար Սահակեան:

Այս կազմի վրայ, աւելի ուշ, կ'աւելցուին Նազարէթ Տագեսեան ու Լեւոն Երկաթ: Առժամեայ վարչական կազմի գործունէութեան ծրագիրն է անդամարչաւ կազմակերպել եւ անդամական ընդհանուր ժողով գումարելով յառաջացնել վարչական կազմ:

Առժամեայ վարչութեան գործունէութիւնը կը տեւէ 1968ի Յունուարէն մինչեւ 1969ի Յուլիս ամիսը: Այս ժամանակամիջոցին անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 60ի, որոնց կողքին կը գործէ սկաուտական կազմը՝ 35 անդամներով, ղեկավարութեամբ Արտաւազդ Հաճեանի: Կիրարկուած մարզական ճիւղն է Ֆուլթոնի պոլլ, որուն խումբը մաս կը կազմէ Լոս Անճելըսի Ֆետերասիոնին: Ֆուլթոնի փորձերը կը կատարուին Los Angeles City Collegeի դաշտին վրայ, իսկ սկաուտական հաւաքոյթները՝ Մեսրոպեան վարժարանին մէջ: Հետագային, սկաուտական աշխատանքներուն համար կը նշանակուի սկաուտական խորհուրդ:

18 Յուլիս 1969ին, կը գումարուի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողով՝ ներկայութեամբ 48 անդամներու, Լոս Անճելըսի Վենիս պողոտայի հայ կեդրոնին մէջ: Ժողովը, լսելէ ետք առժամեայ վարչութեան երկամեայ գոր-

ծունէութեան տեղեկագիրը, զայն կը գտնէ «Յոյժ գնահատելի եւ քաջալերական»:

Ժողովին քննելի հարցերէն է Մոնթեպելլոյի շրջանին մէջ նոր մասնաճիւղի մը հիմնումը: Մոնթեպելլոյի մէջ սկաուտական առանձին կորիզ մը կարեւոր գործունէութիւն ծաւալած էր: Ի վերջոյ, կ'որոշուի կազմել Լոս Անճելըսի եւ Մոնթեպելլոյի միացեալ վարչական կազմ: Ընտրեալ կազմը իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով-

Ատենապետ՝ Քերոբ Առաքելեան
Փոխ ատենապետ՝ Յարութիւն Բարսեղեան
Ատենադպիր՝ Մուրատ Շահինեան
Գանձապահ՝ Յակոբ Տէր Պողոսեան

Ֆուլթոնի պատասխանատու՝ Յարութիւն Սարգիսեան

Սկաուտական պատասխանատու՝ Միքայէլ Եմէնիճեան

Խորհրդականներ՝ Յակոբ Առաքելեան, Ռալֆ Մոսիկեան, Վահրամ Մահտէսեան, Գարեգին Առաքելեան, Վարդան Ֆնտրգեան:

Այս կազմին առաջին գործը կ'ըլլայ պետական արտօնագրի ապահովումը, իբրեւ տուրքէ գուրկ կազմակերպութիւն, ինչ որ կը նշանակէ, թէ Լոս Անճելըսի Հ.Մ.Ը.Մ.ին կատարուած նուէրները նուիրատուներու պետական մուտքի շահատուրքէն զերծ կը մնան:

Կազմակերպչական գետնի վրայ մասնաճիւղը կ'արձանագրէ կարեւոր նուաճումներ: Անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 152ի՝ մարզիկ եւ օժանդակ անդամներով:

Սկաուտական բաժինը, ղեկավարութեամբ Արտաւազդ Հաճեանի, կը բարելաւէ իր թեքնիք կարողութիւնները: Հոլիվուտի բաժինը ունի 128 անդամ, իսկ Մոնթեպելլոն՝ 78: Առաջինին խմբապետն է Միքայէլ Եմէնիճեանը, երկրորդինը՝ Լեւոն Երկաթը: Սկաուտական խորհուրդը կը վարէ զոյգ խումբերու ընդհանուր աշխատանքները: Սակայն տարեշրջանի ընթացքին տարակարծութիւններ կ'ունենայ վարչութեան հետ, ինչ որ կը յանգի Արտաւազդ Հաճեանի եւ

Լեւոն Երկաթի պաշտօնէ դադրեցման: Այսուհանդերձ, 22 Օգոստոս 1970ին, խումբերը կ'ունենան իրենց առաջին բանակումը Սանթա Մոնիքայի բլուրներու բարձունքներուն վրայ գտնուող ամերիկեան սկաուտական բանակավայրին մէջ: Նաեւ խումբերը ներկայ կ'ըլլան ազգային եւ եկեղեցական հանդիսութիւններէն, յատուկ փայլ մը տալով անոնց:

Մարզական բաժինը, ղեկավարութեամբ ընդհանուր պատասխանատու Թորոս Քիպրիթճեանի, կը ծառայի երկրորդական գոյգ խումբերու կազմութեամբ (կրտսերներ եւ պատանիներ) եւ պասքեթպոլի խումբի մը կազմութեամբ:

Այս առաջին ընտրեալ վարչութիւնը պիտի գործէր մինչեւ 12 Սեպտեմբեր 1970:

Յաջորդող վարչական կազմը իր դիւանը կը կազմէ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Քերոբ Առաքելեան
Փոխ ատենապետ՝ Յարութիւն Բարսեղեան
Ատենադպիր՝ Արմէն Տէյրմէնճեան
Գանձապահ՝ Յակոբ Տէր Պօղոսեան
Ֆուլթպոլի պատասխանատուներ՝ Յարութիւն Սարգիսեան, Ճեմիլ Սարգիսեան:

Խորհրդականներ՝ Գրիգոր Գրիգորեան, Վահրամ Մահտեսեան, Մկրտիչ Մոսիկեան:

Մարզական ընդհանուր պատասխանատուն կը մնայ Թորոս Քիպրիթճեանը, որուն կ'օժանդակեն Ֆուլթպոլի եւ պասքեթպոլի գոյգ յանձնախումբերը: Կը կազմուի Մոնթեպելլոյի Ֆուլթպոլի Ա. դասակարգի խումբ՝ Montebello Armenians անունով: Հովիվուտի Ֆուլթպոլի առաջին խումբը, այս եղանակին կը տիրանայ մեծագոյն Լոս Անճելըսի Լիկի մրցաշարքի բաժակին: Պասքեթպոլի խումբը կը շահի շրջանի հայկական խումբերու մասնակցութեամբ վարչութեան կազմակերպած մրցաշարքի բաժակը: Մարզական այս գոյգ ճիւղերու յաջողութեան վրայ կ'աւելնայ աթլետիք խումբի կազմութիւնը, որուն իբր մարզիչ կը հրաւիրուի Գրիգոր Նիզիպլեանը:

Հովիվուտի սկաուտական բաժինը, պատասխանատուութեամբ Սաթիկ Սապունճեանի, իր

հաւաքոյթները կը կատարէ «Կրիֆիթ Փարք»ի մէջ: Բաժնի ընդհանուր թիւն է 150: Իսկ Մոնթեպելլոյի բաժինը, շուրջ 70 անդամներով, կը ղեկավարուի սկաուտական աստիճանաւորական կազմով՝ ծնողական մարմնի մը գործակցութեամբ: Խումբի սկաուտներ Սբ. Ծննդեան գիշերը Աւետման շրջագայութիւն կը կազմակերպեն:

Վարչութիւնը տակաւին մնայուն նստավայր մը չունի եւ ժողովները կը գումարէ իր անդամներու բնակարաններուն մէջ: Տարեկան պիւտճէն է 3189 տոլար:

Շրջանի պատգամաւորներ Քերոբ Առաքելեան՝ վարչութենէն, Թորոս Բարսեղեան, Արմէն Տէյրմէնճեան եւ Կարպիս Բարսեղեան կը մասնակցին Մերձաւոր Արեւելքի 19րդ Շրջանային Պատգամաւորական Ժողովին:

Մասնաճիւղի ընդհանուր գործունէութիւնը արդէն իր կարեւոր տեղը ունի Լոս Անճելըսի ազգային կեանքէն ներս: Առաջնորդ Սմբատ Վրդ. Լափաճեան հետեւեալ ձեւով կ'արտայայտուի Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան մասին. «Քառասուն տարուան ընթացքին գաղութին չկրցածը դուք կատարեցիք շատ կարճ ժամանակուան մէջ ու գրաւեցիք հայ ժողովուրդի համակրանքը: Հրաշքի համապօր գործ կատարեց Հ.Մ.Ը.Մ.ը գաղութին ներս:»

Ընտրեալ երկրորդ վարչութիւնը պիտի գործէր քսան ամիս՝ 1970ի Սեպտեմբերէն մինչեւ 1972ի Ապրիլ 27, երբ անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ.:

Ատենապետ՝ Քերոբ Առաքելեան
Փոխ ատենապետ եւ պասքեթպոլի պատասխանատու՝ Յարութիւն Բարսեղեան
Ատենադպիր՝ Յուլիա Յովսէփեան
Գանձապահ՝ Յակոբ Տէր Պօղոսեան
Թղթակից եւ Ֆուլթպոլի պատասխանատու՝ Տոքթ. Սարգիս Արեւեան

Ֆուլթպոլի պատասխանատուներ՝ Ճեմիլ Սարգիսեան, Յարութիւն Սարգիսեան, Տոքթ. Արմէն Կէօնճեան

դժուարին տարիներու աւարտին, Ֆիլատելֆիոյ մէջ կրկին գործի կը ձեռնարկէ տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը, նոր ուժերով:

27 Մայիս 1957 թուակիր իր նամակով, Ֆիլատելֆիոյ մասնաճիւղը Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբիոյ, Լիբանանի եւ Յորդանանի Շրջանային Վարչութեան կը տեղեկացնէ իր գործունէութեան մասին, ցանկալով հաղորդակցիլ անոր հետ եւ մաս կազմել անոր կառույցին: Նոյն նամակին մէջ Ֆիլատելֆիոյ դեկավարութիւնը կը յայտնէ, թէ Նիւ Եորքի կեդրոնը կը փորձէ զինք վերադարձնել իր ենթակայութեան եւ այս նպատակով իրենց ղրկած է անգլերէնով շրջաբերական մը, սակայն իրենք վերապահութեամբ կը մօտենան հարցին եւ եթէ նման միացում մը իրականանալի դառնայ, իրենց առաջին պայմանը պիտի ըլլայ Նիւ Եորքի կեդրոնին կողմէ ճանաչումը Մերձաւոր Արեւելքի մէջ գործող Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերուն եւ զանոնք գլխաւորող Շրջանային Վարչութեան, եւ գործակցութիւնը անոր հետ: Շրջանային Վարչութիւնը ամբողջութեամբ համամիտ է Ֆիլատելֆիոյ առաջարկներուն եւ կը քաջալերէ անոր որդեգրած ուղին:

Ֆիլատելֆիոյ վերակազմուած մասնաճիւղը, 1957ին, կը հաշուէ 48 գործօն անդամ եւ քսան գայլիկներէ բաղկացած վոհմակ մը: Մասնաճիւղը կը գործէ՝ Ֆիլատելֆիոյ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի սրահը ունենալով իբրեւ նստավայր:

Վերակազմութեան այս շրջանի գործունէութիւնը եւս երկար կեանք չպիտի ունենար:

Ֆիլատելֆիոյ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին մասին պիտի լսենք համագաղութային կառույցի կազմաւորման առընթեր:

ՏԻԹՐՈՅԻԹ

1953ի տարեսկիզբէն սկսեալ, Տոքթ. Պ. Դարբինեանի նախաձեռնութեամբ, Տիթրոյիթի մէջ կը սկսի գործել Հ.Մ.Ը.Մ.ի «Արմենիա» ֆոլթպոլի խումբը: Այս նախաձեռնութեան եւ գործունէութեան ընթացքին մասին մասնաճիւղի պատուոյ նախագահը՝ Տոքթ. Դարբինեան, 2 Յունուար, 16 Յունիս, 15 Օգոստոս եւ 12 Հոկտեմբեր թուակիր նամակներով տարուան ընթացքին մանրամասնօրէն տեղեակ կը պահէ Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութիւնը, որմէ կը ստանայ ընդհանուր Ծրագիր-կանոնագրի օրինակ մը, Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակ եւ խումբի շապիկներուն կուրծքի պէճեր: Շրջանային Վարչութիւնը կը գրէ նաեւ Մեքսիքոյի կեդրոնական մարմինին, հետաքրքրուելու համար Տիթրոյիթի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղով:

25 Հոկտեմբեր 1953ին, Տիթրոյիթ կ'այցելէ Հայ Մարմնակրթասիրաց Միութեան (Մեքսիքո) նախագահը՝ Ճորճ Մարտիկեան, ընկերակցութեամբ Զօրավար Հայկ Շեքերճեանի եւ դատաւոր Նազարէթ Պարսումեանի: Այս այցելութեան առթիւ «Արմենիա»ի անդամները եւ համակիրներ «հրապարակային ժողով» (իմա՝ անդամական ընդհանուր ժողով) կը գումարեն, որու ընթացքին խօսք կ'առնէ Ճորճ Մարտիկեան, քաջալերելով Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի եւ «Արմենիա» խումբի կազմութիւնները: 12 Նոյեմբեր 1953 թուակիր նամակով Շրջանային Վարչութիւնը պաշտօնապէս կը հաստատէ Տիթրոյիթի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի օրինականութիւնը, մաղթելով որ անոր օրինակը վարակիչ ըլլայ Միացեալ Նահանգներու հայաշատ այլ կեդրոններուն մէջ: Նոյն տարին, մասնաճիւղի ֆոլթպոլի խումբը կը մասնակցի Միչիկըն նահանգի Լիկի մրցաշարքերուն: Լիկի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչն է Օննիկ Խաչիկեանը: Ֆոլթպոլի խումբի մարզիչն է Վարդգէս Տիւլկէրեան:

1958ին, վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէ Ստեփան Տէտէեան:

Մինչեւ 1960, Տիթրոյիթի Հ.Մ.Ը.Մ.ը իր ֆոլթպոլի խումբով գործունէութիւնը կը շարունակէ օրինական անդամական ընդհանուր ժողովներով նորոգելով մասնաճիւղի վարչական կազմերը:

1960ին, մասնաճիւղի մարզական գործունէութեան վրայ կ'աւելնայ պասքեթպոլի խումբի

կազմութիւնը: Սակայն, մասնաճիւղի գործունէ-
ութիւնը նախկին քաջալերանքը չի վայելեր
չրջանի պատասխանատուներուն կողմէ եւ կազ-
մալոյժ՝ մասնաճիւղի գործունէութիւնը ժամա-
նակի մը համար կը սառեցուի եւ կապը կը
կտրուի Շրջանային Վարչութեան հետ:

1970ական թուականներու սկիզբը, Տիթրոյի-
թի մասնաճիւղի գործունէութեան վերսկսման
փորձեր կը կատարուին:

8 Փետրուար 1973ին, անդամական ընդհա-
նուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ,
ատենապետութեամբ Սեդրակ Գալսերեանի, սա-
կայն վարչական ժողովներ չեն գումարուիր:
Ֆուլթոնի խումբը կը գործէ Վրաստանէն գաղ-
թած Մելքոնեանի ղեկավարութեամբ: Խումբի
անդամներու մեծամասնութիւնը ոչ հայեր են:
Մելքոնեան նաեւ Տիթրոյիթի Լիկի նախագահն է,
անոր կը գործակցի նաեւ ժագ Նշանեանը, սա-
կայն կազմութիւնը ապահովութիւն չի ներշնչեր:

12 Մարտ 1974 թուակիր նամակով, Շրջա-
նային Վարչութեան կը տեղեկացնեն, թէ ան-
դամական ընդհանուր ժողով գումարելու փոր-
ձը ձախողած է: Շրջանաւարտ վարչութիւնը իր
ունեցած պատրաստ գումարը փոխանցած է
տեղւոյն Սբ. Սարգիս եկեղեցւոյ գանձանակին,
եւ գործունէութիւնը դադրեցուցած:

ՖՐԵՁՆՕ

Մեքսիքոյի Հայ Մարմնակրթասիրացի ճիգե-
րուն իբր արդիւնք, 1954ին, Ֆրեզնոյի մէջ
կազմուած Հ.Մ.Ը.Մ.ի ֆուլթոնի խումբը իր
մարզիչին՝ Սուրէն Գէորգեանի ցուցմունքներով
յաջող ելոյթներ կ'ունենայ տեղական այլ խում-
բերու դէմ մրցելով: Սակայն միութենական այլ
մարզեր, յատկապէս կազմակերպչականը, կը
մնան տկար եւ ընդհանուր գործունէութիւնը
երկար կեանք չունենար:

1972ին, Ֆրեզնոյի խումբ մը հայ երիտա-
սարդներու նախաձեռնութեամբ կազմուած
ֆուլթոնի խումբը, որուն կ'ընկերանային նաեւ

Մերձաւոր Արեւելքէն գաղթած նախկին Հ.Մ.
Ը.Մ.ականներ, հետզհետէ կարեւորութիւն կը
ստանայ: Այս յաջողութիւններէն քաջալերուած,
խումբի անդամները կ'որոշեն հիմնել Հ.Մ.
Ը.Մ.ի մասնաճիւղ մը, կեդրոնատեղի ունենալով
Ֆրեզնոյի հայ կեդրոնը: Այս որոշումը կը հա-
ղորդուի Լոս Անճելըսի Հ.Մ.Ը.Մ.ի վարչու-
թեան: Վերջինս կը քաջալերէ նախաձեռնու-
թիւնը եւ խումբի անդամները ընդհանուր հա-
ւաքոյթի մը ընթացքին կ'ընտրեն առժամեայ
վարչական կազմ՝ մասնակցութեամբ Մասիս Հե-
քիմեանի, Յակոբ Տէր Պօղոսեանի եւ Սոնիա
Օհաննէսեանի: Առժամեայ վարչութեան գլխա-
ւոր աշխատանքը պիտի ըլլար անդամարշալ
կազմակերպել եւ Հ.Մ.Ը.Մ.ը ծանօթացնել Ֆրեզ-
նոյի հայութեան:

1974ին, մասնաճիւղի անդամական ընդհա-
նուր ժողովէն ընտրուեցաւ Ֆրեզնոյի անդրանիկ
վարչական կազմը.-

Ատենապետ՝ Վարուժան Պուլուլթեան
Փոխ ատենապետ՝ Սերոբ Վարդանեան
Ատենադպրուհիներ՝ Սօսէ Մսրլեան, Վիգի
Տէր Պօղոսեան
Գանձապահ՝ Կարպիս Գաթարոյեան
Մարզական պատասխանատու՝ Ալպերթ Աբ-
րահամեան

Խորհրդական՝ Հիւկօ Գէորգեան:

Կազմը, մարզական իր գործունէութիւնը
ծաւալելով, ֆուլթոնի կողքին կը սկսի մշակել
պասքեթպոլ՝ տղոց եւ աղջկանց խումբերով:
Մասնաճիւղը նաեւ կը կազմակերպէ Գալիֆորն-
իոյ միջ-մասնաճիւղային ֆուլթոնի մրցաշարք:

Աւելի ուշ, Ֆրեզնոյի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւ-
ղի կիրարկած մարզաճիւղերը պիտի ծաւալէին
ընդգրկելու համար փինկ փոնկ եւ թենիս: Նոյն-
պէս, սկառուտական շարժումը մաս պիտի կազ-
մէր մասնաճիւղի գործունէութեան:

ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՕ

Սան Ֆրանսիսքոյի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնա-
ճիւղի կազմութեան գաղափարը հող կը գտնէ

1970ին, նկատի ունենալով որ Լոս Անճելըսի մասնաճիւղը, շահատուրքէ զուրկ (non profit organization) իր արտօնագրով, նաեւ արտօնուած էր Միացեալ Նահանգներու ամբողջ տարածքին մասնաճիւղեր ունենալու: Սան Ֆրանսիսքոյէն Բիւզանդ Պալմանուկեան, 13 Նոյեմբեր 1970 թուակիր նամակով կը դիմէ Լոս Անճելըսի մասնաճիւղին եւ կը յայտնէ, թէ տեղւոյն վրայ կազմած են Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ եւ նշանակած եօթը հոգիէ բաղկացած առժամեայ մարմին մը, որով կը խնդրէ վաւերացում:

26 Մայիս 1971ի նիստի ընթացքին, Լոս Անճելըսի մասնաճիւղի վարչութիւնը կը վաւերացնէ Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղի կազմութիւնը եւ առժամեայ մարմինը: Այսպէսով Գալիֆորնիոյ շրջանը կ'ունենայ իր երրորդ մասնաճիւղը: Առժամեայ վարչութիւնը շուտով կը յաջողի արձանագրել 95 անդամներ, որոնցմէ 25ը սկաուտական շարքերու մէջ: Կը կազմուին պասքեթպոլի տղոց եւ աղջկանց խումբեր, վոլիպոլի եւ հեծելարշաւի խումբեր:

Առժամեայ վարչութիւնը անդամական ընդհանուր ժողովի կը հրաւիրէ մասնաճիւղի անդամները, որոնք, 22 Յունուար 1972ին, Սան Ֆրանսիսքոյի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ սրահին մէջ հաւաքուելով կը մշակեն մասնաճիւղի հետագայ գործունէութեան ծրագիր եւ կ'ընտրեն մնայուն վարչական կազմ մասնակցութեամբ Տիգրան Սարգիսեանի, Ժան Թովմասեանի, Նուպար Տէմիրճեանի, Արչի Մելքոնեանի, Սեպուհ Վարդանեանի եւ Գ. Մարտիրոսեանի:

Այս տարեշրջանին, մասնաճիւղի պասքեթպոլի խումբը կը մասնակցի Լոս Անճելըսի Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի մրցաշարքին: Մարզական բոլոր խումբերը զգալի յառաջդիմութիւն կ'արձանագրեն տեղական խումբերու դէմ բարեկամական հանդիպումներ կազմակերպելով:

16 Նոյեմբեր 1972ին, կը կազմակերպուի մասնաճիւղի երկրորդ անդամական ընդհանուր ժողովը: Ժողովը, լսելէ ետք անդրանիկ վարչութեան տասը ամսուայ գործունէութեան տեղե-

կագիրը, կ'ընտրէ նոր վարչական կազմ բաղկացած հետեւեալներէն. Կարպիս Պեզճեան, Մանասէ Գարամարտեան, Սեպուհ Վարդանեան, Վաչէ Ստեփանեան եւ Արմինէ Գալֆայեան: Սակայն Սեպուհ Վարդանեան, որ նախորդ վարչական կազմէն վերընտրուած միակ անդամն էր, անձնական պատճառներով կը հրաժարի եւ գործը կը մնայ բոլորովին նոր անդամներէ բաղկացած վարչութեան ուսերուն: Այսուհանդերձ, բացառիկ ճիգերով, նորընտիր կազմը կը լծուի կազմակերպական եւ մարզական բաժիններու զարգացումին: 1973ի Յունիսին, մասնաճիւղը կը կազմակերպէ իր առաջին պարանցիկը՝ նիւթական կարեւոր յաջողութեամբ: Վարչութեան նստավայրը կը մնայ եկեղեցւոյ սրահը: Բայց մասնաճիւղի յատուկ ահումբի մը չգոյութեան պատճառով անդամներու ընդհանուր թիւը կը պակսի:

1974ի Մարտ ամսուայ սկիզբը, 26 անդամներու ներկայութեամբ, անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ, ատենապետութիւնը վստահելով Արմէն Մարգարեանին: Մարդուժի զգալի տագնապ կայ մասնաճիւղի կազմակերպական գործունէութեան համար: Այսուհանդերձ, մարզական եւ սկաուտական բաժինները տակաւ կը զարգանան: Մայիսին Ֆոլթպոլի խումբը կը մասնակցի Ֆրեզնոյի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի կազմակերպած միջմասնաճիւղային մրցաշարքին: Սկաուտական խումբը կ'ունենայ իր անդրանիկ երգման արարողութիւնը: Օգոստոսին կը կազմակերպուի տարեկան պարահանդէսը՝ նիւթական յաջողութիւն ապահովելով: Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութիւնը կը յուսայ, որ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ստեղծումէն եւ Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան մը կազմութենէն ետք, դժուարութիւնները կրնան հարթուիլ: Արդարեւ, Լոս Անճելըսի երէց մասնաճիւղի պատասխանատուները մօտէն կը հետեւին Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղի գործունէութեան, բարոյական նեցուկ հանդիսանալով անոր:

ՊՈՍԹԸՆ

Պոսթընի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը, հիմնուած 1923ին, տարիներու դադարէն ետք, 1932ին վերակազմուեցաւ Սեպուհ Փորթուգալեանի, Զարեհ Սուրեանի, Մայքըլ Յարութիւնեանի, Մաքսուտ Անանիկեանի եւ Յակոբ Թեվեքելեանի ճիգերով, երկամեայ ժամանակաշրջանի մը համար, բայց կրկին դադրեցաւ գործելէ 1934 թուականին: Այս դադարէն մինչեւ 1973ի վերակազմութիւն բոլորեցան 40 երկար տարիներ ու Ամերիկայի Միացեալ Նահանգներու այս

հայահոծ ոստանի հայ մարզական շարժումը դուրս մնաց Հ.Մ.Ը.Մ.ի կառոյցէն:

1973ին, խումբ մը մարզասէր երիտասարդներ կը կազմեն Ֆութպոլի The Armenians անունով խումբը, որ շուտով Պոսթընի հայութեան ուշադրութեան կ'արժանանայ: 17 Հոկտեմբեր 1973ին, Սբ. Ստեփանոս եկեղեցւոյ ներքնասրահին մէջ տեղի կ'ունենայ անդամական հաւաք: Հաւաքին ներկայ են Մերձաւոր Արեւելքի Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ Յովհաննէս Շահինեան եւ Գէորգ Տօնապետեան: Տեղւոյն վրայ հիմը կը դրուի Հ.Մ.



Ուաշինկթընի մասնաճիւղի վարչական կապը, 1971ին Սահակ Դանիէլեան, Յակոբ Քէշիշեան, Կարպիս Մուրատեան, Մարի Ահարոնեան, Դաւիթ Արապեան, Յակոբ Տնկճեան, Ժիրայր Կիրակոսեան

Ը.Մ.ի Պոսթընի մասնաճիւղին, որուն կորիզը կը դառնայ The Armenians ֆուլթայոլի խումբը: Կը նշանակուի առժամեայ վարչութիւն հետեւեալ կազմով.-

- Ատենապետ՝ Մարսէլ Քարեան
- Փոխ ատենապետ՝ Ճորճ Պեզճեան
- Ատենադպիր՝ Սարգիս Մաճարեան
- Գանձապահ՝ Պերճ Չեքիճեան
- Գոյքապահ՝ Սարգիս Տաղլեան

Խորհրդականներ՝ Յակոբ Քեսիսեան, Սարգիս Քեպապճեան, Վահրամ Պոյաճեան, Արա Սվաճեան:

31 Մարտ 1974ին, 50 նոր անդամներու երդման արարողութեան ներկայ կը գտնուին Գարեգին Արք. Սարգիսեան, Յովհաննէս Շահինեան, Գէորգ Տօնապետեան եւ Տոքթ. Երուանդ Խաթանասեան, որ խօսք կ'առնէ դրուատելով Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը: Մասնաճիւղի առաջին ընտրեալ վարչութիւնը կը բխի 1 Հոկտեմբեր 1974ի անդամական ընդհանուր ժողովէն, հետեւեալ կազմով.-

- Ատենապետ՝ Մարսէլ Քարեան
- Փոխ ատենապետ՝ Ճորճ Պեզճեան
- Ատենադպիր՝ Վահրամ Պոյաճեան
- Յարաբերականի քարտուղար՝ Սարգիս Մաճարեան

- Գանձապահ՝ Պերճ Չեքիճեան
- Հաշուապահ՝ Սարգիս Քեպապճեան
- Գոյքապահ՝ Յովսէփ Աւագեան

Մարզական պատասխանատու՝ Սերոբ Տէր Պօղոսեան

Խորհրդականներ՝ Աբիկ Երէցեան, Արա Սվաճեան:

Այս կազմի ճիգերով Պոսթընի մասնաճիւղը հետզհետէ իր գործունէութիւնը կը զարգացնէ կազմակերպչական եւ մարզական գետիներուն վրայ: Մասնաճիւղի նստավայրն է «Հայրենիք»ի կեդրոնը:

Մասնաճիւղի ատենապետը՝ Մարսէլ Քարեան, 1974ի Դեկտեմբերին Արեւելեան Միացեալ

Նահանգներու շրջանը կը ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին՝ Պէյրութի մէջ:

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ

1970ի գարնան, խումբ մը երիտասարդներու հաւաքի մը ընթացքին եւ Միացեալ Նահանգներու մայրաքաղաք Ուաշինկթընի Հ.Յ.Դ. Սեպուհ կոմիտէութեան նախաձեռնութեամբ, կը հիմնուի տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը: Հիմնադրութեան մասին տեղեկութիւն կը ղրկուի Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան: Վերջինս կ'առաջարկէ մինչեւ օրինական անդամական ընդհանուր ժողովի գումարում, նշանակել առժամեայ վարչութիւն մը, որպէսզի նախապատրաստական աշխատանքները տանի եւ անդամական ընդհանուր ժողով գումարելով ընտրէ վարչական կազմ:

29 Նոյեմբեր 1970 թուակիր իր նամակով, Սեպուհ կոմիտէութեան դիւանը կը հաղորդէ Շրջանային Վարչութեան, թէ նշանակած է վեցամսեայ ժամանակաշրջանի համար առժամեայ վարչութիւն, որուն անդամներն են՝ Յակոբ Քեչիչեան, Փօլ Կարմիրեան, Արա Փափազեան, Նուպար Տէր Պօղոսեան, Յակոբ Նազարեան, Կարպիս Մուրատեան, Անդրանիկ Մուրատեան, Տիգրան Լէհիմճեան եւ Յարութիւն Տնկճեան:

Այսպէսով կը հաստատուի Հ.Մ.Ը.Մ.ի Ուաշինկթընի մասնաճիւղը: 1971ին անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ Ուաշինկթընի վարչական կազմը: Մասնաճիւղը Շրջանային Վարչութեան կը ստանայ լամբակի պէճեր, սկաուտական գիրքեր եւ քառասնամեակի յուշամատենի 10 օրինակներ: 1972ին մասնաճիւղը կը ստանայ Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան հրատարակած 30 օրացոյցներ, սպառելու համար իր շրջանակէն ներս: Վարչութիւնը, հակառակ մրցակից կազմակերպութիւններուն յարուցած դժուարութիւններուն, իր գործունէութիւնը կը զարգացնէ յաջողութեամբ: 1973ի տա-

րեկան պարանցիկը նիւթական կարեւոր եկամուտ մը կ'ապահովէ մասնաճիւղի գանձանակին:

1974ին, մասնաճիւղի եւ «Մասիս» ֆուտպոլի խումբերու միացման փորձը կը ձախողի: Վարչութիւնը կը վերադառնայ իր բնականոն գործելակերպին:

ՄՈՆԹԵՊԵԼԼՕ

1970ի սկիզբը, Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ-ի նախկին անդամներէն Լեւոն Երկաթ, նամակ մը ուղղելով Մերձաւոր Արեւելքի Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան, կը յայտնէ, թէ 87 հոգիներու ստորագրուած հաւանութեամբ կը ծրագրեն հիմնել Հ.Մ.Ը.Մ-ի Մոնթեպելլոյի մասնաճիւղ: Նամակը կը յայտնէ նաեւ այդ հայահոծ շրջանի ազգային կեանքի կարեւորութիւնը եւ շուտով անդամներու թիւը 200ի հասցնելու կարելիութիւնը: Սակայն, նոյն նամակի յետ գրութեան բաժինի արտայայտութիւններէն ի յայտ կու գայ, որ հակադրութիւն մը գոյութիւն ունի ծրագրուած մասնաճիւղի կազմութեան հանդէպ՝ անորոշ թողուած կողմէ մը: Նամակին պատասխանելու համար Շրջանային Վարչութիւնը յարմար կը նկատէ իր քննութիւնները կատարել գոյութիւն ունեցող Լոս Անճելըսի մասնաճիւղին միջոցով:

Յաջորդող ամիսներու ընթացքին, Շրջանային Վարչութեան ժողովին կը ներկայանայ Քրիս Տօնոյեան, որ կը յայտնէ, թէ Լոս Անճելըսի մէջ գործող Իւնայթըտ Արմինիընզ Աթլեթիք Ասոսիէյշըն անունով ծանօթ կազմակերպութիւնը,

1970ի Սեպտեմբերի անդամական ընդհանուր ժողովով ընտրած է 7 հոգիներու վարչութիւն մը, որուն մաս կը կազմէ նաեւ ինք, թէ Լոս Անճելըսի մէջ գործող Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղը կազմուած է աւելի ուշ եւ թէ ինք տրամադիր է զոյգ միութիւններու միացումը իրագործելու աշխատանք տանիլ: Այս պարագան եւս քննելի կը մնայ Շրջանային Վարչութեան համար:

Վերոյիշեալ զոյգ պարագաներու ստուգումէն կախեալ կը մնար Շրջանային Վարչութեան վերջնական դիրքորոշումը: Շրջանային Վարչութիւնը նախընտրեց սպասողական վիճակի մէջ մնալ եւ սպասել հարցերու տեղական հարթումին: Մինչ այդ, Լոս Անճելըսի վաւերացուած մասնաճիւղը կը գործէր բնականոն կերպով:

Մոնթեպելլոյի Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղի կազմութիւնը ի վերջոյ պիտի իրականանար, երբ, 1974ի Օգոստոսին, Շրջանային Վարչութեան կողմէ լիազօրուած Անդրանիկ Ուրֆալեանի ներկայութեամբ կեանք կ'առնէ Գալիֆորնիոյ Առժամեայ Բարձրագոյն Խորհուրդը եւ Նոյեմբերի վերջաւորութեան կը հրաւիրէ Գալիֆորնիոյ մէջ գործող Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերու պատգամաւորները, որոնց կարգին Մոնթեպելլոյի մասնաճիւղէն 5 պատգամաւորներ, գումարելու անդրանիկ ներկայացուցչական ժողով եւ ընտրելու Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւն:

Մոնթեպելլոյի Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղի ծաւալած գործունէութեան մասին պիտի անդրադառնանք երրորդ հատորի իր գլուխին տակ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՖՐԱՆՍԱ

- ՓԱՐԻԶ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔ
- ՄԱՐՅՍԷՅ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔ
- ԼԻՈՆ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔ
- ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ
- ՄԱՄՈՒԼ

PREFECTURE DE POLICE

RÉPUBLIQUE FRANÇAISE

Cabinet du Préfet

Sous-Direction Administrative


2^e BUREAU

Récépissé de Déclaration d'Association

(Loi du 1^{er} Juillet 1901. — Art. 5.)

(Ce numéro devra être rappelé dans toutes les communications adressées à la Préfecture de Police.)

13.026



A la date du 28 Octobre 19 48

M. onsi eur SARADJIAN , Valentin

demeurant à PARIS

rue d'Hautpoul , 42

a effectué la déclaration d'une association portant la dénomination de " ASSOCIATION FRANCAISE des SCOUTS de PARIS de l'UNION GENERALE ARMENIENNE de CULTURE PHYSIQUE ET DE SCOUTISME dite HOMENETMENE

et dont le siège social est fixé à PARIS

rue de Trévisse , 32

La déclaration doit, dans le délai d'un mois, être rendue publique par les soins de l'association, au moyen de l'insertion au Journal Officiel d'un extrait contenant la date de la déclaration, le titre et l'objet de l'association, ainsi que l'indication du siège social. (Décret du 16 août 1901, art. 1^{er}.)

Les associations sont tenues de faire connaître dans les trois mois tous les changements survenus dans leur administration ou leur direction ainsi que toutes les modifications apportées à leurs statuts. (Loi du 1^{er} Juillet 1901, art. 5.)

Les modifications apportées aux statuts et les changements survenus dans l'administration ou la direction de l'association, sont transcrits sur un registre tenu au siège de toute association déclarée; les dates des récépissés relatifs aux modifications et changements sont mentionnées au registre.

Ce registre doit être coté par première et par dernière page et paraphé sur chaque feuille par le Préfet de Police ou son délégué. (Décret du 16 août 1901, art. 6 et 31.)

Il a déposé à l'appui de cette déclaration :

- 1^o Deux exemplaires des statuts de l'association ;
2^o La liste des personnes chargées de l'administration ou de la direction de l'association ;
3^o un registre

Le présent récépissé a pour unique objet de constater le dépôt de la déclaration et des pièces annexées, sans préjuger en quoi que ce soit la légalité de l'association.

Pour le Préfet de Police :

LE CHIEF DE BUREAU,

Handwritten signature of the Chief of Bureau.

Ֆրանսայի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութեան նոր շրջան մը ի յայտ կու գայ 1946 թուականէն սկսեալ:

1940ի սկզբնաւորութեան, երկրի գրեթէ բոլոր քաղաքները, ուր Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղեր կը գործէին, քաղաքական անստոյգ վիճակներու ենթակայ էին գերմանական գրաւումին պատճառով: Երիտասարդ եւ ղեկավար Հ.Մ.Ը.Մ.ականներ, եթէ բանակի ծառայութեան մէջ չէին, շուտով փոխադրուած էին կեդրոններէն դէպի աւելի հեռաւոր ու ապահով շրջաններ, ուր կրնային իրենց գոյութիւնը ձեռով մը ապահովել: Այս պայմաններուն տակ, ինչպէս հայ ազգային որեւէ գործունէութիւն, ջլատուած էր նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութիւնը:

Բ. Աշխարհամարտի աւարտէն ետք, դէպի հայրենիք ներգաղթի օրերուն, վեթերան ղեկավարներ չյաջողեցան վերականգնել Հ.Մ.Ը.Մ-ի նախապատերազմեան գործունէութիւնը: Ազգային եւ քաղաքական զանազան թեքումներ աւելի բարդացուցին կացութիւնը եւ ջլատեցին ուժերը: Կեդրոնական Վարչութիւն եւ Սկաուտական Վերին Մարմին վերակազմելու ճիգերը մնացին ապարդիւն: Կարգ մը մասնաճիւղերէ ներս, ուր հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներ յաջողեցան կարճ ժամանակի մը համար մասնակի գործունէութիւն յաջողցնել, իրենք եւս յուսալքուեցան ու հիմնադիր Գրիգոր Յակոբեանի մահէն ետք չյաջողեցան հաւաքական եւ կեդրոնացեալ գործունէութիւն վերականգնել:

Յաջորդող էջերուն մէջ պիտի արձանագրենք այս ընդհանուր կացութեան ենթակայ կարգ մը մասնաճիւղերու անջատ գործունէութիւնները, որոնք Ֆրանսայի տարածքին տակաւին յիշելի դարձուցին Հ.Մ.Ը.Մ-ի երբեմնի յաջողութիւնները:

Կառուցային իմաստով, շատ տկար եղաւ Ֆրանսայի շրջանը, երբ պատգամաւորական ժողովներ գումարելու փորձերը մասնակի յաջողութիւններ արձանագրեցին, առանց կարենալու մէկ դրօշի տակ միացնել Հ.Մ.Ը.Մ-ի անուան

տակ գործող բոլոր հոսանքները: Բացայայտ կերպով ի յայտ եկան գործունէութեան երկու թեւեր. առաջինը՝ Գրիգոր Յակոբեանի գլխաւորութեամբ եւ յատկապէս սկաուտական ճիւղի գործունէութեամբ, երկրորդը՝ Գառլօ Շահինեանի եւ Գրիգոր Մերձանօֆի գլխաւորութեամբ եւ գլխաւորաբար մարզական բաժիններու գործունէութեամբ: Զոյգ թեւերու հակամարտութիւնները յաճախ հրապարակուեցան օրաթերթերու սիւնակներէն, շփոթի եւ անորոշութեան մատնելով հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներու այն զանգուածը, որուն միակ փափաքն էր Հ.Մ.Ը.Մ-ի միացեալ գործունէութիւնը տեսնել իր բազմաճիւղ բաժիններով եւ կառուցային ուժգնութեամբ: Գառլօ Շահինեանի եւ Գրիգոր Մերձանօֆի հրաւերով 1946ի Դեկտեմբերին գումարուեցաւ Ֆրանսայի Շրջանային Պատգամաւորական Ժողով, որմէ բացակայեցան Գրիգոր Յակոբեանի գործակիցները: Յակոբեանի առողջական վիճակն ալ չէր ներեր նոր պատասխանատուութիւններ ստանձնել: Այս ժողովի օրակարգերէն էր Ֆրանսայի շրջանի ծրագիր-կանոնագրի վերամշակումը: Վերամշակուած կանոնագրութեան յօդուած 41ը հետեւեալ տրամադրութիւնը կը պարզէր. «Հ.Մ.Ը.Մ.ը ըլլալով Սփիւռքի հայութեան մարպական եւ ընդհանուր մարմնակրթական առաջին, միակ եւ ազգային համադաշնակցութիւնը, ճանչցուած գաղութին ազգային իշխանութիւններէն եւ կապակերպութիւններէն, ինչպէս նաեւ Հայաստանի ֆիզկուլտուրայի վարչութեան, իրմէ դուրս չի ճանչնար որեւէ մարպական եւ սկաուտական խմբակցութիւն»: Այս յօդուածի տրամադրութիւնը բացայայտօրէն կ'անջատէր Յակոբեանի գլխաւորած սկաուտական բաժնի գործունէութիւնը, զայն անհարազատ որակելով:

Իսկ նոյն կանոնագրութեան յօդուած 70ը կը տրամադրէ. «Հ.Մ.Ը.Մ-ի լուծման պարագային՝ անոր ամբողջ սեփականութիւնը, գոյք, կալուած, դրամ եւայլն կը յատկացուի Հայաստանի ֆիզկուլտուրայի վարչութեան կամ հայրենիքէն հովանաւորուած համանման կապակերպութեան

նր»։ Հասկնալի է, թէ 1946ին մերձեցում մը դէպի Խորհրդային Հայաստանի վարչակարգը պիտի չքաջալերէին սփիւռքահայութեան բոլոր հոսանքները։ «Երկաթէ վարագոյր»ով բաժնուած հայրենիքի սահմանները չէին կրնար հրապուրել ազատ վարչակարգերու տակ ապրող հայութեան կառոյցները։ Այսպէսով, ժամանակի մաշումին հետ հետաքրքրութիւնները պակսեցան։ Տեղացի շրջանակներու հետ շփումի առիթները բազմապատկուեցան, մարզական եւ վարչական կազմերու մէջ հայերու թիւը նօսրացաւ եւ Հ.Մ.Ը.Մ.ի զուտ ազգային նպատակները յաջողցնելու փորձերը դադրեցան գոյութիւն ունենալէ։

Երբեմն նոյնիսկ այս հակամարտ տրամադրութիւնները Ֆրանսայի սահմաններէն դուրս գալով, արձագանգեցին այլ երկիրներու Հ.Մ.Ը.Մ.ի ղեկավարութեանց մօտ։

Ահա այս դժուարին կացութեան դիմաց, Հ.Մ.Ը.Մ.ի անուան տակ գործող մերթ միացեալ, մերթ անջատ գործունէութիւններու պատկերը պիտի ներկայացնենք հետեւեալ սիւնակներով, ընդհանուրին յատուկ կազմակերպական, մարզական եւ սկստական բաժիններով։

ՓԱՐԻՋ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔ

Ֆրանսայի Հ.Մ.Ը.Մ.ի Առժամեայ Կեդրոնական Մարմնի կազմութենէն ետք, Փարիզի շրջանը առաջինը կ'ըլլայ ընդհանուր ժողովով ընտրելու Փարիզի մասնաճիւղի վարչութիւն։ Ժողովը տեղի կ'ունենայ 4 Յունիս 1946ին։ Վարչական կազմի անդամներն են՝

- Նախագահ՝ Մկրտիչ Մալումեան
- Քարտուղար՝ Վահէ Մանուկեան
- Փոխ քարտուղար՝ Յ. Գարայեան
- Գանձապահ՝ Վահրամ Խանճեան
- Խորհրդականներ՝ Օննիկ Դարբինեան, Ծերօն Ասատուրեան, Պալի Քիւրքճեան, Վահրամ Սանոսեան, Սարգիս Վէլէտեան։

17 Յունիս 1946ին, Առնուվիլ Լէ Կոնէսի մէջ կը գումարուի անդամական ընդհանուր ժողով,

ուր վարչական կազմի անդամներ կ'ընտրուին հետեւեալները.-

- Նախագահ՝ Կարպիս Գասապեան
- Փոխ նախագահ՝ Յարութիւն Յովակիմեան
- Քարտուղար՝ Կարպիս Եկէնեան
- Փոխ քարտուղար՝ Յարութիւն Էլմաճեան
- Գանձապետ՝ Անտոն Աճեմեան
- Փոխ գանձապետ՝ Հ. Խաչիաշեան
- Խորհրդականներ՝ Բասգալ Կէօնճեան, Գրիգոր Քուզուլեան, Օննիկ Փիլաւեան, Եղուարդ Գարապօղոսեան, Գ. Պէնկեան, Նիկողոս Նիկողոսեան եւ Միհրան Շիշմանեան- [Ը. 135]։

Նոյն ձեւի վարչութիւններ, սկստական խորհուրդներ կամ աստիճանաւորական կազմեր, մեծ կամ փոքր անդամակցութիւններով, վարեցին Ալֆորվիլի, Անիէռի, Պուա Քոլոմպի, Իսիլ եւ փարիզեան այլ արուարձաններու մասնաճիւղերը, որոշ ժամանակի մը համար։

1948ի աշնան, Փարիզի մասնաճիւղի վարչութիւնը իր գանձապահին՝ Վալանթին Սարաճեանի անունով ստացաւ 28 Հոկտեմբեր թուակիր պետական արտօնագիրը։

Այս արտօնագրի հիման վրայ Փարիզի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը, գործօն թէ ոչ, ցարդ կը վերապահէ Հ.Մ.Ը.Մ. անուանակոչումը։

Ֆուրսայոլ

Փարիզի Հ.Մ.Ը.Մ.ի ֆուրսայոլի երեք խումբերը, 1948ին, միասնաբար կը հաշուեն 43 մարզիկներ։ Խումբերը իրենց փորձերը կը կատարեն Փորթ Բուշէի դաշտին վրայ եւ միայն բարեկամական մրցումներու կը մասնակցին- [ԽԱ. 5]։

Իսի Լէ Մուլինոյի մէջ կը գործեն 4 խումբեր։ Փորձերը կը կատարուին Ռիւ Տը Լ'էկալիթի դաշտին վրայ։ Իսիլի կազմերը կը մասնակցին ախոյեանական զանազան դասակարգերու մրցաշարքերուն։

Անիէռի Հ.Մ.Ը.Մ.ի զոյգ խումբերը՝ 32 մարզիկներով, իրենց դասակարգի ախոյեանութիւնը կ'ապահովեն 1948ի եղանակին- [ԽԱ. 6]։

Առնուվիլի Հ.Մ.Ը.Մ.ի երեք խումբերը կը հաշուեն 50 մարզիկներ, որոնք կը մասնակցին ախոյեանական մրցաշարքերուն, ապահովելով պատուաբեր յաղթանակներ:

Ալֆորվիլի Հ.Մ.Ը.Մ.ի երեք խումբերը միասնաբար կը հաշուեն 35 մարզիկներ:

Վերոյիշեալ բոլոր խումբերն ալ իրենց սիրողական դիմագիծով շարունակած են գործել տասնեակ տարիներու ընթացքին: Յաճախ պատահած է, որ խումբերու լաւագոյն մարզիկներէն ոմանք ներգրաւուած են տեղական արհեստավարժ խումբերու կողմէ եւ խանգարած մայր խումբերու գործունէութեան շարունակականութիւնը:

1946ին, Ալֆորվիլի Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի խումբը կը տիրանայ «Սթատ տը Լ'էսթ»ի կազմակերպած մրցաշարքի բաժակին:

Առժամեայ կեդրոնական Վարչութեան նշանակած յատուկ յանձնախումբը կը կազմակերպէ միջ-մասնաճիւղային ֆուտպոլի մրցաշարք, որուն կը մասնակցին Առնուվիլի, Անիէռի, Իսիի, Ալֆորվիլի, Իթալիի եւ Երիտասարդաց Միութեան կազմերը:

Ֆուտպոլ մշակող վերոյիշեալ մասնաճիւղերու գործունէութիւնները յաճախ պարագայական եղան, ենթարկուելով մարզիկներու եւ պատասխանատուներու կարելիութիւններուն: Նիւթական անձուկ միջոցները յաճախ արգելակեցին անոնց ընթացքը: Ոմանք յաջողեցան աւելի երկար ժամանակաշրջաններու վրայ իրենց գոյութիւնը պահել: Այսպէս, հնագոյն մասնաճիւղերէն Ալֆորվիլը Union de la Jeunesse Armenienne d'Alfortville անուան տակ, 1968ին, ունէր իր առաջին խումբը եւ քանի մը պահեստի խումբեր:

Պասքեթպոլ

Փարիզի Հ.Մ.Ը.Մ.ը ունի մանչերու երեք եւ աղջկանց մէկ խումբ: Փորձերը կը կատարուին Ռիւ Ռոշուարի, Պուլվար Սիւշէի եւ Փորթ տը Վերսայի դաշտերուն վրայ: Խումբերը 1948ին

կատարած են բազմաթիւ բարեկամական մրցումներ: Նոր եղանակէն սկսեալ կը պատրաստուին մասնակցելու ախոյեանական մրցաշարքերուն- [ԽԱ. 10]:

Անիէռի Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի երկու խումբերը կը մասնակցին միայն բարեկամական մրցումներու:

Վոլիպոլ

Փարիզի կեդրոնի Հ.Մ.Ը.Մ.ը ունի տղոց 3 խումբեր, որոնցմէ առաջինը 1947-48 եղանակին կը մասնակցի իր դասակարգի ախոյեանական մրցաշարքին, ապահովելով ախոյեանութեան տիտղոսը: Բ. եւ Գ. խումբերը եւս յաջորդ եղանակին կը պատրաստուին մասնակցելու ախոյեանական մրցումներուն:

Իսի Լէ Մուլինոյի մասնաճիւղի միակ խումբը կը մասնակցի բարեկամական մրցումներու:

Սկաուտական գործունէութիւն

Մարզականին աւելցնելով, Փարիզի եւ շրջակայքի մասնաճիւղերը կ'ունենան իրենց սկաուտական կազմերը: Փարիզի կեդրոնի սկաուտական աստիճանաւորական ցանցին նախ մաս կը կազմեն Հրանդ Սետեֆճեան, Վահէ Արսլանեան, Վռամ Գուլումճեան եւ Զաւէն: 1947ին, խումբի ընդհանուր խմբապետն է Ժան Խտըշեան, իսկ փոխ խմբապետը՝ Յակոբ Սալմասեան:

Արուարձաններուն մէջ խումբեր կը կազմուին Իսի Լէ Մուլինո, Ալֆորվիլ (խմբապետ Աշոտ Սերճանեան, Գրիգոր Զերչեան եւ աքելլա Պետիկ Պետիկեան), Շավիլ եւ Պանիէօ: 1946 Հոկտեմբեր 26ին, Առժամեայ կեդրոնական Մարմնի ի պատիւ խորհրդային մարզիկներու կազմակերպած ընդունելութեան, Պուլ Գոլումպի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական խումբը կը մասնակցի գեղարուեստական բաժինով-[Ը. 193]: Խումբը կը վարեն շրջանային խմբապետ Դաւիթ Յովհաննէսեան, փոխ խմբապետ Արման Զահրէճեան, Յակոբ Կիւրեղունի եւ Վարվարէ Յովհաննէսեան:

Առժամեայ սկսողական վերին մարմնի կողմէ շրջանային խմբապետի պաշտօնը կը վարէ Սերոբ Սերոբեան: 1946ին, Ալֆորվիլի Հ.Մ.Ը.Մ.ի սկսողական խումբի աստիճանաւորներն են Գրիգոր Չերչեան, Ս. Գարասաւմասեան, Նազարէթ Պետիկեան, Լեւոն Մեսրոպեան եւ Իրէն Փափազեան, որոնք սակայն դատապարտելով շրջանային խմբապետի գործելակերպը, կը դիմեն Վազգէն Անդրէասեանին, որպէսզի ան վարէ սկսողական շրջանային խմբապետի պաշտօնը, Գրիգոր Յակոբեանի հովանաւորութեամբ-[ՎԱ]:

1950ին, Փարիզի մօտակայ Շավիլ-Վիրոֆլէ արուարձանի սկսողական խորհուրդը կը վարեն Անահիտ Թազուրեան, Վալանթին Սարաճեան, Խորէն Մինասեան եւ Արման Զահրէճեան:

Նկատելի է, թէ Հ.Մ.Ը.Մ.ի արտօնատէր Վալանթին Սարաճեանը մաս կը կազմէ այս շրջանի սկսողական շարժման, որուն հրահրուած է մաս կազմելու Վազգէն Անդրէասեանը, նախապէս անտեսուած նոյն կազմի կողմէ՝ որպէս Գրիգոր Յակոբեանի գործակից: Կրկին մօտեցումի եւ միացումի լաւատես յոյսեր-[ՎԱ]:

ՄԱՐՍԷՅ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔ

1946էն սկսեալ, հարաւային Ֆրանսայի մէջ կը վերակազմուի Մարսէյի (Պուշ տիւ Ռոն) մասնաճիւղը, քաղաքի արուարձաններու 13 խումբերու միացումով: Այս իրականացման ետին կը գտնուին Սարգիս Ալթունեան եւ իր գործակիցները, «Նորք» մարզականի պատասխանատու-



Մարսէյի Հ.Մ.Ը.Մի ֆութպոլի Ա. խումբը 1952ին

ները եւ Մարսէյի Հ.Մ.Ը.Մ-ի նախագահը՝ Աթթարեան:

Ֆրէզի արուարձանի ֆուլթպոլի առաջին կազմը կը մասնակցի իր դասակարգի ախոյեանական մրցաշարքին, 1948ին ընդհանուր դասաւորման մէջ Բ. տեղը կը գրաւէ եւ յաջորդ եղանակին կը բարձրանայ Տիվիզիոն էքսելանս: Կրտսերները կը հասնին իրենց դասակարգի աւարտականին: Քապիւսէլի առաջին խումբը, որ 18 մրցումներէն 14ը աւարտած է յաղթանակով, յաջորդ եղանակին կը բարձրանայ Տիվիզիոն Տ'օնէօր: Սէն Ժերոմի կազմը 18 մրցումներէն 12ը կը վերջացնէ յաղթանակով, եւ նոր եղանակին կը բարձրանայ Ա. Տիվիզիոն: Շրջանին մէջ կը գործեն նաեւ Վալպառէլի եւ Պօմոնի Հ.Մ.Ը.Մ-ի խումբերը: Շրջանի խումբերու ընդհանուր թիւն է տասնմէկ՝ 222 արձանագրուած մարզիկներով:

Տարիներու գործունէութեան այս ընթացքը կը շարունակուի եւ Մարսէյի Հ.Մ.Ը.Մ-ը ֆուլթպոլի շուրջ կեդրոնացած իր գործունէութեամբ յաճախ խօսիլ կու տայ իր մասին:

1964ին, Հ.Մ.Ը.Մ-ի զանազան դասակարգի խումբերը կը միանան տեղւոյն վրայ գործող Արծիւ Մարզական Միութեան համապատասխան խումբերուն, եւ կը շարունակեն գործել Մարսէյի եւ արուարձաններու շրջանակէն ներս՝ Հ.Մ.Ը.Մ.-ԱՐԾԻԻ միացեալ անուան տակ:

Հ.Մ.Ը.Մ.-ԱՐԾԻԻ գործունէութիւնը մերթ փայլուն, մերթ համեստ արդիւնքներով կը շարունակէ իր գոյութիւնը պահել, հարաւային Ֆրանսայի ֆուլթպոլի ֆետերասիոնի մնայուն անդամակցութեամբ: Սէնթ Անթոնիան թաղամասի խումբը կը գործէ U.S.J. Armenienne անուան տակ: 1968ին, Մարսէյի Հ.Մ.Ը.Մ-ը կը կազմակերպէ Միութեան հիմնադրութեան յիսնամեակի յօբելենական հանդիսութիւն:

Մարտ 1974ին, Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան անդամ Բիւզանդ Թորիկեան յատուկ առաքելութեամբ կ'այցելէ Մարսէյի Հ.Մ.Ը.Մ.-ԱՐԾԻԻ պատասխանատուներուն, անոնց ներկայացնելու համար 1974ին կայանա-

լիք Համագաղութային Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի եւ Կեդրոնական Վարչութեան ստեղծումի պարագաները: Հակառակ հաւաստիացումներու, Մարսէյի Հ.Մ.Ը.Մ-ը կը բացակայի վերոյիշեալ ժողովէն եւ մաս չի կազմեր Հ.Մ.Ը.Մ-ի համագաղութային կառոյցին:

Հ.Մ.Ը.Մ.-ԱՐԾԻԻ տարիներու ղեկավարութեան մաս կազմած են Բաֆֆի Նազարեան, Աշոտ Վարդանեան եւ ուրիշներ: Զանազան տարիքի տասնեակ մը խումբերու գործունէութեամբ, Հ.Մ.Ը.Մ.-ԱՐԾԻԻ ելոյթները ազգային նպատակներու ծառայեցնելու ճիգերը երբեմն յաջող արդիւնքներու են հասած:

Սկաուտական գործունէութիւն

Հարաւային Ֆրանսայի յետ-պատերազմեան վերակազմեալ գործունէութեան սկաուտական ճիւղի յաջողութեան նպաստած են շրջանային խմբապետ Մկրտիչ Փափազեան եւ իր օգնականները՝ Պերճ Ֆերհատեան եւ Անդրանիկ Ադամեան, իսկ արենոյշներու բաժնին մէջ՝ Հայկուհի Տօնապետեան, որոնք Մարսէյի արուարձաններուն մէջ կազմեցին սկաուտական խմբակներ եւ լծուեցան անոնց զարգացումին, յատկապէս Սէնթ Ան արուարձանի շրջանին մէջ:

Սակայն մասնագէտ խմբապետներու պակասը շուտով զգալի կը դառնայ: 1949ին, մասնաճիւղը կը դիմէ Փարիզ, նախկին շրջանային խմբապետ Ժիրայր Մինթանճեանին, զայն հրաւիրելով որ Մարսէյ հաստատուի եւ կազմակերպէ մասնաճիւղի սկաուտական շարժումը:

Մարսէյի Հ.Մ.Ը.Մ-ի ղեկավարութեան գրեթէ միակ հետաքրքրութիւնը կը մնայ ֆուլթպոլը, որու խումբերուն մաս կը կազմեն սկաուտական տարիքի պատանիները, այսպիսով սկաուտական շարժումը մոռացութեան կ'ենթարկուի:

ՆԻՍ

1925ին, Պոլսոյ Պալատի մասնաճիւղի նախկին Հ.Մ.Ը.Մ.ականներու հիմնած Նիսի մասնա-

ճիւղը 1946ի Ֆրանսայի Շրջանային Պատգամաւորական Ժողովին մասնակցած է իր պատգամաւորով, իբրեւ Ֆրանսայի շրջանի կառույցին մաս կազմող մասնաճիւղ, սակայն Հայ Մարզական Միութիւն անուան տակ:

Նիսի Հ.Մ.Մ.ը իր հիմնադրութեան օրէն գործած է հայեցի միջավայրի մէջ, կազմաւորելով իր անդամներն ու մարզիկները: Ծանօթացուցած է հայութիւնը եւ անոր ազգային նպատակները իր շրջանակի պաշտօնական անձնաւորութիւններուն եւ տեղացի ժողովուրդին: Մշակած է ֆուտպոլ եւ պասքեթպոլ:

Ֆրանսացի լրագրող մը Նիսի Հ.Մ.Մ.ի մասին ակնարկելով գրած է. «Անձնապէս կը յիշեմ, երբ պատանի խաղացող մըն էի, հայկական խումբ մը՝ որ ասպարէզ կը կարդար այն ատենուան լաւագոյններուն, պատուոյ դասակարգին մէջ իսկ: ԿԱՄՔԻ ՈՒԺԸ, ԿՈՐՈՎԸ ԵՂԱԾ ԵՆ ԱԻԱՆԴԱԲԱՐ ՅԵՂԻՆ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ... »:

Նիսի Հ.Մ.Մ.ի շարքերէն եկած են Ֆրանսահայ նշանաւոր իրաւարարներ՝ Միշէլ Քիթապճեան, Էօրտէքճեան եւ Սաճեան: Ժամանակի ընթացքին, Նիսի Հ.Մ.Մ.ի վարչական կազմերուն նախագահած են Վռամշապուհ Յովնանեան, Պարոյր Յովնանեան, Ենովք Խաչատուրեան, Պարգեւ Օտաճեան, Մամբրէ Ագոլանեան, Ժիրայր Մաղպուրեան, Ժիրայր Մազլումեան եւ Ռոպէր Գանձանակեան:

ԼԻՈՆ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔ

Բ. Աշխարհամարտի աւարտին, վերականգնելու համար Հ.Մ.Ը.Մ.ի նախապատերազմեան գործունէութիւնը, Տեսինի մէջ նախկին Հ.Մ.Ը.Մ.ականներ կը կազմեն միացեալ մարմին մը: Մարմին կը մասնակցին նաեւ Լիոնի մասնաճիւղի նախկին անդամներ, որոնք միասնաբար կը վարեն U.G.A. Լիոն-Տեսին ֆուտպոլի խումբը: Մարմնի անդամներն են՝ Տեսինէն՝ Գ. Տապպաղեան, Մ. Դանիէլեան, Ա. Առաքելեան, Վ. Մոմճեան եւ Կարօ Օհանեան, իսկ Լիոնէն՝ Գ.

Դաւիթեան, Օ. Եղիայեան, Պ. Թորիկեան, Տիրան Պեճիտեան, Ս. Սարեան եւ Խ. Սողոմոնեան:

Մասնաճիւղի խումբերու թիւը կարճ ժամանակի ընթացքին կը բարձրանայ չորսի, զանազան դասակարգերու վրայ բաժնուած, որոնցմէ իւրաքանչիւրը կը մասնակցի նահանգի իր դասակարգի ախոյեանութեանց մրցաշարքերուն- [Ը. 47]:

1964էն 1972 ժամանակաշրջանին, Լիոն-Տեսինի խումբի խաղացողներէն ժան Ճորքայէֆ (Եոլրի Ճորքայէֆի հայրը) մաս կազմած է Ֆրանսայի ազգային խումբին, մերթ խմբապետի պաշտօնով, ապա փոխանցուած է Օլիմբիք տը Լիոն խումբին- [ԾԱ. 1997]:

1968ին, միութեան յիսնամեայ յոբելենական տարուայ վերընճիւղման առթիւ, օգտուելով քաղաքապետութեան տրամադրած ֆուտպոլի դաշտի առաւելութիւններէն, խումբերու գործունէութիւնը նոր թափ կը ստանայ:

Տարիներու ընթացքին ի յայտ կու գայ, թէ գրեթէ միայն հայերէ կազմուած վարչութեան ենթակայ խումբերը միայն փոքր համեմատութեամբ հայ մարզիկներէ կը բաղկանան, իսկ մեծամասնութիւնը Ֆրանսացի կամ այլ ազգերու պատկանող մարզիկներ են, եւ թէ նման կազմի խումբերով կարելի չէ Հ.Մ.Ը.Մ.ի ազգային նպատակներուն ծառայող գործունէութիւն մշակել:

Ֆուտպոլի խումբերը իրենց գործունէութիւնը կը շարունակեն, մեծ համեմատութեամբ արհեստավարժ դիմագիծով:

Ժամանակի ընթացքին, Տեսինի Հ.Մ.Ը.Մ.ի ղեկավարութեան մաս կազմած են Վահան Յակոբեան, Կարօ Օհանեան, Սեպուհ Սարեան, աւելի ուշ՝ Գրիգոր Ասլանեան եւ ուրիշներ:

ՎԻԷՆ

1946ի Ֆրանսայի Շրջանային Պատգամաւորական Ժողովէն բաժանուելէ ետք, Վիէնի Հ.Մ.Ը.Մ.ի երբեմնի մասնաճիւղը կը գործէ

Ֆուլթայոլի զոյգ ակումբներու զուգահեռ գործունէութեամբ, ինչպէս կը վկայէ յիսնամեակի նուիրուած Ֆրանսատառ ալպոմը- [Զ.13]:

Առաջինը՝ U.S.A. VIENNE, 1946ին կը ղեկավարուի վարչական հետեւեալ կազմով.

Ատենապետ՝ Մամբրէ Ալթունեան

Ատենադպիր՝ Ժոզէֆ Պէյլէրեան

Գանձապահ՝ Նշան Այվազեան

Խմբապետ՝ Համբարձում Շարբազեան

Խորհրդականներ՝ Տէրտէրեան, Տէյիրմէնճեան, Ճիկերճեան, Սաթըլմշեան:

Առաջին եղանակը կ'աւարտի նահանգի ախոյեանութեան մրցաշարքին իր բաժանմունքին աւարտականի դիրքին հասնելով եւ 1-1 հաւասար արդիւնք արձանագրելով Lyon Olympique Universitaireի զօրաւոր կազմին դէմ: Խումբի կազմին անդամներն են՝ Ադամ Պելասեան, Խաչատուրեան, Յակոբ Մինասեան, Համբարձում Շարբազեան, Թոնի Համալեան, Փօլ Պօզոսեան, Ժորժ Ճիրիզեան, Պալապանեան, Սուրէն Չելեպեան, Տորչուեան, Գրիգոր Սիմոնեան, Մկօ Տէր Սարգիսեան եւ Սաթըլմշեան:

Դէպի հայրենիք ներգաղթի պատճառով, կազմի մասնակի տիրացումէն ետք, U.S.A. Վիէնի կազմը հետզհետէ նոր յաղթանակներով իր դիրքը կը բարելաւէ նահանգի ախոյեանութեան մրցաշարքերուն մէջ, զանազան դասակարգի խումբերով: Խումբերը կը մարզուին քաղաքապետարանի դաշտին վրայ, որ կը կրէ Բ. Աշխարհամարտին նահատակուած մարզիկ ժան Պերպաթեան անունը:

1950-60 տասնամեակին նորեկներ կը փոխարինեն իրենց երէց խմբակիցները: Այս կարգի մարզիկներն են՝ Ռոժէ Տօնապետեան, Թէոտոր Քէչիշեան, Ժագ Միրզոյեան, Թարասվիէն Վարատեան, Լեւոն Կարապետեան, Ժան Քայաճեան, Ալպէր Աւետիսեան եւ Վեսքովի:

Վիէնի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը ներկայացնող երկրորդ ֆուլթայոլի ակումբն է U.G.A. Վիէնը, որուն մարզիկները կը կրեն Հ.Մ.Ը.Մ.ի վահանը իրենց շապիկներուն վրայ: 1946ին, այս

խումբի վարչութեան անդամներն են՝ նախկին Հ.Մ.Ը.Մ.ի պատասխանատուներէն՝ Տիգրան Փափազեան, Մարտիկ Փափազեան, Տէրմոյեան, Սարգիս Գալուստեան, Նուպար Ալեքսանեան եւ Մարտիրոս Չոպոյեան, որոնք ֆուլթայոլի կողքին կը կազմակերպեն սկաուտական եւ մարմնամարզի այլ բաժինները:

Ֆուլթայոլի առաջին կազմի անդամներն են՝ Մօրիս Պարգեան, Կիւլ Զարդարեան, Ազատ Օհաննէսեան, Ազատ Պալեան, Լեւոն Տօնապետեան, Նաճարեան, Պարոնեան, Ժան Թադէոսեան, Սարգիս Զարդարեան, Պոլէր, Մուրատեան, Թի, Աբիսողոմ Թորոսեան եւ Նուպար Ալեքսանեան:

Կրտսերներու կազմը կը բաղկանայ հետեւեալ մարզիկներէն. Սիմոն Մուրատեան, Միշէլ Էօքսիւզեան, Օննիկ Տոլմաճեան, Ժան Այանեան, Փիէլ Էօքսիւզեան, Ժան Գրղըլեան, Մանուէլ Զատիկեան, Ժորժ Ռուստիկեան, Ժան Կարապետեան, Ծովակ Կարապետեան եւ Արտաւազդ Մանուկեան-[Զ.19]:

Վերոյիշեալ երկու կազմերն ալ նահանգային պաշտօնական մրցաշարքերուն ընթացքին կարեւոր յաղթանակներով խօսիլ կու տան իրենց մասին, հետզհետէ դասակարգի բարձրացումով:

1964ին, վերոյիշեալ երկու ակումբներու պատասխանատուները, յաղթահարելու համար հետզհետէ դժուարացող գոյութեան պայմանները՝ նիւթական, խաղավայրի, նոր մարզիկներու ապահովման կամ այլք, խոհեմութիւնը կ'ունենան միասնաբար դիմագրաւելու վերոյիշեալ դժուարութիւնները եւ կը ծրագրեն միանալ: Այս առթիւ անոնք կը հրապարակեն հետեւեալ յայտարարութիւնը.

«Nous venons de constater la similitude de la vie de nos deux sociétés.

«Ces deux voies parallèles sont si proches qu'elles semblent défier les lois géométriques. La naissance de nouvelles difficultés communes va provoquer l'UNION».

«Ներկայիս կ'անդրադառնանք մեր պոյզ ընկերակցութիւններու կեանքի ընթացքին նմանողութեան:

«Այս պուգահեռ ուղեգիծերը այնքան մօտ են իրարու, որ կը թուին խախտել երկրաչափական օրէնքները: Ստեղծուող նորանոր եւ ընդհանրական դժուարութիւնները պատճառ պիտի դառնան մեր ՄԻԱՅՈՒՄին»:

Միացեալ կազմակերպութիւնը կը կոչուի U.S.G.A VIENNE՝ Վիէնի Հայ Մարզական Ընդհանուր Միութիւն: Անդրանիկ վարչութիւնը կը կազմուի հետեւեալներէն.

Ատենապետ՝ Մարսէլ Անտոնեան

Փոխ ատենապետ՝ Անտրէ Հելոյեան

Ատենադպիրներ՝ Նշան Այվազեան, Ֆրանսիս Օտուէն, Անթուան Աւետիքեան.

Գանձապահներ՝ Աւագ Լուսարարեան, Գրիգոր Բալոյեան

Մամլոյ պատասխանատու՝ Կիւլպենկ Զարդարեան

Խորհրդականներ՝ Փօլ Պօղոսեան, Ադամ Պելասեան, Ժագ Շիրիթեան, Շարլ Բալթոպետրոսեան, Սարգիս Զարդարեան:

Միացեալ ֆութպոլի կազմով, 1961-62 եղանակին, առաջին խումբը կը մնայ նահանգի առաջին խմբակցութեան մէջ: Կրտսերներու եւ փոքրերու խումբերու արդիւնքները պահ մը կը նահանջեն:

Յաջորդող եղանակներուն եւ մինչեւ 1974 տարին, Վիէնի զանազան դասակարգի խումբերը կը շարունակեն մնալ պատնէշի վրայ, կազմերը ամբողջացնելով տեղական ուժերով: 1973ին, Ա. խումբի անդամներն են՝ Ճիկերճեան, Անտոնեան, Պերթոլոթի, Միգեան, Տեհարօ, Ալպէր եւ Դանիէլ Հայթայեաններ, Հանրի Պէյլէրեան, Գըղըլեան, Արթիւր Մինասեան, Գոսէ, Դանիէլ Կարապետեան, Շանլոն, Կէօչ, Շեմուլ, Պաղտասարեան, Աւետիսեան, Չելեպեան եւ Չոպոյեան եղբայրներ-[2.39]:

ՎԱԼԱՆՍ

Միջին Ֆրանսայի Լիոնի ենթաշրջանի հայաշատ քաղաքներէն է Վալանսը: Վալանսի մէջ Հ.Մ.Ը.Մ.ը (հիմնուած՝ 1926ին) ունեցած է մարզական եւ սկաուտական աշխուժ գործունէութիւն, քաղաքի Bourg les Valance արուարձանին մէջ:

1945ի յետ-պատերազմեան շրջանին, Վալանսի մասնաճիւղը կը վերսկսի գործունէութեան, սակայն 1946ի Դեկտեմբերին կայացած Ֆրանսայի Շրջանային Պատգամաւորական Ժողովէն կը բացակային իր ներկայացուցիչները: Մասնաճիւղը կը շարունակէ գործել անկախաբար: Ֆութպոլի խումբերը կը մասնակցին Տրոմ-Արտէշ նահանգի Ֆետերասիոնի մրցաշարքերուն: Մակարդակի յաճախակի ելեւէջներու ենթակայ այս խումբերը կրնան հպարտանալ իրենց կազմերուն մէջ գրեթէ միայն հայ մարզիկներ ունենալու իրողութեամբ: Ազգային նպատակներու ծառայութիւնը Վալանսի Հ.Մ.Ը.Մ.ի ղեկավարութեան առաջնահերթ մտահոգութիւնը եղած է, եւ միայն հայերէ բաղկացող խումբերու գործունէութիւնը նպաստած է այդ նպատակին:


Ֆութպոլի կողքին, Վալանսի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը մշակած է նաեւ պասքեթպոլի ճիւղը: Քաղաքապետութիւնը նիւթապէս կը քաջալերէ Վալանսի Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւն տրամադրելով դաշտ եւ կազմածներ: Մասնաճիւղի մարզական եւ ընկերային գործունէութիւնը կը կեդրոնանայ Վալանսի Հայ Տան շուրջ:

Վալանսի մասնաճիւղն ալ իր գործունէութիւնը կը շարունակէ անջատաբար, առանց ենթակայութեան Փարիզի Շրջանային կամ Առժամեայ Կեդրոնական Մարմնին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ


ՅՈՒՆԱՍՏԱՆ

- ՖԻՔՍ-ՏՈՒՐՂՈՒԹԻ-ՆԷՈՍ ԳՈԶՄՈՍ
- ԳՈՔԻՆԻԱ
- ԲՆՈՒԹԱՍԷՐՆԵՐ
- ՍԻՆԿՐՈՒ-ԿԵՍԱՐԻԱՆԻ-ԳԱՐԷԱ
- ՍԵԼԱՆԻԿ
- ԼԻԲԱԶՄԱ-ԹԱՄՊՈՒՐԻԱ
- ԱՄԱՐՈՒՍ
- ՓԱԹՐԱՍ
- ՌԵԹԻՄՆՕ
- ԱԹԷՆՔ
- ՆԷԱ ԶՄԻՌՆԻ
- ԻՐԱՔԼԻՈՆ



ԷԳԵԱԿԱՆ ԾՈՎ

ՄԻՋԵՐԱՐԱԿԱՆ ԾՈՎ



ՅՈՒՆԱՍՏԱՆ

1940-էն սկսեալ, Համաշխարհային Ընդհանուր Պատերազմի ազդեցութեան ենթարկուեցան Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր մասնաճիւղերը, անխտիր:

Տնտեսական ճնշիչ պայմաններուն վրայ եկան բարդուիլ քաղաքական դիրքորոշումներու պատճառով դաւադիր կեցուածքները, զինուորական տարիքի մէջ գտնուող բազմահարիւր Հ.Մ.Ը.Մ.ականներու դրօշակի ծառայութեան կոչուիլը, ինչպէս նաեւ յունահայ գաղութի ներքին դժուարութիւնները:

Հրապարակի վրայ մնացած փոքրաթիւ ղեկավարներն ալ պարտադրաբար ստիպուեցան որդեգրել զգուշաւոր գործունէութիւն: Մէկ խօսքով, Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերը հետզհետէ տկարանալով անուանական գոյութիւն մը միայն պահեցին, մատնուելով անգործունէութեան: Պէտք էր սպասել մինչեւ 1945 թուականի սկիզբը, իրողապէս կրկին վերականգնելու համար Յունաստանի Շրջանային Կեդրոնական Վարչութեան եւ մասնաճիւղերու գործունէութիւնները, իրենց սկառուտական եւ մարզական բաժիններով:

Յունահայ օրաթերթ «Ազատ Օր»ի 18 Մարտ 1945ի թիւին մէջ կը կարդանք. «Ինչպէս բոլոր ազգային կազմակերպութիւնները, Հ.Մ.Ը.Մ.ն ալ վերակազմութեան շրջան մը կը բոլորէ: Սկառուտական ճիւղերը տենդագին աշխատանքի լծուած են Գոքինիոյ եւ Ֆիքսի մէջ: Մօտ օրէն զգեստաւորուած պիտի ըլլան հայ արիւններու խումբերը, իրենց մասնակցութիւնը բերելու համար ազգային որեւէ կարեւոր հանդիսութեան: Շնորհաւորելի են այն խումբ մը երիտասարդները, որոնք արհամարհելով ամէն խոչընդոտ, կը ջանան հայ պատանիները առաջնորդել առաքինութեան ճամբէն- [ԽԵ/18.3.1945]:

Այսպէս հետզհետէ իրենց կենսունակութիւնը վերագտան հետեւեալ մասնաճիւղերը. Գոքինիա, Ֆիքս, Սելանիկ, Ամարուս, Սինկրու, Լիբազմա եւ Ռեթիմնօ:

Աւելի ուշ, հիմնուեցան Փաթրասի, Նէա Զմիռնիի եւ Իրաքլիոնի մասնաճիւղերը:

1946ին սկսաւ լոյս տեսնել շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Մարմնամարզ»ը, սատարելով կազմակերպութեան վերածնունդին:

ՖԻՔՍ-ՏՈՒՐՂՈՒԹԻՆԷՆՍ ԳՈԶՄՈՍ

1920ական թուականներուն, Աթէնքի կեդրոնէն մի քանի քիլոմետր հեռու գտնուող յունահայ կարեւորագոյն գաղթականներ հայերու կողմէ կ'անուանակոչուի մօտակայ «Ֆիքս» գարեջուրի գործարանին անունով: Այդպէսով, հոն գտնուող Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղն ալ կը կոչուի Ֆիքսի մասնաճիւղ: Ժամանակի ընթացքին կարեւորութիւն ստացած այս գաղթականներ թաղամասերու վերածուելով քաղաքապետութեան կողմէ կը կոչուի նաեւ Տուրղութի, ապա՝ Նէոս Գոզմոս անուններով: Սակայն հայերը կը շարունակեն զայն կոչել իր նախկին անունով:

ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ֆիքսի Հ.Մ.Ը.Մ.ի յետ-պատերազմեան անդամական առաջին ժողովը տեղի կ'ունենայ 13 Յունիս 1945ին, Հայ Կաթողիկէ վարժարանի սրահին մէջ:

Տարեվերջին, վարչութիւնը նոյն վայրին մէջ կը ձեռնարկէ ահուժբի մը շինութեան: Ահուժբի բացումը տեղի կ'ունենայ 12 Մայիս 1946ին:

Ահուժբին մօտ կը սարքուի նաեւ մասնաճիւղի նոր մարզադաշտը, որուն բացումը տեղի կ'ունենայ 8 Յունիս 1947ին:

5 Մարտ 1948ին, անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ մասնաճիւղի նոր վարչութիւն, որուն անդամներն են Նազար Գալայճեան, Վահէ Փաթթուքեան, Վարուժան Պոյաճեան, Անդրանիկ Էրջնեան, Գրիգոր Գասպարեան, Կարպիս Փափազեան, Հայկազ Կոբոյեան եւ Գրիգոր Եորղանճեան: Կազմը ամբողջացնելու համար կը հրաւիրուի նաեւ Կարպիս Գուլումճեանը: Իսկ



Հ.Մ.Ը.Մ.ի Ֆիքսի մասնաճիւղի վարչական կապւմը 1947ին: Ուոքի՝ Մանուկ Մանուկեան, Կրենթէս Պալթայեան, Ահարոնեան, Նապար Գալայճեան: Նստած՝ Վարդիվառ Գրիշիքեան, Լեւոն Գայեան, Գրիգոր Ժամկոչեան

1950ին վարչութեան մաս կազմած են Նազար Գալայճեան, Հրանդ Կարապետեան, Մինաս Մինասեան, Կրենթէս Պալթայեան, Կարպիս Գոլյոմճեան, Վարուժան Պոյաճեան, Արամ Գոճայեան, Յարութիւն Գրիշիքեան եւ Յակոբ Գաբթանեան: Այս վարչութեան օրով մասնաճիւղի գործունեութիւնը բացառիկ յառաջդիմութիւն կ'արձանագրէ: Ֆութպոլի խումբերը կը բազմանան, աթլետիկայի կողքին կը կիրարկուին նաեւ պասքետպոլը՝ երկու սեռի խումբերով եւ վոլիպոլը: Իր գործունեութեան առաջին վեցամսեայ ընթացքին վարչութիւնը արդէն ծախսած է շուրջ երեք միլիոն տրախմի: Զօրաւոր հիմերով վրայ դրուած այս գործունեութիւնը իր բարեբեր արդիւնքները պիտի տար յաջորդող տարիներու ընթացքին:

1951ին, մասնաճիւղի վարչութեան մաս կը կազմեն Հրանդ Կարապետեան, Մինաս Մինասեան, Կարպիս Գոլյոմճեան, Վարդեվառ Էլմէսէքեան, Սերգօ Յովհաննէսեան, Սերգօ Իսկահատեան, Օննիկ Մարտիւմեան եւ Յակոբ Գաբթանեան: Անդամական պատկերը կը ներկայանայ հետեւեալ ձեւով. սկաուտներ՝ 70, մարզիկներ եւ օժանդակներ՝ 120, պատուոյ անդամներ՝ 60:

1952ին վարչութեան ատենապետութիւնը կը ստանձնէ Համբարձում Կիւտէնեան: Վարչութեան գործունեութիւնը բոլոր ճիւղերուն վրայ նոր թափով կը ծալալի եւ անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 288ի: Սակայն, վարչութիւնը իր ժամանակի աւարտէն առաջ կը հրաժարի:

1953ի Յունուարին տեղի կ'ունենայ անդամական ընդհանուր ժողով, միակ օրակարգ ունենալով նոր վարչական կազմի ընտրութիւն:

Վարչութեան անդամ կ'ընտրուին Վահէ Փաթթուքեան, Յակոբ Գաբթանեան, Օննիկ Մարտումեան, Մանուկ Գասպարեան եւ Յակոբ Գոնեալեան: Ի պաշտօնէ այս կազմին կը միանան Սերգօ Իսկահատեան (պասքեթպոլի խմբապետ), Գ. Սէֆէրեան (ֆութպոլի խմբապետ) եւ Վարդիվառ էլմէսէքեան (սկառուտական խմբապետ):

1958էն սկսեալ վարչութեան ատենապետութիւնը կրկին կը վստահուի Համբարձում Կիւտէնեանին:

1959ի վարչական կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Համբարձում Կիւտէնեան

Փոխ ատենապետ՝ Վ. Գալայճեան

Ատենադպիր՝ Մ. Էրջենեան

Գանձապահ՝ Կարպիս Գուլումճեան

Ֆութպոլի պատասխանատու՝ Թ. Նահապետեան

Պասքեթի պատասխանատու՝ Փ. Գարամանեան

Սկառուտական պատասխանատու՝ Յ. Տէր Յովակիմեան

Խորհրդական՝ Տ. Տէր Ղուկասեան:

ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

Ֆութպոլ

Ֆիքսի Հ.Մ.Լ.Մ.ի կիրակած մարզական կարեւորագոյն ճիւղը ֆութպոլն է: Այս ճիւղին մէջ մասնաճիւղի զանազան կազմերը յաջողած են ախոյեանական մրցաշարքերու յաղթանակներով իրենց դասակարգը բարելաւել, ինչպէս նաեւ յունական ֆութպոլին եւ Հ.Մ.Լ.Մ.ի մայր խումբերուն յաջողակ մարզիկներ տրամադրել:

1945-1946 տարեշրջանին խումբը կը պատկանի Գ. դասակարգին: Խումբին մաս կը կազմեն Դանիէլ Դանիէլեան, Ժիրայր Հանէեան, Յակոբ

Գրիշիքեան, Կարապետ Թաղէոսեան, Վրէժ Գալայճեան, Կարապետ Յակոբեան, Գեղամ Սէֆէրեան, Աբրահամ Աբրահամեան, Յակոբ Թերգեան, Հուկէն Մինասեան, Փանոս Գարամանեան եւ Պաքիսթա: Ֆութպոլի տակաւ զարգացումով, խումբը 1950ին կը մասնակցի Յունաստանի բաժակի մրցաշարքին: Խումբի նոր մարզիկներէն են Վարդիվառ էլմէսէքեան, Պօղոս Օղլուքեան, Սարգիս Եափուճեան, Պօղոս Սաղրեան, Հայկ Մկրտիչեան, Յակոբ Մաւիլեան, Նշան Եափուճեան, Պետրոս Գաբրիէլեան, Յովհաննէս Տանձիկեան, Բաֆֆի Պալեան, Յովհաննէս Եզեկիէլեան, Սարգիս Դանիէլեան եւ Յովիկ Տէմիրճեան: Բ. խումբի մարզիկներն են Վարուժան Սավուլեան, Ն. Ճիզմեճեան, Մ. Մանուկեան, Մ. Մաւիլեան, Ա. Յակոբեան, Գ. էլմէսեան, Բ. Քեքիճեան, Հ. Մկրտիչեան, Յ. Ասլանեան, Ա. Պերպէրեան եւ Ղ. Թոփճեան:

Ժամանակի ընթացքին, Բ. խումբի մարզիկները յառաջդիմելով եւ փորձառութիւն ձեռք ձգելով կ'անցնին Ա. խումբ, որուն, 1952ին կը մասնակցին Վարուժան Սավուլեան, Վ. Գալայճեան, Ղ. Թոփճեան, Հ. Մկրտիչեան, Պ. Սաղրեան, Գ. էլմէսեան, Ա. Պարամեան, Յ. Մարկոսեան, Յ. Տանձիկեան եւ Սէֆէրեան եղբայրները:

1958-1960 տարեշրջաններուն Ֆիքսի վարչութիւնը յանձն կ'առնէ Աթէնքի Բ. դասակարգի ախոյեանութեան մասնակցող՝ ֆութպոլի Ա. եւ Բ. խումբերու մեծածախս գործը, որուն համար 1960ին կը ծախսէ իր տարեկան պիւտճէի հարիւրէն յիսուն տոկոսը՝ 15.000 տրախմի:

1974ի եղանակին մասնաճիւղի խումբը Աթէնքի շրջանի ախոյեանութեան մասնակցող 143 խումբերուն մէջ առաջին կը հանդիսանայ իբրեւ տիպար կազմ, որ ոչ մէկ պատիժ ստացած է ամբողջ տարեշրջանի ընթացքին: Խումբին մաս կը կազմեն Յակոբ Եթիմեան, Կարօ Գազիրեան, Յովակիմ Եափուճեան, Աւետիս Կիլգէլեան, Սիմոն Ղեւոնդեան, Պաղտիկ Գարապաճաքեան, Դանիէլ Դանիէլեան, Վարուժան Չաքմաքճեան, Եդուարդ Թոքեան, Յարութիւն Խաչատուրեան, Սերգօ Մինասեան, Թրիքոն Գա-

սեսեան, Արմենակ Սանտիկեան, Վարդան Պապիկեան, Միխայիլ Աթանասիու եւ Եորկիոս Ֆանոբուլոս:

Պասքեթպոլ

Պասքեթպոլը մասնաճիւղի երկրորդ գլխաւոր մարզախաղն է: 1950էն սկսեալ երկու սեռերու կողմէ կիրարկուող այս մարզախաղը կ'ունենայ իր կազմակերպուած խումբերը եւ հետաքրքրուող համակիրներ, որոնք պասքեթպոլը կը քաջալերեն: Պասքեթպոլի խումբերու պատասխանատուներն են Հրայր Քէօթելեան եւ Մայտա Պարտիզպանեան, իսկ մարզիչի պաշտօնը կը վարեն Վ. Պէյլէրեան եւ Պատրիկ Աֆէյեան (աղջկանց մարզիչ):

1951ին, աղջկանց խումբին մաս կը կազմեն Տ. Թերզեան (խմբապետ) Մ. Ադամեան, Թ. Կարապետեան, Մարի Աճեմեան, Մ. Չաքմաքճեան, Ա. Պոյաճեան, Ֆ. Ալթունեան, Ա. Մաւիլեան, Տ. Պոյսըզեան, Ա. Ծառուկեան եւ Մ. Յարութիւնեան: Խումբը առաջին անգամ ըլլալով, Յուլիսին, կը մասնակցի Աթէնք - Բիրէա շրջանի աղջկանց 7 խումբերու միջեւ կազմակերպուած մրցաշարքին:

Տղոց խումբի անդամներն են Ս. Յովհաննէսեան, Գալուստ Գոհարունի, Մ. Թորոսեան, Մ. Տիոնեան, Մ. Գասպարեան, Յ. Ազատեան, Սերգօ Իսկահատեան, Ա. Մինասեան, Հ. Քէօթելեան, Յ. Գոհարունի, Վ. Կիրակոսեան եւ Յ. Գոնեալեան:

1953ի եղանակին աղջկանց խումբին կը միանան Հ. Նշանեան, Պ. Պալեոզեան, Պ. Շահնազարեան եւ Մայտա Պարտիզպանեան: Խումբի մարզիչն է Թ. Թէֆանիս, որ միաժամանակ կը խան-մարզէ Բանաթինայիքոսի խումբը: Ղափառ ընդունելութեանց առիթ կը հանդիսանայ, 1955ի Ապրիլին, Պոլսոյ Կեդրոնական Վարժարանի պասքեթպոլի խումբի այցելութիւնը Յունաստան, որ հանդիպումներ կ'ունենայ Ֆիքսի Հ.Մ.Ը.Մ.ի եւ տեղական այլ խումբերու դէմ:

Պասքեթպոլի ճիւղի յառաջդիմութեան գլխաւոր առանցքը կը հանդիսանայ Առաքելեան-Կիւտէնեան մարզադաշտի սարքաւորումը եւ անոր ծառայութիւնը մասնաճիւղի խումբերուն: Բացի ախոյեանական մրցաշարքերու մասնակցութենէն, մասնաճիւղի կազմը բարեկամական մրցումներ կ'ունենայ ամերիկեան մարտանաւերու նաւաստիներու խումբերուն դէմ, յաճախ յաղթական արդիւնքներով:

1971ի եղանակին խումբի մարզիկներն են Կ. Գարամանեան, Գէորգ Եսայեան, Արմէն Եղուպեան, Բարսեղ Պիպեռեան եւ Սամի Ասատուրեան:

Պասքեթպոլի դաշտի լուսազարդումը կը գնահատուի 60-70 հազար տրախմիով:

Վոլիպոլ

Մասնաճիւղի անդրանիկ խումբը կը կազմուի 1946ի Մայիսին: Այս խումբին անդամներն են Կարպիս Ֆրունճեան, Կ. Կարապետեան, Օննիկ Օննիկեան, Գեղամ Սեֆերեան, Ն. Մուրատեան եւ Օ. Սաղրեան: Առաջին օրերէն իսկ, այս խումբի յաղթանակները կ'ըլլան յատկանշական, եւ խումբին շուրջ կը հաւաքեն քաջալերողներու հոյլ մը: Սակայն, այս թափը կանգ կ'առնէ 1949ի սկիզբը, վերսկսելու համար աշնան: 1950էն սկսեալ վոլիպոլի խումբը կը դառնայ հաստատուն, հետզհետէ նոր հասնող մարզիկներու մասնակցութեամբ:

Լողորդութիւն

Այս ճիւղին մէջ եւս Ֆիքսի մարզիկները միջ-մասնաճիւղային մրցումներուն յաջող արդիւնքներ կ'արձանագրեն, եւ 19 Օգոստոս 1962ի մրցումներուն անոնք կը տիրանան առաջնութեան: Լողորդութեան ճիւղի խմբապետն է Պետօ Բանիկեան:

Աթլետիզմ

Ֆիքսի մասնաճիւղի մարզիկները իրենց կի-

րարկած մարզախաղերու կողքին կը մասնակցին նաեւ աթլետիք մրցումներու: Արձանագրելի է անոնցմէ Պետրոս Բանիկեանի անունը, որ 1959ի գարնանային Քրոս Քաունթրիի 5000մ. մրցումին 350 մասնակցողներու մէջ առաջին կը հանդիսանալով կը ստանայ «Աթլետիքի Իխօ» թերթի տրամադրած բաժակը:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

Ֆիքսի վերաշխուժացման տարիներուն մարզականի կողքին սկաուտական շարժումն ալ նոր թափ ստացաւ: Մասնաճիւղի սկաուտական պատասխանատուները անմիջապէս վերակազմակերպեցին այս ճիւղի զանազան բաժինները:

Շուտով արշաւներն ու բանակումները իրարու յաջորդեցին եւ շարքերը արձանագրեցին զգալի թուական աճ: Աստիճանաւորական ցանցը կազմուած էր հետեւեալներէն. Աւագ պետ՝ Լեւոն Գայեան, խմբապետներ՝ Գրիգոր Ժամկոչեան, Սեդրակ Օհանեան, Մանուկ Մանուկեան, Կարպիս Աւագեան եւ Նուպար Պարութեան, աքելաներ՝ Յակոբ Պողոսեան, Կարօ Ճամրզեան եւ Կ. Գասապեան: 1945ի աշնան ընդհանուր թիւը կը բարձրանայ 120ի:

1946ին, սկաուտները կը բաժնուին երկու խումբերու: Ա. խումբի պատասխանատուն է Մանուկ Գրիգորեանը, իսկ Բ. խումբինը՝ Պողոս Պողոսեանը: Կիրակի, 11 Օգոստոսին, ընդհանուր խումբը բանակում մը կը կատարէ Քավուրիի մէջ, ուր տեղի կ'ունենայ 150 սկաուտներու երդման արարողութիւնը:

1948էն սկսեալ, սկաուտական կազմերը իրենց ձեռք բերած փորձառութեամբ աւելի յաջող ելոյթներ կ'ունենան: Սեպտեմբեր 18էն Հոկտեմբեր 3, էգալիի մէջ կը կազմակերպեն բանակում, ղեկավարութեամբ Վարդեվառ Էլմէսէքեանի եւ օժանդակութեամբ Սերգօ Իսկահատեանի, Ա. Աճեմեանի, Օննիկ Օննիկեանի եւ Ա. Ունանեանի: Այս ձեւի յաջող ելոյթները խումբին շուրջ նոր ուժեր կը կեդրոնացնեն, արժա-

նանալով գնահատանքի- [ԽԵ/13.10.48]: 1949ի Փետրուարին, Ֆիքսի մասնաճիւղի սկաուտական բաժնի պատասխանատուութիւնը կը ստանձնէ Յակոբ Զաքարեան: Զուտ սկաուտական գործունէութեան կողքին, Ֆիքսի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները կը մասնակցին ազգային եւ պետական հանդիսութեանց: Կը կազմակերպեն տողանցքներ եւ կը հսկեն հանդիսութեանց կարգապահութեան: Սբ. Ծննդեան տօներու առթիւ կը կատարեն Աւետումի շրջագայութիւն, ինչպէս նաեւ գաթայի հաւաքոյթներ:

1956ին, սկաուտական բաժնի խմբապետն է Աբրահամ Գոճայեան, իսկ գայլիկներու պատասխանատուն՝ Կ. Ճամճեան, որոնք գործակցաբար կը վերականգնեն մասնաճիւղի սկաուտական գործունէութիւնը: 30 Յունիս 1957ին, տեղի կ'ունենայ երդման արարողութիւն, ուր 30 գայլիկներ կը փոխանցուին սկաուտական շարքերը: Աբրահամ Գոճայեանին կը յաջորդէ Խաչիկ Սեւտայեանը:

Զուտ սկաուտական աշխատանքներու կողքին, Ֆիքսի Հ.Մ.Ը.Մ.ի խումբերը կը մասնակցին ընկերային եւ բարեսիրական աշխատանքներու ինչպէս նաեւ ճակատի վրայ գտնուող զինուորներուն ի նպաստ նուիրահաւաքի:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1948ին մասնաճիւղը կը հրատարակէ «Սկաուտին Ալպումը»՝ 150 էջնոց պատկերազարդ հատորը՝ նուիրուած Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան երեսնամեակին եւ Յունաստանի շրջանի 25ամեայ գործունէութեան:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

Մասնաճիւղը միջ-անդամական ընկերային կապը զօրացնելու համար կը կազմակերպէ դաշտագնացութիւններ եւ արշաւներ դէպի տեսարժան վայրեր: Նշանաւոր է 3 Օգոստոս 1952ի

վարչութեան կազմակերպած արշաւը դէպի Քալամոս, որուն կը մասնակցին նաեւ Գոքինիոյ, Աթէնքի եւ Նէա Զմիռնիի մասնաճիւղերու անդամներ: Տեղւոյն վրայ տեղի կ'ունենան նաեւ լողորդութեան մրցումներ 100 եւ 200 մեթր ազատ լող եւ դրօշարշաւ՝ մեծերու եւ փոքրերու:

28 Սեպտեմբեր 1952ին, Ֆիքսի Սբ. կարապետ եկեղեցւոյ մէջ տեղի կ'ունենայ հոգեհանգստեան յատուկ արարողութիւն եւ յիշատակի ոգեկոչում Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի հանգուցեալ եւ նահատակ անդամներուն:

ԳՈՔԻՆԻՍ

ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

1945ին, Հ.Մ.Ը.Մ.ի Գոքինիայի մասնաճիւղը առաջինը հանդիսացաւ, որ վերսկսաւ յետպատերազմեան իր գործունէութեան: Աչնան, գործօն անդամներու թիւն է 150: Մասնաճիւղը իբրեւ հաւաքավայր կ'օգտագործէ Զաւարեան վարժարանի մանկապարտէզի սրահներէն մին: Վարչութեան ատենապետն է Յովհաննէս Յովհաննէսեան:

1947ին, վարչութեան եռանդամ կազմին անդամներէն է Լեւոն Խաչատուրեան:

Վարչութեան ծրագիրն է ունենալ Ֆուլթոնի եւ պասքեթպոլի սեփական դաշտեր: Այս ծրագիրը կ'իրականանայ 1949ի վերջաւորութեան եւ մարզական զոյգ ճիւղերը, ինչպէս նաեւ վոլիպոլը, աւելի արագ կը զարգանան: 1950ին, մասնաճիւղը սկստակաւ զոյգ խումբերու կողքին ունի մարզական հետեւեալ խումբերը, Ֆուլթոն, վոլիպոլ, փինկ-փոնկ, պասքեթպոլ եւ աթլետիզմի նորակազմ խումբ մը:

1955ին, անդամներու ընդհանուր թիւն է 127, բաղկացած հետեւեալներէն: 24 գայլիկ, 32 սկաուտ, 16 ծովային սկաուտ, 55 մարզիկ եւ գործօն անդամներ: Կիրարկուող մարզաճիւղերն են: Ֆուլթոն, վոլիպոլ, պասքեթպոլ, փինկ-

փոնկը եւ լողորդութիւնը: Վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Յ. Նալճեան:

1960ին, վարչութեան մաս կը կազմէ կարօ Մինասեան:

1961ին, վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Ս. Պալեան:

1963էն, սկսեալ վարչութեան մաս կը կազմէ Տիգրան Սրապեան, 1969էն ետք՝ ատենապետութեան պաշտօնով:

ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

Գոքինիայի մասնաճիւղը 1940ական թուականներուն իր մարզական ճիւղերու ցանցին վրայ ֆուլթոնի կողքին ունի աթլետիզմի, լողի եւ վոլիպոլի մարզախաղերը:

1945ին, վոլիպոլի խումբը կը տիրանայ Բիրէայի քաղաքապետին տրամադրած բաժակին, ապա՝ Բիրէայի շրջանի ախոյեանութեան: Հետզհետէ, խումբի անդամներու փոփոխութեամբ, այս ճիւղը իր գերակայութիւնը կը հաստատէ քաղաքին մէջ: 1949ին, վոլիպոլի խումբի աստղերէն է Յարութիւն Նալճեանը: Խումբը տասնեակ տարիներ փնտռուած խաղակից մը կը մնայ շրջանի մարզական շրջանակներուն մօտ: 1956ին, միջ-ակումբային մրցաշարքին, կազմը կը տիրանայ «տիպար խումբ»ի բաժակին: Գոքինիոյ Հ.Մ.Ը.Մ.ը աւանդութիւն կը դարձնէ տարեկան վոլիպոլի մրցաշարքի կազմակերպումը, որուն կը մասնակցին շրջանի զօրաւորագոյն կազմերը: Խումբի երկար տարիներու խմբապետութիւնը վարած է կարապետ Չալեանը: 1970ին, խումբի լաւագոյն խաղացողներէն եղած են Յ. Սրապեան, Յ. Գասապեան, Մ. Անթուան, Յովհաննէս Առաքելեան եւ Սեդրակ Փոստաճեան:

Սեպտեմբերին, մասնաճիւղի լողի խումբը առաջին կը հանդիսանայ Շրջանային Վարչութեան կազմակերպած լողի մրցումներուն: Այս յաղթանակի գլխաւոր կերտիչը կ'ըլլայ օրուան ախոյեան, Գառնիկ Ժամկոչեան:

1951ին, պասքեթպոլի խումբը կը վերակազմուի Արա Մինասեանի ղեկավարութեամբ: Հետզհետէ, յաջողակ մարզիկներու մասնակցութեամբ եւ հետեւողական փորձերով, 1953ին, խումբը կը յաջողի տիրանալ շրջանի չորս խումբերու միջեւ կազմակերպուած մրցաշարքի բաժակին, վերջին մրցումին յաղթելով «Տաֆնի» խումբին: Իբրեւ փնտռուած մրցակից՝ խումբը կը հրաւիրուի նաեւ մասնակցելու Գոքինիոյ հիմնադրութեան երեսնամեակին առթիւ կազմակերպուած մրցաշարքին:

1955ին, մասնաճիւղի խումբին մաս կը կազմեն Գէորգ Սեւակեան, Հրայր Արչակունի, Օննիկ Շանկայեան, Կ. Աւագեան, Կ. Չիչէկեան, Տ. Սեւակեան, Թ. Ասիպեան եւ Վարդանիկ: Հետզհետէ նորեր կը միանան վերոյիշեալներուն, ինչպէս՝ Ա. Մինասեան, Պ. Պետրոսեան, Ա. Փոստաճեան եւ Գ. Աւագեան:

Ֆութպոլ

Գոքինիոյ Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի խումբը կը վերակազմուի 1947ի աշնան, կատարելով հետեւողական փորձեր եւ բարձրացնելով խաղի թեքնիք մակարդակը: 1951ին, մասնաճիւղի խումբին մաս կազմած են Ա. Մինասեան, Ժ. Հանէեան, Օ. Եզեկիէլեան, Ս. Պալեան, Յ. Շանկայեան, Գ. Ունճեան, Պ. Տայեան, Ա. Մանուկեան, Օ. Մինասեան, Կ. Հալվաճեան, Յ. Տէմիրճեան, Վ. Ապաճեան, Գ. Սեւակեան, Պ. Գաբրիէլեան եւ Ռ. Պալեան:

1955ին, խմբապետն է Գ. Սեւակ: 1956ին, ի միջի ալոց, խումբին մաս կը կազմեն՝ բերդապահներ՝ Վարուժան Սաւուլեան եւ Մկրտիչ Փիլիպոսեան, Պօղոս Սաղրեան, խմբապետ՝ Ղ. Եափուճեան, Յ. Եզեկիէլեան, Գէորգ Սեւակեան, Ղ. Գասպարեան, Հ. Մկրտիչեան, Յովհաննէս Տանճիկեան, Սարգիս Եափուճեան, Գուրգէն Սեֆերեան, Ս. Գուլյումճեան, Տ. Յակոբեան, Գ. Քէօրհաճեան:

1957ին, նոր ուժեր կը փոխարինեն նախորդները, ինչպէս՝ Աբրահամ Պօղոսեան, Ղազարոս

Աբրահամեան, բերդապահ Օննիկ Տազսեան, Հրանդ Վարդանեան, Նորայր Պետրոսեան, Զ. Գասպարեան, Արիս Միքայէլեան, Աւետիս Շիրինեան եւ Սարաֆեան:

1961ին, ֆութպոլի խումբը վերակազմակերպուի կ'ենթարկուի: Խումբի նորեկ խաղացողներէն են Յարութիւն Արապեան, Օննիկ Շանկայեան, Սեդրակ Փոստաճեան, Աբրահամ Աբրահամեան, Վարդան Զարդարեան, Կարապետ Զալեան, Կարօ Աւագեան եւ Կարպիս Ունճեան, որոնք նախկին խաղացողներ Հրանդ Վարդանեանի եւ Աւետիս Շիրինեանի կողքին յաղթական ելույթներ կ'ունենան ֆետերասիոնի կազմակերպած մրցաշարքերուն եւ ախոյեանութեան մրցումներուն ընթացքին: 1963ին, խումբին կը միանան նաեւ Աւետիս Արապեան, Յ. Այանեան, Գ. Ասիլեան, Ա. Ղազարեան, Գէորգ Պաղուանդեան, Գրիգոր Մովսէսեան, Յ. Մովսէսեան եւ Գրիգոր Փափագեան: Խումբի մարզիչի պաշտօնը սիրայօժար կը կատարէ Պ. Վլասի: Յարատեւ փոփոխութեամբ, 1965ին, խումբին կը միանան նաեւ Գ. Լեւքոբուլոս, Ղ. Պոնափարթիս, Յ. Գարայեան, Յարութիւն Նաճարեան, Թազուր Յովակիմեան եւ Ն. Իսիտորոս, փոխարինելով կարգ մը հին խաղացողներ: 1965ին, խումբը կը պատկանի Բերէայի Գ. դասակարգին: 1970ին խումբին մաս կազմած են նաեւ Կարօ Մովսէսեան, Յակոբ Խաչիկեան, Յովհաննէս Առաքելեան, Ստեփան Աւագերէցեան եւ Օննիկ Շիրինեան:

Խումբը՝ յարատեւ յառաջդիմութեանց իբրեւ արդիւնք՝ 1973ին կը տիրանայ Բերէայի իր դասակարգի ախոյեանութեան: Կը փոխադրուի Բ. դասակարգ, ուր շուտով կը սկսի գրաւել յառաջացեալ դիրքեր:

Աթլետիզմ

Գոքինիոյ մասնաճիւղի աթլետներն ալ ունեցած են ելույթներ, յատկապէս տեղական ազումբներու կազմակերպած խաղերուն իրենց մասնակցութեամբ: Այսպէս՝ 18 Ապրիլ 1954ին, մաս-

նաճիւղի աթլեթներէն Պօղոս Տայեան, Թորոս Ասիպեան, Պօղոս Ասիպեան եւ Հրայր Արշակունի կը մասնակցին Ա ՕՆՍ ազգային 25ամեակին առթիւ կազմակերպուած Քրոսի մրցումներուն- [ԽԵ/28.4.54]:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Գոքինիոյ մասնաճիւղի սկաուտական շարժումն ալ յետ-պատերազմեան իր զարթօնքը կ'ապրի: Խոստումը վերակազմութեան կը նպաստեն խմբապետ Կարպիս Տէր Մեսրոպեանը եւ ընդհ. վարիչ Փիլսկիլեանը:

1946ի Յուլիսին, աստիճանաւորական կազմը եւ երէց սկաուտներ իրենց առաջին բանակումը կը կազմակերպեն Գալամոսի ծովեզերեայ շրջանին մէջ: Օգոստոսին, ընդհանուր խումբը իր բանակումը կը կազմակերպէ Փասիտէրիի անտառին մէջ:

1947ի աշնան, 103 սկաուտներ իրենց 24 օրուան բանակումը կը կատարեն Էքալիի մէջ:

1948ի Սբ. Զատիկուայ օրը, եկեղեցական արարողութենէն ետք, սկաուտներ ունեցած են յատուկ հաւաքոյթ, որու ընթացքին փոխ առաջնորդի աստիճան ստացած են Ս. Թեպերիկեան, Կ. Տէմիրճեան, Համբարձում Մատթէոսեան եւ Յ. Արշակունի: Յաջորդ տարին, կրկին Սբ. - Զատիկուայ օրը, Թեպերիկեան եւ Արշակունի առաջնորդի աստիճան կը ստանան, իսկ Ա. Պարոնեան, Յ. Թագւորեան եւ Տ. Տատուեան կը ստանան փոխ առաջնորդի աստիճան: Սակայն, աստիճանաւորական ցանցի այս կազմութեան կը վնասեն յաճախակի մեկնումներ, խախտելով հետեւողական աշխատանքի արդիւնքները: 1949ի ամրան, խմբապետ Միքայէլ Եմէնիճեան եւ առաջնորդ Գառնիկ Եմէնիճեան կը մեկնին Արժանթին, ուր իրենցմէ առաջ Գոքինիոյ սկաուտական շարքերու վարիչներ արդէն մեկնած են, մինչ ուրիշներ կը պատրաստուին հետեւելու անոնց: Մեկնումներու այս շղթան ախտագին վիճակի մը կը վերածուի: Այսուհանդերձ, մնա-

ցողները մեծ հաւատքով կը վերակազմեն սկաուտական շարքերը, խմբապետութեամբ Պերճ Գրիգորեանի եւ փոխ-խմբապետութեամբ Հ. Փաթթուկեանի: Խոստումը յունական սկաուտական ֆետերասիոնի կողմէ ծանօթ է որպէս 47րդ խումբ:

1952 Յունիս ծին, խումբը արշաւ մը կը կազմակերպէ դէպի Այիա Թրիատա, իսկ Օգոստոսին՝ բանակում՝ Մանկուֆայի անտառին մէջ:

1953ին, 8 նորագիրներ կու տան նորընծայի իրենց երդումը: Խմբապետական կազմը, Ամանորի եւ Վարդանանցի տօներուն առթիւ, սկաուտներու յատուկ հաւաքոյթներ կը կազմակերպէ, ուր ներկայ կ'ըլլան վարչութեան եւ Շրջանային վարչութեան անդամները:

Սկաուտական խումբի կարեւոր այցելութիւններէն է 22 Յուլիսէն 7 Օգոստոս 1954ի ճամբորդութիւնը դէպի Պոլիս, ուր 10 Հ.Մ.Ը.Մ. կան սկաուտներ եւ 19 յոյն սկաուտներ միանաբար կ'այցելեն տեսարժան վայրեր, ինչպէս նաեւ հայկական եւ յունական պատրիարքարաններ: 5 Դեկտեմբեր 1954ին, մասնաճիւղն ծովային սկաուտներու նորակազմ խմբակի ղեկման արարողութիւնը տեղի կ'ունենայ աւարեան վարժարանի բակին մէջ, խմբապետութեամբ Վ. Փաթթուկեանի եւ փոխ խմբապետութեամբ Յ. Փաթթուկեանի:

1955ին, սկաուտական խումբէն չորս անդամներ՝ Երուանդ Պարոնեան, Կարապետ Աւագեան, Պօղոս Աշըքեան եւ Գրիգոր Գիզիրեան, հետեւելէ ետք հեյլէն սկաուտական կեդրոնի յատուկ դասընթացներուն, խմբապետական աստիճան կը ստանան:

1957ին, գայլիկներու աքելլան է Յ. Ճամուզեան:

1960 եղանակին տարեկան բանակումը տեղի կ'ունենայ Սալամենա կղզիին մէջ: Մասնաճիւղի ընդհ. խմբապետ Պերճ Գրիգորեանին կ'օժանդակեն խմբապետ Վ. Ապաճեան եւ փոխ խմբապետներ Կարապետ Աւագեան եւ Թ. Ասիպեան:

Գայլիկներու պատասխանատունն է Գ. Աւագեանը:

1971ին, Գոքինիոյ աստիճանաւորական կազմի պատկերն է հետեւեալը.-

Ընդհանուր խմբապետ՝ Պերճ Գրիգորեան

Փոխ խմբապետ՝ Պօղոս Չոլաքեան

Աքելա՝ Հայկ Չիչեկեան

Վարիչ առաջնորդներ՝ Բարի Արշակունի, Լեւոն Չերչեան

Խումբի ընդհանուր թիւնն է 47:

1973էն սկսեալ, մասնաճիւղի ընդհանուր խմբապետի պաշտօնը կը փոխանցուի Պօղոս Չոլաքեանին:

Չուտ սկաուտական գործունէութեան կողքին, զանազան առիթներով Գոքինիայի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները մասնակցած են ազգային եւ պետական հանդիսութիւններու եւ տօնակատարութեանց: Նոյնպէս, խումբերը օժանդակած են ազգայիններու՝ երբ կարիքը զգացուած է անոնց օգնութեան:

Այսպէս, Սեպտեմբեր 1946ին, Բիրէայի նաւահանգիստին մէջ սկաուտները օժանդակած են հայերու Հայաստան վերադարձի աշխատանքին: Յունաստանի ազգային տօներուն առթիւ եւ պաշտօնական հանդիսութեանց, կարգապահութեան հսկած եւ պատշաճ առիթներով Հ.Մ.Ը.Մ.ի անունով ծաղկեպսակներ զետեղած են:

Խումբի սկաուտներ մասնակցած են Սբ. Յակոբ եկեղեցւոյ մէջ Աւագ Ուրբաթի թաղման թափօրին:

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Մասնաճիւղի ղեկավարութիւնը եւ սկաուտական շարքերը, իւրաքանչիւր տարի, աւանդութիւն դարձուցած են ազգային, եկեղեցական եւ պետական տօնախմբութեանց իրենց պաշտօնական մասնակցութիւնը: Այսպէս, Ապրիլ 24ի սգատօնը, Մայիս 28ի տարեդարձը, Վարդանանցի հանդիսութիւնները առիթներ եղած են պաշ-

տօնական մասնակցութեանց: Նոյնպէս, զանազան առիթներով մասնաճիւղի սկաուտական պատուիրակութիւնները ծաղկեպսակներ զետեղած են յունական «Անծանօթ Զինուոր»ի շիրիմին:

2 Դեկտեմբեր 1951ին, մասնաճիւղը կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի Օրը՝ հովանաւորութեամբ Մամբրէ Արք. Սիրունեանի:

ԲՆՈՒԹԱՍԷՐՆԵՐ

Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի բնութասէրներու միաւորը, հիմնուած 1937ին, Բ. Ընդհանուր Պատերազմի պարտադրած դադարէն ետք, 1947ի սկզբնաւորութեան կը վերսկսի իր գործունէութեան:

Համեմատաբար երէց Հ.Մ.Ը.Մ.ականներէ կազմուած այս երկսեռ խմբակցութիւնը, իբրեւ մարզական գործունէութիւն, կը կազմակերպէ արշաւներ, շրջապտոյտներ եւ տեսարժան վայրերու տրուած այցելութիւններ՝ օգտակարը միացնելով հաճելիին: Իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ական առանձին միաւոր, շարժումը ունի պետական յատուկ ճանաչում եւ մաս կը կազմէ Յունաստանի բնութասիրական միութեանց համադաշնակցութեան:

1947ի Փետրուարի վերջաւորութեան, 35 հոգիէ բաղկացած խումբը, առաջնորդութեամբ խմբապետ Բասթալ Մկրտիչեանի, տարուան առաջին արշաւը կը կազմակերպէ: Ինքնաշարժով 3 ու կէս ժամ ճամբորդելէ ետք, խումբը կը հասնի Մանտրա: Ապա 1 ու կէս ժամ քալելով կը բարձրանայ դէպի Մելեթաքի գեղատեսիլ անտառները, ուր կազմակերպուած էր միօրեայ արշաւը:

Կիրակի, 2 Մարտին, երկրորդ արշաւը կը կազմակերպուի դէպի Գալամոս: Ահա թէ ինչպէս կը նկարագրէ բնութասէրներու այս արշաւը «Ազատ Օր»ի թղթակիցը՝ Պահակ.

«Հ.Մ.Ը.Մ.ի բնութասիրականները անցեալ Կիրակի, իրենց 35 երկսեռ անդամներով ճամբայ ելան դէպի Գալամոս:

«Ամբողջ ճամբու ընթացքին, խանդավառ խմբերգներ երգուեցան եւ թոքեր մաքրուեցան քաղաքի թունաւոր մթնոլորտէն: Ժամը 10ին արդէն Գալամոս հասանք: Անմիջապէս փութացինք ընտրել մեր բանակումի վայրը: Քիչ վերջ, արդէն անտառին մէջ, աղբիւրին մօտ, ուր առատ ջուրը կը հոսէր, դրուած էր սեղանը եւ բոլորս մեր նախաճաշը կ'ընէնք մեծ ախորժակով: Քոյր եւ եղբայր էին բոլորը, նախորդ պատերազմի սերունդ, որոնք իրենց հայութենէն ոչ մէկ բան չէին կորսնցուցած, ընդհակառակը, ամէն մէկը ի վիճակի էր՝ հայ մըն ալ փրկել այլասերման վտանգէն: Այս ալ Հ.Մ.Ը.Մ.ի գործն է եւ անոր գաղափարականին կը պարտինք բոլորս մեր ազգային դիմագիծը:

«Ագորտէոնի, կիթառի, ֆիսարմոնիայի ընկերակցութեամբ երգուեցան շատ մը հայերէն, ինչպէս նաեւ յունական երգեր ու նախաճաշին յաջորդեցին խաղեր եւ ծովու լոգանք:

«Ամբողջ օրը վայելեցինք բնութեան գեղեցկութիւնները եւ իրիկուան ժամը ճին ճամբայելանք դէպի տուն, գոհ եւ բարձր տրամադրութեամբ,

«Ամէն պտոյտ կը գերազանցէ նախորդը, գեղեցիկ յիշատակ մը թողելով»- [ԽԵ/17.3.1947]:

Վերոյիշեալ արձանագրութիւնը ամբողջապէս կը բնութագրէ Հ.Մ.Ը.Մ.ական այս շարժումի նպատակը, միջոցները, գործելակերպը եւ շարժումին մասնակիցներու նկարագիրը: Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի ղեկավարութիւնը սկիզբէն քաջալերող կը հանդիսանայ այս շարժումին, որուն ընթացքը կ'երկարի յաջորդող տասնամեակներուն վրայ:

Շրջանային Վարչութիւնը բնութասէրներու քով կը ներկայացուի կազմի անդամ Կարօ Մարութեանով:

Բնութասէրներու վարչութիւնը կը կազմակերպէ նաեւ դասախօսութիւններ՝ ազգային, միութենական եւ յատկապէս շարժումի կարեւորութիւնը շեշտող նիւթերու շուրջ:

1949ին, բնութասէրներու վարչութեան մաս կը կազմեն Տոքթ. Պոյաճեան, Կարօ Մարու-

թեան, Լեւոն Սարեան, Թագլոր Տիլսիզեան, Յարութիւն Սվազլեան, Բասթալ Մկրտիչեան եւ Երանուհի Պարութեան: Հիմնադրութենէն մինչեւ 1950ի աւարտը, բնութասէրներու շարժումը արդէն իրագործած է 300 արշաւներ: Այս տասնամեակին առթիւ, 5 Նոյեմբեր 1950ին, վարչութիւնը կը կազմակերպէ արշաւ-երեկոյթ մը, գեղարուեստական ճոխ բաժինով: Շարժումը ունի ամսական հերթականութեամբ լոյս տեսնող տեղեկատու իր թերթիկը:

1952ին, բնութասէր Հ.Մ.Ը.Մ.ականներու թիւը կը հասնի 60ի:

1953ի սկիզբը, ներքին անհասկացողութիւններու պատճառով, կարգ մը անդամներ կը փորձեն անջատողական շարժում մը յառաջացնել: Շրջանային Վարչութիւնը նշանակովի նոր վարչութիւն մը կը յառաջացնէ հետեւեալ կազմով.-

- Ատենապետ՝ Մինաս Մելքոնեան
- Ատենադպիր՝ Յարութիւն Սվազլեան
- Գանձապահ՝ Զաւէն Թոքաթլեան
- Արշաւներու խնամակալ՝ Գալուստ Գոհարունի

Խորհրդական՝ Վարուժան Գալաթեան:

Այս վարչութեան ճիգերով բնութասէրներու միաւորը կը վերադառնայ իր հունին եւ շուտով կը վերսկսի արշաւներու իր շարքը:

25 Հոկտեմբեր 1953ին, անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ, մասնակցութեամբ՝ Մինաս Մելքոնեանի, Պօղոս Պօղոսեանի, Գալուստ Գոհարունիի, Յովհաննէս Փափագեանի եւ Սիրվարդ Աթանասեանի:

Բնութասէրներու շարժումը նաեւ կ'ունենայ Սելանիկի մասնաճիւղի մօտ իր գործունէութիւնը, ուր յատուկ յանձնախումբ մը կը գործակցի մասնաճիւղի վարչութեան:

29 Յունուար 1956ին, անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութեան մաս կը կազմեն Տոքթ. Յովհաննէս Պոյաճեան, Պօղոս Պոյաճեան, Արամ Էսկիճեան, Սիրվարդ Աթանասեան, Մինաս Մելքոնեան, Արմէն Աճէմեան

եւ Յակոբ Տէր Յովակիմեան: Ֆետերասիոնի մօտ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչն է Հրայր Քէօթեւեան: Անդամական ընդհանուր ժողովը անգամ մը եւս կը հաստատէ բնութասէրներու ենթակայութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի ծրագիր-կանոնագրին:

Անկախ բնութասիրական գործունէութեան, Հ.Մ.Ը.Մ.ի բնութասէրներէ կազմուած վոլիպոլի խումբեր պարբերաբար մասնակցած են հեւլէն բնութասէր այլ մարզական խումբերու միջեւ կազմակերպուած մրցաշարքերուն-*[ԽԵ/5.9.57]*:

Բնութասէրներու վարչութեան կազմակերպած արշաւները սպասուած առիթներ են աթէնահայ երիտասարդութեան համար, երբ իւրաքանչիւր առիթ իր շուրջ կը հաւաքէ սիրողներու կարեւոր թիւ մը: Այսպէս, հետզհետէ, կը կազմակերպուին արշաւներ.

1958 Օգոստոսին, եռօրեայ արշաւ դէպի Պելլոպոնէս՝ 47 մասնակցող, խմբապետութեամբ Ա. Շանկայեանի:

1959 Մարտին, երկօրեայ արշաւ դէպի հիւսիսային Էվիա՝ 40 մասնակցող, խմբապետութեամբ Տ. Արշակունիի:

1960 Մարտին, եռօրեայ արշաւ դէպի Բաթրաս՝ 38 մասնակցող, խմբապետութեամբ Մանուկ Մանուկեանի:

Այս ձեւով շարքը կը շարունակուի յաջորդող տարիներուն վրայ երկարելով:

Բնութասէրներու արշաւները տեղի կ'ունենան շաբաթավերջերուն, ի բաց առեալ հայկական տօներու զուգադիպող շաբաթներուն, որպէսզի անդամները հետեւին եկեղեցական արարողութիւններուն:

ՍԻՆԿՐՈՒ-ԿԵՍԱՐԻԱՆԻ-ԳԱՐԷԱ

Հ.Մ.Ը.Մ.ի Սինկրուի մասնաճիւղի յետպատերազմեան գործունէութեան առաջին արձագանգները մեզի կը հասնին 1946էն սկսեալ:

1 Յունուար 1946ին, տեղի կ'ունենայ մասնա-

ճիւղի ամանորեայ հաւաքոյթը, Սինկրուի ժողովարանի սրահին մէջ: Շրջանային վարչութեան կողմէ ներկայ է Վարդգէս Շահինեան, իսկ սկաուտական վերին մարմինի անդամներէն՝ Գ. Գուլյումճեան, Ս. Հաճիպօղոսեան եւ Հ. Տէտէեան: Մասնաճիւղի սկաուտական վարիչ-խմբապետն է Թոմպուլեան:

Վարդգէս Շահինեան, խօսք առնելով շեշտը կը դնէ սկաուտական շարժման կարեւորութեան վրայ, ըսելով՝ «Սկաուտիկներ Հ.Մ.Ը.Մ.ի ծառին արմատն է...» եւ մաղթելով, որ 1947 Ամանորը տօնուի «Միացեալ եւ ապառ Հայաստանի մէջ»:

18 Յունուար 1946ին, տեղի կ'ունենայ անդամական ընդհանուր ժողով, օրակարգ ունենալով 1946ի վարչութեան եւ Յունաստանի 19րդ Պատգամաւորական ժողովի պատգամաւորներու ընտրութիւնները: Մասնաճիւղի պատգամաւորները կանոնաւորաբար մասնակցած են յաջորդական Պատգամաւորական ժողովներուն: Յունաստանի 20րդ Պատգամաւորական ժողովի արձանագրութեանց մէջ Սինկրուի Հ.Մ.Ը.Մ.ի մասին կը կարդանք հետեւեալը. «Այս մասնաճիւղը սկիզբէն ի վեր եղած է քանակով եւ գործունէութեամբ համեստ: Ասոր վրայ աւելցաւ նաեւ հայրենադարձի հետեւանքով բնակչութեան երեք չորրորդ համեմատութեամբ նուազումը, որ աւելի եւս սահմանափակեց գործունէութեան ասպարէսը:

«Սակայն, ի պատիւ արուարձանին սրտցաւ երիտասարդութեան, անիկա վերակապմեց իրեն սիրելի կապակերպութիւնը»:

Մասնաճիւղի կիրարկած գլխաւոր ճիւղը սկաուտիզմն է: Սինկրուն ունի նաեւ Ֆութպոլի խումբ:

1948ին, Սինկրուի Հ.Մ.Ը.Մ.ը կը ստանայ պաշտօնական ճանաչում: Այս առթիւ սկաուտական խումբի ընդհ. պատասխանատու կը նշանակուի Կարօ Ճամուզեանը:

1949 տարեշրջանի վարչութեան մաս կը կազմեն՝

Ատենապետ՝ Երուանդ Քեմենչեճեան
Քարտուղար՝ Նուպար Եսայեան
Գանձապահ՝ Ստեփան Գայրքճեան

Խորհրդականներ՝ Երուանդ Ալակչօզեան,
Կարպիս Եագուպեան:

Այս վարչութեան գլխաւոր աշխատանքը կ'ըլլայ նոր ուժեր միացնել մասնաճիւղի գործունէութեան եւ պայքարիլ յունախօսութեան դէմ այն անդամներուն մօտ, որոնց ազգային զգացումները վառ կը մնան: Ընկերային զանայան ձեւի հանդիպումներ եւ հիւրասիրութիւններ կը նպաստեն այս նպատակներու իրագործման:

1947ին, մասնաճիւղը տղոց խումբի կողքին կը կազմէ նաեւ վոլիպոլի աղջկանց խումբ մը, նոր հետաքրքրութիւն ստեղծելով մասնաճիւղի մարզական գործունէութեան շուրջ: Տարեվերջին կը կազմուի նաեւ հայերէն գրքերու գրադարան մը, օգտակար ըլլալու համար Սինկրուի անդամներու մտային եւ մշակութային զարգացումին:

Շրջանային Վարչութիւնը, իր կարգին, ճիգ չի խնայեր եւ մնայուն ներկայութեամբ կը քաջալերէ մասնաճիւղի ներքին եւ հրապարակային ելոյթները:

19 Մարտ 1950ին, մասնաճիւղէն 4 պատգամաւորներ՝ Երուանդ Քեմենչեճեան, Ստեփան Գայրքճեան, Կարօ Ճամուզեան եւ Նուպար Եսայեան կը մասնակցին Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի 22րդ. Պատգամաւորական ժողովին:

Հետզհետէ հայութեան եւ շրջանի տնտեսական կացութիւնը կը բարելաւուի եւ Կեսարիանիի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին կ'ունենայ ծխատէր քահանայ: Մասնաճիւղը կը մնայ շրջանի միակ կազմակերպուած միութիւնը, որուն շուրջ բոլորուած է փոքրաթիւ հայութիւնը: Մասնաճիւղը այս թուականէն սկսեալ ծանօթ է իբրեւ Կեսարիանիի Հ.Մ.Ը.Մ.:

Սկիզբէն ի վեր աւանդութիւն դարձած Կաղանդի օրուայ հաւաքոյթը, տարուէ տարի զարգանալով, 1954ին կը վերածուի պարերեկոյթի,

Հ.Մ.Ը.Մ.ի ահումբին մէջ մէկտեղելով հայ եւ յոյն քաջալերող անձնաւորութիւններ: Մասնաճիւղը կը կազմակերպէ տարեկան պարահանդէսներ, գանձանակին եկամուտ ապահովելու եւ նորահաս սերունդը հայկական մթնոլորտի մէջ իրար քով բերելու նպատակով:

1955ին, մասնաճիւղի անդամ-անդամուհիներէն կազմուած թատերախումբ մը յաջողութեամբ կը ներկայացնէ «Ամերիկահայ Փեսացու»ն զաւեշտը, որ կը կրկնուի Ֆիքսի մասնաճիւղին մէջ:

1956ին՝ Ապրիլեան սգահանդէս:

1957ին՝ դասախօսական երեկոյ, նիւթ ունենալով եկեղեցույ եօթը խորհուրդները- [ԽԵ/16.2.57]:

Աւելի քան 15 յաջորդական տարիներ մասնաճիւղի վարչութիւնը գլխաւորած է Երուանդ Քեմենչեճեան, որ հետագային կը մեկնի Արժանթին:

1961էն սկսեալ, Սինկրու-Կեսարիանի մասնաճիւղը կը գործէ մօտակայ Գարէայի նորակառոյց ահումբին մէջ, եւ ծանօթ է Գարէայի մասնաճիւղ անունով: Վարչութեան անդամներէն ժիրայր Կիւզէլեան բացումը կը կատարէ Բարեկենդանի պարահանդէսին, յայտնելով այն մեծ դժուարութիւնները, որ վարչութիւնը ստիպուած է յաղթահարել մասնաճիւղը կանգուն պահելու համար: Գարէայի Հ.Մ.Ը.Մ.ը Յունաստանի մէջ գործօն մնացած չուրս մասնաճիւղերէն մէկն է:

1970էն սկսեալ, նորագիր գայլիկներու վոհմակը կը սկսի գործել մասնաճիւղէն ներս: Ծնունդի առթիւ մասնաճիւղը կը կազմակերպէ երգման արարողութիւն, ներկայութեամբ առաջնորդական փոխանորդ Վարդան Վրդ. Տէմիրճեանի: Վարչութեան ատենապետ ժիրայր Կիւզէլեանին կ'օժանդակէ վարչական աշխատունակ կազմ մը, որոնցմէ՝ Նուպար Աճէրեան եւ աքելլա Կարօ Ճամուզեան:

Ամանորի հաւաքոյթ, Բարեկենդանի պարանցիկ, Սբ. Զատիկուայ հաւկթախաղ եւ նման

ձեռնարկներ կենդանի կը պահեն մասնաճիւղի գործունէութիւնը:

14 Յունուար 1973ին, Ամանորի հաւաքոյթի առթիւ, 12 գայլիկներ կը փոխանցուին սկաուտական շարքերը: Մասնաճիւղի սկաուտական կազմը կը բաղկանայ 25 հոգիէ:

Սկաուտականի կողքին Ֆուլթպոլի «Մասիս» խումբն ալ կը յառաջդիմէ մեծաքայլ՝ խմբապետ Անտոն Թաթարեանի ջանքերով կարեւոր յաղթանակներ ապահովելով: Խումբին մաս կը կազմեն Ֆրանկ Նիկոլեան, Սեդրակ Մահլէպիճեան, Յակոբ Զիլինկիրեան, Կարօ Ֆերմանեան, Յակոբ Մահլէպիճեան, Վահէ Մարգարեան, Յովհաննէս Քեյլերեան, Միհրան Գազանճեան, Անդրանիկ Թաթարեան եւ Սերգօ Պոզողլանեան:

1974ին, խումբը կը զօրանայ նոր խաղացողներով, ինչպէս՝ Վահէ Մարգարեան եւ Յովհաննէս Քեյլերեան:

Պասքեթպոլի խումբը կը մասնակցի Աթէնքի շրջանի Գ. դասակարգի ախոյեանական մրցաշարքին:

1974ի գարնան, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովի կողմէ ընտրուած վարչութեան կազմն է՝

Ատենապետ՝ Գրիգոր Դերձակեան

Ատենադպրուհի՝ Կատարինէ Գազանճեան

Գանձապահ՝ Մինաս Էրջենեան

Վոլիպոլի պատասխանատու՝ Սերքօ Միսաքեան

Ֆուլթպոլի պատասխանատու՝ Անտոն Թաթարեան

Ֆուլթպոլի մարզիչ՝ Գրիգոր Զափարեան

Խորհրդական՝ Գէորգ Զիֆճեան

Շրջանային վարչութեան ներկայացուցիչ՝ Ժիրայր Կիւզէլեան:

Մասնաճիւղը կ'օգտագործէ ազգապատական սրահը, ուր ունի փինկ-փոնկի սեղան:

ՍԵԼԱՆԻԿ

Սելանիկը կամ Թեսաղոնիկէն՝ հիւսիսային Յունաստանի գլխաւոր նաւահանգիստը Եգէա-

կան ծովուն վրայ՝ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի ամէնէն գործունէայ մասնաճիւղերէն մէկը եղած է իր հիմնադրութեան օրէն սկսեալ:

Սկզբնական շրջանին, մասնաճիւղի գործունէութեան գլխաւոր առանցքը սկաուտութիւնն է եղած: Ապա մարզական շարժումը սկսած է զարգանալ, հաւասարիչ սկաուտականի կարեւորութեան, աւելի ուշ մնալու համար իբրեւ միակ ճիւղ՝ գլխաւորաբար պասքեթպոլի շուրջ բոլորուած:

ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

Սելանիկի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը յետ-պատերազմեան իր վերակազմակերպման կը ձեռնարկէ 15 Յուլիս 1945ի անդամական ընդհանուր ժողովին՝ 62 Հ.Մ.Ը.Մ.ականներու մասնակցութեամբ: Տեղւոյն վրայ, Շրջանային վարչութեան կողմէ լիազօրուած Դանիէլ Դանիէլեան առժամեայ վարչութիւն մը կը նշանակէ, բաղկացած հետեւեալներէն. Հրայր Էթեմէզեան, Գրիգոր Փափազեան, Արշաւիր Ճամճեան, Վաղարշակ Թոզալազեան, Յարութիւն Թիլթիւնճեան, Օննիկ Միճեան, Տիմիթրիոս Մանտաքաս, Խաչիկ Յովսէփեան եւ Գուրգէն Պոյաճեան:

Յաջորդող վարչութիւնը, Հ.Մ.Ը.Մ.ի շուրջ հետաքրքրութիւն ստեղծելու նպատակով, 1946ի Յունիսին, իր շրջանի հայ կազմակերպութիւններուն միջեւ վոլիպոլի մրցաշարք մը կը կազմակերպէ: Այս մրցաշարքին կը մասնակցին մասնաճիւղի եւ այլ հայ կազմակերպութիւններու խումբերը: Այս ձեւով համակիրներու խումբը կը բոլորուի Հ.Մ.Ը.Մ.ի շուրջ: 1947ին անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 120ի, հակառակ հայրենադարձի պատճառով եղած թիւի նուազումին:

Մարզականի կողքին, մասնաճիւղը իր անդամ-անդամուհիներուն ընկերային մակարդակի զարգացման նպատակով կը կազմակերպէ ասեղնագործութեան, տոմարակալութեան եւ

հայերէնի դասաւանդութիւններ: Չորեքշաբթի եւ Կիրակի օրերը մասնաճիւղի գրադարանը բաց է հայ երիտասարդութեան առջեւ:

1949ի Հոկտեմբերին, մասնաճիւղի 15րդ անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչութիւն, իսկ 1950 տարեշրջանի աշնան կ'ընտրուի մասնաճիւղի նոր վարչութիւն, բաղկացած հետեւեալներէն. Արշաւիր Ճամճեան (ատենապետ), Վահագն Աբրահամեան, Խաչիկ Բարթեմեան, Վարդգէս Տէրոյեան, Մկրտիչ Սվաճեան, Սահակ Գրլճեան եւ Լեւոն Ճլկունի: Մասնաճիւղի հաւաքավայրը իր մարզական, մշակութային, ընկերային եւ դաստիարակչական ձեռնարկներով կը դառնայ քաղաքի ամէնէն շատ յաճախուած միջավայրը:

Իրերայաջորդ վարչութիւններ ճիգ չեն խնայեր կանգուն պահելու մասնաճիւղի կենսունակութիւնը՝ կազմակերպելով միջ-Հ.Մ.Ը.Մ.ական կամ բարեկամական մրցումներ տեղական խումբերու դէմ: Ֆուտպոլի խումբը երկար չի պահեր իր յառաջդիմութիւնը: Պասքեթպոլի եւ վոլիպոլի տղոց եւ աղջկանց կազմերը տարուէ տարի աւելի խօսիլ կու տան իրենց մասին:

18 Հոկտեմբեր 1953ին, տեղւոյն Առաջնորդարանի սրահին մէջ մասնաճիւղը կ'ունենայ իր անդամական ընդհանուր ժողովը՝ նախագահութեամբ Վ. Քիւփճեանի եւ քարտուղարութեամբ Լեւոն Ճլկունիի: Ժողովի օրակարգերու աւարտին կ'ընտրուի 1953-54 տարեշրջանի վարչութիւնը, բաղկացած հետեւեալներէն.-

- Ատենապետ՝ Խաչիկ Բարթեմեան
- Ատենադպիր՝ Կարապետ Գասպարեան
- Գանձապահ՝ Գ. Պուղտայեան
- Ընդհանուր խմբապետ՝ Արթիւր Մորճիկեան
- Գոյքապահ՝ Ժիրայր Սարեան
- Գրադարանապետ՝ Զոհրապ Թերզեան
- Խորհրդականներ՝ Վահագն Աբրահամեան, Այտա Պերպէրեան, Աղաւնի Տիարեան:

Այս կազմը կը յաջողցնէ մասնաճիւղին որդեգրած մարզական եւ աւանդական բոլոր ձեռնարկները: Նոյնպէս, ան կ'իրականացնէ երգչախումբի վերակազմութիւնը: Նիւթական գոր-

ծառնութիւնը բացառիկ աճ մը կ'արձանագրէ: Այս յաջողութիւնները կ'արձագանգեն յաջորդող տարիներուն վրայ:

1957ին, վարչութեան ատենապետութիւնը կը ստանձնէ Արշաւիր Ճամճեան:

Հետզհետէ, փորձառու վարչականներէ կազմուած յաջորդական խումբերը կը յաջողին Սելանիկի Հ.Մ.Ը.Մ.ի կարեւորութիւնը շեշտուած ձեւով զգացնել Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն ընդմէջէն:

24 Յունուար 1965ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ, բաղկացած հետեւեալներէն՝ Այտա Պերպէրեան, Արշալոյս Տիարեան, Յակոբ Մարտիկեան, Խաչիկ Բարթեմեան, Կարապետ Գասպարեան, Ճիվան Պալութեան, Վարդգէս Գունտաքճեան, Ալեքսի Փիւսկիլեան եւ Մելքի Սիմոնեան:

1969ին, մասնաճիւղի ատենապետն է Յակոբ Մարտիկեան:

1 Յունիս 1972ին, մասնաճիւղի շրջանաւարտ վարչութիւնը իր գործունէութեան տեղեկագրութիւնը կը ներկայացնէ անգամական ընդհանուր ժողովին: Ապա կ'ընտրուի նոր վարչական կազմ, մասնակցութեամբ Աղաւնի Աբրահամեանի, Արշալոյս Տիարեան, Արա Պարտիզպանեանի, Յովսէփ Սուքիասեանի, Պերճ Փեշտիմալճեանի, Թադէոս Մօրուքեանի եւ Աւետիս Աւետիսեանի:

1974ին, մասնաճիւղի ատենապետութիւնը կը յանձնուի Արա Պարտիզպանեանին: Մարզական բաժնի պատասխանատուն է Մարտիկ Թերզեանը: Վարչութեան մաս կը կազմեն՝ Միքի Պասմաճեան, Արմինէ Տիարեան, Յովսէփ Սուքիասեան, Աւետիս Աւետիսեան, Ալեքսի Փիւսկիլեան, Եղիա Պաքրըճեան եւ Վիքօ Փալանճեան:

ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

Մասնաճիւղի կիրարկած հիմնական ճիւղը եղած է պասքեթպոլը: Յետ-պատերազմեան իր

գործունէութեան վերսկսման՝ վոլիպոլը եւս լուսանցքէն դուրս կը բերուի եւ տղոց խումբի կողքին կը կազմուի նաեւ աղջկանց խումբ մը: Վոլիպոլի փորձերը տեղի կ'ունենան Հայ Աւետարանական եկեղեցւոյ բակը: Կը վերակազմուի նաեւ Ֆուլթպոլի խումբը, հսկողութեամբ Վահագն Աբրահամեանի:

8 Սեպտեմբեր 1946ին, ի նպաստ հայրենիք ներգաղթի ֆոնտին, մասնաճիւղը կը կազմակերպէ աթլետիք խաղեր, կազմակերպութեամբ խմբապետ Արշաւիր Ճամճեանի:

1947ին, վարչութեան կողմէ մասնաճիւղի մարզական գործունէութեան ընդհանուր խմբապետ կը նշանակուի Արամ Առաքելեանը: Մարզական ճիւղերը թեքնիքօրէն կը զարգանան եւ յաճախակի մրցումներով փորձառութիւն ձեռք կը ձգեն:

29 Մայիս 1949ին, աղջկանց պասքեթպոլի խումբը 33-28 արդիւնքով պարտութիւն մը կը կրէ Սելանիկի ախոյեան «Արիս»էն, երբ, 1948ին, նոյն խումբէն 96-5 արդիւնքով պարտուած էր-[ԽԵ/3.6.49]: Խումբին մարզիչն է Յարութիւն Մորճիկեան, խումբին մաս կը կազմեն Իմաստուհի Միզարճեան, Սոնա Քիլիզեան, Ալիս Մուլթաֆեան, Եւա Պերպէրեան, Հրանդուհի Ղազէրեան, Աղաւնի Տիարեան, Արշալոյս Տիարեան, Անահիտ Պոյաճեան, Արմենուհի Նազգաշեան, Հայկուհի Փորթուզալեան, Ժագլին Պոյաճեան եւ Տիրուհի Ղազարեան:

1951ին, կազմին վրայ կ'աւելնան Արշալոյս Յարութիւնեան եւ Ս. Հաճեան:

Տղոց պասքեթպոլի Ա. կազմի անդամներն են Խաչիկ Բարթեմեան, Վահագն Աբրահամեան, Յակոբ Գունտաքճեան, Վարգէս Գունտաքճեան, Պերճ Փեշտիմալճեան, Գրիգոր Տապանեան, Յարութիւն Մորճիկեան, Յակոբ Թովմասեան, Մելիք Սիմոնեան, Գրիգոր Չաքրեան, Վարդան Մազլումեան եւ Վարդգէս Փաշայեան: Տարուէ տարի նոր ուժերով վերանորոգուող այս խումբը Սելանիկի յոյն շրջանակին մէջ փնտռուած մրցակից մը կը դառնայ, իր տիպար կեցուածքով եւ թեքնիք խաղարկութեամբ:

1957ին, կազմը կը զօրանայ գիմնազիոնի մասնագիտական վարժարանէն շրջանաւարտ մարզիկներով, ինչպէս՝ Վ. Պարտիզպանեան, Գրիգոր եւ Յ. Գասպարեան, նաեւ Ֆրերներու վարժարանի աշակերտներով, ինչպէս՝ Կ. Տողրամաճեան եւ Բ. Յոլաքիտիս:

Նոյն ձեւով, 1958ին, խումբին կը միանան Ի. Տողրամաճեան, Ա. Փիւսկիւլեան, Հ. Թերզեան, Կ. Փալանճեան, Հ. Պասմաճեան եւ Մ. Սիմոնեան (խմբապետ): Նկատելի այս ընթացքը, որով հիները հետզհետէ կը փոխարինուին նոր ուժերով, ապահով կը դարձնէ Սելանիկի պասքեթպոլի խումբի յարատեւութիւնը:

Աթէնքի շրջանի մասնաճիւղերուն դէմ կատարուող այս մրցումները, միշտ ալ կ'աւարտին Հ.Մ.Ը.Մ.ական միջնորդի տիրապետող խրախճանքներով:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

Սելանիկի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի սկաուտական գործունէութիւնը եղած է համեստ՝ հակառակ հիմնադրութեան օրերուն յաջորդող տարիներու ընթացքին արձանագրած թուական կարեւոր աճին՝ մինչեւ 130 հոգի: Սակայն սկաուտ պատասխանատուներու պակասը զգալի բաց մը կը թողու այս մարզի յաջողութեան մէջ եւ շարժումը տակաւ տկարանալով կը դադրի գոյութիւն ունենալէ:

ԱՅԼ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

Սելանիկի մասնաճիւղի գործունէութեան ցանցին մէջ կ'իյնայ նաեւ ազգային, պետական եւ հրապարակային այլ ձեռնարկներ: 30 Մարտ 1947ին, մասնաճիւղը կը տօնէ «Հ.Մ.Ը.Մ.ի Օր»ը: Այս հանդիսութիւնը առիթ մը կ'ըլլայ Սելանիկի հայութեան ներկայացնելու Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան շուրջ քաջալերական տեղեկութիւններ: Հանդէսը կը վարէ Արշաւիր Ճամճեան: Խօսք կ'առնեն Լեւոն Ճլիկունի եւ Թ. Պոյաճեան:

Ժամանակի ընթացքին, աւանդութիւն կը դառնայ Սբ. Ծննդեան կամ Սբ. Զատիկուան տօներու առթիւ մարզական այցելութիւններ Աթէնքի շրջանի մասնաճիւղերուն, կամ ընդունելու անոնց փոխադարձ այցելութիւնները: Այս այցելութիւնները, որոնք կ'երկարին շաբաթավերջերու վրայ, մասնաճիւղերու անդամներուն միջեւ ծանօթացման առիթներ կը ստեղծեն:

Մասնաճիւղը պտոյտներ կը կազմակերպէ դէպի հիւսիսային Յունաստանի հայաշատ քաղաքները, խանդավառութիւն ստեղծելով անոնց մօտ: 8 Յուլիս 1951ին, նման այցելութիւն մը կը տրուի Գավալայի հայ գաղութիւն, ուր մասնակիցներ ներկայ կ'ըլլան Սբ. Պատարագին:

Սելանիկի Հ.Մ.Ը.Մ.ը մնայուն կերպով իրագործած է եւ աւանդութիւն դարձուցած ազգային տօներու իր մասնակցութիւնը: Ակումբէն ներս մշակութային գործունէութիւնը՝ երգչախումբ, թատերախումբ, գրադարան (1200 հատոր գիրքերով), դասախօսական երեկոյթներ, խրախճանքներ, գաթայի հաւաքոյթներ (յունական աւանդութեամբ), այցելուներու ընդունելութիւն եւ այլ ազգանուէր աշխատանքներ առիթ կը ստեղծեն, որ Հ.Մ.Ը.Մ.ի յիսնամեայ յոբելեանի տօնակատարութեան առթիւ, անոր կարգ մը անդամները պարգեւատրուին Շրջանային Վարչութեան կողմէ: Գնահատանքի այս հանդիսութիւնը տեղի կ'ունենայ 26 Յունուար 1969ին: Պաշտօնական ելոյթներու աւարտին, վկայականներով կը պարգեւատրուին հետեւեալ անդամները. Արամ Թագուրեան, Արշաւիր Ճամճեան, Յակոբ Մարտիկեան, Խաչիկ Բարթեմեան, Կարապետ Գասպարեան, Արշալոյս Տիարեան, Այտա Պերպէրեան, Աղաւնի Պալութեան, Վահագն Աբրահամեան, Արամ Առաքելեան, Յակոբ Գունտաքճեան, Վարդգէս Գունտաքճեան, Զոհրապ Թերզեան, Լեւոն Ճլիկունի, Արթիւր Մորճիկեան, Ճիվան Պալութեան, Գուրգէն Պուղտաճեան, Մկրտիչ Սվաճեան, Մելիք Սիմոնեան, Պերճ Փեշտիմալճեան եւ Ալեքսի Փիւսկիլեան, իբրեւ ներկայացուցիչները այն անսակարկ նուիրեալներուն, որոնք կանգուն

պահեցին Հ.Մ.Ը.Մ.ի Սելանիկի մասնաճիւղը եւ զայն առաջնորդեցին յաղթանակէ յաղթանակ:

ԼԻԲԱՉՄԱ-ԹԱՄՊՈՒՐԻԱ

Յունաստանի երիցագոյն մասնաճիւղերէն՝ Լիբազման, յետ-պատերազմեան վերակազմութեան օրերուն կ'ունենայ Շրջանային Վարչութեան կողմէ նշանակեալ վարչութիւն մը, Թամպուրիոյ Հ.Մ.Ը.Մ.ականներու մասնակցութեամբ: Թամպուրիոյ սկառտներու խումբը 1945ի Մայիսին կը մասնակցի Գոքինիոյ եկեղեցւոյ օժման արարողութեան, առաջնորդութեամբ Գ. Գոհարունիի:

18 Յունուար 1946ին, Շրջանային Վարչութեան հրաւերով Լիբազմայի եւ Թամպուրիոյ բոլոր հին ու նոր Հ.Մ.Ը.Մ.ականները անդամական ընդհանուր ժողովի կը հրաւիրուին, լսելու առժամեայ վարչութեան զեկուցումը եւ ընտրելու համար իրենց ներկայացուցիչները՝ Յունաստանի 19րդ Շրջանային Պատգամաւորական Ժողովին:

Ծովեզերեայ իր դիրքէն օգտուելով, Լիբազմայի մասնաճիւղի մարզիկներ կիրարկած են լողորդութեան ճիւղը, երբ, 1946ին, մարզիկներ Միքայէլ Եողուրթճեան եւ Վահրամ Պոյաճեան միջ-մասնաճիւղային մրցումներուն փոքրերու դասի մէջ յաջող արդիւնքներ կ'արձանագրեն:

Սակայն, նօսրացած թիւով հայերու կարեւորութիւնը հետզհետէ աւելի կը նսեմանայ եւ հակառակ Շրջանային Վարչութեան ճիգերուն, մասնաճիւղը կը դադրի գործելէ՝ 1950էն ալ առաջ:

ԱՄԱՐՈՒՍ

1945ի Յունիսէն սկսեալ, Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի սկառտական վերին մարմինի կողմէ ղրկուած Լեւոն Գայեանի եւ Համօ Մեհրապեանի ցուցմունքներով, Ամարուսի մէջ կը սկսի Հ.Մ.Ը.Մ.ի սկառտական շարժումը: Այս աշխա-

տանքը կը զարգանայ շաբաթական եռօրեայ հալաքոյթներով, եւ կորիզին շուրջ հետզհետէ բազմացող սկառտներով - [ԽԵ/22.8.1945]:

1946ին, Ամարուսի մասնաճիւղը կ'ունենայ ֆուլթուլի խումբի մը կորիզը, որուն վերջնական ներկայանալի կազմը ի յայտ կու գայ քանի մը եղանակներու փորձառութենէն ետք:

- 1950ի վարչութեան կազմն է՝
- Ատենապետ՝ Աստիկ Կիմճեան
- Փոխ ատենապետ՝ Զաքար Մարգարեան
- Ատենադպիր՝ Պօղոս Զոպեան
- Գանձապահ՝ Կարօ Գափլանեան
- Խորհրդական՝ Յարութիւն Շէննիկեան:

Խմբապետութեամբ Տիգրան Կէօնիլեանի, ֆուլթուլի խումբին մաս կը կազմեն. Սարգիս Թենեքեճեան, Մինաս Ճելլատեան, Յարութիւն Ճելլատեան, Գէորգ Փեշտիմալճեան, Յովհաննէս Փեշտիմալճեան, Յարութիւն Կէօնիլեան, Յովհաննէս Ուրֆալեան, Յովակիմ Գարանֆիլեան, Գէորգ Գարագոչեան եւ Յարութիւն Ժամկոչեան: Այս կազմը 1950ի եղանակին 12 մրցումներէն ծը կը վերջացնէ յաղթանակով եւ կը տիրանայ շրջանի միջ-ակումբային մրցաշարքի բաժակին: Խումբը ունի իր սեփական դաշտը՝ սիրայօժար կերպով տրամադրուած Զաքար Մարգարեանի կողմէ:

1951ին, խումբի կազմին կը միանան Գ. Պօղոսեան, Կ. Կամլեզեան, Բ. Զերոնեան, Ք. Զերոնեան եւ Ե. Դատոսեան:

Մասնաճիւղը աւանդական ձեւով կը կազմակերպէ Ամանորի գաթայի հալաքոյթներ, ընկերային միջոցառումներու համար մասնաճիւղի անդամներուն եւ համակիրներուն միջեւ: Խմբի անդամները յատուկ յանձնախումբեր կը կատարեն Սբ. Ծննդեան Աւետումի շրջագայութիւն:

Մեկնումներու հետեւանքով մասնաճիւղի գործունէութիւնը 1952ի սկիզբէն սկսեալ կը սկսի կաղալ: 1953ի աշնան, Շրջանային Վարչութիւնը իր անդամներէն Լեւոն Խաչատուրեանին եւ Արամ Փափագեանին պաշտօն կը յանձնէ վերակազմելու Ամարուսի մասնաճիւղը: 1954ի

սկիզբը, մասնաճիւղը կրկին գործի կը ձեռնարկէ, Ամանորի առթիւ կազմակերպուած հալաքոյթով մը: Վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Յակոբ Գազանճեան: Սակայն, 1954ի Հոկտեմբերին, շրջանի 27րդ Պատգամաւորական Ժողովին, մասնաճիւղը իր ներկայացուցիչները չունի, եւ գործնապէս կը դադրեցնէ իր աշխատանքները 1955ի վերջաւորութեան: Մասնաճիւղի կարգ մը մարզիկները կը միանան Աթէնքի մասնաճիւղին:

ՓԱԹՐԱՍ

Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի յետ-պատերազմեան նորագոյն մասնաճիւղը, Շրջանային Վարչութեան կողմէ լիազօրուած Սարգիս Թելլալեանի հրաւէրով, 15 Յունուար 1946ին կը կայացնէ խորհրդակցական հալաքոյթ մը եւ կ'ընտրէ անդրանիկ վարչութիւնը, հետեւեալ կազմով.

- Ատենապետ՝ Օննիկ Աթթարեան
- Ատենադպիր՝ Նշան Դանիէլեան
- Գանձապահ՝ Ա. Գաֆէճեան
- Գոյքապահ՝ Ա. Աւետիսեան

Մարզական պատասխանատու՝ Կ. Հայրապետեան

Խորհրդականներ՝ Ս. Սօդիկեան, Մ. Փափագեան:

Մասնաճիւղի կիրարկած գլխաւոր ճիւղը ֆուլթուլն է, որուն յաջողութեան համար իրերայաջորդ վարչութիւններ ամէն ճիգ ի գործ կը դնեն:

1952ին, Գ. դասակարգի ախոյեանութիւնը ապահովելով, Փաթրասի Հ.Մ.Ը.Մ.ի կազմը կը բարձրանայ Բ. դասակարգ: Ուշագրաւ զոհողութիւններ կը կատարէ մասնաճիւղի ատենապետը՝ Անդրանիկ Փափագեան, այս յաջողութիւններու ձեռք բերման համար:

Սակայն, այս ընթացքը կանգ կ'առնէ, երբ նոր խաղացողներ չեն հասնիր հիններուն տեղը գրաւելու համար: Խումբը օտար խաղացողներու դիմելով, հետզհետէ ամբողջութեամբ կ'օտարա-

նայ եւ մասնաճիւղի գործունէութիւնն ալ կը դադրի:

ՌԵԹԻՄՆՕ

Ռեթիմնոյի վերակազմուած մասնաճիւղը 1947ին ունէր 25 անդամներ եւ «Արարատ» ֆուլթպոլի խումբը: Խումբը 1947-48 եղանակին կը մասնակցի Ռեթիմնոյի ախոյեանութեան մրցաշարքի 18 մրցումներուն եւ ընդհանուր դասաւորման Բ. դիրքը կը գրաւէ -[ԽԵ/11.4.1948]:

Մասնաճիւղը ունի նաեւ աթլետներու կազմ, որ արժանացած է տեղական մրցումներու արժաթեայ եւ պրոնզեայ մետալներուն: Մասնաճիւղի վարչութիւն եւ Շրջանային վարչութիւն ճիգ չեն խնայեր կանգուն պահելու համար կրետէ կղզիի այս փոքրաթիւ մասնաճիւղը: Սակայն, մեծաթիւ մեկնումներ կը դժուարացնեն մեծ ճիգերով յաջողցուած գործունէութիւն մը, եւ մասնաճիւղը 1950էն ետք կը դադրի գոյութիւն ունենալէ:

ԱԹԷՆՔ

1951ին, Աթէնքի կեդրոնական թաղամասին մէջ կը սկսի գործել Հ.Մ.Ը.Մ.ի նոր հիմնուած մասնաճիւղը՝ անկախ մօտակայ Ֆիքսի մասնաճիւղէն: Մասնաճիւղը առաջին հերթին կը կազմէ տղոց եւ աղջկանց պասքեթպոլի խումբեր, որոնք 1951ի Սբ. Զատիկուան տօնին առթիւ կը մեկնին Սելանիկ, տեղւոյն մասնաճիւղի խումբերուն դէմ մրցելու:

Տղոց խումբի անդամներն են Հրայր Քէօթելեան, Յարութիւն Գոհարունի, Գալուստ Գոհարունի, Ա. Մինասեան, Ս. Յովհաննէսեան, Յ. Ազատեան, Սերգօ Իսկահատեան, Մկրտիչ Թորոսեան, Յ. Գոնեալեան եւ Մանուկ Գասպարեան:

1952էն սկսեալ կը կազմուին նաեւ վոլիպոլի խումբերը:

Տղոց եւ աղջկանց խումբերը յաճախակի

մրցումներ կ'ունենան Ֆիքսի մասնաճիւղի եւ տեղական խումբերու դէմ:

1953ի վարչութեան անդամներն են՝ Ատենապետ՝ Պատրիկ Սարգիսեան, Փոխ ատենապետ՝ Յարութիւն Գոհարունի, Ատենադպիր՝ Հ. Քէօթելեան, Գանձապահ՝ Կ. Քիւրեքճեան

Խորհրդական՝ Վարուժան Մինասեան, Պատրիկ Սարգիսեան եւ Յարութիւն Գոհարունի, որոնցմէ՝ վերջին երկուքը մասնաճիւղը կը ներկայացնեն Յունաստանի 26րդ Պատգամաւորական ժողովին:

1955ի Յունուար 30ի թէյապարի ձեռնարկը առիթ մը կ'ըլլայ մասնաճիւղի ընկերային ելոյթներու զարգացումին: «Վրախոս» սրահին մէջ կազմակերպուած այս ձեռնարկի ընթացքին պասքեթպոլի մայր խումբի հետեւեալ մարզիկները մետալներով կը պարգեւատրուին Շրջանային վարչութեան կողմէ.՝ Հրայր Քէօթելեան, Սերգօ Իսկահատեան, Յարութիւն Գոհարունի, Խաժակ Հաճի Պօղոսեան, Ստեփան Գալատիաս, Մանուկ Գասպարեան, Օննիկ Իսիրիկեան, Մկրտիչ Տիոնեան, Մկրտիչ Թորոսեան, Մովսէս Պօղոսեան եւ Գրիգոր Տապանեան: Մասնաճիւղը նման հրապարակային ելոյթներ կը կազմակերպէ վարդանանցի տօնին առիթով եւս:

1956ի վերջաւորութեան, մասնաճիւղը իր ակումբը կը հաստատէ Օտոս Սթատիուի թիւ 31 շէնքի 7րդ յարկին վրայ, նպատակ ունենալով հայ երիտասարդութեան ժամադրավայրը դարձնել զայն: Մասնաճիւղի ատենապետն է Արամ Փափազեան, իսկ ատենադպիրը՝ Յակոբ Ճելալեան: Ակումբի բացումը տեղի կ'ունենայ 2 Յունուար 1957ին:

26 Նոյեմբեր 1957ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ, բաղկացած հետեւեալներէն. Ժիրայր Կիւզէլեան, Վ. Սարաֆեան, Յակոբ Ճելալեան, Պ. Գաթրճեան, Գ. Փեչտիմալճեան, Կարպիս Տապանեան, եւ Ս. Էվիխանեան: Այս կազմը կ'ամբողջանայ Մովսէս Պօղոսեանի եւ Կ. Արդարմօրուքեանի մասնակցութեամբ:

1958ի սկիզբը, մասնաճիւղի ակումբը կը փոխադրուի Աթէնքի գլխաւոր հրապարակ Սինտաղմայի կից, Գարաեորկի Սերվիաս, թիւ 8 շէնքը: Ակումբի բացումը տեղի կ'ունենայ 21 Յունուար 1958ին: Սակայն, մասնաճիւղի անդամները գլխաւորաբար կը գործակցին Շրջանային Վարչութեան ձեռնարկներուն, իսկ մարզիկները՝ Ֆութպոլի եւ պասքեթպոլի մայր խումբերուն: Այսպիսով, Աթէնքի մասնաճիւղը կը դադրի իւրայատուկ գործունէութիւն արձանագրելէ եւ ուժերը կը կեդրոնացունին Ֆիքսի մասնաճիւղի գործունէութեան վրայ:

ՆԷԱ ԶՄԻՌՆԻ

Այս մասնաճիւղի վերակազմութիւնը կը յաջողի համեմատաբար աւելի ուշ՝ 1952ի սկիզբը, Շրջանային Վարչութեան յատուկ ճիգերով:

Առաջին վարչութեան մաս կազմած են՝
Ատենապետ՝ Ասատուր Քէհէյեան
Ատենադպիր՝ Երուանդ Եղիայեան
Գանձապահ՝ Անդրանիկ Մկրտիչեան
Գանձիչ՝ Տիգրան Յակոբեան
Խորհրդական՝ Գրիգոր Մկրտիչեան:

Սկիզբը, մասնաճիւղը ունի Ֆութպոլի խումբ եւ սկաուտական խմբակ մը, որոնց վրայ 1952ի ամրան կ'աւելնան տղոց եւ աղջկանց վոլիպոլի խումբերը:

Ընկերային ձեռնարկներ, պտոյտներ եւ դասախօսական երեկոյթներ Նէա Զմիռնիի մասնաճիւղին շուրջ կը հաւաքեն շրջանի երկսեռ երիտասարդութիւնը: Մասնաճիւղին կը պակսի յատուկ նստավայր մը: Ժողովները եւ հաւաքոյթները տեղի կ'ունենան բնակարաններու մէջ:

1953ի Սբ. Ծննդեան տօնին առթիւ, Հ.Մ.Ը.Մ.ի անդամ-անդամուհիներ հայ բնակիչներուն այցելութիւն կու տան աւետելով Քրիստոսի ծնունդը եւ մասնաճիւղի գանձանակին ապահովելով կոկիկ եկամուտ մը:

Ֆութպոլի խումբը բարեկամական հանդի-

պումներ կը կազմակերպէ տեղական խումբերու դէմ, որուն հետ հաւասար գետնի վրայ կը գտնուի:

Մասնաճիւղի պատգամաւորներ Մ. Զալլաքեան եւ Վարուժան Պոյաճեան մասնաճիւղը կը ներկայացնեն Յունաստանի 26րդ Պատգամաւորական Ժողովին:

1954ին աւելի կը շեշտուին նստավայրակումբի մը չգոյութեան պատճառով ստեղծուող դժուարութիւնները: Սակայն, հակառակ բոլոր ճիգերուն, նստավայրի իրականացումը կ'ուշանայ եւ այս երկարատեւ բացակայութիւնը ի վերջոյ պատճառ կը դառնայ մասնաճիւղի գործունէութեան դադրեցման:

ԻՐԱՔԼԻՈՆ - ԿՐԵՏԷ ԿՂԶԻ

1953ի սկիզբը, Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ Կրետէ, կղզիի Իրաքլիոն քաղաքին մէջ կը հիմնուի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ: Մասնաճիւղի նշանակեալ անդրանիկ վարչութեան կը մասնակցին հետեւեալները.

Ատենապետ՝ Միհրան Աւետիսեան
Ատենադպիր՝ Մկրտիչ Տապանեան
Գանձապահ՝ Վարդ Գասպարեան:

Իրաքլիոնի կիրարկած առաջին մարզախաղը կ'ըլլայ պասքեթպոլը:

Շրջանային Վարչութիւնը մօտէն կը հետեւի մասնաճիւղի գործունէութեան: Յուլիսին, Իրաքլիոն կ'այցելէ Շրջ. Վարչութեան անդամ Արամ Փափագեան, որուն ներկայութեան մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ.-

Ատենապետ՝ Միհրան Աւետիսեան
Ատենադպիր՝ Մկրտիչ Տապանեան
Գանձապահ՝ Ժիրայր Պազրճեան
Գոյքապահ՝ Յակոբ Գազանճեան
Խորհրդական՝ Վարդ Գասպարեան:

Մասնաճիւղը իբրեւ նստավայր կ'օգտագործէ Ազգային վարժարանի կից սենեակ մը եւ

սերտ յարաբերութիւն կը մշակէ տեղական
ակումբներու հետ, որոնց հետ աթլետիզմի
մրցումները կ'ըլլան յաճախակի- [ԽԵ/24.9.1953]:

1954ին, վարչութեան ատենապետութիւնը
կը վարէ Յակոբ Գազանճեանը: Մարզականի
կողքին Իրաքլիոնի մասնաճիւղը կը տանի նաեւ
ազգային գործունէութիւն, Նոր Տարուայ առ-
թիւ հաւաքոյթ եւ Սբ. Ծննդեան Աւետումի
չրջագայութիւն, այսպիսով Միութեան շուրջ


ստեղծելով յատուկ համակրանք: Հոկտեմբերին,
մասնաճիւղի պատգամաւորներ Մկրտիչ Յաբե-
թեան եւ Աւետ Խաչատուրեան կը մասնակցին
Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի 27րդ Պատգամաւորա-
կան ժողովին:

1956էն ետք, Իրաքլիոնի մասնաճիւղն ալ
պիտի ենթարկուէր կղզիի առաջին մասնաճիւղ՝
Ռեթիմնոյի ճակատագրին, փոքրաթիւ գաղու-
թին մէջ դադրեցնելով իր գործունէութիւնը:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ԼԻՐԱՆԱՆ

- ՊԵՅՐՈՒԹ
- ԶԱՀԼԷ
- ԹՐԻՓՈԼԻ
- ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ
- ԱՅՆՃԱՐ
- ՀԱՏԷԹ
- ՃԻԻՆԻ
- ԱՆԹԻԼԻԱՍ
- ՃՏԷՅՏԷ



Համաշխարհային Բ. Ընդհանուր Պատերազմի առաջին տարիները, հակառակ տնտեսական սուր տագնապին, ապահովական իմաստով թույլատու մնացին Լիբանանի մէջ գործող Հ.Մ.Ը.Մ.-ի մասնաճիւղերու զարգացումին: Պէյրուսի, Պուրճ Համուտի եւ Թրիփոլի մասնաճիւղերը իրենց գործունէութիւնը շարունակեցին գրեթէ նոյն թափով: Թրիփոլին պահ մը նոյնիսկ յաւելեալ կարեւորութիւն ստացաւ, մասնակցութեամբ հոն հաստատուող հայերու, որոնք կու գային նաւթային զտարանի զարգացող գործունէութեան մէջ պաշտօններ ստանձնելու: Զահլէն, նուազ կենսունակ, սակայն կը մնար կանգուն: Ռայագի մասնաճիւղը տեղատուութեան օրեր կ'ապրէր, նկատի ունենալով որ գիւղաքաղաքի զինուորական դիմագիծը չէր նպաստեր, պատերազմական օրերու ընթացքին, փոքր թիւով հայերու մարզական գործունէութեան: Եղած էին տեղափոխութիւններ դէպի Պէյրուս եւ Զահլէ: Պաալպէքի մասնաճիւղը, որուն գործունէութիւնը ամառնային եղանակներուն հետ կրնար գոյութիւն ունենալ, արդէն դադրած էր գործել:

Վերոյիշեալ աննպաստ պայմաններուն դիմաց, 1943-ին, Լիբանանի անկախութեան տիրացումը նոր թափ տուաւ Պուրճ Համուտի եւ յատկապէս Պէյրուսի մասնաճիւղերու գործունէութեան: Հ.Մ.Ը.Մ.ականներ, որպէս անհատ, իսկ մասնաճիւղերը, որպէս մարզական գործօններ կարեւոր դեր ստանձնեցին Լիբանանի մարզական հրապարակին վրայ, նորակազմ մարզական ֆետերասիոններու եւ մարզական ակումբներու հետ գործակցաբար:

Նոյն յաջողութիւնները արձանագրեցին նաեւ մասնաճիւղերու գործունէութիւններու սկստական բաժինները, հետզհետէ զարգացող թեքնիք յառաջդիմութիւններու եւ երիտասարդու վարժ աստիճանաւորներու միացումով:

Հասան 1950ական թուականները իրենց հետ բերելով երեք նոր մասնաճիւղերու կազմութիւն: Հ.Մ.Ը.Մ.-ի լիբանանեան ընտանիքը բազմացաւ ու ընդարձակուեցաւ երկրի տարածքին:

Արդարեւ, հետզհետէ հիմնուեցան Այնճարի, Հատէթի եւ Ճիւնիի մասնաճիւղերը: Աւելի ուշ, այս ցանցին միացաւ Անթիլիասի մասնաճիւղը, իսկ ներկայ հատորի ընդգրկած ժամանակաշրջանի աւարտէն առաջ հիմնուեցաւ կրտսերագոյն մասնաճիւղը՝ Ճտէյտէն:

ՊԵՅՐՈՒԹ

ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Լիբանանի եւ Մերձաւոր Արեւելքի անդրանիկ մասնաճիւղը՝ Պէյրուսի գօրավիզ ունենալով ազգային վարչութեան եւ քոյր կազմակերպութիւններու քաջալերանքները, Համաշխարհային Բ. Ընդհանուր Պատերազմի օրերուն իսկ յաջողեցաւ նոր նուաճումներ արձանագրել մարզական, սկստական, կազմակերպչական ու շինարարական բոլոր գետիններուն վրայ: Եթէ մարզական նոր ճիւղեր չ'աւելցան գտնուող ցանցին վրայ, փոխարէնը՝ անոնց թեքնիք յառաջացումը, ինչպէս նաեւ հրապարակային եւ ընկերային ձեռնարկներու յաջողութիւնները, ամէն խաւի նոր մարդուժ ապահովեցին, նպաստելով մասնաճիւղի զարգացման:

Իւրաքանչիւր տարեշրջանի աւարտին մասնաճիւղը կազմակերպեց անդամական ընդհանուր ժողովներ՝ օրակարգ ունենալով նախորդ տարուան գործունէութեան քննութիւն, գործունէութեան մասին բանաձեւի քուէարկութիւն, յաջորդ տարեշրջանի գործունէութեան նախագիծի պատրաստութիւն եւ նոր վարչական կազմի ընտրութիւն:

Այսպէս, 6 Դետեմբեր 1939ին, Սբ. Նշան վարժարանի սրահին մէջ կայացաւ անդամական ընդհանուր ժողով՝ նախագահութեամբ Կարօ Պատուհասեանի եւ քարտուղարութեամբ Սուքիաս Տէր Սարգիսեանի: Ներկայ 95 անդամները, յետ քննութեան, «գնահատելի»բանաձեւեցին նախորդ տարուան գործունէութիւնը եւ 1940 տարուան վարչական անդամ ընտրեցին հետեւեալները՝



1. Ապրիլ 24ի Յիշատակի Օր Անթիլիասի մայրավանքին մեջ - 2. Պէյրուքի Հ.Մ.Ը.Մ.ի աղջկանց պասքէթպոլի խումբը 1970ին - 3. Լիբանանի ախոյեան Պէյրուքի մասնաճիւղի փոնկիստները - 4. Պէյրուքի Հ.Մ.Ը.Մ.ի տղոց պասքէթպոլի մարզիկները - 5. Ճինիի մասնաճիւղի պասքէթպոլի անդրանիկ կապմը - 6. Պուրճ համուտի Մայր Հայաստան Բ. դասի խումբը, 1948ին:

Ատենապետ՝ Յովհաննէս Շահինեան
 Ատենադպիր՝ Հրանդ Մուրատեան
 Գանձապահ՝ Անդրանիկ Երամեան
 Ֆուլթպոլի պատասխանատու՝ Սամուէլ Գալուստեան

Մարզական պատասխանատու՝ Կարպիս Մերտինեան

Գոյքապահ՝ Օննիկ Խուլպեսերեան

Սկաուտական խմբապետ՝ Յովհաննէս Ժամկոչեան:

Այս կազմին գլխաւոր իրականացումներէն եղաւ Մար Իլիաս Թաղի Ֆուլթպոլի դաշտի թրիպիւնի նորոգութիւնը, որպէսզի կարելի ըլլայ հրապարակային մարզահանդէսները հոն կայացնել:

Վարչութիւնը իր կողքին նշանակեց հետեւեալ օժանդակ յանձնախումբերը.-

Սկաուտական Խորհուրդ՝ որուն անդամներն են՝ Վահրամ Փափազեան, Յովհաննէս Սերոբեան, Նուպար Յովհաննէսեան, Յովհաննէս Ժամկոչեան եւ Զոհրապ Ժամկոչեան: Այս կազմը կը գործէ մինչեւ Ապրիլ ամիսը, որմէ ետք կը վերակազմուի հետեւեալ ձեւով. Յովհաննէս Սերոբեան, Խաչիկ Խաչատուրեան, Յակոբ Խուլպեսերեան, Պետրոս Թաքելեան եւ Յովհաննէս Ժամկոչեան, աւելի ուշ՝ վերջինս կը փոխարինուի Արծիւ Մուշիկեանով:

Պասքեթպոլ՝ Ռէթէոս Գուլյումճեան, Պօղոս Շահինեան, Ֆիլիպ Զաքարեան, Յակոբ Գեղունի եւ Յովսէփ Խաչատուրեան:



Մար Իլիաս Թաղի Ֆուլթպոլի դաշտի թրիպիւնը հանդիսութեան ընթացքին: Կեդրոնը Եղիշէ Արք. Կարոյեան եւ Նիկոլ Աղբալեան

Թենիս՝ Հայկազ Չօփճեան, Վահրամ Պէօ-
ճէքեան, Վազգէն Յովնանեան եւ Օննիկ Խո-
ւպեսերեան:

Կան նաեւ հեծելարչաւի, մարմնամշակումի,
աթլետիքի մի եւ ճիմնասթիքի ճիւղերը, որոնք
կը գործեն ձեռնհաս պատասխանատուներու
հսկողութեան տակ:

21 Նոյեմբեր 1940ին, տեղի կ'ունենայ ան-
դամական ընդհանուր ժողով՝ նախագահու-
թեամբ Պօղոս Շահինեանի եւ քարտուղարու-
թեամբ Եղիշէ Մանուկեանի: Ժողովը 1940 տար-
ուան գործունէութիւնը կը գտնէ «խիստ գնա-
հատելի» եւ կ'ընտրէ 1941 տարուան վարչական
կազմը հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Կարօ Պատուհասեան

Ատենադպիր՝ Հրանդ Մուրատեան

Գանձապահ՝ Պօղոս Շահինեան

Մարզական պատասխանատու՝ Սամուէլ Գա-
լուստեան

Գոյքապահ՝ Խաչիկ Խաչատուրեան

Սկաուտական պատասխանատու՝ Եղիշէ
Մանուկեան

Խորհրդական՝ Օննիկ Խուպեսերեան:

Նախորդ տարեշրջանի օժանդակ յանձնա-
խումբերը փոքր փոփոխութեամբ կը պահուին
գործի գլուխ: Կը կազմուի մարզական գործու-
նէութիւնը համագործ միացեալ յանձնախումբ
մը, որուն անդամներն են՝ Բենիամին Շամլեան,
Թագուր Թագուրեան, Գէորգ Մանուկեան,
Ներսէս Հինտոյեան եւ Լեւոն Աբգարեան:

Վարչութիւնը լաւագոյն ձեւով կը յաջողի
օգտագործել ֆուլթայլի դաշտի առաւելութիւն-
ները, մրցումներու եւ հրապարակային հանդէս-
ներու կազմակերպումով:

9 Նոյեմբեր 1941ին, մասնաճիւղի անդամա-
կան ընդհանուր ժողովէն կ'ընտրուի 1942 տա-
րեշրջանի վարչական կազմ.-

Ատենապետ՝ Յովհաննէս Շահինեան

Ատենադպիր՝ Հրանդ Մուրատեան

Գանձապահ՝ Ֆերտինան Քեհեայեան

Մարզական պատասխանատու՝ Յակոբ Աս-
լանեան

Սկաուտական պատասխանատու՝ Լեւոն Աբ-
գարեան

Խորհրդականներ՝ Հայկազ Չօփճեան, Օն-
նիկ Խուպեսերեան:

Նախորդ տարեշրջաններուն գործակցող
յանձնախումբերու կողքին կը նշանակուի տիկ-
նաց յանձնախումբ մը, որուն կը վստահուի արե-
նուշական շարքերու կազմակերպումը:

Տիկնաց յանձնախումբի անդամներն են՝
Հերմինէ Աբգարեան, Շաքէ Շահինեան, Լուսա-
ծին Տէտէեան, Նուարդ Չօփճեան, Զապէլ
Աճէմեան եւ Գեղարփի Տէր Մելքոնեան:

Այս տարեշրջանին վարչութեան դիմագրա-
ւելիք գլխաւոր դժուարութիւնը պիտի հանդի-
սանար ֆուլթայլի դաշտի գրաւումը ֆրանսա-
կան գինուորական ուժերու կողմէ:

20 Դեկտեմբեր 1942ին, վարչութիւնը ան-
դամական ընդհանուր ժողովին կը ներկայացնէ
իր միամեայ գործունէութեան տեղեկագիրը,
որուն յաջորդող երկրորդ նիստով, 26 Դեկտեմ-
բերին, կը կատարուի պատգամաւորներու ընտ-
րութիւն մասնակցելու համար Սուրիոյ, Լիբա-
նանի եւ Պաղեստինի շրջանի 7րդ Պատգամաւո-
րական ժողովին: Պէյրութի մասնաճիւղի ներ-
կայացուցիչներն են՝ Խաչիկ Խաչատուրեան,
Յովհաննէս Շահինեան, Հրանդ Մուրատեան,
Մամբրէ Հիսարեան, Պօղոս Շահինեան, Մանուկ
Տէօվլէթեան եւ Եղիշէ Մանուկեան:

1943 Յունուար 3ին կայացած անդամական
ընդհանուր ժողովին կողմէ կ'ընտրուի նոր վար-
չութիւն, հետեւեալ կազմով.-

Ատենապետ՝ Հրանդ Մուրատեան

Բ. Ատենապետ՝ Անդրանիկ Երամեան

Ատենադպիր՝ Յովսէփ Խաչատուրեան

Գանձապահ՝ Արամ Անթիքաճեան

Մարզական պատասխանատու՝ Եղիշէ Մա-
նուկեան

Ֆուլթայլի պատասխանատու՝ Սամուէլ Գա-
լուստեան

Սկաուտական Խորհուրդի մօտ ներկայացու-
ցիչ՝ Վիգէն Սասունի:

Ընթացիկ յանձնախումբերու կողքին այս տարեշրջանի նորութիւնը կ'ըլլայ ակումբի յատուկ յանձնախումբի մը նշանակումը, որուն անդամներէն գործի վրայ կը մնան Երեմիա Երամեան, Խաչիկ Խաչատուրեան, Յովսէփ Խաչատուրեան, Ժիրայր Աթթարեան եւ Պօղոս Շահինեան:

Տիկնաց յանձնախումբի անդամներ կը նշանակուին՝ ատենապետուհի՝ Տիկ. Մարի Աւետեան, ատենադպրուհի՝ Տիկ. Լուսածին Տէտէեան, գանձապահուհի՝ Տիկ. Շաքէ Շահինեան, խորհրդականներ՝ Տիկ. Էլմոն Աբգարեան եւ Օր. Արքանուշ Արծրունի, սկաուտական խմբապետուհի՝ Օր. Գեղարփի Տէր Մելքոնեան:

Պասքեթպոլի յանձնախումբի անդամներն են՝ ատենապետ՝ Տոքթ. Վազգէն Յովնանեան, ատենադպիր՝ Պարգեւ Միսիրեան, գանձապահ՝ Խաչիկ Խաչատուրեան, գոյքապահ՝ Պօղոս Սիւրեան, գրադարանի պատասխանատու՝ Օննիկ Մելիքսեթեան, սկաուտական խմբապետ՝ Վիգէն Սասունի:

Թենիսի յանձնախումբ՝ Օննիկ Խուպեսերեան, Հայկազ Չօփճեան, Երուանդ Մալիքեան: Մարզական յանձնախումբ՝ Լեւոն Աբգարեան, Բենիամին Շամլեան եւ Թագլոր Թագլորեան:

Ընկերային յանձնախումբ՝ Խաչիկ Խաչատուրեան, Պօղոս Շահինեան, Երեմիա Երամեան, Օննիկ Խուպեսերեան եւ Յովսէփ Խաչատուրեան:

20 Յունիս 1943ին, մասնաճիւղը Rialto սրահին մէջ, կը կազմակերպէ մարզահանդէս, նախագահութեամբ Արտաւազդ Արք. Սիւրմէյեանի: Հանդէսի յաջողութիւնը արդիւնքն էր երկար ու յարատեւ պատրաստութեան, հսկողութեամբ Լեւոն Աբգարեանի: Այս յաջող ելոյթը արժանացաւ հայ եւ օտար շրջանակներու անվերապահ քաջալերանքին:

1944ի Յունուար 19ին գումարուած անդամական ընդհանուր ժողովին կողմէ կ'ընտրուի մասնաճիւղի նոր վարչական կազմը, հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Տոքթ. Յակոբ Պերպէրեան
Փոխ ատենապետ՝ Մարտիրոս Ճամպուլեան
Ատենադպիր՝ Յովսէփ Խաչատուրեան
Գանձապահ՝ Ֆերտինան Քեհեայեան
Գոյքապահ՝ Խաչիկ Խաչատուրեան
Մարզական պատասխանատու՝ Սամուէլ Գալուստեան

Խորհրդական՝ Կարպիս Մերտինեան:

Վարչութիւնը իր երկրորդ նիստի ընթացքին կը նշանակէ հետեւեալ օժանդակ յանձնախումբերը.-

Պասքեթպոլ եւ վոլիպոլ՝ Նուպար Խաչատուրեան, Նուպար Յովհաննէսեան, Լեւոն Պերպէրեան, Վարդգէս Պերպէրեան, Վահէ Չոքքարեան:

Ընկերային՝ Վազգէն Գասապեան, Վահէ Դանիէլեան, Սարգիս Վարդապետեան, Յովսէփ Խաչատուրեան:

Թենիս՝ Խաչիկ Խաչատուրեան, Ջաւէն Հրթիկեան:

Մարմնակրթանք՝ Կարպիս Մերտինեան, Ջարեհ Սարեան, Թագլոր Թագլորեան, Վահրամ Կիւրճեան, Օննիկ Փիլիկեան, Լեւոն Աբգարեան:

Սկաուտական Խորհուրդ՝ Տոքթ. Յ. Պերպէրեան, Տոքթ. Վազգէն Յովնանեան, Սուրէն Սուրատեան, Վահան Թորոսեան, Նշան Թիւյսիւզեան, Ստեփան Մելիքսեթեան, Ջոհրապ Ժամկոչեան:

Իգական բաժին՝ Լիւսի Տէր Մելքոնեան, Գեղարփի Տէր Մելքոնեան, Արփինէ Թերճանեան, Աստղիկ Երամեան, Պերճուհի Վարժապետեան: Այս յանձնախումբին նպաստը մեծ է պասքեթպոլի իգական ճիւղի զարգացման եւ արեւուշական շարժումի կազմակերպութեան մէջ:

«Կամք» խումբի պատասխանատուն է Մարտիրոս Ճամպուլեան: Այս խումբը ունի պետական անջատ արտօնագիր, սակայն կը գործէ Պէյրութի մասնաճիւղի հովանաւորութեան տակ:

Ֆուտպոլի կազմը, առաջին անգամ ըլլալով, կը դառնայ Լիբանանի ախոյեան:

1945 տարուան վարչութեան անդամներն են՝

Ատենապետ՝ Անդրանիկ Երամեան
Բ. ատենապետ՝ Հրանդ Մուրատեան
Ատենադպիր՝ Պօղոս Ժամկոչեան
Գանձապահ՝ Արամ Անթիքաճեան
Խորհրդականներ՝ Օննիկ Խուպեսերեան, Լեւոն Փիրանեան, Սամուէլ Գալուստեան:

Այս կազմին կ'օժանդակեն հետեւեալ յանձնախումբերը.-

Ընկերային՝ Լ. Պալեան, Յակոբ Եագուպեան, Վահէ Դանիէլեան, Խաչիկ Արարատեան, Սարգիս Սարգիսեան, Վազգէն Գասապեան, Վահէ Զոքքարեան, Սուրէն Սասունի:

Սկաուտական Խորհուրդ՝ ատենապետ՝ Վահրամ Կիւրճեան, Բ. ատենապետ եւ գոյքապահ՝ Յակոբ Եագուպեան, օգնական գոյքապահ՝ Ժան Պերպէրեան: Այս կազմէն, տարուան ընթացքին, Վահրամ Կիւրճեան կ'ընտրուի Շրջ. Վարչութեան անդամ, զինք կը փոխարինէ Յակոբ Խուպեսերեանը:

Ֆուլթայոլի յանձնախումբ՝ Սամուէլ Գալուստեան (վարչութեան ներկայացուցիչ), Կարապետ Սաաթճեան, Ն. Նաճարեան, Վարդիվառ Յովհաննէսեան, Յակոբ Կիւլպէնկեան (մարզիչ), Զաւէն Հրթիկեան:

Թենիսի յանձնախումբ՝ Օննիկ Խուպեսերեան, Խաչիկ Խաչատուրեան:

Պասքետբոլի եւ աղուճի յանձնախումբ՝ Յովսէփ Խաչատուրեան, Յակոբ Գեղունի, Խաչիկ Խաչատուրեան, Նուպար Յովհաննէսեան, Կարպիս Քէշիշեան:

Վոլիպոլի յանձնախումբ՝ Յարութիւն Զամանեան, Վարդգէս Մավիսաքալեան, Բանիկ Աթթարեան:

Կարդագիր յանձնախումբ՝ ձեռնարկներու առիթով՝ Վահէ Դանիէլեան, Պարգեւ Պեքերեճեան, Գրիգոր Մղձաւետիքեան, Բենիամին Շամլեան, Ժան Պերպէրեան, Յարութիւն Հատիտեան, Զաւէն Հրթիկեան, Միսաք Ապաճեան, Վարդգէս Խաչատուրեան, Յակոբ Աշճեան,

Վազգէն Գասապեան, Նուպար Յովհաննէսեան:

Աթլետիք յանձնախումբ՝ Յակոբ Աշճեան, Գրիգոր Մղձաւետիքեան, Միշէլ Յովսէփեան:

Վարչութեան գլխաւոր մտահոգութիւնը կը մնայ ֆուլթայոլի դաշտի մը ապահովումը: Մասնաճիւղի արտօնագիրը կը վերանորոգուի 20/6/1945 թուակիր թիւ 961 պաշտօնագրով: Պաշտօնապէս արտօնուած մարզախաղերն են ֆուլթայոլը, պասքետբոլը, թենիսը եւ աթլետիզմը:

23 Յունուար 1946ին, անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ.-

Ատենապետ՝ Տոքթ. Բաբգէն Փափագեան
Փոխ ատենապետ՝ Պօղոս Ժամկոչեան
Ատենադպիր՝ Մարտիրոս Ծամպուլեան
Բ. ատենադպիր՝ Վահէ Դանիէլեան
Գանձապահ՝ Արամ Անթիքաճեան
Գոյքապահ՝ Զաւէն Հրթիկեան
Խորհրդական՝ Բենիամին Շամլեան:

Վարչութեան կը գործակցին ֆուլթայոլի, պասքետբոլի, աթլետիզմի, թենիսի, ընկերային եւ կարգադիր յանձնախումբերը:

Յատուկ ուշադրութեան կ'արժանանայ սկաուտական ճիւղը: Կը նշանակուի սկաուտական խորհուրդի զօրաւոր կազմ մը, որուն առջեւ կը բացուի աշխատանքի լայն ասպարէզ:

28 Փետրուար 1947ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչութիւն հետեւեալ կազմով.-

Ատենապետ՝ Անդրանիկ Երամեան
Փոխ ատենապետ՝ Հրանդ Մուրատեան
Ատենադպիր՝ Նահապետ Զոլաքեան
Գանձապահ՝ Յերտինան Քեհյաեան
Ֆուլթայոլի ընդհանուր խմբապետ՝ Սամուէլ Գալուստեան

Գոյքապահ՝ Վահէ Դանիէլեան
Խորհրդականներ՝ Յովհաննէս Պայթարեան, Մարտիրոս Ծամպուլեան, Պօղոս Ժամկոչեան:

Այս կազմին գլխաւոր մտահոգութիւնն է ֆուլթայոլի դաշտի մը ապահովումը: 1942ին, Քրանսական զինուորական ուժերու կողմէ

գրաւուած Մար Իլիաս թաղի ֆուլթայոլի դաշտը վերադարձուած էր կալուածատիրոջ, առանց հատուցանելու Հ.Մ.Ը.Մ.ը որպէս վարձակալ: Շրջանային Վարչութեան գործակցութեամբ եւ Պէյրութի ու Պուրճ Համուտի մասնաճիւղերու վարչութիւններու մասնակցութեամբ կը կազմուի յատուկ յանձնախումբ մը, որ կը լծուի նոր հողաշերտի մը փնտռտուքին:

Տարեշրջանի աւարտին կ'ընտրուի նոր վարչական կազմ՝

- Ատենապետ՝ Օննիկ Թոփուզեան
- փոխ ատենապետ՝ Յովհաննէս Պայթարեան
- Ատենադպիր՝ Հրաչ Աթանասեան
- Գանձապահ՝ Ֆերտինան Քեհյաեան

Խորհրդականներ՝ Յակոբ Էրքելեթեան, Խաչիկ Արարատեան, Լեւոն Պերպէրան, Եղուարդ Մալիքեան եւ Կարպիս Մերտինեան: Վերջինս կը մերժէ մասնակցիլ վարչական աշխատանքներուն:

Նոր կազմ, սակայն մտահոգութիւնը կը մնայ նոյնը: Պէտք է ամէն գնով նոր վայր մը ապահովել մասնաճիւղի գործունէութիւնը ծաւալելու նպատակով: Նիւթական անձուկ կացութիւնը այլապէս մտահոգիչ է, վարչութիւնը պարտի ապահովել ահուճքի երեք տարիներու յետեալ վարձքի գումարը:

Զգալիօրէն տկարացած գործունէութեամբ տարեշրջան մը եւս կը բոլորուի եւ անդամական ընդհանուր ժողովը, 13 Փետրուար 1949ին, կ'ընտրէ նոր վարչական կազմ մը, որուն անդամները տեղւոյն վրայ իրենց հրաժարականները կը ներկայացնեն եւ կը մերժեն վարչական պարտականութիւն ստանձնել:

Շրջանային Վարչութեան թելադրանքով, անդամական ընդհանուր ժողովի դիւանը կրկին անդամները ժողովի կը հրաւիրէ 28 Փետրուար 1949ին, ընտրելու համար նոր վարչութիւն:

8 Մարտ 1950ին, կ'ընտրուի նոր վարչական կազմ՝ ատենապետութեամբ հրանդ Մուրատեանի: Այս կազմը իր ճիգերը կը կեդրոնացնէ կազմակերպչական աշխատանքներու վրայ: Կը քաջալերէ սկաուտական խումբը մասնակցելու

սկաուտութեան հիմնադիր Պէյտըն Փաուլի յաջորդին՝ գնդապետ Ուիլսընի Պէյրութ այցելութեան առթիւ սկաուտական միութիւններու կազմակերպած ընդհանուր բանակումին:

13 Մայիսին, վարչութիւնը ահուճքի դաշտին վրայ կը կազմակերպէ « Հ.Մ.Ը.Մ.ի Օր »: Հանդէսը կը հովանաւորեն պետական երեսփոխաններ՝ Մովսէս Տէր Գալուստեան եւ Տոքթ. Մելքոն Հայրապետեան, իսկ օրուան բանախօսն է Գասպար Իփէկեանը:

9էն 11 Յունիսին, ահուճքի դաշտին վրայ կը կազմակերպուի քերմէս ցայգատօն վարչութեան գանձին նիւթական միջոցներ ապահովելու համար:

Կազմակերպչական տարեշրջան մը՝ ուր վարչութիւնը կանոնաւորաբար կը կատարէ անդամատուրքերու գանձում եւ կը յանձնէ անդամատետրեր:

1951ի Յունիս 26ի եւ Յուլիս 6ի անդամական ընդհանուր ժողովի զոյգ նիստերու աւարտին, ընտրեալ վարչականներէն պաշտօնի վրայ մնացողները կը կազմեն դիւան հետեւեալ ձեւով:-

- Ատենապետ՝ Յակոբ Աշճեան
- Ատենադպիր՝ Նուպար Յովհաննէսեան
- Գանձապահ՝ Կարպիս Միսիրեան
- Գոյքապահ՝ Գրիգոր Միսաքեան

Մարզական պատասխանատու՝ Ժողէֆ Նալպանտեան

Սկաուտական պատասխանատու՝ Սուրէն Մուրատեան:

Վերոյիշեալ կազմը կը գործէ մինչեւ 1952ի Յունիս ամիսը: Վարչութիւնը կը ստիպուի դադրեցնել կուփամարտի կիրարկումը, որ յաջողապէս կը գործէր: Հրանդ Ղազարեանի յաջողութիւնները այս մարզէն ներս Հ.Մ.Ը.Մ.ի ահուճքի ռինկին վրայ անախորժ դէպքերու առիթ կը ստեղծէին տեղացի կուփամարտիկներ քաջալերողներու կողմէ:

Վարչութեան գլխաւոր մտահոգութիւնն է նոր ահուճք խաղափայլի մը ապահովումը, նախկինէն վերջնականապէս հեռացուելէ ետք:

1952ի Յունիս 18ին կ'ընտրուի նոր վարչութիւն, սակայն ընտրուած անդամներու մեծամաստութիւնը կը մերժէ մաս կազմել վարչութեան: Տագնապը կը տեւէ մինչեւ Հոկտեմբերի կէսերը, երբ անդամական ընդհանուր ժողովի նախագահը կրկին ժողովի կը հրաւիրէ անդամները՝ 16 Հոկտեմբեր 1952ին: Այս ժողովէն կ'ընտրուի հետեւեալ վարչական կազմը.-

Ատենապետ՝ Յակոբ Խուպեսերեան
Փոխ ատենապետ՝ Ժիրայր Խաչատուրեան
Ատենադպիր՝ Վահէ Դանիէլեան
Գանձապահ՝ Արամ Անթիքաճեան
Սկստական պատասխանատու՝ Սուրէն Մուրատեան

Խորհրդականներ՝ Նուպար Խանամիրեան, Արա Պապիկեան, Ժողէֆ Նալպանտեան, Վարդիվառ Յովհաննէսեան:

Վերոյիշեալ կազմը պիտի գործէր մինչեւ 1953ի աւարտը:

29 Յունուար 1954ին ընտրուած վարչական կազմն է՝

Ատենապետ՝ Լեւոն Պապիկեան
Փոխ ատենապետ՝ Վահան Մչիկեան
Ատենադպիր՝ Սարգիս Վարդապետեան
Գանձապահ՝ Պողոս Շահինեան
Մարզական պատասխանատու՝ Ժողէֆ Նալպանտեան

Սկստական պատասխանատու՝ Սուրէն Մուրատեան

Խորհրդականներ՝ Գրիգոր Մղձաւետիքեան, Նուպար Խանամիրեան:

Մարզական բոլոր ճիւղերը կը գործեն կանոնաւորաբար: Պասքէթպոլի աղջկանց կազմը կ'ապահովէ Լիբանանի ախոյեանութիւնը: Մասնաճիւղի ֆուտպոլի կազմը անգամ մը եւս կ'ապահովէ Լիբանանի ախոյեանութիւնը: Սկստական շարքերը կը գործեն չորս տարբեր շրջաններու մէջ՝ Պէյրութ-քաղաք, Էշրէֆիէ, Գարանթինա եւ Հայաշէն:

1955ի Մարտ 28ին, անդամական ընդհանուր ժողովը, դիւանի կազմի փոքր փոփոխութեամբ, կ'ընտրէ հետեւեալ վարչական կազմը.-

Ատենապետ՝ Լեւոն Պապիկեան
Փոխ ատենապետ՝ Վահան Մչիկեան
Ատենադպիր՝ Սարգիս Վարդապետեան
Գանձապահ՝ Գրիգոր Մղձաւետիքեան
Գոյքապահ եւ հաշուապահ՝ Ժագ Էրքելեթեան

Մարզական պատասխանատու՝ Ժողէֆ Նալպանտեան

Խորհրդականներ՝ Ալպէր Խանամիրեան, Ժան Պերպէրեան:

1956ի Մարտ 8ին ընտրեալ վարչական անդամներն են՝

Ատենապետ՝ Յովհաննէս Պայթարեան
Փոխ ատենապետ՝ Ֆիլիփ Զաքարեան
Ատենադպիր՝ Հրաչ Թուրիկեան
Գանձապահ՝ Ժորժ Պահատուրեան
Գոյքապահ՝ Ժան Պերպէրեան

Խորհրդականներ՝ Յարութիւն Գուլումճեան, Վահէ Դանիէլեան:

Մարզական պատասխանատու՝ Ժողէֆ Նալպանտեան

Սկստական պատասխանատու՝ Սուրէն Մուրատեան:

Այս տարեշրջանին գլխաւոր իրագործումը կ'ըլլայ Զոքաք-Պլաթ թաղի սեփական ահումբի եւ պասքէթպոլի դաշտի կառուցման ամբողջացումը: Բացման հանդիսութիւնը տեղի կ'ունենայ 22 Մայիս 1956ին, հովանաւորութեամբ Լիբանանի հանրապետութեան նախագահ Քամիլ Շամունի: Այս առթիւ նախագահը լիբանանեան արժանեաց շքանշանով կը պարգեւատրէ մասնաճիւղի ղեկավար անդամներ՝ Յովհաննէս Շահինեանը, Ժողէֆ Նալպանտեանը եւ Յակոբ Գատեանը:

Սկստական գործունէութիւնը յատուկ թափ կը ստանայ նորակազմ Սկստական Խորհուրդի առաջնորդութեամբ: Խորհուրդին մաս կը կազմեն՝ Տոքթ. Վազգէն Յովնանեան՝ ատենապետ եւ Միհրան Գարտաշեան՝ ատենադպիր: Այս տարածուն գործունէութեան համար հաւաքատեղիները անբաւարար են Հայաշէնի եւ Ռումէյլի թաղամասերուն մէջ, իսկ Էշրէֆիէի

ակումբէն, ուր երկու տարիէ ի վեր շարժումը կը գործէ, կը խնդրեն յատուկ տեղ ապահովել սկաուտներուն:

4 Փետրուար 1957ին, տեղի կ'ունենայ անդամական ընդհանուր ժողով, նորակառոյց ակումբի սրահին մէջ: Վարչական կազմի անդամներն են.-

- Ատենապետ՝ Վահէ Դանիէլեան
- Փոխ ատենապետ՝ Գրիգոր Մխճաւետիքեան
- Ատենադպիր՝ Յակոբ Շամլեան
- Գանձապահ՝ Արա Պապիկեան
- Գոյքապահ՝ Ժան Պերպէրեան

Մարզական պատասխանատու՝ Ժողէֆ Նալպանտեան

Սկաուտական Խորհուրդի ներկայացուցիչ՝ Գրիգոր Եաւէրեան

Խորհրդականներ՝ Վարդիվառ Յովհաննէսեան, Վահագ Յովհաննէսեան:

Յատուկ հոգածութեան արժանի է պասքեթպոլի ճիւղը, նորակառոյց դաշտի ընձեռած դիւրութիւններով՝ թրիպիւն, տղոց եւ աղջկանց յատուկ հանդերձարաններ եւ յարակից բաժիններ:

Մասնաճիւղը ունի 500 գիրքերէ բաղկացած գրադարան:

Նիւթական գործառնութիւնը կը մնայ համեմատաբար համեստ. մուտք՝ 27.000 լ.ո., ելք՝ 24.000 լ.ո.:

1958ին, նորակերտ ակումբի եւ դաշտի ընձեռած բոլոր յարմարութիւնները լիովին կ'օգտագործուին: Վարչութեան գործակցող օժանդակ յանձնախումբերէն կարեւոր դեր կը ստանձնէ Սկաուտական Խորհուրդը: Այս թուականին կը ծրագրուի հիմնել Լիբանանի սկաուտական Ֆետերասիոնը, որուն ծրագրման եւ գործադրման աշխատանքներուն Պէյրութի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական կազմակերպութեան մասնակցութիւնը բարոյական եւ գործնական մեծ նպաստ կը բերէ: Պէտք է նշել, թէ այդ օրերու արտօնեալ փոքրաթիւ սկաուտական կազմակերպութիւններէն է Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը:

13 Մարտ 1959ին, անդամական ընդհանուր ժողովը, լսելէ ետք շրջանաւարտ վարչութեան գործունէութեան տեղեկագիրը, կ'ընտրէ նոր վարչական կազմ.-

- Ատենապետ՝ Ժիրայր Խաչատուրեան
- Ատենադպիր՝ Հրանդ Մուրատեան
- Գանձապահ՝ Արա Պապիկեան

Խորհրդականներ՝ Գրիգոր Մխճաւետիքեան, Ժողէֆ Նալպանտեան, Յովհաննէս Պալթարեան, Նուպար Խանամիրեան, Յակոբ Շամլեան:



Պէյրութի Հ.Մ.Ը.Մ.ի 1959ի վարչական կազմը

5 Փետրուար 1960ին, նոյն կազմը կը վերընտրուի բացի Հրանդ Մուրատեանէն եւ Արա Պապիկեանէն: Նոր կազմին կ'անդամակցին Վահէ Դանիէլեան, Կարպիս Թիւյսիւզեան եւ Օննիկ Մարաշլեան, որ կը ստանձնէ ատենադպիրի պաշտօնը:

14 Մարտ 1961ի անդամական ընդհանուր ժողովէն բխած նորընտիր վարչութեան անդամներն են.-

- Ատենապետ՝ Վահէ Դանիէլեան
- Փոխ ատենապետ՝ Գրիգոր Մխճաւետիքեան
- Ատենադպիր՝ Տիգրան Ոսկունի
- Գանձապահ՝ Կարպիս Թիւյսիւզեան
- Հաշուապահ՝ Յովհաննէս Պալթարեան
- Սկաուտ պատասխանատու՝ Հայկ Պէլլէրեան

Ֆուլթոնի պատասխանատու՝ Ժոզեֆ Նալպանտեան

Շինութեան պատասխանատու՝ Ժիրայր Խաչատուրեան

Փինկփոնկի պատասխանատու՝ Նուպար Խանամիրեան:

Յուլիս ամիսէն սկսեալ, Բիւզանդ Թորիկեան կը հրաւիրուի մաս կազմելու վարչութեան, որպէս օգնական ատենադպիր:

Տարուան կէսերուն վարչութիւնը հաղորդակցութեան մէջ կը մտնէ Գարանթինայի շրջանին մէջ գործող «Շանթ» մարզականի ղեկավարութեան հետ: «Շանթ»ը ղեկավարութեամբ եւ անդամներով կը բաղկանայ Հ.Մ.Ը.Մ-ի համակիրներէ: Վարչութիւնը յետ բանակցութեանց կը յաջողի «Շանթ»ը միացնել Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրութի մասնաճիւղին որպէս պասքեթպոլի մարզական խումբեր՝ տղոց եւ աղջկանց բաժիններով:

Մարզական բաժնի գլխաւոր յաջողութիւնը պիտի ըլլար մասնաճիւղի հեծելանւորներու մասնակցութիւնը Մարոքի մէջ կայացող Համաարաբական Գ. Խաղերուն, ուր լիբանանեան խումբը ամբողջութեամբ կը բաղկանար Հ.Մ.Ը.Մ-ականներէ եւ ուր ընդհանուր դասաւորման երրորդ դիրքը զրաւեց:

1962ի Մարտի 2ին, կ'ընտրուի նոր վարչական կազմ, պաշտօններու հետեւեալ բաժամնումով.-

- Ատենապետ՝ Ժոզեֆ Նալպանտեան
- Փոխ ատենապետ՝ Գրիգոր Մղճաւետիքեան
- Ատենադպիր՝ Բիւզանդ Թորիկեան
- Գանձապահ՝ Յովհաննէս Պայթարեան
- Պասքեթպոլի պատասխանատու՝ Ժազ Պոյաճեան

Փինկփոնկի պատասխանատու՝ Վարուժան Խանամիրեան

Վոլիպոլի պատասխանատու՝ Յակոբ Համամճեան

- Սկաուտական խմբապետ՝ Հայկ Պէյլէրեան
- Շինարարական՝ Սուրէն Գասպարեան
- Հեծելարշաւ՝ Յովհաննէս Ծատուրեան

Խորհրդական՝ Գառնիկ Տեքպազեան:

Նախորդ վարչութեան գործունէութիւնը նոյն թափով կը շարունակուի: Յատուկ ճիգերու կ'արժանանայ ակումբի վերաշինութեան արտօնագրի ստացման պարագան:

1963 տարեշրջանին համար, մասնաճիւղի 60րդ անդամական ընդհանուր ժողովին կողմէ վարչական անդամներ կ'ընտրուին՝

- Ատենապետ՝ Ժոզեֆ Նալպանտեան
- Փոխ ատենապետ՝ Գրիգոր Մղճաւետիքեան
- Ատենադպիր՝ Յակոբ Բրինձեան
- Գանձապահ՝ Արա Պապիկեան
- Հաշուապահ՝ Սահակ Գասարճեան
- Սկաուտական պատասխանատու՝ Սուրէն Մուրատեան

Խորհրդականներ՝ Յակոբ Համամճեան, Յովհաննէս Ծատուրեան, Աբրահամ Աշճեան, Արա Շամլեան, Վարուժան Խանամիրեան:

Ակումբի շէնքը իր ենթաբաժանումներով անբաւարար է սկաուտական, վարչական եւ փինկփոնկի բաժիններու ծառայութեան:

1964ի Յունուար 8ին, մասնաճիւղին կողմէ 16րդ Պատգամաւորական ժողովին ներկայացուցիչներ կ'ընտրուին՝ Տիգրան Ոսկունի, Սուրէն Մուրատեան, Գրիգոր Մղճաւետիքեան, Վահէ Դանիէլեան, Ժիրայր Խաչատուրեան, Վարդիվառ Յովհաննէսեան եւ Արամ Անթիքաճեան: Մասնաճիւղին կողմէ, այլ առաջարկներու կողքին, պատգամաւորական ժողովին կը ներկայացուի Հ.Մ.Ը.Մ-ի կողմէ ամսաթերթ մը հրատարակելու առաջարկը:

Նոյն տարուան Փետրուար 9ին, անդամական 62րդ ընդհանուր ժողովը վարչական կ'ընտրէ հետեւեալները.-

- Ատենապետ՝ Ժիրայր Խաչատուրեան
- Փոխ ատենապետ՝ Գրիգոր Մղճաւետիքեան
- Ատենադպիր՝ Վարուժան Մուրատեան
- Գանձապահ՝ Արա Պապիկեան
- Հաշուապահ՝ Վարուժան Խանամիրեան

Խորհրդականներ՝ Յարութիւն Գուլումճեան, Յովհաննէս Ծատուրեան, Ժոզեֆ Նալ-

պանտեան, Ժագ Պոյաճեան, Աբրահամ Աշճեան, Բաֆֆի Պալեան:

Այս կազմին գլխաւոր իրականացումը կ'ըլլայ ակումբի երկյարկանի նոր շէնքին շինութիւնը: Նորաշէն ակումբը իր տարածուն բաժիններով կը սկսի լաւապէս ծառայել մասնաճիւղի բոլոր կարիքներուն:

7 Մարտ 1965ին, կատարուեցաւ նոր վարչութեան ընտրութիւն հետեւեալ կազմով.-

- Ատենապետ՝ Վահէ Դանիէլեան
- Փոխ ատենապետ՝ Գրիգոր Մխճաւետիքեան
- Ատենադպիր՝ Վարուժան Մուրատեան
- Գանձապահ՝ Յարութիւն Գուլումճեան
- Սկառուտական ներկայացուցիչ՝ Պատրիկ Կիւլպենկեան

Խորհրդականներ՝ Աբրահամ Աշճեան, Ժագ Պոյաճեան, Յովհաննէս Մատուրեան, Յակոբ Համամճեան, Վարդգէս Հայրապետեան, Խաչիկ Մանսուրեան եւ Ալեքս Պեգիկեան: Վերջին երկուքը նշանակուած վարչութեան կողմէ՝ փոխարինելու համար Ժիրայր Աթթարեանը:

1966 Փետրուար 15ին, տարեշրջանի նորընտիր վարչութիւնը կազմեց իր դիւանը հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Վահէ Դանիէլեան
- Փոխ ատենապետ՝ Գրիգոր Աւետիքեան
- Ատենադպիր՝ Վարդգէս Հայրապետեան
- Խորհրդականներ՝ Ժիրայր Սարգիսեան, Խաչիկ Մանսուրեան, Պատրիկ Կիւլպենկեան, Ժագ Պոյաճեան:

19 Փետրուար 1967ին տեղի կ'ունենայ 17րդ Պատգամաւորական Ժողովին մասնակցող ներկայացուցիչներու ընտրութիւն: Ներկայացուցիչներ կ'ընտրուին՝ Յովհաննէս Պայթարեան, Վարուժան Մուրատեան, Տիգրան Ոսկունի, Գրիգոր Մղճաւետիքեան, Պատրիկ Կիւլպենկեան, Ժիրայր Խաչատուրեան եւ Գուրգէն Խանճեան:

Պատգամաւորական Ժողովէն ետք, 8 Մարտ 1967ին, 65րդ անդամական ընդհանուր ժողովի կողմէ մասնաճիւղի վարչութեան անդամներ կ'ընտրուին՝

- Ատենապետ՝ Վահէ Դանիէլեան
- Փոխ ատենապետ՝ Գրիգոր Աւետիքեան
- Ատենադպիր՝ Վարուժան Մուրատեան, Ալեքս Պեգիկեան

Գանձապահ՝ Վարդգէս Հայրապետեան
Խորհրդականներ՝ Պատրիկ Կիւլպենկեան, Միսաք Խանամիրեան, Անդրանիկ Երամեան

Սկառուտական խմբապետ՝ Ժիրայր Սարգիսեան:

Զանազան մարզախաղերու յանձնախումբեր կ'օժանդակեն վարչութեան աշխատանքներուն:

Հակառակ բազմիցս եղած առաջարկներուն, վարչութիւնը պատեհ չի նկատեր էշրէֆիէի շրջանին համար յատուկ վարչութեան մը կազմութիւնը եւ կը պահէ Պէյրութի համար մէկ կեդրոնացեալ վարչութեան դրութիւնը:

8 Փետրուար 1968ին, 251 անդամներու ներկայութեան, մասնաճիւղի նոր վարչական կազմի անդամներ կ'ընտրուին.-

- Ատենապետ՝ Վահէ Դանիէլեան
- Փոխ ատենապետ՝ Գրիգոր Մղճաւետիքեան
- Ատենադպիր՝ Վարուժան Մուրատեան
- Գանձապահ՝ Վարդգէս Ալահայտոյեան
- Հաշուապահ՝ Բիւզանդ Թորիկեան
- Խորհրդականներ՝ Յարութիւն Հալէպլեան, Պատրիկ Կիւլպենկեան, Վարդգէս Հայրապետեան, Վարուժան Խանամիրեան, Արա Պապիկեան:

Զարկ կը տրուի մասնաճիւղի գործունէութեան բոլոր ճիւղերուն:

Պասքեթպոլի աղջկանց կազմը կը պահէ Լիբանանի ախոյեանութեան տիտղոսը: Աղջկանց աթլետիզմի կազմին մէջ մեծ յաջողութիւններ ձեռք կը բերեն Եսթեր Մեծմօրուքեան (100 եւ 200 մետր վազքերու լիբանանի մրցանիշակիր) եւ իր խմբակիցները:

1969 տարուան վարչական կազմի անդամներն են՝

- Ատենապետ՝ Գրիգոր Մխճաւետիքեան
- Ատենադպիրներ՝ Վարուժան Մուրատեան, Բիւզանդ Թորիկեան

Գանձապահ՝ Վարդգէս Հայրապետեան
Հաշուապահ՝ Յակոբ Գալբաքեան
Խորհրդականներ՝ Աբրահամ Աշճեան, Էլի
Գրիգորեան, Ժազ Պոյաճեան, Կարօ Սեդրակ-
եան, Կարօ Տէմիրճեան (Հատտատ), Ժիրայր
Սարգիսեան:

Մարզական գետնի վրայ, տարուայ գլխաւոր
յաջողութիւնը եղաւ Ֆուտպոլի խումբին Լիբա-
նանի ախոյեանութեան տիրանալը, վերջիչեցնե-
լով երբեմնի խանդավառութիւնը այս մարզա-
խաղին շուրջ:

Գրիգոր Միսաւետիքեանի ատենապետու-
թեամբ, 1969ի կազմը փոքր փոփոխութեամբ,
պիտի վարէր նաեւ 1970 տարեշրջանին մասնա-
ճիւղի գործունէութիւնը:

21 Օգոստոս, 1971ին, վարչական կազմի ան-
դամներ կ'ընտրուին՝ Ժազ Ալահայտոյեան,
Գրիգոր Միսաւետիքեան, Վահէ Դանիէլեան,
Զոհրապ Պոսնոյեան, Վարդգէս Հայրապետեան,
Յակոբ Գալբաքեան, Ժազ Պոյաճեան, Յովհան-
նէս Ծատուրեան, Պետիկ Գահվեճեան, Արա Մա-
տենլեան եւ Ճոնի Արեւեան:

1971-ը կ'ըլլայ մասնաճիւղի բոլոր ճիւղերու
զարգացման տարին: Մարզական բոլոր ճիւղերը
զգալի յառաջդիմութիւն կ'արձանագրեն: Ֆուտ-
պոլի ախոյեանական, բարեկամական եւ միջազ-
գային մրցումներ գրեթէ ամէն շաբաթ կը զբա-
ղեցնեն Հ.Մ.Ը.Մ.ի համակիրները: Աթլետիզմի
միջ-մասնաճիւղային հաւաքականը իր ելոյթնե-
րով եւ յաջողութիւններով խօսիլ կու տայ իր
մասին: Պասքետպոլ, հեծելարշաւ եւ փինկ-փոնկ
նորանոր յաջողութիւններ կ'արձանագրեն:
Սկաուտական բաժինը աստիճանաւորական ցան-
ցի թեքնիք զարգացումով վերելքի մէջ է: Յակոբ
Համամճեանի առաջնորդութեամբ՝ սկաուտա-
կան պատուիրակութիւն մը իր տարեկան բանա-
կումը կը կատարէ Յունաստանի մէջ: Ակմբային
եւ ընկերային բաժինները մնայուն գործունէու-
թիւն կ'արձանագրեն եւ տարեշրջանը կ'աւարտի
ընդհանուր լաւատեսութեամբ:

30 Յունուար 1972ին, տեղի կ'ունենայ մաս-
նաճիւղի անդամական ընդհանուր ժողով: Յետ

նիւթաբարոյական տեղեկագրի ընթերցման, ձե-
ռամբարձ քուէարկութեամբ կ'ընտրուի նոր
վարչութիւն, որուն կը մասնակցին.-

Ատենապետ՝ Ժազ Ալահայտոյեան
Փոխ ատենապետ՝ Գրիգոր Աւետիքեան
Ատենադպիր՝ Զոհրապ Պոսնոյեան
Գանձապահ՝ Վարդգէս Հայրապետեան
Խորհրդականներ՝ Յովհաննէս Ծատուրեան,
Կարօ Սեդրակեան, Ժազ Պոյաճեան, Հրայր Տէր
Թորոսեան, Բենօ Թոնդեան, Պատրիկ Կիւլպենկ-
եան, Ճոնի Արեւեան:

1973 տարուան վարչական կազմի անդամ-
ներն են՝

Ատենապետ՝ Սուրէն Տէր Մելքոնեան
Փոխ ատենապետ՝ Վարդգէս Հայրապետեան
Ատենադպիր՝ Յակոբ Եափուճեան
Գանձապահ՝ Գէորգ Վիշապեան
Պասքետպոլի ներկայացուցիչ՝ Ժազ Պոյաճ-
եան

Հեծելարշաւի ներկայացուցիչ՝ Յովհաննէս
Ծատուրեան

Փինկ-փոնկի ներկայացուցիչ՝ Ղազարոս Պալ-
եան

Սկաուտական ներկայացուցիչ՝ Ստեփան
Չազմագճեան

Ընկերային յանձնախումբ՝ Պետիկ Գահվեճ-
եան

Յարաբերական՝ Ճոնի Արեւեան
Ակումբի յանձնախումբ՝ Հրանդ Խոզոզեան:

Այս տարեշրջանին մասնաճիւղը ճատրակը
կ'աւելցնէ իր գործունէութեան ճիւղերուն վրայ:
Զորեքշաբթի գիշերները, Պէյրութի Հ.Մ.Ը.Մ.ի
ակումբի սրահը, , ընտրեալ ժամադրավայրը կը
դառնայ ճատրակի հայ սիրահարներուն:

Շինարարական գետնի վրայ պասքետպոլի
դաշտը ծածկելու ծրագիրը մանրամասնօրէն կը
քննուի: Ուսումնասիրութիւնները կը յայտնա-
բերեն ծրագրի առաւելութիւններն ու անպա-
տեսութիւնները, ինչպէս նաեւ նախահաշիւը:

Մասնաճիւղի տարեկան պարահանդէսը
սնտուկին կ'ապահովէ 16.000 լիբ. ոսկի զուտ
շահ:

1974ի Յունուար 10ին, մասնաճիւղը կը գումարէ անդամական ընդհանուր ժողով, որուն վերջին օրակարգով ընտրուած վարչութիւնը իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Բաֆֆի Պալեան
 Փոխ ատենապետ՝ Վարդգէս Հայրապետեան
 Ատենադպիր՝ Աբրահամ Սիւրդիւքեան
 Գանձապահ՝ Յարութիւն Հալէպլեան
 Պասքեթպոլի պատասխանատու՝ Ժագ Պոյաճեան

Տուրքապոլի պատասխանատու՝ Օննիկ Պարսամեան

Հեծելանիւի պատասխանատու՝ Յովհաննէս Ծատուրեան

Փինկ-փոնկի պատասխանատու՝ Ղազարոս Պալեան

ԼԵՎԱՄի ներկայացուցիչ՝ Սագօ Կէօյպաշեան

Գոյքապահ՝ Հրանդ Խոզոզեան
 Սկառուտական ներկայացուցիչ՝ Ճոնի Արեւեան:

Յարութիւն Հալէպլեան, տարեշրջանի ընթացքին, գանձապահութեան պաշտօնը կը փոխանցէ Վարդգէս Հայրապետեանին: Շարունակելով նախորդ վարչութեան պասքեթպոլի դաշտը ծածկելու ծրագրի ուսումնասիրութիւնը, հարց կը դառնայ, թէ դաշտը պիտի ծածկուի պեթոնով թէ երկաթեայ կառոյցով:

1974ին, պանդոկ Պրիսթոլի մէջ մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան 50ամեակը: Մասնաճիւղի անունով ատենապետ Բաֆֆի Պալեան կը պարգեւատրուի կրթական նախարարութեան յատուկ շքանշանով: Մարտին, մասնաճիւղը ընդունելութիւն մը կը սարքէ ի պատիւ Լիբանան այցելող հայրենի «Արարատ» ֆուտպոլի խումբի պատուիրակութեան:

Անդամակցութիւն

Պէյրութի Հ.Մ.Ը.Մ.ի անդամներու թիւը ենթակայ եղած է յաճախակի փոփոխութիւններու:

1940ին անդամներու ընդհանուր թիւը շուրջ 250 է: Նոր մարզախաղերու յաւելումը եւ գործող մարզական թէ սկառուտական բաժիններու վերակազմութիւնը թուական զգալի փոփոխութիւններու տուն կու տան, իսկ մարզական եւ սկառուտական գործունէութեանց յաջողութիւններուն կը հետեւին բազմաթիւ նոր անդամակցութիւններ:

Ստորեւ, կարգ մը տարիներու անդամական թիւերու հոլովոյթը: Աստղանիշ կրող տարիները, վարչութեան կողմէ կազմակերպչական վերատեսութեան եւ անդամակցութեան զտումի տարիներ են:

Տարի	Օժանդակ	Մտիգ կ	Սկառուտ	Ընդհ. թ լ
1942				275
1943				298
1944	170	106	155	431
1955*	139	152	188	479
1956				536
1957	476	122	198	796
1968*	285	141	275	701

Ակումբ - մարզադաշտ

1940 տարեշրջանի վարչութիւնը, այլ յանձնախումբերու կողքին, առաջին անգամ ըլլալով կը նշանակէ ֆուտպոլի դաշտի յանձնախումբ մը: Այս յանձնախումբին պարտականութիւնն էր՝ դաշտի խնամքի կողքին՝ նաեւ կիշէի եւ կարգապահութեան հսկողութիւնը: Յանձնախումբին մաս կը կազմեն՝ Գրիգոր Մղձաւետիքեան, Փիէռ Քէհեայեան, Բենիամին Շամլեան, Բարսեղ Շիմշիրեան, Ներսէս Ներսէսեան, Ներսէս Հինտոյեան, Վահան Տատոյեան, Յարութիւն Այանեան, Միսաք Ապաճեան, Յակոբ Ինճէյեան, Մկրտիչ Պարոնեան եւ Սարգիս Քէշիշեան:

Այս յանձնախումբը կը յաջողի իր առաքելութեան մէջ, սակայն անոր ճիգերուն արդիւնաւորումը կարճատեւ պիտի ըլլար: 1941ին

Ֆրանսական զինուորական ուժերը կը գրաւեն մարզադաշտը զայն օգտագործելու համար իբրեւ բեռնակարգերու կայարան: Այս գրաւումը արգիլելու համար վարչութեան բոլոր ճիգերը ապարդիւն կ'ըլլան: Մինչ այդ, կը պարտադրուի քակել դաշտի տախտակաչէն թրիպիւնը, նիւթական ծանր վնասի ենթարկելով մասնաճիւղի գանձը:

Այլ ձեւի գրաւում մը, 1943ին, կը դժուարացնէ մասնաճիւղի մարզական գործունէութիւնը, երբ զինուորական իշխանութիւնները կ'որոշեն ակումբի կից պասքեթպոլի դաշտին յատակը խրամատներ փորել, ժողովրդական ապաստանարաններ շինելու համար: Դաշտը կը քանդուի առժամաբար, սակայն վերաշինութենէն ետքն ալ օդի անցքի համար թողուած բացութիւնները անհնար կը դարձնեն խաղի բնականոն կիրարկումը: Ստիպուած՝ վարչութիւնը կը դիմէ Համազգայինի Հայ Ճեմարանի տնօրէնութեան, խնդրելով որ վարժարանի պասքեթպոլի դաշտը իրենց տրամադրուի փորձերուն համար:

Տակաւին լուծելի կը մնայ Ֆուլթպոլի դաշտի մը ապահովումը: 1945 տարուան վարչութիւնը ունի երկրնտրանք մը. կամ առժամաբար օգտագործել Sagesse ակումբի դաշտը, կամ մէկ տարուայ համար վարձել DPHB ակումբի դաշտը, մասնակցելով անոր նորոգութեան ծախսերուն՝ 1100 լ. ո.՝ երեք հանգրուանով վճառելի: Իսկ ակումբի հողաչերտին վրայ սրահի մը կառուցումը ի վերջոյ կ'իրականանայ եւ բացումը տեղի կ'ունենայ 8 Ապրիլ 1945ին:

1947ին, Շրջանային Վարչութեան գլխաւորութեամբ եւ Պուրճ Համուտի եւ Պէյրութի մասնաճիւղերու ներկայացուցիչներու մասնակցութեամբ կը կազմուի յատուկ յանձնախումբ մը, Ֆուլթպոլի սեփական դաշտի մը ապահովման համար: Երկար պրպտուքները կը յանգին այն եզրակացութեան, թէ՛ օրուայ նիւթական կարելի միջոցներով անհնար է դաշտի մը հողամասին փոխարժէքը ապահովել: Մասնաճիւղը կը մնայ առանց Ֆուլթպոլի սեփական դաշտի: Հա-

մաճայնութիւն կը գոյանայ Սէն Ժոզէֆ համալսարանի տնօրէնութեան հետ՝ Գորնիշ Նահրի դաշտը խումբի փորձերուն ծառայեցնելու համար: Նոյն համաճայնութիւնը կը շարունակուի 1948-49 եղանակին համար: Մինչ այդ, Պէյրութի քաղաքապետութեան ծրագրով ակումբի արեւմտեան կողմէն ճամբու համար գրաւուելիք բաժնին հրամանագիրը վերացնելու դիմումներ կը կատարուին բարձրաստիճան անձնաւորութիւններու մօտ: Հակառակ տարուած ճիգերուն, հրամանագիրը երկու տարի յապաղումով կ'իրագործուի: Վարչութիւնը այս անգամ իր ճիգերը կը կեդրոնացնէ քաղաքապետութենէն առաւելագոյն վնասուց հատուցում ստանալուն վրայ: Ակումբի մասնակի քանդումին կը հետեւի հողատիրոջ՝ Հ.Մ.Ը.Մ.ի դէմ բացած դատը: Հողատէրը կ'ամբաստանէ Հ.Մ.Ը.Մ.ը ակումբի շրջափակէն ծառեր կտրած ըլլալու յանցանքով: Հակառակ միջամտութիւններու եւ փաստաբանական ճիգերու, Հ.Մ.Ը.Մ.ը դատական վճիռով կը ստիպուի թողուլ Chebli թաղի ակումբ խաղավայրը, առանց հատուցումի:

1951ին, վարչութիւնը՝ գուրկ սեփական ակումբ խաղավայրէ՝ կը փորձէ նման վայր մը ապահովել Պէյրութի քաղաքի կեդրոնական դիրքերէն մէկուն վրայ: Այս նպատակին իրագործման համար մասնաճիւղը ունի քաղաքապետութենէն իբրեւ հատուցում գանձած 10.000 լ. ոսկիի գումարը, որուն վրայ կու գայ աւելնալու ճորճ Մարտիկեանի նուիրած հազար տոլարը՝ 3762 լ. ոսկի:

1953ին, վարչութիւնը կը հրաւիրէ պէյրութահայ համակիրներ անոնց ներկայացնելու համար սեփական ակումբի եւ դաշտի մը գնման ծրագիրը եւ խնդրելով անոնց աջակցութիւնը՝ նիւթական մասնակցութեամբ:

Նպատակայարմար հողաչերտը կը գտնուի 1953ի վերջաւորութեան եւ վարչութիւնը կը լծուի զայն սեփականացնելու գործին: Վարչութիւնը այս նպատակի իրագործման համար կը դիմէ արտասահման գտնուող նախկին անդամ-

ներու՝ խնդրելով անոնց անհատական կամ հանգանակային օժանդակութիւնը: Կը կազմուի դաշտի գնման յանձնախումբ, մասնակցութեամբ հետեւեալ անդամներուն. Ներսէս Ներսէսեան, Տոքթ. Արամ Պաղտասարեան, Սեդրակ Սարգստեան, Արամ Անթիքաճեան եւ Պօղոս Շահինեան: Դաշտի հողաչերտի գնումը կ'իրականանայ: Հողաչերտը ունի 908 քառ. մետր տարածութիւն:

Սակայն, այս նաեւ անբաւարար կը թուի ըլլալ մասնաճիւղի բոլոր կարիքներուն: Առ այդ 1954ի սկիզբը կը փորձուի պատկից այլ հողաչերտի մը միացումը նախորդին: Այս նպատակով կը կազմուի ակումբի կեդրոնական մարմին մը, բաղկացած 14 անդամներէ, ներառեալ Շրջանային Վարչութեան եւ մասնաճիւղի վարչութեան ներկայացուցիչները: Հակառակ տարուած ճիգերուն, պատկից հողաչերտը գնելու փորձը կը ձախողի:

1955ին, Զոքաք Պլաթ թաղամասի Տառտ Փաշա թաղի թիւ 1012 հողաչերտը կ'արձանագրուի Լիբանանի ազգային Առաջնորդարանի անուան, նօտարի մօտ գրանցելով, թէ ամէն պարագայի կալուածը կը մնայ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի սեփականութիւնը: Հողաչերտի փոխարժէքի վճարման ի նպաստ Հ.Մ.Ը.Մ.ի Մեքսիքոյի վարչութիւնը կ'ուղարկէ 2000 ամերիկեան տոլար: Անմիջապէս կը ծրագրուի հողաչերտի վրայ գտնուող հին շինութիւնը փոխարինել ակումբի յարմար նոր կառոյցներով: Շինութեան ճարտարապետն է Հ.Մ.Ը.Մ.ական Յարութիւն Գույումճեան, որ սիրայօժար կը ստանձնէ ծրագրումն ու շինութեանց հսկողութիւնը ակումբի սրահներուն, յարակից մասերուն, ինչպէս նաեւ պասքեթպոլի դաշտին, հանդերձարաններուն եւ թրիպիւնին: Հողաչերտի փոխարժէքին եւ շինութեանց ծախսերուն ընդհանուր գումարն է՝ շուրջ 100.000 լիբանանեան ոսկի:

1956 Մայիսի 22ին, հանդիսաւորապէս տեղի կ'ունենայ նորակառոյց ակումբի եւ դաշտի բացումը, հովանաւորութեամբ Լիբանանի հանրապետութեան նախագահ Քամիլ Շամունի եւ նա-

խագահութեամբ լիբանանահայ թեմի Առաջնորդ Խորէն Արք. Բարոյեանի:

1957ին Շրջանային Վարչութիւնն ալ իւրացնելով Ֆութպոլի դաշտի մը անհետաձգելի կարիքը կը բաժնէ Պէյրութի վարչութեան մտահոգութիւնները համազգային տարողութեամբ արշաւի մը ծրագրումով:

Սակայն, այս ծրագիրը եւ անոր յաջողութեան համար ամերիկահայութեան մօտ եղած փորձերը կը ձախողին եւ գործնական ոչ մէկ արդիւնք կ'ապահովեն:

1964ին, Պէյրութի ակումբը ընդարձակելու եւ արդիականացնելու համար վարչութիւնը կրկին աշխատանքի կը լծուի նոր ծրագրով: Ակումբի երկյարականի շէնքի կառուցման համար մասնաճիւղը նիւթականի կարիքը ունի: Նորընտիր վարչութեան անդամներէն ժիրայր Խաչատուրեան, Գրիգոր Մղձաւետիքեան, Արա Պապիկեան եւ Վարուժան Խանամիրեան 6000ական լ. ոսկի փոխատուութեամբ կարելի կը դարձնեն շէնքի շինութեան ամբողջացումը:

Երկյարականի շէնքին բացումը տեղի կ'ունենայ 31 Մայիս 1964ին: Պասքեթպոլի դաշտին վրայ գետեղուած սեղաններուն շուրջ կը բոլորուին հրաւիրեալները: Պաշտօնական բաժնին մէջ խօսք կ'առնեն՝ վարչութեան ատենապետ՝ ժիրայր Խաչատուրեան, Շրջանային Վարչութեան անունով՝ Յովհաննէս Շահինեան եւ Լիբանանի հայոց թեմի Առաջնորդ Տաճատ Արք. Ուրֆալեան: Տեղի կ'ունենայ գեղարուեստական յայտագիր: Օրուան պատգամախօսն է Տոքթ. Բարգէն Փափազեան, որուն խանդավառ խօսքերուն կը հետեւին ինքնաբոլիս նուիրատուութիւններ՝ գոյացնելով 28.000 լ. ոսկիի կարելոր գումար մը:

1968ին, պասքեթպոլի դաշտը կրկին կը սալայատակուի եւ լուսաւորումը կը վերադասաւորուի:

Նիւթական

Վարչութեան տարեկան հասութարբեր ձեռ-

նարկներէն է քաղաքի նշանաւոր սրահներէն ներս շարժանկարի ցուցադրութիւն, 1945էն սկսեալ քերմէս-ցայգատօներու կազմակերպութիւն, վիճակահանութիւն՝ վարչութեան կամ յանձնախումբերու նախաձեռնութեամբ, պարահանդէսներ եւ նուիրատուութիւններ: Հակառակ անդամներու թուական աճին, անդամատուրքերու ընդհանուր գումարը կը մնայ համեստ եւ գանձումները՝ դժուար:

Ստորեւ, կարգ մը տարեշրջաններու ելեւմտական գործառնութեանց պատկերը, որմէ ի յայտ կու գայ մասնաճիւղի ընդհանուր գործունէութեան զարգացման ընթացքը:

Տարի	Մուտք	Ելք
1943	9475 լ.ո.	6852 լ.ո.
1944	17.099	14.154
1956-57	62.491	59.389
1961	27.605	18.087
1967	45.609	42.691
1968	71.996	70.991

ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Պէյրուլի Հ.Մ.Ը.Մ.ի մարզական գործունէութեան գլխաւոր ճիւղերը եղած են Ֆուլթպոլը, պասքեթպոլը, աթլետիզմը, փինկ-փոնկը եւ հեծելարշաւը: Պարբերաբար մշակուած են թենիսի, մարմնամարզի, մարմնաշակումի եւ վոլիպոլի ճիւղերը, երբ պայմանները արտօնած են կամ գտնուած են այդ ճիւղերով հետաքրքրուած անդամներ կամ մարզիչներ: 1962էն սկսեալ, Ֆուլթպոլի եւ պասքեթպոլի ճիւղերու գործունէութեան համար Շրջանային Վարչութեան հովանաւորութեամբ կը կազմուի Պէյրուլի եւ Պուրճ Համուտի միացեալ կեդրոնական յանձնախումբ մը, որուն պարտականութիւն կը տրուի զոյգ մասնաճիւղերու վերոյիշեալ մարզաճիւղերու, յատկապէս պաշտօնական գործունէութիւնները (լիբանանեան ախոյեանութիւններ եւ Ֆետերասիոններու մասնակցութիւն) համադրել: 1964ին նմանօրինակ համաձայնութիւն մը կը գոյանայ Պէյրուլի, Պուրճ Համուտի եւ Ծիւնիի

մասնաճիւղերուն միջեւ, աթլետիզմի ճիւղի աշխատանքներու համադրումին համար:

Ֆուլթպոլ

1940էն սկսեալ, կարեւոր յառաջդիմութիւն կ'արձանագրէ ամենէն աւելի ժողովրդական այս մարզաճիւղը: 1941 տարեշրջանի Ֆուլթպոլի Ա. խումբի պատասխանատուութիւնը կը յանձնուի Կարապետ Սաթճեանին: Խումբի կազմի պատկերն է հետեւեալը.-

Բերդապահներ՝ Զաւէն Հրթիկեան, Պետրոս Սետէֆեան (մեծ)

Յետսապահներ՝ Եղիշէ Մանուկեան եւ Կարապետ Սաթճեան

Միջնապահներ՝ Կիրակոս Գալայճեան, Ժիրայր Ուրֆալեան եւ Արմենակ Թիւֆենքճեան

Յառաջապահներ՝ Մարտիրոս Պալըքճեան, Ներսէս, Օզսէն Սմբատեան, Հայկ Կարմիրեան, Վարդան Պետիկեան:

Պահեստներ՝ Պզտիկ Պետրոս, Վարդիվառ Յովհաննէսեան, Յարութիւն Մարտիրոսեան, Խաչիկ Խաչատուրեան, Սարգիս Պատագեան:

Այս կազմը կը մասնակցի Ֆետերասիոնի կազմակերպած Լիբանանի ախոյեանութեան մրցաշարքին: Կը տիրանայ Պէյրուլի քաղաքապետութեան բաժակի մրցաշարքի ախոյեանութեան: Պահեստի խումբը եւս կը մասնակցի իր դասակարգի ախոյեանութեան:

Մասնաճիւղը կը պահէ հինգ երկրորդական խումբեր:

«Համազասպ»՝ վարիչ՝ Գալայճեան, «Յառաջ»՝ Խաչիկ Խաչատուրեան, «Շանթ»՝ Սարգիս Պատագեան, «Մուրատ» եւ «Աստղ»։ Բարեկամական մրցումները կը բազմանան 1941ին ընթացքին, անգլիական զինուորական խումբերուն, Պաղեստինէն այցելող Մաքապի, Պիթար եւ Հ.Մ.Ը.Մ.-Երուսաղէմ խումբերուն, ինչպէս նաեւ տեղական բոլոր ազգայիններու կազմերուն դէմ:

1942 տարեշրջանը կ'ըլլայ աւելի բեղուն, պահեստի խաղացողներ՝ Վարդիվառ, Խաչիկ եւ

Սարգիս Ազնաւորեան կը սկսին արդիւնաւորել իրենց մասնակցութիւնը: Խուճըր կ'ունենայ ախոյեանական մրցաշարքի եւ բարեկամական 21 մրցումներ որոնցմէ՝ 14 յաղթանակ, 2 հաւասարութիւն, 5 պարտութիւն: Զատկուան միջ-մասնաճիւղային խաղերուն կ'ապահովէ ախոյեանութիւնը՝ 4-3 արդիւնքով պարտութեան մատնելով Հալէպի խումբը:

Առաջին խումբի կազմն է՝ բերդապահ՝ Պետրոս Սետէֆեան, յետսպահներ՝ Կարապետ Սաաթճեան, Եղիշէ Մանուկեան, միջնապահներ՝ Վարդան Պետիկեան, Ժիրայր Ուրֆալեան (խմբապետ), Կիրակոս Գալայճեան, յառաջապահներ՝ Մարտիրոս Պալըքճեան, Օգսէն Սմբատեան, Հաճի Հայկ Կարմիրեան, Վարդիվառ Յովհաննէսեան, Խաչիկ Խաչատուրեան:

Այս տարեշրջանի արդիւնքները աւելի կը խանդավառեն վարչութիւնն ու անդամները, որոնց անվերապահ խնամքին առարկայ կը դառնայ իւրաքանչիւր խաղացող:

1943 տարեշրջանին խումբին առաջին կազմը կը պահէ յառաջապահներու նոյն պատկերը: Բերդապահ Պետրոս կը փոխարինուի Զաւէն Հրթիկեանով, յետսպահ Սաաթճեան՝ անգլիացի Ճիմիով եւ միջնապահ Վարդան՝ Յովհաննէս Նազարեանով: Տարուան պաշտօնական 18 մրցումներու 11ը կը վերջանան յաղթանակով, 2ը՝ հաւասարութեամբ իսկ 5ը՝ պարտութեամբ: 6 Յունիս 1943ին, Ռընէսանս խումբին դէմ 3-2 իր յաղթանակով Պէյրութի Հ.Մ.Ը.Մ. խումբը կը տիրանայ Լիբանանի բաժակի ախոյեանութեան տիտղոսին: Ահա՛ թէ ինչ է արձանագրած խումբի անդամներէն Վարդիվառ Յովհաննէսեան այս մասին իր յուշերուն մէջ:

«Այս մրցումը շատ մեծ կարեւորութիւն ունէր մեզի համար, որովհետեւ արդէն Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան սահմաններէն ներս եղող քաղաքներու մէջ հետեւեալ արդիւնքները արձանագրուած էին.-

Հ.Մ.Ը.Մ. Հալէպ շահած էր Հալէպի բաժակը,

Հ.Մ.Ը.Մ. Դամասկոս շահած էր Դամասկոսի բաժակը,

Հ.Մ.Ը.Մ. Երուսաղէմ շահած էր Երուսաղէմի բաժակը:

Մեզի կը մնար մեր այդ քոյր մասնաճիւղերու յաղթական օրինակին հետեւիլ: Այդ օր դաշուր լեցուն էր հայ ժողովուրդով, բայց այս անգամ ուրախ ու վուարթ էին: Մեր խումբը այս տարուայ խաղերէն վերջ, այնպիսի վստահութիւն ներշնչած էր ժողովուրդին՝ որ եկած էր Լիբանանի ֆետերասիոնի բաժակը շահելու եւ տանելու Հ.Մ.Ը.Մ.ի ակումբը:

Այնպէս էր որոշուած:

Յունիս 16 - Հ.Մ.Ը.Մ. յաղթեց Ռընէսանսին՝ 3-2 եւ խմբապետը առաւ բաժակը, համբուրեց ի փառս հայ ժողովուրդին եւ Հ.Մ.Ը.Մ.ին»:

Եւ Վարդիվառ Յովհաննէսեանի օրագիրէն.

«Այս վերջին երկու տարիներուն մօտէն հետեւեցայ բոլոր մարզական խաղերուն, մասնաւորապէս ֆութպոլի եւ նկատեցի որ, եթէ հայկական խումբերը, մանաւանդ Հ.Մ.Ը.Մ.ը, չմասնակցին այդ խաղերուն, այս երկիրներու մէջ մարզական կեանքը կը դադրի գործելէ»:

Մասնաճիւղին կը միանայ «Կամք» Բ. դասակարգի խումբը՝ պաշտօնապէս արձանագրուած ֆետերասիոնի մօտ: Պետական արտօնագրի թիւ 481՝ 8 Մարտ 1935 թուակիր:

1944 տարեշրջանին, խումբի յառաջխաղացքը նոյն թափով կը շարունակուի: Տարուան մեծագոյն արդիւնքը պիտի ըլլար, առաջին անգամ ըլլալով, Լիբանանի ախոյեանութեան ապահովումը: Հ.Մ.Ը.Մ.ը կը մնար երկրի զօրաւորագոյն կազմը: Լիբանանեան մամուլը անվերապահօրէն կ'արձագանգէ Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուլթպոլի այս սխրագործութեան: Տարուան պաշտօնական 17 մրցումներուն 14ը կը վերջանան յաղթանակով:

1945 տարեշրջանի Ֆուլթպոլի եղանակը բացառիկ դժուարին պարագայի մը կը հանդիպի: Ախոյեանութեան մրցաշարքի ընթացքին խումբին լաւագոյն մարզիկներէն հինգ հոգի՝ Օգսէն Սմբատեան, Հայկ Կարմիրեան, Գէորգ Էյնէշեան, Մարտիրոս Պալըքճեան, Գէորգ Քէօրեան

եւ եղանակի փակումէն ետք՝ Ժիրայր Ուրֆալեան, ոչ մարզական պատճառներով կը դադրին իրենց մասնակցութիւնը բերելէ: Կը կազմուի Բագրամեան մարզական միութիւնը, քաղաքական համայնավար գունաւորումով, ուր կը փոխադրուին Հ.Մ.Ը.Մ-ի վերոյիշեալ մարզիկները, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի եւ Անդրանիկի Ֆուտպոլիստներ:

Հ.Մ.Ը.Մ-ի խաղացողները վերադարձնելու նպատակով, նկարագրելով իր այցելութիւնը Բագրամեանի ղեկավար Կարապետ Բաշապէզեանին, Յովհաննէս Շահինեան իր յուշերուն մէջ կը գրէ, թէ Բաշապէզեանը մերժելէ ետք Շահինեանի խնդրանքին ընթացք տալ կ'աւելցնէ. «Մենք կ'ընդունինք, որ դուք եղաք հայ մարզական շարժումին ռահվիրան Լիբանանի մէջ եւ իշխեցիք անոր մինչեւ հիմա, բայց ուշադիր եւ նկատի ունեցէք, որ յետ այսու մենք պիտի ըլլանք հայ մարզական շարժումին իրական ղեկավարողները ու իշխող տէրերը, ու մեր մականին տակ պիտի առնենք Լիբանանի հայ մարզական կեանքը՝ իր բոլոր երեսներով»:

1945ին Լիբանանի ախոյեանութեան տիրանալու ապահով ընթացքը այս ձեւով կանգ կ'առնէ: Նոր ու հաւատաւոր Ֆուտպոլիստներ կու գան փոխարինել մեկնողները:

1945ի վերջաւորութեան Ա. խումբի մարզիչ կը նշանակուի Օննիկ Կէվրէկեանը: Մասնաճիւղի երկրորդական խումբն է «Ազատամարտ»ը՝ ղեկավարութեամբ Յովհաննէս Նազարեանի:

1946ի եղանակին, Հ.Մ.Ը.Մ. խումբը աւելի վճռական կը վերագտնէ իր բարձունքը ու տարուան Լիբանանի ախոյեանութիւնը կրկին կու գայ Հ.Մ.Ը.Մ-ի խումբին: Դիրքերը վերագրաւորներու շարքին են՝ խմբապետ՝ Վարդիվառ Յովհաննէսեան, Սարգիս Ազնաւորեան, Դամասկոսի մասնաճիւղէն՝ Տիգրան Արապեան եւ Տրդատ Փանոսեան, Պուրճ Համուտէն՝ Մանուէլ Ալթունեան, որոնք կու գան միանալու Կարապետ Սաւթճեանի, Եղիշէ Մանուկեանի, Յովհաննէս Նազարեանի եւ Կիրակոս Գալայճեանի շարքին:

Այս փորձառութենէն օգտուելով Հ.Մ.Ը.Մ-ը կը յառաջացնէ Ֆուտպոլի միացեալ յանձնախումբ մը մասնակցութեամբ՝ Պէյրութէն՝ Ժոզէֆ Նալպանտեանի եւ Վարդիվառ Յովհաննէսեանի, իսկ Պուրճ Համուտէն՝ Յովհաննէս Տէր Յարութիւնեանի: Այս յանձնախումբին գլխաւոր պարտականութիւնը պիտի ըլլար զարկ տալ երկրորդական խումբերու գործունէութեան եւ բարձրացնել անոնց թեքնիք մակարդակը, զանոնք դարձնելով ամենէն ապահով եւ մնայուն շտեմարանը Պէյրութի կազմին նոր անդամներ ապահովելու համար:

1946ին, պաշտօնական 21 մրցումներուն 14ը կը վերջանան յաղթանակով, 4ը՝ հաւասարութեամբ իսկ 3ը՝ պարտութեամբ:

1947 տարին խումբի վերակազմութեան տարին է: Տարեց խաղացողներ կը ստիպուին ասպարէզը թողնել նորեկներուն:

1948ի եղանակին, միամեայ բացակայութենէ ետք, Պէյրութի Հ.Մ.Ը.Մ-ի կազմը լիբանանեան Ֆուտպոլի առաջին դիրքերուն վրայ կը գտնուի: 1948ը մասնաճիւղի Ֆուտպոլի պատմական սխրագործութեան տարին է: Երեք կարեւորագոյն տիտղոսներ ձեռք կը բերուին միաժամանակ՝ Լիբանանի ախոյեանութիւն, Լիբանանի բաժակի ախոյեանութիւն, միջ-մասնաճիւղային խաղերու ախոյեանութիւն:

Խումբի մարզիչն է Ժոզէֆ Նալպանտեան, որ կը գործէ նաեւ իբրեւ բերդապահ, յետասպահներ՝ Եղիշէ Մանուկեան, Տրդատ Փանոսեան, Ժիրայր Մարգարեան եւ Իսհաք, միջնասպահներ՝ Յովհաննէս Նազարեան, Լեւոն Պալպանեան, Անդրանիկ Գամարեան եւ Յակոբ Վարժապետեան, յառաջապահներ՝ Վարդիվառ Յովհաննէսեան (խմբապետ), Սարգիս Ազնաւորեան, Մանուէլ Ալթունեան, Ժորժ Շատարեւեան եւ Ստեփան Մելիքսէթեան: Տարուան 18 մրցումներէն 12ը կը վերջանան յաղթանակով, 4ը՝ հաւասարութեամբ իսկ 2ը՝ պարտութեամբ:

1949 եւ 1950ը տեղ քայլի տարիներ են: Խումբը կրկին վերակազմութեան մէջ է:



Պէյրուսի Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի ախոյեան խումբը 1948ին: Ուոքի՝ Յակոբ Վարժապետեան, Անդրանիկ Գամարեան, Ժուլէֆ Նալպանտեան, Մանուէլ Ալթունեան, Վարդիվառ Յովհաննէսեան (խմբապետ), Սարգիս Ավնաւորեան: Ծոած՝ Յովհաննէս Նապարեան, Ժորժ Շատարեւեան, Լեւոն Պալապանեան: Նստած՝ Տրդատ Փանոսեան, Տիգրան Արապեան, Եղիշէ Մանուկեան

1951ը վերածնունդի տարի է: Տարեվերջին խումբէն կը բացակային երկու անձեր. Ժորժ Շատարեւեանը, որ ֆութպոլի ասպարէզը թողած է եւ Վարդիվառ Յովհաննէսեանը, որ Սթոքհոլմ կը գտնուի՝ հեռաձայնային մասնագիտութեան: Սակայն եղանակը բոլորուած է յաջողութեամբ եւ անգամ մը եւս Լիբանանի ախոյեանութեան բաժակը կը վերադառնայ Հ.Մ.Ը.Մ.ի ակումբ: Տարուան 12 մրցումներուն 11ը կը վերջանան խումբին յաղթանակով:

1952ի ախոյեանական մրցաշարքը չաւարտած խումբը դժբախտութիւնը կ'ունենայ կորսնցնելու իր լաւագոյն յառաջապահը՝ Վարդիվառ Յովհաննէսեան, որ 23 Մարտին եգիպտական ընկերութեանց խառն խումբի խաղացողներէն մէկէն ստացած հարուածով ոսկրաբեկում կ'ունենայ: Այս կ'ըլլայ Վարդիվառի վերջին մրցումը: Նոյն տարին նոր խաղացողներ եկած են փոխարինել հիները, որոնք կը կոչուին Արիս Մարզումանեան, Օննիկ Պարսամեան եւ Լեւոն Ալթունեան, բոլորն ալ ապագայի խոստմնալից տարրեր:

Նոյն տարին, Պէյրուսի Հ.Մ.Ը.Մ.ը կը դառնայ Լիբանանի բաժակակիր:

1955ի եղանակին, ֆութպոլի խումբը հինգերորդ անգամ ըլլալով Լիբանանի ախոյեան կը հռչակուի, 19 Յունիս 1955ին, մրցաշարքի վերջին մրցումին 4-1 արդիւնքով պարտութեան

մատնել է ետք Ռասինկ Քլիպի խումբը: Նոյն եղանակին մասնաճիւղի Բ. խումբը Պէյրուլի ախոյեանութեան կը տիրանայ:

1961ին, մասնաճիւղի խումբը հաւասար դիրքի վրայ է Հ.Մ.Մ-ի կազմին հետ: Երկու խումբերու ճակատումի արդիւնքէն կախեալ է Լիբանանի ախոյեանութեան տիրացումը: Հ.Մ.Ը.Մ. 1-0 պարտուելով Հ.Մ.Մ-էն կը մնայ Լիբանանի Բ. ախոյեան դիրքին վրայ:

1962ին, Պէյրուլի Հ.Մ.Ը.Մ-ի կազմը կը տիրանայ Լիբանանի բաժակի ախոյեանութեան 14 Հոկտեմբերին կայացած աւարտական մրցումին 4-2 արդիւնքով յաղթելէ ետք Մազրաայի կազմին:

1963ին, Լիբանանի ախոյեանութեան երթի մրցումներու աւարտին Հ.Մ.Ը.Մ. ունի 12 կէտեր՝ իրեն յաջորդող երկրորդ դիրքի խումբն է Ռասինկը՝ 10 կէտերով: Ախոյեանութեան մրցաշարքը դարձի մրցումներ չունենալով՝ Փուլպուլի Ֆետերասիոնը Պէյրուլի Հ.Մ.Ը.Մ-ի կազմը 1963 տարուան Լիբանանի ախոյեան կը հռչակէ:

1964ին, Փուլպուլի խումբի մարզիչն է Վահէ Մինասեան: Եղանակը կը յատկանշուի արտասահմանէն հրաւիրուած բազմաթիւ խումբերու հիւրընկալումով Լիբանանի այլ ակումբներու գործակցութեամբ: 1964ի Յուլիսին, Պուրճ Համուտի վարչութեան փափաքին ընդառաջելով եւ Շրջանային Վարչութեան մասնակցութեամբ ժողով մը կը գումարուի, ուր կը ճշդուին զոյգ մասնաճիւղերու գործակցութեան սահմանները Փուլպուլի առնչութեամբ:

1965ի եղանակը համեմատաբար տկար պիտի ըլլար: Այսուհանդերձ խումբը կը յաջողի ապահովել կարգ մը յաղթանակներ միջ-ակմբային մրցաշարքերու մասնակցութեամբ: Վարչութիւնը կ'անդրադառնայ, որ խումբը վերակազմութեան կը կարօտի: Առաջին խումբի մարզիչին՝ Վահէ Մինասեանին պարտականութիւն կը յանձնուի Գարանթինայի, Էշրէֆիէի եւ Հայաշէնի շրջաններուն մէջ երկրորդական խումբեր կազմել եւ մարզել:

1967ի եղանակին Փուլպուլի Ա. եւ Բ. խումբերը ախոյեանութեանց մրցաշարքերուն երկրորդ դիրքերը կը գրաւեն:

1968 տարուան մասնաճիւղի առաջին խումբի մարզիկներն են՝ Եղիշէ Խոստեղեան (խմբապետ), Միքայէլ Թորոսեան, Զաւէն Գալֆայեան, Հրայր Տէր Թորոսեան, Յովհաննէս Հուսամեան (Ճոքի), Աբրահամ Գասապեան, Աբրահամ Նենեճեան, Լեւոն Ալթունեան, Յակոբ Գալֆայեան, Ռադէպ Շաքար, Մկրտիչ Մկրտիչեան, Վարուժ Պատրիկեան, Կարօ Հացպանեան եւ Վահէ Մինասեան: Թեքնիք տնօրէն՝ Ժոզէֆ Նալպանտեան:

1 Հոկտեմբեր 1968ին, վարչութիւնը կը հիւրընկալէ Պաղտատի Հ.Մ.Ը.Մ-ի Փուլպուլի խումբը, որ այդ եղանակին Իրաքի Բ. դասակարգի ախոյեանութեան տիրացած էր:

Փուլպուլի Ա. խումբը 1967 եւ 1968 եղանակներուն ունեցած է 58 մրցումներ՝ 18 ախոյեանական, 10 բարեկամական, 8 մրցաշարքերու մրցումներ, 21 միջազգային հանդիպումներ: Ասոնց արդիւնքները եղած են՝ 33 յաղթանակ, 21 պարտութիւն, 4 հաւասարութիւն:

Պէյրուլի եւ Պուրճ Համուտի մասնաճիւղերու վարչութիւններու համաձայնութեամբ կը կազմուի խառն յանձնախումբ մը, բաղկացած զոյգ մասնաճիւղերու եւ Շրջանային Վարչութեան անդամներէն, որուն պարտականութիւնն է հսկել զոյացած համաձայնագրի գործադրութեան: Համաձայնագրի պայմաններն են՝

ա.- Պէյրուլի խումբը Լիբանանի Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցչական միակ խումբը պիտի ըլլայ:

բ.- Պուրճ Համուտի խումբի մարզիկներ պիտի փոխանցուին ներկայացուցչական կազմին՝ համաձայն խառն յանձնախումբի ձայներու 2/3 համեմատութեամբ առնուելիք որոշումներուն:

գ.- Պուրճ Համուտի մասնաճիւղը պիտի պահէ երկրորդական խումբեր, որուն ծախսերուն Պէյրուլի մասնաճիւղը պիտի մասնակցի տարեկան 1500 լիբ. ոսկի յատկացումով:

դ.- Մասնաճիւղէ-մասնաճիւղ մարզիկներու փոխանցումը պիտի ըլլայ պաշտօնական արարողութեամբ:

Բացի այս համաձայնագրի պայմաններէն, Պուրճ Համուտի եւ Պէյրուտի Ֆութպոլի խումբերու ղեկավարութիւնը կը վստահուի խառն յանձնախումբի մը բաղկացած զոյգ մասնաճիւղերու անդամներէն: Խառն յանձնախումբի անդամներն են Ժոզէֆ Նալպանտեան, Գրիգոր Աւետիքեան, Վարուժան Խանամիրեան, Ջաքար Չորպաճեան եւ Ներսէս Գէորգեան: Ֆութպոլի խումբերու մարզիչն է Վահէ Մինասեանը:

Բացի լիբանանեան ֆետերասիոնի ախոյեանական եւ բաժակի մրցաշարքերու մասնակցութենէն, մասնաճիւղի խումբը կը մասնակցի միջակմբային բարեկամական մրցաշարքերու եւ միջազգային բարեկամական հանդիպումներու՝ Լիբանան հրաւիրուած զանազան եւրոպական եւ արաբական ֆութպոլի խումբերու դէմ:

Լիբանանեան ազգային մրցաշարքերէն են Մազրաա ազգային Հապիպ Ապի Շահլա մրցաշարքը եւ ֆետերասիոնի կազմակերպած էտմոն Րըպէյզ մրցաշարքը:

1969ին, լիբանանեան Ա. դասակարգի խումբերու հաւասար ուժերը բացառիկ ճիգ կը պահանջեն Հ.Մ.Ը.Մ.ի կազմէն՝ իր տիրապետութիւնը կարենալ պահելու համար դաշտերուն վրայ: Դժուարին եղանակի մը աւարտին Պրոքանգամ ըլլալով, եւ հակառակորդ խումբերու բերդերէն ներս նշանակուած կէտերու միջինի առաւելութեամբ (կօլ ավերէյճ), Հ.Մ.Ը.Մ. կ'ապահովէ Լիբանանի ախոյեանութեան տիտղոսը, մեծ յուսախաբուութեան մատնելով մրցակից Ռասինկի խումբը:

29 Ապրիլ 1970ին Ֆութպոլի խումբը կը փոխադրուի Թեհրան, մասնակցելու համար ասիական երկիրներու ախոյեան խումբերու մրցաշարքին, ներկայացնելով Լիբանանը:

Առաջին մրցումին 4-0 արդիւնքով յաղթելէ ետք Մալեգիոյ ախոյեան խումբին, Հ.Մ.Ը.Մ.ի կազմը 3-0 արդիւնքով կը պարտուի Պարսկաս-

տանի ախոյեան Թաճ խումբէն եւ կը դասուի իր խմբակցութեան երկրորդ:

Կիսաւարտական մրցումին Լիբանանը ներկայացնող Հ.Մ.Ը.Մ.ի կազմը կը մերժէ խաղալ երկրորդ խմբակցութեան ախոյեան Իսրայէլի խումբին դէմ: Ստիպուած կազմակերպիչները նոր դասաւորման կ'ենթարկեն մրցաշարքը եւ Պէյրուտի Հ.Մ.Ը.Մ.ը մրցաշարքի վերջնական երրորդ դիրքը կը գրաւէ պարտութեան մատնելէ ետք Ինտոնեզիոյ ախոյեան խումբը, 1-0 արդիւնքով:

1971ին Լիբանանի Ֆութպոլի ֆետերասիոնը ախոյեանական մրցաշարք չի կազմակերպեր: Հ.Մ.Ը.Մ.ի կազմը այս եղանակին կ'ունենայ շարք մը միջազգային բարեկամական մրցումներ, որոնց արդիւնքները կ'ըլլան.

- Հ.Մ.Ը.Մ. - Սուրիական բանակ (2-1)
- Հ.Մ.Ը.Մ. - Սիմերինկ՝ Աւստրիա (4-3)
- Հ.Մ.Ը.Մ. - Նասըր՝ Տուպայ (4-1)

1972ին Լիբանանի Ֆութպոլի ախոյեանութեան մրցաշարքը վէճերու եւ կռիւներու թատրոնի մը կը վերածուի: Յաճախ մրցումները կը մնան կիսաւարտ: Արդիւնքները կը ճշդուին ֆետերասիոնի նիստերու ընթացքին: Ախոյեանութեան մրցաշարքը չամբողջանար:

Հ.Մ.Ը.Մ.ի կազմը կը բաւարարուի տեղական ազգայիններու եւ միջազգային այցելու խումբերու դէմ բարեկամական մրցումներով:

Դեկտեմբերին, 1972-73 եղանակի սկզբնաւորութեան, ֆետերասիոնը կը կազմակերպէ Նաք Աութ մրցաշարք մը, որուն ընթացքին խումբը կը հասնի կիսաւարտական հանգրուանին:

1974 տարուան ընթացքին Լիբանանի ախոյեանութեան մրցաշարքը անգամ մը եւս կը մնայ կիսաւարտ, երբ կարեւոր խումբերէն Նըժմէ, Անսար, Սաֆա եւ Մազրաա կը մերժեն շարունակել մրցաշարքի մրցումները: Հ.Մ.Ը.Մ.ի խումբը որ նպաստաւոր դիրքի վրայ էր մինչ այդ, առանձին կը մնայ առաջին գծի վրայ:

1974 Մարտին, Պէյրուտի մասնաճիւղը իր ազգային մէջ կ'ընդունի Սովետ Միութեան ախոյեան հայրենի Արարատ խումբի այցելու-

Թիւնը բացառիկ հիւրասիրութեամբ եւ յատուկ յայտագրով:

Պասքեթպոլ

1937ին սկսուած՝ պասքեթպոլի կիրարկումը հետզհետէ կ'ընդհանրանայ: Խումբի յառաջդիմութիւնը արդիւնքն է նոր լուսազարդուած դաշտի ընձեռած դիւրութիւններուն: Այս ճիւղին կը միանան «Տիգրիս» խումբի անդամները, բարձրացնելով խումբի մակարդակը: Նոյնպէս, 24 Ապրիլ 1941 թուակիր դիմումով, Համազգայինի Ճեմարանի աշակերտներէն կազմուած «ԿԱՄՔ»ի մարզիկները կը միանան մասնաճիւղի

պասքեթպոլի ճիւղին: Մասնաճիւղը կ'ունենայ նոյնանուն Բ. դասակարգի խումբ մը:

1943 տարեշրջանի պասքեթպոլի յանձնախումբի անդամ կը նշանակուին Պօղոս Շահինեան, Յովսէփ Խաչատուրեան եւ Խաչիկ Խաչատուրեան: Ութը երկրորդական խումբեր կը կիրարկեն պասքեթպոլի ճիւղը, կազմակերպելով ներքին մրցաշարքեր: Տարուան երկրորդական խումբերու ախոյեանութիւնը կը շահի «Հաւատք» խումբը, միւս խումբերն են՝ Կամք, Յառաջ, Շանթ եւ Մարգիկ:

1944ին, պասքեթպոլի խումբերու պատասխանատուութիւնը կը յանձնուի Յակոբ Գատեա-



Պէյրուսի Հ.Մ.Ը.Մ.ի Պասքեթպոլի խումբը 1972ին: Ուրփի՝ Հրայր Թապաքեան (15) Մոհամէտ Շամի (14), Վարանդ Պաղտասարեան (5), Գառնիկ Ուղուրլեան (13), Աւօ Չիլեան (12), Հրայր Թապապեան (9), Բաֆֆի Գատեան (10), Հրայր Պաղտատեան (11):
Նստած՝ Գօգօ (7), Վրէժ (4), Հրաչ Սիսեռեան (6), Յարութ Շնորհոքեան (8):

նի: Կը կազմուի նոր յանձնախումբ մասնակցութեամբ հետեւեալներուն. Յակոբ Գատեան, Գառնիկ Թոփալեան, Վարդգէս Պերպէրեան, Նուպար Յովհաննէսեան եւ Խաչիկ Խաչատուրեան: Կը վերակազմուին 12 երկրորդական խումբեր:

Յակոբ Գատեան, իբրեւ առաջին խումբի մարզիչ, իր թեքնիք կարողութիւններով եւ խստապահանջ դաստիարակութեամբ կը յաջողի արագօրէն խումբի մակարդակը բարձրացնել եւ լիբանանեան լաւագոյն կազմերուն դէմ պատուաբեր արդիւնքներ արձանագրել: Հ.Մ.Ը.Մ.ի կազմը այս ձեւով կը հրաւիրուի մրցակիցակումբներու մրցաշարքերու մասնակցութեան, ինչպէս նաեւ Լիբանանի ախոյեանութեան մրցաշարքերուն լաւագոյն կազմերուն դէմ մրցակցութեան ելլել:

1950ին, Գատեանի տղաքը կը յաջողին ապահովել Լիբանանի առաջին դասակարգի ախոյեանութիւնը: Այս յաջողութեան կերտիչները կ'ըլլան՝ կազմի լաւագոյն անդամներէն՝ Ժան Տիարպեքիրեան, Լեւոն Պերպէրեան, Ալէն Ապուհայեթեան, Վարդգէս Տէր Կարապետեան, Վարուժան Ազատեան, Համբարձում Արապեան եւ Գարլոս Էսի:

Հետզհետէ նոր ուժեր կ'աւելնան խումբի կազմին վրայ, ապահովելով լիբանանեան մակարդակի վրայ խումբի յաջողութիւնները: Հ.Մ.Ը.Մ.ի լաւագոյն մարզիկներէն բազմաթիւ ուժեր մաս կը կազմեն ազգային հաւաքականներուն: Անոնք կը կոչուին Լեւոն Պերպէրեան, Վարդգէս Տէր Կարապետեան, Վարուժան Ազատեան, Կարօ Սեդրակեան, Վարդգէս Ալահայտոյեան, Վահէ Եավերեան, Եդուարդ Պաղչէճեան, Մուշեղ Այվազեան, Մինաս Էրզրումեան, Կարօ Գազանճեան եւ Յակոբ Թիւթիւնճեան: Վերջինս, իր բացառիկ կարողութիւններուն պատճառով, իբրեւ միջազգային մակարդակի մարզիկ մաս կը կազմէ Եւրոպայի մէջ պասքեթպոլի խումբերու:

1967ին, պասքեթպոլի խումբերու մարզիչի

պաշտօնը կը վստահուի Վարդգէս Էսկիպաչեանին: Ֆետերասիոնի մօտ մասնաճիւղի ներկայացուցիչն է Ժագ Պոյաճեան: Յանձնախումբին մաս կը կազմեն Գոգօ Եագուպեան, Մուրատ Մաթոսեան, Վահէ Աղտամեան, Խաչիկ Մասուրեան, ինչպէս նաեւ տղոց ու աղջկանց խումբերու խմբապետները:

7-9 Ապրիլին, մասնաճիւղը կը կազմակերպէ միջ-ակմբային Ա. եւ Բ. դասակարգի մրցաշարք մասնակցութեամբ՝ Գլիւպ Սբորթիվի, Անդրանիկի, Ն.Փ. Ճեմարանի եւ մասնաճիւղի երկրորդական Շանթ եւ Կամք խումբերուն: Ինչպէս նաեւ Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի տղոց եւ աղջկանց կազմերուն:

Պասքեթպոլի տղոց խումբը 24-30 Ապրիլին կը հիւրընկալէ Գահիրէի Արարատի Ա. եւ Բ. դասակարգերու խումբերը, մրցումներ եւ շրջապտոյտներ կազմակերպելով այցելու խումբերուն:

1968 տարեշրջանին, տղոց առաջին խումբի մարզիչն է Կարօ Սեդրակեան: Խումբը կը մասնակցի Ֆետերասիոնի ախոյեանական մրցաշարքին, ինչպէս նաեւ միջազգային հրաւիրեալ խումբերու եւ տեղական խումբերու դէմ բարեկամական մրցումներու: Բ. դասակարգի խումբերն են «Կամք» եւ «Շանթ»: Տարեվերջին «Կամք»էն հինգ մարզիկներ կը փոխանցուին առաջին խումբ:

Ինչպէս տղոց խումբի պարագային, նոյնպէս աղջկանց կազմերը, 1940էն սկսեալ կ'արձանագրեն յաջողութիւններ զգալի յառաջդիմութիւն արձանագրելով կարճ ժամանակի ընթացքին:


1940ական թուականներու առաջին կէսի պատերազմական տարիներէն ետք աղջկանց խումբերու փորձերն ու մրցումները աւելի կանոնաւոր կերպով կ'ընթանան: Այս ժամանակաշրջանի խումբերուն իրենց մասնակցութիւնը բերած են Լուսաժին Տէտէյեան Աթթարեան, Սիւզի Զաւէն, Գեղարփի Տէր Մելքոնեան, Արփինէ Թերճանեան, Շաքէ Տէր Մելքոնեան, Արուսեակ Պերպէրեան, Մարի Սարեան, Անայիս Գասապ-

եան, Էլիզ Եագուպեան, Սալփի Իփէկեան, Էլօ Տէր Մելքոնեան, Գարմէն Գաղթացեան, Արտաթերզեան, Սոնա Տօնապետեան, Անի եւ Վարդանուշ:

Աւելի ուշ, նոր ու երիտասարդ ուժեր կը միանան նախորդներուն, ինչպէս՝ Սեդա Սարեան, Հայկանուշ Մոմճեան, Անահիտ Տէր Կարապետեան, Հուրի Շահինեան, Էլօ Ալահայտոյեան, Աշխէն Տէր Ղուկասեան, Շաքէ Մահտէսեան, Ովսաննա Պալեան, Զեփիլու Սրուզեան, Զարու-

հի Գազազեան, Աստղիկ Տէր Կարապետեան եւ միջազգային ողիմպիական խաղերու չմշկումի ախոյեանուհի Միշլին Օսթրոմայէր:

1946էն սկսեալ աղջկանց խումբը իր մասնակցութիւնը կը բերէ, Հալէպի մէջ, միջ-մասնաճիւղային պասքեթպոլի մրցաշարքերուն: Այս առաջին մասնակցութեան համեստ արդիւնքներուն, յաջորդող տարիներուն, հետեւեցան աւելի բարձր մակարդակի խաղարկութեամբ ապահովուած յաղթանակներ:



Պէյրուքի մասնաճիւղի Պասքեթպոլի ախոյեան կապը 1951ի: Ուրքի՝ Անահիտ Տէր Կարապետեան (4), Զարուհ Գապալեան (16), Սալփի Իփէկեան (7), Յակոբ Գառեան՝ (Մարպիշ), Էլօ Տէր Մելքոնեան (11), Մարի Սարեան (8), Հուրի Շահինեան (3), Գարմէն (13): Նստած՝ Եւգինէ Օղլագեան (14), Էլիզ Եագուպեան (9), Հայկանուշ Մոմճեան (10), Սեդա Սարեան (6), Աշխէն Տէր Ղուկասեան (Քոյր Աղլիթա):

1951ին, աղջկանց խոսմբը առաջին անգամ ըլլալով կը տիրանայ Լիբանանի ախոյեանութեան տիտղոսին: Այս արդիւնքէն քաջալերուած, խոսմբը Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ի հրատարակչին անսալով, խոսմբը 1951ին կը մեկնի Եգիպտոս, ուր մեծապէս կը գնահատուի խոսմբի խաղարկութիւնը, կատարած չորս մրցումներու ընթացքին:

1954ին, աղջկանց կազմը կրկին կը յաջողի տիրանալ Լիբանանի ախոյեանութեան: Մարգիչ Յակոբ Գատեանի աղջիկները կատարեալ ընթացքով կ'աւարտեն մարզախաղի եղանակը: Խոսմբի խաղացողները գրեթէ ամբողջութեամբ Լիբանանը կը ներկայացնեն միջազգային մրցումներու ընթացքին, այցելելով Եգիպտոս, Յունաստան եւ Լեհաստան:

1956ին, աղջկանց խոսմբը յաջորդաբար վեցերորդ տարին ըլլալով Լիբանանի ախոյեանութեան կը տիրանայ: Առ այդ, պատկան ֆետերասիոնի նախաձեռնութեամբ 22 Մայիսի ահումբի բացման հանդիսութեան ընթացքին, հանրապետութեան նախագահ Ն. Վ. Քամիլ Շամուն խոսմբին կը յանձնէ յատուկ բաժակ եւ խոսմբի անդամուհիներուն մետալներ:

1960էն սկսեալ աղջկանց խոսմբի մարզիչն է Ժագ Պոյաճեան, որ այս պաշտօնը պիտի վարէր երկար տարիներ: Իսկ աղջկանց կազմը Լիբանանի ախոյեանութիւնը պիտի պահէր անընդմիջաբար 1951էն մինչեւ 1974, բացի 1961ի տարեշրջանէն: Խոսմբի նորագոյն մարզիկուհիներէն են. Արշալոյս Աբանեան, Մարի Թուխանեան, Սոնա Գուլեան, Յասմիկ Սաթճեան, Սրբուհի Օհանեան, Մատլէն Կարապետեան, Մարգրիտ Շուհունեան, Ասդրիտ Աւետեան, Հուրի Տէմիրճեան, Սալբի Տատոյեան, Արմէնուհի Տատոյեան, Սօսի Պաղտասարեան, Արմինէ Պատագեան, Սոնիա Պաղտասարեան, Սելլա Քահվէճեան, Մարիէթ Քիրեճեան, Անահիտ Սաթճեան, Ֆլորա Գուտուլեան, Արփի Մինասեան, Սիլվա Խաչերեան, Արփի Արզումանեան, Էլօ Տէմիրճեան, Զեփիւռ , Յասմիկ Տէմիրճեան:


Յատուկ յիշատակութեան արժանի են «Շանթ» երկրորդական երկսեռ խոսմբերու երկարամեայ գործունէութիւնները, ղեկավարութեամբ Մուշեղ Սնտրեանի: Տարուան բոլոր եղանակներուն, յատկապէս ամրան ընթացքին, «Շանթ»ի տղոց եւ աղջկանց կազմերը, գրեթէ առանց բացառութեան, ամէն շաբաթավերջ Լիբանանի բոլոր շրջաններուն մէջ պասքեթպոլի մրցումներ կազմակերպած են, մասնակցած են մրցաշարքերու, ապահոված են մարզական յաղթանակներ Հ.Մ.Ը.Մ.ի անուան կապելով բարոյական յաղթանակներ:

1972ին տղոց խոսմբը բացառիկ յառաջդիմութիւն կ'արձանագրէ ապահովելով Անդրանիկ ահումբի, Անթուրա ահումբի եւ այլ մրցաշարքերու բաժակները: Խոսմբին մաս կը կազմեն՝ խմբապետ՝ Հրայր Թապաքեան, Ատոմ Թնճուկեան, Րաֆֆի Գատեան, Հրայր Պաղտատեան, Աւօ Զիլեան, Գառնիկ Ուղուրլեան, Փօլ Պասմաճեան, Հրայր Թազպազեան, Գոգօ Ստամպուրլեան, Յարութ Նալպանտեան, Յարութ Շնորհոքեան: Խոսմբի մարզիչն է Գոգօ Եագուպեան:

Հեծելարշաւ

Հեծելարշաւի ճիւղին մէջ Պէյրութի մասնաճիւղի 1930ական թուականներու արձանագրած յաջող արդիւնքները 1939-45 տարիներու ընթացքին զգալիօրէն կը տկարանան:

1950ը պիտի ըլլար մարզաճիւղի վերածնունդի տարին: Ամրան եղանակի մրցումները, Նալչայեան եղբայրներու՝ Յարութիւնի եւ Ժանի փառքի օրերը կը կազմեն: Խոսմբը կը յաջողի կարեւոր յաղթանակներ ապահովել: Ժան Նալչայեան կը դառնայ Լիբանանի ախոյեան: Աշնան՝ Պէյրութ-Ֆարայա (Grand Prix des Nations) մրցումին առաջնութիւնը կը խլէ Յովհաննէս Ծատուրեան: Ծատուրեան իր յաղթական երթը պիտի շարունակէր յաջորդող հնգամեակի ընթացքին՝ 1955ին տիրանալու համար Լիբանանի ախոյեանութեան տիտղոսին:



Ծառուրեան եղբայրներ՝ Վարդգէս եւ Յովհաննէս

1953ին խումբը կը մասնակցի Ֆետերասիոնի կազմակերպած Tour du Liban եռօրեայ շրջավազքին: Խումբը կը զօրացուի Հալէպի մասնաճիւղէն հեծելանաւորներով:

Հետզհետէ նոր ուժեր կու գան փոխարինելու հիները:

1958ին, Վարդգէս Ծատուրեան եղանակի հինգ մրցումներէն երեքին առաջնութեան տիրանալով կ'ապահովէ տարուան Լիբանանի ախոյեանութեան տիտղոսը:

1961ին միջ-մասնաճիւղային հանդիպումներուն առաջին կը հանդիսանայ Յովհաննէս Վարժապետեան որուն խմբակիցներն էին Ներսէս Հատիսեան եւ Յովակիմ Պաղտասարեան:

Անոնց հետեւող երիտասարդ մարզիկներու շարքին է նաեւ Ազատ Գալայճեանը, որ խմբա-

կան ճիգերուն շնորհիւ եւ յարատեւ փորձերու առաւելութեամբ 1962ին կը տիրանայ Լիբանանի ախոյեանի տիտղոսին: Գալայճեան այս ախոյեանութեան տիտղոսը իրեն պիտի պահէր յաջորդող երեք տարիներուն՝ 1963, 1964 եւ 1965ին: 1962ի եւ յաջորդ տարիներու խումբերուն մաս կազմած են Ազատ Գալայճեան, Երջանիկ Վարդիվառեան, Վարդգէս Ծատուրեան, Ժոզէֆ Օհանեան, Ժագ Նալչայեան, Սարգիս Շիշմանեան, Անթուան Աուատ, Սարգիս Հաճինազարեան, Լեւոն Գալբաքեան, Սահակ Վարդիվառեան:

1968 տարուան յայտնութիւն հեծելանաւորն է Կարօ Համալեանը, որ կը շահի Պէյրութ-Էհմէթ առաջնութիւնը եւ կը խլէ Լիբանանի ախոյեանի տիտղոսը: Նոյն տարին մասնաճիւղի հեծելարշաւի յանձնախումբը կը կազմակերպէ Պէյրութ-Տամուր-Պէյրութ միջ-ակումբային մրցումը: Հ.Մ.Ը.Մ.ական Պօղոս Մալեան կը տիրանայ յաղթանակին:

1969ին, Հ.Մ.Ը.Մ.ի խումբէն Այսար Սալլում՝ Լիբանանի ախոյեան, Լիբանանը կը ներկայացնէ Մոսկուայի Ողիմպիական խաղերուն:

Պաշտօնական եւ միջ-ակումբային մրցումներէն դուրս, Պէյրութի մասնաճիւղի հեծելանաւորներ մասնակցած են նաեւ Լիբանանը ներկայացնող հաւաքականներուն, Լիբանանի եւ արտասահմանի մէջ կազմակերպուած մրցումներու ընթացքին: Լիբանանեան հաւաքականներուն իրենց կարեւոր ներդրումը ունեցած են Ժան Նալչայեան, Յովհաննէս Ծատուրեան, Վարդգէս Ծատուրեան, Ազատ Գալայճեան, Ժագ Նալչայեան, Յովակիմ Պաղտասարեան, Երջանիկ Վարդիվառեան, Եղիա Յակոբեան, Սարգիս Շիշմանեան, Կարօ Համալեան եւ ուրիշներ:

1973էն սկսեալ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղը կազմակերպած է հեծելարշաւի աղջկանց խումբ, որուն մասնակցած են Վերա Գրատոքեան, Անիթա Տէմիրճեան, Ռահել Անտոնեան եւ Աւլէթ Ճեմայէլ, նոր էջ մը բանալով լիբանանեան հեծելարշաւի տարեգրութեան մէջ:


Փինկ-փոնկ

Փինկ-փոնկի մարզաճիւղը Պէյրուժի մասնաճիւղին կողմէ կիրարկուած է Մար Իլիաս թաղի ակումբ փոխադրութենէն սկսեալ: Սակայն ան պաշտօնական բնոյթ կը ստանայ 1947էն սկսեալ, երբ խումբը մաս կը կազմէ OMNISPORT Ֆետերասիոնին: Աւելի ուշ, OMNISPORT Ֆետերասիոնի ճիւղաւորումով կը ստեղծուի թենիսի եւ փինկ-փոնկի մարզաճիւղերու միացեալ Ֆետերասիոնը, մինչեւ 1963: Այս ժամանակաշրջանին, Պէյրուժի մասնաճիւղի մարզիկները մասնակցելով Լիբանանի ախոյեանական մրցաշարքերուն, տիրացած են անհատական թէ խմբական բազմաթիւ տիտղոսներու:

Այսպէս, անհատական ախոյեանութեան տիտղոսին արժանացած է Վահագ Յովհաննէսեանը 1948ին, 1950ին, 1951ին, 1952ին եւ 1953ին: Սամուէլ Մաթոսեանը 1962ին, իսկ աղջկանց բաժնի անհատական ախոյեանութեան՝ Այսա Մաթոսեանը:

1952էն մինչեւ 1963, տղոց բաժնի խմբական ախոյեանութեան տիտղոսին կը տիրանայ Պէյրուժի Հ.Մ.Ը.Մ.ի կազմը: Այս յաղթանակներուն իրենց բաժինը բերած են Վահագ Յովհաննէսեան, Պօղոս Յովհաննէսեան, Վիգէն Մինասեան, Յարութիւն Գուլումճեան, Երուանդ Թերզեան, Սարգիս Գէորգեան, Շահէ Թիւթիւնճեան, Հայկ Աշքարեան եւ Զարեհ Պաղտասարեան:

1957էն սկսեալ, աղջկանց խումբի նորագոյն



Լիբանանի Փինկ փոնկի ախոյեան՝ Պէյրուժի Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները: Կեդրոնը մարպիչ՝ Պօղոս Յովհաննէսեան

աստղը՝ Նազիկ Յովհաննէսեան առաջին անգամ ըլլալով կ'ապահովէ Լիբանանի աղջկանց անհատական ախոյեանութեան տիտղոսը: Նազիկ այս տիտղոսը իրեն պիտի վերապահէր մինչեւ 1974 թուականը: Աղջկանց խումբերուն իրենց մասնակցութիւնը բերած են Այտա Մաթոսեան, Էլօ Տէր Մելքոնեան, Նազիկ Յովհաննէսեան, Անահիտ Մեծմօրուքեան: Աւելի ուշ, այս անունները փոխարինուած են նոր եւ երիտասարդ ուժերով, որոնցմէ յիշատակութեան արժանի են Շաղիկ Խրլոբեանը, Էսպերանս Խուրին, Անիթա Պապիկեանը եւ Արփի Մինասեանը:

Տղոց եւ աղջկանց խումբերու երկարամեայ մարզիչն է Պօղոս Յովհաննէսեան, որուն համբերատար եւ հետեւողական աշխատանքի իբր արդիւնք Պէյրութի Հ.Մ.Ը.Մ-ի փինկ-փոնկի ճիւղը իր կարեւորագոյն տեղը կը գրաւէ մարզաճիւղի լիբանանեան տարեգրութեանց մէջ:

1963ին, Լիբանանի փինկ-փոնկի եւ թենիսի միացեալ Ֆետերասիոնը կը բաժնուի երկուքի՝ իւրաքանչիւր ճիւղ կազմելով իր առանձին Ֆետերասիոնը: 1964ին, Ֆետերասիոնը իր վարչական ժողովները կը գումարէ Պէյրութի մասնաճիւղի ակումբին մէջ, մինչեւ իր յատուկ կեդրոնի մը ապահովումը: Նորակազմ Ֆետերասիոնի դասաւորումները խթան կը հանդիսանան որպէսզի Պէյրութի Հ.Մ.Ը.Մ-ի խումբի երկսեռ անդամները, օգտագործելով նաեւ նորակառոյց ակումբի առաւելութիւնները, աւելի յաջող արդիւնքներ ապահովեն Լիբանանի ախոյեանութեան մրցաշարքերու ընթացքին: Փինկ-փոնկի իւրայատուկ Ֆետերասիոնի կազմութեան առաջին շրջանէն սկսեալ մասնաճիւղի փինկ-փոնկի պատասխանատու Պօղոս Յովհաննէսեան մաս կը կազմէ գործադիր վարչութեան, շարունակելով նաեւ ազգային մարզիչի իր պաշտօնը: Յովհաննէսեան այս պաշտօնը պիտի վարէր մինչեւ 1975 թուականը:

Այս ժամանակաշրջանին խումբի արձանագրած լիբանանեան ախոյեանութեանց արդիւնքներն են.

1963ին, տղոց ախոյեան՝ Սամուէլ Մաթոսեան, աղջկանց ախոյեան՝ Նազիկ Յովհաննէսեան:

1965ին, տղոց ախոյեան՝ Վահագ Յովհաննէսեան, աղջկանց ախոյեան՝ նազիկ Յովհաննէսեան: Երկսեռ զոյգ՝ Վահագ եւ Նազիկ, զոյգ տղաք՝ Սամուէլ Մաթոսեան եւ Ժորժ Պաֆիթ:

1967ին, տղոց ախոյեան՝ Մօրիս Հաճ Նքուլա, աղջկանց ախոյեան՝ Նազիկ Յովհաննէսեան, կրտսեր տղոց ախոյեան՝ Ալեքս Աճեմեան:



1974ի Լիբանանի Փինկ փոնկի ախոյեան Պէյրութի Հ.Մ.Ը.Մ-ի խումբը՝ Ալեքս Աճեմեան, Սեպուհ, Գարալեքեան, Րաֆֆի Մունջողլեան եւ Փիէր Զիատէ

1968ին, մասնաճիւղի վերակազմուած խումբերը կրկին կը փայլին իրենց ձեռք բերած արդիւնքներով: Պէյրութի աղջկանց անհատական ախոյեանուհին է Նազիկ Յովհաննէսեան, զոյգ աղջկանց ախոյեանուհիներ՝ Նազիկ Յովհաննէսեան եւ Անահիտ Մեծմօրուքեան, խառն զոյգի ախոյեաններ՝ Նազիկ Յովհաննէսեան եւ Սեպուհ Գարալեքեան: Ալեքս Աճեմեան կը գրաւէ ախոյեանութեան Բ. դիրքը:

1974ին, տղոց ախոյեան՝ Րաֆֆի Մուսնջողլեան, աղջկանց ախոյեան՝ Նազիկ Յովհաննէսեան, զոյգ տղոց՝ Րաֆֆի Մուսնջողլեան եւ Ալեքս Աճեմեան, զոյգ աղջկանց՝ Նազիկ Յովհաննէսեան եւ Էսքերանս խուրի, երկսեռ զոյգ՝ Ռաֆֆի Մուսնջողլեան եւ Նազիկ Յովհաննէսեան:

Բացի Լիբանանի ախոյեանութեանց մրցաշարքերէն, Պէյրուսի Հ.Մ.Ը.Մ.ի փինկ-փոնկի տղոց եւ աղջկանց անհատական եւ խմբական կազմերը մասնակցած են բազմաթիւ այլ մրցաշարքերու՝ Լիբանանը ներկայացնելով միջազգային, արաբական երկիրներու եւ միջերկրականեան խաղերու ընթացքին:

Զատկական միջ-մասնաճիւղային խաղերուն Պէյրուսի կազմերը մնայուն մասնակցութիւն բերած են, ապահովելով յաղթանակի բաժակներ, քանի մը տարիներու բացառութեամբ: Նոյնպէս, տղոց եւ աղջկանց կազմերը մասնակցած են մասնաճիւղի կազմակերպած՝ Լիբանանի անկախութեան, միջ-ակմբային եւ այլ մրցաշարքերու, ինչպէս նաեւ ընդունած են այցելութիւններ:



1972ի Լիբանանի Փինկ փոնկի անհատական ախոյեաններ՝ Նազիկ Յովհաննէսեան եւ Րաֆֆի Մուսնջողլեան

րը Հալէպի, Լաթաքիոյ, Պաղտատի եւ այլ վայրերու Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու խումբերուն:

1940էն 1974 ժամանակաշրջանին մասնաճիւղի այլ մարզաճիւղերուն հետ բաղդատելով, կարելի է վստահաբար հաստատել որ փինկ-փոնկի խումբերը առաւելագոյն յաղթանակներն ու տիտղոսները ապահոված են Պէյրուսի Հ.Մ.Ը.Մ.ին:

Այս յաղթանակներու ետին կանգնած են հարիւրաւոր մարզիկներ, որոնցմէ տակաւին պէտք է յիշել՝ տղոց կազմերէն՝ Միշէլ Շատարեւեանը, Ղեւոնդ Քէշիշեանը եւ Արմէն Գալուստեանը:

Աթլետիզմ

Պէյրուսի մասնաճիւղի ղեկավարութիւնը սկիզբէն սկսեալ հետամուտ եղած է աթլետիզմի կիրարկումին, իբրեւ գերազանցօրէն հիմնական մարզաձեւ: Սակայն աթլետիզմի յատուկ մարզադաշտի մը ապահովումը մասնաճիւղի կարելիութիւններէն միշտ ալ դուրս մնացած է:

Մէջընդմէջ վարժարաններէ կամ համալսարաններէ շրջանաւարտ բնատուր ձիրքերով աթլետներ մասնակի փորձերով յաջողած են յառաջդիմել մարզաճիւղի այս կամ այն բաժինին մէջ:

1944ի Հոկտեմբերին, Շրջանային Վարչութեան կազմակերպած ողիմպիական առաջին հաւաքական ելոյթը առիթը պիտի հանդիսանար մասնաճիւղի աթլետներու կարելիութեանց ցուցադրութեան: Համեստ արդիւնքներով աւարտած այս խաղերը, այսուհանդերձ, մասնաճիւղի աթլետներու հետաքրքրութիւնները սրեցին դէպի աթլետիզմ:

1946ի երկրորդ ողիմպիական խաղերու ընթացքին, մասնաճիւղի աթլետները իրենց լաւագոյնը կը փորձեն տալ վազքերու, ոստումներու եւ արձակումներու մէջ աւելի բարելաւուած արդիւնքներով: Այսպէս Պէյրուսի մասնաճիւղի աթլետները իրենց մասնակցութիւնը բերած են յաջորդաբար՝ 1947ի, 1948ի, 1949ի, 1950ի եւ 1951ի միջ-մասնաճիւղային ողիմպիականներուն:

1961 Մայիս 7-ին 15-ի միջեւ, մասնաճիւղի աթլեթները, միանալով Պոլրճ Համուտի եւ Ճիւնիի մասնաճիւղերու միացեալ հաւաքակա- նին, կը մասնակցին Գահիրէի մէջ Եգիպտահայ 14-րդ Ախոյեանական մրցումներուն, պատուա- բեր արդիւնքներ ապահովելով Լիբանանի Հ.Մ.Ը.Մ-ի հաւաքականին: Այս արդիւնքներուն նպաստող մասնաճիւղի աթլեթներէն են Ալեքս Պեզիկեան, Կարպիս Միսեան եւ Մուշեղ Յով- հաննէսեան:

1964-ի եղանակէն սկսեալ, աթլեթիզմի ճիւղի պատասխանատուութիւնը կը փոխանցուի Շրջանային Յանձնախումբի մը՝ բաղկացած Պէյ- րուտի, Պոլրճ Համուտի եւ Ճիւնիի մասնաճիւ- ղերու ներկայացուցիչներէն: Աթլեթիզմը կը կի- րարկուի յաջողութեամբ, հսկողութեամբ Լիզ- պոնի մարզական բարձրագոյն ակադեմիայէն վկայեալ մարզիչներ՝ Վարդգէս Էսկիպաչեանի եւ Ալիս Գըլգաթեանի:

1967-ին աղջկանց խումբը Լիբանանի ախոյ- եան կը հանդիսանայ, կը հաստատուին նոր մրցանիչեր: Նոյն տիտղոսը կ'ապահովուի 1968-ի եղանակին: 1967-ին Լիբանանի աթլեթիզմի պատ- մութեան մէջ առաջին անգամ ըլլալով Պէյրու- թի մասնաճիւղի աթլեթներէն Մարտիրոս Բախ- տիկեան կը հաստատէ 3000 մ. ջրարշաւի մրցա- նիչը 12' 9"00:

Տղոց բաժնի երկար վազքերու նշանաւոր մարզիկներէն է Անդրանիկ Քէշիշեան, որ 5000, 10.000 եւ քրոս-քաունթրիի մրցումներուն երկար տարիներ Լիբանանի լաւագոյն մարզիկը հանդի- սացաւ: Նոյնքան կարեւոր յաղթանակներ ապա- հոված է տիպար մարզիկ Լեւոն Թաշճեանը:

1973-ի Յունիսին, Յունաստանի մէջ կայա- ցած քալելու միջազգային մրցումին, 10.000 եւ 20.000 մետրի լիբանանեան մրցանիչեր հաստա- տելով, Հ.Մ.Ը.Մ-ական էլի Տաքեսեան 24 երկիր- ներու աթլեթներու շարքին կը դասուի 5-րդ:

1973-ի եղանակին, Պէյրուտի Հ.Մ.Ը.Մ-ի աթ- լեթներու տղոց խումբը կը յաջողի ապահովել Պէյրուտի ախոյեանութիւնը՝ 11 անհատական առաջնութիւններ խլելով մրցակից խումբերէն:

1940-էն 1974 ժամանակաշրջանին բացի նա- խապէս յիշուած մարզիկներէն աթլեթիզմի խումբերուն իրենց մասնակցութիւնը բերած են. Յովսէփ Գազանճեան, Երուանդ Գազանճեան, Տիգրան Շիրինեան, Յակոբ Համամճեան, Ալեքս Պեզիկեան, Արշակ Խաչատուրեան, Կարպիս Միսեան, Մուշեղ Յովհաննէսեան, Պերճ Տէ- միրճեան, Ժողէֆ Թիւֆենքճեան, Րաֆֆի Տէ- միրճեան, Արմէն Քէշիշեան, Րաֆֆի Քէշիշ- եան, Պողոս Գաբրիէլեան, Անդրանիկ Մարտի- րոսեան, Սիմոն Մելքոնեան, Սուրէն Թերզեան, Սարգիս Աթիկեան, Արշակ Գազանճեան, Կարպիս Քեթենճեան, Նազարէթ Սվաճեան, Պողոս Գասապեան:

Աղջկանց կազմերէն՝ Եսթեր Մեծմօրուքեան, Անահիտ Սաաթճեան, Արտա Գալբաքեան, Անա- հիտ եւ Սօնա Մեծմօրուքեաններ, Մանիշակ եւ Զեփիւռ Գասապեաններ, Միմի եւ Արաքսի Գալ- բաքեաններ, Մարի Քրիսեան, Ֆլորա Գու- տուլեան, Լենա Մանուկեան, Անի Նաճարեան, Մարլէն Աղաբեկեան, Անի Թերզեան եւ ուրիշ- ներ:

Լեւամ

ԼԵՎԱՄԻ (Լիբանանահայ Երկրորդական Վարժարաններու Մարզախաղեր) ծրագիրը ի յայտ եկաւ մասնաճիւղի 19 Յունիս, 1966-ի 21-րդ նիստի ընթացքին, երբ նիւթ դարձաւ նշանակել մասնաճիւղի մարզական յանձնախումբ մը, որուն պարտականութիւններէն մէկը ըլլար հայ- կական վարժարաններու միջեւ մարզախաղերու մրցաշարքեր կազմակերպել:

Վարչութիւնը մարզական յանձնախումբի անդամներ նշանակեց՝ Վարդգէս Էսկիպաչեա- նը, Գոգօ Եագուպեանը, Եղիշէ Խոստեղեանը, Էլի Գրիգորեանը, Սեպուհ Անթիքաճեանը, Ռազմիկ Թորիկեանը, եւ վարչութեան ներկա- յացուցիչ՝ Վարուժան Մուրատեան:

Միջ-վարժարանային այս խաղերու կազմա- կերպման զոյգ նպատակներն էին. առաջին՝ զարկ տալ հայ վարժարաններէ ներս մարզանքի

եւ մարզախաղերու մշակման եւ մրցաշարքերու ճամբով իրարու մօտեցնել հայկական կրթարաններու աշակերտութիւնը: Երկրորդ՝ մարզախաղերու կայացման ընթացքին, ընտրել վարժարաններու աշակերտներէն յաջողակ մարզիկները եւ զանոնք ներառնել մասնաճիւղի համապատասխան խումբերէն ներս, իբրեւ ապագայի խոստմնալից մարզիկներ: Առաջին հերթին, աշխատանքի ծաւալը սահմանափակելու համար, որոշուեցաւ մրցաշարքերը կազմակերպել միայն երկրորդական վարժարաններու աշակերտութեան մասնակցութեամբ: Այսպէսով, մրցաշարքերու մասնակցութեան հրաւիրուեցան հետեւեալ վարժարաններու երկսեռ աշակերտները. Նշան Փալանճեան Ճեմարան, Հայ Աւետարանական Գոլէճ, Ազգ. Ս. Խանամիրեան Գոլէճ, Հայ Աւետարանական Բարձրագոյն Վարժարան, Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Վարժարան, Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Վարժարան, Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Վարժարան եւ Հռիփսիմեանց Վարժարան:

Ամառնային շրջանի նախապատրաստական աշխատանքներէն ետք, մարզական յանձնախումբի անդրանիկ ելոյթը հանդիսացաւ միջվարժարանային Գրոս Քառնթրի վազքի մրցումը, Ատոնիսի շրջանին մէջ, զոյգ հանգրուաններով՝ 21 եւ 28 Յունուար 1967ին: Կաթողիկէ վարժարաններէն բացի, մնացեալ վարժարանները մասնակցեցան ԼԵՎԱՄի այս անդրանիկ ելոյթին:

Յառաջիկային կազմակերպուեցան պասքեթպոլի, ֆուտպոլի, փինկ-փոնկի, հեծելարշաւի եւ աթլետիկայի զանազան դասակարգի մրցումներ: Մշակուեցաւ ԼԵՎԱՄի յատուկ կանոնադրութիւն: Կազմակերպուեցան վարժարաններու մարզական պատասխանատու ուսուցիչներու միջեւ ժողովներ: Մրցումները տեղի ունեցան գլխաւորաբար մասնաճիւղի ակումբէն ներս:

ԼԵՎԱՄը երկամեայ գործունէութեամբ մեծ հետաքրքրութիւն ստեղծեց վարժարաններու

աշակերտութեան, ուսուցչական կազմի եւ ծնողական շրջանակներէ ներս:

1969ի Մարտ ամիսէն սկսեալ եւ 18րդ Շրջանային Պատգամաւորական Ժողովի որոշումով, նկատի ունենալով շարժումի կարեւորութիւնը եւ վարժարաններու տարածքը Պէյրութէն դուրս շրջաններու մէջ եւս, ԼԵՎԱՄի աշխատանքները փոխանցուեցան Շրջանային Վարչութեան եւ կազմուեցաւ ԼԵՎԱՄի Շրջանային Յանձնախումբ:

Վոլիպոլ

Պէյրութի մասնաճիւղի մարզական գործունէութեան ընթացիկ եւ հետեւողականօրէն մշակուած ճիւղերէն դուրս, մէջընդմէջ մշակուած են այլ մարզական ճիւղեր, ինչպէս վոլիպոլ, ուր ճիւղը մշակուած է ակումբէն ներս 1943 - 44 տարիներուն:

1958ին, մասնագէտ մարզիչ Պատրիկ Աֆէեանի ճիգերով կը վերակազմուի մասնաճիւղի վոլիպոլի խումբը արձանագրուելով պատկան ֆետերասիոնի ակումբներու շարքին: Սակայն թեքնիք արդիւնքները կը մնան տկար: Մարզախաղը չի յաջողիր սպասուած խանդավառութիւնը ստեղծել իր շուրջ: Վոլիպոլի խումբը կը բաւարարուի կարգ մը բարեկամական մրցումներ ունենալով համեմատաբար տկար խումբերու դէմ, առանց փայլուն արդիւնքներ արձանագրելու: 1965ին, մարզախաղը կը դադրի Պէյրութի մասնաճիւղի գործունէութեան մաս կազմելէ:

Թենիս

Թենիսի կիրարկումը Պէյրութի մասնաճիւղէն ներս կը սկսի Mgr. Chebli թաղի ակումբի գնումէն սկսեալ: Նախապէս կարգ մը Հ.Մ. Ը.Մ.ականներ այս մարզաճիւղը կիրարկած են անհատական միջոցներով այլ մարզադաշտերու վրայ:

1943ին թենիսի յանձնախումբին մաս կը կազմեն՝ Օննիկ Խուպեսերեան, Հայկազ Չէօփճեան եւ Երուանդ Մալիքեան: Այս յանձնախումբ-

բի գլխավոր գործը պիտի ըլլար թենիսի դաշտի վերակազմակերպումը գայն վերածելով քաղաքի լաւագոյն դաշտերէն մէկը:

21 եւ 22 Օգոստոս 1943ին յանձնախումբը մրցաշարք մը կը կազմակերպէ Հ.Մ.Ը.Մ-ի եւ B.D.D. ակումբի խաղացողներուն միջեւ:

1944ին թենիսի խումբին մաս կը կազմէ Թուրքիոյ եւ Պալքաններու ախոյեան, Հ.Մ.Ը.Մ-ական Հանրի Թելեան, որ կը յաջողի ապահովել Լիբանանի Ա. դասակարգի ախոյեանութիւնը: Թենիսի ճիւղին հետեւող մարզիկներ եղած են Հրանդ Կիւրճեան, Ժիրայր Աթթարեան, Օննիկ Խուպեսերեան, Վարդգէս Մավիսաքալեան, Նուրհան Սարեան, Վահէ Դանիէլեան, Երուանդ Մալիքեան, Զարեհ Պաղտասարեան, Անդրանիկ Երամեան, Եփրեմ Երամեան, Երեմիա Երամեան, Վազգէն Յովնանեան, Հայկազ Չէօփճեան, Գազանճեան: Աղջկանց բաժինէն թենիսի խումբերուն մասնակցած են. Սօնա Մավիսաքալեան-Խուպեսերեան, Վեհանուշ Երամեան, Նուարդ Տէմիրճեան, Արփինէ Թերճանեան եւ ուրիշներ:

Ճիւղը դադրած է մշակուելէ մարզադաշտի պարտադիր լքումէն ետք:

Մարմնամարզ (ճիմնասթիք) եւ մարմնամշակում

Մարզական այս ճիւղերը սկիզբէն ի վեր հետեւորդներ ունեցած են Պէյրուսի մասնաճիւղէն ներս: Այս նպատակով 1940ին նշանակուած յատուկ յանձնախումբը կը փորձէ աշխատանքի լծուիլ, սակայն մեծագոյն եւ անյաղթահարելի դժուարութիւնը կը մնայ յատուկ սրահի մը եւ կազմածներու չգոյութիւնը: Մահմանափակ պայմաններու մէջ ձեռք բերուած արդիւնքներով, 20 Յունիս 1943ին, մասնաճիւղը կը կազմակերպէ սրահային մարզահանդէս Rialto սրահին մէջ: Այս ելոյթը մեծապէս կը ծառայէ մարզաճիւղերու տարածման մասնաճիւղէն ներս: Հետեւորդ մարզիկներու թիւը պահ մը 60ի կը բարձրանայ:

20 Մայիս 1944ին կը կազմակերպուի հրա-

պարակային երկրորդ ելոյթ մարմնամարզի եւ մարմնի գեղեցկութեան ցուցադրութեան յայտագրով, Collège de la Salle-ի սրահին մէջ:

Այս ճիւղերը քաջալերող պատասխանատուներէն են Լեւոն Աբգարեան, Թագլոր Թագլորեան եւ Բենիամին Շամլեան:

Կուփամարտ

Կուփամարտի ճիւղին մէջ 1950ական տարիներու սկիզբը Հ.Մ.Ը.Մ-ական Հրանդ Ղազարեան սուրիացի եւ Լիբանանցի ախոյեաններու դէմ իր կարեւոր յաղթանակներով խօսիլ պիտի տար իր մասին: Սակայն Լիբանանի լաւագոյն կուփամարտիկ Ֆարիտ Զէյտանի դէմ իր ունեցած ելոյթները անհաճոյ վէճերով եւ կռիւներով կը վերջանային: Առ այդ Հ.Մ.Ը.Մ-ի ղեկավարութիւնը, 12րդ Շրջանային Պատգամաւորական ժողովի որոշումով կուփամարտը ջնջեց Հ.Մ.Ը.Մ-ի մարզաճիւղերու ցանկէն աւելի տխուր դէպքերու առաջքը առնելու նպատակով եւ անդրադառնալով որ կուփամարտը հեռու էր մարզական ոգիով ազնիւ մրցակցութեան խաղ մը ըլլալէ:

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ

1940ին, ներքին քաղաքական եւ տնտեսական դժուարութիւններ անելի կը մատնեն Պէյրուսի Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական գործունէութեան բարւօք ընթացքը: 1941ին վարչութիւնը ամբողջութեամբ կը լուծէ սկաուտական շարքերը եւ կը նշանակէ նոր Սկաուտական Խորհուրդ՝ մասնակցութեամբ Լեւոն Աբգարեանի, Եղիշէ Մանուկեանի, Յովհաննէս Սերոբեանի, Յակոբ Խուպեսերեանի եւ Պօղոս Սիսլեանի: Այս Խորհուրդի առաջին գործը կ'ըլլայ աստիճանաւորական ցանցի մը կազմութիւնը, որուն պիտի վստահուէր յառաջիկային կազմուելիք սկաուտական շարքերու առաջնորդութիւնը:

Շարքերու վերակազմութիւնը պիտի երկարէր տարիներու վրայ:

1943ին, սկսողական շարժումը հակառակ վարչութեան ճիգերուն տակաւին կը մնայ կազմալուծ: Կը նշանակուի Էշրէֆիէի շրջանի յատուկ Սկսողական Խորհուրդ մը բաղկացած հետեւեալներէն. Ճորճ Սարգիսեան, Բիւզանդ Զանազանեան, Վարդգէս Աբրահամեան եւ Օննիկ Խուպեսերեան: Մասնաճիւղի ընդհանուր խմբապետ Վիգէն Սասունի տարեշրջանի աւարտումէն առաջ կը հրաժարի, առժամաբար զինք կը փոխարինէ Սուրէն Մուրատեան: Գայլիկներու վոհմակը ձեռնհասօրէն կը վարէ աքելա Հրանդ Սիմոնեանը: 14 Մարտին Մեմորիալ Հովի մէջ կը կայանայ սկսողական հանդէս, ուր խօսք կ'առնէ Շրջանային վարչութեան ատենապետ Տօքթ. Բենիամին Գուլաքեան: Տեղի կ'ունենայ երգման արարողութիւն:

1944ին կը կազմակերպուի սկսողական տարազներու միջերանոց: Վարչութիւնը այս նպատակին համար կը տրամադրէ 700 լ. ոսկի: Սկսողական Խորհուրդը տարեշրջանի ընթացքին կը վերակազմուի՝ ատենապետութեամբ Վահրամ Կիւրճեանի եւ ատենադպրութեամբ՝ Ժան Պերպէրեանի:

4 Մայիս 1947ին, Պէյրութի մասնաճիւղի սկսողական հանդէսը բացառիկ յաջողութիւն կ'արձանագրէ: Օրուան բանախօսն է Մուշեղ Ճենտերէճեան, գեղարուեստական ճոխ բաժինի աւարտին տեղի կ'ունենայ գայլիկներու փոխանցում դէպի սկսողական շարքերը: Սկսողական ճիւղը նոր թափով կը գործէ մասնաճիւղէն ներս: Տարեկան բանակումը տեղի կ'ունենայ Այն Պելլուայի մէջ, 23 Օգոստոս 1947ին:

1950 եւ 1951 տարիներուն, մասնաճիւղի Սկսողական Խորհուրդին մաս կը կազմեն Տօքթ. Վազգէն Յովնանեան, Անդրանիկ Ղուպիկեան, Յակոբ Խուպեսերեան, Պօղոս Սիսլեան, Յովհաննէս Ոսկերիչեան, Յակոբ Կարապետեան, Սիսակ Զպուքճեան եւ Կ. Աւետիսեան:

1953ին, Պէյրութի սկսողական կազմը փոխարինելով Շրջանային վարչութեան ընթացիկ նախաձեռնութիւնը, ինք կը կազմակերպէ տարեկան ընդհանուր բանակում, Էհտէն գիւղին

մէջ, Օգոստոս 16էն սկսեալ: Այս բանակումին կը հրաւիրուին նաեւ Հալէպի մասնաճիւղի սկսողական խումբերը:

Շարքերու կազմակերպումը իր վերջնական ձեւը կը ստանայ: Պէյրութի մասնաճիւղը ունի չորս միաւորներ, հետեւեալ թաղամասերու վրայ բաժնուած.

Ա. խումբ՝ Պէյրութ քաղաքամէջ

Բ. խումբ՝ Էշրէֆիէ

Գ. խումբ՝ Գարանթինա

Դ. խումբ՝ Հայաշէն:

Իւրաքանչիւր միաւոր ունի իր խմբապետական կազմը եւ Սկսողական Խորհուրդի կազմին մէջ՝ իր ներկայացուցիչը:

1957 տարեշրջանին, սկսողական գործունէութիւնը կը զօրանայ, աստիճանաւորական կարեւոր ցանցի մը կազմութեամբ: Աստիճանաւորներն են՝ Սուրէն Մուրատեան, Յակոբ Ոսկերիչեան, Յակոբ Կարապետեան, Գրիգոր Աւագեան, Յակոբ Մանուկեան, Վահէ Գապաքեան, Հրաչ Սողոմոնեան, Գէորգ Թաւրիգեան, Մարի Սարեան, Շաքէ Տէտէեան եւ Բիւզանդ Թորիկեան: Վերջինս՝ փոխանցուած ձիւնի մասնաճիւղէն՝ միաժամանակ ձիւնի կազմին մէջ գործելու պայմանով:

1957էն 1961 քառամեայ շրջանին Սկսողական Խորհուրդի դիւանին մաս կը կազմեն.

Ատենապետ՝ Յովհաննէս Պայթարեան

Ատենադպիր՝ Բիւզանդ Թորիկեան

Գանձապահ՝ Մարի Սարեան:

Կազմին իրենց մասնակցութիւնը կը բերեն վարչական ներկայացուցիչներ եւ աստիճանաւորներ՝ Գրիգոր Աւագեան, Գրիգոր Եաւերեան, Սուրէն Մուրատեան, Գէորգ Թաւրիգեան, Յակոբ Մանուկեան, Մովսէս Էլէյճեան, Յարութիւն Տէրմենճեան, Հրայր Ճիզմէճեան, Յարութիւն Կիտցիլեան, Յակոբ Համամճեան, Պատրիկ Կիւլպէնկեան, Յակոբ Աբովեան, Ոսկան Վարդիվառեան, Հայկ Պէյլերեան եւ Սարգիս Հաճինազարեան:

1957ին Յարութիւն Կիտցիլեան կը ստանձնէ Պէյրութի քաղաքի վոհմակի աքելայի պաշտօն,

մինչեւ 1961 թուական: Կիտցինեան կը ստանայ խմբապետի աստիճան:

Սուրիայէն եւ Եգիպտոսէն Լիբանան հաստատուած խմբապետներ կը միանան Պէյրութի մասնաճիւղի աստիճանաւորական ցանցին: Այսպէս Մովսէս Էլէյճեան եւ Հայկ Պէյլէրեան կը մասնակցին Պէյրութի մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի կազմերուն: Վարուժան Սերոբեան եւ Հրայր Ճիզմեճեան կը ստանան մասնաճիւղի խմբապետի պաշտօններ, մինչեւ իրենց մեկնումը Լիբանանէն:

1961ին, Լիբանանի մէջ կը կազմուի սկաուտական յատուկ Ֆետերասիոն: Ֆետերասիոնի կազմութեան մէջ իրենց բաժինը կը բերեն նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի կազմէն անդամներ, գլխաւորութեամբ Սուրէն Մուրատեանի:

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարժման կը տրուի նոր արտօնագիր, որու հիման վրայ Պէյրութի մասնաճիւղի անուան տրուած սկաուտական արտօնագրով Լիբանանի միւս մասնաճիւղերու սկաուտական բաժինները կ'ունենան պաշտօնական ճանաչում:

1964ին, Սկաուտական Խորհուրդի անդամներ կը նշանակուին Սուրէն Մուրատեան, Ստեփան Չազմաքճեան, Ժիրայր Սարգիսեան, Յարութիւն Հապէշեան, Ֆրանսուա Գարայեան, Սարգիս Հաճինազարեան, Եղուարդ Միսիրեան, Պատրիկ Կիւլպէնկեան եւ Սրբուհի Իբրանոսեան:

1965ին, Միհրան Շիմշիրեան կը ստանան Պէյրութի մասնաճիւղի աքելլայի պաշտօնը, աւելի ուշ ստանանելով Լիբանանի Շրջանային խմբապետի պաշտօն եւ լիբանանեան սկաուտական Ֆետերասիոնի կազմին մէջ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան ներկայացուցիչ անդամ, գանձապահի պաշտօնով:

Ժամանակի ընթացքին նոր եւ որակաւոր խմբապետներ կը միանան մասնաճիւղի խմբապետական ցանցին: 1969ին, Ֆետերասիոնի կազմակերպած մասնագիտական բանակումին մասնակցելով Ճոնի Արեւեան առաջինը ըլլալով կը

ստանայ «Վուտ Պէճ»ի վկայական: Լիբանանի սկաուտութեան բերած իրենց նպաստին համար Ֆետերասիոնը յատուկ վկայականներով կը վարձատրէ Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետներ՝ Ճոնի Արեւեան, Սարգիս Հաճինազարեան, Սարգիս Գաթալուզեան եւ Յասմիկ Մուրատեան:

1967ին, մասնաճիւղը կը պահէ սկաուտական երեք միաւորներ՝ Պէյրութ քաղաք, Էշրէֆիէ եւ Հայաշէն: Զգալի է խմբապետական մասնագիտացած ցանցի մը պակասը: Գործի վրայ գտնուող աստիճանաւորները իրենց լաւագոյնը կու տան յաջողցնելու համար Միութեան այս կենսական շարժումը:

1968ին, մասնաճիւղի սկաուտական կազմերը մասնակցած են Շրջանային Վարչութեան կազմակերպած դպրոց-բանակումին եւ ուղիբանակումին: Կիրակնօրեայ հաւաքոյթները կատարուած են մնայուն հերթականութեամբ: Խումբերը կը կատարեն իրենց արշաւներն ու բանակումները: Սկաուտական պիւտճէն կը հոգացուի գլխաւորաբար տարեկան օրացոյցներու վաճառքի հասոյթէն:

1972ի Սկաուտական Խորհուրդի անդամներն են.-

- Ատենապետ՝ Վահէ Գապագեան
- Փոխ ատենապետ՝ Ճոնի Արեւեան
- Ատենադպիր՝ Մկօ Եափուճեան
- Բ. ատենադպիր՝ Սրբուհի Իբրանոսեան
- Գանձապահ՝ Պատրիկ Կիւլպէնկեան
- Գոյքապահ՝ Հրանդ Խոզոզեան
- Ընդհանուր խմբապետ՝ Բանիկ Չաքմաքճեան

Խմբապետական կազմ. Պէյրութ Ա.՝ արենոյշ՝ Արաքսի Շիմշիրեան, Սկաուտ՝ Բաբիկ Տատոյեան, Պէյրութ Բ.՝ Ներսէս Տօնիկեան, Պէյրութ Դ.՝ Պերճ Փեհլիվանեան:

Անկախ կազմակերպական եւ թեքնիք աշխատանքներէն, Պէյրութի մասնաճիւղի սկաուտական կազմը իր մասնակցութիւնը բերած է ազգային եւ եկեղեցական հանդիսութիւններու Ապրիլ 24ի սգաւոն, Մայիս 28ի տօնակատարու-

թիւն, ինչպէս նաեւ ամէն տարի Նոյեմբեր 22ին՝ Լիբանանի անկախութեան տարեդարձերուն առթիւ Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպած գիշերային ջահազնացութիւններուն, խանդավառութեան ալիքներ բարձրացնելով տեղացի բազմութիւններուն մօտ:

Պէյրութի մասնաճիւղի սկաուտական պատուիրակութիւններ մնայուն ներկայութիւն եղած են Շրջանային Վարչութեան կազմակերպած բոլոր միջ-մասնաճիւղային ընդհանուր բանակումներուն միջ-մասնաճիւղային Ձատկական հանդիպումներու փակման հանդիսութեանց ընդհանուր տողանցքներուն: Հաւաքաբար թէ անհատապէս իրենց կարեւոր ներդրումը ունեցած են Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած բոլոր աշխատանքներուն, մասնակցելով Շրջանային Սկաուտական Խորհուրդներու կազմերուն, ստանձնելով թեքնիք աշխատանքներու կարեւոր բաժինները, ինչպէս նաեւ հրատարակութիւններու խմբագրութեան եւ իրականացման աշխատանքները:

Սկաուտական կազմերը մասնակցած են պետական, ազգային, եկեղեցական թէ միութենական ամէն կարգի հրապարակային ելոյթներուն՝ Լիբանանի անկախութեան տարեդարձներ, Ապրիլ 24, Մայիս 28, եկեղեցիներու օժոմներ, միւլտիմեդիայի օժոմներ, գահակալական հանդիսութիւններ, յոբելենական հանդիսութիւններ, հանգանակութիւններ՝ օժանդակելով կարգապահական եւ գործնական աշխատանքներուն:

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՆԻԹԻՒՆ

Պէյրութի Հ.Մ.Ը.Մ.ի իրերայաջորդ վարչութիւններ նախանձախնդիր եղած են իրենց մասնակցութիւնը բերելու ազգանպաստ գործունէութեանց: Այսպէս է որ 18 Մայիս, 1941ին քաղաքապետարանի դաշտին վրայ Orient թերթի նախաձեռնութեամբ կազմակերպուած մարզահանդէսի հասոյթէն 200 ս. ոսկի կը յանձնուի Ազգ.

Առաջնորդարանին, չքաւոր հայերու բաժնուելու համար:

1943էն սկսեալ վարչութիւնը զարկ կու տայ ակումբէն ներս ընկերային գործունէութեան: Կը նշանակուի ակումբի յանձնախումբ մը բաղկացած հետեւեալներէն. Հայկազ Չօփճեան, Երուանդ Մալիքեան, Օննիկ Խուպեսերեան եւ Պօղոս Շահինեան:

Նշանակեալ յանձնախումբը հաճելին օգտակարին միացնելով կը կազմակերպէ միջ-անդամական եւ հրապարակային ձեռնարկներ: Առաջին ելոյթը կը կայանայ 27 Փետրուար 1943ին, Մեմորիլ Հօլին մէջ, ուր տեղի կ'ունենայ նորընծայ սկաուտներու երդման արարողութիւն: Կը դասախօսէ Տօքթ. Բենիամին Գուլաքեան, գեղարուեստական բաժինին կը մասնակցին Եռլանտ Աճէմեան եւ Խաչիկ Արարատեան արտասանութեամբ, իսկ տիկին Աւետեան եւ Մինաս Հազարեան երգերով: Յանձնախումբը կ'օժանդակէ նաեւ հրապարակային ելոյթներու կազմակերպման: 13 Մարտ 1943ի սկաուտական հանդէսին կ'արտասանէ Նելլի Մինասեան, կ'երգէ օր. Լ. Թիւթիւնճեան:

Անդամական խրախճանք 15 Ապրիլ 1943ին, Մեմորիլ Հօլի սրահին մէջ խօսք կ'առնէ Յովհաննէս Շահինեան, նիւթ՝ Հ.Մ.Ը.Մ.ական անդամներու փոխ յարաբերութիւններ: Դասախօսական երեկոյթ 4 Յունիս 1943ին, խօսք կ'առնեն Տօքթ. Սամուէլ Սիմիթեան, նիւթ՝ Սեռային հիւանդութիւններ եւ Նիկոլ Աղբալեան, նիւթ՝ Մարզական ոգին հայ երիտասարդութեան մօտ: Խրախճանք հանդիսութիւն, 4 Յուլիս 1943ին, ակումբի պարտէզին մէջ: Տեղի կ'ունենան սկաուտական խաղեր, զուարճալիքներ եւ պասքեթպոլի Բ. դասակարգի խումբերու մրցաշարքի աւարտական մրցում:

1944 ին Հ.Մ.Ը.Մ.ի անդամներ մաս կը կազմեն «Սասունցի Դաւիթ» հրասայլային ֆոնտի հանգանակիչ յանձնախումբերուն: Նոյնպէս Լ.Օ.Խաչի «պնակ մը կերակուր»ի, Ազգային Բուժարանի եւ նման ազգօգուտ ձեռնարկներու տարեկան հանգանակութեանց առիթներով մաս-

նաճիւղի անդամները կ'օժանդակեն հանգանակիչ խումբերուն մասնակցութեամբ:

Այս ելոյթները կը ծառայեն Պէյրուսի Հ.Մ.Ը.Մ-ի ժողովրդականացման եւ լայն խաւերում Հ.Մ.Ը.Մ-ի նպատակի եւ գործունէութեան ծանօթացման, միաժամանակ ան առիթ կը ստեղծէ միջ-անդամական սերտ գործակցութեան: Այս վերջին նպատակի իրականացման համար ընկերային յանձնախումբի գործունէութիւնը կ'երկարի նաեւ յաջորդ տարիներուն վրայ:

20 Մայիս 1944ին Մեմօրիըլ Հօլի մէջ կը բանախօսէ Սուրէն Քհնյ. Բաբախեան: Գեղարուեստական բաժնին կը մասնակցի արտասանութեամբ՝ Խաչիկ Արարատեան, մեներգով՝ օրդ. Ս. Պետրոսեան, Լ. Թիւթիւնճեան եւ տիկ. Աւետեան:

Ընկերային ձեռնարկները նոր խանդավառութեամբ կը վերսկսին 1960ական թուականներէն սկսեալ երբ նոր ակումբի երկյարկանի շէնքի սրահը տրամադրելի կ'ըլլայ այս նպատակին: Զանազան տօնական առիթներով կը կազմակերպուին ճաշկերոյթներ, պինկոյի երեկոներ, նարտի մրցաշարքեր եւ պրիճի հաւաքոյթներ, անդամ-անդամուհիներու եւ համակիրներու նախընտրած միջավայրը դարձնելով Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուսի ակումբը:

Ակումբէն դուրս ընկերային յանձնախումբեր կազմակերպած են Rally Paperի մրցումներ, որոնք կ'աւարտէին համակրական հաւաքոյթներով եւ առեւտրական հաստատութիւններու կողմէ յաղթական խումբերուն տրամադրուած մրցանակներու բաշխումով:

Հրապարակային հանդիսութիւններ

20 Յունիս 1943ին Սինեմա Ռիալթոյի մէջ մասնաճիւղը կը կազմակերպէ մարզական հանդիսութիւն, բուրգեր, ճիմնասթիք, գեղեցիկ մարմնի ցուցադրութիւն եւայլն: Այս ձեռնարկի յաջողութիւնը մեծապէս կը նպաստէ մասնաճիւղի փրփակման: Հանդիսութեան կը հովանաւորէ Ֆրանսացի գնդապետ Cazaud, նախագա-

հութեամբ Լիբանանի հայոց Առաջնորդ Արտաւազդ Արք. Սիւրմէյեանի:

1944ի Յունուար ծին, տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 25ամեակի տօնակատարութիւնը Collège de la Salleի սրահին մէջ, հովանաւորութեամբ Արտաւազդ Արք. Սիւրմէյեանին: Օրուան բանախօսն է Նիկոլ Աղբալեան: Գեղարուեստական բաժնին կը մասնակցին երգերով՝ Տոքթ. Էլմաճեան, տիկ. Զեփիւռ Շանթ, տիկ. Մ. Աւետեան: Արտասանութիւն՝ տիկ. Եոլանտ Աճէմեան եւ Խաչիկ Արարատեան, նուագախումբ՝ Յ. Նալպանտեան:

1968ը Միութեան «Յիսնամեայ Յոբելինական Տարի» հռչակուեցաւ Շրջանային Վարչութեան կողմէ: Առ այդ Լիբանանի մասնաճիւղերու շարքին գլխաւոր պարտականութիւն յանձնուեցաւ Պէյրուսի մասնաճիւղի վարչութեան, նախապատրաստական աշխատանքներու ամբողջացումով, պատշաճօրէն կազմակերպելու յիսնամեակի հանդիսութիւնը:

Վարչութիւնը լայնօրէն օժանդակեց Շրջանային Վարչութեան այս նախաձեռնութեան: Պաշտօնական հանդիսութիւնը մեծ շուքով տեղի ունեցաւ Պիպլոս սրահին մէջ: Նոյն առիթ վարչութիւնը պանդոկ Պրիսթոլի մէջ կազմակերպեց շքեղ ճաշկերոյթ պարահանդէս, հովանաւորութեամբ Տէր եւ Տիկին Գէորգ Զաթալպաշեաններու:

ԶԱՀԼԷ

Հ.Մ.Ը.Մ-ի Զահլէի մասնաճիւղը, Համաշխարհային Բ. Ընդհանուր Պատերազմի օրերուն եւ Լիբանանի անկախութեան տիրանալուն առընթեր, բոլորովին նոր կացութիւններու առջեւ գտաւ ինքզինքը: Արդարեւ, Ֆրանսական հոգատարութեան օրերուն, իբրեւ Ռայաքի զինուորական կեդրոնին եւ Շթորայի կեդրոնական դիրքին մօտակայ մեծագոյն ոստան, Զահլէի կարեւորութիւնը զգալիօրէն շեշտուած էր: Սակայն, Ֆրանսական խնամակալութեան ենթակայ

ուժերու մեկնումէն ետք, այս կարեւորութիւնը նուազեցաւ եւ զահլէաբնակ հայութիւնը անկայուն վիճակի ենթարկուեցաւ մերթ նորեկներու եւ մերթ մեծաթիւ մեկնողներու տեղափոխութիւններուն իբր հետեւանք:

1939ին, Զահլէի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը ունէր իր սեփական հաւաքավայրը, կը պահէր Ֆուլթոնի գոյգ խումբեր եւ սկաուտական կորիզ մը՝ բաղկացած 17 սկաուտներէ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

1940 տարեշրջանին, վարչութեան մաս կը կազմեն Փայլակ Բալուլեան, Հայկազ Փիլիկեան, Պօղոս Գիզիրեան, Յակոբ Միքայէլեան եւ Նազարէթ Նարկիզեան: Այս կազմի աշխատանքը կ'ըլլայ հաստատ հիմերու վրայ դնել մասնաճիւղի գոյութիւնը: Այս նպատակի իրագործումը երկամեայ ճիգերու կը կարօտի, եւ 1943ին միայն կարելի կը դառնայ հաստատել, թէ մասնաճիւղը վերստացած է իր երբեմնի փայլուն կացութիւնը: 1943ի Նոյեմբերին տեղի կ'ունենայ մասնաճիւղի նոր ակումբի բացման հանդիսութիւնը: Հանդիսութեան կը նախագահէ Տոքթ. Արշաւիր Արշակունի, օրուան բանախօսն է Տոքթ. Ներսէս Քիւբելեան: Վարչութեան ատենապետը՝ Ազատ Գասարճեան իր խօսքին մէջ շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր ներկաներուն, որոնք այս առիթով 111 լ.ո. նուիրահաւաքով մը մը մասնակցին հանդիսութեան: 12 Դեկտեմբերին, մասնաճիւղը կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 25ամեակը: Տօնակատարութեան կը նախագահէ Շահէ Այվազեան, կը բանախօսէ Տիկին Սեզա իսկ գեղարուեստական բաժնին կը մասնակցին Նուպար Մանկասարեան, Հրաչ Միքայէլեան եւ Ճորճ Փուշուճեան:

Մասնաճիւղի սկաուտական կազմը կը զօրանայ, յատկապէս քաջալերուած Հալէպի մասնաճիւղի սկաուտներէն, որոնք իրենց տարեկան բանակումը կը կատարեն Զահլէի մէջ:

Ֆուլթոնի առաջին խումբին մաս կը կազմեն Նուպար Մանկասարեան, Եսայի Գասարճեան, Անդանիկ Քէշիշեան, Յովհաննէս Յարութիւնեան, Յակոբ Միքայէլեան, Հրանդ Միքայէլեան, Գէորգ Հեքիմեան, Լեւոն Քիւրիւմլեան, Կարապետ Քիւրիւմլեան, Յակոբ Տէիրմենճեան, Պետրոս Ճէպեան, Գէորգ Սեբեթճեան, եւ Յովհաննէս Աւագեան: Այս կազմը կը մասնակցի Զատկական միջ-մասնաճիւղային հանդիպումներուն:

20 Մարտ 1944ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ վարչական կազմ հետեւեալ անդամներով.- Ազատ Գասարճեան, Կիրակոս Թապազեան, Գէորգ Էրզրումեան, Արիս Տէօվլէթեան, Նուպար Մանկասարեան, Անդրանիկ Քէշիշեան եւ Յակոբ Միքայէլեան:

Հակառակ պատերազմական օրերու անձուկ կացութեան, Զահլէի մասնաճիւղը կը յարատեւէ համեմատաբար աւելի զօրաւոր կերպով, նկատի ունենալով քաղաքի լեռնային դիրքը, ուր զբօսաշրջիկութիւնը կը զարգանար: 1946-47 տարիներու դէպի հայրենիք ներգաղթի ժամանակաշրջանին կը յաջորդեն աւելի կայուն տարիներ: Զահլէի մասնաճիւղը ամբողջ քառասունական տարիներուն ընթացքին կը մասնակցի Զատկական միջ-մասնաճիւղային հանդիպումներուն իր Ֆուլթոնի կազմերով:

1948ի Հոկտեմբերին, մասնաճիւղի աթլետները կը մասնակցին Պէյրութի մէջ կայացող միջ-մասնաճիւղային ողիմպիականին (իմա՝ աթլետիք մրցումներուն):

1949ին, մասնաճիւղը պաշտօնապէս կը տիրանայ Ֆուլթոնի սեփական դաշտի մը ընձեռած առաւելութեանց, հետեւեալ համաձայնութեամբ. Զահլէի քաղաքապետութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի տրամադրութեան տակ կը դնէ յարմար հողաշերտ մը, եօթը տարուայ ընթացքին օգտագործելի: Վարչութիւնը հողաշերտը պիտի վերածէ Ֆուլթոնի դաշտի: Հողաշերտի տարեկան վարձքն է 60. լ. ոսկի: Վարչութիւնը, ատենապետութեամբ Փայլակ Բալուլեանի եւ ատենադպրութեամբ Կիրակոս Թապազեանի կը լծուի աշխատանքի:

1949ին, մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն է 88 հետեւեալ ենթաբաժանումներով. գայլիկ՝ 18, սկաուտ՝ 15, մարզիկ՝ 25, օժանդակ՝ 30: Ֆուտպոլի դաշտի իւրացման իրբ հետեւանք մասնաճիւղի պետական արտօնագրի պայմանները կ'ամբողջանան եւ Ջահլէի Հ.Մ.Ը.Մ.ը կը դառնայ պաշտօնապէս արտօնուած մարզական կազմակերպութիւն:

1950ի Ապրիլին, նախորդ տարուան վարչական կազմը նոյնութեամբ կը վերընտրուի:

Նախորդ տարուան սկսուած ֆուտպոլի դաշտի յարդարման աշխատանքները աւարտած են, ընդհամէնը 5000 լիբ. ոսկի ծախսով: Այս գումարը ծանր կը կշռէ մասնաճիւղի գանձին վրայ: Գոյացած բացը գոցելու նպատակով, վարչութիւնը հրապարակ կը հանէ 1 լիբ. ոսկինոց վիճակահանութեան տոմսեր, որոնցմէ, Շրջանային վարչութեան միջոցաւ, կը ղրկէ մասնաճիւղերուն՝ իրենց շրջաններուն մէջ սպառելու համար:

1949 եւ 1950 տարեշրջաններուն մուտքի ընդհանուր գումարն է 4124 լ. ոսկի, ելք՝ 4244 լ. ոսկի, տակաւին վճարելի կը մնայ դաշտի յարդարման պատճառով գոյացած բացը: Շրջանային վարչութիւնը մօտէն կը հետեւի դաշտի օգտագործման պայմանագրութեան, այցելելով Ջահլէ եւ քաղաքապետութեան հետ ուղղակի բանակցելով: Հ.Մ.Ը.Մ.ը այս ձեւով, իրողապէս, դաշտի տնօրինութեան իրաւունքը կը պահէ իրեն, եօթնամեակի աւարտին համաձայնագրի վերանորոգման իրաւունքով:

Դաշտի պաշտօնական բացման հանդիսութիւնը տեղի կ'ունենայ Կիրակի 6 Օգոստոս 1950ին, հովանաւորութեամբ Պեքայի նահանգապետին:

Ֆուտպոլի դաշտի իրականացման կողքին կը ծաւալի նաեւ մասնաճիւղի մարզական գործունէութիւնը: Ֆուտպոլի զոյգ խումբերու կողքին մասնաճիւղը կը կիրարկէ փինկ-փոնկը աւուստի սրահին մէջ: Ջահլէի Հ.Մ.Ը.Մ.ը ունի նաեւ գրադարան մը՝ 75 հատոր գիրքերով:

1951ի Յունիսին կ'ընտրուի նոր վարչական

կազմ: Մասնաճիւղի մարզական եւ սկաուտական գործունէութիւնները կը շարունակուին նոյն թափով: Ֆուտպոլի խումբը կը մասնակցի Ջատկական միջ-մասնաճիւղային մրցաշարքին, շարունակաբար ամէն տարի: 1953ին, ներքին դժուարութիւններու պատճառով, վարչութիւնը կը հրաժարի իր գործունէութեան ժամանակաշրջանի աւարտէն առաջ: Գործը կը կաղայ մինչեւ 1954ի Փետրուար ամիսը, երբ կ'ընտրուի նոր վարչական կազմ, ատենապետութեամբ Նուպար Մանկասարեանի: 1955ին, Շրջանային վարչութեան գործիչի զեկուցումէն ի յայտ կու գայ, որ դժուարութիւններ կան Հ.Մ.Ը.Մ.ի եւ քոյր կազմակերպութեանց փոխ յարաբերութեանց մէջ: Շրջանայինը կը դիմէ առ որ անկ է, որ պէսզի մարզական գործունէութիւնը վերապահուի Հ.Մ.Ը.Մ.ին, իսկ Շրջանային վարչութիւնը, զանազան առիթներով, նիւթական խորհրդանշական գումարներով կը քաջալերէ մասնաճիւղի գործունէութիւնը: Մասնաճիւղը տակաւին տարիներ կը ճգնի դաշտի յարդարման ծախսերու պատճառած բացը գոցելու համար: Մասնաճիւղի նիւթական միջոցներու պակասը կը դժուարացնէ ընթացիկ գործունէութիւնը: Յաջորդական վարչութիւններու ճիգերը հազիւ ոտքի կը պահեն մասնաճիւղը, սակայն զգալի յառաջդիմու-



Չահլէի Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի խումբը 1955ին

Թիւններ չեն կրնար արձանագրել մինչեւ 1956 թուական:

1957ին, նորընտիր վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Վարդգէս Գարաօղլանեան:

Զահլէի Հ.Մ.Ը.Մ.ը կը հաշուէ ընդհանուրը 42 անդամ, որոնք կը կիրարկեն Ֆուլթոն, պասքեթպոլ, փինկ-փոնկ եւ հեծելարշաւ: Մասնաճիւղի ակումբը, որուն տարեկան վարձքն է 300 լ.ոսկի, ժամադրավայրն է անդամներուն: Կարող սկսուտ ղեկավարի մը պակասը պատճառ կը դառնայ, որ սկսուտական խումբ մը չկազմուի:

8 Փետրուար 1958ին, անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական կազմը իր դիւանը կը կազմէ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Վարդգէս Գարաօղլանեան
- Ատենադպիր՝ Յովսէփ Անկալաթեան
- Գանձապահ՝ Ժողէֆ Գասարճեան
- Խորհրդականներ՝ Յակոբ Քէչիշեան եւ Յովսէփ Տաղլեան:

Այս կազմն ալ կը դիմագրաւէ նիւթական անել կացութիւն, անցեալի պարտքերու կուտակումով:

Շրջանային Վարչութիւնը, կրկին, նիւթական օժանդակութեամբ կը փորձէ այս կացութենէն դուրս բերել մասնաճիւղը, թելադրելով ներդաշնակ գործակցութեամբ նախանձախնդիր աշխատանք, որոնց պակասով տարիներ շարունակ Զահլէի Հ.Մ.Ը.Մ.ը տեղ քայլի մէջ կը մնար:

22 Փետրուար 1959ի անդամական ընդհանուր ժողովը կեանքի կը կոչէ զօրացեալ վարչական կազմ՝ գործելու վերանորոգ պատրաստակամութեամբ.-

- Ատենապետ՝ Ազատ Գասարճեան
- Փոխ ատենապետ՝ Յարութիւն Մուրատեան
- Ատենադպիր՝ Վարդգէս Գարաօղլանեան
- Քարտուղար՝ Յովսէփ Անկալաթեան
- Գանձապահ՝ Ժողէֆ Գասարճեան
- Ֆուլթոնի պատասխանատու՝ Մուրատ Քէչիշեան
- Փինկ-փոնկի պատասխանատու՝ Օննիկ Դալիթեան

Գոյքապահ՝ Եղիա Ֆարպաշեան
Խորհրդականներ՝ Յակոբ Քէչիշեան, Յովսէփ Տաղլեան:

Ֆուլթոնի խումբը եւս կը զօրացուի եւ Զատկական միջ-մասնաճիւղային մրցաշարքին կը մասնակցի հետեւեալ կազմով, Յակոբ Քէչիշեան, Ժագ Բալուլեան, Եղիա Ֆարպաշեան, Ժան Փիլաւճեան, Աբրահամ Պետրոսեան, Զաւիկ Գալայճեան, Զաւէն Գասապեան, Հրայր Թորոսեան, Միքայէլ Շահինեան, Միքայէլ Կէրէքմէզեան, Մուրատ Գաբլանեան, Սարգիս Նաքքաշեան, Պետրոս Յարութիւնեան եւ Վարդան Մնակեան:

Այս վարչութիւնը կը նախաձեռնէ մասնաճիւղի սկսուտական շարժումի վերակազմակերպման, գայլիկներու փոքր վոհմակի մը կազմութեամբ, խնդրելով սկսուտական շրջանային վերին մարմնի աջակցութիւնը անոր յաջողութեան համար:

1960ին, վարչական կազմը գրեթէ նոյնութեամբ կը վերընտրուի, նոր մասնակցութեամբ Յակոբ Բալուլեանի փոխ ատենադպիր եւ Ճորճ Էքմէքճեանի՝ փոխ գանձապահ: Նախորդ կազմէն անդամակցութիւնէ կը դադրին Յ. Անկալաթեան, Մ. Քէչիշեան եւ Օ. Դալիթեան:

1960ին, նոր կազմը կը շարունակէ նախորդին ծրագիրը:

Ֆուլթոնի խումբը կը մասնակցի Լեռնալիբանանի ախոյեանութեան մրցաշարքին: Կը կազմակերպէ բազմաթիւ բարեկամական մրցաշարքեր: Փինկ-փոնկի խումբը կը մասնակցի Պէյրութի մասնաճիւղի կազմակերպած մրցաշարքին:

Նախորդ տարուան գայլիկներու վոհմակի կազմութիւնը յաջողութեամբ կը սպակուի եւ 30 գայլիկներ կը մասնակցին աշխատանքներուն: Աքելլայի պաշտօնը յաջողութեամբ կը վարէ Կարօ Քիւրքճեան: Տարուան ընթացքին յաջողութեամբ կը պսակուի նաեւ մասնաճիւղի աւանդական ձեռնարկը՝ բարեկենդանի ընտանեկան խրախճանքը, ապահովելով նիւթական եկամուտ: Ակումբի բարեզարդումը կը յաջողի Զահլէի Լ.Օ.Խաչի մասնաճիւղի աջակցութեամբ:

1961ի վարչական կազմն է՝
Ատենապետ՝ Ազատ Գասարճեան
Փոխ ատենապետ՝ Ժողէֆ Գասարճեան
Ատենադպիր՝ Ծորճ Էքմէքճեան
Գանձապահ՝ Յակոբ Բալուլեան
Ֆուլթայոլի պատասխանատու՝ Մուրատ Քէ-
շիշեան

Սկստակապես պատասխանատու՝ Կարո
Քիւրքճեան

Խորհրդականներ՝ Յարութիւն Մուրատեան,
Յովսէփ Տաղլեան, Վարդգէս Գարաօղլանեան:

Նոյն ծրագիրներով առաջնորդուող այս
կազմը կը յաջողցնէ նախորդ տարիներու նախա-
ձեռնութիւնները, ապահովելով յաւելեալ յա-
ռաջդիմութիւն:

15 Մարտ 1962ին, մասնաճիւղի անդամա-
կան ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական
կազմ:-

Ատենապետ՝ Յարութիւն Մուրատեան
Ատենադպիր՝ Ժողէֆ Գասարճեան
Գանձապահ՝ Գէորգ Էքմէքճեան
Գանձիչ՝ Վահրամ Բարսեղեան

Խորհրդականներ՝ Յակոբ Բալուլեան Վարդ-
գէս Գարաօղլանեան, Յակոբ Թոսունեան:
1962ին, սկստակապէս բաժինը նոր թափ կը
ստանայ, գայլիկներու սկստակապէս շարքեր
փոխանցուումով: Սկստակապէս խումբը կը վարէ
Վահրամ Բարսեղեան, իսկ գայլիկներու աքել-
լան է Կարո Քիւրքճեանը: Կը կազմակերպեն
բազմաթիւ արշաւներ եւ բանակումներ: 15
Սեպտեմբերին կը մասնակցին Զահլէի քաղաքա-
պետական պաշտօնական «Այգիներու տօն»ի
հանդիսութեանց, տողանցքներով եւ հայկական
տոհմիկ պարերով: Լիբանանի անկախութեան
տօնին առթիւ Զահլէի սկստակապէս խումբն ալ,
միւս մասնաճիւղերու շարքին, կը մասնակցի
ջահագնացութեան, Պէյրութի ակումբէն մինչեւ
Պուրճ Համուտ տողանցելով:

Ֆուլթայոլի գոյգ խումբերը կ'ունենան բարե-
կամական եւ ախոյեանական մրցումներ: Խումբ-
բը կը վարէ Յակոբ Քէշիշեան: Պասքեթպոլի

կազմը կ'ունենայ բազմաթիւ հանդիպումներ
Պէյրութի եւ Պուրճ Համուտի մասնաճիւղերու
երկրորդական խումբերուն դէմ: Պասքեթպոլի
խումբի վարիչն է Վրէժ Մաթոսեան:

Մասնաճիւղը կը կազմէ նաեւ թատերական
փոքր խումբ:

Կարեւոր նախաձեռնութիւններ իրագործած
այս կազմը, աշնան, ներքին դժուարութիւննե-
րու կը հանդիպի, ինչ որ պատճառ կը դառնայ
ատենապետին հրաժարելուն: Կազմը կը շարու-
նակէ գործել մնացեալ անդամներով, մինչեւ
1963ի Փետրուար ամիսը: Անդամական ընդհա-
նուր ժողովը տարեկան գործունէութիւնը «գնա-
հատելի» կ'որակէ:

3 Փետրուար 1963ին, կ'ընտրուի նոր վարչա-
կան կազմ:-

Ատենապետ՝ Ժողէֆ Գասարճեան
Ատենադպիր՝ Յակոբ Գարաօղլանեան
Գանձապահ՝ Ծորճ Էքմէքճեան
Խորհրդականներ՝ Ժագ Բալուլեան, Յովսէփ
Անկալաթեան:

1963ը կ'ըլլայ յաջող տարի մը, ակումբի
գնման իրականացումով: Մասնաճիւղը առողջ
ընթացքի մէջ է:

1964ի վարչական կազմը իր դիւանը կը կազ-
մէ հետեւեալ ձեւով:-

Ատենապետ՝ Ազատ Գասարճեան
Ատենադպիր՝ Յովսէփ Անկալաթեան
Գանձապահ՝ Փայլակ Բալուլեան
Սկստակապէս՝ Կարո Քիւրքճեան

Խորհրդականներ՝ Կիրակոս Թապաքեան,
Ժողէֆ Գասարճեան, Յովսէփ Տաղլեան, Գրի-
գոր Յովնանեան:

Այս կազմը ամբողջացնելով նախորդի ճիգե-
րը կը յաջողի ակումբի կալուածի սեփականա-
ցումը իր լրումին հասցնել, գործակցութեամբ
Լ.Օ.Խաչի Զահլէի Մասնաճիւղին: 1964ի ժամա-
նակաշրջանը կ'երկարի 14 ամիսներու վրայ:

18 Յուլիս 1965ին, տեղի կ'ունենայ անդա-
մական ընդհանուր ժողով, ուր, յետ շրջանա-

լարտ վարչութեան գործունէութեան տեղեկագրի քննարկման, կ'ընտրուի նոր վարչական կազմ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Ճորճ Էքմէքճեան
Ատենադպիր՝ Զոհրապ Տաղլեան
Գանձապահ՝ Ժողէֆ Գասարճեան

Խորհրդականներ՝ Յակոբ Բալուլեան, Յակոբ Սմբատեան: Տարուան ընթացքին վերջինս կը փոխարինէ Զոհրապ Տաղլեանը՝ իբրեւ վարչութեան քարտուղար:

Մարզական գետնի վրայ մասնաճիւղը իբրեւ նորութիւն կը կիրարկէ հեծելերշաւը, մասնակցելով պատկան ֆետերասիոնի ախոյեանական մրցումներուն, իբրեւ Բ. դասակարգի խումբ:

Սկաուտական գործունէութիւնը համեմատաբար տկար է՝ սահմանափակուած կարգ մը արշաւներով եւ Շրջանային Սկաուտական Խորհուրդի կազմակերպած Ռալի բանակումին փոքրաթիւ խմբակի մը մասնակցութեամբ:

Տարեշրջանի կարեւորագոյն ձեռնարկը՝ ճաշկերոյթ պարահանդէսը տեղի կ'ունենայ մեծ շուքով, Շթորայի Փարք Օթելի սրահներուն մէջ, պետական եւ պաշտօնական տեղացի անձնաւորութիւններու ներկայութեամբ: Ձեռնարկը կ'ապահովէ նիւթական կարեւոր եկամուտ, որով կարելի կ'ըլլայ ամբողջացնել ակումբի սեփականացման համար վճարելի վերջին գումարը՝ 2000 լ. ոսկի: Կալուածի ընդհանուր փոխարժէքը՝



ԶԱԿԼԵԻ Բ.Մ.Ը.Մ.Ի ՍԿԱՈՒՏՆԵՐԸ ԲՆՈՒԹԵԱՆ ԾՈՑԻՆ ՄԷՋ
15-7-45

15.000 լ. ոսկին կը գոյանայ Հ.Մ.Ը.Մ.ի եւ քոյր կազմակերպութեանց գործակցութեամբ: 20 ամիսներու վրայ, մինչեւ 1967ի Մարտ ամիսը երկարող իր գործունէութեան ընթացքին, վարչութիւնը կ'ունենայ ընդհանուր մուտք՝ 3604 լիբ. ոսկի, ընդհանուր ելք՝ 2619 լ.ո.: Կ'արձանագրուի նաեւ անդամական թուական աճ, ընդհանուրը՝ 83 անդամներ:

3 Մարտ 1967ին, կ'ընտրուի նոր վարչական կազմ, աշխատանքներու հետեւեալ բաժանումով.-

- Ատենապետ՝ Ճորճ Էքմեքճեան
- Փոխ ատենապետ՝ Յովսէփ Տաղլեան
- Ատենադպիր՝ Յակոբ Սմբատեան
- Գանձապահ՝ Յակոբ Քէշիշեան
- Հաշուապահ՝ Ժողէֆ Գասարճեան
- Մարզական պատասխանատու՝ Խաչիկ Պչաքճեան

Խորհրդական՝ Գրիգոր Յովնանեան:

Ակումբին կալուածը արձանագրուած է Ճորճ Էքմեքճեանի եւ Ճորճ Գասարճեանի անուան:

Հակառակ Շրջանային վարչութեան պաշտօնական յիշեցումներուն, 1968ի վարչական ընտրութեան ժողովը կ'ուշանայ: Ժողովը կը գումարուի Մայիսին:

10 Ապրիլ 1969ին, լսելէ ետք 18րդ Շրջանային Պատգամաւորական Ժողովի մասին պատգամաւորներու զեկուցումը, անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ: վարչութեան դիւանային կազմն է՝

- Ատենապետ՝ Յակոբ Քէշիշեան
- Ատենադպիր՝ Մանուկ Կէօքճեան
- Գանձապահ՝ Վահրամ Բարսեղեան
- Մարզական պատասխանատու՝ Յակոբ Պչաքճեան

Սկառուտական պատասխանատու՝ Կարօ Քիւրքճեան:

Տարին կ'ընթանայ յաջող ելոյթներով մարզական եւ սկառուտական գետիններուն վրայ: Կիրարկուող մարզաճիւղերը կը մնան նոյնը: Ակումբի ընձեռնած առաւելութիւնները լայնօ-

րէն կ'օգտագործուին Հ.Մ.Ը.Մ.ի եւ գործակից միութիւններու կողմէ ընկերային հաւաքներով:

12 Մարտ 1970ին, նախագահութեամբ Ժողէֆ Գասարճեանի եւ քարտուղարութեամբ Թորոս Թազուրեանի տեղի կ'ունենայ տարեկան անդամական ընդհանուր ժողով:

Այս ժողովէն ընտրուած վարչութիւնը երկար դադարէ մը ետք կը ձեռնարկէ աշխատանքի, դիւանային հետեւեալ պաշտօններով.-

- Ատենապետ՝ Յարութիւն Մուրատեան
- Ատենադպիր՝ Թորոս Թազուրեան
- Գանձապահ՝ Ժորճ Էքմեքճեան
- Մարզական պատասխանատու՝ Յակոբ Պչաքճեան

Խորհրդական՝ Ժողէֆ Գասարճեան:

Այս վարչութիւնը իրողապէս կը գործէ միայն 10 ամիս:

1971 տարեշրջանի վարչութեան անդամներ կ'ընտրուին հետեւեալները.-

- Ատենապետ՝ Յարութիւն Մուրատեան
- Փոխ ատենապետ՝ Յակոբ Քէշիշեան
- Ատենադպիր՝ Յակոբ Պչաքճեան
- Փոխ ատենադպիր՝ Յակոբ Սմբատեան
- Գանձապահ՝ Մանուկ Կէօքճեան

Խորհրդականներ՝ Թորոս Թազուրեան, Յակոբ Փիլաւճեան, Յովսէփ Անկալաթեան:

1971ի տարեկան պարանցիկը բացառիկ յաջողութիւն կ'արձանագրէ: Նիւթական եկամուտը կ'ըլլայ աւելի՛ քան նախորդող տարիներուն: Մարզական գետնի վրայ նորութիւն պիտի ըլլար մասնաճիւղի կազմակերպած Մարզական Օրը, որուն պատրաստութեան համար տարուած ճիւղերը սակայն, ակնկալուած արդիւնքը չեն տար:

8 Ապրիլ 1973ին, կ'ընտրուի նոր տարեշրջանի վարչական կազմը, որ իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Յովսէփ Տաղլեան
- Ատենադպիր՝ Ժողէֆ Գասարճեան
- Գանձապահ՝ Յակոբ Էքմեքճեան
- Խորհրդականներ՝ Յարութիւն Մուրատեան, Ազատ Գասարճեան:

Այս կազմին գործունեությունը պիտի ըլլար կարճատեւ: Ատենապետը, Օգոստոսին, կը մեկնի Ամերիկա: Երկու այլ վարչականներ չեն հետեւիր աշխատանքներուն: Այսուհանդերձ, նիւթական կարեւոր գործառնություն մը կ'արձանագրուի՝ 14.852 լ.ո. մուտքով եւ 2742 լ.ո. ելքով: Թերի է սակայն սկաուտական բաժնի գործունեությունը:

3 Մարտ 1974ին, վարչութեան անդամներ կ'ընտրուին Յակոբ Քէչիչեան, Վազգէն Թապաքեան, Մանուկ Կէօքճեան, Մանուկ Կոտալազեան, Յակոբ Պչաքճեան, Կարօ Քիւրքճեան եւ Ժան Պչարա:

Զահլէի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը կը շարունակէ իր գործունեությունը մերթ փայլուն, մերթ համեստ արդիւնքներով յատկանշուող տարեշրջաններով:

ԹՐԻՓՈՒԽ

Թրիփուլին, հիմնադրութեան ժամանակաշրջանի շարքով, Լիբանանի երրորդ մասնաճիւղն է, յատկանշուած իր բազմաճիւղ գործունեություններով: Սակայն ներկայ հատորի ժամանակաշրջանը կը սկսի Բ. Ընդհանուր Պատերազմի օրերուն, երբ մասնաճիւղը պարտադրաբար կը սահմանափակէ իր աշխատանքներու ծիրը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

Թրիփուլիի մասնաճիւղի 1940 տարեշրջանի վարչությունը իր կազմութեան վաւերացումը կը ստանայ Շրջանային Վարչութեան 14 Մարտ 1940 թուակիր նամակով:

Մասնաճիւղը կը գործէ հակառակ պատերազմական օրերու պարտադրած դժուարին կացություններուն: Մարզական գլխաւոր ճիւղը Ֆուտպոլն է: Խումբը բարեկամական մրցումներ կը կազմակերպէ տեղական խումբերու դէմ: Յատուկ կապեր կը հաստատուին քաղաքի



Հ.Մ.Ը.Մ.ի Թրիփուլիի ֆուտպոլի խումբը 1955ին

Ֆրանսական զինուորական ուժերու մարզական զանազան խումբերուն հետ, որոնց դէմ մրցումներ կը կազմակերպուին, եկամուտը յատկացնելու համար Ֆրանսական Կարմիր Խաչին:

14 Փետրուար 1944ին, անդամական ընդհանուր ժողովէն վարչականներ կ'ընտրուին՝ Հայկ Խարմանտարեան, Յովհաննէս Մարաչլեան, Ռոստոմ Եղոյեան, Կիրակոս Թնճուկեան, Կարպիս Թելեան, Գէորգ Գէորգեան եւ Արամ Թոգաճեան: Վարչությունը իր կողքին կը նշանակէ Սկաուտական Խորհուրդ հետեւեալ կազմով. վարչութեան ներկայացուցիչ՝ Յովհաննէս Մարաչլեան, խմբապետ՝ Կարպիս Թելեան, անդամներ՝ Սիմոն Թերճանեան, Փասքալ Փապուճեան եւ Արշաւիր Պերպէրեան:

1949ի ամրան, վարչությունը կը յաջողի վարձել երկրորդ ակումբ մը Մինա թաղամասին մէջ, այսպիսով տեղի անբաւարարությունը եւ ակումբային միջնորդութիւնը հարցերը միանգամայն լուծելով: Այս տարեշրջանին, Շրջանային Վարչությունը կը թելադրէ մասնաճիւղէն ներս սկսիլ պասքեթպոլի կիրակումը:

1950 տարեշրջանին մասնաճիւղը կը կիրարկէ երեք մարզաճիւղեր՝ Ֆուտպոլ, պասքեթպոլ եւ փինկ-փոնկ, ինչպէս նաեւ սկաուտիզմ: Անդամական ընդհանուր պատկերը կը ներկայանայ հետեւեալ ձեւով. սկաուտ՝ 23, մարզիկ՝ 25, օժանդակ՝ 40, գումար՝ 88: Նիւթական գործունեություն պատկերն է՝ մուտք՝ 945 լ.ո., ելք՝ 695 լ.ո.:

1951ին վարչութիւնը նիւթական պարտաւորութեանց մէջ թերացող 12 անդամներ կը հեռացնէ շարքերէն: Շրջանային Վարչութիւնը կը թելադրէ այս պարտաւորութեանց յարգուելուն համար վերջին ժամկէտ մը ճշդել անդամներուն: Հարցը կ'երկարի եւ կը մտահոգէ Շրջանային Վարչութիւնը: Առ այդ, Շրջանային Վարչութեան երկու անդամներ, 16 Ապրիլ 1952ին, կը մեկնին Թրիփոլի, տեղւոյն վրայ քննելու համար կացութիւնը: Հարցը կը փակուի տեղւոյն վրայ կայացած համաձայնութեամբ:

Մասնաճիւղը պասքեթպոլի փորձերը կը կատարէ C.S.C. ակումբի դաշտին վրայ:

7 Յունիս 1952ին, Շրջանային Վարչութեան ատենապետ Տոքթ. Ատուր Գապաքեանի ներկայութեան, մասնաճիւղի ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ:

Մարզականի կողքին վարչութիւնը այս տարեշրջանին կը ձեռնարկէ մշակութային գործունէութեան, լսարանային դրութեան մը հաստատումով: Լսարանային դասընթացքը կը սկսի 20 Հոկտեմբերին: Պաշտօնական բացման օրը դա-



Թրիփոլիի մասնաճիւղի աղջկանց պասքեթպոլի խումբը: Ոտքի՝ Ալիս Թերլեան, Սիրվարդ Կիլեան, Անայիս Կիրակոսեան, Սեդա Թերճանեան, Մարո Սրապոնեան, Մարո Սահակեան, Անահիտ Կիլեան: Նստած՝ Սօսի Պողոսեան, Գոհար Թոքաճեան

սախօսութեան կը հրաւիրուի Չարեհ Չարգուն:

1953ին, մասնաճիւղը կ'ապահովէ 14 Սեպտեմբեր 1953 թուակիր պետական նոր արտօնագիրը՝ թիւ 12: Որպէս խաղավայր կ'օգտագործուի Ազգ. վարժարանի բակը:

Յուլիս 5ին, մասնաճիւղը կը տօնէ «Հ.Մ. Ը.Մ.ի Օր»ը:

Մասնաճիւղի անդամներէն Սարգիս Կոնճեան կը պատրաստէ սկաուտական արարողական բաժնի գրքոյկ մը, որուն ձեռագիրը կը ղրկուի Շրջանային Վարչութեան՝ առ ի վաւերացում:

26 Փետրուար 1954ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը ընտրեց նոր վարչութիւն:

1955ին անդամներու ընդհանուր թիւն է 89, որոնցմէ 37ը՝ սկաուտական շարքերէն:

Տարեշրջանի ընթացքին մասնաճիւղը կը կազմէ պասքեթպոլի աղջկանց խումբ:

1956ին մասնաճիւղի անդամներէն Կարպիս Թելեան կը նշանակուի Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի Սկաուտական Վերին Մարմնի անդամ: Կիրակոս Գալայճեան կը վարէ Ֆութպոլի եւ սկաուտական ճիւղի աշխատանքները:

26 Յունուար 1957ին, տեղի կ'ունենայ անդամական ընդհանուր ժողով՝ նախագահութեամբ Լեւոն Թոքաճեանի եւ քարտուղարութեամբ Գէորգ Շամմասեանի: Ժողովը, լսելէ ետք շրջանաւարտ վարչութեան գործունէութեան միամեայ տեղեկագիրը, կ'ընտրէ մասնաճիւղի նոր վարչական կազմ:-

Ատենապետ՝ Անդրանիկ Չոլաքեան

Ատենադպիր՝ Վահան Վարդապետեան

Գանձապահ՝ Գրիգոր Թելեան:

Այս տարեշրջանին մասնաճիւղի արտօնագիրը կը վաւերացուի: Արտօնագրի թիւն է 8204, կիրարկուող յաւելեալ մարզախաղը՝ փինկ-փոնկ: Մասնաճիւղը ունի Ֆութպոլի մէկ խումբ, պասքեթպոլի տղոց եւ աղջկանց խումբեր եւ փինկ-փոնկի խումբ մը:

1957ին, անդամներու ընդհանուր թիւն է 71: Տարուան նիւթական գործունէութեան պատկերն է՝ մուտք՝ 1650 լ.ո., ելք՝ 1530 լ.ո.:

15 Փետրուար 1958ին, անդամական ընդհանուր ժողովով մասնաճիւղը կ'օժտուի նոր վարչական կազմով:-

Ատենապետ՝ Անդրանիկ Չոլաքեան

Ատենադպիր՝ Վահան Վարդապետեան

Գանձապահ՝ Գրիգոր Թելեան

Խորհրդականներ՝ Մուրատ Յոլակեան, Գէորգ Շամմասեան, Յակոբ Կէօյքէշիչեան, Երջանիկ Սահակեան:

Վարչութեան գործադրելի գլխաւոր ծրագիրն է սկաուտական շարքերու վերակազմութիւնը: Ծրագիրը կը յաջողի մասամբ:

Մարզական գետնի վրայ Ֆութպոլի եւ պասքեթպոլի ճիւղերը կը գործեն բնականոն ընթացքով: Մասնաճիւղի գոյգ խումբերը իրենց մասնակցութիւնը կը բերեն Չատկական միջ-մասնաճիւղային մրցումներուն:

Ֆութպոլի խումբին մաս կը կազմեն Անդրանիկ Չոլաքեան, Վահան Վարդապետեան, Երջանիկ Սահակեան, Սեպուհ Մահտեսեան, Մկրտիչ Օտապաչեան, Ժան Հացագործեան, Լեւոն Հացագործեան, Սարգիս Աէյթունեան, Վահէ Տատուրեան, Նազարէթ Գարակէօզեան, Վարուժան Թավլեան, Աւետիս Արապեան, Մուրատ Յոլակեան եւ Երջանիկ Տնկիկեան: Իսկ պասքեթպոլի խումբի անդամներն են՝ Պերճ Նարկիզեան, Խաչիկ Միքայէլեան, Մանուէլ Սահակեան, Յակոբ Փափազեան, Էտի Ուրֆալեան, Յովսէփ Չայլեան, Նուպար Յարութիւնեան, Կարպիս Եղոյեան, Սարգիս Համբարեան եւ Նիկողոս Պետրոսեան:

1959ին, վարչական կազմի ատենապետն է Երջանիկ Տնկիկեան

Ատենադպիր՝ Անդրանիկ Չոլաքեան

Գանձապահ՝ Վահան Վարդապետեան

Գրադարանի պատասխանատու՝ Մուրատ Յոլակեան

Պասքեթպոլի պատասխանատու՝ Երջանիկ Սահակեան

Խորհրդական՝ Յակոբ Կէօյքէշիչեան

Սկաուտական պատասխանատու՝ Գրիգոր Թելեան:

Այս կազմը ներքին դժուարութիւններ կը դիմագրաւէ, յատկապէս քոյր կազմակերպութիւններու հետ ահումբի գործածութեան կապակցաբար: Վարչութեան ատենապետը կը հրատարի, երեք այլ վարչականներ երկար բացակայութիւն կ'արձանագրեն: Գործունէութեան բեռը կը ծանրանայ մնացեալ երեք վարչականներու ուսին: Շրջանային վարչութիւնը 300 լոսկիի նպաստով կ'օժանդակէ վարչութեան ճիգերուն, մարմնամարզի ճիւղի զարգացման եւ գոյքերու գնման նպատակով:

1959ին, Հալէպի մէջ, միջ-մասնաճիւղային մարզական խաղերուն Թրիփոլի մասնաճիւղի ներկայացուցիչներն են՝ Ֆութպոլի խումբ՝ Երջանիկ Տնկիկեան, Անդրանիկ Սրապոնեան, Գէորգ Իսկենեան, Գեղամ Երէցեան, Ժիրայր Սահակեան, Անդրանիկ Չոլաքեան, Լեւոն Հացագործեան, Յարութիւն Ագրապեան, Տիգրան Օհանեան, Յակոբ Հացագործեան, Վահան Վարդապետեան, Մուրատ Յոլակեան, Գրիգոր Վարդիվառեան, Սերոբ Սերոբեան, Սողոմոն Փանոսեան եւ Սարգիս Իսկենեան:

Տղոց պասքեթպոլի կազմ՝ Մանօ Սահակեան, Երջանիկ Սահակեան, Յակոբ Փափագեան, Խաչիկ Միքայէլեան, Սարգիս Համբարեան, Զոհրապ Մելիքեան, Էտի Ուրֆալեան, Նուպար Յարութիւնեան, Յովսէփ Չայլեան, Արա Աղաճանեան, Տիգօ Համբարեան, Համբարձում Ալեքսանեան:

Աղջկանց պասքեթպոլի կազմ՝ Սօսի Պօղոսեան, Ալիս Թերզեան, Մարի Սահակեան, Էլիզ Չաթոյեան, Անահիտ Կիրակոսեան, Սիրվարդ Կիւլեան, Անահիտ Կիւլեան եւ Մարի Սրապոնեան:

Պասքեթպոլի մարզիկներէն՝ Խաչիկ Միքայէլեան Օգոստոսին կը հետեւի Շրջանային վարչութեան կազմակերպած մարզիչներու դասընթացքին:

20 Փետրուար 1960ին, Թրիփոլի Հ.Մ.Ը.Մ.ի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Գեղամ Գաբրիէլեան
Ատենադպիր՝ Մուրատ Յոլակեան
Գանձապահ եւ սկաուտական պատասխանատու՝ Անդրանիկ Սրապոնեան
Գոյքապահ՝ Խաչիկ Միքայէլեան
Պասքեթպոլի պատասխանատու՝ Երջանիկ Սահակեան

Մարմնամարզի պատասխանատու՝ Զոհրապ Մարգարեան

Խորհրդական՝ Էտի Ուրֆալեան:

Այս վարչական կազմը կը գործէ մինչեւ 28 Փետրուար 1961 թուականը, յաջող արդիւնքներ արձանագրելով Ֆութպոլի, փինկ-փոնկի եւ պասքեթպոլի տղոց եւ աղջկանց խումբերու գործունէութեամբ: Մասնաճիւղը իր ներկայացուցիչը ունի փինկ-փոնկի Ֆետերասիոնի մօտ՝ յանձինս Գեղամ Գաբրիէլեանի:

Սկաուտական գործունէութիւնը կը վարէ սկաուտական խորհուրդը՝ բաղկացած Անդրանիկ Սրապոնեանէ, Վարդգէս Սարեանէ եւ Անդրանիկ Ալեքսանեանէ, որոնց կը գործակցին Պաղտասար Ուրֆալեան եւ Նուպար Թայգալտրանեան: Սկաուտական կազմը կը բաղկանայ 25 անդամներէ:

Այս տարեշրջանին կը վերակազմակերպուի մասնաճիւղի «Շաւարշ Քրիսեան» գրադարանը, նոր գիրքերու ճոխացումով եւ հին գիրքերու կազմութեամբ: Այս աշխատանքը ձեռնհասօրէն կը վարէ Հայկ Փափագեանը: Ընկերային յաջող հաւաքոյթներ եւ պտոյտներ նոր հետաքրքրութիւն կը ստեղծեն Հ.Մ.Ը.Մ.ի Թրիփոլի մասնաճիւղին շուրջ: Տարեկան գործունէութիւնը անդամական ընդհանուր ժողովին կողմէ կ'որակուի «գնահատելի» բանաձեւով: Անդամներու ընդհանուր թիւն է 60: Տարեշրջանի նիւթական գործունէութիւնը՝ մուտք՝ 1189 լոսկի, ելք՝ 1040 լոսկի:

7 Մարտ 1961ին, մասնաճիւղի վարչական կազմին անդամներ կ'ընտրուին հետեւեալները.-

Ատենապետ՝ Անդրանիկ Չոլաքեան
Ատենադպիր՝ Կիրակոս Գալայճեան
Գանձապահ՝ Կարպիս Եղոյեան

Խորհրդականներ՝ Ջոհրապ Մարգարեան, Վարուժան Թավլեան:

Թէեւ նուազ տարողութեամբ, այս կազմն ալ կը շարունակէ նախորդին գործունէութեան ընթացքը մինչեւ 2 Մարտ 1962, երբ անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ 1962 տարեշրջանի վարչական կազմ բաղկացած եօթը անդամներէ:-

Ատենապետ՝ Երջանիկ Տնկիկեան
Փոխ ատենապետ եւ գանձապահ՝ Տոքթ. Յակոբ Փափագեան

Ատենադպիր՝ Վարուժան Թավլեան
Գոյքապահ՝ Մանուկ Այվագեան
Ֆուլթայոլի պատասխանատու՝ Գրիգոր Թելեան

Պասքեթի եւ փինկ-փոնկի պատասխանատու՝ Կարպիս Եղոյեան:

Սկաուտական պատասխանատու՝ Անդրանիկ Սրապոնեան:

1962 տարեշրջանի գլխաւոր իրականացումը կ'ըլլայ սկաուտական խումբին զօրացումը: Շուրջ 50 սկաուտներէ եւ գայլիկներէ բաղկացած կազմը ամբողջութեամբ կը զգեստաւորուի եւ խանդավառ գործունէութեամբ իր վրայ կը կեդրոնացնէ Թրիփոլի հայութեան ուշադրութիւնը: Կազմը կը մասնակցի Թրիփոլի նորակառոյց եկեղեցւոյ օժման արարողութեան:

Վարչութիւնը իր գործունէութիւնը կը փակէ 19 Յունուար 1963ին, իր կազմակերպած պարահանդէսով, որուն բարոյական եւ նիւթական յաջողութիւնները կ'արժանանան ընդհանուր գնահատանքի: Սակայն, նոր վարչութեան ընտրութիւնն ու դիւանի կազմութիւնը երկար ժամանակ կը խլեն: Մասնաճիւղը կը ստանայ պետական նոր ճանաչում՝ 14 Սեպտեմբեր 1963 թուակիր՝ թիւ 12: Նորընտիր վարչութեան մաս կը կազմեն Միսաք Պալիկեան, Յովհաննէս Պետրոսեան, Անդրանիկ Չոլաքեան, Սարգիս Կիւլվարդեան, Անդրանիկ Սրապոնեան եւ Ժաք Քեհքաճեան: Կազմը գործի գլուխ կը մնայ մինչեւ 9 Մայիս 1964:

Այս թուականին կ'ընտրուի նոր վարչական

կազմ, որուն դիւանը կը կազմուի հետեւեալ ձեւով:-

Ատենապետ՝ Միսաք Պալիկեան
Փոխ ատենապետ՝ Անդրանիկ Չոլաքեան
Ատենադպիր՝ Տիգրան Առաքելեան
Գանձապահ՝ Սարգիս Կիւլվարդեան
Մարզական պատասխանատու՝ Գրիգոր Թելեան

Սկաուտական պատասխանատու՝ Գէորգ Կէօյքեշիչեան

Գոյքապահ՝ Սարգիս Ռստիկեան:

Մասնաճիւղը մարզական, սկաուտական, ազգային եւ ընկերային մարզերէն ներս յաջող գործունէութիւն կ'արձանագրէ: Շինարարական գործունէութեամբ եւ թաղական խորհուրդի հետ համաձայնաբար, դպրոցի բակը կը վերածէ պասքեթայոլի դաշտի, որ միաժամանակ կը ծառայէ դպրոցի աշակերտութեան:

Մարզական գետնի վրայ յաջող ելոյթներ կ'ունենայ փինկ-փոնկի խումբը յաճախակի յաղթանակներով: Ֆուլթայոլի խումբը կը գործէ կանոնաւոր ընթացքով:

Սկաուտական մարզէն ներս խումբը իր աստիճանաւորական կազմով խանդավառ աշխատանք կը տանի մասնակցելով էհտէնի ընդհանուր բանակումին: Խումբէն 5 աստիճանաւորներ կը մասնակցին Շրջանային Սկաուտական Խորհուրդի կազմակերպած դպրոց-բանակումին, 16էն 23 Օգոստոս 1964ին, Պոլոնիա գիւղին մէջ, ամբարելով թեքնիք գիտութիւն եւ փորձառութիւն:

Տարեշրջանի նիւթական գործառնութեան պատկերն է՝ մոտաք՝ 1153 լ.ոսկի, ելք՝ 1022 լ.ոսկի:

13 Մայիս 1965ին, նախորդ վարչական կազմը նոյնութեամբ կը վերընտրուի բացի Սարգիս Ռստիկեանէն, որ կը փոխարինուի Աւետիս Իսկէնեանով, գոյքապահի պաշտօնին համար: Սակայն, այս կազմը գործի բերմամբ, եւ քաղաքէն բացակայութեան պատճառով չի կրնար հաւաքական աշխատանք յաջողցնել: Գործի գլուխ կը

մնան միայն երեք վարչականներ՝ որոնց գործունեությունը կը սահմանափակուի Լ.Օ.Նաչի հետ գործակցաբար պարահանդեսի մը կազմակերպումով եւ անդամներու եւ սկաուտներու միջեւ ընկերային համակրական հաւաքոյթներու կայացումով:

1966 տարեշրջանի վարչությունը կ'ընտրուի 6 փետրուարին, իր դիւանը կը կազմէ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Գրիգոր Թելեան
- Ատենադպիր՝ Րաֆֆի Խարմանտարեան
- Գանձապահ՝ Սարգիս Կիւլվարդեան
- Սկաուտական պատասխանատու՝ Սարգիս Առաքելեան

Մարզական պատասխանատու՝ Աւետիս Իսկէնեան:

Այս կազմը կը յաջողցնէ պասքեթպոլի զոյգ մը մրցաշարքեր տղոց, աղջկանց եւ կրտսերներու խումբերուն եւ Պէյրուսթէն, Պուրճ Համուտէն համապատասխան ուժի կազմերուն միջեւ, յաջորդաբար՝ 19 Յունիսին եւ 13 Նոյեմբերին: Մրցաշարքերը տեղի կ'ունենան Ազգ. վարժարանի բակին մէջ, ուր մասնաճիւղը սարքած է եւ լուսաւորած պասքեթպոլի դաշտը: Այս սարքաւորումի ծախսերը ծանր կը կշռեն վարչութեան գանձին վրայ:

Մարզական երկրորդ յաջող ճիւղը փինկ-փոնկն է: Խումբը 11 անդամներով կը մասնակցի Լիբանանի ախոյեանութեան մրցաշարքին, ինչպէս նաեւ կը կազմակերպէ բարեկամական մրցաշարքեր:

Սկաուտական բաժինը կ'արձանագրէ յաջող գործունեությունը: Խումբը կը մասնակցի միջմասնաճիւղային բանակումին, կը կազմակերպէ ճիւնազնացություն եւ մասնաճիւղի տարեկան բանակումը, մասնակցությունեամբ Պաղտատէն, Գահիրէէն, Կիպրոսէն եւ Երուսաղէմէն ժամանած Հ.Մ.Ը.Մ.ական պատուիրակություններու: Դժբախտաբար, բանակումը կը մնայ կիսաւարտ, տեղւոյն մէջ պատահած միջ-գիւղական կռիւներու պատճառով:

1966ին, մասնաճիւղը ունի 46 գործօն անդամ եւ 23 սկաուտ:

9 Մարտ 1967ին, կ'ընտրուի նոր վարչական կազմ.-

- Ատենապետ՝ Գրիգոր Թելեան
- Փոխ ատենապետ՝ Աւետիս Արապեան
- Ատանադպիր՝ Րաֆֆի Խարմանտարեան
- Գանձապահ՝ Սարգիս Կիւլվարդեան
- Գոյքապահ՝ Սահակ Մահտէսեան
- Սկաուտական պատասխանատու՝ Սարգիս Առաքելեան

Փինկ-փոնկի պատասխանատու՝ Յովսէփ Քէշիշեան:

Այս շրջանի մարզական ճիւղէն զգալի է Ֆութպոլի բացակայությունը: Վարչությունը կը ծրագրէ փինկ-փոնկի եւ պասքեթպոլի խումբերով այցելել Երուսաղէմի մասնաճիւղին:

16 Մայիս 1968ին, ընտրեալ վարչութեան անդամներն են հետեւեալները.-

- Ատենապետ՝ Գրիգոր Թելեան
- Ատենադպիր՝ Աւետիս Արապեան
- Գանձապահ՝ Սարգիս Կիւլվարդեան
- Սկաուտական պատասխանատու՝ Յովսէփ Կէօյքեշիշեան

Փինկ-փոնկի պատասխանատու՝ Սարգիս Խաչերեան

Գոյքապահ՝ Վարդգէս Թահմազեան

Խորհրդական՝ Կարօ Պողոսեան, որուն երկրէն մեկնումէն ետք զինք կը փոխարինէ էտի Ուրֆալեանը, փոխ ատենապետի եւ մարզական պատասխանատուի պաշտօնով:

Այս տարեշրջանին անդամներու ընդհանուր թիւն է 86, որոնցմէ 23ը սկաուտական շարքերէն: Վարչությունը Ազգային վարժարանին կը տրամադրէ մարզանքի ուսուցիչ, կը վերակազմակերպէ մասնաճիւղի 800 հատոր պարունակող գրադարանը: Փինկ-փոնկը կը կիրարկուի Նաւասարդ աղումբէն ներս, իսկ պասքեթպոլի տղոց եւ աղջկանց խումբերը կ'օգտագործեն Ազգային վարժարանի դաշտը: Սկաուտական կազմը կը

մասնակցի Այնճարի մէջ կայացող միջ-մասնա-
ճիւղային ընդհանուր բանակումին: Կազմէն եր-
կու սկաուտներ կը մասնակցին Շրջանային
Սկաուտական Խորհուրդի կազմակերպած Ա-
կարգի պատրաստութեան դպրոց-բանակումին:

Վերոյիշեալ գործունէութեան նիւթաբարո-
յական տեղեկագրի ընթերցումէն ետք, 9 Փետր-
ուար 1969ին, կ'ընտրուի նոր վարչական կազմ:-

- Ատենապետ՝ Էտի Ուրֆալեան
- Ատենադպիր՝ Յարութիւն Պապահեքեան
- Գանձապահ՝ Սարգիս Կիւլվարդեան
- Պասքեթպոլի պատասխանատու՝ Աւետիս

Արապեան

Փինկ-փոնկի պատասխանատու եւ գոյքա-
պահ՝ Վարդգէս Թահմազեան:

1969ի միամեայ գործունէութեան աւարտին,
մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովին
կողմէ 10 Փետրուար 1970ին, կ'ընտրուի նոր
վարչական կազմ, աշխատանքներու հետեւեալ
բաժանումով:-

- Ատենապետ՝ Գրիգոր Թելեան
- Ատենադպիր՝ Յարութիւն Սարեան
- Գանձապահ՝ Սարգիս Կիւլվարդեան
- Գոյքապահ՝ Վարդգէս Թահմազեան

Սկաուտական պատասխանատու՝ Յովհան-
նէս Թելեան

Պասքեթպոլի պատասխանատու՝ Աւետիս
Արապեան

Փինկ-փոնկի պատասխանատու՝ Սարգիս
Խաչերեան:

Կիրարկուող մարզական ճիւղերը կը մնան
նոյները՝ պասքեթպոլ եւ փինկ-փոնկ, որուն հա-
մար մասնաճիւղը կ'օժտուի Շրջանային Վարչու-
թեան կողմէ նուիրուած նոր սեղանով եւ կազ-
մածով: Սկաուտական խումբը կը գործէ ըստ
առաջուոյն: Վարչութեան համար անյաղթահարե-
լի կը դառնայ նիւթական անձուկ կացութիւնը՝
յատկապէս ալումբի վարձքի բարձրացման
պատճառով:

23 Փետրուար 1971ին, ընտրեալ վարչու-
թեան անդամներն են՝

- Ատենապետ՝ Միսաք Պալիկեան

Փոխ ատենապետ՝ Վահէ Խարմանտայեան
Ատենադպիր՝ Վահէ Խարմանտայեան
Գանձապահ՝ Սարգիս Խաչերեան
Պասքեթպոլի պատասխանատու՝ Արիս Կէօյ-
քեչիշեան

Սկաուտական պատասխանատու՝ Յովհան-
նէս Թելեան:

Այս վարչական կազմը կը յաջողի կանոնաւո-
րել իր փոխ յարաբերութիւնները «Նաւասարդ»
ալումբի վարչութեան եւ գործակից կազմակեր-
պութիւններուն հետ, փոխադարձ հասկացողու-
թեամբ: Մարզական խումբերը կը մասնակցին
Շրջանային Վարչութեան կազմակերպած միջ-
մասնաճիւղային մրցաշարքերուն, Լիբանանի
զանազան մասնաճիւղերէն ներս: Նիւթական
կացութիւնը տակաւ կը բարելաւուի:

1972 տարեշրջանին, վարչական կազմի մաս-
նակի փոփոխութեամբ, մասնաճիւղը կը գործէ
նախորդ տարեշրջանի նմանողութեամբ: Վար-
չութեան բացակայ անդամները փոխարինելու
կը հրաւիրուին Սերոբ Դաւիթեան եւ Նազարէթ
Քէօմիւրճեան: Գործունէութեան ժամանակաշր-
ջանը կ'երկարի մինչեւ 1973ի Մարտ ամիսը:

1 Ապրիլ 1973ին, կ'ընտրուի նոր վարչական
կազմ պաշտօններու հետեւեալ բաժանումով:-

- Ատենապետ՝ Րաֆֆի Խարմանտայեան
- Ատենադպրուհի՝ Մայտա Օհանեան
- Գանձապահ՝ Ասատուր Տէմիրճեան
- Խորհրդականներ՝ Վահէ Խարմանտայեան,
Նազարէթ Քէօմիւրճեան, Կարօ Չաքմաքճեան,
Հերմինէ Աբրահամեան:

Հազիւ մէկ ամիս գործելէ ետք, կազմէն 4
անդամներ իրենց հրաժարականը կը ներկայաց-
նեն Շրջանային Վարչութեան: Վերջինս կը մեր-
ժէ հրաժարականը եւ կազմի վերատեսուութեամբ
վարչութեան քարտուղարութեան պաշտօնին կը
հրաւիրուի Յովհաննէս Թելեանը:

Սակայն, ներքին եւ գործակից կազմակեր-
պութեանց հետ անհասկացողութիւնները կը
մնան անլոյծ, հակառակ Շրջանային Վարչու-
թեան բազմաթիւ միջամտութիւններուն եւ

վարչութիւնը վերականգնելու փորձերուն, որոնք կ'երկարին մինչեւ Հոկտեմբերի վերջաւորութիւնը:

Մարզական եւ սկստական ճիւղերը կը գործեն բնականոն ձեւով եւ նախապէս վստահուած պարտականութիւններու պատասխանատուներու հսկողութեամբ:

1973ի Նոյեմբերին, Շրջանային Վարչութիւնը նախատեսելով անդամական ընդհանուր ժողովի մը ձախողութիւնը, կը նշանակէ վարչական կազմ: Վերջինս՝ բարեփոխումներէ ետք կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Անդրանիկ Սրապոնեան
- Ատենադպիր՝ Սարգիս Խաչերեան
- Գանձապահ՝ Սարգիս Ռոստիկեան

Խորհրդականներ՝ Յակոբ Տէմիրճեան, Ասատուր Կիւլեքճեան:

Այս կազմն ալ չի մնար գործի վրայ: Ներքին անհասկացողութիւնները օրէ օր աւելի կը սրին: Մասնաճիւղը ի վիճակի չէ իր ահումբի տարեկան վարձքը հոգալու: Շրջանային Վարչութեան հետ բազմաթիւ հանդիպումները ի վերջոյ կը յանգին համաձայնութեան, որով 1974ի Ապրիլին, Շրջանային Վարչութիւնը կը նշանակէ նոր վարչական կազմ, որուն մաս կը կազմեն հետեւեալ անդամները.- Յովհաննէս Գիւտներեան, Յարութիւն Պապահեքեան, Սարգիս Խաչերեան, Սարգիս Ռոստիկեան, Ասատուր Կիւլեքճեան եւ Վաչէ Հարմանտարեան: Այս կազմին վրայ կ'աւելցուի մասնաճիւղի սկստական պատասխանատուն: Շրջանային Վարչութիւնը կը հոգայ նաեւ նախորդ վարչութեան յետնեալ պարտքերը՝ 2000 լ.ոսկիի յատկացումով:

1974ի Ապրիլ ամիսէն սկսեալ Հ.Մ.Ը.Մ.ի Թրիփոլի մասնաճիւղը կը վերադառնայ իր նախկին բնականոն գործունէութեան հունին:

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ

Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի կազմաւորման առաջին տարիներուն (1935-1939)

կը հետեւին գործունէութեան որակով աւելի զօրացած տարիներ: Հակառակ Երկրորդ Աշխարհամարտի պատճառով ստեղծուած առօրեայի դժուարութիւններուն, մասնաճիւղի ղեկավարութիւնը կը փորձէ աւելի հաստատ հիմերու վրայ դնել Հ.Մ.Ը.Մ.ի մարզական գործունէութիւնը՝ ստեղծելով աւելի նպատակայարմար պայմաններ, մարզադաշտի եւ սեփական ահումբ նստավայրի պրպտումով: Մարզականի կողքին սկստական շարժումն ալ յաւելեալ խնամքի կ'արժանանայ, լաւապէս դիմագրաւելու համար սկստական շարքերու բացառիկ արագութեամբ ընթացող թուական աճը: Դժուարին եւ երկարաշունչ ճիգերու կարօտող նպատակներ, 1940-1974 ժամանակաշրջանին հետզհետէ լուծումներու պիտի արժանանան թէկուզ սահմանափակ չափերով:

ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆ

24 Նոյեմբեր 1940ին, տեղի կ'ունենայ անդամական ընդհանուր ժողով: Նորընտիր վարչութեան անդամներն են՝

- Ատենապետ՝ Յակոբ Պուպուչեան
- Ատենադպիր՝ Հայկազ Յակոբեան
- Գանձապահ՝ Սարգիս Գուլայեան

Խորհրդականներ՝ Ա. Պոտիկեան, Օննիկ Գուլեան:

Տարեշրջանի ընթացքին անդամներու ընդհանուր թիւը 63էն կը բարձրանայ 75ի: Նիւթական գործունէութեան պատկերն է՝ մուտք՝ 240,26 լ. ոսկի, ելք՝ 109,39 լ. ոսկի:

14 Դեկտեմբեր 1940ին, Յակոբ Պուպուչեան եւ Գալուստ Թոփալեան մասնաճիւղը կը ներկայացնեն Հ.Մ.Ը.Մ.ի 6րդ Պատգամաւորական ժողովին:

Յաջորդող տարիներուն անդամական թիւի աճը կը մնայ համեստ, քաղաքական պայմաններու եւ շրջանէն մեծ թիւով մեկնողներուն պատճառով: 1942ին, անդամներու ընդհանուր թիւն է 82: Նիւթական գործունէութիւնը համեմատաբար կը բարելաւուի. ընդհանուր մուտք՝ 312,80

լ.ո., ելք՝ 235,55 լ.ո.: 29 Նոյեմբեր 1942ի անդամական ընդհանուր ժողովին կողմէ ներկայացուցիչներ կ'ընտրուին Յակոբ Պուպուչեան եւ Սուրէն Բուչիկեան: Անոնք, այլ հարցերու կարգին կարեւորութեամբ Նրդ Պատգամաւորական ժողովի ուշադրութիւնը կը հրաւիրեն այն իրողութեան վրայ, թէ՛ առանց սեփական Ֆուլթպուլի դաշտի մը մասնաճիւղի մարզական գործունէութիւնը կը մնայ ջլատուած, իսկ Պուրճ Համուտը իր միջոցներով ի վիճակը չէ նման աշխատանք մը առանձին իրագործելու: Պատգամաւորական ժողովը տեղւոյն վրայ չի կրնար լուծում մը գտնել այս հարցին եւ զայն կը փոխանցէ նոր ընտրուելիք Շրջանային Վարչութեան:

1943 եւ 1944 տարիներուն վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Յակոբ Պուպուչեանը, իսկ ատենադպիրն է Սուրէն Բուչիկեանը:

1945 եւ 1946ին ատենապետութիւնը կը փոխանցուի Արշակիր Էօրէճեանի, իսկ ատենադպիրի պաշտօնին վրայ կը մնայ Սուրէն Բուչիկեանը: Գործունէութեան դժուարին տարիներ, երբ դէպի հայրենիք ներգաղթի հոսանքը ժողովրդական՝ հետեւաբար անդամական՝ տեղաշարժի առիթներ կը ստեղծէ, յաճախ անտեղիօրէն պարտադրուած հրաժարականներով: 1947 եւ 1948 տարեշրջաններուն մասնաճիւղի ղեկավարութիւնը կը ստանձնեն հին ու հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներ, որոնց կարգին՝ Արշակունի Ռաֆայէլեան (ատենապետ), Ստեփան Գարակէօզեան (ատենադպիր), Յարութիւն Եարտըմեան, Յովհաննէս Տէր Յարութիւնեան (ֆուլթպուլի խմբապետ), Յակոբ Մինասեան, Յովհաննէս Թերճանեան (սկառուտական խմբապետ), Երուանդ Գազանճեան, Հայկազ Յակոբեան, Խաչեր Յակոբեան եւ ուրիշներ: Գործակցաբար, անոնք ամէն ճիգ ի գործ կը դնեն կորստեան մատնուած արդիւնքները վերագտնելու եւ նոր մարդուժով օժտելու համար մասնաճիւղի վարչամեքենան:

20 Փետրուար 1949ին, անդամական ընդհանուր ժողովի կողմէ վարչականներ կ'ընտրուին Յարութիւն Պէօյիւքեան եւ Արամ Այվազեան՝

անել կացութենէն դուրս բերելու համար մասնաճիւղի գործունէութիւնը:

7 Մարտ 1949ին, մասնաճիւղը կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան երեսնամեակը՝ նախագահութեամբ Տոքթ. Արամ Պաղտասարեանի: Հանդիսութեան խօսք կ'առնեն Զարեհ Զարգուն եւ Տոքթ. Այվազեան:

Հակառակ այս կազմի ճիգերուն, տակաւին մասնաճիւղը կը մնայ 1940ական թուականներու երկրորդ կիսուն ստեղծուած դժուարութիւններուն առջեւ, որոնց վրայ կու գան աւելնալ Հ.Յ.Դ. պատանեկան միութիւններու հետ գործակցութեան համադրումի պակասին պատճառով ստեղծուած պայմանները:

Պէտք էր սպասել մինչեւ 1950 թուականը, որպէսզի մասնաճիւղը դուրս գար տիրող անհակազուելի կացութենէն: Վարչութիւնը, 24 Ապրիլ 1950 թուակիր նամակով, Շրջ. Վարչութեան կը տեղեկացնէ, թէ ինքզինք անզօր կը նկատէ վարելու մասնաճիւղէն ներս տիրող սկառուտական շարքերու կանոնաւորումը եւ արտօնութիւն կը խնդրէ կայացնելու անդամական ընդհանուր ժողով, ընտրելու համար նոր վարչական կազմ: Յետ շրջանի վեթերան անդամներու հետ խորհրդակցութեան, Օգոստոսին միայն Շրջանային Վարչութիւնը կ'որոշէ նշանակել Պուրճ Համուտի մասնաճիւղի առժամեայ վարչութիւն, բաղկացած հետեւեալներէն. Արշակունի Ռաֆայէլեան, Յովհաննէս Պերպէրեան, Յակոբ Մինասեան, Կիրակոս Գալֆայեան, Յարութիւն Եարտըմեան, Յովհաննէս Թերճանեան, Անդրանիկ Դարբինեան, Խաչեր Յակոբեան եւ Յովհաննէս Լաբաչեան: Անոնց պարտականութիւնն էր կազմակերպել անդամական ընդհանուր ժողով, ընտրելու համար նոր վարչութիւն:

Այս կազմը կը գործէ 1950ի Նոյեմբերէն մինչեւ 4 Նոյեմբեր 1951, վարելով նաեւ մասնաճիւղի ընթացիկ գործունէութիւնը:

4 Նոյեմբեր 1951ին, անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչութիւն հետեւեալ կազմով.-

Ատենապետ՝ Յակոբ Մինասեան
Ատենադպիր՝ Արսէն Նաճարեան
Գանձապահ՝ Պետրոս Մանկեան
Գոյքապահ՝ Ալպէր Ունճեան
Ֆուլթպոլի պատասխանատու՝ Զաքար Զորպաճեան

Մարզական պատասխանատու՝ Ժորժ Թորոսեան

Սկաուտական խմբապետ՝ Յովհաննէս Թերճանեան:

Այս կազմի գլխաւոր մտահոգութիւնը կ'ըլլայ մարզիկներու շարքերուն բարոյական դաստիարակութիւնը: Վարչութիւն եւ Շրջանային վարչութիւն կը դիմեն կարգապահական տնօրինումներու դաշտերու վրայ մարզիկներու կեցողածքները սրբազրելու համար: Մարզիկներու եւ սկաուտական շարքերու գտումը յաջողութիւն մը կ'ըլլայ: 1952ի վերջաւորութեան այս կազմը եւս դժուարութիւններ կ'ունենայ ամբողջացնելու իր գործունէութեան ժամանակաշրջանը եւ առ այդ տեղեակ կը պահէ Շրջանային վարչութիւնը: 9 Փետրուար 1953 թուակիր իր նամակով Շրջանային վարչութիւնը մասնաճիւղի վարչական կը նշանակէ հետեւեալները.- Արչակունի Ռաֆայէլեան, Կարապետ Կիւլիզեան, Աթանաս Գոճակէօզեան, Սարգիս Ազնաւորեան, Զաքար Զորպաճեան, Յարութիւն Եարտըմեան եւ Վարդիվառ Յովհաննէսեան: Նշանակման նամակին մէջ կը կարդանք. «Շրջանային վարչութիւնն ձեզ կը նշանակէ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի շրջանի առժամեայ վարչութիւն եւ ձեր վրայ պարտք կը դնէ շրջանը հիմնովին վերակազմել»: Նշանակեալ վարչութիւնը այս նամակին պատասխանելով ի միջի այլոց կը գրէ. «... մինչեւ որ պատանեկան միութեան եւ սկաուտական ու մարպական շարքերու գործունէութիւնները եւ փոխ յարաբերութիւնները չի պատրոշուին, անկարելի կը դառնայ սկաուտական եւ մարպական շարքերը կանոնաւորել եւ խտացնել»:

Նշանակեալ անդամներու կազմին վրայ կ'աւելցուին Ալպեր Ունճեան եւ Յովհաննէս Կէօզիլպէօյիլզեան, եւ դիւանը կը կազմուի հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Արչակունի Ռաֆայէլեան
Ատենադպիր՝ Յովհաննէս Կէօզիլպէօյիլզեան

Գանձապահ՝ Աթանաս Գոճակէօզեան:

Մասնաճիւղին գործնապէս նպաստելու համար Շրջանային վարչութիւնը իր կողմէ կը նշանակէ Ղազար Ղազարեանը, իբրեւ մարզական խումբերու մարզիչ:

7 Մարտ 1954ին, Նոր Սիսի Ազիրեան սրահին մէջ տեղի կ'ունենայ Պուրճ Համուտի Հ.Մ.Ը.Մ.ի անդամական ընդհանուր ժողով: Շրջանային վարչութեան կողմէ ներկայ են Յովհաննէս Եահինեան եւ Արամ Անթիքաճեան: Անդամական ընդհանուր ժողովի դիւանի անդամներն են Յովհաննէս Տէր Յարութիւնեան՝ նախագահ եւ Արսէն Նաճարեան՝ քարտուղար: Ժողովը, լսելէ ետք 12րդ Պատգամաւորական ժողովի զեկուցումը, կ'ընտրէ մասնաճիւղի նոր վարչութիւն հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Կարապետ Կիւլիզեան
Ատենադպիր՝ Յովհաննէս Տէր Յարութիւնեան

Գանձապահ՝ Ալպեր Ունճեան

Մարզական պատասխանատու՝ Զաքար Զորպաճեան

Խորհրդականներ՝ Պարգեւ Տապանճեան, Սարգիս Թավլեան, Արսէն Նաճարեան:

Այս վարչական կազմի գլխաւոր մտահոգութիւնը կ'ըլլայ մասնաճիւղը օժտել սեփական ակումբով մը, նկատի ունենալով որ մասնաճիւղին ծառայող, Նոր Սիսի Ազիրեան մանկապարտէզի մէկ սենեակը դադրեցուած էր տրամադրելի ըլլալէ: Սենեակը կը ծառայէր վարչութեան, սկաուտներու եւ 50 մարմնամշակներու կարիքներուն: Առ այդ կը ծրագրուի գնել Սինէլ Ֆիլի ճամբուն վրայ գտնուող շէնք մը, որուն փոխարժէք՝ 2000 լիբ. ոսկին կը ծրագրեն փոխ առնել Շրջանային վարչութենէն: Շրջանային վարչութիւնը համամիտ կը գտնուի, սակայն ծրագիրը չի յաջողիր, նկատի առնելով որ շէնքը քաղաքապետական ծրագիրներու պատճառով քանդուելու ենթակայ դիրքի մը վրայ կը գտնուի:

22 Ապրիլ 1955ին, կ'ընտրուի նոր վարչական կազմ:-

Ատենապետ՝ Յովհաննէս Տէր Յարութիւնեան

Ատենադպիր՝ Յովհաննէս Պերպէրեան

Գանձապահ՝ Ալպէր Ունճեան

Սկառուտական խմբապետ՝ Յովհաննէս Թերճանեան

Ֆուլթպոլի պատասխանատու՝ Զաքար Զորպաճեան

Մարմնամշակումի պատասխանատու՝ Յարութիւն Եարտրմեան

Սկառուտական խորհուրդի ներկայացուցիչ՝ Յովհաննէս Սիւմպիւլեան

Աթլետիք պատասխանատու՝ Խաչեր Յակոբեան

Օգնական քարտուղար՝ Յակոբ Ժամկոչեան:

Այս կազմն ալ, նախորդին նման, կը լծուի մասնաճիւղին ակումբ մը ապահովելու աշխատանքին: Կրկին կը դիմուի Շրջանային Վարչութեան, նիւթականի խնդրանքով եւ մեծ ճիգերով վարչութիւնը կը յաջողի վարձել, Նոր Մարաշի թաղամասին մէջ, ներկայ ակումբին մօտակայ եւ յարմարութիւններով օժտուած Սարգիս Տէմիրճեանի շէնքին առաջին յարկը, մասնաճիւղին կեդրոնական դիրք ապահովելով Պուրճ Համուտի շրջանէն ներս: Այս գործի յաջողութեան կը նպաստէ Միսաք Ազիրեան՝ 2000 լիբ. ոսկի նուիրատուութեամբ, եւ ակումբը կ'անուանակոչուի բարերարին անունով:

Ակումբի բացումը տեղի կ'ունենայ 11 Մարտի 1956ին, ուր հանդիսութեան կը նախագահէ Միսաք Ազիրեան:

Մասնաճիւղի գործունէութիւնը կը վերագտնէ իր բնական ընթացքը: Կը կազմակերպուին հասութաբեր ձեռնարկներ ինչպէս սինեմայի երեկոյթներ, եւայլն: Սկառուտական խումբերը կ'աշխուժանան: Պուրճ Համուտի Հ.Մ.Ը.Մ.ը կը դառնայ Լիբանանի աթլետիզմի Ֆետերասիոնի անդամ: Ֆուլթպոլի ճիւղի դասաւորումները Պէյրութի մասնաճիւղին հետ կը հա-

մադրուին: Մասնաճիւղը յաջող տարեշրջան մը կը բոլորէ:

29 Ապրիլ 1956ի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական կազմն է հետեւեալը:-

Ատենապետ՝ Յովհաննէս Սիւմպիւլեան

Ատենադպիր՝ Բարսեղ Սվազլեան

Փոխ ատենապետ եւ գանձապահ՝ Ալպետ Ունճեան

Անդամներ՝ Զաքար Զորպաճեան, Անդրանիկ Յակոբեան, Յովհաննէս Թերզեան եւ Կարօ Մխիթարեան՝ ապա փոխարինուած Յարութիւն Մարկարոսեանով: Սկառուտական բաժինը կը ներկայացնեն Յովհաննէս Թերճանեան եւ Արսէն Նաճարեան: Գործունէութիւնը կը շարունակուի նախկին թափով: Անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 617ի: Մարզական եւ սկառուտական ճիւղերը կը զարգանան համահասար: Նիւթական բաժինը կ'ապահովուի հրապարակային ձեռնարկներով՝ համերգ, շարժապատկեր, օրացոյցներու վաճառք, Ծննդեան եւ Զատիկուան աւետումներ. ընդհանուր մուտք՝ 6674 ոսկի, ելք՝ 4942 ոսկի: Հակառակ կարճատեւ գործունէութեան, միայն ինը ամիս, վարչութիւնը տարեշրջանը կ'աւարտէ յաջողութեամբ:

27 Յունուար 1957ին կ'ընտրուի նոր վարչութիւն մասնակցութեամբ հետեւեալներուն.-

Ատենապետ՝ Յովհաննէս Սիւմպիւլեան

Քարտուղար՝ Արսէն Նաճարեան

Բ. ատենապետ եւ գանձապահ՝ Ալպէր Ունճեան

Փոխ քարտուղար՝ Կարպիս Էօլմէսէքեան

Խորհրդականներ՝ Պարգեւ Տապանճեան, Խաչիկ Գալուստեան, Զաքար Զորպաճեան եւ Յովհաննէս Թերճանեան: Աւելի ուշ, կազմին վրայ կ'աւելնան Ներսէս Գէորգեան եւ Աւետիս Պալապանեան: Վերջինս Սեպտեմբերէն սկսեալ կը փոխարինէ Յովհաննէս Սիւմպիւլեանը իբրեւ ատենապետ:

Ֆուլթպոլը կը մնայ մասնաճիւղին կողմէ մշակուող գլխաւոր մարզական ճիւղը: Միւս

մարզաճիւղերն են պասքեթպոլ, աթլետիզմ եւ մարմնամշակում: Ակումբի բարեզարդման կողքին մասնաճիւղը կ'ունենայ փինկ-փոնկի նոր սեղան: Ակումբային կեանքը կը զօրանայ: Վարչութիւնը կ'ապահովէ հեռաձայնային գիծ: Անդամները աւելի մեծ թիւով կը յաճախեն նստավայր: Անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 769ի:

Վրայ կը հասնի 1958 թուականը: 23 Փետրուարին կ'ընտրուի նոր վարչութիւն հետեւեալ կազմով.-

- Ատենապետ՝ Կարապետ Մխիթարեան
- Բ. ատենապետ՝ Աւետիս Պալապանեան
- Ատենադպիր՝ Արսէն Նաճարեան
- Գանձապահ՝ Ալպէր Ունճեան

Անդամներ՝ Զաքար Չորպաճեան, Խաչիկ Գալուստեան, Հայկազ Սաղպազարեան:

Հազիւ երկու ամսուայ գործունէութիւն կատարուած, կը պայթի լիբանանեան քաղաքացիական պատերազմը եւ մինչեւ տարեվերջ մասնաճիւղի ընդհանուր գործունէութիւնը տեղքայլի մէջ կը մնայ: Մարզաճիւղերէն փինկ-փոնկն ու մարմնամշակումը միայն, իբրեւ ակումբէն ներս կիրարկուող ճիւղեր, կը մնան գործունեայ: Վարչութեան բոլոր նախաձեռնութիւնները կը մնան կիսաւարտ:

15 Փետրուար 1959ին, նախորդ տարուան վարչութիւնը կը վերընտրուի փոքր փոփոխութեամբ:

Ատենադպիրի պաշտօնին մէջ Կարպիս Կարպուշեան կը փոխարինէ Արսէն Նաճարեանը: Ֆուտպոլի ճիւղին մէջ Միսաք Ռաֆայէլեան կ'օժանդակէ Զաքար Չորպաճեանին: Մասնաճիւղի սկաուտական խմբապետ կը մնայ Յովհաննէս Թերճանեանը: Նախորդ տարեշրջանին հետ բաղդատած՝ մասնաճիւղի գործունէութիւնը զարթօնքի մէջ է: Սկաուտութիւնը եւ մարզական բոլոր ճիւղերը նոր թափով կը լծուին աշխատանքի:

Նոյն պատկերը կը պարզուի 1960ին: 28 Փետրուարի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութիւնը կը մնայ նոյնը, բացի

ատենադպիրի պաշտօնէն՝ ուր Արսէն Նաճարեան ապա Նուպար Այնէճեան կը ստանձնեն ատենադպիրի պաշտօնը: Յարութիւն Սասունեան կը փոխարինէ Միսաք Ռաֆայէլեանը, պասքեթպոլը կը յանձնուի Նուպար Այնէճեանին, հեծելարշաւը Ներսէս Գէորգեանին, իսկ սկաուտական խորհուրդի ներկայացուցիչն է Խաչիկ Գալուստեանը: 19 Փետրուար եւ 8 Մարտ 1961ին, կայացած զոյգ անդամական ընդհանուր ժողովներու ընթացքը հակահանոնագրային համարելով Շրջանային վարչութիւնը 17 Մարտ 1961ին կը նշանակէ նոր վարչական կազմ.-

- Ատենապետ՝ Աւետիս Պալապանեան
- Բ. ատենապետ՝ Զաքար Չորպաճեան
- Ատենադպիր՝ Վահան Ճանսրգեան
- Գանձապահ՝ Խաչիկ Գալուստեան
- Ֆուտպոլ՝ Յարութիւն Սասունեան
- Պասքեթպոլ՝ Անթուան Գալուստեան
- Հաշուապահ՝ Կիրակոս Պոյաճեան
- Խորհրդական՝ Ներսէս Գէորգեան
- Սկաուտական խմբապետ՝ Յովհաննէս Թերճանեան:

Ժողովներու Բ. նիստէն սկսեալ ատենապետութիւնը կը վարէ Զաքար Չորպաճեան: Վարչութիւնը իր կարգին կը նշանակէ սկաուտական խորհուրդ եւ մարզական յանձնախումբեր:

Այս կազմով գործունէութեան նոր շրջան մը կը բացուի մասնաճիւղին առջեւ: Ակաուտական եւ մարզական ճիւղերը նորանոր յաջողութիւններով կը բոլորեն տարեշրջանը՝ գլխաւոր իրականացում արձանագրելով Ազգային Իշխանութեան կողմէ ակումբի շէնքին յարակից հողաչերտի սիրայօժար տրամադրուելը, ծառայեցնելու համար որպէս պասքեթպոլի դաշտ:

1 Ապրիլ 1962ին, անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչութիւն՝

- Ատենապետ՝ Կարապետ Կիւլիւզեան
- Փոխ ատենապետ՝ Զաքար Չորպաճեան
- Ատենադպիր՝ Վահան Իսպէնճեան
- Գանձապահ՝ Խաչիկ Գալուստեան
- Խորհրդականներ՝ Աբգար Գոճարթիւնեան, Աւետիք Պոյաճեան, Գրիգոր Թորոսեան:

Այս տարեշրջանին կ'աւարտի ահումբի բարեզարդման աշխատանքը: Մարզական ճիւղերէն Ֆուտպոլն ու աթլետիզմը կը յառաջդիմեն կարեւոր իրագործումներով: Պասքետպոլը համեմատաբար տկար կը մնայ: Սկստական շարժումն ալ տեղափոխի մէջ է: Վարչութեան եկամուտի աղբիւրներն են թատերական ներկայացումներ եւ շարժանկարի երեկոներ:

Անդամական ընդհանուր ժողովը կը գումարուի 6 Փետրուարին ուր լսելէ ետք շրջանաւարտ վարչութեան գործունէութեան տեղեկագիրը, 1963 տարուան վարչութեան կազմը կ'ընտրուի հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Տոքթ. Միսաք Արզումանեան
 Փոխ ատենապետ՝ Զաքար Զորպաճեան
 Ատենադպիրներ՝ Եփրեմ Քենտիրճեան, Յարութիւն Պեհեսնիլեան
 Գանձապահ՝ Խաչիկ Գալուստեան
 Ֆուտպոլ՝ Յարութիւն Սասունեան
 Աթլետիզմ՝ Աբգար Գոճարթինեան
 Պասքետպոլ՝ Նուպար Այնճեան
 Հաշուապահ եւ սկստական պատասխանատու՝ Առաքել Տէր Առաքելեան:

Տարուան ընթացքին Տիգրան Գասապ կը փոխարինէ Նուպար Այնճեանը:

Վարչութեան կողքին եւ զարկ տալու համար սկստական շարժման, կը նշանակուի փորձառու անդամներէ բաղկացած սկստական խորհուրդ՝ կազմուած հետեւեալ անձերէն.- Յակոբ Մինասեան, Յակոբ Սարգիսեան, Միրզա Միրզայեան, Սարգիս Տէր Յակոբեան, Գէորգ Դաւիթեան, Ալետիս Մունջողլեան եւ Ճորճ Թորոսեան:

Կը ծրագրուի սկստական շարժումը կիրարկել շրջանի հայ վարժարաններէն ներս: Ծրագիրը յաջողութեամբ կը պսակուի:

Անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 554ի, հետեւեալ ենթաբաժանումով, սկստականներ՝ 229, մարզիկներ՝ 190, օժանդակ անդամներ՝ 135:

Մարզական գլխաւոր ճիւղերը՝ Ֆուտպոլ, պասքետպոլ եւ աթլետիզմ զգալի յառաջդիմու-

թեան մէջ են: Նիւթական եկամուտի աղբիւրներն են թատերական երեկոները, տօնական աւետումները եւ օրացոյցի վաճառքը:

23 Փետրուար 1964ին, կը կայանայ մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողով: Օրուան նախագահն է Յակոբ Ժամկոչեան, քարտուղար՝ Արսէն Նաճարեան: 1963 տարեշրջանի նիւթաբարոյական գործունէութիւններու տեղեկագիրներու ընթերցումէն ետք կ'ընտրուի նոր վարչական կազմ.-

Ատենապետ՝ Տոքթ. Միսաք Արզումանեան
 Փոխ ատենապետ եւ հաշուապահ՝ Ալետիս Պալապանեան
 Ատենադպիր՝ Եփրեմ Քենտիրճեան
 Գանձապահ՝ Ներսէս Գէորգեան
 Ֆուտպոլի պատասխանատու՝ Զաքար Զորպաճեան

Աթլետիզմի պատասխանատու՝ Աբգար Գոճարթինեան

Պասքետպոլի պատասխանատու՝ Յարութիւն Սասունեան

Ֆուտպոլի Բ. դասակարգի խումբերու պատասխանատու՝ Ռոպէր Պետոյեան

Սկստական պատասխանատու՝ Նուպար Մանկասարեան:

Սկստական խորհուրդի անդամներն են՝ Իսկուհի Գալասեան, Գրիգոր Կարապետեան, Յակոբ Գազանճեան, Կարապետ Նորիկեան, Ալետիս Աբրահամեան եւ Ժիրայր Յակոբեան:

Տարուան ընթացքին Պէյրութի եւ Պուրճ համուտի մասնաճիւղերու միջեւ կը գոյանայ նոր համաձայնութիւն: Ֆուտպոլի ճիւղի հսկողութիւնը կը յանձնուի խառն յանձնախումբի մը՝ բաղկացած զոյգ մասնաճիւղերէն եւ Շրջանային Վարչութենէն ներկայացուցիչներէ: Յանձնախումբի գլխաւոր պարտականութիւնն է հսկել մասնաճիւղերու Ֆուտպոլիստներու փոխանցումները յարմարագոյն ձեւով եւ զոյգ խումբերու կազմերու զօրացումով: Պուրճ համուտի մասնաճիւղը Ֆուտպոլի մրցումներու եկամուտներովը պիտի օգտուի տարեկան շուրջ 1500 լիբ. ոսկի գումարով մը:

Աթլեթիզմի բաժնին մէջ եւս, Պէյրուժի, Ճիւնիի եւ Պուրճ Համուտի մասնաճիւղերուն միջեւ գոյացած համաձայնութեամբ, այս ճիւղը կը գործէ խառն յանձնախումբի մը հսկողութեամբ:

1964 տարուան մասնաճիւղի նիւթական պիւտճէն կ'ապահովուի հասութեաբեր ձեռնարկներով՝ ճաշկերոյթ-պարահանդէս, շարժանկարի երեկոյթ, Սբ. Ծննդեան եւ Սբ. Զատիկուան աւետումներ եւ օրացոյցներու վաճառք:

Այս բաժնի գլխաւոր իրագործումը պիտի ըլլար աննախընթաց ճաշկերոյթ պարահանդէսը, որ պսակուեցաւ բացառիկ յաջողութեամբ: Սակայն այս յաջողութիւնը գիւրաւ ձեռք չբերուեցաւ: Արդարեւ, վարչութիւններ յաճախ ծրագրած էին նման ձեռնարկ մը յաջողցնել եւ միշտ ալ հանդիպած էին դժուարութեանց: Գլխաւոր դժուարութիւնը կը հանդիսանար Շրջանային Վարչութեան եւ Պէյրուժի վարչութեան կողմէ յարուցուած արգելքը: Նկատի ունենալով, որ ճաշկերոյթ պարահանդէսը պիտի իրագործուէր Պէյրուժի սահմաններէն ներս եւ կանոնադրային տրամադրութեամբ որեւէ մասնաճիւղ, քոյր մասնաճիւղի մը շրջանին մէջ ձեռնարկ մը կազմակերպելու պարագային պէտք է նախապէս սպահոված ըլլար քոյր մասնաճիւղի եւ Շրջանային Վարչութեան հաւանութիւնը, Պուրճ Համուտը միշտ հանդիպած էր զոյգ վարչութեանց մերժումին այն պատճառաբանութեամբ, թէ մուտքի տոմսերը պիտի վաճառուէին Պէյրուժի համակիրներու շրջանակէն ներս եւ կրնար վնասել նոյն վարչութեանց նմանօրինակ ձեռնարկներուն:

1964 տարեշրջանի վարչութիւնը յաջողեցաւ հաւաստիացնել Շրջանային Վարչութեան ատենապետ Յովհաննէս Շահինեանին, թէ ձեռնարկը Պէյրուժի սահմաններէն ներս իրագործելով հանդերձ տոմսերը պիտի սպառէին միայն Պուրճ Համուտի մասնաճիւղի համակիրներու եւ անդամներու շրջանակներէն ներս: Զեռնարկը պիտի յաջողցուէր միասնաբար Նոր Մարաշի կոմիտէութեան գործակցութեամբ: 18 Ապրիլին,

ճաշկերոյթ-պարահանդէսը տեղի ունեցաւ Գարլթոն պանդոկի սրահներուն մէջ հովանաւորութեամբ Մեթն գաւառի երեսփոխանական հայ առաքելական աթոռի թեկնացու Անտրէ Թապուրեանի, ներկայութեամբ անոր ցանկակիցներուն եւ Պէյրուժի երեսփոխանական ընտրութեանց թեկնածուներու ցանկի անդամներուն:

Ճաշկերոյթ-պարահանդէսի յաջողութիւնը սխրագործութեան մը համազօր պիտի ըլլար՝ մեծաթիւ մասնակիցներու ներկայութեամբ եւ բարոյական ու նիւթական աննախընթաց յաջողութեամբ:

Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութիւնը յաջողած էր շրջանցել նման տարողութեամբ ձեռնարկ մը յաջողցնելու կարողութեան բարդոյթը: Յաջորդող տարիներուն նոյն ձեռնարկը կրկնուեցաւ, նոյն վայրին մէջ, վերածուելով աւանդութեան:

Նոյնպէս, 24 Յունուար 1962ի համաձայնութիւնը հիմք ունենալով, այս կազմը կը յաջողի վերջնականապէս պաշտօնականացնել Ֆութպոլի մարզին մէջ Պէյրուժի եւ Պուրճ Համուտի մասնաճիւղերու փոխ յարաբերութիւնները, Շրջանային վարչութեան հովանաւորութեամբ խմբագրուած հետեւեալ համաձայնագրով.

1- Պէյրուժի եւ Պուրճ Համուտի վարչութիւնները կ'ընդունին որ Պէյրուժի Ֆութպոլի խումբը պիտի ըլլայ զօրաւորագոյն կազմը:

2- Պիտի կազմուի թեքնիք յանձնախումբ մը, բաղկացած Շրջանային Վարչութեան, Պէյրուժի եւ Պուրճ Համուտի Ֆութպոլի պատասխանատուներէն, որ զբաղի Պէյրուժի եւ Պուրճ Համուտի առաջին խումբերու թեքնիք հարցերով:

Այս յանձնախումբը ենթակայ պիտի ըլլայ Պէյրուժի վարչութեան:

3- Պուրճ Համուտի վարչութիւնը պիտի զբաղի երկրորդական խումբերով:

4- Պէյրուժի վարչութիւնը Ֆութպոլի նիւթական պատասխանատուն է եւ պիտի հոգայ երկրորդական խումբերուն համար եղած ծախսերը, վճարելով Պուրճ Համուտի վարչութեան

տարեկան 1500 (հազար հինգ հարիւր) լիբանանեան ոսկի, պայմանաւ որ Պոլրճ Համուտի վարչութիւնը պահէ նուազագոյնը 5 հինգ երկրորդական խումբեր:

Նոյն եղանակին, մասնաճիւղի անդամներուն եւ մարզիկներուն միջեւ կը զարգանայ ընկերային կեանք, ահումբէն ներս կազմակերպուած հաւաքոյթներով:

1965 տարեշրջանի վարչութեան ընտրութիւնը տեղի կ'ունենայ Մարտ 14-ին: Վարչութեան անդամներն են.-

- Ատենապետ՝ Աւետիս Պալապանեան
- Փոխ ատենապետ՝ Աբգար Գոճարթինեան
- Ատենադպիր՝ Եփրեմ Քենտիրճեան
- Գանձապահ՝ Ներսէս Գէորգեան
- Գոյքապահ՝ Միսաք Պասթաճեան

Սկաուտական պատասխանատու՝ Առաքել Տէր Առաքելեան

Մարզական պատասխանատու՝ Զաքար Զորպաճեան, Նուպար Մանկասարեան:

Ֆուտբոլի Բ. խումբերու պատասխանատու՝ Յարութիւն Սասունեան:

Մասնաճիւղի ֆուտբոլի խումբը կը տիրանայ լիբանանեան Ֆետերասիոնի Ա. դասակարգի երկրորդ բաժանմունքի ախոյեանի տիտղոսին: Պասքեթբոլի խումբը կազմալոյծ վիճակ մը կը պարզէ, Ազգային վարժարանի շինութեան պատճառով դաշտը դարձած է անգործածելի:

Աթլետիզմը կը գործէ նախորդ տարուան դրութեամբ եւ աղջկանց խումբը կը տիրանայ Լիբանանի Ա. դասակարգի ախոյեանութեան տիտղոսին:

Սկաուտական շարքերը կը վերստանան իրենց երբեմնի կենսունակութիւնը 55 սկաուտներով, 60 գայլիկներով, 80 մրջնիկ եւ արենոյշներով եւ նուազախումբի 40 անդամներով, ընդհանուր գումար՝ 235: Մասնաճիւղը ունի սկաուտական տարազներու կազմակերպուած պահեստ:

1966 տարեշրջանին վարչութեան դիւանի կազմը կը մնայ անփոփոխ: Վարչութեան նոր

անդամներն են Կարպիս Համամճեան, Վարդգէս Բաբախեան, Սմբատ Միսաքեան եւ Գրիգոր Կարապետեան: Միամսեայ գործունէութենէ ետք, վարչութեան 17 Մարտ նիստի որոշումով իբրեւ օժանդակ քարտուղար կը հրաւիրուի Մեթր Զոհրապ Այվազեանը, որ աւելի ուշ կը փոխարինուի Ճորճ Գալեմքերեանով: Իսկ Յակոբ Մինասեան կը փոխարինէ Գրիգոր Կարապետեանը իբրեւ սկաուտական խորհուրդի ներկայացուցիչ:

Մասնաճիւղի կիրարկած մարզական ճիւղերն են ֆուտբոլը, պասքեթբոլը եւ աթլետիզմը: Սկաուտական շարժումը ունի թուական աճ եւ կը ղեկավարուի վարչութեան կողմէ նշանակուած խորհուրդով, ատենապետութեամբ Յովհաննէս Թերճանեանի:

Իբրեւ նորութիւն, մասնաճիւղը կը կազմակերպէ գիշերային դասընթացքներ, ուր կ'ուսուցուին հայերէն, ֆրանսերէն, արաբերէն եւ անգլերէն: Անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 560ի. օժանդակ անդամներ՝ 165, մարզիկներ՝ 145, սկաուտներ՝ 250: Կարեւոր աճ մը կ'արձանագրէ նաեւ նիւթական գործառնութիւնը, հասութաբեր ձեռնարկներու եկամուտով:

Վարչութիւնը կը բարեզարդէ պասքեթբոլի դաշտը, որ կը լուսազարդուի իր ծախսերով:

1967 տարեշրջանին դիւանի կազմը կրկին կը մնայ նոյնը: 10 Մարտ 1967ի ժողովին վարչական նոր անդամներ կ'ընտրուին Արսէն Նաճարեան եւ Ալպեր Ունճեան:

Այս տարեշրջանին սկաուտական խորհուրդի կողքին վարչութիւնը կը նշանակէ արենուշական վարիչ մարմին մը գլխաւորութեամբ Սեդա Սարեանի:

25 Փետրուար 1967ին, մասնաճիւղի պատգամաւորները կը մասնակցին 17րդ Շրջանային Պատգամաւորական ժողովին:

18 Փետրուար 1968ին, տեղի կ'ունենայ անդամական ընդհանուր ժողով: Վարչական նոր կազմը կը բաղկանայ հետեւեալներէն.-

Ատենապետ՝ Ալպեր Ունճեան

Փոխ ատենապետ՝ Պարգեւ Պասմաճեան
Ատենադպիր՝ Եփրեմ Քենտիրճեան
Բ. ատենադպիր՝ Յովհաննէս Թերճանեան
Գանձապահ՝ Ներսէս Գէորգեան
Արաբերէնի քարտուղար՝ Ճորճ Գալէմքերեան

Տնօրէն՝ Ոսկան Վարդիվառեան, Խորէն Հայկեան

Սկառուտական խմբապետ՝ Գրիգոր Կարապետեան

Տարուան ընթացքին Յովհաննէս Թերճանեան եւ Ճորճ Գալէմքերեան յաջորդաբար փոխարինուեցան Յակոբ Մինասեանով եւ Խոսրով Ասլանեանով:

Մասնաճիւղը յաջող տարեշրջան մը կը բոլորէ: Տարեկան ճաշկերոյթ պարահանդէսը տեղի կ'ունենայ Գարլթոն պանդոկին մէջ, հովանաւորութեամբ պետական երեսփոխան Անտրէ Թապուրեանի:

Վարչութիւնը կը գործակցի Շրջանային Վարչութեան կազմակերպած Հ.Մ.Ը.Մ.ի յիսնամեակի տօնակատարութեանց: Անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 758ի:

1969 տարեշրջանի վարչական կազմի ընտրութիւնը կ'ունանայ երեք ամիսով: Անդամական ընդհանուր ժողովը տեղի կ'ունենայ Մայիսի 11ին: Առաջին անգամ ըլլալով, վարչութիւնը կը բաղկանայ տասներմէկ անդամներէ, հետեւեալ բաժանումներով.-

- Ատենապետ՝ Ալպեր Ունճեան
- Փոխ ատենապետ՝ Սամուէլ Մկրտիչեան
- Ատենադպիր՝ Եփրեմ Քենտիրճեան
- Բ. ատենադպիր՝ Խոսրով Ասլանեան
- Արաբերէնի քարտուղար՝ Յակոբ Քէշիշեան
- Գանձապահ՝ Ներսէս Գէորգեան
- Աթլեթիզմ՝ Սարգիս Տանայեան
- Պասքեթպոլ՝ Խորէն Հայկեան
- Սկառուտիզմ՝ Ոսկան Վարդիվառեան
- Տնօրէն՝ Յովհաննէս Աբգարեան
- Սկառուտական խմբապետ՝ Գրիգոր Կարապետեան:

Մարզական բոլոր ճիւղերն ալ ծաւալուն գործունէութիւն կ'արձանագրեն, իւրաքանչիւր ճիւղի համար նշանակուած յանձնախումբերու հսկողութեամբ: Յատուկ խմանքի կ'արժանանայ սկառուտական նուագախումբը իբրեւ մասնաճիւղի դիմագիծը արժեւորող ազգային եւ միութենական ձեռնարկ: Հեծելարշաւի եւ փինկ-փոնկի ճիւղերը նոր թափով կը կիրարկուին:

Անդամներու ցանկի ստուգումէն ետք, ընդհանուր թիւ 603ի ենթաբաժանումներն են:

- Օժանդակ անդամներ՝ 150
- Մարզիկներ՝ 235
- Սկառուտներ՝ 100
- Արեւուչներ՝ 25
- Մարզիկներ՝ 30
- Գայլիկներ՝ 45
- Երէց սկառուտներ՝ 13

Մասնաճիւղը ինը պատգամաւորներով, 1 եւ 2 Մարտ 1969ին, կը մասնակցի 18րդ Պատգամաւորական ժողովին:

1969ի վերանորոգ ու ծաւալուն գործունէութիւնը իր արձագանգը պիտի ունենար յաջորդող զոյգ տարեշրջաններուն վրայ: Շրջանային ցանցին մէջ մասնաճիւղը արդէն կը գրաւէ առաջին կարգի մասնաճիւղերու դիրքը: Մինչեւ 1970ի աւարտը գանձի ընդհանուր մուտքը կը բարձրանայ 53229 լ. ոսկիի, ելք՝ 43920 լ. ոսկի: Անդամներու ընդհանուր թիւն է 760: Վարչութեան մաս կը կազմեն Ալպեր Ունճեան, Յակոբ Օվայեան, Ջաքար Չորպաճեան, Խորէն Հայկեան, Անդրանիկ Քէօրքիլեան, Յակոբ Քէշիշեան եւ Գէորգ Աւրանեան:

20 Փետրուար 1972ին, ընտրուած վարչական կազմը դժուարութիւններ կ'ունենայ դիւանի կազմութեան մէջ: Յետ խորհրդակցութեան Շրջանային Վարչութիւնը, եռամսեայ առժամեայ հանգամանքով, վարչութեան ատենապետի պաշտօնը կը յանձնէ իր կազմէն Բիւզանդ Թորիկեանին: Վարչութեան մնացեալ պաշտօնները կը բաժնուին հետեւեալ ձեւով.-

Քարտուղար՝ Յակոբ Օվայեան

Գանձապահ եւ փինկ-փոնկի պատասխանատու՝ Գէորգ Աւրնեան

Ֆուլթոնի պատասխանատուներ՝ Զաքար Չորպանեան, Կարպիս Հարպոյեան, Յակոբ Պոյաճեան, Ոսկան Վարդիվառեան:

Պասքեթպոլի պատասխանատուներ՝ Խորէն Հայկեան, Բիւզանդ Պետոյեան

Արաբերէնի քարտուղար եւ հաշուապահ՝ Յակոբ Քէշիշեան

Սկաուտական խմբապետ՝ Կարօ Մելքոնեան
Խորհրդական՝ Ալպեր Ունճեան:

Վերոյիշեալ կազմը լայն մասնակցութիւն կը բերէ Շրջանային Վարչութեան կազմակերպած 35րդ միջ-մասնաճիւղային խաղերուն, ուր մասնաճիւղի սկաուտական նուագախումբը, իր 50 նուագող անդամներով, գլխաւոր կերտիչը կ'ըլլայ ընդհանուր տողանցքի յաջողութեան:

ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի կիրարկած հիմնական ճիւղը կը մնայ Ֆուլթոնը: Այս մարզախաղին վրայ հետզհետէ պիտի աւելնան պասքեթպոլը՝ տղոց եւ աղջկանց բաժիններով, փինկ-փոնկը, աթլետիզմը եւ հեծելարշաւը, երբ այս խաղերու վայրերը տրամադրելի ըլլան:

Ֆուլթոնի մէջ մեծաթիւ երկրորդական խումբերու կազմութիւնը եւ զարգացումը այլապէս օգտակար երեւոյթ մը պիտի հանդիսանար, երբ անոնցմէ փոխանցուող յաջողակ մարզիկները պիտի երթային ծառայել՝ որքան Պուրճ Համուտի, նոյնքան նաեւ Պէյրութի մասնաճիւղի պահեստի եւ առաջին խումբերու կազմութեան:

Ֆուլթոն

Հիմնադրութեան հետ սկսուած այս մարզախաղով, մասնաճիւղի առաջին կազմը իր մասնակցութիւնը կը բերէ, ամէն տարի, Զատկական տօներուն առթիւ Շրջանային Վարչութեան

կազմակերպած միջ-մասնաճիւղային մրցաշարքերուն, որպէս Բ. դասակարգի խումբ: 1940ին, ան կը տիրանայ ախոյեանութեան տիտղոսին: Խումբին մաս կազմած են խմբապետ Օննիկ Գուլեան, Սարգիս Գարայեան, Ա. Պողոսեան, Մինաս Հաւանճեան, Ն. Պալեան, Յովհաննէս Ապունայեան, Յարութիւն Գալուստեան, Լեւոն Գարակէօզեան, Աբրահամ Նաճարեան, Յակոբ Պուպուշեան, Խորէն Պարսամեան, Լ. Զատրճեան եւ Աբրահամ Թաշճեան: Նոյն տարին խումբը կը մասնակցի նաեւ լիբանանեան Ֆետերասիոնի կազմակերպած ախոյեանութեան մրցաշարքին: Մասնաճիւղը կը պահէ զոյգ Ֆուլթոնի խումբեր:

1943ին, վերոյիշեալներու կողքին, Ֆուլթոնի խումբին մաս կը կազմեն Պետրոս Պասմաճեան, Մկրտիչ Աճէմեան, Անդրանիկ Նազարեան, Յարութիւն Եարտըմեան, Զոհրապ Շամլեան, Ներսէս Իփճեան, Յակոբ Լէհիմճեան, Կարապետ Դերձակեան եւ Յարութիւն Գալուստեան: Հակառակ այս նոր ուժերու մասնակցութեան, 1944էն սկսեալ խումբը զգալի յառաջդիմութիւններ չ'արձանագրեր:

Վրայ կը հասնին դէպի հայրենիք ներգաղթի օրերուն ստեղծուած դժուարին պայմանները: Խումբի գործունէութիւնը կը մնայ Շրջանային Վարչութեան՝ Զատկական տօներու առթիւ կազմակերպած միջ-մասնաճիւղային մրցաշարքերու մասնակցութեան սահմաններուն մէջ, ուր Պուրճ Համուտը կ'ապահովէ Բ. դասակարգի խումբերու ախոյեանութիւնը: Վարչական կազմերու ճիգը կը կեդրոնանայ երկրորդական խումբերու կազմութեան եւ զարգացման վրայ՝ որպէս շտեմարան հետագայ առաջին խումբերու կազմութեան:

1947էն սկսեալ, Ֆուլթոնի կազմերը կը վերագտնեն իրենց կենսունակութիւնը, խմբապետութեամբ Յովհաննէս Տէր Յարութիւնեանի: Խումբին մաս կը կազմեն Սարգիս Չոլաքեան, Բարսեղ Գաւճեան, Գէորգ Տէր Յարութիւնեան, Կարպիս Էօլմեսեքեան, Ալպեր Էօրէճեան, Ռոպերտ Պետոյեան, Անդրանիկ Տէօքմէճեան, Եփ-



Լեռնալիբանանի ախոյեան Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի ֆութպոլի խումբը՝ 1947ին

րեմ կիւլիւզեան, Նիկողոս Գալայճեան, Գոգօ Գափուքճեան, Անդրանիկ Դարբինեան եւ Մկրտիչ:

Նոյն տարին, Պուրճ Համուտի Հ.Մ.Ը.Մ.ը կը տիրանայ Լիբանանի Ֆետերասիոնի կազմակերպած Բ. դասակարգի ախոյեանութեան: Այս վերաշխուժացման թափը պիտի շարունակուէր մինչեւ 1950ական թուականներու սկզբնական տարիները, որոնց ընթացքին խումբը կարեւոր յաղթանակներ կ'ապահովէ տեղական խումբերու դէմ մրցումներու առթիւ:

1954ին, Պուրճ Համուտի առաջին կազմը կրկին կը տիրանայ Լեռնալիբանանի ախոյեանութեան:

1955էն սկսեալ, Պուրճ Համուտ-Պէյրուսի գործակցութեան անհրաժեշտութիւնը կը դառնայ հրամայական: Շրջանային Վարչութեան հովանաւորութեամբ կը կազմուի իւրաքանչիւր մասնաճիւղէ երեքական անդամներէ եւ Շրջանային Վարչութեան մէկ ներկայացուցիչէ բաղկացող յանձնախումբ մը, որուն գլխաւոր պարտականութիւնն է զոյգ մասնաճիւղերու ֆութպոլի ճիւղի գործակցութիւնը համադրել եւ խաղացողներու փոխանցումները տնօրինել: Ֆութպոլի

յատուկ յանձնախումբը կը կազմակերպէ երկրորդական խումբերու միջեւ մրցաշարքեր, որուն ախոյեանութեան, 1956 տարուան ընթացքին, կը տիրանայ «Մայր Հայաստան» խումբը: 1956ին, մասնաճիւղի Ա. կազմը կրկին կը տիրանայ Լեռնալիբանանի ախոյեանութեան եւ յաղթելով Լիբանանի Ա. դասակարգի ախոյեանութեան մրցաշարքի վերջին հանդիսացող խումբին, հաւանականութիւն կ'ունենայ մաս կազմելու Լիբանանի Ա. դասակարգի խումբերուն:

1957ին, Ա. խումբի մարզիչի պաշտօնին կը հրաւիրուի Վազգէն Տէր Ղուկասեան: Տարեշրջանի ընթացքին 27 մրցումներէն 23ը կը վերջանան յաղթանակով: Պուրճ Համուտը կը պահէ միջ-մասնաճիւղային մրցաշարքի Բ. դասակարգի ախոյեանի տիտղոսը: Նոյն ձեւով, մասնաճիւղը 1959ի մրցաշարքին կ'արձանագրէ 7-0 արդիւնքով յաղթանակ մը Դամասկոսի դէմ:

Ֆութպոլի առաջին խումբի յաջողութիւնները նոյն թափով տարուէ տարի կը զարգանան իրերայաջորդ ֆութպոլի յանձնախումբերու արդիւնաւէտ գործակցութեամբ: Ա. կազմի 1960 տարեշրջանի 30 մրցումներուն 24ը կը վերջանան յաղթանակով:

1961ին, առաջին կազմը կը տիրանայ Լեռնալիբանանի բաժակին: Նոյն տարին խումբը կը տեղափոխուի Ամման, տեղւոյն մասնաճիւղի վարչութեան հրաւէրով: Բ. դասակարգի 10 խումբերը կ'ունենան ներքին մրցաշարք, որ կը վերջանայ «Յառաջ» խումբի յաղթանակով: 1962ին կազմակերպուած զոյգ մրցաշարքերու առաջինին յաղթական կը հանդիսանայ «Շանթ»ը, իսկ երկրորդին՝ «Յառաջ»ը: Մասնաճիւղի առաջին խումբը Ֆետերասիոնի կազմակերպած ախոյեանական մրցաշարքին բաժակը կ'ապահովէ եւ կը մրցի առաջին դասակարգի խումբերու դէմ, խումբին մարզիչն է Վահէ Մինասեան:

1963ի եղանակին, խումբը կը յաջողի անցնել Ա. դասակարգի խումբերու շարքին: Այս պարագան մրցակցութեան դժուարին կացութիւն մը կը ստեղծէ: Հ.Մ.Ը.Մ.ի զոյգ խումբեր, Պէյ-

րուլթ եւ Պուրճ Համուտ, պիտի ստիպուին ախոյեանական մրցաշարքին իրարու դէմ ճակատիլ: Հարցը կը լուծուի միացեալ հասկացողութեամբ: Պուրճ Համուտի կազմը իր յաղթական յառաջխաղացքը կը շարունակէ իր դասակարգին մէջ խլելով իր մասնակցած բոլոր մրցաշարքերու բաժակները:

1964-65 եղանակին, խումբը կը տիրանայ Լիբանանի Ա. դասակարգի երկրորդ բաժանմունքի ախոյեանութեան:

Երկրորդական խումբերու թիւը որ նուազած էր, ինքզինք կը վերագտնէ 1966ին, տասը նորակազմ խումբերով: Անոնց պատրաստած մարզիկները հետզհետէ կու գան զօրացնել մասնաճիւղի առաջին կազմը: Վերջինս, իր կարգին, ֆուլթպոլի կեդրոնական յանձնախումբի գործունէութեան ծիրին մէջ կը զօրացնէ Պէյրուլթի կազմը, լաւագոյն խաղացողներու փոխանցումներով:

1967 եւ 1968 տարեշրջանին վերոյիշեալ գործակցութիւնը կը շարունակուի յաջողութեամբ: Կեդրոնական յանձնախումբի մէջ մասնաճիւղի ներկայացուցիչն է Ալպեր Ունճեան, իսկ կեդրոնական թեքնիք յանձնախումբին մէջ կը գործեն Զաքար Զորպաճեան եւ Ոսկան Վարդիվառեան: Լեռնալիբանանի ֆուլթպոլի ֆետերասիոնին մէջ մասնաճիւղը կը ներկայացնէ Յակոբ Աշճեանը, իսկ առաջին կազմի մարզիչը կը մնայ Վահէ Մինասեանը: 1969ի մասնաճիւղի գործունէութեան տեղեկագրին մէջ, շարունակուող այս գործակցութեան մասին կը կարդանք հետեւեալը. «... այսօր վերջնական եւ կատարեալ համաձայնութեան եկած ենք Պէյրուլթի մասնաճիւղի վարչութեան հետ եւ կը գործենք ներդաշնակ եւ համերաշխ մթնոլորտի մէջ: ... Այս գծով, յստակ է այլեւս Հ.Մ.Ը.Մ.ի պատասխանատու մարմիններուն առած որոշումը. գաղութիս մէջ ունենալ մի միայն մէկ խումբ Ա. դասակարգի մակարդակով, իսկ միւս բոլոր խումբերը կը նկատուին երկրորդական դասակարգի խումբեր...»:

Իրողապէս, փոխադարձ հասկացողութեամբ ընթացող այս գործակցութիւնը պիտի շարունակուէր յաջորդող տարիներու ընթացքին:

Պուրճ Համուտի մասնաճիւղին ենթակայ երկրորդական բազմաթիւ խումբեր, մասնակցութեամբ շրջանի Հ.Յ.Դ. պատանեկան խումբերու, իրենց շարքերէն մնայուն կերպով հասցուցած են ֆուլթպոլի զօրաւոր խաղացողներ: Տարիներու ընթացքին այս խումբերու միջեւ կազմակերպուած մրցաշարքերը խանդավառած են հարիւրաւոր պատանիներ եւ իրենց շուրջ հաւաքած հազարաւոր համակիրներու զանգուած մը: Այս խումբերէն են Արմէն Գարօ, Արմենիա, Աւարայր, Գէորգ Չաւուշ, Գետաշէն, Դրօ, Եփրատ, Զաւարեան, Խանասոր, Կարս, Համազասպ, Հայրենիք, Մայր Հայաստան, Մշակ, Յառաջ, Նաւասարդ, Նաւասարդեան, Շանթ, Շիրազ, Շիրակ, Ռոստոմ, Սարգարապատ, Սերոբ Աղբիւր, Սիամանթօ, Վրացեան, Վրէժ, Տարօն, Քեռի եւ Քրիստափոր:

Վերոյիշեալ խումբերը, եթէ պահ մը դադրած են գործելէ, կեանքի վերակոչուած են երբ պայմանները կրկին ստեղծուած են եւ վերագտած իրենց կենսունակութիւնը երիտասարդ եւ թարմ ուժերով:

Պասքեթպոլ

Պասքեթպոլի ճիւղը համեմատաբար աւելի ուշ սկսած է կիրարկուիլ Պուրճ Համուտի մասնաճիւղէն ներս: 1945էն առաջ, հազիւ թէ հանդիպինք այս ճիւղի մասին ստոյգ արձանագրութեանց, եթէ նկատի չառնենք Յակոբ Թորիկեանի, Վարուժան Չայլեանի եւ Յարութիւն Եարտըմեանի ճիգերը, որոնք Պէյրուլթի մասնաճիւղի արդիւնքներէն խանդավառուած, փորձեցին Պուրճ Համուտի մէջ եւս ստեղծել պասքեթպոլի հանդէպ լուրջ հետաքրքրութիւն:

Պասքեթպոլը պաշտօնապէս կը սկսի կիրարկուիլ 1945ին, երբ միջ-մասնաճիւղային խաղերուն մասնակցելու նպատակով կը կազմուի մասնաճիւղի անդրանիկ կազմը բաղկացած հետեւեալներէն.- Կարապետ Կիւլիւզեան, Արսէն Նաճարեան, Եփրեմ Կիւլիւզեան, Փանոս Հալաճեան, Մարտիրոս Չայլեան, Յովհաննէս Տէր Յա-

րուժիւնեան եւ Գէորգ Դաւիթեան: 1947ին, մասնաճիւղը կ'անդամակցի լիբանանեան Ֆետերասիոնին, սակայն հետագային անոր արտօնագիրը կը ջնջուի դաշտի օրինական չափերուն չհամապատասխանելուն պատճառով: Մասնաճիւղը կը կիրարկէ մարզախաղը, առանց պաշտօնական ախոյեանութեանց մասնակցութեան: 1954ին, կը կազմուի աղջկանց անդրանիկ խումբը [Խ. 254]:

1957էն սկսեալ, պասքեթպոլի ճիւղը կը զարգանայ արագօրէն: Մասնաճիւղի տղոց եւ աղջկանց զոյգ կազմերը կը մասնակցին Շրջանային Վարչութեան կազմակերպած միջ-մասնաճիւղային Զատկական մրցաշարքին: Թեքնիքօրէն, խումբերը զգալի յառաջդիմութիւն կ'արձանագրեն: Նոր մարզադաշտի օգտագործումը իր բարերար արդիւնքը կ'ունենայ այս ճիւղի զարգացման վրայ: Սակայն այս թափը կը կասի, երբ տրամադրուած դաշտը շինութեան օգտագործուելով կը դադրի ծառայէ: Պահ մը խումբ

բերը կ'օգտագործեն Էհրամճեան վարժարանի դաշտը: Պէտք էր սպասել մինչեւ 1961 թուականը, երբ Շրջանային Վարչութեան ճիգերով եւ Ազգային Իշխանութեանց բարեացակամութեամբ, նորակառոյց ժողովրդային Տան կից հողամասը կը տրամադրուի մասնաճիւղին իբրեւ պասքեթպոլի դաշտ օգտագործուելու համար: Դաշտի բացումը տեղի կ'ունենայ 7 Մայիս 1961ին: Պասքեթպոլի տղոց եւ աղջկանց խումբերը, ինչպէս նաեւ վեց երկրորդական խումբեր, կրկին կը սկսին գործել: Նոյն տարին, տղոց առաջին կազմը կը տիրանայ Մեթն գաւառի մրցաշարքի բաժակին:

1962ին, խումբերը տեղատուութեան մէջ են, սակայն 1963ին, մասնաճիւղը պաշտօնապէս մաս կը կազմէ լիբանանեան Ֆետերասիոնին, ինչ որ խթան կը հանդիսանայ խումբի վերաորակաւորման: Խումբի մարզիչն է Մինօ Էրզրումեան: Յառաջդիմութեան այս խոստմնալից ընթացքը կրկին կը կասի, երբ մարզադաշտը անդործածելի կը դառնայ Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Գոլէճի շէնքի շինութեան պատճառով: Այս դադարը պիտի տեւէր մինչեւ 1966 թուականը, երբ խումբը կրկին կազմուեցաւ հսկողութեամբ Կարօ Գազանճեանի: 1967էն սկսեալ, դաշտի լուսազարդումով կարելի կը դառնայ գիշերային փորձերը եւ 1968ի վերջաւորութեան տղոց եւ աղջկանց չորս խումբեր կը գործեն մասնաճիւղէն ներս: Տարեշրջանի ընթացքին առաջին կազմը կ'այցելէ Գահիրէ՝ Նիր Իսթ ալիումբի հրաւէրով, տղոց եւ աղջկանց խումբերը Լաթաքիա՝ տեղւոյն մասնաճիւղին հրաւէրով: Նիր Իսթի խումբը կը փոխադարձէ այցելութեան, 1968 Ապրիլ 20ին:

Յաջորդող տարիներուն, փոխադարձ այցելութիւններու ստեղծած խանդավառ մթնոլորտը, ինչպէս նաեւ խումբերու պատրաստութեան հետեւողական աշխատանքները յաջողեցան բարձր մակարդակի հասցնել մասնաճիւղի պասքեթպոլի ճիւղը: Տղոց եւ աղջկանց կազմերը, միջ-մասնաճիւղային եւ միջ-ալիումբային մրցաշարքերուն մասնակցելով, յաջողեցան գրաւել պատուոյ դիրքեր:



Պուրճ Համուտի պասքեթպոլի տղոց խումբը

1972ին, պասքեթպոլի յանձնախումբի անդամներն են կարօ Գազանճեան, Մինօ Էրզրումեան, Վրէժ Ֆուլուրեան, Յարուժիկն Գազանճեան եւ Վարուժան Գասպարեան:

Աթլետիզմ եւ սարմնամշակում

Զիրար ամբողջացնող մարզական այս զոյգ ճիւղերը կը մշակուին մասնաճիւղի անդամներուն կողմէ կազմակերպուած ձեւով:

1955ին, մասնաճիւղի անդամակցութիւնը լիբանանեան աթլետիզմի եւ հեծելարշաւի ֆետերասիոնին, յաւելեալ խթան կը հանդիսանայ կազմակերպելու միջ-ակումբային քրոս քառանթրիի մրցումներ Պուրճ Համուտ - Նահր Քելպ գիծին վրայ: Մասնաճիւղի աթլետներէն կարօ Գազանճեան, 1957ին, Փարիզի մէջ կը մասնակցի միջազգային միջ-համալսարանականներու վազքի մրցումներուն իբրեւ լիբանանեան պատուիրակութեան անդամ: Նոյն տարին, Սեդրակ Սարգիսեան կը շահի Պիքֆայա - Տհուր Շուէյր երթուղարձ քրոս քառանթրիի մրցումի առաջնութիւնը:

1955էն սկսեալ, մարմնամշակումի ճիւղի ղեկավարութիւնը կը յանձնուի Ճորճ Թորոսեանին: Յիշեալը կատարեալ ձեռներէցութեամբ այս պաշտօնը կը վարէ երկար տարիներ, մարմնամշակներու թիւը երբեմն հասցնելով 40ի: Այս ճիւղը կը մշակուի յատուկ հաւաքավայրի մը մէջ, ուր մարզիկներու տրամադրութեան տակ կը գտնուին կարեւոր ամէն կարգի գործիքներ:

Աթլետիզմի հիմնական առաջին փորձերը կը սկսին 1961ին մարզաճիւղի ամբողջական խումբի մը կազմութեամբ: Փորձերը կը վարէ Յովհաննէս Տէր Յարուժիկեան, օժանդակութեամբ Խաչեր Յակոբեանի: Շնորհիւ յարատեւ ու մասնագիտական պատրաստութեան եւ մասնաճիւղի աթլետներու մեծաթիւ մասնակցութեան կը կազմուի Լիբանանի մասնաճիւղերու միացեալ աթլետիզմի խումբը: Այս կազմին ներկայացուցչական պատուիրակութիւնը կը յաջողի Հ.Մ.Ը.Մ.ի քառասնամեայ յորեւեանին նուիր-

ուած, եգիպտահայ ԺԴ. ախոյեանական մրցումներուն գրաւել երկրորդ դիրքը: Այս պատուաբեր արդիւնքի կերտիչներէն կ'ըլլան կարօ Գազանճեան, Արա Պալեան, Ալեքս Պեգիկեան, Վարուժան Գէորգեան եւ ուրիշներ:

1962ին, աթլետներու խումբը կը յաջողի Լեռնալիբանանի քրոսի մրցումին խմբական առաջնութեան տիրանալ: Յաջորդող տարիներուն այս ճիւղի զարգացումը աւելի շեշտուած կերպով ի յայտ կու գայ, աթլետիք յանձնախումբի ժրջան գործակցութեամբ: Փորձերը տեղի կ'ունենան Քամիլ Շամուն մարզաւանի դաշտին վրայ: 1963ին, այս ճիւղի գործունէութիւնը կը համադրուի Պէյրութի եւ Ճիւնիի մասնաճիւղի խումբերու միացեալ դասաւորումով: Աթլետիզմի աղջկանց կազմը 1965 տարուան ընթացքին կը տիրանայ Լիբանանի ախոյեանութեան տիտղոսին: Խումբը իր մէջ կը հաշուէ Լիբանանի մրցանիշակիրներ: Մարզիչներն են Վարդգէս Էսկիպաշեան եւ Ալիս Գլգաթեան:

Երեք մասնաճիւղերու համադրուած գործակցութիւնը պիտի շարունակուէր յաջորդող տասնամեակներու ընթացքին:

Բացի վերոյիշեալ աթլետներէն մասնաճիւղի աթլետներու խումբին մաս կազմած են՝ Համբար Եագուպեան, Գօգօ Գուշեան, Սարգիս Եփրեմեան, Հրաչ Պոյաճեան, Վարուժան Մախամեան, Զաքար Զաղացպանեան, Վրէժ Չալեան եւ ուրիշներ:

Մարմնամշակումի ճիւղին նպաստած են՝ Վարուժան Գէորգեան, Զաւէն Գարակէօզեան, Համբար Թորոսեան եւ Սարգիս Եփրեմեան, վերջինս սիրայօժար դրամադրելով իր մարզասրահը:

Փիճկ-Փոճկ

Սկզբնական շրջանի նստավայրի անպատեհութեան պատճառով, Փինկ-փոնկի ճիւղը կը սկսի գործել միայն 1955ին, երբ Պուրճ Համուտի ակումբը կը փոխադրուի Նոր Մարաշ թաղամասը: Այնուհետեւ, անհատական ճիգերով կը

հասնին փինկ-փոնկը կիրարկող անդամներ, որոնցմէ յաջողակ մարզիկները մասնակցած են Պէյրուժի մասնաճիւղի խումբին, ելոյթներ ունենալով միջ-ակումբային եւ լիբանանեան ախոյեանական մրցաշարքերու ընթացքին: Այս կարգի մարզիկներ են՝ Հայկ Աշքարեան 1956էն սկսեալ եւ Րաֆֆի Մունջողլեան:

Վերջինս 1972էն սկսեալ, Լիբանանի փինկ-փոնկի պատմութեան պիտի անցնէր կրտսերներու գտումի մրցաշարքի ախոյեանութեան տիրանալով: Ան, նոյն տարին, Լիբանանը կը ներկայացնէ Չինաստանի մէջ կազմակերպուած կրտսերներու միջազգային ախոյեանութեան:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

Պուրճ Համուտի մասնաճիւղի սկաուտական գործունէութիւնը, 1940ին, կը վստահուի յատուկ սկաուտական խորհուրդի, հետեւեալ կազմով.

- Ատենապետ՝ Յակոբ Մինասեան
- Ատենադպիր՝ Յովնան Ոսկերիչեան
- Գանձապահ՝ Յովհաննէս Աւագեան
- Խորհրդականներ՝ Գ. Գասապեան, Յ. Գարակէօզեան:

Սակայն, հակառակ պատանիներու թիւի հոծ կարելիութեան, սկաուտական գործունէութիւնը ցանկացուած չափերով չի զարգանար: Այս տկարութեան գլխաւոր պատճառը մասնագէտ ու կարող խմբապետի մը պակասն է: 1942ին, վարչութիւնը կը փորձէ վճարովի սկաուտ խմբապետ մը ապահովել, բայց փորձը չի յաջողիր: Այս նպատակով Պէյրուժի մասնաճիւղի եւ Շրջանային Վարչութեան մօտ եղած դիմումները դրական արդիւնքի չեն յանգիր: Սկաուտական խումբի կորիզը կը վարէ Կարապետ Կիւլիւզեան, օժանդակութեամբ վարչութեան ատենապետ Յակոբ Պուպուլչեանի: Սեփական ճիգերով զարգացող այս շարժումը հետզհետէ իր արդիւնքները պիտի տար: Պատերազմական օրերու աւարտին, 1945էն սկսեալ, սկաուտական շարքերը սկսան խտանալ:

1946-1947 տարիներուն, զարգացաւ նաեւ

սկաուտական նուագախումբը, յատուկ խանդավառութեան աղբիւր դառնալով միութենական կամ ազգային առիթներով կազմակերպուող տողանցքներուն: Իւրաքանչիւր նման ելոյթ իր անմիջական արձագանգը կ'ունենար նոր արձանագրութիւններու դուռ բանալով դէպի սկաուտական շարքերը: Սկիզբը նուագախումբի ղեկավարն էր Գրիգոր Գազանճեան, որուն յաջորդեց Յակոբ Գուլյումճեանը (Կոմիտաս):

1950ի սկիզբը, մասնաճիւղի սկաուտական բաժինը ներքին անհասկացողութիւններու պատճառով տազնապի մէջ է: Սկաուտական խորհուրդը ամիսներէ ի վեր ժողով չէ գումարած: Սկաուտական շարքերը, ինչպէս նաեւ նուագախումբը կազմալուծ վիճակ մը կը ներկայացնեն: Շրջանային Վարչութիւնը կը միջամտէ վերակենդանացնելու համար մասնաճիւղի սկաուտական գործունէութիւնը: Կ'որոշուի դադրեցնել նախապէս տրուած պաշտօնները եւ նոր սկաուտական խորհուրդի մը նշանակումէն ետք, սկաուտական շարքերուն նոր անդամներ արձանագրել:

Սկաուտական բաժնի վերականգնումը երկու յաջորդական տարիներու վրայ պիտի երկարէր:

1952ի սկիզբը, վարչութիւնը կը խնդրէ Շրջանային Վարչութենէն նուագախումբի նախկին ղեկավար Յակոբ Գուլյումճեանի (Կոմիտաս) մեկուսացման պատիժի ներումը, որպէսզի կարելի ըլլայ սկաուտական նուագախումբը կրկին կեանքի կոչել: Այս եւ այլ կարող սկաուտ պատասխանատուներու գործակցութեամբ կարելի կ'ըլլայ սկաուտական բաժինը կրկին վերակազմել:

1955 տարեշրջանի սկաուտական խորհուրդին մաս կը կազմեն՝

- Ատենապետ՝ Գէորգ Կիւրկէնեան
- Ատենադպիր՝ Առաքել Տէր Առաքելեան
- Գանձապահ՝ Բենիամին Գուլաքճեան

Այս խորհուրդին, 1956 Մայիսէն սկսեալ, յաջորդեց նշանակեալ նոր սկաուտական խորհուրդ հետեւեալ կազմով.-

Ատենապետ՝ Բենիամին Գուշաքճեան
 Ատենադպիր՝ Հայկազ Սաղպազարեան
 Գանձապահ՝ Յակոբ Ճինպաչեան
 Գոյքապահ՝ Յարուժիկն Յակոբեան
 Խորհրդական՝ Առաքել Չեքիճեան
 Վարչութեան ներկայացուցիչ՝ Արսէն Նա-
 ճարեան

Սկաուտական խմբապետ՝ Յովհաննէս Թեր-
 ճանեան:

Աստիճանաւորներու ցանցը զօրացնելու
 նպատակով, 10 Յունիս 1956ին, խորհուրդը կը

կազմակերպէ երդման արարողութեան հանդէս
 որու ընթացքին կը բաշխուի 3 վարիչ-առաջնոր-
 դի, մէկ առաջնորդի եւ 14 փոխ-առաջնորդի
 աստիճաններ: Սկաուտական կազմի տարազաւո-
 րումը կը յաջողցուի գոհացուցիչ չափով:

11 Մարտ 1957ին, կը կազմուի նոր սկաու-
 տական խորհուրդ հետեւեալ կազմով.-

Ատենապետ՝ Յակոբ Ճինպաչեան
 Ատենադպիր՝ Հայկազ Սաղպազարեան
 Փոխ ատենադպիր՝ Շապուհ Աճէմեան
 Գանձապահ՝ Ներսէս Գէորգեան



Պուրճ Համուտի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական աստիճանաւորական կապը 1957ին:
 Կեդրոնը՝ խմբապետ՝ Յովհաննէս Թերճանեան

Վարչութեան ներկայացուցիչ՝ Աւետիս Պալպանեան

Սկառուտական պատասխանատու՝ Գրիգոր Գազանճեան

Սկառուտական խմբապետ՝ Յովհաննէս Թերճանեան

Խորհրդական՝ Յակոբ Եագուպեան:

Հալէպի մէջ սկառուտական խումբերէն 143 հոգի կը մասնակցին, միջ-մասնաճիւղային Զատիկական հանդիպումներուն առթիւ կազմակերպուած ընդհանուր տողանցքին: Նոյնպէս, խումբերէն մեծ թիւով պատուիրակութիւններ ներկայ կը գտնուին ազգային եւ եկեղեցական տօնակատարութեանց, ստանձնելով կարգապահական հսկողութիւններ: Հետզհետէ, զարգացող եւ

թուական աճ արձանագրող այս գործունէութեան կը միանայ նաեւ սկառուտական նուագախումբի գործունէութիւնը:

1960 տարեշրջանի սկառուտական աստիճանաւորական ցանցին մաս կը կազմեն՝

Սկառուտական Ա. խումբի փոխ խմբապետ՝ Զործ Թորոսեան

Սկառուտական Բ. խումբի վարիչ առաջնորդ՝ Կարապետ Նորիկեան

Սկառուտական Գ. խումբի վարիչ առաջնորդ՝ Պօղոս Պօղոսեան

Սկառուտական Դ. խումբի առաջնորդ՝ Համբարձում Չալտրեան

Աքելաներ՝ Ա. վոհմակ՝ Տիգրան Ճինպաշեան



Պուրճհամուտի երէց սկառուտներու երդման արարողութեան հանդիսութիւն հովանաւորութեամբ՝ Գարեգին Արքեպիսկոպոս Սարգիսեանի հետագային Գարեգին Բ. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ եւ Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց

- Բ. վոհմակ՝ Վարդան Գուլումճեան
- Գ. վոհմակ՝ Սարգիս Ֆուճուրեան
- Դ. վոհմակ՝ Արսէն Տէրմէնճեան:

Արենուշական չորս խումբերու պատասխանատուներն են Հիլտա Տէմիրճեան, Մարկէ Դաւիթեան, Անուշ Չաքալեան եւ Արփի Ատուրեան:

Սկաուտական կազմի ընդհանուր թիւն է 260:

Սկաուտական խորհուրդին մաս կը կազմեն.-

- Ատենապետ՝ Յակոբ Մինասեան
- Ատենադպիր՝ Կարպիս Կարպուշեան
- Գանձապահ՝ Գրիգոր Թորոսեան
- Հաշուապահ՝ Լեւոն Պուլտուքեան
- Գոյքապահ՝ Սմբատ Նուրեան
- Խմբապետ՝ Յովհաննէս Թերճանեան:

Վարչութեան ներկայացուցիչ՝ Խաչիկ Գալուստեան:

Սկաուտական եւ արենուշական խումբերը միշտ ներկայ են ազգային, եկեղեցական եւ պետական հանդիսութեանց եւ արարողութեանց, մասնակցութեամբ սկաուտական կենսունակ նուազախումբին:

Տպաւորիչ այս ներկայութիւնը փնտռուած եւ հպարտառիթ իրողութիւն մըն է հայ եւ տեղացի շրջանակներուն մօտ: Այս տարեշրջանէն սկսեալ սկաուտական շարքերը կ'արձանագրեն թուական աճ: 1963ին, շարքերը հետեւեալ պատկերը կը ներկայացնեն:

- Սկաուտներ՝ 89
- Գայլիկներ՝ 40
- Արենուշներ՝ 62
- Մըջնիկներ՝ 38

Խումբերու ընդհանուր պատասխանատուն է Ալետիս Մունջեանը:

1964 տարեշրջանի Սկաուտական Խորհուրդը կը բաղկանայ հետեւեալներէն.-

Ատենապետ եւ վարչութեան ներկայացուցիչ՝ Նուպար Մանկասարեան

Փոխ ատենապետ եւ սկաուտական պատասխանատու՝ Գրիգոր Կարապետեան

Ատենադպրուհի եւ արենուշ պատասխանատու՝ Իսկուհի Գալասեան

Գանձապահ՝ Ժիրայր Յակոբեան

Գոյքապահ եւ գայլիկներու պատասխանատու՝ Յակոբ Գազանճեան

Մթերանոցի պատասխանատու՝ Ալետիս Աբրահամեան

Խորհրդական՝ Կարապետ Նորիկեան:

Այս տարեշրջանին խումբերուն մասնակցողներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 316ի:

Խումբերը կազմակերպած են 7 բանակումներ, 21 արշաւներ եւ բազմաթիւ դաստիարակչական այցելութիւններ, խաղեր, մարզական մրցումներ, հանգրուանային խաղեր եւ ծնողական հաւաքոյթներ: Տարուան ընթացքին Գրիգոր Կարապետեան եւ Իսկուհի Գալասեան Շրջանային Սկաուտական Խորհուրդի որոշումով կը ստանան փոխ-խմբապետի աստիճան: Յակոբ Պուլտեան եւ Ադամ Քեքլիկեան կը մասնակցին համա-արաբական սկաուտական ճեմպորիին՝ Աղեքսանդրիա:

Սկաուտական խորհուրդի նիւթական գործառնութեան պատկերն է՝ մուտք 3961 լ.ո., ելք՝ 3331 լ.ո.:

1965ին, վերոյիշեալ գործունէութիւններուն վրայ կ'աւելնայ մասնագիտական գրադարանի մը կազմակերպումը, 40 զուտ սկաուտական գիրքերով: Սկաուտական խորհուրդին կ'անդամակցին Յովհաննէս Թերճանեան, Գրիգոր Մարգարեան, Գրիգոր Թորոսեան, Առաքել Տէր Առաքելեան, Գրիգոր Կարապետեան, Յակոբ Գազանճեան եւ Կարօ Նորիկեան:

1966ի սկաուտական խորհուրդի կազմն է.-

- Ատենապետ՝ Յովհաննէս Թերճանեան
- Փոխ ատենապետ՝ Յակոբ Մինասեան
- Ատենադպրուհի՝ Իսկուհի Գալասեան
- Փոխ ատենադպիր՝ Միշէլ Շահինեան
- Գանձապահ՝ Գրիգոր Թորոսեան
- Մթերապահ՝ Կարապետ Նորիկեան
- Գոյքապահ՝ Գրիգոր Կարապետեան

Խորհրդականներ՝ Մարտիրոս Չալեան, Արփինէ Շահինեան:

Բացի ակումբէն ներս գործող կազմերէն, արենուչական յատուկ խումբ մը կը գործէ Ազգ. Աքսոր Գասարճեան վարժարանէն ներս:

1967 տարուան ընթացիկ գործունէութեան վրայ կ'աւելնայ 12 սկաուտներու մասնագիտացումը նախնական դարմանումի դասընթացքներու մասնակցութեամբ:

1968ի սկաուտական խորհուրդը տարեշրջանի ընթացքին կազմի փոփոխութեան կ'ենթարկուի եւ միանալով արենուչական խորհուրդին հետ կը ստանայ հետեւեալ պատկերը:-

Ատենապետ՝ Յակոբ Մինասեան
Փոխ ատենապետուհի՝ Սեդա Սարեան
Ատենադպրուհի՝ Շաքէ Սրապեան
Գանձապահ՝ Արշակ Տօնոյեան

Հաշուապահ՝ Հերմինէ Թորիկեան
Գոյքապահ՝ Մարտիրոս Չալեան
Մթերապահ՝ Կարապետ Նորիկեան
Արենուչներու պատասխանատու՝ Մարո Յոլակեան

Երէցներու պատասխանատու՝ Գրիգոր Մկրտիչեան:

Կազմի ընդհանուր թիւը, նուազախումբով միասին, շուրջ 300 հոգի է: Ըստ աւանդական սովորութեան, խումբերը կը կազմակերպեն Սբ. Ծնունդի եւ Սբ. Չատկուան աւետումներ:

1969ի սկաուտական խորհուրդին կը մասնակցին Միքայէլ Շահինեան, Գէորգ Աւրնեան, Շաքէ Սրապեան, Միհրան Ջէնեան, Պապի Կոստանեան, Գրիգոր Կարապետեան, Գրիգոր Մկրտիչեան, Աբրահամ Մոսիկեան, Մարո Յոլակեան, Արշակ Տօնոյեան եւ Կարապետ Նորիկեան:



Պուրճ Համուտի Գայլիկներու վոհմակը 1957ին: Կեդրոնը աքելա Աւետիս Մունջողլեան

եան: Այս տարեշրջանին յատուկ ուշադրութեան կ'արժանանայ սկաուտական նուագախումբը, որուն նոր գործիքներու գնման եւ հիններու նորոգութեան համար կը յատկացուի շուրջ 3500 լիբ. ոսկի:

8 Մարտ 1971ին, կը նշանակուի նոր սկաուտական խորհուրդ հետեւեալ կազմով.-

- Ատենապետ՝ Արսէն Նաճարեան
- Ատենադպիր՝ Երուանդ Էթեմէմէզեան
- Փոխ ատենադպիր՝ Իսկուհի Խաչերեան
- Գանձապահ՝ Նազարէթ Աշճեան
- Հաշուապահ՝ Շաքէ Սրապեան

Մթեջահլէի Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուլթայոլի խումբը-րապահ՝ Գէորգ Ալաճաճեան

Նուագախումբի պատասխանատու՝ Գաբրիէլ Հաճեան

Խորհրդական՝ Նազարէթ Սալպաչեան:

Այս տարեշրջանի սկաուտական կազմը կ'արձանագրէ բացառիկ աճ. սկաուտներ՝ 125, արենուչներ՝ 60, մարզիկներ՝ 90, գայլիկներ՝ 125, նուագախումբ՝ 42, Կիլիկիան վարժարանի խումբ՝ 50: Թուական այս աճի պատճառով աղումբի սենեակները անբաւարար են: Հաւաքոյթները տեղի կ'ունենան Կիրակի առաւօտները, Լեւոն եւ Սոփիա Յակոբեան Ազգային Գուլէճի բակը: Սկաուտական գործունէութեան ծիրը կ'ընդլայնի, նոյնպէս նիւթական գործառնութիւնը:

1972ի սկաուտական խորհուրդին մաս կը կազմեն.-

- Ատենապետ՝ Նազո Սալպաչեան
- Ատենադպիր՝ Ֆլորանս Սահակեան
- Գանձապահ՝ Նազո Աշճեան
- Հաշուապահ՝ Շաքէ Սրապեան

Խորհրդականներ՝ Յասմիկ Թաթուլեան, Գէորգ Ալաճաճեան, Եղիա Գոճանեան, Գաբրիէլ Հաճեան:

Բացառիկ խնամքի կ'արժանանայ սկաուտական նուագախումբը, որ իր նոր գործիքներով փայլքը պիտի հանդիսանար Հ.Մ.Ը.Մ.ի 35րդ միջ-մասնաճիւղային Զատկական հանդիպումներուն, Պէյրուսի մարզաւանի դաշտին վրայ:

ԱԿՈՒՄԲ ԵՒ ՄԱՐԶԱԴԱՇՏ

Մասնաճիւղի հիմնադրութեան յաջորդող տարիներէն սկսեալ վարչութիւններու մտահոգութիւնը դարձաւ աղումբի մը եւ մանաւանդ ֆուլթայոլի մարզադաշտի մը ապահովումը: Անդամական թիւի աճը եւ մարզական թէ աղումբային նոր գործունէութիւններու ընթացքը կ'արգիլակուէր անոնց չգոյութեան պատճառով: 1942 տարեշրջանը աւարտող վարչութեան գործունէութեան տեղեկագրին մէջ վերոյիշեալ մտահոգութիւնները քանիցս կը շեշտուին: Հարցը իբրեւ մասնաճիւղի մտահոգութիւն կը փոխանցուի 7րդ Պատգամաւորական Ժողովին: Տարիները կը սահին, սակայն աղումբի եւ մարզադաշտի հարցերը օրակարգերու նիւթ դառնալէ չեն դադրիր: 1945ին միայն վարչութիւնը կը յաջողի ֆուլթայոլի դաշտ մը վարձել եւ կը լծուի դաշտի յարդարման աշխատանքին: Վարձքը նախատեսուած է հինգ տարուայ համար:

Ֆուլթայոլի սեփական դաշտ մը ունենալու կարիքը նաեւ Պէյրուսի մասնաճիւղի մտահոգութիւնը ըլլալուն, 1947էն սկսեալ, Շրջ. Վարչութեան գլխաւորութեամբ, զոյգ մասնաճիւղերու անդամներէն բաղկացած յանձնախումբ մը կը կազմուի: Այս յանձնախումբի պարտականութիւնն էր գտնել նպատակայարմար հողաշերտ մը՝ ֆուլթայոլի մարզադաշտ սարքելու նպատակով: Մասնաճիւղի անդամներէն Արշակունի Ռաֆայէլեան եւ Յովհաննէս Յարութիւնեան մաս կը կազմեն այս յանձնախումբին, ամիսներու վրայ երկարող պրպտումները կը յանգին միեւնոյն եզրակացութեան՝ կամ հողաշերտը անյարմար է, կամ գինը անյաղթահարելիօրէն բարձր:

Նոյն տագնապը կը տիրէ մասնաճիւղի նստավայրի նկատմամբ: Մասնաճիւղը մինչեւ 1955 թուականը վարչական եւ յանձնախմբային իր ժողովները կը գումարէ Միսաք Ազիրեանին պատկանող, անաւարտ, միայնակ շէնքին մէջ: Շէնքը իր ծաւալով եւ կառոյցով չէր կրնար այլեւս բաւարարել մասնաճիւղի վարչական, մար-

զական եւ սկառտական կարիքները: Առ այդ, վարչութիւնը վարձու կ'առնէ Նոր Մարաշ թաղամասի ներկայ նստավայրի դիմաց գտնուող յարկաբաժին մը, յարակից փոքր հողաշերտով: Հազիւ բաւարար այս նստավայրն ալ ճամբու դասաւորման պատճառով քաղաքապետութեան կողմէ կը սեփականագրուի 1960ին:

Մասնաճիւղի վարչութիւնը կրկին նստավայրի պրպտումին կը լծուի: 1961ին, Նոր Մարաշ թաղի ազգապատկան հողաշերտի մէկ մասը, յատուկ համաձայնագրով կը տրամադրուի Հ.Մ.Ը.Մ.ին, պասքեպթուլի դաշտի մը շինութեան համար: Շինութեան աւարտին, 7 Մայիս 1961ին, տեղի կ'ունենայ դաշտի պաշտօնական բացումը, նախագահութեամբ Լիբանանի Թեմի Առաջնորդ Խորէն Արք. Բարոյեանի:

Նոյն տարին, պասքեպթուլի դաշտին յարակից հողաշերտին եւ Լիբանանահայ Օգնութեան Խաչի «Միհրդատ Թնկրեան» շէնքի վայրին վրայ Հ.Յ.Դաշնակցութիւնը կը ձեռնարկէ ժողովրդային Տան շինութեան: Շինութիւնը պիտի պարփակէր Հ.Յ.Դ. Սարդարապատ ակումբը, Համազգայինի «Յակոբ Տէր Մելքոնեան» սրահը, Լ.Օ.Խ.ի «Պնակ մը կերակուր»ի ձեռնարկը եւ Հ.Մ.Ը.Մ.ի ակումբը: Այս շինութեան երկրորդ յարկին վրայ է, որ վերջնականապէս պիտի հաստատուէր Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղը:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղին՝ ազգային եւ եկեղեցական տօներու, տարեդարձներու եւ հանդիսութեանց մասնակցութիւնը յաջորդական վարչութիւններու նախանձախնդիր ուշադրութեան կ'արժանանայ մնայուն կերպով:

Արդարեւ, իւրաքանչիւր անգամ, որ եկեղեցւոյ թաղականութիւններ, քաղաքապետութիւններ, կուսակցական կոմիտէութիւններ կամ Հ.Մ.Ը.Մ.ի քոյր մասնաճիւղեր դիմած են իրեն, վարչութիւնը դրական պատասխանած է հրաւէ-

րին, սկառտական իր շարքերը կամ նուազախումբը տրամադրելով եւ ձեռնարկի յաջողութեան նպաստելով:

Այս կարգի մնայուն ներկայութիւն եղած են Ապրիլ 24ի Նահատակաց Տօնի, Մայիս 28ի Հայաստանի անկախութեան եւ Նոյեմբեր 22ի Լիբանանի անկախութեան հանդիսութեանց: Շրջանի թաղերուն մէջ սկառտական նուազախումբի խանդավառ՝ նուագներով՝ սկառտական խումբերը զանազան առիթներով տողանցած են կարգապահ շարքերով: Սկառտական նուազախումբի անդամները, Սբ. Ծննդեան սւ Սբ. Զատուտան տօներու գիշերները այցելած են ազգայիններու բնակարաններ եւ շնորհաւորական քարթերով աւետումներ կատարած:

1947էն սկսեալ, մասնաճիւղը կ'ունենայ նաեւ «Պարոնեան» թատերախումբը, որուն ներկայացումները կ'անցնին Պուրճ Համուտի սահմանները, հասնելու համար Լիբանանի հայաշատ ամարանոցներ ու այլ մասնաճիւղեր:

Մասնաճիւղը պարբերաբար կազմակերպած է «Հ.Մ.Ը.Մ.ի Օր»ուան տօնակատարութիւն: Յատուկ շուքով կազմակերպուած է 1952ի «Հ.Մ.Ը.Մ.ի Օր»ուան հանդիսութիւնը, Յունիսի 15ին, Մարաշի հայրենակցական Միութեան սրահին մէջ, հովանաւորութեամբ լիբանանահայ թեմի Առաջնորդ Խորէն Եպիսկոպոս Բարոյեանի եւ նախագահութեամբ Շրջանային վարչութեան ատենապետ Տոքթ. Ատուր Գապաքեանի: Օրուան բանախօսն է Անդրանիկ Ծառուկեան: Այս հանդիսութեան առթիւ, վարչութիւնը բացուած կը յայտարարէ պասքեպթուլի դաշտի շինութեան ֆոնտ:

Այս կարգի նուիրատուութիւններու գումարով յաջորդական վարչութիւններ կը յաջողին իրականացնել դաշտի եւ ակումբի բարեզարդման աշխատանքները:

Հրապարակային այս ելոյթներու կողքին, մասնաճիւղը յաճախակի կերպով կազմակերպած է անդամական ներքին հաւաքոյթներ, անդամներու միջեւ ծանօթացման եւ ընկերային միջնորդութիւն ստեղծելու, մարզական խումբերու

յաջողութիւնները քաջալերելու եւ անդամները աւելի սերտօրէն Միութեան գործունէութեան լծելու նպատակով: Այս հաւաքոյթները յաճախ ունեցած են դաստիարակչական բնոյթ, յայտագրին վրայ ունենալով զանազան օգտակար նիւթերու շուրջ դասախօսութիւններ, եւ վերջացած են հիւրասիրութիւններով կամ միջ-անդամական խրախճանքներով:

ԱՅՆՃԱՐ

ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ

1939ին, Սանճաքի նահանգը Սուրիայէն անջատուելով միացուեցաւ Թուրքիոյ: Տարիներէ ի վեր հայաշատ այս նահանգին մէջ գործող՝ Ալեքսանտրէթի, Անտիոքի եւ Քըրքիսանի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու զգուշաւոր գործունէութիւնը ընդմիջտ դադրեցաւ: Մուսա լերան հերոսական ինքնապաշտպանութեան լրումով, պիտի սկսէր հայկական տեղահանութիւն դէպի Սուրիոյ եւ Լիբանանի ապահով չրջանները: Տեղահանուող հայութեան Սուէտիոյ զանգուածը, 1939ի աշնան, Ֆրանսական հոգատարական իշխանութեան որոշումով կայք հաստատեց Լիբանանի Պէքաա նահանգի Այնճար եղեգնուտին մէջ, վրաններու տակ: Այս կեդրոնը հայու շինարարական շնորհքով շուտով վերածուեցաւ հայկական գիւղի մը, ուր հետզհետէ կեանք առին եկեղեցի ու դպրոց:

Այնճարի մէջ, 1940ական թուականներու կէսերէն սկսեալ, մտածուեցաւ հիմնել Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ: Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Շրջանային Վարչութիւնը, իր 26 Նոյեմբեր 1947ի նիստի ընթացքին, պաշտօնապէս քննեց Այնճարի մէջ Հ.Մ.Ը.Մ.ական շարժում նախաձեռնելու հարցը, իսկ 3 Դեկտեմբերին որոշեց Այնճարէն Զայրմար Մինասեանին եւ Յարութիւն Շերպէթեանին պաշտօն յանձնել Այնճարի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներու ժողով մը գումարելով մասնաճիւղ մը հիմնելու ծրագիրը զարգացնելու:

Սկզբնական այս խմորումներէն ետք, 11 Յուլիս 1948ին, Այնճար կը մեկնին Շրջանային Վարչութենէն՝ Տոքթ. Արամ Պաղտասարեան, Տոքթ. Յակոբ Պերպէրեան, Յովհաննէս Շահինեան, Մանուկ Տէտէեան եւ Օննիկ Փիլիկեան եւ տեղւոյն ազգայիններէն տասնըմէկ անձնաւորութիւններու ներկայութեամբ, միասնաբար կ'որոշեն Այնճարի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը հիմնուած յայտարարել: Տեղւոյն վրայ կը կազմուի առժամեայ մարմին մը, կազմակերպելու համար Այնճարի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողով: Այս մարմնին մաս կը կազմեն Նազարէթ Պըտտենեան, Անդրանիկ Ուրֆալեան, Սերոբ Քէօսէեան, Անդրանիկ Աբրահամեան եւ Զարմայր Մինասեան:

25 Յուլիս, 1948ին, Շրջանային Վարչութենէն Վահրամ Կիւրճեանի, Տոքթ. Յակոբ Պերպէրեանի եւ Օննիկ Փիլիկեանի ներկայութեան 29 նորագիր անդամներ կը գումարեն մասնաճիւղի անդրանիկ անդամական ընդհանուր ժողով եւ կ'ընտրեն մնայուն վարչութիւն, բաղկացած հինգ անդամներէ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

Մասնաճիւղի առաջին տարիներու գործունէութիւնը կը կեդրոնանայ սկաուտութեան վրայ: Զահլէի մասնաճիւղէն Նուպար Մանկասարեան իբրեւ փորձառու մարզիչ-սկաուտապետ իր հերթական այցելութիւններով, մեծապէս կը նպաստէ այս գործունէութեան յաջողութեան: Մարզական գործունէութիւնը կը սկսի Փութպոլի խումբի մը կազմութեամբ: 1948ի Օգոստոսին, սկաուտներու թիւը կը հասնի 30ի: Նուպար Մանկասարեան իր հերթական այցելութիւններով կը կազմակերպէ Փութպոլի խումբը եւ կը հսկէ փորձերուն: Նոյնպէս, սկաուտական շարքերը կը կազմակերպուին եւ կը յառաջդիմեն Նուպար Մանկասարեանի յարատեւ ճիգերով:

1949ի Փետրուար ամսուան սկիզբը մասնա-
ճիւղը կ'ընտրէ նոր վարչական կազմ:

6 Մարտ 1949ին, Այնճարի Հ.Մ.Ը.Մ.ը կը
կազմակերպէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան երես-
նամեակի հանդիսութիւն: Օրուան բանախօս-
ներն են Տոքթ. Ատուր Գապաքեան եւ Յովհան-
նէս Շահինեան: Հանդիսութեան ընթացքին տե-
ղի կ'ունենայ սկաուտական երգման արարողու-
թիւն: Այս առթիւ սկաուտներու ի նպաստ
նուիրահաւաքէն կը գոյանայ 468 լ. ոսկի:
Սկաուտական ճիւղը տարուէ տարի կը զօրանայ
եւ կ'ունենայ թուական կարեւոր աճ: 1950ին,
մասնաճիւղը ունի 33 սկաուտ եւ 20 գայլիկ, կը
ծրագրեն կազմել երէցական փաղանգ: Տարե-
վերջին անդամներու ընդհանուր թիւը կը հաս-
նի 115ի: Մարզական գործունէութիւնը կը կեդ-
րոնանայ Ֆուտպոլի վրայ, ուր Ա. եւ Բ. կազ-
մեր իրենց փորձերն ու մրցումները կը կատա-
րեն կանոնաւորաբար: Վարչութեան ղեկանի
անդամներն են Վահան՝ ատենապետ եւ
Անդրանիկ Աբրահամեան՝ Ատենադպիր:

1952ին, Այնճարի քաղաքապետութիւնը
Հ.Մ.Ը.Մ.ին կը տրամադրէ Ֆուտպոլի դաշտի
տարածութեամբ հողաչերտ մը: Հողաչերտը
դաշտի վերածուելու համար 2000 լիբանանեան
ոսկիի կը կարօտի: Վարչութիւնը տենդագին կը
փարի այս աշխատանքին իրականացման: Այսու-
հանդերձ, դաշտի իրականացման գործը տարի-
ներու վրայ կ'երկարի նիւթական եւ գործնական
դժուարութիւններու պատճառով: 1953ին, այս
նպատակին համար կազմակերպուած, վիճակա-
հանութեան տոմսերը կը ղրկուին քոյր մասնա-
ճիւղերուն սպառման խնդրանքով:

1954ի միջ-մասնաճիւղային Ջատկական խա-
ղերուն, Այնճարի մասնաճիւղի Ֆուտպոլի
խումբը առաջին անգամ ըլլալով իր մասնակ-
ցութիւնը կը բերէ իբրեւ Գ. դասակարգի
խումբ:

Այնճարի մասնաճիւղի գործունէութեան
առաջին տասնամեակի աւարտին, մարզական
ճիւղերը բազմացած են: Մասնաճիւղը կը կի-
րարկէ Ֆուտպոլ, պասքեթպոլ, վոլիպոլ, փինկ-

փոնկ, հեծելարշաւ եւ լող: 1957ին, սկաուտական
շարժումը դադրած է կարող խմբապետի մը բա-
ցակայութեան պատճառով: Ֆուտպոլի դաշտը
տակաւին հարթումի կը կարօտի: Մասնաճիւղը
ունի ապուստ մը գիւղի կեդրոնական դիրքի
վրայ:



Այնճարի Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի խումբը՝ 1957ին

1958 տարեշրջանի վարչական կազմն է հե-
տեւեալը.-

Ատենապետ՝ Ալեքսան Թաշճեան
Ատենադպիր՝ Քրիստափոր Մանճեան
Գանձապահ՝ Գեղամ Հաւաթեան
Մարզական պատասխանատու՝ Յովսէփ
Կիւտեշեան

Ապուստի պատասխանատու՝ Յովհաննէս
Շաննաքեան:

Ջատկին, Հալէպի մէջ, Ֆուտպոլի խումբը
կը մասնակցի միջ-մասնաճիւղային Յարդ խաղե-
րուն: Խումբին մաս կը կազմեն Գրիգոր Պուր-
սալեան, Գեղամ Հաւաթեան, Հայկ Աղամեան,
Պողոս Քենտիրճեան, Պերճ Չափարեան, Նժդէհ
Գէորգեան, Պետրոս Խոշեան, Մովսէս Թաս-
լաքեան, Յարութիւն Գոնտրըճեան, Երուանդ
Ստամպուլեան, Յովսէփ Կիւտեշեան, Յակոբ
Քէշիշեան, Պողոս Քէշիշեան եւ Քրիստափոր
Մանճեան:

Տարուան նիւթական գործառնութեան պատ-
կերն է՝ մուտք 478 լ. ոսկի, ելք՝ 455 լ. ոսկի:

1959ին, առժամաբար տկարացած սկառուտական շարժումը կրկին թափ կը ստանայ նոր վարիչներու կազմակերպական ճիգերուն շնորհիւ: Խումբը Նոյեմբերին հրապարակային հանդէս մը կը կազմակերպէ, իր շուրջ հաւաքելով նոր արձանագրուող պատանիներ: Ֆուլթայոլի խումբը կ'ունենայ իր մարզիչը՝ Նուպար Մանկասարեան: Մասնաճիւղէն Պօղոս Քենտիրճեան եւ Յովհաննէս Գարագաշեան կը հետեւին Շրջանային Վարչութեան կազմակերպած ամառնային մարզիչներու դասընթացքներուն:

1960ի վարչութեան աշխատանքներէն է մասնաճիւղի արտօնագրի ապահովումը եւ ֆուլթայոլի դաշտի վերջնական յարդարումը:

Շրջանային Վարչութիւնը մօտէն կը հետեւի այս աշխատանքներու իրականացման:

Վարչական կազմի անդամներն են հետեւեալները.-

- Ատենապետ՝ Սիմոն Գազանճեան
- Ատենադպիր՝ Յակոբ Աբրահամեան
- Գանձապահ՝ Ասատուր Ստամպուլեան
- Մարզական պատասխանատու՝ Գրիգոր Պուրսալեան

Սկառուտական պատասխանատու՝ Սարգիս Գաթալուզեան

Խորհրդականներ՝ Ալեքսան Թաշճեան, Զոհրապ Յովսէփեան:

Սկառուտական գործունէութիւնը կ'ունենայ բնական աճ, շարքերու թիւը 55էն բարձրանալով 71ի, հետզհետէ կը կազմաւորուի աստիճանաւորական ցանց: Պասքեթպոլի եւ ֆուլթայոլի խումբերը կ'արձանագրեն թեքնիք յառաջդիմութիւն: Նիւթական գործառնութիւնն ալ աննախընթաց յաջողութիւն կ'արձանագրէ. ընդհանուր մուտք՝ 2320 լ.ոսկի, ելք՝ 2134 լ.ո:

12 Փետրուար 1961ին անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ վարչական հետեւեալ կազմը.-

- Ատենապետ՝ Սիմոն Գազանճեան
- Ատենադպիր՝ Խաչիկ Պագալեան
- Գանձապահ՝ Ասատուր Ստամպուլեան

Հաշուապահ՝ Զոհրապ Յովսէփեան
Մարզական պատասխանատու՝ Յովհաննէս Նաշալեան

Սկառուտական պատասխանատու՝ Սարգիս Գաթալուզեան

Խորհրդական՝ Գրիգոր Պուրսալեան:

1961ի Մայիսին, մասնաճիւղը կը կազմակերպէ հրապարակային հանդիսութիւն եւ սկառուտներու երգման արարողութիւն: Շրջանային Վարչութեան կողմէ խօսք կ'առնէ Անդրանիկ Ուրֆալեան, օրուան բանախօսն է Յակոբ Ժամկոչեան:

1962ի վարչական կազմը կը մնայ նոյնը, բացի Պօղոս Քէչիշեանէն, որ կը փոխարինէ Գրիգոր Պուրսալեանը: Ընթացիկ գործունէութեամբ բնորոշուած այս տարեշրջանի ընթացքին մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 175ի: Վարչութիւնը ծաւալող սկառուտական շարժումը դիմակալելու համար ահումբին կից յատուկ սենեակ մը կ'աւելցնէ: Մարզական գործունէութիւնը կը սահմանափակուի ամառնային եղանակին իրականացած կարգ մը բարեկամական մրցումներու շուրջ: Անդամական ընդհանուր ժողովը այս տարեշրջանի գործունէութիւնը կը գտնէ «բաւարար»:

20 Յունուար 1963ին, անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութիւնը աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Սիմոն Գազանճեան
- Փոխ ատենապետ՝ Ալեքսան Թաշճեան
- Ատենադպիր՝ Զաւէն Թաշճեան
- Գանձապահ՝ Ասատուր Ստամպուլեան
- Հաշուապահ՝ Պետո Խոչեան
- Մարզական պատասխանատու՝ Պետո Աղամեան

Սկառուտական պատասխանատու՝ Նժդեհ Գէորգեան:

Իբրեւ նորութիւն, այս վարչութեան գործերէն կ'ըլլայ թատերախումբի մը կազմութիւնը, որ իր տուած ներկայացումի եկամուտով կը փակէ նախորդ շրջանէն մնացած ահումբի շի-

նութեան ծախսը: Մէկ այլ նորութիւնը կ'ըլլայ Մուսա լերան նահատակներու սգատօնին առթիւ կառաչարի աշխատանքը: Մարզական գործունէութիւնը կը մնայ աննշան: Փոխարէնը սկառտականը կը զարգանայ: Մասնաճիւղէն երեք սկառտներ կը մասնակցին Լիբանանը ներկայացնող պատուիրակութեան՝ Յունաստանի մէջ կայացող միջազգային ճամբարին: Սկառտական շարքերուն կը մասնակցին 40 սկառտներ եւ 80 գայլիկներ:

22 Մարտ 1964ին կայացած անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ:-

Ատենապետ՝ Սիմոն Գազանճեան
Փոխ ատենապետ՝ Պետրոս Քէօզկէրեան
Ատենադպիր՝ Վարուժան Մանճեան
Գանձապահ՝ Ասատուր Ստամպուլեան
Հաշուապահ՝ Պետո Խոչեան

Սկառտական պատասխանատու՝ Նժդեհ Գէորգեան

Ընկերային պատասխանատու՝ Սարգիս Զէյթլեան:

Այս կազմը կը նախաձեռնէ պասքեթպոլի դաշտի մը շինութեան: Դաշտը կը գտնուի ակումբի շէնքին յարակից հողամասին վրայ, սակայն տարեշրջանի աւարտին տակաւին շինութիւնը կը մնայ կիսաւարտ: Անդամներու ընդհանուր թիւը կրկին կ'արձանագրէ բնական աճ: Ընդհանուր թիւ՝ 217:

Թուական այս աճը պարտադիր կը դարձնէ ակումբի կից նոր սենեակի մը շինութեան ծրագիրը: 1965 տարեշրջանի վարչութիւնը, այս ծրագրին կողքին, ունի նաեւ պասքեթպոլի դաշտի շինութեան ամբողջացման ծրագիրը: Այս աշխատանքները նիւթականի կը կարօտին: Վարչութիւնը կը դիմէ Շրջանային Վարչութեան:

1965ի վարչութեան մաս կը կազմեն:-

Ատենապետ՝ Սիմոն Գազանճեան
Փոխ ատենապետ՝ Պետրոս Շէմմէսեան
Ատենադպիր՝ Սարգիս Փանոսեան
Գանձապահ՝ Զաւէն Թաշճեան

Հաշուապահ՝ Նժդեհ Գէորգեան

Մարզական պատասխանատու՝ Սամուէլ Մարգարեան:

Այս կազմը շինարարական աշխատանքի կողքին կը ձեռնարկէ մշակութային եւ ուսումնական ծրագիրներու գործադրութեան, ամսօրնաքի երեկոյ, գիշերային դպրոց, եւայլն, ամբողջացնելով մարզականի եւ սկառտականի կողքին ընթացիկ տարուան մասնաճիւղի գործունէութիւնը:

1966ի վարչական կազմը մեծամասնութեամբ կը մնայ նոյնը, նոր անդամակցութեամբ Գրիգոր Պուրսալեանի, Ասատուր Ստամպուլեանի եւ Հրայր Թաշճեանի:

Նախորդ կազմի աշխատանքները կը շարունակուին նոյն թափով: Պասքեթպոլի դաշտի շինութեան աւարտը առիթ կը ստեղծէ, որ այս մարզախաղը աւելի զարգանայ: Ֆութպոլը կը մնայ մասնաճիւղի կիրարկած գլխաւոր մարզական ճիւղը: Կան նաեւ վոլիպոլն ու աթլետիկ մարզերը:

1966ին, մասնաճիւղը կը տիրանայ պետական պաշտօնական վաւերացման:

Ակումբի եւ պասքեթպոլի դաշտի կալուածները կ'արձանագրուին Ազգային Առաջնորդարանին անուան:

5 Փետրուար 1967ին, անդամական ընդհանուր ժողովի կողմէ ընտրուած վարչութիւնը իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով:-

Ատենապետ՝ Սիմոն Գազանճեան
Փոխ ատենապետ՝ Պետրոս Շէմմէսեան
Ատենադպիր՝ Սարգիս Փանոսեան
Գանձապահ՝ Նժդեհ Գէորգեան
Հաշուապահ՝ Ասատուր Ստամպուլեան
Մարզական պատասխանատուներ՝ Սարգիս Յովհաննէս Զէյթլեան, Հրայր Թաշճեան

Սկառտական պատասխանատու՝ Սարգիս Գաթալուզեան

Խորհրդական՝ Գրիգոր Պուրսալեան:
30 Ապրիլ 1967ին, տեղի կ'ունենայ պասքեթպոլի նորակերտ դաշտի բացման հանդիսու-

թիւնը, նախագահութեամբ քաղաքապետ Յարութիւն Շերպետեանի: Այս առթիւ կազմակերպուած պասքետպոլի մրցաշարքին կը մասնակցի Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. Արարատի խումբը, որ այցելութեամբ Լիբանան կը գտնուի:

Այս տարեշրջանին անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 245ի: Ֆուտպոլի խումբը կը մարզուի Սարգիս Խուրչիտեանի կողմէ եւ 1967էն սկսեալ մաս կը կազմէ Լիբանանեան ֆուտպոլի ֆետերասիոնին: Պասքետպոլի տղոց խումբի կողքին կը սկսի գործել նաեւ աղջկանց խումբը: Մասնաճիւղի ծախսերը հոգալու համար կը կազմակերպուի վիճակահանութիւն, զատկական հաւկթախաղ, նուիրահաւաք, օրացոյցի վաճառք եւ անդամատուրքեր: 1967ի մուտքերու ընդհանուր գումարն է 5168 լիբանանեան թղթոսկի, ելք՝ 5045 լ-ո:

Սկաուտական բաժինը եւս յաջող տարեշրջան մը կը բոլորէ իր ընթացիկ հաւաքոյթներով, արշաւներով եւ բանակումներով: Կազմի ընդհանուր թիւն է 184:

10 Մարտ 1968ին, Այնճարի Հ.Մ.Ը.Մ-ի վարչութեան անդամ կ'ընտրուին հետեւեալները.-

- Ատենապետ՝ Սիմոն Գազանճեան
- Փոխ ատենապետ՝ Գրիգոր Պուրսալեան
- Ատենադպիր՝ Սարգիս Փանոսեան
- Գանձապահ՝ Ասատուր Ստամպուլեան
- Հաշուապահ՝ Զոհրապ Յովսէփեան
- Խորհրդականներ՝ Խաչիկ Գուչումեան, Սահակ Զախչախեան, Քրիստափոր Խոչեան
- Սկաուտական ներկայացուցիչ՝ Սարգիս Գաթալուզեան:

Այս տարեշրջանին, աւանդական ձեռնարկներու կողքին, Օգոստոս ամսուան ընթացքին, Այնճարի մասնաճիւղը կ'ընդունի Միութեան յիսնամեակին նուիրուած ընդհանուր բանակումը: Բացի Լիբանանի մասնաճիւղերու սկաուտական կազմերէն, այս բանակումին կը մասնակցին Յունաստանի, Այնճարի եւ Պաղտատի մասնաճիւղերու կազմերէն պատուիրակութիւններ: Ֆուտպոլի եւ պասքետպոլի կողքին, Այնճարի

մասնաճիւղը ունի աթլետիզմը կիրարկող մարզիկներ: Յիշատակութեան արժանի է երկար վազքերու մասնագէտ՝ Լեւոն Թաշճեանը:

1969 տարեշրջանի անդամական ընդհանուր ժողովի առաջին նիստին, 18րդ Շրջանային Պատգամաւորական ժողովին մասնակցելու համար պատգամաւորներ կ'ընտրուին Պետրոս Շեմմեսեան, Գաբրիէլ Փանոսեան, Կիրակոս Խոչեան եւ Սարգիս Գաթալուզեան: Նոյն ժողովին, Այնճարի վարչութիւնը կը ներկայացնէ Սարգիս Փանոսեան:

Բ. նիստին՝ 23 Մարտին, տարեշրջանի վարչական կազմի անդամներ կ'ընտրուին հետեւեալները.-

- Ատենապետ՝ Կիրակոս Խոչեան
- Փոխ ատենապետ՝ Սահակ Զախչախեան
- Ատենադպիր՝ Թովմաս Քերքեզեան
- Գանձապահ՝ Նժդէհ Գէորգեան
- Սկաուտ պատասխանատու՝ Սարգիս Գաթալուզեան

Մարզական պատասխանատուներ՝ Գաբրիէլ Փանոսեան, Իսկենտեր Ճուհարճեան:

Ապրիլին, վարչութիւնը կը ձեռնարկէ ակումբի վերաշինութեան՝ ընդարձակ սրահով, վարչութեան սենեակով, պիւֆէով եւ մարզիկներու յատուկ բաղնիքով: Շինութիւնը մասնաճիւղին կ'արժէ 9000 լ. ոսկի: Շրջանային Վարչութեանէն կը կատարուի 2000 լ-ոսկիի փոխառութիւն: Բացման հանդիսութիւնը տեղի կ'ունենայ 7 Սեպտեմբերին:

Գլխաւոր այս իրականացման կողքին, վարչութիւնը մօտէն կը հետաքրքրուի մարզական եւ սկաուտական կազմերու ընթացիկ աշխատանքներով, բոլորելով փայլուն տարեշրջան մը:

- 1970ի վարչութեան մաս կը կազմեն.-
- Ատենապետ՝ Ասատուր Ստամպուլեան
- Փոխ ատենապետ՝ Հրայր Թաշճեան
- Ատենադպիր՝ Նիկոլ Հերկելեան
- Գանձապահ՝ Նժդէհ Գէորգեան
- Հաշուապահ՝ Կայծակ Զէյթեան

Սկսած սկսած պատասխանատու՝ Սարգիս Գաթալուզեան

Պասքեթպոլի պատասխանատու՝ Գաբրիէլ Փանոսեան:

Նկատուելի յաջողութիւններով բեղուն գործունէութեան տարեշրջան մը, մարզական եւ սկսած սկսած բաժիններով, որոնց կը միանան ազգային գործունէութեան յատուկ ելոյթներ: Նշելի է 31 Մայիս 1970ին կազմակերպուած տողանցքը, նուիրուած Հայաստանի անկախութեան 52րդ տարեդարձին: Սկսած սկսած շարքերը կ'օժտուին փորձառու աստիճանաւորներով, թիւով 22:

24 Յունուար 1971ին կ'ընտրուի տարեշրջանի նոր վարչական կազմը.-

- Ատենապետ՝ Սիմոն Գազանճեան
- Փոխ ատենապետ՝ Գրիգոր Պուրսալեան
- Ատենադպիր՝ Նիկոլ Հերկելեան
- Գանձապահ՝ Նժդեհ Գէորգեան
- Գոյքապահ՝ Յովհաննէս Շաննաքեան

Սկսած սկսած պատասխանատու՝ Սարգիս Գաթալուզեան

Մարզական պատասխանատու՝ Հայկ Պաթուզեան:

Այս կազմը յատուկ բծախնդրութեամբ կը հետեւի մարզական խումբերու թեքնիք յառաջդիմութեան իր բազմակողմանի երեսներով եւ վարիչ անձնակազմով՝ մարզիչ, իրաւարար եւ օժանդակներ: Նոյն հետաքրքրութեան կ'արժանանան սկսած սկսած շարքերը, որոնց յառաջդիմութեան համար կը ցուցադրուին յատուկ ժապաւէտներ եւ կը տրուին դասախօսութիւններ:

30 Յունուար 1972ին ընտրուած վարչական կազմը մեծամասնութեամբ կը մնայ նոյնը՝ միայն Կիրակոս Խոչեան, Սահակ Չախչախեան եւ Ասատուր Ստամպուլեան կը փոխարինեն Նիկոլ Հերկելեանը, Յովհաննէս Շաննաքեանն ու Գրիգոր Պուրսալեանը:

19 Օգոստոսին մասնաճիւղը կը կազմակերպէ «Մարզական Օր», որուն կը մասնակցին քոյր մասնաճիւղերու մարզական կազմերը:

18 Փետրուար 1973ին կայացած անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութեան կազմն է.-

- Ատենապետ՝ Կիրակոս Խոչեան
- Ատենադպիր՝ Վրոյր Ֆրենկեան
- Գանձապահ՝ Խաչիկ Թազեան
- Ֆուլթպոլի պատասխանատու՝ Պետիկ Ինճեան

Պասքեթպոլի պատասխանատու՝ Մարտիկ Պոյաճեան

Սկսած սկսած պատասխանատու՝ Սարգիս Գաթալուզեան

Թղթակից՝ Վարդան Աշքարեան:

Մասնաճիւղի աւանդական գործունէութեան բոլոր ձեռնարկները՝ հաւկթախաղ, ինքնաշարժներու կառուցում, օրացոյց եւայլն կը պսակուին յաջողութեամբ: Նոր եւ երիտասարդ ուժերու մասնակցութեամբ մարզական եւ սկսած սկսած կազմերը իրենց արժանի տեղը կը կը գրաւեն Հ.Մ.Ը.Մ.ի լիբանանեան ընտանիքէն ներս: Այնճարի Հ.Մ.Ը.Մ.ը հաստատ յառաջդիմութիւններու գծին վրայ կը գտնուի:

17 Փետրուար 1974ին, տեղի կ'ունենայ Այնճարի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը, նախագահութեամբ Սարգիս Գաթալուզեանի եւ քարտուղարութեամբ Արաքսի Քիւրտեանի:

Լսելէ ետք 1973 տարեշրջանի նիւթաբարոյական գործունէութեան տեղեկագիրը, ժողովը կ'ընտրէ 1974 տարուան վարչական կազմ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Կիրակոս Խոչեան
- Քարտուղար՝ Վրոյր Ֆրենկեան
- Գանձապահ՝ Սահակ Քիւրտեան
- Ֆուլթպոլի պատասխանատու՝ Պետիկ Ինճեան

Պասքեթպոլի պատասխանատու՝ Խաչիկ Թազեան

Սկսած սկսած խմբապետ՝ Գաբրիէլ Փանոսեան

Ակումբի պատասխանատու՝ Յակոբ Ճամպագեան:

5 Մայիս 1974ին, նախապէս կայացած փոխադարձ համաձայնութեամբ, Այնճարի Լիբանանահայ Օգնութեան Խաչի թիւով շուրջ 150 արծուիկները, պաշտօնական հանդիսութեամբ կը փոխանցուին Հ.Մ.Ը.Մ.ական շարքերուն: Փոխանցումի այս հանդիսութեան Շրջանային վարչութեան անունով խօսք կ'առնէ Բիւզանդ Թորիկեան, ներկայութեամբ Շրջանայինի անդամ Յակոբ Համամճեանի եւ Շրջանային Սկառտական Խորհուրդի անդամ Արմէն Տօնոյեանի:

Օգոստոսին մասնաճիւղի մարզական խումբերը կը փոխադրուին Հալէպ ուր հանդիպումներ կ'ունենան տեղւոյն մասնաճիւղի մարզական կազմերուն հետ: Հալէպի մասնաճիւղի Ֆութպոլի խումբը կը փոխադարձէ այս այցելութեան եւ եղբայրական մրցումով մը կը կատարուի մասնաճիւղի նորոգուած Ֆութպոլի դաշտի բացումը:

Այս ձեւով կը փակուի Այնճարի խանդավառ մասնաճիւղի 1948էն 1974 երկարող աւելի քան քառորդ դարու գործունէութեան ժապաւէնը:

ՇԹՈՐԱ

Շթորան, Արեւելեան Լիբանանի, Պեքաանահանգի դաշտային աւաններէն մէկն է եւ կեդրոնական դիրք կը գրաւէ գտնուելով նահանգի գիւղերուն եւ քաղաքներուն, ինչպէս նաեւ դէպի սուրիական մայրաքաղաք տանող մայրուղիներու խաչմերուկին վրայ:

Ժամանակի ընթացքին, հոս, փոքրաթիւ հայեր կայք հաստատած են, ինչպէս մօտակայ Չահլէի եւ Այնճարի շրջաններուն մէջ:

1941ին, Շթորայի մէջ կարգ մը մարզասէր երիտասարդներ, գլխաւորութեամբ Մուշեղ Գուտուլեանի, կը հիմնեն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ եւ կը կազմեն Ֆութպոլի գոյգ խումբեր, հիմնուած գլխաւորաբար ամառնային շրջանին գիւղագնաց Հ.Մ.Ը.Մ.ականներու մասնակցու-

թեան վրայ: Խումբերը կ'ունենան բարեկամական հանդիպումներ տեղացի խումբերու դէմ:

1944ին մասնաճիւղը կ'ունենայ ակումբ, որու բարեգարդման համար Պէյրութի մասնաճիւղէն կը ստանայ գոյքեր եւ նկարներ:

Նոյն տարուան Զատկական միջ-մասնաճիւղային խաղերուն Ֆութպոլի խումբը կը մասնակցի իբրեւ Բ. դասակարգի խումբ: Մասնաճիւղի գործունէութիւնը կը ծաւալի ամրան եղանակին վրայ: Մնացեալ եղանակներուն աշխատանքները երկար ամիսներու վրայ կը սառնին եւ վերսկսուած նոր նախաձեռնութիւններ կը մնան կիսաւարտ: Այս պատճառով Շթորայի Հ.Մ.Ը.Մ.ը կարեւոր նախաձեռնութիւններ չի կրնար իրականցնել մարզական գետնի վրայ:

1942ին, մասնաճիւղի պատգամաւոր Մուշեղ Գուտուլեան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Շրջանային Պատգամաւորական Դրդ Ժողովին: Այս տարեշրջանի անդամներու թիւն է 23, ունին Ֆութպոլի 2 խումբեր: Շուտով ի յայտ կու գայ որ գուտ տեղական ուժերը անբաւարար են իրականացնելու համար Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղէ մը ակնկալուած գործունէութիւն եւ Շթորայի Հ.Մ.Ը.Մ.ը միայն համեստ գործունէութիւն մը կ'ունենայ, երկու կամ երեք եղանակներու վրայ երկարած:

1944ի Շրջանային ծրագր Պատգամաւորական Ժողովին, մասնաճիւղը բացակայ է եւ Շրջանային Վարչութեան զեկուցումէն ի յայտ կու գայ, որ մասնաճիւղը նիւթական անբաղձալի վիճակ մը կը պարզէ, եւ թէ Շրջանային Վարչութեան հետ հաղորդակցութիւն գրեթէ գոյուլթիւն չունի:

ՀԱՏԷԹ

Պէյրութի արուարձան Հատէթ ճարտարարուեստական գիւղաւանին մէջ հայեր կայք հաստատեցին գլխաւորաբար Երկրորդ Աշխարհամարտի ընթացքին, բոլորուելով հայ թէ օտար ճարտարարուեստական ձեռնարկներու շուրջ:



Հատելի մասնաճիւղի անդրանիկ խումբը, 1949ի միջ-մասնաճիւղային մրցաշարքի Գ. դասակարգի ախոյեան

Աւելի ուշ չրջանի շինարարական զարգացումով, Հատելի ղարձաւ նաեւ հայերու բնակութեան թաղամաս:

Հատելի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի կազմաւորումը կը սկսի տեղւոյն մէջ հայկական վարժարանի մը հիմնադրութեան փորձով եւ Պէյրութի մասնաճիւղին ենթակայ՝ Համազասպ Ֆութպոլի խումբի գործունէութեամբ: 9 Յունուար 1949ին, Ռուբէն Դեղարարեանի եւ Կարապետ Յակոբեանի (Գալայճեան) շրջաբերական հրակէրին պատասխանելով, խումբ մը հաւատաւոր երիտասարդներ, Անդրանիկ Արապեանի բնակարանը հաւաքուելով, կ'որոշեն կազմել մարզական միութիւն մը եւ կը դիմեն Սուրիոյ, Լիբանանի, Պաղեստինի եւ Յորդանանի Շրջա-

նային Վարչութեան, դառնալու համար Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ:

Շրջանային Վարչութիւնը, իր 12 Յունուար 1949ի նիստի ընթացքին, կ'ընդունի եղած դիմումը հրահանգելով՝ որ շուտով Անդամական Ընդհանուր Ժողով գումարելով ընտրեն մասնաճիւղի անդրանիկ վարչական կազմը: 15 Փետրուար 1949ին, կը գումարուի անդամական ընդհանուր ժողովը, ուր 33 անդամներու ներկայութեան կ'ընտրուի Հատելի Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ վարչութիւնը, որուն մաս կը կազմեն Ռուբէն Դեղարարեան, Կարապետ Յակոբեան, Կիւլպէնկ Հաճաքեան, Յակոբ Գասարճեան եւ Թադէոս Պաղասարեան:

Վերոյիշեալ կազմը, Շրջանային Վարչութեան 15 Մարտ 1949 թուակիր նամակով կը ստանայ պաշտօնական վաւերացում եւ կը լուծուի խանդավառ աշխատանքի: Կը վարձուի հաւաքավայր ակումբ մը, որուն կահաւորման համար Անդրանիկ Անլեան 30 աթոռ կը նուիրէ: Կը վարձուի նաեւ Ֆուլթպոլի խաղավայր մը: Միջ-մասնաճիւղային խաղերուն իր անդրանիկ մասնակցութեամբ Հատէթի խումբը կը տիրանայ Գ. դասակարգի ախոյեանութեան բաժակին: Սակայն, առաջին օրերու խանդավառութիւնը տեղի կու տայ, շրջանէն կարգ մը անդամներու մեկնումին իբր հետեւանք:

Շրջանային Վարչութեան անդամներէն բաղկացած պատուիրակութիւն մը Նոյեմբերի վերջաւորութեան կ'այցելէ շրջանը իրազեկ ըլլալու համար կացութեան: Տարեվերջին, Հատէթի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ: Սակայն այս կազմը ինքզինք կը գտնէ անելի մը առջեւ, երբ հին ու նոր կազմերու փոխանցման աշխատանքը կը կաղայ երկար ժամանակ: Առ այդ, 1950ի Մարտ ամսուան սկիզբը, մասնաճիւղը կրկին կը կատարէ վարչութեան ընտրութիւն, որուն վաւերացումը կը ստանայ Շրջանային Վարչութեան 16 Մարտ 1950 թուակիր նամակով:

1950ին, Հալէպի մէջ, իբրեւ Գ. դասակարգի խումբ մասնաճիւղին Ֆուլթպոլի կազմը երկրորդ անգամ ըլլալով կը մասնակցի Զատկական 24րդ միջ-մասնաճիւղային հանդիպումներուն:

1949 եւ 1950 տարիներու նիւթական գործառնութեան պատկերն է՝ մուտք՝ 287 լ.ո., ելք՝ 220 լ.ո.:

Մասնաճիւղի մարզական գործունէութեան առանցքը կը մնայ Ֆուլթպոլի խումբը որուն, մարզիչն է Անդրանիկ Երէցեան: Խումբը զանազան բարեկամական մրցումներով կը մնայ կանգուն: Անոր կողքին վարչութիւնը ունի ազգային գործունէութիւն, կանոնաւորապէս կազմակերպելով Ապրիլ 24ի եւ Մայիս 28ի հանդիսութիւններ եւ զանազան առիթներով դասախօսական հաւաքոյթներ:

1950ի վերջաւորութեան, վարչութիւնը կրկին դժուարութիւններ ունի, կազմէն երեք վարչականներ վերջնականապէս փոխադրուած ըլլալով շրջանէն: Մասնաճիւղը 27 Փետրուար, 1951 թուակիր նամակով Շրջանային Վարչութեանէն արտօնութիւն կը խնդրէ ժամանակէն առաջ անդամական ընդհանուր ժողով գումարելով ընտրելու նոր վարչութիւն: Ընտրութիւնը տեղի կ'ունենայ 1951ի Մարտ ամսուան սկիզբը:

1951էն 1953 տարեշրջաններու ընթացքին, Հատէթի մասնաճիւղի վարչական կազմերուն մէջ ծառայած են. Ռուբէն Դեղարարեան, Կարապետ Յակոբեան, Անդրանիկ Արապեան, Թադէոս Պաղտասարեան, Յակոբ Գալայճեան, Սարգիս Գիլիսլեան, Տիգրան Գալայճեան, Տիգրան Տէր Պետրոսեան, Եփրէմ Զեքեան, Կարպիս Իշխանեան եւ Նշան Պապիկեան:

1954 տարեշրջանի վարչութեան գործունէութիւնը կ'առկախուի, երբ կազմէն երեք վարչականներ իրենց հրաժարականը կը ներկայացնեն: Շրջանային Վարչութիւնը այս կացութեան առջեւ կը հրահանգէ նոր վարչական ընտրութիւն կատարել: Անդամական ընդհանուր ժողովը կը կայանայ 15 Յունիս 1954ին, սակայն նորակազմ վարչութիւնն ալ չի յաջողիր նկատելի յառաջդիմութեամբ գործունէութիւն մը արձանագրել:

Տարիներու ընթացքին, Հատէթէն Հ.Մ. Ը.Մ.ականներու յաճախակի տեղափոխութիւնները եւ գործի վրայ մնացող վարչականներու անհասկացողութիւնները ու անվերջանալի վէճերը կը ջլատեն մասնաճիւղի արդէն սահմանափակ գործունէութիւնը: Ակումբը երկար ժամանակ փակ կը մնայ: 1955ի Մարտին, Շրջանային Վարչութեան անդամներէն պատուիրակութիւն կը կ'այցելէ Հատէթ վերակենդանացնելու համար այս սառեցեալ վիճակը: Տեղւոյն վրայ, նոր վարչութեան մը ընտրութիւնը անկարելի կը դառնայ: Շրջանային Վարչութիւնը իր 9 Մարտ 1955ի նիստին կը նշանակէ Հատէթի մասնաճիւղի վարչութիւն, որուն կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Խորէն Յակոբեան
Ատենադպիր՝ Ժան Տէր Ստեփանեան
Գանձապահ՝ Շահէն Տագեսեան
Մարզական պատասխանատու՝ Տիգրան Տէր
Պետրոսեան

Գոյքապահ՝ Սարգիս Գիլիսլեան:

Այս կազմը կը յաջողի մասնաճիւղի գործունէութեան կրկին կեանք տալ՝ կազմակերպելով հրապարակային ձեռնարկներ եւ Ֆուլթայոլի մրցումներ: Շրջանային Վարչութիւնը իր կողմէ նիւթապէս կը փորձէ օգնել մասնաճիւղի գործունէութեան:

1956ի Փետրուարին, մասնաճիւղը կը կայացնէ անդամական ընդհանուր ժողով, կ'ընտրէ վարչական կազմ եւ 19 Փետրուար 1956 թուակիր նամակով կը խնդրէ Շրջանային Վարչութեան վաւերացումը: Շրջանային Վարչութիւնը կը վաւերացնէ կազմը եւ կը փորձէ մօտէն հետեւիլ կազմի գործունէութեան: Անգամ մը եւս այս կազմի դիւանը իր վրայ դրուած յոյսերը չարդարացներ:

1956ի վերջաւորութեան, Շրջանային Վարչութիւնը, քննելու համար մասնաճիւղի վիճակը, ժողովի կը հրաւիրէ մասնաճիւղի վարչութիւնը պահանջելով, որ իր հետ բերէ ժողովներու ատենագրութեան տետրակը եւ վարչութեան հաշուետետրը: Այս քննութիւնն ալ դրական արդիւնքի չի յանգիր: Մասնաճիւղի անդամներէն կարպիս Իշխանեանի պաշտօն կը տրուի մասնաճիւղի անդամները ընդհանուր ժողովի հրաւիրել: Շրջանային Վարչութիւնը իր 16 Յունուար 1957ի նիստին կ'որոշէ ներկայ ըլլալ 18 Յունուարին կայանալիք Հատէթի մասնաճիւղի նախկին անդամներու ընդհանուր հաւաքոյթին եւ վերջին առիթ մը տալ մասնաճիւղի վերակազմութեան: Այս ժողովին Շրջանային Վարչութեան կողմէ ներկայ կ'ըլլան Յովհաննէս Շահինեան եւ Տոքթ. Յակոբ Պերպէրեան: Յետ խորհրդակցութեանց, տեղւոյն վրայ կը նշանակուի վարչական կազմ, որ կը ստանձնէ մասնաճիւղի գործունէութիւնը վերականգնելու գծուարին առաքելութիւնը:

Այս կազմը կը լծուի աշխատանքի, վերակազմելու համար Ֆուլթայոլի խումբը եւ վերակենդանացնելու ահուճբային կեանքը: Այս թուականին մասնաճիւղը ունի 17 մարզիկ եւ 16 օժանդակ անդամ: Տարեշրջանի ելեւմուտքի պատկերն է՝ մուտք՝ 333 լ.ո., ելք՝ 298 լ.ո.:

1958ի Մարտին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ:

Ֆուլթայոլի խումբը կը մասնակցի Զատիուան միջ-մասնաճիւղային խաղերուն:

Մասնաճիւղը 1960էն սկսեալ երեք տարուան համար կը դադրի գործելէ, մինչեւ որ 1963ի գարնան Շրջանային Վարչութեան ատենադպիր՝ Տոքթ. Յակոբ Պերպէրեանի ներկայութեամբ Հատէթի մասնաճիւղի 20 անդամներ, վերջին անգամ մը կը հաւաքուին վերակազմելու համար մասնաճիւղը: Տեղւոյն վրայ կ'ընտրուի վարչութիւն:

Շրջանային Վարչութիւնը, 5 Յունիսի իր նիստին, կը վաւերացնէ նորընտիր կազմը:

Մասնաճիւղը անունանապէս գոյութիւն ունի՝ սակայն ոչ մէկ գործնական նախաձեռնութիւն: 1963էն սկսեալ ան կը դադրեցնէ իր գործունէութիւնը, փակելով նաեւ տասնչորս տարիներու վրայ երկարող վերսկսումներու եւ դադարներու անվերջանալի ժապաւէնը:

Հատէթի մասնաճիւղէն անհատ Հ.Մ. Ը.Մ.ականներ, յատկապէս մարզիկներ, այնուհետեւ գործած են մօտակայ Պէյրութի եւ Պուրճ Համուտի մասնաճիւղերուն անդամակցելով:

ՃԻՒՆԻ

ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ճիւնին Լիբանանի մայրաքաղաք Պէյրութի հիւսիսը գտնուող ծովեզերեայ փոքր աւան մըն է, բնակուած գլխաւորաբար կաթոլիկ եկեղեցւոյ պատկանող լիբանանցի մարոնիթներէ:

1915էն սկսեալ, Թուրքիոյ կողմէ հայերու

տեղահանութիւններուն իբրեւ հետեւանք, Ճիւնիի եւ մօտակայ Ղազիր գիւղին մէջ հաստատուած են հայկական որբանոցներ, իսկ Մամրլթէյն գիւղին մէջ հաստատուած է Ազգային Բուժարանը, Ազունիէ փոխադրուելէն առաջ: Հայկական որբանոցներու լուծարքէն ետք, Ճիւնիի մէջ կայք հաստատած փոքրաթիւ հայ ընտանիքներ կը մնան Միջերկրականի այս գեղատեսիլ ծոցը բոլորող աւանին մէջ, կազմակերպելով դպրոց եւ ազգային կեանք:

7 Սեպտեմբեր 1950ին, Գառնիկ Թորիկեանի բնակարանը հաւաքուելով, ութը երիտասարդներ՝ Գէորգ, Յովսէփ եւ Ներսէս Գազանճեաններ, Ժան եւ Արմէն Սաաթճեաններ, Բիւզանդ, Վարուժան եւ Վարդգէս Թորիկեաններ, որոնցմէ չորսը Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղին նախկին անդամներ, հիմը կը դնեն Ճիւնիաբնակ հայ երիտասարդներու մարզական միութեան, նախաձեռնելով անդամարշաւի:

Հիմնադրութեան այս աքթին յաջորդող շաբաթական հաւաքոյթները, կը ծառայեն մարզադաշտ մը ապահովելու աշխատանքին, ինչպէս նաեւ Հ.Յ.Դ. պատանեկան միութիւններու ծրագրի ուսումնասիրութեան: Այս նոր հիմնուած խմբաւորումին մօտ շուտով զգալի կը դառնայ պատկանելիութեան մը կարեւորութիւնը եւ միութիւնը հաստատ հիմերու վրայ դնելու կարիքը: Նկատի ունենալով Ճիւնիի հայերու փոքրաթիւ ըլլալը, անդամներու թիւի աճը կը մնայ դանդաղ, սակայն հիմնադիրներու ճիգերը կ'արդիւնաւորուին, իբրեւ մարզադաշտ յատուկ հողաչերտի մը ապահովումով: Այս ժամանակամիջոցին իբրեւ առժամեայ վարչական կազմի անդամներ կը նշանակուին Գէորգ եւ Յովսէփ Գազանճեաններն ու Բիւզանդ Թորիկեանը:

Մարզադաշտի նպատակով ապահովուած վայրը, որ լքուած եւ զառիթափ հողաչերտ մըն էր, միութեան անդամներու անհատական աշխատանքով հետզհետէ կը հարթուի: Մինչ այդ, որպէսզի մարզադաշտը մնայուն հանգամանք ստանայ կարելի կ'ըլլայ պաշտօնապէս վարձել զայն տարեկան 20 լիբ. թղթոսկի վճարումով:

4 Մարտ 1951ի անդամական ընդհանուր ժողովին առաջին ընտրովի վարչութեան անդամները կ'ըլլան հետեւեալները.-

Ատենապետ՝ Ստեփան Հաստաճեան
Ատենադպիր՝ Վարուժան Թորիկեան
Գանձապահ՝ Ժան Սաաթճեան

Խորհրդականներ՝ Բիւզանդ Թորիկեան,
Գէորգ Գազանճեան:

Այս ժողովի ընթացքին է նաեւ որ կը յայտնուի անդամներու թեքումը դէպի զուտ մարզական ծրագիր: Միութիւնը կ'անուանակոչուի Ահարոնեան Մարզական Միութիւն:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՍԻՒԹԻՒՆՆԵՐ

Միջանկեալ, նկատի ունենալով Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ դառնալու պայման եղող անդամներու թիւի ամբողջացումը, վերոյիշեալ վարչութիւնը 29 Յունիս 1951 թուակիր նամակով կը դիմէ Շրջանային Վարչութեան, խնդրելով որ Միութիւնը ընդունուի Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքէն ներս: 6 Յունիս 1951 թուակիր իր պատասխանով, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ, Լիբանանի, Պաղեստինի եւ Յորդանանի Շրջանային Վարչութիւնը կը վաւերացնէ մասնաճիւղի կազմութիւնը, թելադրելով, որ վերստին անդամական ընդհանուր ժողով գումարելով մասնաճիւղը ընտրէ Ճիւնիի Հ.Մ.Ը.Մ.ի վարչական կազմ:

Վաւերացման այս գրութիւնը պաշտօնապէս կը կարգացուի 8 Յունիս 1951ի, դաշտի բացման հանդիսութեան ընթացքին, ուր տեղի կ'ունենայ վոլիպոլի մրցում: Հանդիսութեան կը նախագահէ Գառնիկ Թորիկեան: Պուրճ Համուտի մասնաճիւղի սկստական նուագախումբը կը մասնակցի այս հանդիսութեան:

Ամառնային եղանակը լայնօրէն օգտագործելով եւ բացման հանդիսութեան եկամուտով, վոլիպոլի դաշտի տարածութիւնը կ'ընդլայնուի եւ եռամսեայ ժրջան աշխատանքի իբրեւ արդիւնք՝ կը հարթուի պասքեթպոլի դաշտի տարածութիւնը եւ կը շինուի յատուկ երկաթեայ

սիւները:

7 Հոկտեմբեր 1951ին, կ'ընտրուի Ճիւնիի Հ.Մ.Ը.Մ.ի առաջին վարչական կազմը բաղկացած հետեւեալներէն.-

Ատենապետ՝ Բիւզանդ Պալմանուկեան

Ատենադպիր՝ Բիւզանդ Թորիկեան

Գանձապահ՝ Գէորգ Գազանճեան

Գոյքապահ՝ Յովսէփ Գազանճեան

Խորհրդական՝ Աբէլ Տէր Մկրտիչեան, հետագային փոխարինուած Ստեփան Հաստաճեանով:

Վարչութիւնը նոր կազմուող գայլիկական վոհմակին պատասխանատու կը նշանակէ ժան Սաաթճեանը, վարչական ժողովներուն մասնակցելու իրաւունքով:

14 Հոկտեմբերին տեղի կ'ունենան Հ.Մ.Ը.Մ.ի նոր մասնաճիւղ դառնալուն առթիւ անդամներու երդման արարողութիւն եւ պասքեթպոլի դաշտի բացման հանդիսութիւն:

Բացման հանդիսութեան յաջողութիւնը նոր թափ մը կու տայ Ճիւնիի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի գործունէութեան: Երիտասարդական նոր ուժեր կը բոլորուին անոր մարզական գործունէութեան շուրջ:

Միաժամանակ, վարչութիւնը կը սկսի կազմակերպել դասախօսական ձեռնարկներ նոր մասնաճիւղի անդամներու միութենական դաստիարակութեան համար: Առաջին դասախօսներէն կ'ըլլայ Շրջանային Վարչութեան կողմէ գործողողուած Եղիշէ Մանուկեանը:

18 Մայիս 1952ին, անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ.-

Ատենապետ՝ Բիւզանդ Պալմանուկեան

Ատենադպիր՝ Յովսէփ Գազանճեան

Գանձապահ՝ Բիւզանդ Թորիկեան

Խորհրդականներ՝ ժան Սաաթճեան, Ստեփան Հաստաճեան:

Շրջանային Վարչութեան միջոցաւ պասքեթպոլի խումբին իբր մարզիչ կ'ապահովուի Պէյրութի մասնաճիւղէն Յակոբ Թորիկեանի գործակցութիւնը: 15 Յունիսին կը կազմակերպ-

ուի մարզական հանդիսութիւն: Այս հանդիսութեան ընթացքին տեղի կ'ունենայ պասքեթպոլի մրցում Պուրճ Համուտի եւ Ճիւնիի կազմերուն միջեւ, գայլիկներու կողմէ բուրգեր կազմելու եւ աթլետներու կողմէ բարձրութիւն ցատկելու մրցում: Ճիւնիի հայութիւնը մեծով-պատիկով ներկայ է այս բացման հանդիսութեան, քաջալերելու համար նորակազմ մասնաճիւղը: Հանրապետութեան նախագահի դիւանապետ Ատիպ պէկ Սաֆան, Լիբանանի հանրապետութեան նախագահ Ն.Վ. Շէյխ Պշարա Խուրիի անունով մասնաճիւղին կը նուիրէ 500 լիբանանեան ոսկի:

Այս թուականէն սկսեալ կը յայտնուի մարզադաշտը, իբրեւ սիփականութիւն գնելու ծրագիրը:

1953ին, մասնաճիւղի վարչութիւնը կը բաղկանայ հետեւեալներէն.-

Ատենապետ՝ Բիւզանդ Պալմանուկեան

Ատենադպիր՝ Գէորգ Գազանճեան

Գանձապահ՝ Բիւզանդ Թորիկեան

Խորհրդականներ՝ Ստեփան Հաստաճեան, Յովսէփ Գազանճեան:

Այս կազմի գլխաւոր իրականացումը պիտի ըլլար դաշտին կից ակումբի սրահի մը կառուցման ծրագրի պատրաստութիւնը: 15 Նոյեմբեր 1953ի անդամական ընդհանուր ժողովը վարչութեան այս ծրագիրը կը վաւերացնէ: Կը կազմուի շինարարական յանձնախումբ: Մարզականի կողքին մասնաճիւղը կը ծրագրէ նաեւ մշակութային գործունէութիւն եւ կը կազմակերպուի յատուկ գրադարան, գլխաւոր նուիրատուութեամբ Բիւզանդ Թիւթիւնճեանի: 28 Փետրուար 1954ին, կ'ընտրուի մասնաճիւղի նոր վարչական կազմ ատենապետութեամբ Արամ Սուքիասեանի:

Յուլիսին, ակումբի սրահի շինութիւնը արդէն աւարտած է եւ տեղի կ'ունենայ ակումբի բացման հանդիսութիւնը, հովանաւորութեամբ Միսաք Ազիրեանի: Շրջանային Վարչութիւնը կը ներկայացնեն Հրանդ Մուրատեան եւ Յակոբ Խուպսերեան: Տեղի կ'ունենայ նուիրատուու-

թիւն, որմէ գոյացած գումարը կը փակէ ակումբի շինութեան ծախսերը: Այնուհետեւ Ճիւնիի մասնաճիւղը ինքզինք հաստատածուած կը զգայ: Վարչութիւնը այժմ կը դիմէ ստանալու համար պետական վաւերացում: Պետական արտօնագիրը կը ստացուի 1 Մարտ 1955 թուակիր թիւ 1130 հրամանագրով: Նորակերտ սրահին մէջ նախաձեռնուող առաջին աշխատանքներէն կ'ըլլայ օտար վարժարաններ յաճախող անդամներուն հայերէն լեզուի ուսուցումը, օժանդակութեամբ Ճիւնիի Լ.Օ.Խ.ի մասնաճիւղին:

1954ի Պատգամաւորական ժողովին մասնաճիւղը կը ներկայացնէ Գէորգ Գազանճեանը:

1 Մայիս 1955ին, մասնաճիւղը կ'ընտրէ նոր վարչական կազմ հետեւեալ ձեւով.

- Ատենապետ՝ Արամ Սուքիասեան
- Ատենադպիր՝ Բիւզանդ Թորիկեան
- Գանձապահ՝ Ժան Սաաթճեան

Խորհրդականներ՝ Գէորգ Գազանճեան, Ստեփան Հաստաճեան:

Այս կազմին նախաձեռնութիւնը կ'ըլլայ նաեւ դաշտին վրայ կազմակերպուած քերմէսը:

Արդարեւ 9 եւ 10 Յունիս 1955ի երկու օրերու վրայ երկարող այս ցայգատօնի բարոյական յաջողութիւնը եւ նիւթական եկամուտը մեծապէս կը նպաստեն մասնաճիւղի տնտեսական բարելաւումին: Այս ձեւով կարելի կը դառնայ նորակառոյց ակումբի բարեզարդման ամբողջացումը:

5 Փետրուար 1956ին, անդամական ընդհանուր ժողովը գրեթէ նոյնութեամբ կը վերընտրէ 1955ի վարչական կազմը միայն, Գէորգ Գազանճեանն է որ կը փոխարինուի Յովսէփ Գազանճեանով:

Շարունակելով նախորդ տարիներու գործակցութիւնը Պէյրութի մասնաճիւղին հետ, Ճիւնիի անդամներէն Լեւոն Գալբաքեան մաս կը կազմէ Պէյրութի հեծելանւորներուն խումբին:

1957ին յատուկ ուշադրութեան կ'արժանանայ սկաուտական շարժումը: Շրջանային վար-

չութիւնը մասնաճիւղին կը յանձնէ սկաուտական գիտելիքներու գիրքեր, սակայն ձեռներէց պատասխանատուի մը ապահովումը կը մնայ լուծելի հարց:

Անակնկալ հարց մը կը ծագի, երբ դաշտի հողաչերտի մէկ մասը կը ծախուի այլ կալուածատիրոջ մը: Վարչութիւնը կը ստիպուի այս պարագան իր օրակարգերուն նիւթ դարձնել եւ սկզբունքային որոշում կը կայացնէ՝ դաշտի ծախուած բաժինը մասնաճիւղին անունով գնել:

27 Յունուար 1957ին ընտրուած վարչութիւնը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

- Ատենապետ՝ Ստեփան Հաստաճեան
- Ատենադպիր՝ Վարուժան Թորիկեան
- Գանձապահ՝ Յովսէփ Գազանճեան
- Խորհրդականներ՝ Արմէն Սաաթճեան, Աբրահամ Հալպրեան:

Մասնաճիւղը ունի 20 օժանդակ եւ 15 մարզիկ անդամներ: Տարեկան նիւթական գործունէութիւնն է՝ ընդհ. մուտք՝ 1051 լ.ո., ընդհ. ելք՝ 612 լ.ո.: Գրադարանը կը պարունակէ 100 հատոր գիրք:

3 եւ 4 Յունուար 1958ին, մասնաճիւղի զոյգ պատգամաւորներ՝ Ստեփան Հաստաճեան եւ Բիւզանդ Թորիկեան կը մասնակցին Շրջանի 14րդ Պատգամաւորական ժողովին:

1958 տարեշրջանի վարչական կազմը կը մնայ գրեթէ նոյնը, միայն Լեւոն Գալբաքեան կը փոխարինէ Արմէն Սաաթճեանը: Այս տարեշրջանի մասնաճիւղի ընթացիկ գործունէութեան կողքին հիմնական գլխաւոր հարցը կը դառնայ դաշտի զոյգ հողաչերտերու տէրերուն հետ համաձայնութիւն մը գոյացնելը: Մասնաճիւղը կը մնայ դաշտի սահմաններուն մէջ գտնուող այդ զոյգ հողաչերտերը սեփականացնելու ծրագրին վրայ: Դժբախտաբար, երկրի քաղաքական կացութիւնը եւ Մայիսէն - Սեպտեմբեր ժամանակաշրջանին վրայ երկարող քաղաքացիական կռիւները անկարելի կը դարձնեն նման ծրագրի մը վերջնական իրականացումը:

Այս տարեշրջանի գլխաւոր յաջողութիւնը

պիտի ըլլար մասնաճիւղի պասքեթպոլի խումբին մասնակցութիւնը միջ-մասնաճիւղային Զատկական հանդիպումներուն, ուր խումբը կ'ապահովէ Բ. դասակարգի մրցաշարքի ախոյանութիւնը եւ կը տիրանայ Շրջանային վարչութեան բաժակին:

1 Փետրուար 1959ին, կը վերընտրուի նախորդ տարուան վարչական կազմը: Մասնաճիւղի գործունէութիւնը կը սահմանափակուի ընթացիկ աշխատանքներով:

21 Յունուար 1960ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը լսելէ ետք 1959 տարուան գործունէութեան տեղեկագրութիւնը վարչութեան անդամներ կ'ընտրէ հետեւեալները:-

- Ատենապետ՝ Ստեփան Հաստաճեան
- Ատենադպիր՝ Աբրահամ Հալպրեան
- Գանձապահ՝ Վարուժան Թորիկեան

Մարզական պատասխանատու՝ Լեւոն Գալբաքեան

Խորհրդական՝ Տոքթ. Ժան Սաաթճեան:

Այս տարեշրջանի գործունէութեան նիւթական բաժինը զգալի աճ կ'ապահովէ ընդհ. մուտք՝ 2365.35 լ.ո., ընդհ. ելք՝ 945.15 լ.ո.: Հակառակ նիւթական այս առաւելութեան, վարչութիւնը կը զգուշանայ շինարարական կարգ մը կարիքներ իրականացնելէ՝ ջուր, լուսազարդում եւ այլն սպասելով դաշտի սեփականացման ծրագրի վերջնական լուծումին:

Արդարեւ 1961 տարեշրջանի վարչութիւնը դաշտի սեփականացման ծրագիրը իրականացնելու համար նշանակեց յատուկ յանձնախումբ մը բաղկացած Ռոպեր Եսայեանէ, Բիւզանդ Թորիկեանէ եւ Ստեփան Հաստաճեանէ եւ իր գանձէն դաշտի գնման Ֆոնտին յատկացուց 2000 լ.ո. իբրեւ անձեռնմխելի գումար: Վերոյիշեալ



Ճիւնիի Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի խումբը, 1957ի միջ-մասնաճիւղային խաղերուն

յանձնախումբը ստացաւ մնայուն հանգամանք եւ անմիջապէս ձեռնարկեց հանգանակութեան, իրականացնելու համար իրեն վստահուած խիստ կենսական ծրագիրը:

1961 տարուայ անդամներու ընդհանուր թիւն է 32: Մասնաճիւղի ընթացիկ գործունէութիւնը՝ կազմակերպչական, մարզական թէ սկաուտական կը զարգանայ բնականոն ձեւով: Յաւելեալ զարկ կը տրուի ակումբային եւ ընկերային գործունէութեան՝ դասախօսական, գրադարանի, Սբ. Զատիկուան Աւետումի, Զատիկական հանդիպումի եւ մշակութային այլ ելոյթներով:

Այս տարուայ վարչական կազմն է՝
Ատենապետ՝ Ստեփան Հաստաճեան
Ատենադպիր՝ Աբրահամ Հալպրեան
Գանձապահ՝ Բիւզանդ Թորիկեան

Խորհրդականներ՝ Լեւոն Գալբաքեան, Արա Պալեան:

1962 տարեշրջանի կազմը եւ պաշտօնները գրեթէ կը պահուին նոյնութեամբ, միայն Վարդգէս Թորիկեան կը փոխարինէ Բիւզանդ Թորիկեանը, իսկ Ճորճ Գալբաքեան՝ Լեւոն Գալբաքեանը: Վարչութիւնը փինկ-փոնկի պաշտօնական կիրարկումին համար կը դիմէ պատկան մարմիններուն, ստանալու համար վաւերացում: Տարեկան ընթացիկ գործունէութեան կողքին մասնաճիւղը տեղւոյն Հ.Մ.Մ-ի գործակցութեամբ Սբ. Մեսրոպ Մաշտոցի ծննդեան 1600ամեակի տօնակատարութիւնը կ'իրականացնէ յատուկ շուքով:

1961-1962 տարեշրջաններուն մասնաճիւղի աթլետներէն յայտնութիւն մը պիտի ըլլար Արա Պալեանը, որ Եգիպտահայ 14րդ. ախոյեանական խաղերուն՝ դրօշարշաւի մրցումին Լիբանանի Հ.Մ.Ը.Մ-ի խումբին յաղթանակի կերտիչը պիտի հանդիսանար:

10 Փետրուար, 1963ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը նոր վարչական կազմ կը յառաջացնէ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Ստեփան Հաստաճեան
Ատենադպիր՝ Աւետիս Պալմանուկեան

Գանձապահ՝ Վարդգէս Թորիկեան
Խորհրդականներ՝ Լեւոն Գալբաքեան, Զաքարիա Տէր Մկրտիչեան:

Նկատի ունենալով դաշտի սեփականացման աշխատանքներու ընթացքը, վարչական կազմին կը միացուի դաշտի Փոնտի յանձնախումբէն Բիւզանդ Թորիկեանը: Արդարեւ, այս տարեշրջանին, հողատէրերէն առաջինը վերջնականապէս կ'որոշէ իր բաժինը Հ.Մ.Ը.Մ-ին ծախել 10.000 լ.ո.ի փոխարէն: Վարչութիւն եւ յանձնախումբ իրենց հաւանութիւնը կը յայտնեն այս առաջարկին եւ առ հաշիւ կանխավճար մը կը կատարեն հողատիրոջ: Այս քայլը պատմական նշանակութիւն պիտի ունենար մասնաճիւղի նոյն վայրին մէջ վերջնականապէս հաստատուելու իմաստով:

Աւելի ուշ, վարչութիւնը կ'ընդլայնէ դաշտի Փոնտի յանձնախումբի կազմը հետեւեալ ձեւով. պատուոյ նախագահ՝ Շահէ Քհն. Ալեքմէզեան, ատենապետ՝ Ռոպէրթ Եսայեան, ատենադպիր՝ Ստեփան Հաստաճեան, գանձապահ՝ Բիւզանդ Թորիկեան, անդամներ՝ Էլիզ Գալբաքեան, Երիցուհի Անիթա Ալեքմէզեան, Վարդուհի Կիւրեղեան, Տոքթ. Ժան Սաաթճեան, Յարթ Պալեան եւ Արամ Սուքիասեան:

Յանձնախումբը կը դիմէ քոյր միութիւններու եւ ճիւղիաբնակ հայութեան բոլոր ընտանիքներուն՝ թիւով 104, դաշտի Փոնտի հանգանակութիւնը ամբողջացնելու նպատակով: Նախաձեռնութիւնը կը պսակուի յաջողութեամբ: Ճիւղի Լ.Օ.Խաչը հանգանակութիւնը կը բանայ 500 լ.ո. յատկացումով: Մերձաւոր Արեւելքի Շրջանային վարչութիւնը կը տրամադրէ 1000 լ.ո.:

2 Փետրուար 1964ին, վարչական կազմը կ'ընտրուի անդամական ընդհանուր ժողովէն հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Վարուժան Թորիկեան
Ատենադպիր՝ Ժան Ապաճեան
Գանձապահ՝ Պետրոս Գսաճիքեան
Հաշուապահ՝ Էլիզ Գալբաքեան

Գոյքապահ՝ Աւետիս Պալմանուկեան
Ֆետերասիոնի ներկայացուցիչ՝ Ստեփան
Հաստաճեան

Մարզական պատասխանատու՝ Լեւոն Գալ-
բաքեան:

Ուշագրաւ է, առաջին անգամ ըլլալով, մաս-
նաճիւղի եօթը հոգինոց վարչութեամբ մը ղե-
կավարուելը: Մարզական ճիւղերը՝ աթլետիզմ,
պասքեթպոլ եւ փինկ-փոնկ տակաւ կը զարգա-
նան:

1964ին, աթլետիզմի աղջկանց կազմը կ'ա-
պահովէ Լիբանանի ախոյեանութիւնը: Տարե-
վերջին, դաշտի առաջին բաժնի սեփականացու-
մը կը հասնի իր աւարտին:

31 Յունուար 1965ին, կ'ընտրուի նոր վարչա-
կան կազմ.-

Ատենապետ՝ Աբրահամ Հալպրեան

Ատենադպիր՝ Ժան Ապաճեան

Գանձապահ՝ Պետրոս Գսաճիքեան

Խորհրդականներ՝ Րաֆֆի Եսայեան,
Մկրտիչ Քրիսեան:

Կանխելով իր ժամանակաշրջանի աւարտը,
վարչութիւնը անդամական ընդհանուր ժողով
կը գումարէ 12 Դեկտեմբեր 1965ին, եւ 1966 տա-
րեշրջանի համար նորընտիր վարչութեան ան-
դամները իրենց դիւանը կը կազմեն հետեւեալ
ձեւով.-

Ատենապետ՝ Տոքթ. Ժան Սաաթճեան

Փոխ Ատենապետ՝ Վարուժան Թորիկեան

Ատենադպիր՝ Ժան Ապաճեան

Գանձապահ՝ Պետրոս Գսաճիքեան

Խորհրդական՝ Աբէլ Տէր Մկտրիչեան

Կիրարկուող մարզական ճիւղերը կը մնան
նոյնները՝ պասքեթպոլ, աթլետիզմ եւ փինկ-
փոնկ: 29 Մայիսին, վարչութիւնը կը կազմա-
կերպէ իր տարեկան մարզական ձեռնարկը, հո-
վանաւորութեամբ՝ Շրջանային վարչութեան:

1967ի Յունուարին, մասնաճիւղին 35րդ ան-
դամական ընդհանուր ժողովի կողմէ ընտրուած
վարչական կազմն է.-

Ատենապետ՝ Տոքթ. Ժան Սաաթճեան

Ատենադպիր՝ Վարուժան Թորիկեան

Գանձապահ՝ Ժորժ Գալբաքեան

Գոյքապահ՝ Րաֆֆի Եսայեան

Խորհրդական՝ Ժան Ապաճեան:

Մասնաճիւղի պատգամաւորներ՝ Բիւզանդ
Թորիկեան եւ Րաֆֆի Եսայեան Յունուարի
25էն 28, կը մասնակցին Շրջանային 17րդ Պատ-
գամաւորական ժողովին:

Այս տարեշրջանին մասնաճիւղի անդամնե-
րու թիւը կը բարձրանայ 48ի, նիւթական գոր-
ծունէութիւնը եւս կը զարգանայ ընդհ. մուտք՝
5792 լ.ո., ելք՝ 5644:

Աթլետիզմի աղջկանց կազմը կը յաջողի
ապահովել Լեռնալիբանանի ախոյեանութիւնը:
Վարչութեան գլխաւոր մտահոգութիւնն է նիւ-
թական միջոցներ ապահովել, վճարելու համար
դաշտի հողամասի երկրորդ բաժնին՝ 500-550
քառակուսի մետրին փոխարժէքը, որուն համար
գին ճշդուած է քառակուսի մետրը 20 լ.ոսկի:
Այս նպատակին համար կը դիմուի Շրջանային
Վարչութեան եւ կը խնդրուի 5-6000 լ.ոսկիի փո-
խատուութիւն մը: Շրջանային վարչութիւնը
փոխատուութեան կարելիութիւնը չունի: Վար-
չութիւնը կը լծուի տենդագին աշխատանքի,
ապահովելու համար վերոյիշեալ գումարը:

1968ին, վարչութեան անդամներ կ'ընտրուին
հետեւեալները.-

Ատենապետ՝ Տոքթ. Ժան Սաաթճեան

Ատենադպիր՝ Ժան Ապաճեան

Բ. ատենադպիր՝ Գաբրիէլ Թասլաքեան

Գանձապահ՝ Վարուժան Թորիկեան

Հաշուապահ՝ Ժորժ Գալբաքեան

Խորհրդականներ՝ Զարեհ Պալեան, Մկրտիչ
Քրիսեան:

Նկատի ունենալով, որ անդամական ընդհա-
նուր ժողովը լայն գործունէութեան առաջարկ-
ներ կը ներկայացնէր, վերոյիշեալ վարչական
կազմին կողքին նշանակուեցան հետեւեալ յանձ-
նախումբերը.-

Մարզական յանձնախումբ՝ Ժորժ Գալբաբեան եւ Մկրտիչ Քրիսեան

Ընկերային յանձնախումբ՝ Ժան Ապաճեան, Զարեհ Պալեան եւ Գաբրիէլ Թասլաբեան:

Դաշտի գնման յանձնախումբ՝ Տոքթ. Ժան Սաաթճեան, Ստեփան Հաստաճեան, Վարուժան Թորիկեան, Աբրահամ Հալպրեան եւ Բիւզանդ Թորիկեան:

Անդամական զգալի աճ մը կ'արձանագրուի տարեշրջանի ընթացքին, ընդհանուր թիւը 48էն բարձրանալով 62ի: Նիւթական գործառնութիւն. մուտք՝ 3572 լ.ո., ելք՝ 3163 լ.ո.:

Այս տարեշրջանին է որ վերջնականապէս կ'իրականանայ դաշտի երկրորդ հողամասի սեփականացումը, հողամասի բաժանման եւ առաջին բաժինի կցումէն ետք: Վարչութիւնը զանազան հասութեան ձեռնարկներու արդիւնքով կը յաջողի վճարել հողամասի փոխարժէքը:

1969էն սկսեալ նոր ժամանակաշրջան մը կը բացուի մասնաճիւղի գործունէութեան առջեւ: Շինարարական ծրագիրները կ'իրագործուին աւելի հիմնական չափերով: Ակումբի սրահը կ'ընդարձակուի: Տարեշրջանի վարչութեան մաս կը կազմեն.-

Ատենապետ՝ Տոքթ. Ժան Սաաթճեան

Ատենադպիր՝ Վարուժան Թորիկեան

Գանձապահ՝ Ժան Ապաճեան

Գոյքապահ՝ Յովսէփ Գազանճեան

Մարզական պատասխանատուներ՝ Ճորճ եւ Արտա Գալբաբեաններ

Յարաբերական՝ Արա Պալեան:

1 եւ 2 Մարտ 1969ին, մասնաճիւղի երեք պատգամաւորները՝ Տոքթ. Ժան Սաաթճեան, Վարուժան Թորիկեան եւ Ժան Ապաճեան կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային 18րդ Պատգամաւորական Ժողովին: Այս տարեշրջանին մասնաճիւղի պասքեթպոլի տղոց խումբը կը մասնակցի իր դասակարգի Լիբանանի ախոյեանութեան մրցաշարքին: Աղջկանց կազմը իր կարգին զգալի յառաջդիմութիւններ կ'արձանագրէ:

Աթլետիզմը կը կիրարկուի միասնաբար Պէյրութի եւ Պուրճ Համուտի մասնաճիւղերու կազմերուն հետ:

1 Փետրուար 1970ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովին կողմէ ընտրուած վարչութիւնը մեծամասնութեամբ կը մնայ նոյնը, միայն Զարեհ Պալեանը եւ Պօղոս Գսաճիքեանը կը փոխարինեն Արա Պալեանն ու Արտա Գալբաբեանը:

9 եւ 10 Յունուար 1971ին, Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի 19րդ Շրջանային Պատգամաւորական Ժողովին ձիւնի մասնաճիւղը կը ներկայացնեն Վարուժան Թորիկեան, Ժան Ապաճեան եւ Յովսէփ Գազանճեան:

28 Փետրուար 1971ին, անդամական ընդհանուր ժողովը լսելէ ետք պատգամաւորներու զեկուցումը, 19րդ Շրջանային Ժողովի մասին, կ'ընտրէ նոր վարչական կազմ.-

Ատենապետ՝ Տոքթ. Ժան Սաաթճեան

Փոխ ատենապետ՝ Աբրահամ Հալպրեան

Ատենադպիր՝ Վարուժան Թորիկեան

Գանձապահ՝ Ժան Ապաճեան

Հաշուապահ՝ Ստեփան Հաստաճեան

Մարզական պատասխանատու՝ Զարեհ Պալեան

Գոյքապահ՝ Զաքարիա Տէր Մկրտիչեան:

1972 տարուան վարչութիւնը ընտրուած 6 Փետրուարին, իր դիւանը կը կազմէ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Տոքթ. Ժան Սաաթճեան

Փոխ ատենապետ՝ Լեւոն Գալբաբեան

Ատենադպիր՝ Վարուժան Թորիկեան

Գանձապահ՝ Զարեհ Պալեան

Հաշուապահ՝ Աբրահամ Հալպրեան

Գոյքապահ՝ Զաքարիա Տէր Մկրտիչեան

Սկսած պատասխանատու՝ Սամուէլ Ապաճեան:

Մասնաճիւղի անդամուհի Անահիտ Սաաթճեանը կը հաստատէ լիբանանեան 100մ. արգելարչաւի նոր մրցանիշ՝ 17" 90ով: Արտա

Գալբաքեան կը մասնակցի միջազգային 17րդ
ողիմպիականին ներկայացնելով Լիբանանը:

1973ին, վարչութիւնը կը բաղկանայ հետեւեալ անդամներէն.-


Ատենապետ՝ Աբրահամ Հալպրեան
Ատենադպիր՝ Ժան Ապաճեան
Գանձապահ՝ Գառնիկ Գաբրիէլեան
Աթլետիք պատասխանատու՝ Ժորժ Գալբաքեան

Պասքետպոլի պատասխանատու՝ Զարեհ Պալեան

Ակումբի պատասխանատու՝ Զաքարիա Տէր Մկրտիչեան

Սկաուտական Խորհուրդի ներկայացուցիչ
Վարուժան Թորիկեան:

Այս տարեշրջանին մարզական զոյգ ճիւղերը եւ սկաուտութիւնը իրենց գործունէութեանց բարձրագոյն մակարդակին կը հասնին: Մարզական ելոյթները իրար կը յաջորդեն: Յիշատակութեան արժանի է մասնաճիւղի անդամուհիներէն Արտա Գալբաքեանի աթլետիզմի մէջ ունեցած յաջողութիւնները: Արդարեւ, Արտա Գալբաքեանը կը հաստատէ Լիբանանի 800մ. վազքի մրցանիշը՝ 2' 20" ով եւ 1500մ. վազքի մրցանիշը՝ 5' 49" 30ով:



Ճինիի Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի մրցանիշակիր արլեթները իրենց պատասխանատուներով՝ Մարպիչ՝ Վարդգէս Ըսկիպաշեան, Եսթեր Մեծմօրուքեան, Անահիտ Սաաթճեան, Արտա Գալբաքեան, Միշապգային իրաւարար՝ Բիւզանդ Թորիկեան

1974 եղանակին Արտա Գալբաքեանը կրկին անգամ կը կտրէ իրեն պատկանող 800 եւ 1500մ. վազքերու լիբանանեան մրցանիշները, յաջորդաբար՝ 2' 20" եւ 5' 0" 90ով:

ԴԱՇՏ ԵՒ ԱԿՈՒՄԲ

Հ.Մ.Ը.Մ.ի Ճիւնի մասնաճիւղի գործունէութեան գլխաւոր առանցքը, մարզական գործունէութեան կողքին, իր մարզադաշտի կազմակերպումն է եւ զոյգ հանգրուաններով անոր սեփականացումը:

Հիմնադրութեան օրէն սկսեալ այս հարցը իրերայաջորդ բոլոր վարչական կազմերուն մտահոգութեան առարկան դարձաւ: Մինչ մարզադաշտը կը հարթուէր, ցանկապատով մը կը շրջապատուէր եւ բացումը կը կատարուէր, վարչութիւնը անապահով կը զգար յաւելեալ ծախսեր կատարել նոյն դաշտին վրայ, երբ տակաւին դաշտի հողամասը սեփականութիւն չէր:

Սակայն, տարիներու վրայ երկարող այս հարցի կարգադրութիւնը չէր կրնար կասեցնել մասնաճիւղի մարզական, ընկերային, սկստական եւ այլ գործունէութեանց ընթացքը: Այս պատճառով ալ հետզհետէ պէտք եղաւ դաշտի բարեգարգումը ամբողջացնել, շինել յարակից ակումբի սրահ մը, պասքէթպոլի դաշտը օժտել թրիպիւնով, շինել հանդերձարան, ապահովել ջուր եւ ելեկտրականութիւն, դաշտը սալայատակել, լուսազարդել, ցանկապատը վերանորոգել, սրահ-ակումբէն ներս գրադարան սարքել, կահաւորել եւայլն:

Վերոյիշեալ աշխատանքներու իրականացման համար մասնաճիւղի տարեկան աւանդական դարձած մարզահանդէսները եկամուտի աղբիւրներ հայթայթեցին: Իւրաքանչիւր տարի Մայիս ամսուան ընթացքին կազմակերպուեցան մարզահանդէսներ, ուր տեղի ունեցան պասքէթպոլի մրցաշարքեր, աթլէթիք ելոյթներ, սկստական խաղեր: Այս բոլոր ելոյթները հովանաւորուեցան Շրջանային Վարչութեան, ազգայիններու ու մանաւանդ Քեսրուանի պետական երեփոխաններու կամ նախարարներու կողմէ:

Մասնաճիւղը հաստատուն դարձաւ Ճիւնի քաղաքապետութեան, քայմաքամի եւ ոստիկան գորաց գործակցութեամբ, ու խօսիլ տուաւ իր մասին մամուլի միջոցաւ:

Ինչպէս նշուեցաւ շինարարական գործունէութեան բաժինին մէջ, կարելի է հաստատարձանագրել, թէ Ճիւնի մասնաճիւղի գոյատեւման եւ բարգաւաճման գլխաւոր լծակը հանդիսացաւ իր դաշտի զոյգ հողամասերու սեփականացումը, անոնց պաշտօնական արձանագրութիւնը Լիբանանի Ազգային Առաջնորդարանի անուան, դաշտի ծառայութիւնը մասնաճիւղի մարզական եւ սկստական գործունէութեան եւ ակումբի ծառայութիւնը անդամներու եւ առհասարակ հայութեան ընկերային նպատակներուն:

ԱՆԹԻԼԻԱՍ

ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Պէյրութէն դէպի հիւսիս արեւելք 10 քմ. հեռաւորութեան վրայ կը գտնուի Անթիլիաս ծովեզերեայ գիւղաւանը, ուր 1930ական թուականներուն սկիզբը կիլիկիոյ կաթողիկոսութիւնը կայք հաստատեց, նախկին ամերիկեան որբանոցի վայրին վրայ, շրջապատուած նարնջենիներու գեղատեսիլ պարտէզներով:

Ժամանակի ընթացքին փոքրաթիւ հայ ընտանիքներ եկան հաստատուիլ նորակառոյց վանքին շուրջ, ուր կը գործէր նաեւ դպրեվանքը:

Բ. Աշխարհամարտի վերջաւորութենէն սկսեալ, Անթիլիաս հաստատուած հայերու թիւը բազմացաւ: Անոնք կու գային Պէյրութէն եւ Պուրճ Համուտէն հայ շինարարներու արդիական բնակարանները վարձելու կամ յարկաբաժիններուն սեփականատէր դառնալու: 1960ական թուականներու սկիզբը, Անթիլիաս հաստատուեցան նաեւ մեծաթիւ հայ ընտանիքներ, որոնք կու գային Սուրիոյ զանազան քաղաքներէն, սեփականատէր դառնալով նորակա-

ույց բնակարաններու եւ նախաձեռնելով շինարարական աշխատանքի:

Այսպէսով, 1960ական թուականներու կէսերուն, հայերը կարեւոր համեմատութիւն կը ներկայացնէին Անթիլիասի եւ շրջակայքի ընդհանուր բնակչութեան մէջ: Հին ու նոր եկուորներուն մէջ կը գտնուէին բազմաթիւ Հ.Մ.Ը.Մ.ականներ, Պէյրութի, Պուրճ Համուտի, Հալէպի թէ ալ վայրերու մասնաճիւղերէն փոխադրուած:

1970ի աշնան, այս Հ.Մ.Ը.Մ.ականներէն խումբ մը, նախաձեռնութեամբ Յովհաննէս Տէր Յարութիւնեանի, Վարդգէս Թրթռեանի, Սարգիս Սարգիսեանի, Բարսեղ Գավճեանի, Ստեփան Հաստաճեանի եւ Անդրանիկ Պէօյիւքեանի կը ծրագրեն Անթիլիասի մէջ հիմնել Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ: Շրջանային վարչութիւնը 29 Հոկտեմբեր, 1970 թուակիր նամակով իր հաւանութիւնը կը յայտնէ Անթիլիասի մասնաճիւղի հիմնումին եւ կը նշանակէ առժամեայ վարչութիւն, բաղկացած հետեւեալ անդամներէն.- Բարսեղ Գավճեան, Սարգիս Սարգիսեան, Մարտիրոս Չալլեան, Սարգիս Փանոսեան եւ Աւետիս Սազճեան պարտականութիւն յանձնելով անդամական ընդհանուր ժողով գումարել եւ ընտրեալ վարչութիւն յառաջացնել:

4 Նոյեմբեր 1970ին, կը գումարուի մասնաճիւղի անդրանիկ անդամական ընդհանուր ժողով, որմէ ընտրեալ առաջին վարչութիւնը իր դիւանը կը կազմէ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Սարգիս Սարգիսեան
- Ատենադպիր՝ Սարգիս Փանոսեան
- Գանձապահ՝ Բարսեղ Գավճեան

Սկստական պատասխանատու՝ Մարտիրոս Չալլեան

Հաշուապահ՝ Աւետիս Սազճեան:

ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Նորընտիր վարչութիւնը առաջին հերթին կը նշանակէ Սկստական Խորհուրդ մասնակցու-

թեամբ Մարտիրոս Չալլեանի, Յովհաննէս Թերճանեանի եւ Սարգիս Փանոսեանի:

Վերոյիշեալ վարչութիւնը վեցամսեայ գործունէութեան ընթացքին կը լծուի կազմակերպչական աշխատանքի՝ դիւանային, մարզական եւ սկստական կազմերու կազմակերպումով: Մասնաճիւղի կեդրոնն է Անթիլիասի Հ.Յ.Դ. Աղբալեան ակումբը:

18 Ապրիլ 1971ին, կը կայանայ մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողով, ներկայութեամբ Մերձաւոր Արեւելքի Շրջանային վարչութեան ներկայացուցիչներ Բիւզանդ Թորիկեանի եւ Յովհաննէս Տէր Յարութիւնեանի: Ժողովին կը նախագահէ Վարդգէս Թրթռեան, քարտուղարութեամբ Յովհաննէս Չափարեանի: Ժողովէն ընտրեալ վարչութիւնը իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Սարգիս Սարգիսեան
- Ատենադպիր՝ Սարգիս Փանոսեան
- Գանձապահ՝ Յովսէփ Մարգարեան
- Հաշուապահ՝ Աւետիս Սազճեան

Խորհրդականներ՝ Բարսեղ Գավճեան, Յովհաննէս Թերճանեան, Յովհաննէս Չափարեան, Անդրանիկ Քէօրքիւնեան, Զաւէն Գասապեան:

Այս տարեշրջանին, Աղբալեան ակումբը կը փոխադրուի իր նոր շէնքը: Հ.Մ.Ը.Մ.ի մարզական եւ սկստական կարիքները գոհացնող բաւարար տեղ կը տրամադրուի մասնաճիւղին: Մասնաճիւղի կիրարկած մարզախաղերն են Ֆութպոլը եւ պասքեթպոլը: Սկստական հաւաքոյթները կը դասաւորուին կանոնաւոր հերթականութեամբ, խմբապետն է Յովհաննէս Թերճանեան: Տարեշրջանի նիւթական գործունէութեան պատկերն է. մուտք՝ 14.761 լիբանանեան ոսկի, ելք՝ 13768 լ.ո.:

11 Յունիս 1972ին, 85 անդամներու ներկայութեամբ տեղի կ'ունենայ մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողով, նախագահութեամբ Վարդգէս Թրթռեանի եւ քարտուղարութեամբ Յարութիւն Պերպէրեանի: Լսելէ ետք վարչութեան 14 ամիսներու նիւթաբարոյական գործունէութեան տեղեկագիրը, ժողովը զայն կը գտնէ

գնահատելի: Նորընտիր վարչութեան անդամները դիւանը կ'ընտրեն հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Յովհաննէս Չափարեան

Ատենադպիր՝ Վարուժան Շամլեան

Գանձապահ՝ Յովսէփ Մարգարեան

Խորհրդականներ՝ Յովհաննէս Թերզեան, Պետիկ Սապունճեան, Սարգիս Փանոսեան, Բարգէն Քեպապճեան, Անդրանիկ Պէօյիւքեան եւ Յովհաննէս Թերճանեան՝ սկառուտական խմբապետ:

Այս կազմը կը շարունակէ նախորդի կազմակերպական աշխատանքները եւ կը բարեզարդէ Աղբալեան ակումբի շէնքին մէջ Հ.Մ.Ը.Մ.ին տրամադրած բաժինը: Վարչութեան գործունէութեան ժամանակաշրջանը կը տեւէ ութ ամիս:

28 Յունուար 1973ի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած պատգամաւոր Սարգիս Սարգիսեան մասնաճիւղը կը ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի 19րդ Շրջանային ժողովին:

4 Մարտ 1973ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովի կողմէ ընտրուած վարչական կազմը իր դիւանը կը կազմէ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Վարուժան Շամլեան

Ատենադպիր՝ Աշոտ Տէր Խաչատուրեան

Գանձապահ՝ Յարութիւն Մեհթերեան

Խորհրդականներ՝ Արա Յակոբեան, Անդրանիկ Քէօրքիւնեան, Յարութիւն Պեչլեան, Յարութիւն Խարաճեան, Յովհաննէս Թերզեան եւ Յովհաննէս Թերճանեան՝ սկառուտական խմբապետ:

Այս տարեշրջանին մարզական ճիւղերուն վրայ կ'աւելցուի փինկ փոնկը:

17 Յունիսին մասնաճիւղը կը կազմակերպէ պասքեթպոլի եւ փինկ-փոնկի միջ-մասնաճիւղային մրցաշարք, ձիւնիի Հ.Մ.Ը.Մ.ի մարզադաշտին վրայ:

Շրջանային Վարչութիւնը նուիրատուութեամբ եւ փոխատուութեամբ կը նպաստէ մասնաճիւղի նիւթական գործառնութեան ընթացքին:

Օգոստոսին, սկառուտական խումբը Զմմառի

մէջ կը կազմակերպէ մասնաճիւղի տարեկան բանակումը, ուր տեղի կ'ունենայ երդման արարողութիւն:

Անթիլիասի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին անդամական 4րդ ընդհանուր ժողովը կը գումարուի 24 Փետրուար 1974ին, ներկայութեամբ 73 անդամներու: Լսելէ ետք 1973 տարեշրջանի վարչութեան գործունէութեան տեղեկագիրը, ժողովը զայն կ'որակէ «յոյժ գնահատելի» բանաձեւով: Ապա տեղի կ'ունենայ 1974 տարեշրջանի վարչութեան ընտրութիւնը: Ընտրեալ վարչականները տեղույն վրայ կը կազմեն իրենց դիւանը հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Վարուժան Շամլեան

Փոխ ատենապետ՝ Յովհաննէս Թերզեան

Ատենադպիրներ՝ Աշոտ Տէր Խաչատուրեան, Յարութիւն Ճենանեան

Գանձապահ՝ Յարութիւն Մեհթերեան

Հաշուապահ՝ Վարդան Չափարեան

Խորհրդականներ՝ Երուանդ Էթիէմեզեան, Անդրանիկ Քէօրքիւնեան

Սկառուտական խմբապետ՝ Յակոբ Ետալեան:

Մասնաճիւղը խանդավառութեամբ կ'ողջունէ Շրջանային Վարչութեան նախաձեռնութիւնը Անթիլիասի Մզհէր շրջանին մէջ սեփական մարզադաշտի մը ապահովման համար, հոն նախատեսելով իր յաջողութեան երաշխիքը:

ՃՏԷՅՏԷ

Ճտէյտէն Պէյրութի արեւելեան շրջանի կարեւոր արուարձաններէն մէկն է եւ Լեռնալիբանանի Մեթն գաւառի վարչական կեդրոնը: Ճտէյտէի Հ.Մ.Ը.Մ.ի սահմաններուն մէջ կ'իյնան Ամանոսի, Մար Եոլսէֆի, Նահր Էլ Մոթի, Ֆանարի եւ Ռաուտայի հայաշատ թաղամասերը: 1950ական թուականներուն, շինարարական ծաւալումին առընթեր, այս շրջաններու հայ բնակչութիւնը կարեւոր համեմատութեամբ կը բազմանայ եւ տարիներու ընթացքին Լիբանանահայ Օգնութեան Խաչի եւ Հ.Յ.Դաշնակցութեան

կորիզներ կը հաստատուին զանազան թաղամասերու մէջ:

1973ի տարեվերջին, Պետրոս Շեմմեսեանի առաջարկով եւ Հ.Յ.Դ. Թեհլիրեան կոմիտէութեան նախաձեռնութեամբ, կը ծրագրուի Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղ մը կազմել այս լայնատարած շրջանին մէջ: Շեմմեսեան այս ծրագիրը կը յայտնէ Շրջանային Վարչութեան անդամներէն Յովհաննէս Տէր Յարութիւնեանին: Վերջինս հարցը կը տանի Շրջանայինի յաջորդ նիստին, ուր ծրագրին սկզբունքային համաձայնութիւնը կ'ապահովուի: 6 Յունուար 1974ին, Պետրոս Շեմմեսեանի բնակարանին մէջ խորհրդակցական հաւաքոյթ մը կը գումարուի, ուր կ'ուսումնասիրուի մասնաճիւղի հիմնադիր ժողով մը հրաւիրելու կարելիութեանց մասին:

Անդամական անդրանիկ ընդհանուր ժողովը կը գումարուի 20 Յունուար, 1974ին քառասուն նորագիրներու մասնակցութեամբ: Ժողովին ներկայ կը գտնուի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչը, եւ տեղւոյն վրայ կը նշանակէ ինը հոգինոց վարչութիւն մը: Նոյն օրը կը կատարուի աշխատանքներու բաժանում հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Պետրոս Շեմմեսեան
Փոխ ատենապետ՝ Գէորգ Աւրնեան
Ատենադպիր՝ Խոսրով Ասլանեան
Բ. ատենադպիր եւ հաշուապահ՝ Յակոբ Քելեշեան

Գանձապահ՝ Ազատ Աբրահամեան
Սկաուտական ներկայացուցիչ՝ Գէորգ Ալաճաճեան



Ճոէյտէի Հ.Մ.Ը.Մ-ի ֆութպոլի անդրանիկ կապը որ տիրացաւ 1974ի միջ-մասնաճիւղային մրցաշարքի ախոյեանութեան: Չախին վարչական՝ Գէորգ Աւրնեան աջին՝ Ատենապետ Պետրոս Շեմմեսեան եւ մարզիչ Յակոբ Գաւաթոյեան

Ընկերային եւ յարաբերական՝ Վարդգէս Վարդանեան

Մարզական պատասխանատուներ՝ Յակոբ Գարակէզեան, Յակոբ Էվետենեան:

Մասնաճիւղի նստավայր կը ճշդուի Մար Եոսէֆ Թաղի Լ.Օ.Նաչի Անահիտ մասնաճիւղի ակումբը: Շրջանային Վարչութիւնը 500 լ.ոսկիի յատկացումով կը նպաստէ նիւթական կարիքներուն:

30 Յունուար 1974ի նիստին կը ծրագրուի մարզական եւ սկստական խումբերու կազմութիւնները: Ծրագրի իրականացման համար ատաղձը պատրաստ էր: Ֆութպոլի անդրանիկ կազմը՝ հսկողութեամբ Գէորգ Աւրնեանի, առաջին եղանակին իսկ, կը յաջողի ապահովել Շրջանային Վարչութեան կազմակերպած Բ.

դասակարգի միջ-մասնաճիւղային մրցաշարքի ախոյեանութիւնը:

Մասնաճիւղի սկստութեան կորիզը կը կազմէ Ֆանարի «Լէյլաւան» կեդրոնի սկստական շարժումը, որ Գարակէզեան հաստատութեան տնօրէն Նուպար Դաւիթեանի հաւանութեամբ կը փոխանցուի մասնաճիւղին՝ «Հ.Մ.Ը.Մ.ի Լէյլաւանի սկստներ» անուանումով: Սկստական հաւաքոյթները տեղի կ'ունենան Ազգային Էհրամճեան վարժարանի բակին մէջ: Մասնաճիւղի սկստական խմբապետն է Մարտիրոս Փանոսեան:

1974 տարին կ'աւարտի կատարեալ յաջողութեամբ: Հ.Մ.Ը.Մ.ի Ճտէյտէի մասնաճիւղը կը գտնուի փայլուն ապագայ խոստացող հորիզոնի մը սեմին:



1. Լիբանանի Հ.Ս.Ը.Ս.ի արվեստները Քամիլ Շամուն Մարպաանի դաշտին մեջ - 2. Պէյրուսի հեծելանորդուհի Անիթա Տէմիրճեան - 3. Լիբանանի ախոյեան Հ.Ս.Ը.Ս.ի Պէյրուսի մասնաճիւղի քառեակը - 4. Պէյրուսի Հ.Ս.Ը.Ս. աղջկանց հեծելանիւի մարպիկուհիները - 5. Լիբանանի արվեստի մրցանիշակիր Հ.Ս.Ը.Ս.ական մարպիկուհիներ - 6. Լիբանանի մարցանիշակիր Արտա Գալբաքեան:


ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՍՈՒՐԻԱ

- ԸՆԴՀԱՆՐՈՒԹԻՒՆՆԵՐ
- ԳԱՄԱՍԿՈՍ
- ՀԱԼԷՊ
- ԼԱԹԱՔԻԱ
- ՀՈՄՍ
- ԳԱՄԻՇԼԻ
- ՌԱՍ ԻԻԼ ԱՅՆ
- ՀԱՍԻԶԷ
- ՃԱՐԱՊԼՈՒՍ
- ԱԶԵԶ
- ԱՐԱԲ ԲՈՒՆԱՐ
- ՏԵՐՊԵՍԻԷ
- ՏԵՐԻՔ
- ՏԷՐ ԶՕՐ
- ԹԵԼ ԱՊԻԱՏ
- ԱՅՆ ՏԻՈՒԱՐ
- ՔԵՍԱՊ
- ԱՄՈՒՏԱ
- ԱՅՆ ԱՐՈՒՍ
- ՌԱՔՔԱ
- ԹԵԼ ՊՐԱՔ
- ՊԱՆԻԱՍ

ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ

ԾՈՎ



ԸՆԴՀԱՆՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Համաշխարհային Բ. Պատերազմին ետք Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ շրջանի մասնաճիւղերու գործունէութիւնը ամբողջութեամբ նոր ընթացք ստացաւ:

1939ին, Սուրիոյ հիւսիս-արեւմտեան շրջանի Սանճաք նահանգը, երկրէն անջատուելով կցուեցաւ Թուրքիոյ: Այս շրջանի հայերը, որոնց կարգին Ալեքսանտրեթի, Անտիոքի եւ Քրքը Խանի մասնաճիւղերու Հ.Մ.Ը.Մ.-ականներ, հաստատուեցան Սուրիոյ եւ Լիբանանի զանազան քաղաքներուն մէջ: Եկուոր Հ.Մ.Ը.Մ.-ականները, մեծամասնութեամբ, մաս կազմեցին տեղւոյն մասնաճիւղերուն: 1939-1945 պատերազմական ժամանակաշրջանի ավարտին նոր մասնաճիւղեր հիմնուեցան, յատկապէս հիւսիսային Սուրիոյ հայաշատ գիւղերուն եւ գիւղաքաղաքներուն մէջ: Այս կարգի նոր մասնաճիւղերը եղան՝ Պանիասը, Ռաքքան, Թել Պրաքը, Թել Ապիատը եւ Ամուտան, որոնք մաս պիտի կազմեն ներկայ հատորի բաժնին մէջ ինկող Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան, իբրեւ նոր մասնաճիւղեր, նախապէս գործողներու կողքին:

Այս գլուխի մասնաճիւղերուն մեծագոյն բաժինը պիտի յատկացուի Հալէպին՝ իր կազմակերպչական, մարզական եւ սկստական բաժիններու գործունէութեամբ: Իսկ Հալէպի մասնաճիւղի գործունէութեանց կարեւորագոյն մասը շարունակաբար ակելի քան քսան տարիներու վրայ երկարող միջ-մասնաճիւղային Զատկական խաղերուն կազմակերպումը՝ պիտի յիշուի Դ. Գլուխի «ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ» բաժնին տակ, նկատի ունենալով որ անոնց նախաձեռնութիւնը Սուրիոյ, Լիբանանի, Պաղեստինի եւ Յորդանանի Շրջանային Վարչութեան կը պատկանի:

ԴԱՄԱՍՍԿՈՍ

Հիմնադրութեան ժամանակագրական կար-

գով, Սուրիոյ երիցագոյն մասնաճիւղն է Դամասկոսի մասնաճիւղը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ

ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի մասնաճիւղի 1939ին նշանակեալ վարչութեան կը յաջորդէ 22 Յունուար 1940ի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած հետեւեալ կազմը.-

Ատենապետ՝ Վահան Տօնապետեան
Փոխ ատենապետ եւ գանձապահ՝ Յակոբ Մզրաքճեան

Ատենադպիր՝ Սարգիս Պէքեարեան
Փոխ ատենադպիր՝ Մեսրոպ Յոլակեան
Սկստականապետ՝ Տիգրան Ոսկերիչեան

Խորհրդականներ՝ Արտաշէս Աթթարեան,
Սեզար Թերճիմանեան, Արամ Փաշապեղեան
Քարտուղար եւ հաշուապահ՝ Երուանդ Գարանեան (նշանակուած ընտրեալ վարչութեան կողմէ):

1940 տարեշրջանի պատերազմական օրերու կեանքի դժուարութիւնները եւ մեկնումներու պատճառով Ֆուլթպոլի խումբին տկարացումը ծանր կը կշռեն մասնաճիւղի գործունէութեան վրայ: Այս դժուարութիւնները հարթելու նպատակով, վարչութիւնը կը փորձէ Պէյրութի մասնաճիւղէն Ֆուլթպոլիստներ հրաւիրելով խումբը զօրացնել: Սակայն, այս փորձն ալ իր անպատեհութիւնները ունի՝ Դամասկոսի Հ.Մ.Ը.Մ.ը Ֆետերէ խումբ մը չըլլալուն պատճառով, Պէյրութէն մեկնող խաղացողները, վերադարձին, Ֆետերասիոնի կողմէ պատիժի կ'ենթարկուին: Այս մասին Շրջանային վարչութեան յղուած նամակով վարչութիւնը հետեւեալը կ'առաջարկէ, «Այս դրութեան վերջ մը տալու եւ մեր խումբին ունեցած հմայքը չկորսնցնելու համար, պիտի խնդրէինք որ այս կէտին շուրջ կարգադրութիւն մը ընէիք, կամ մեր մասնաճիւղն ալ պէտք է Լիբանանի Ֆետերասիոնին կապել (որովհետեւ Սուրիոյ մէջ Ֆետերասիոն չկայ) կամ պէտք է մեր Պէյրութի խաղացողներուն

արտօնել, առանց պատժուելու, մեզի օժանդակեն ի պահանջեալ հարկին»:

Զատկին, Ֆուլթոնի խումբը կը մասնակցի Հալէպի մէջ կայացած միջ-մասնաճիւղային Ֆուլթոնի մրցաշարքին:

Յաջորդող զոյգ տարեշրջանները տեղաբայլի տարեշրջաններ են, հակառակ անդամներու թիւի աճին, 1942ին՝ 120 անդամներ: Վրայ կը հասնի երկրի քաղաքական դժուարին կացութիւնը՝ երբ այլ կազմակերպութիւններու շարքին կը փակուին նաեւ Դամասկոսի Հ.Մ.Ը.Մ.ի ակումբի դռները: Մասնաճիւղի յաջողագոյն ձեւնարկը կը մնայ իր կազմակերպուած եւ խնամուած Ֆուլթոնի դաշտը, որուն վարձքի եկամուտով կը հաւասարակշռուի Ֆուլթոնի խումբի պիւտճէն:

1943ին, Ֆրանսական հոգատարութիւնէն անջատումէն ետք, Սուրիոյ անկախացումը նոր կացութիւններ կը ստեղծէ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան համար: Մասնաճիւղը, նոր օրինականացումներու պատշաճեցումով, ինքզինք աւելի զօրաւոր կը զգայ եւ նոր նուաճումներու սեմին կը գտնուի: Սակայն, պետական այս նոր օրինականացումները նաեւ նոր պարտաւորութիւններու առջեւ կը դնեն Դամասկոսի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի վարչութիւնը: Գլխաւոր դժուարութիւնը կը հանդիսանայ նիւթականը: Պատերազմական օրերու անձուկ վիճակը անելի կը մատնէ Հ.Մ.Ը.Մ.ի նախաձեռնութիւնները: Վահան Տօնապետեան եւ իր ընկերները ճիգ չեն խնայեր մասնաճիւղը դուրս բերելու համար այս գոյավիճակէն: Ֆուլթոնի խումբը խօսիլ կու տայ իր մասին, երբ 4-0 արդիւնքով «Իթիհատ» խումբին յաղթելով կ'ապահովէ 1943-ի Դամասկոսի ախոյեանութեան բաժակը:

1944 տարեշրջանի Դամասկոսի վարչական կազմի անդամներն են՝ Վահան Տօնապետեան, Յովհաննէս Թնճուկեան, Տիգրան Ոսկերիչեան, Արամ Փաշապետեան, Յարութիւն Սարեան եւ Յարութիւն Օգնայեան: Մասնաճիւղը մեծ շուքով կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 25ամեակը, «Այտա Փալաս»ի ընդարձակ սրահին մէջ:

Օրուան հովանաւորն է՝ կաթողիկոսական փոխանորդ Եփրեմ Արք. Տոհմունին: Պետական պաշտօնական անձնաւորութիւններու կարգին է Ֆուլթոնի Ֆետերասիոնի ներկայացուցիչ Քամէլ Պըննի, որ խօսք առնելով կը դրուատէ Դամասկոսի Հ.Մ.Ը.Մ.ի նուաճումները եւ անոր ծառայութիւնները սուրիական մարզական շարժումին: Օրուան բանախօսն է Տիգրան Գալրպճեան: Գեղարուեստական բաժնին իրենց մասնակցութիւնը կը բերեն օրիորդներ՝ Կ. Թորոսեան եւ Պ. Յարութիւնեան եւ պարոններ՝ Ե. Գարաճեան, Տէր Պետրոսեան եւ Չարխուտեան:

Մասնաճիւղի պատգամաւորներ՝ Եղիշէ Մանուկեան, Սարգիս Պէքեարեան, Արշակ Տատոյեան, Տիգրան Ոսկերիչեան, Նիկողոս Պօյաճեան եւ Յովհաննէս Տէր Մինասեան, 23 Դեկտեմբեր 1944ին, Դամասկոսի Հ.Մ.Ը.Մ.ը կը ներկայացնեն Սուրիոյ, Լիբանանի եւ Յորդանանի Տրջանային Ներկայացուցչական ժողովին:

1945ին, ատենապետ Վահան Տօնապետեանին կողքին են՝ ատենադպիր Արամ Փաշապետեան եւ սկաուտապետ Տիգրան Ոսկերիչեան, որ նաեւ կը վարէ երկրորդ ատենապետի պաշտօնը: Վարչութիւնը գանձի անձուկ կացութենէն փրկուելու համար վիճակահանութիւն մը կը կազմակերպէ: Տեղւոյն վրայ սպառումի կողքին, վիճակահանութեան տոմսերէն կ'ուղարկուին Հ.Մ.Ը.Մ.ի այլ մասնաճիւղերու, ծախուելու համար: Վարչութիւնը կը խնդրէ քոյր մասնաճիւղերէն որ չսպառուելու պարագային իսկ, տոմսերը չվերադարձուին, այլ փոխարժէքը մասնաճիւղերու գանձէն վճարուի, որպէսզի Դամասկոսի մասնաճիւղը կանգուն մնայ:

1946ի Յուլիսին, Դամասկոսի մասնաճիւղը կը կազմակերպէ իր տարեկան մարզահանդէսը, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն սկաուտական ու մարզական բոլոր շարքերը, ինչպէս նաեւ Զահլէի մասնաճիւղի Ֆուլթոնի խումբը: Մարզահանդէսը կը հովանաւորէ Դամասկոսի նահանգապետ Մազհար Պէյ Պէքրի: Օրուան թագուհին է Տիկին Ս. Քէշիչեան: Օրուան ախոյեան կը հանդիսանայ Նիկոլ Գիւլեան:

Մարզահանդէսի փակման տողանցքը կ'առաջնորդէ մասնաճիւղի սկաուտական նորակազմ նուագախումբը:

1948ի մարզական գործունէութեան խանդավառիչ նորութիւնն է պասքեթպոլի տղոց եւ աղջկանց կազմերու յաջողութիւնները, որոնց համար կը ծրագրեն Պէյրութէն հրաւիրել մարզիչ Յակոբ Գատեանը:

Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Մարմնամարզ»ի մասնաճիւղի թղթակիցն է Ուրֆալեան:

1949 տարեշրջանի վարչական ընտրութիւնը տեղի կ'ունենայ 11 Փետրուարին կայացած անդամական ընդհանուր ժողովով: Վարչութիւնը յատուկ պարահանդէս մը կը կազմակերպէ, անոր հասոյթը յատկացնելու համար Պաղեստինի Հ.Մ.Ը.Մ.ի աղետեալ անդամներուն:

1950ին, մասնաճիւղի վարչութեան դիւանին մաս կը կազմեն Վահան Տօնապետեան ատենապետ՝ եւ Նիկողոս Պոյաճեան՝ ատենադպիր:

Մասնաճիւղը կը պահէ ֆութպոլի եւ պասքեթպոլի առաջին եւ երկրորդ խումբեր, վոլիպոլի խումբ մը եւ փինկ-փոնկի 10 մարզիկներ: Սկաուտական շարքերը կը բաղկանան 30 գայլիկներէ, 42 սկաուտներէ եւ 16 երէցներէ: Անդամներու ընդհանուր թիւն է 218: Մասնաճիւղը ունի վարձու ակումբ եւ խաղավայր: Տարուայ կարեւոր մարզական ելոյթը կ'ըլլայ Հալէպի, Պէյրութի եւ Դամասկոսի պասքեթպոլի տղոց եւ աղջկանց խումբերուն միջեւ կազմակերպուած մրցաշարքը:

23 Ապրիլ 1951ին, Դամասկոսի մասնաճիւղը կը գումարէ անդամական ընդհանուր ժողով, ուր լսելէ ետք նախորդ տարեշրջանի վարչութեան գործունէութեան տեղեկագիրը, կ'ընտրէ նոր վարչական կազմ բաղկացած հետեւեալներէն.-

Ատենապետ՝ Զոհրայ Տատոյեան

Ատենադպիր՝ Բարսեղ Հայկականեան (Արմէնեան)

Գանձապահ՝ Անդրանիկ Խաճարեան

Սկաուտական պատասխանատու՝ Աբրահամ Քերոբեան

Խորհրդականներ՝ Յովհաննէս Սաքաճեան, Զաւէն Գավաֆեան, Թորոս Աբրահամեան: Վերջինին հրաժարականին վրայ, վարչական կազմէն ներս զինք կը փոխարինէ Խորէն Պերպէրեան:

Մասնաճիւղի նամակագրական հասցէն՝ նամակատուի թիւ 224ը կը փոխարինուի նամակատուի թիւ 628ով: Վարչական կազմը Շրջանային Վարչութեան կողմէ կը վաւերացուի 11 Մայիս 1951 թուակիր նամակով: Խանդավառ ու թարմ ուժերէ բաղկացած վարչական վերոյիշեալ կազմը կը յաջողի նոր նուաճումներ արձանագրել կազմակերպչական, մարզական եւ սկաուտական ճիւղերէն ներս:

Բոլոր ճիւղերը կ'օժտուին իրենց յատուկ օժանդակ յանձնախումբերով:

Ֆութպոլը ունի Ա. Բ. եւ Գ. դասակարգի երեք խումբեր: Խումբերը կ'ունենան բարեկամական հանդիպումներ: Առաջին խումբը կ'ունենայ 11 մրցումներ՝ 6 յաղթանակ, 2 հաւասարութիւն եւ 3 պարտութիւն: Ֆութպոլի ֆետերասիոնը կը կազմակերպէ միայն Բ. դասակարգի ախոյեանութեան մրցաշարք, որուն իր մասնակցութիւնը կը բերէ համապատասխան կազմը:

Պասքեթպոլի խումբը կ'ունենայ տկար գործունէութիւն: Սեփական դաշտի մը պակասը կը վնասէ այս ճիւղի յաւելեալ զարգացման:

Փինկ-փոնկը մեծ հետաքրքրութեամբ կը կիրարկուի ակումբի սեղանին վրայ: Մասնաճիւղի ներքին միջ-անդամական մրցաշարքին կը մասնակցին 24 մրցորդներ:

Աթլետիզմի խումբը ոտքի է երբ միջ-մասնաճիւղային հանդիպումներ կը կազմակերպուին, որոնցմէ ետք կը դադրի գոյութիւն ունենալէ, աթլետներու անկանոն հետեւողականութեան պատճառով:

1951 տարեշրջանի նիւթական գործառնութեան պատկերն է՝ ընդհ. մուտք՝ 1784 սուրիական ոսկի, ընդհ. ելք՝ 1157 ս. ոսկի, պատրաստ գումար՝ 627 ս. ոսկի:

19 Մայիս 1952ին կայացած անդամական ընդհանուր ժողովի կողմէ վարչականներ կ'ընտրուին հետեւեալները.-

Ատենապետ՝ Զոհրապ Տատոյեան
 Ատենադպիր՝ Յարութիւն Արուշեան
 Գանձապահ՝ Արշաւիր Գարածեան
 Գոյքապահ՝ Խորէն Պերպէրեան

Խորհրդականներ՝ Թադէոս Թնճուկեան, Վահան Տօնապետեան, Բարսեղ Հայկականեան:

Պահ մը Վահան Տօնապետեան կը վերստանձնէ ատենապետի պաշտօնը եւ Զոհրապ Տատոյեան կը դառնայ փոխ-ատենապետ:

1952ի Զատկական միջ-մասնաճիւղային հանդիպումներուն, մասնաճիւղը կը մասնակցի սկստական (75 սկստ եւ արծուիկ) եւ մարզական խումբերով:



Դամասկոսի ֆութպոլի խումբը 1955ին

Պատուիրակութեան ֆութպոլի խումբի պատասխանատուն է Զոհրապ Տատոյեան, խմբապետ՝ Վահէ Համբարեան, անդամներ՝ Յակոբ Աֆարեան, Գէորգ Կրպոյեան, Գէորգ Գորեան, Յակոբ Ղազարեան, Ղազար Քահվէճեան, Պետրոս Քահվէճեան, Մանուկ Միսիրեան, Յովհաննէս Արիսեան, Անդրանիկ Տէմիրճեան, Նուպար Գրակեան, Գէորգ Ոսկերիչեան, Ժիրայր Մուրատեան, Մարտիրոս Օթճեան, Աւետիս Փափազեան եւ Յովսէփ Մարգարեան:

Պասքեթպոլի պատասխանատու՝ Յովհաննէս

Սաքաճեան, խմբապետ՝ Լուիսիկ Պչաքճեան, անդամներ՝ Մկրտիչ Սաքաճեան, Յակոբ Խաճարեան, Պետրոս Արիսեան, Ալեքսան Գալայճեան, Եփրէմ Զահթարեան, Վարուժան Մելքոնեան, Ռընէ Նաճարեան եւ Տիգրան Մարապեան:

Մասնաճիւղի աթլետիզմի խումբը կը բաղկանայ 15 աթլետներէ: Հալէպի մէջ կայացած միջ-մասնաճիւղային աթլետիք խաղերուն Դամասկոսէն կը մասնակցին 8 աթլետներ, որոնք կը յաջողին ապահովել 2 ոսկի, 1 արծաթ եւ 3 պրոնզ մետալներ:

Դամասկոսի Հ.Մ.Ը.Մ.ի կողմէ քաղաքի մարզական վերին խորհուրդին մաս կը կազմէ Ֆրէտ Արսլանեան, ֆութպոլի ֆետերասիոնին կը մասնակցի Վահան Տօնապետեան, իսկ պասքեթպոլի ֆետերասիոնին՝ Զոհրապ Տատոյեան:

Մասնաճիւղը աշխատանք կը տանի պետական նոր վաւերացումի մը ձեռքբերման համար:

Պետութեան կողմէ մարզական ահումբներու դէմ դրուած ընդհանուր արգելքով, Դամասկոսի մասնաճիւղի գործունէութիւնը եւս ամլութեան կը մատնուի: Ոչ մէկ հրապարակային մարզական ելոյթ կ'արտօնուի, բացի պարահանդէսէ մը, որ մասնաճիւղին պիտի ապահովէր 814.50 ս.ո. գումար շահ: Անդամատուրքերը կը գանձուին մեծ համեմատութեամբ:

Հակառակ դժուարութիւններուն, մասնաճիւղի կիրակած բոլոր ճիւղերը կը պահուին կանգուն: Անդամներու թիւը կ'արձանագրէ զգալի աճ. ընդհանուր թիւ՝ 224: Իբր արդիւնք բազմաթիւ հետապնդումներու, վարչութիւնը կը յաջողի նաեւ իրականացնել մասնաճիւղի պետական արտօնագրի վերստացումը՝ D/3764 թիւով: Այնուհետեւ, մարզական զոյգ ճիւղերը՝ ֆութպոլ եւ պասքեթպոլ կը կիրակուին ընթացիկ կերպով:

Փինկ-փոնկը ունի բազմաթիւ հետեւորդներ:

Ֆութպոլի յանձնախումբին մաս կը կազմեն Արշակ Տատոյեան, Մանուկ Միսիրեան, Գէորգ Կրպոյեան, Խորէն Պերպէրեան եւ Ղազար Քահուկճեան:

Պասքեթպոլի յանձնախումբին անդամներն են Լուիսֆիկ Պչաքճեան, Յովհաննէս Սաքաճեան, Չոհրապ Տատոյեան, Չաւէն Գաւաֆեան եւ Միհրան Օհանեան:

Փինկ-փոնկի յանձնախումբի անդամներն են Բարսեղ Հայկականեան, Տիգրան Չամիչեան եւ Յակոբ Խաճարեան:

14 Մայիս 1935ին, կ'ընտրուի նոր վարչական կազմ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Չոհրապ Տատոյեան

Ատենադպիր՝ Նիկողոս Պոյաճեան

Գանձապահ եւ պասքեթպոլի պատասխանատու՝ Լուիսֆիկ Պչաքճեան

Սկսուտական պատասխանատու՝ Բենիամին Թուրեան

Ֆուլթպոլի պատասխանատու՝ Մանուկ Միսիրեան

Խորհրդական՝ Յովհաննէս Սաքաճեան:

Վերոյիշեալ վարչական կազմը պիտի գործէր միայն ինը ամիս:

1954ի Փետրուար 8ին կ'ընտրուի նոր վարչական կազմ.-

Ատենապետ՝ Բարսեղ Հայկականեան

Փոխ ատենապետ՝ Սարգիս Պապիկեան

Ատենադպիր՝ Փանոս Փելթեքեան

Փոխ ատենադպիր՝ Կարպիս Նալպանտեան

Գանձապահ՝ Արշաւիր Գարաճեան

Խորհրդականներ՝ Մանուկ Միսիրեան, Լուիսֆիկ Պչաքճեան:

Այս կազմի գործունէութիւնը կ'ըլլայ երկարատեւ, հասնելով 1955 Յունիսի վերջաւորութեան:

Մասնաճիւղը այս տարեշրջանին կը կիրարկէ մարզական հինգ ճիւղեր՝ ֆուլթպոլ, պասքեթպոլ, փինկ-փոնկ, հեծելարշաւ եւ մարմնամշակում:

18 Ապրիլ 1955ին, մասնաճիւղի ֆուլթպոլի եւ պասքեթպոլի խումբերը կը մասնակցին միջ-մասնաճիւղային 28րդ խաղերուն:

Արշակ Տատոյեան մասնաճիւղը կը ներկայացնէ նոյն օրերուն Հալէպի մէջ գումարուած խորհրդակցական ժողովին:



Դամասկոսի Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի կապմ միջ-մասնաճիւղային 28րդ խաղերուն

Մասնաճիւղի պետական ճանաչման արտօնագիրը անգամ մը եւս փոփոխութեան կ'ենթարկուի կ'ըլլայ թիւ 1682՝ 24 Նոյեմբեր 1954 թուակիր: Գործօն անդամներու ընդհանուր թիւն է 245, որոնցմէ 75ը Սուրիահայ Օգնութեան Խաչի արժուիկներն են:

29 Յունիս 1955ին, կ'ընտրուի վարչական նոր կազմ.-

Ատենապետ՝ Վահան Տօնապետեան

Փոխ ատենապետ՝ Սարգիս Պապիկեան

Ատենադպիր՝ Փանոս Փելթեքեան

Գանձապահ՝ Արշաւիր Գարաճեան

Խորհրդականներ՝ Մանուկ Միսիրեան, Միհրան Օհանեան, Վրէժ Պուրունսուզեան, Յարութիւն Կիտցինեան, Յովհաննէս Չելեպեան:

Մասնաճիւղի ֆուլթպոլի եւ պասքեթպոլի խումբերը կը մասնակցին միջ-մասնաճիւղային հանդիպումներուն: Նոյն օրերուն կայացող միջ-մասնաճիւղային խորհրդաժողովին, մասնաճիւղը կը ներկայացնէ Արշակ Տատոյեանը:

1956 Փետրուար 28ի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութիւնը կը ներկայանայ հետեւեալ կազմով.-

Ատենապետ՝ Սարգիս Պապիկեան

Ատենադպիր՝ Փանոս Փելթեքեան

Գանձապահ՝ Արշաւիր Գարաճեան

Ընդհանուր խմբապետ՝ Մանուկ Միսիրեան

Խորհրդականներ՝ Յարութիւն Կիտցինեան, Ստեփան Մուրատեան, Վրէժ Պուրուսուզեան:

Անդամական ընդհանուր ժողովի առաջարկով Վահան Տօնապետեան կը նշանակուի պատուոյ նախագահ եւ մասնաճիւղի ատենապետ՝ յաջս պետութեան:

Մասնաճիւղը Չատկական միջ-մասնաճիւղային խաղերուն կը մասնակցի Ֆուլթպոլի Ա. դասակարգի, պասքեթպոլի տղոց եւ աղջկանց եւ հեծելարշաւի խումբերով:

12 Մարտ 1957ին, անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ վարչական հետեւեալ կազմը.-

- Ատենապետ՝ Փանոս Փելթեքեան
- Ատենադպիր՝ Անթուան Աւետեան
- Գանձապահ՝ Արշաւիր Գարաճեան

Խորհրդականներ՝ Մանուկ Միսիրեան, Մկրտիչ Սաքաճեան, Յակոբ Մկրտիչեան, Յարութիւն Կիտցինեան:

Վարչութիւնը կը վերահաստատէ Վահան Տօնապետեանի մասնաճիւղի պատուոյ նախագահի հանգամանքը: Վարչութեան կ'օժանդակեն Սկաուտական Խորհուրդը, ինչպէս նաեւ Ֆուլթպոլի պասքեթպոլի, վոլիպոլի, փինկ-փոնկի եւ հեծելարշաւի յանձնախումբերը:

Որպէս նստավայր կ'օգտագործուի Ազգ. Չաւարեան վարժարանի մէկ սենեակը: Պասքեթպոլի խումբը Դամասկոսի ախոյեանութեան մրցաշարքին Բ. դիրքը գրաւած է: Անդամներու ընդհանուր թիւն է 155, որոնցմէ 72ը սկաուտական շարքերէն:

1956-57 զոյգ տարեշրջաններու նիւթական գործառնութեան պատկերն է. մուտք՝ 5092 սուրիական ոսկի, ելք՝ 4006 ս. ոսկի:

27 Յունուար 1958ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը, լսելէ ետք 1957 տարուայ վարչութեան գործունէութեան տեղեկագիրը, իր վերջին օրակարգով կ'ընտրէ նոր վարչական կազմ հետեւեալ ձեւով.-

- Պատուոյ նախագահ՝ Վահան Տօնապետեան
- Ա. ատենապետ՝ Բարսեղ Արմէնեան

- Բ. ատենապետ՝ Փանոս Փելթեքեան
- Ա. ատենադպիր՝ Անտոն Աւետեան
- Բ. ատենադպիր՝ Աբրահամ Աւետիսեան
- Գանձապահ՝ Արշաւիր Գարաճեան
- Մարզական պատասխանատու՝ Մանուկ Միսիրեան

Ֆուլթպոլի պատասխանատու՝ Պ. Արիսեան: Տարուան առաջին մարզական մրցաշարքը միջ-անդամական փինկ-փոնկի մրցումներն են, ուր 12 մրցակիցներէն Պետիկ Պաղտասարեան կը շահի յաղթանակի բաժակը:

Վարչութիւնը կը դիմէ Շրջանային Վարչութեան խնդրելով, որ Պէյրութի մասնաճիւղի պասքեթպոլի մարզիչ Յակոբ Գատեան, հերթական այցելութիւններով մարզէ Դամասկոսի պասքեթպոլի խումբը: Վերջինս Սուրիոյ Բ. դասակարգի խումբերուն մաս կը կազմէ եւ մարզուելով կրնայ Ա. դասակարգի բարձրանալ: Տարեշրջանին պասքեթպոլի տղոց եւ աղջկանց խումբերը բազմաթիւ միջ-ակումբային մրցումներ կ'ունենան Դամասկոսի խումբերուն դէմ, միշտ պատուաբեր արդիւնքներով: Ֆուլթպոլի եւ պասքեթպոլի խումբերը Յուլիսին կը փոխադրուին Հոմս, ուր մրցումներ կ'ունենան Ճիհատ ակումբի խումբերուն դէմ:

1959ին, վարչութեան դիւանին մաս կը կազմեն՝ Բարսեղ Արմէնեան ատենապետ եւ Անթուան Աւետեան ատենադպիր:

Մասնաճիւղի մարզական բոլոր ճիւղերը յառաջդիմութիւն կ'արձանագրեն մասնակցելով բազմաթիւ բարեկամական եւ ախոյեանական մրցաշարքերու:

1958ին, վարչութեան օժանդակ յանձնախումբերուն մաս կազմած են. Ֆուլթպոլի՝ Մանուկ Միսիրեան, Պետրոս Արիսեան, Գաբրիէլ Սիմոն, Սերոբ Քիրեան եւ Ճորճ Արուշեան:

Պասքեթպոլի՝ Յակոբ Թնճուկեան, Բարսեղ Գէորգեան, Ապտէլմասիհ Քըշըր եւ Մկրտիչ Սաքաճեան:

Վոլիպոլի՝ Յակոբ Մկրտիչեան, Սերոբ Քեհեայեան եւ Պետրոս Արիսեան:

Փինկ փոնկ՝ Միհրան Օհանեան, Վարդգէս Հալաճեան, Վահէ Մելքոնեան եւ Պետրոս Պաղտատեան:

Հեծելարչաւ՝ Միհրան Օհանեան, Յակոբ Խաճարեան, Սերոբ Քեհեայեան:

Տարուան նիւթական գործունէութեան պատկերն է՝ մուտք՝ 4362 ս. ոսկի, ելք՝ 4152 ս. ոսկի:

1960ին, մասնաճիւղի կիրարկած մարզաճիւղերուն վրայ կ'աւելնայ հենտպոլի ճիւղը, որ սկսած էր ժողովրդականութիւն վայելել Դամասկոսի մէջ: Մասնաճիւղի անդրանիկ կազմը յաղթանակով կը բանայ հենտպոլի իր առաջին միջ-ակմբային մրցումը Թաճհիզի խումբին դէմ:

21 Օգոստոսին պասքեթպոլի տղոց եւ աղջկանց կազմերը կ'այցելեն Պէյրութի մասնաճիւղին եւ կը մրցին տեղւոյն խումբերուն դէմ: Յաջորդ շաբաթ փոխ վրէժի մրցումները կը կայանան Դամասկոսի մէջ:

1960ին, մարզական ճիւղերու պատասխանատուներն են. Ֆութպոլ՝ Պետրոս Արիսեան, Պասքեթպոլ՝ Լուիսիկ Պաչաքճի, Փինկ-փոնկ՝ Սերոբ Քեհեայեան:

1961ին, վարչական կազմի անդամներն են՝ Պատուոյ նախագահ՝ Վահան Տօնապետեան
Ատենապետ՝ Գէորգ Պորոյեան
Ատենադպիր՝ Փանոս Փելթեքեան
Գանձապահ՝ Անթուան Աւետեան
Ընդհ. խմբապետ՝ Պետրոս Արիսեան
Գոյքապահ՝ Սերոբ Գօճաքեհեայեան
Ֆութպոլի պատասխանատու՝ Գէորգ Արուշեան

Պասքեթպոլի պատասխանատու՝ Յարութիւն Բալուլեան:

25 Յունիսին, մասնաճիւղը մեծ շուքով կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի 40ամեակը զինուորական թատրոնին մէջ:

Համաձայն պետական հրամանագրի, ըստ որուն մարզական ազգայինները կ'արտօնուին երբ կը կիրարկեն բազմաթիւ մարզական ճիւղեր, Դամասկոսի Հ.Մ.Ը.Մ.ը կը կիրարկէ ֆութ-

պոլ, պասքեթպոլ, հեծելարչաւ, փինկ-փոնկ, աթլետիզմ եւ թենիս:

1962ին, պասքեթպոլի տղոց եւ աղջկանց խումբերը կը յառաջդիմեն մեծաքայլ: Տղոց խումբը յաղթանակներ կ'արձանագրէ Դամասկոսի Ահլի, Հ.Ե.Ը. եւ ախոյեան Ֆիթիան խումբերուն դէմ, Հոմսի ախոյեան Ահլիին դէմ: Աղջկանց խումբը կը յաղթէ Հոմսի Ճիհատ խումբին: Զոյգ խումբերը յաճախակի այցելութիւնները կ'ընդունին Հալէպի, Պէյրութի եւ Պուրճ Համուտի մասնաճիւղերու համապատասխան խումբերուն: Նոյնպէս զոյգ խումբերը կը տեղափոխուին Պէյրութ 24 Փետրուար 1962ին բարեկամական հանդիպումներ ունենալու DHPի եւ Հ.Մ.Ը.Մ.ի խումբերուն դէմ:

Նոյն տարեշրջանին, ճատրակի Դամասկոսի կրտսերներու մրցաշարքին ախոյեան կը հանդիսանայ Յակոբ Սազճեան, մրցաշարքը կը տեւէ 11 Նոյեմբերէն մինչեւ 4 Դեկտեմբեր: Ապա Սազճեան պարտութեան կը մատնէ Դամասկոսի երէցներու ախոյեանը աւարտական մրցումի ընթացքին:

1965ի վարչութեան մաս կը կազմեն, ի միջի այլոց, Վարդգէս Հալաճեան եւ Միհրան Շիմշիրեան:

Մերձաւոր Արեւելքի Շրջանային 16րդ Պատգամաւորական ժողովին մասնաճիւղի ներկայացուցիչներն են՝ Վահան Տօնապետեան, Վարդգէս Հալաճեան, Միհրան Շիմշիրեան եւ Սարգիս Եագուպեան:

1970ին, վարչական կազմի անդամներն են. Ատենապետ՝ Պօղոս Սանոսեան
Փոխ ատենապետ՝ Սարգիս Քէչիչեան
Ատենադպիր՝ Բարսեղ Գէորգեան
Փոխ ատենադպիր՝ Ժիրայր Պաղպուտարեան

Գանձապահ՝ Յակոբ Խաճարեան
Ազգային պատասխանատու՝ Սարգիս Պամաճեան

Մարզական պատասխանատու՝ Պետրոս Արիսեան:

Փետրոսար 1971ին, Ֆուլթոնի եւ պասքեթ-պոլի խումբերը կ'այցելեն Պոլրճ Համուտի մասնաճիւղին, համապատասխան խումբերուն դէմ եղբայրական հանդիպումներու համար:

1973ին, վարչութիւնը կը ծրագրէ նստավայր ակումբի տեղափոխութիւն: Նախկին Սալհիէի թաղամասի ակումբի անբաւարարութեան պատճառով, ակումբը կը փոխադրուի Պապ Ըլ Թումայի թաղամասը, ուր գործունէութեան աւելի ընդարձակ պայմաններ կը ստեղծուին: Վարչութիւնը կը ձեռնարկէ նոր ակումբի բարեգարգման:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

1936ին սկսուած, խմբապետ Տիգրան Ոսկերիչեանի սկաուտական գործունէութիւնը յաջորդող տարիներուն կը շարունակուի նոյն թափով:

Իրերայաջորդ Սկաուտական Խորհուրդներ՝ նշանակուած մասնաճիւղի վարչութիւններու կողմէ, կը վարեն սկաուտական ճիւղի աշխատանքները: Դամասկոսի սկաուտական կազմը յատուկ ուշադրութեան կ'արժանանայ սուրիական սկաուտական վերին մարմնի կողմէ:

1944ին Սկաուտական Խորհուրդի անդամներ կը նշանակուին՝ Տոքթ. Ազատ Քաջեան, Յակոբ Միքայէլեան, Կարապետ Թոքաթլեան, Մանուկ Պալեան եւ խմբապետ Տիգրան Ոսկերիչեան, նոր ուժ կեդրոնացնելով սկաուտական գործունէութեան վրայ:

Սկաուտական խմբակները կը կազմակերպեն Սբ. Ծննդեան աւետումի շրջագայութիւններ աւանդութիւն դարձնելով այդ ձեռնարկը:

1952ին, սկաուտական շարքերու ընդհանուր թիւը կը բարձրանայ 121ի: Խումբը ունի փոքր նուագախումբ մը՝ 9 փողահար եւ 5 թմբկահարներ, որոնց մասնակցութեամբ, Սբ. Ծննդեան տօնին առիթով, կը կատարեն Աւետման շրջագայութիւն:

Սկաուտական Խորհուրդի անդամներն են՝

Ատենապետ՝ Սարգիս Պապիկեան
Ատենադպիր՝ Յակոբ Խաճարեան
Բ. ատենապետ եւ գանձապահ՝ Տիգրան Ոսկերիչեան

Սկաուտական խմբապետ՝ Յարութիւն Արուշեան

Աքելլա՝ Գրիգոր Շիրինեան

Փոխ արքելլա եւ գոյքապահ՝ Յարութիւն Կիտցինեան

Խորհրդական՝ Աբրահամ Քերոբեան:

Դամասկոսի մասնաճիւղի սկաուտներէն 40 հոգինոց պատուիրակութիւն մը կը մասնակցի Մէյրուպայի մէջ կայացած միջ-մասնաճիւղային ընդհանուր բանակումին (Լիբանան):

1953ի Մարտ ամիսին, Դամասկոսի Հ.Մ. Ը.Մ.ի սկաուտական խմբապետներ՝ Աբրահամ Քերոբեան, Գրիգոր Շիրինեան եւ Յարութիւն Կիտցինեան կը մասնակցին պետական Քչէֆ Սուրիի բանակումին արժանանալով յատուկ գնահատանքի:

Սկաուտական շարքերուն մաս կը կազմեն 12 երէցներ, 40 սկաուտներ եւ 45 գայլիկներ:

1954ին, Շրջանային Վարչութեան Օգոստոս ամսուայ ընթացքին կազմակերպած միջ-մասնաճիւղային Սկաուտական ընդհանուր բանակումին Դամասկոսի մասնաճիւղի սկաուտները չեն կրնար մասնակցիլ, նկատի ունենալով որ նոյն թուականներուն կը զուգադիպի միջ-արաբական առաջին ընդհանուր բանակումի կայացումը Դամասկոսի մօտակայ, Ջէպէտանի գիւղին մէջ: Դամասկոսի Հ.Մ. Ը.Մ.ի սկաուտները ստիպողաբար պիտի մասնակցին համա-արաբական ընդհանուր բանակումին պատուիրակութեամբ մը բանակումի ամբողջ տեւողութեան, իսկ ընդհանուր կազմով բանակումի բացման հանդիսութեան որպէս «Քչէֆ Սուրի»ի 5րդ վաշտ:

Մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը յատուկ խնամքով կը վերաբերի իրեն վստահուած պարտականութեան եւ սերտ ու սիրալիր կապեր ունի սուրիական սկաուտական ընդհանուր կեդրոնին հետ յաջորդող տարիներու ընթացքին:

Այսպէս, մասնաճիւղի սկսողական բաժինը կը գործէ գրեթէ ամբողջութեամբ, սուրիական ընդհանուր կեդրոնի ծրագիրներու հիման վրայ:

1972ին մասնաճիւղի Սկսողական Խորհուրդի մաս կը կազմեն.-

Ատենապետ՝ Սարգիս Պապիկեան
 Փոխ ատենապետ՝ Ստեփան Քիւրքճեան
 Քարտուղար՝ Մանուէլ Թերզեան
 Բ. քարտուղար՝ Կարօ Սըքայեան
 Հաշուապահ՝ Նուպար Պաղպուտարեան
 Գոյքապահ՝ Սարգիս Պասմաճեան
 Աքելլա՝ Սարգիս Սանոսեան
 Խորհրդական՝ Տիգրան Ստեփանեան

Սկսողական բաժինը ունի նուազախումբ, որ հրապարակ կու գայ պաշտօնական առիթներով: Սբ. Ծննդեան աւետումի այցելութիւնները կը գործադրուին աւանդականօրէն:

1973ին Սկսողական Խորհուրդը կը պահէ նոյն կազմը: Տարուան ընթացքին Պապ Թումայի նոր ակումբ փոխադրուելը առիթ կը ստեղծէ սկսողական սենեակի բարեզարդման: Սկսողները կը շարունակեն նաեւ ճատրակի մրցումներու իրենց մասնակցութիւնը բերել: Ծաղկազարդի առիթիւ հայաշատ թաղերուն մէջ կը կազմակերպեն տողանցք:

1974ին Դամասկոսի Ս.Օ.Խաչի արծուիկներու բաժնի գործակցութեամբ Սկսողական Խորհուրդը կը կազմակերպէ «Մայրերու Օր»ուան հաւաքոյթ եւ կը մասնակցի նոր ակումբի բացման հանդիսութեան:

1974ի աստիճանաւորական ցանցի պատկերն է՝ պատասխանատու խմբապետ՝ Սարգիս Պասմաճեան, փոխ խմբապետ՝ Միքայէլ Յովսէփեան, վարիչ-առաջնորդներ՝ Յակոբ Սանոսեան, Պօղոս Խաճարեան, առաջնորդներ՝ Տիգրան Պապիկեան, Աշոտ Ոսկերիչեան, Բաֆֆի Պասմաճեան, Բաֆֆի Յովսէփեան, Ալեքսան եւ Աւետ Էմմոյլեան:

Փոխ առաջնորդներ՝ Կարապետեան, Խաճարեան, Ճոնտուրեան, Սեմերճեան, Միսիլեան եւ Գալեմքերեան:

ՊԵՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԵԼՈՅԹՆԵՐ

Դամասկոսի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը, որպէս Սուրիոյ մայրաքաղաքին մէջ գործող կազմակերպութիւն յաճախակի առիթներ ունեցած է իր զանազան ճիւղերով մասնակցութիւն բերելու պետական եւ պաշտօնական հրապարակային ելոյթներու:

Այսպէս 22 Փետրուար 1948ին, մասնաճիւղը կը կազմակերպէ «Հ.Մ.Ը.Մ.ի Օր»ուայ հանդիսութիւն: Այս հանդիսութիւնները աւանդական դրութեամբ կը կրկնուին ամէն տարի: 1950ի հանդիսութիւնը կը հովանաւորէ Դամասկոսի Մուհաֆէզը: Օրուայ բանախօսներն են Մուշեղ Իշխան եւ Շրջանային Վարչութեան ատենապետ Տոքթ. Ատուր Գապաքեանը: Այս առիթիւ դրուատական արտայայտութիւններով խօսք կ'առնէ նաեւ կրթական նախարարութեան մարմնակրթանքի բաժնի պետը:

Նոյնպէս մասնաճիւղի սկսողական խումբերը, միշտ ներկայ գտնուած են ազգային եւ պետական տօներու առիթիւ կազմակերպուած տողանցքներուն եւ պաշտօնական արարողութիւններուն:

ՀԱԼԷՊ

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

Սուրիոյ գլխաւոր մասնաճիւղը՝ Հալէպ՝ շրջանցելով համաշխարհային Բ. Ընդհանուր Պատերազմին պատճառով ստեղծուած դժուարին պայմանները, կը շարունակէ իր ծաւալուն գործունէութիւնը կազմակերպչական, մարզական եւ սկսողական բաժիններով:

25 Դեկտեմբեր 1940ի անդամական ընդհանուր ժողովը կը լիազօրէ իր կողմէ ընտրուած ընտրական յանձնախումբը, նշանակովի յառաջացնելու համար 1941 տարեշրջանի մասնաճիւղի վարչութիւնը: Նշանակեալ վարչութեան մաս կը կազմեն.-

Ատենապետ՝ Լուտեր Մասպանաճեան
Ատենադպիր՝ Վազգէն Մուրատեան
Գանձապահ՝ Կարապետ Աղճայեան
Հաշուապահ՝ Լեւոն Փիրանեան
Սկաուտական ներկայացուցիչ՝ Նշան Թիւյսիւզեան

Մարզական ներկայացուցիչ՝ Մանուէլ Գաթրճեան

Գանձիչ եւ գոյքապահ՝ Լեւոն Պեքեարեան:

Վարչութեան կ'օժանդակեն Սկաուտական Խորհուրդը եւ մարզախաղերու յանձնախումբեր՝ Թենիս, Ֆուտպոլ եւ պասքեթպոլ: Անդամներու ընդհանուր թիւն է 550, որոնց կը բաշխուի անդամատետրեր եւ կը գանձուին անդամատուրքեր: Մասնաճիւղի նստավայրը Երիտասարդաց Միութեան գործակցութեամբ կը փոխադրուի աւելի լայն տարածութեամբ վայր մը: Այս թուականին կը կազմուի Հալէպի Ֆուտպոլի Ֆետերասիոնը, որուն ատենապետութիւնը կը վարէ Հ.Մ.Ը.Մ.ի ատենապետը՝ Լուտեր Մասպանաճեան: 1940 եղանակին Սուրիոյ Ֆուտպոլի ախոյեանութիւնը կը նուաճուի Հ.Մ.Ը.Մ.ի խումբին կողմէ: Մասնաճիւղը պիտի յաջողէր Սուրիոյ ախոյեանի տիտղոսը պահել մինչեւ 1949 թուականը:

Մասնաճիւղի գլխաւոր դժուարութիւնը նիւթականի անբաւարարութիւնն է: Մասնաճիւղը ունի Ֆուտպոլի 14, պասքեթպոլի՝ 4 խումբեր, փինկ-փոնկի մէկ խումբ եւ 25 աթլետներ:

1941ին, վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէ Վազգէն Մուրատեան: Անդամներու ընդհանուր թիւն է 625: Մասնաճիւղը կը շարունակէ մշակել Ֆուտպոլ, պասքեթպոլ եւ փինկ-փոնկ: Ֆուտպոլի Ա. խումբը կը տիրանայ քաղաքապետարանի բաժակին: 14 երկրորդական խումբեր կը մշակեն Ֆուտպոլը: Վարչութեան գործառնութեան պատկերն է՝ մուտք՝ 7314 ս. ո., ելք՝ 2641 ս. ո.:

1942 տարեշրջանի վարչական կազմին կը մասնակցին հետեւեալները.-

Ատենապետ՝ Լուտեր Մասպանաճեան
Ատենադպիր՝ Յարութիւն Պազարպաշեան

Գանձապահ՝ Լեւոն Պապիկեան
Հաշուապահ՝ Վազգէն Մուրատեան
Գոյքապահ՝ Յովհաննէս Առաքելեան
Մարզական պատասխանատու՝ Մանուէլ Գաթրճեան

Սկաուտական պատասխանատու՝ Կարապետ Աղճայեան:

Տարեշրջանի ընթացքին Զօրավար Շարլ Տը կօլ կ'այցելէ Հալէպի Նոր Գիւղի շրջանը: Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները մեծ խանդավառութեամբ կ'ընդունին այս այցելութիւնը եւ այդ առթիւ կը կազմակերպեն յատուկ դաշտահանդէս՝ չափական, գլանիկով եւ օղակներու մարզանքներով: Մարզական գործունէութեան կը հսկէ յատուկ յանձնախումբ մը, որուն կ'անդամակցին Մանուէլ Գաթրճեան, Երուանդ Յովհաննէսեան, Ճէմիլ Սարգիսեան, Յովհաննէս Առաքելեան, Արսէն Տէր Ղուկասեան, Լ. Սարգիսեան եւ Գ. Շատոյեան: Թենիսի յատուկ յանձնախումբին կ'անդամակցին Վազգէն Մուրատեան, Ալեքսան Փիլաւճեան եւ Եղիա Մամբրելեան:

11 Փետրուար 1943ին, մասնաճիւղի 38րդ անդամական ընդհանուր ժողովին կողմէ վարչական կազմը նոյնութեամբ կը վերընտրուի: Մասնաճիւղը իր կողքին կը նշանակէ գանձիչ յանձնախումբ մը, որուն կ'անդամակցին Լ. Պապիկեան, Ս. Թոփճեան, Ե. Յովհաննէսեան, Բ. Սարգիսեան եւ Յ. Տէր Յովհաննէսեան: Անդամատուրքերու ընդհանուր գումարը կը բարձրանայ 1394 ս. ոսկիի: Վարչութիւնը մեծ շուքով կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 25ամեակը սինեմա Օրիանթալի մէջ: Այս առթիւ կը հրատարակուի յատուկ պրօշիւր մը: Ֆուտպոլի առաջին կազմը կը տիրանայ Հալէպի ախոյեանութեան: Հալէպի Բ. դասի ախոյեանն է Նոր Գիւղի Հ.Մ.Ը.Մ.ի կազմը:

12 Մարտ 1944ին, անդամական ընդհանուր ժողովին կողմէ ընտրուած վարչութեան մաս կը կազմեն Լուտեր Մասպանաճեան, Յարութիւն Պազարպաշեան, Լեւոն Պապիկեան, Կարապետ Աղճայեան, Նշան Թիւյսիւզեան, Գէորգ Իփեկ-

եան եւ Աբիկ Զօրեան: Նոյն կազմը, մասնակցութեամբ սկաուտ խմբապետ Լեւոն Պապլուզեանի, պիտի գործէր նաեւ 1945ի ընթացքին:

Ֆուտպոլի եւ ատլետիկայի յանձնախումբի անդամներն են Մանուէլ Գաթրճեան, Երուանդ Յոհաննէսեան, Մովսէս Քէօզկէրեան, Յովհաննէս Առաքելեան, Գէորգ Իփեկեան, Ճեմիլ Սարգիսեան, Աբիկ Զօրեան եւ Յարութիւն Մարութեան: Յանձնախումբը կը կազմակերպէ ֆուտպոլի ներքին մրցաշարքեր շարունակաբար ամէն եղանակի: 1944ի Հալէպի միջ-ակումբային մրցաշարքին կը տիրանայ մասնաճիւղի կազմը:

10 Մարտ 1946ի անդամական ընդհանուր ժողովին կողմէ վարչութեան անդամներ կ'ընտրուին Լուտեր Մասպանաճեան, Յարութիւն Պազարպաշեան, Մ. Քէօզկերեան, Լեւոն Պապիկեան, Գ. Իւլիպէյեան, Լեւոն Պապլուզեան, Ե.

Յովհաննէսեան Երկաթունի, Կարապետ Աղճալեան եւ Նշան Թիւյսիւզեան:

1946ին, մասնաճիւղի Բ. դասի ֆուտպոլի խումբերը կ'ունենան իրենց ներքին մրցաշարքը, որուն ախոյեանութիւնը կ'ապահովէ Շանթ խումբը:

Մասնաճիւղի 1948 տարուան վարչութեան ատենապետն է Լուտեր Մասպանաճեանը, ատենադպիրը՝ Օննիկ Մելիքսեթեան:

1949ին, վարչութեան ատենադպիրի պաշտօնը կը վարէ Տոքթ. Ալպէր Տայեան, ատենապետի պաշտօնը կը պահէ Լուտեր Մասպանաճեանը:

9 Հոկտեմբեր 1949ին, ատլետներու խումբը կը կայացնէ մասնաճիւղի 22րդ ատլետիք խաղերը: Նոյն ամսուայ 10ին, մասնաճիւղը կը հիւրընկալէ միջ-մասնաճիւղային ողիմպիական խաղերը:




Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի ատլետներու խումբը 1948-49ին

1950ին, վարչութեան ատենապետի պաշտօնը կը վստահուի Կարապետ Աշճայեանին, ատենադպիրն է Պարգեւ Միսիրեան:

Ֆուլթայոլի խումբը վերակազմութեան կը կարօտի, նոր ուժեր կը միանան կազմին: Հոկտեմբերին, մասնաճիւղի աթլետները կը մասնակցին միջ-մասնաճիւղային ողիմպիական խաղերուն:

Տարուան մեծագոյն մարզական յաջողութիւնը պիտի ըլլար մասնաճիւղի մարմնամշակներէն Լեւոն Հիմիտեանի մասնակցութիւնը Լոնտոնի մէջ, միջազգային մարմնամշակներու մրցումին: Հիմիտեան այս մրցումներուն աշխարհի ախոյեանութեան երկրորդ դիրքը կը գրաւէ:



Լեւոն Հիմիտեան մարմնամշակումի միջազգային Բ. Ախոյեան

1951ին, վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէ Կարապետ Աղճայեան, ատենադպիր՝ Յարութիւն Պազարպաշեան: Այս տարեշրջանին մասնաճիւղը տազնապ մը կը շրջանցէ, երբ մօտ 25 անդամներ մասնաճիւղը թողնելով կը միանան Արծիւ մարզական միութեան: Շրջանային վարչութիւնը կը հաստատէ մասնաճիւղի վարչութեան այս մասին առած հեռացման պատիժը:

Վերակազմուած ֆուլթայոլի խումբը մարզելու համար Շրջանային վարչութիւնը 10 օրուայ համար Հալէպ կը գործուղէ Ժոզէֆ Նալպանտեանը:

1952ին, վարչութեան ատենապետն է Վահէ Չոքկարեան, ատենադպիր՝ Պարգեւ Միսիրեան: Վարչութիւնը այս տարեշրջանին ակամայ տազնապի մը առջեւ կը գտնէ ինքզինք, երբ ակնարկելով Սուրիոյ մէջ մարզական կազմակերպութիւններու պետական արտօնագրերու վերստացման մասին, Պոսթընի «Հայրենիք» օրաթերթը կը գրէ՝ «Հ.Մ.Ը.Մ.ը կը լուծուի Սուրիոյ մէջ»: Մասնաճիւղի վարչութիւնն եւ Շրջանային վարչութիւնն շուտով պէտք եղած ճշդումը կը հաղորդեն «Հայրենիք»ին: Միւս կողմէ, Հալէպի վարչութիւնը աշխատանքի կը լծուի Սուրիոյ հիւսիսային շրջանի մասնաճիւղերու արտօնագրերու վերստացման համար: Անկախ հրապարակային այս լուրերու տարածումէն, Հալէպի, ինչպէս նաեւ Սուրիոյ այլ մասնաճիւղեր դժուարութիւններ կը դիմագրաւեն պետական նոր դասաւորումներու ենթարկելու իրենց գործունէութիւնը: Հարկ կ'ըլլայ արաբերէնով ժողովական արձանագրութիւն պահելու համար արաբերէնի քարտուղարի պաշտօն ստեղծել վարչական կազմերէն ներս:

1953ի վարչական կազմը նոյն կարգի դժուարութիւններ կը դիմագրաւէ: Անոնց վրայ կը բարդուի նիւթական կացութեան տկարացումը: Այս նպատակով վարչութիւնը կը դիմէ Շրջանային վարչութեան՝ 5000 լ. ոսկիի փոխատուութիւն մը խնդրելով:

Վարչական կազմին կը մասնակցին հետեւեալները.-

Ատենապետ՝ Նշան Թիւյսիւզեան
Փոխ ատենապետ՝ Վահէ Չոքկարեան
Ատենադպիր՝ Պարգեւ Միսիրեան

Բ. ատենադպիր եւ սկստական պատասխանատու՝ Սուրէն Նազարեան

Գանձապահ՝ Կարապետ Սալուստեան
Հաշուապահ՝ Նուպար Պոյաճեան

Ֆուլթայոլի պատասխանատու՝ Ճեմիլ Քահաբեճեան:

1954ին, վարչութեան դիւանի կազմը կը մնայ նոյնը:

Լոնտոն կը ղրկուի ֆուլթայոլի խումբի խաղացողներէն Վազգէն Տէր Ղուկասեանը, մասնագիտանալու համար իր ճիւղին մէջ եւ վերադառնալով մարզելու մասնաճիւղի խումբը:

1955 տարեշրջանի ընթացքին վարչութիւնը կրկին կը դիմէ Շրջանային Վարչութեան, իր նիւթական դժուարութիւնները հարթելու համար:

Երրորդ տարին ըլլալով վարչութեան դիւանի կազմը կը մնայ նոյնը: Վարչական կազմինոր անդամներն են՝ Վազգէն Տէր Ղուկասեան՝ ֆուլթայոլի պատասխանատու, Տիգրան Նահապետեան՝ գոյքապահ, խորհրդականներ՝ Եղիա Մամբրելեան եւ Յարութիւն Բարսեղեան:

21 Յունուար 1956ին, մասնաճիւղի 58րդ անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ.-

Ատենապետ՝ Վահէ Չոքկարեան
Բ. ատենապետ՝ Ճորճ Տայեան
Ատենադպիր՝ Պարգեւ Միսիրեան

Փոխ ատենապետ՝ Պողոս Պապիկեան
Գանձապահ՝ Յովհաննէս Խաչատուրեան
Գոյքապահ՝ Տիգրան Նահապետեան

Ֆուլթայոլի պատասխանատու՝ Արսէն Դանիէլեան

Սկստութիւն խմբապետ՝ Սուրէն Նազարեան
Խորհրդական՝ Նշան Թիւյսիւզեան:

Մասնագէտներէ կազմուած մարզական բո-

լոր յանձնախումբերը, կ'օժանդակեն այս կազմի գործունէութեան:

Ֆուլթայոլի յանձնախումբի անդամներն են Պարոյր Գայապալեան, Նուպար Սիմոնեան, Սահակ Տօնիկեան, Արսէն Դանիէլեան, Ճորճ Օհանեան, Գէորգ Ապահունի, Սարգիս Տանայեան եւ Գրիգոր Անտոնեան: Խումբի մարզիչն է հունգարացի Մեցարոշի: Ա. խումբին մաս կը կազմեն Սուրէն Մանուկեան, Անդրանիկ Սիւլիւքճեան, Յարութիւն Գուլումճեան, Աբրահամ Աւրանեան, Սահակ Եղոյեան, Արշակ Նալպանտեան, Յակոբ Զէյթունցեան, Սարհատ Մերթխանեան, Յակոբ Յակոբեան, Իշխան Ճեվահիրճեան, Վազգէն Տէր Ղուկասեան, Կարապետ Կարապետեան, Յովհաննէս Գազանճեան, Սարգիս Կօշկարեան եւ Յակոբ Կէօյոյլանեան: Ա. խումբի կողքին կը գործեն պահեստի եւ Բ. դասի 10 խումբեր:

Պասքեթբոլի Ա. խումբին կը մասնակցին Խաչիկ Օհանեան, Վարդգէս Էհրամճեան, Կարապետ Կարապետեան, Ճորճ Գասպարեան, Միսաք Պարսումեան, Րաֆֆի Յովհաննէսեան, Անդրանիկ Սահակեան, Սերոբ Արապեան, Գէորգ Շիթիլեան, Տիգրան Գոնսուրաճեան, Հայկ Նալպանտեան եւ Պերճ Գասպարեան:

Աթլետիք եւ հեծելարշաւի յանձնախումբի անդամներն են Թոմաս Նազարեան, Երուանդ Տէմիրճեան, Զաւէն Սալուստեան եւ Յովհաննէս Պանտիկեան:

Մարզական միւս ճիւղերը՝ փինկ-փոնկ, վոլիպոլ, մարմնամշակում եւ թենիս կը ղեկավարուին իրենց խմբապետներուն կողմէ՝ վարչութեան հսկողութեամբ:

20 Յունուար 1957ին, մասնաճիւղի 59րդ անդամական ընդհանուր ժողովէն կ'ընտրուի տարեշրջանի վարչական կազմը.-

Ատենապետ՝ Վահէ Չոքկարեան
Փոխ ատենապետ՝ Նշան Թիւյսիւզեան
Ատենադպիր՝ Պարգեւ Միսիրեան

Բ. ատենադպիր՝ Կարպիս Նալպանտեան
Գանձապահ՝ Յովհաննէս Խաչատուրեան
Հաշուապահ՝ Խաչիկ Օհանեան

Գոյքապահ՝ Սահակ Տօնիկեան
Աթլեթիք պատասխանատու՝ Արսէն Դանի-
էլեան

Սկսած խմբապետ՝ Սուրէն Նազարեան:

Այս տարեշրջանին պետական նոր վաւերա-
ցումով մասնաճիւղը կը կոչուի «Նետի Սուրի
Րիատի»: Մասնաճիւղը կը հաշուէ 880 անդամ՝
հետեւեալ բաժանումներով. օժանդակ անդամ-
ներ՝ 100, մարզիկներ՝ 330, սկսողներ՝ 300,
գայլիկներ՝ 150: Տարուան նիւթական գործառ-
նութեան պատկերն է. մուտք՝ 31.265 ս. ոսկի,
ելք՝ 31.122 ս. ոսկի:

Աթլեթիզմի ճիւղին մէջ վարչութիւնը կը
կազմակերպէ մասնաճիւղի 28րդ տարեկան
մրցումները:

Ֆուտպոլի կազմը իր գերակայութիւնը կը
պահէ սուրիական խումբերու շարքին: Տար-
ուան ընթացքին լաւագոյն ֆուտպոլիստներէն
Վազգէն Տէր Ղուկասեան կը փոխադրուի Պէյ-
րուտ:

Սուրիոյ լողի ախոյեանութեան մրցումնե-
րուն Հ.Մ.Ը.Մ.ական Համբարձում Գասպարեան
կը յաջողի կրտսերներու 100 մ. կռնակի լողի
ոսկի մետալը ապահովել: Պօղոս Պօղոսեան կը
շահի Հալէպի Բ. դասի հեծելարշաւի 45 քմ.
չրջավազքի առաջնութիւնը՝ 1 ժամ 20 վայրկեան
ժամանակով:

Մասնաճիւղը կը կիրարկէ ութը մարզաճիւ-
ղեր՝ ֆուտպոլ, պասքեթպոլ, վոլիպոլ, աթլե-
թիզմ, հեծելարշաւ, փինկ-փոնկ, լող եւ թենիս:

Փետրուար 1958ին, մասնաճիւղի անդա-
մական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչու-
թիւնը իր դիւանը կը կազմէ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Տոքթ. Ալպէր Տայեան
- Փոխ ատենապետ՝ Նշան Թիւլսիւզեան
- Ատենադպիրներ՝ Գէորգ Տօնապետեան եւ
Կարպիս Նալպանտեան
- Գանձապահ՝ Զաւէն Սապունճեան
- Հաշուապահ՝ Խաչիկ Օհանեան
- Մարզական պատասխանատու՝ Արմէն Մար-
գարեան

Ֆուտպոլի պատասխանատու՝ Սահակ Տօ-
նիկեան

Սկսողական խմբապետ՝ Սուրէն Նազար-
եան:

Վարչութեան գլխաւոր աշխատանքն է սե-
փական հողաչերտի դասաւորումը: Քաղաքապե-
տական ծրագիրներու իբր հետեւեալք 5000 քառ.
մեթր տարածութենէն ի վերջոյ մնացած է զուտ
2600 քառ. մեթր տարածութիւն: Հարկ է ծրագ-
րել եւ իրականացնել անոր օգտագործման ձեւը:
Նաեւ՝ հողաչերտի Հ.Մ.Ը.Մ.ի վարչականներու
անուան արձանագրութիւնը պաշտօնապէս փո-
խարինել ազգային կալուած արձանագրու-
թեամբ: Այս նպատակին համար վարչութիւնը
կը նշանակէ հողի յատուկ յանձնախումբ մը:

Մարզական ճիւղերը կը գործեն բնականոն
ընթացքով: Մասնաճիւղը դժբախտութիւնը կ'ու-
նենայ կորսնցնելու իր հեծելանաւորներէն
Սարգիս Պազարպաշեանը, որ Գահիրէ մեկնած
էր Սուրիան ներկայացնելու Արաբ Միացեալ
Հանրապետութեան (Եգիպտոս եւ Սուրիա) հե-
ծելարշաւի ախոյեանական մրցումներուն: Պա-
զարպաշեան 18 Ապրիլի փորձի ընթացքին արե-
ւահար՝ կը փոխադրուի հիւնադանոց, ուր
կ'աւանդէ հոգին:

Ֆուտպոլի 8 երկրորդական խումբեր՝
Սկսող Պատուոյ Առաջին, Նաւասարդ, Անդ-
րանիկ, Համագասպ, Վրէժ, Մուրատ, Շաւարշ
Քրիսեան եւ Քեռի՝ կը գործեն մասնաճիւղէն
ներս եւ որոնք կը կազմակերպեն իրենց միջեւ
«Հ.Մ.Ը.Մ.ի վահան»ի տարեկան մրցաշարք:

Սեպտեմբերին տեղի կ'ունենայ մասնաճիւղի
30րդ ողիմպիականը: Օրուայ ախոյեաններ կը
հանդիսանան Սարգիս Երէցեան եւ Սարհատ
Մերթխանեան:

Աթլեթիզմի խումբը կը շահի Հալէպի միջ-
ակմբային մրցումներու ախոյեանութիւնը:

- 1959 տարեշրջանի մասնաճիւղի վարչու-
թեան կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-
- Ատենապետ՝ Տոքթ. Ալպէր Տայեան
- Ատենադպիրներ՝ Գէորգ Տօնապետեան,
Կարպիս Նալպանտեան

Գանձապահ՝ Յովհաննէս Խաչատուրեան
 Հաշուապահ՝ Գեղամ Չալեան
 Գոյքապահ՝ Սահակ Տօնիկեան
 Սկաուտ խմբապետ՝ Սուրէն Նազարեան
 Խորհրդականներ՝ Յակոբ Ալըզեան, Արմէն Մարգարեան:

Տարուան ընթացքին, մասնաճիւղի հեծելանաւորներէն Ալպէր էքմէքճեան յաջողութիւններ կ'արձանագրէ Եգիպտոսի միջազգային ճրջ շրջավազքի հանգրուաններու ընթացքին: Հ.Մ.Ը.Մ.ի խումբի երեք աստղերը՝ Ալպէր էքմէքճեան, Թումա Լալա եւ Սալիպա Այվազեան, Արաբ Միացեալ Հանրապետութիւնը կը ներկայացնեն այս շրջավազքին:

28 Յունիսին տեղի կ'ունենայ մասնաճիւղի 31րդ ողիմպիականը: Օրուան ախոյեաններ կը հանդիսանան Սարգիս Երէցեան եւ Աբրահամ Աւրնեան:

20 Նոյեմբերին, 2-1 արդիւնքով յաղթելով Վասպուրականին, մասնաճիւղի Ֆուլթպոլի խումբը կը տիրանայ Ֆետերասիոնի բաժակի մրցաշարքի ախոյեանութեան:

1950ական թուականներու տասնամեակին, մասնաճիւղի յաջողագոյն աթլետներէն են՝ Երուանդ Տէմիրճեան, Թումաս Նազարեան, Յովհաննէս Պանտիկեան: Ճիւղի գլխաւոր մարզիչն է Պարգեւ Միսիրեան:

1 Մայիս 1960ին, տարուան միջ-խմբային Ֆուլթպոլի մրցաշարքի բաժակին կը տիրանայ Սկաուտ Պատուոյ Ա. կազմը:

1961 տարուան վարչական կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Վահէ Չոքկարեան
 Ատենադպիրներ՝ Մովսէս Քէօշկէրեան, Մանուէլ Հալլաճեան
 Գանձապահ՝ Յովհաննէս Խաչատուրեան
 Ֆուլթպոլի պատասխանատու՝ Արսէն Դանիէլեան

Աթլետիզմ եւ պասքետբոլ՝ Յակոբ Ալըզեան
 Սկաուտ խմբապետ՝ Սուրէն Նազարեան:
 Այս տարեշրջանին Ֆուլթպոլի կազմը զգալի



Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի ֆուլթպոլի խումբը՝ 1962 տարուայ Սուրիոյ Ախոյեան: Ուքի՝ Սարգիս Ահարոնեան, Գաբրիէլ Պերպերեան, Սարգիս Կօշկարեան (Նեկրօ) Անդրանիկ Սիլիւքճեան (խմբապետ), Գառնիկ Հաճճարեան, Կարպիս Պետիրեան, Սարհառ Մերթիսանեան: Մէջտեղը՝ Սահակ Եղոյեան, Սուրէն Երէցեան: Նստած՝ Կիրակոս Կիրակոսեան, Սարգիս Գուլաքճեան, Գրիգոր Քիլէճեան, Գէորգ Սեվտալեան Գէորգ Աւրնեան

յառաջդիմութիւն կ'արձանագրէ: Չեռք բերուած յաջող արդիւնքներէն է 1-0 արդիւնքով անոր յաղթանակը սուրիական բանակի հռչակաւոր խումբին վրայ:

18 Փետրուար 1962ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ տարեշրջանի վարչական կազմ, Տոքթ. Ալպէր Տայեան (ատենապետ), Մանուէլ Հալլաճեան, Յովհաննէս Խաչատուրեան, Արսէն Դանիէլեան, Սուրէն Նազարեան, Յակոբ Ալըզեան եւ Խաչիկ Կարապետեան:

Քաղաքական պայմանները ձեռնտու չեն նոր նախաձեռնութիւններու, առ այդ վարչու-

րու նոր պայմաններու տակ աւելի բեղուն գործունէութեան ձեռնարկելու համար:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի սկառտական բաժինը, իր հիմնադրութեան օրէն սկսեալ, մնայուն կերպով թուական եւ թեքնիք յառաջդիմութիւններ արձանագրած է:

1940ական թուականներուն մասնաճիւղի սկառտական խորհուրդներուն մաս կազմած են՝ Տոքթ. Յակոբ Գասապեան, Լեւոն Պապլուզեան, Տիգրան Յովակիմեան, Օննիկ Մելիքսեթեան, Նշան Թիւյսիւզեան, Յովհաննէս Փափագեան, Գրիգոր Իւլիպէյեան, Արսէն Դանիէլեան, Մովսէս Էլէյճեան, Թադէոս Թիւթեյեան, Միսաք Ալապոզանեան, Լեւոն Պայրամեան, Լուտեր Մասպանաճեան, Եղուարդ Ճիմճեմեան, Ճորճ Բարսեղեան, Եղուարդ Ճինոյեան, Ալպէր Տայեան, Միսաք Ալապոզանեան, Լեւոն Պապիկեան, Բենիամին Մինասեան, Գ. Բուչիկեան:

1944ին կը կազմակերպուի սկառտական տարազներու ճոխ մթերանոց, որուն պատասխանատուներ կը նշանակուին՝ Նշան Թիւյսիւզեան, Գրիգոր Իւլիպէյեան, Յովհաննէս Խաչատուրեան, Յակոբ Էլէյճեան եւ Հրաչ Տասնապետեան:

Սկառտական շարքերը ունին գայլիկական, սկառտական եւ երէցական բաժիններ:

Երէց սկառտներու խումբերը կը կոչուին Աւարայր, Արամազդ եւ Նաւասարդ: Սկառտական ընթացիկ գործունէութեան առընթեր անոնք ունին Փութպոլի խումբեր, որոնք մրցակից են զուտ մարզական խումբերուն: 1944ին երէց սկառտները կը կիրարկեն նաեւ պասքեթպոլ:

Քաղաքի բաժնի սկառտ աստիճանաւորներն են. Ա. խումբ՝ Խորէն Նազարեան, Բ. խումբ՝ Յովհաննէս Թերճանեան, Գ. խումբ՝ Ճորճ Բարսեղեան, գայլիկներ՝ Եղուարդ Ճինոյեան: Նոր գիւղի բաժին. Ա. խումբ՝ Յարութիւն

Բարսեղեան, Բ. խումբ՝ Լեւոն Մերճանեան, Գ. խումբ՝ Արամ Արսլանեան, Դ. խումբ՝ Նորայր Տիլպերեան, գայլիկներ՝ Լեւոն Ունէյեան:

Յատուկ խնամքի արժանի է սկառտական նուագախումբը, որ 1946ին իր փառքի օրերը կ'ապրի աւելի քան 60 նուագողներով: Այս յաջողութեան ետին կանգնած են նուագախումբի խմբապետ՝ Յովհաննէս Խաչատուրեան եւ խմբավար՝ Յակոբ Քէչիչեան: 1946ի Օգոստոսին Սուրիոյ հանրապետութեան նախագահը կ'այցելէ Հալէպ: Այդ առթիւ սարքուած տողանցքի աւարտին, վարչապետ Սաատալլահ Ճապրի նախագահին կը ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ.ի ղեկավարները: Ն. Վ. Շիւքրի Քուլաթլի հետեւեալ խօսքերով կը քաջալերէ զանոնք «Հպարտ եմ ձեզմով ու շնորհակալութիւն կը յայտնեմ ձեր կապակերպութեան: Հ.Մ.Ը.Մ.ի սկառտներն ու մարպիկները պիտի դառնան կորիպը ապագայ կենսունակ սերունդներուն»:

Հրապարակային այս ելոյթներու յաջողութիւնները բարերար արձագանգ կ'ունենան մասնաճիւղի սկառտական գործունէութեան վրայ: Բազմահարիւր նոր անդամներ կ'արձանագրուին սկառտական շարքերէն ներս: Կազմակերպական բաժինը իր կարգին կը յառաջդիմէ: Իւրաքանչիւր սկառտ ունի իր յատուկ թղթածրարը մանրամասն տեղեկութիւններով: Շարքերը կը գործադրեն դասախօսութիւններ, արշաւ, բանակում, ընդհանուր բանակում, մարզանք, մարզախաղ: Կարգապահական խիստ հսկողութեան ենթակայ են բոլոր սկառտները դաշտերէն ու ակումբներէն ներս կամ դուրս:

1950ի Ապրիլին Հալէպ կ'այցելէ սկառտական շարժումի հիմնադիր Զօր. Պէյտըն Փաուլլի ներկայացուցիչ՝ Colonel Wilson: Այս առթիւ Հալէպի սկառտական կազմակերպութիւնները բանակում մը կը սարքեն, որուն լաւագոյն խումբի տիտղոսին կ'արժանանայ մասնաճիւղի ներկայացուցչական կազմը:

1955ին, մասնաճիւղի սկառտական նուագախումբը կը բաղկանայ 70 անդամներէ, որոնք

իրենց փորձերը կը կատարեն զոյգ ուսուցիչներու հսկողութեամբ: Սկստական խումբերէն 75 սկսողներ կը մասնակցին Այն Սաֆայի միջ-մասնաճիւղային ընդհանուր բանակումին, (Լիբանան):

1956ի Սկստական Խորհուրդի անդամներն են՝ Սուրէն Նազարեան, Խորէն Նազարեան, Արսէն Դանիէլեան, Աբրահամ Աւընեան, Յակոբ Պարսումեան, Զարեհ Միսիրեան, Յակոբ Օվայեան եւ Յարութիւն Տէրվիչեան:

1957ի Օգոստոսին, Հալէպի մասնաճիւղի գալիկները կը կազմակերպեն մեծ բանակում մը Քեսապի էքիզ Օլուք գիւղին մէջ: 61 գալիկներ կը մասնակցին այս բանակումին, որուն փակման օրը տեղի կ'ունենայ խարուկահանդէս: 5 Սեպտեմբերին, գալիկներու վերադարձէն ետք, նոյն վայրին վրայ բանակում կը կատարեն Հալէպի սկսողները, ղեկավարութեամբ Սեդրակ Գիւրջեանի: Բանակումը կը փակուի 19 Սեպտեմբերին:

ԴԱՇՏ ԵՒ ԱԿՈՒՄԲ

Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի լայնատարած գործունէութեան համար, դաշտերու եւ ակումբի հարցերը առաջնահերթ կարեւորութիւն ունեցած են միշտ: 1947ի աւարտին մասնաճիւղը, յետ երկար աշխատանքի, կը յաջողի ապահովել հողաշերտ մը որ կ'արձանագրուի Հալէպի Ազգային Առաջնորդարանի անուան, փոխադարձող նամակով մը, ըստ որում Ազգային Առաջնորդարանը ըլլալով հանդերձ իրաւական տէրը հողաշերտին, Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղը իրաւունք ունի զայն իր յարմար դատած ձեւով օգտագործելու կամ ի հարկին ծախելու:

Այս իրականացումը աննախընթաց տարողութեամբ արշաւի մը արդիւնքը պիտի ըլլար: Հանգանակութեան նպատակով կազմակերպուած ձեռնարկներու կողքին հալէպահայ մամուլը խանդավառ տողերով կը քաջալերէ նուիրահաւաքի մասնակցութիւնը. «Եւ ո՞վ է որ ձեպի

կու տայ այս դաշտը: Հայ մեծահարուստը միայն, ունեւորը: Գիտցէք թէ տուողը առաւելաբար աշխատաւոր ու չարքաշ հայ ժողովուրդն է, կայարանի համետ գործաւորը, գլխահակ պատօնեան, Նոր Գիւղի կիսաքաղց բանուորը, հիւսուածեղէնի ուժասպառ բանուորուհին, մեքենագործի աշկերտը, կօշկակարի օգնականը, հայ ուսուցիչը, հայ աշակերտը, հայ աղջիկը, հայ մայրը, տուողն է ինքը, հայ ժողովուրդը: Գիտցէ՛ք, ճանչցէ՛ք եւ սիրեցէ՛ք այս ժողովուրդը: Արժանի եղէք անոր վսեմ հոգիին, տրտում այլ շքեղ ճակատագրին»- [ԶԲ/Յունուար 1947]:


1948ի Յունիսին, մասնաճիւղը կը ձեռնարկէ հողաշերտի հարթումին, Ֆութպոլի դաշտի մը վերածելով զայն:

1949ին, Հալէպի մասնաճիւղը գնած է 5000 քառ. մետր հող, 62.000 ս. ոսկի արժողութեամբ: Հողաշերտը առժամաբար արձանագրած է 5 վարչականներու անուան:

1957ին, մասնաճիւղի ընտանեկան պարտէզի գործունէութիւնը իր առաւելագոյն ծաւալումին հասած է: Հարիւրաւոր ընտանիքներ զայն իրենց մնայուն ժամադրավայրը կը դարձնեն նիւթապէս օգնելով անոր զարգացման:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի տարեկան գլխաւոր ելոյթը միջ-մասնաճիւղային զատկական խաղերու կազմակերպութիւնն է: 1927էն ի վեր, Հալէպի մէջ, իւրաքանչիւր տարի Զատկուան տօներուն առթիւ կրկնուող եւ ժողովրդական շրջանակներու կողմէ այնքան սպասուած այս ելոյթներու մասին մանրամասնօրէն պիտի անդրադառնանք «Շրջանային Գործունէութիւններ» գլուխին տակ: Հարկ է սակայն յիշել թէ այս ձեռնարկներու կատարեալ յաջողութեան երաշխիքը ապահոված են մասնաճիւղի իրերայաջորդ բոլոր վարչական կազմերը, Զատկուան օրերու նախօրեակին զօրաշարժի ենթարկելով բոլոր



1. Ռաս Իւ Այնի ֆութպոլի կապը 1956ին - 2. Հալէպի մասնաճիւղի արեւոյնքեր - 3 + 4. Տեսարաններ 1948-ի ողիմպիականներէն - 5. Հոմսի մասնաճիւղի սկաւտուները - 6. Հասիչէի Հ.Մ.Ը.Մ.ի Պաքերպոլի խումբը - 7. Հալէպի սկաւտուներու պատուոյ Ա. խումբը, 1947 8. Տէր Զօրի մասնաճիւղի ֆութպոլի խումբը:

օժանդակ յանձնախումբերը: Հալչպահայ ժողովուրդն ալ այս ելոյթներու յաջողութեան նպաստած է հիւրընկալելով Սուրիոյ եւ Լիբանանի այլ մասնաճիւղերէն Հալչպ ժամանող պատուիրակութիւններուն ընկերացող սկաուտ եւ արենոյշ անդամները:

Հրապարակային հերթական ելոյթներու կարգին են նաեւ տարեկան «Հ.Մ.Ը.Մ.ի Օր»ուան նշումները, որոնք տեղի կ'ունենան Հալչպի շքեղագոյն սրահներուն մէջ:

1942ին, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 23րդ տարեդարձը կը տօնուի Սինեմա Օլիմպիայի սրահին մէջ: 1946ին, Սինեմա Օրիանթալի սրահին մէջ:

13 Մարտ 1949ին, մասնաճիւղը բացառիկ շուքով կը տօնէ Միութեան հիմնադրութեան երեսնամեակը: Հանդիսութիւնը կը հովանաւորէ Ջարեհ Եպս. Փայասլեան՝ Առաջնորդ Բերիոյ Թեմին, որ խօսք կ'առնէ այս առթիւ: Օրուան բանախօսն է Շրջանային Վարչութեան ատենապետ՝ Տոքթ. Ատուր Գապագեան:

26 Դեկտեմբեր 1952ին, նոյնպէս վարչութիւնը կը տօնէ Միութեան հիմնադրութեան 34րդ տարեդարձը, Սինեմա Տիւնիայի սրահին մէջ:

Շրջանային վարչութիւնը այս ելոյթներու յաջողութեան կը նպաստէ իր կողմէ օրուան բանախօս մը ուղարկելով Հալչպ: 1953ին, օրուան բանախօսն է Կարօ Գէորգեան:

12 Մարտ 1961ին, Սինեմա Սուրիայի մէջ մասնաճիւղը կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 40ամեակի տօնակատարութիւն (յապաղած): Օրուան հովանաւորն է Ղեկնող Արք. Չեպէյեան, նախագահութեամբ՝ Լուտեր Մասպանաճեանի: Օրուան բանախօսներն են Տոքթ. Ատուր Գապագեան եւ Եհիա Ռայէֆ: Գեղարուեստական բաժնին իրենց մասնակցութիւնը կը բերեն «Կարա Մուրզա» երգչախումբն ու Հ.Մ.Ը.Մ.ի նուագախումբը: Կը ներկայացուի կենդանի պատկեր:

«Հ.Մ.Ը.Մ.ի Օր» կամ «Ամեակներու» տօնակատարութիւնները, կը վայելեն հալչպահայութեան անվերապահ քաջալերանքը:

ՄԻՋ-ՄԱՍՆԱՃԻՒՂԱՅԻՆ

ԶԱՏԿԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Հալչպի մասնաճիւղի, շրջանային գործունէութեան բերած կարեւորագոյն ներդրումն է իւրաքանչիւր Ջատկական շաբաթներուն միջմասնաճիւղային հանդիպումներու գործնական աշխատանքները:

Այս մասին մանրամասնօրէն պիտի անդրադառնանք հատորիս Գ. մասի գլուխներուն տակ: Մասնաճիւղի իրերայաջորդ վարչական կազմերուն, օժանդակ յանձնախումբերուն, սկաուտական խորհուրդներուն եւ հալչպահայ համակիրներու նպաստը, այս ելոյթներու կատարեալ յաջողութեան, վեր է ամէն գնահատանքէ:

Հալչպահայ վեթերան հասարակական գործիչ Հրաչ Փափագեան հետեւեալ բառերով բանաձեւած է այս յաջողութիւնները, խօսքը ուղղելով վարչական անդամներուն. «Տղա՛ք, մենք մէկ տարուան աշխատանքով այնքան արդիւնք չենք կրնար ձեռք ձգել, որքան դուք սոյն միջմասնաճիւղային հանդիպումներով»:

ԼԱԹԱՔԻԱ

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

1939 թուականին Լաթաքիոյ Հ.Մ.Ը.Մ.ի նիւթական եւ կազմակերպական դժուարութիւնները փարատելէ ետք, 1940էն սկսեալ մասնաճիւղը կը լծուի զօրացեալ աշխատանքի: Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Շրջանային Վարչութիւնը՝ Լաթաքիոյ մասնաճիւղի վարչականներէն Սուրէն Բաբախեանին կը վստահի Հալչպի մէջ 1940ի Ջատկական խաղերը վարելու պաշտօնը՝ իբրեւ գործակից Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ անդամին: Մասնաճիւղի ֆուտպոլի խումբը կը մասնակցի սոյն խաղերուն:

1940-41 պատերազմական առաջին տարիները յարատեւման համար բացառիկ ճիգերու կը

կարօտին: Այսուհանդերձ Լաթաքիոյ Հ.Մ.Ը.Մ.ը ոտքի է իր մարզական եւ սկաուտական թեւերով:

1942ին, մասնաճիւղի վարչութեան ատենապետութիւնը կը ստանձնէ Գէորգ Թոփճեանը, որ նոյն պաշտօնը պիտի վարէր երկար տարիներ:

2 եւ 3 Դեկտեմբեր 1942ին, մասնաճիւղի պատգամաւոր Հայկազ Մեսումեան կը մասնակցի Շրջանային 7րդ Պատգամաւորական Ժողովին: Վերջինս Լաթաքիոյ մասնաճիւղի երկամեայ գործունէութիւնը «գոհացուցիչ» կը գտնէ: Անդամներու ընդհանուր թիւն է 85:

1943ին, Գէորգ Թոփճեանի ատենապետութեամբ՝ վարչութեան ատենադպիրի պաշտօնը կը ստանձնէ Գրիգոր Էպլիղաթեանը:

Մասնաճիւղը 12 Դեկտեմբերին կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան քսանհինգամեակը:

1944ի Դեկտեմբեր 24ին, Գէորգ Թոփճեան մասնաճիւղը կը ներկայացնէ շրջանի 8րդ Պատգամաւորական Ժողովին՝ Պէյրութ: Մասնաճիւղը արձանագրած է անդամակցութեան կարեւոր աճ: Ընդհանուր թիւ 135, որոնցմէ 50ը՝ սկաուտական շարքերէն:

1946ին, Հալէպի մէջ Լաթաքիոյ մասնաճիւղի Ֆուլթպոլի խումբը իր մասնակցութիւնը կը բերէ, միջ-մասնաճիւղային 20րդ խաղերուն որպէս Բ. դասակարգի խումբ: Իսկ 2 Յունիսին, մասնաճիւղը կը կազմակերպէ իր մարզահանդէսը, հովանաւորութեամբ տեղւոյն Մուհաֆէզին եւ ներկայութեամբ քաղաքի պետական աւագանիին: Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական նուագախումբի առաջնորդութեամբ տեղի կ'ունենայ ընդհանուր տողանցք, մասնակցութեամբ Ազգային վարժարանի աշակերտներուն, Լաթաքիոյ Օգնութեան Խաչի արծուիկներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկներուն եւ սկաուտական շարքերուն, որոնց քաղաքի կեդրոնին վրայ կը միանայ տեղացի սկաուտներու խումբը: Խաղերու աւարտին տեղի կ'ունենայ մրցանակներու բաշխում, ձեռամբ Սուրիոյ կրթական նախարար Ահմէտ Պէյ Շարապաթիի: Երեկոյեան Ազգային

վարժարանի սրահին մէջ տեղի կ'ունենայ ճաշկերոյթ ի պատիւ Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութեան:

Վարչութիւնը Շրջանային Վարչութենէն կը խնդրէ սկաուտ մարզիչ մը, որուն կեցութեան ծախսերը մասնաճիւղը յանձն պիտի առնէ: Շրջանային Վարչութիւնը նկատի կ'ունենայ Թրիփոլի մասնաճիւղէն Սարգիս Կոնճեանը, ամրան եղանակի երեք ամիսներուն համար:

Շրջանային Վարչութիւնը 15 Մարտ 1949 թուակիր թիւ 16 նամակով կը վաւերացնէ մասնաճիւղի նորընտիր վարչական կազմը, մաղթելով յարաճուն վերելքի տարեշրջան մը: Մինչեւ 1950ի աւարտը, մասնաճիւղը կը հաշուէ 120 անդամ՝ հետեւեալ բաժանումով. գայլիկներ՝ 10, սկաուտներ՝ 30, մարզիկներ՝ 25, օժանդակ անդամներ՝ 55: Մարզական գործունէութիւնը կը կեդրոնանայ Ֆուլթպոլի գոյգ խումբերու վրայ: Ունին նաեւ կուփամարտիկներու խումբ մը եւ փինկ-փոնկ կիրարկող անդամներ:

1950 տարեշրջանը նոր նուաճումներու առիթն է մարզական եւ սկաուտական ճիւղերէն ներս:

15 Ապրիլ 1951ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութիւնը իր դիւանը կը կազմէ հետեւեալ ձեւով.՝
Ատենապետ՝ Գէորգ Թոփճեան
Փոխ ատենապետ՝ Աւետիս Տէիրմէնճեան
Ատենադպիր՝ Յարէթ Վրթանեսեան
Գանձապահներ՝ Նազարէթ Գաբթանեան, Յակոբ Տէիրմէնճեան

Արաբերէնի քարտուղար՝ Ստեփան Գարամարտեան:

1951ը կ'ըլլայ կազմակերպչական գործունէութեան յաջող շրջան մը: Մասնաճիւղը կը ստանայ պետական վաւերացում՝ Նէտի Սուրի Րիատի անունով: Սկաուտական խումբը կը բաղկանայ 45 անդամներէ, խմբապետութեամբ Մկրտիչ Փափազեանի: Խումբը կը գործէ Ազգային վարժարանի արտօնագրով: Վարժարանի մէկ սենեակը տրամադրուած է սկաուտական գործունէութեան համար: Ֆուլթպոլի խումբը բազ-



Լաթաքիոյ սկաուտական խումբը 1951-ին: Ուոքի՝ Յարութին Ուղուրլեան, Յակոբ Գթմըրեան, Ալեքսան Միտերճեան, Ժիրայր Կարպուշեան, Մկրտիչ Գրիգորեան, Յակոբ Տէյիրմէնճեան, Մկրտիչ Փափապեան, Պարգեւ Պասմաճեան, Ստեփան Գարամարտեան, Վարուժան Տէմիրճեան, Գրիգոր Հոփալեան, Գէորգ Գէորգեան, Սարգիս Գաբրիէլեան, Նապարէթ Գաբթանեան, Հրաչ Գաբրիէլեան:
Ծունկի կամ նստած՝ Սարգիս Անոյեան, Րաֆֆի Ուղուրլեան,, Սողոմոնեան, Խաժակ Գաբրիէլեան, Գրիգոր Գթմըրեան, Միսաք Ղապարեան,, Կարօ Գարազաշեան, Արմէն Տէր Թորոսեան, Զոհրապ Տէր Թորոսեան, Մուշեղ Պեհանեան:

մաթիւ բարեկամական մրցումներ կը կազմակերպէ փոխադրուելով Հալէպ կամ՝ տեղւոյն վրայ: Վարչութիւնը կը կազմակերպէ Մայիս 28ի առթիւ դաշտագնացութիւն, դասախօսութիւններ: Մասնաճիւղին կը պակսի սեփական ակումբ մը: Տարեկան ընդհանուր մուտքի գումարն է 446 ս.ոսկի, ելք՝ 300 ս. ոսկի:

5 Մարտ 1952ին, տեղի կ'ունենայ նոր վարչութեան ընտրութիւն: Վարչութեան մաս կը կազմեն.-
Ատենապետ՝ Գէորգ Թոփճեան
Փոխ ատենապետ՝ Գէորգ Պերպէրեան
Ատենադպիր՝ Յաբէթ Վրթանեսեան
Գանձապահ՝ Պարգեւ Պասմաճեան

Գանձիչ եւ գոյքապահ՝ Յակոբ Տէիրմէնճեան

Սկստական պատասխանատու՝ Հրաչ Գաբրիէլեան

Խորհրդական՝ Գրիգոր Գէորգեան:

Սկստական խմբապետ՝ Մկրտիչ Փափագեան իրաւասու ձայնով կը մասնակցի վարչական նիստերուն: Մասնաճիւղը կը տառապի սեփական աղումը մը չունենալու դժուարութենէն եւ այս նպատակին համար Շրջանային Վարչութեան օժանդակութիւնը կը խնդրէ: 1952ի միջմասնաճիւղային հանդիպումներուն, Լաթաքիոյ Հ.Մ.Ը.Մ.ը կը մասնակցի սկստներով եւ Ֆոլթպոլի խումբով, որուն մաս կը կազմեն Գէորգ Պերպէրեան, Յարութիւն Պերպէրեան, Սպարտա Հովեան, Վարդան Պետիկեան, Արտաշէս Վարդանեան, Պարգեւ Պասմաճեան, Մկրտիչ Գրիգորեան, Յակոբ Տէիրմէնճեան, Աւետիս Տէիրմէնճեան, Յարութիւն Ուղուրլեան, Սարգիս Գաբրիէլեան, Գէորգ Գէորգեան, Նազարէթ Գաբրիէլեան իսկ իբր պահեստի խաղացողներ՝ Յակոբ Արզումանեան եւ Գրիգոր Գալլաքեան:

Սկստական շարժումը աւելի զարգացնելու համար կը ծրագրեն նուագախումբ մը կազմակերպել:

1953ին, մասնաճիւղը իր ծախսով, ազգային վարժարանին մէջ կը շինէ սենեակ մը, գործածելու համար իբրեւ աղումը: Մարզական եւ սկստական ճիւղերը կը գործեն ըստ առաջնոյն: Մասնաճիւղի պետական արտօնագիրը կը նորոգուի Նէտի շարք էլ Րիատի անունով, համաձայն 15 Յուլիս 1953 թուականի թիւ 11226 հրամանագրին:

5 Փետրուար 1954ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը նոյնութեամբ կը վերընտրէ 1953ի կազմը, հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Գէորգ Թովմեան
- Ատենադպիր՝ Յարէթ Վրթանեսեան
- Գանձապահ՝ Գէորգ Պերպէրեան

Սկստական խմբապետ՝ Մկրտիչ Փափագեան

Խորհրդական՝ Պարգեւ Պասմաճեան:

Պետութեան մօտ մասնաճիւղի պատասխանատուն է Տոքթ. Մելքոն Էպլիղաթեան: 1954ին, Ֆոլթպոլի կողքին կը կազմակերպէ նաեւ պասքեթպոլի, վոլիպոլի եւ փինկ-փոնկի խումբեր, Անդամներու ընդհանուր թիւն է 96, որոնցմէ 24ը գայլիկներ են:

1955 տարեշրջանի համար վարչական կազմը կը բաղկանայ 7 անդամներէ, որոնցմէ 4ը՝ Գէորգ Թովմեան, Մկրտիչ Փափագեան, Գէորգ Պերպէրեան եւ Պարգեւ Պասմաճեան՝ նախկին անդամներ են. նոր կազմի անդամներն են՝ Երուանդ Տէր Թորոսեան՝ փոխ ատենապետ, Վահէ Գազանճեան՝ արաբերէնի քարտուղար, Հայկ Ղազարեան՝ խորհրդական:

1955ի Զատիկական միջմասնաճիւղային խաղերուն մասնաճիւղը Ֆոլթպոլի կողքին կը ներկայանայ նաեւ պասքեթպոլի խումբով մը: Վարչութեան ծրագիրներէն է սեփական աղումը մը ունենալ, յարակից պասքեթպոլի դաշտով:

Լաթաքիայէն դէպի Հալէպ ուղղութեամբ՝ Ղընէմիէ կոչուող հայկական գիւղի արաբախօս 25 պատանիներ, 1955ի ընթացքին կը հաստատուին Լաթաքիա եւ կ'անդամագրուին մասնաճիւղի շարքերուն: Վարչութիւնը յանձն կ'առնէ անոնց հայերէնի ուսուցումը, գիշերային դասընթացքներով եւ կը դիմէ Շրջանային Վարչութեան, զանոնք ճանչնալու իբրեւ Ղընէմիէի առանձին մասնաճիւղ, որպէսզի կարողանան յառաջիկայ Զատիկական միջմասնաճիւղային խաղերուն իրենց մասնակցութիւնը բերել: Շրջանային Վարչութիւնը կը քաջալերէ Լաթաքիոյ մասնաճիւղի նախաձեռնութիւնը նիւթական օժանդակութեամբ, մերժելով հանդերձ Լաթաքիոյ մէջ գործող Ղընէմիէի մասնաճիւղ մը ճանչնալ:

Մասնաճիւղի 1956 տարուան անդամական ընդհանուր ժողովը, գումարուած 20 Յունուարին, լսելէ ետք Շրջանային 13րդ Պատգամաւորական ժողովի մասին զեկուցումը, կ'ընտրէ նոր վարչական կազմ հետեւեալ ձեւով.-


Ատենապետ՝ Գէորգ Թովմեան

Փոխ-ատենապետ՝ Մուշեղ Գուլյումճեան
Քարտուղար՝ Մկրտիչ Փափազեան
Հաշուապահ՝ Երուանդ Տէր Թորոսեան
Գանձիչ՝ Գէորգ Պերպէրեան
Գոյքապահ՝ Յակոբ Արզումանեան
Աթլեթիք խմբապետ՝ Վաղարշակ Մանոյ-
եան:

Մասնաճիւղը 1956ի ընթացքին կ'ունենայ մարզական բեղուն գործունէութիւն: Միջ-մասնաճիւղային 29րդ խաղերուն կը մասնակցի Ֆուտպոլի եւ պասքեթպոլի խումբերով: Տարեշրջանի ընթացքին կ'ունենայ Ֆուտպոլի 17, պասքեթպոլի 29, փինկ-փոնկի 7 եւ վոլիպոլի 1 մրցում: Պասքեթպոլի խումբի մարզիչն է, Ֆետերէ իրաւարար Պարգեւ Պասմաճեան: Մասնաճիւղէն 43 անդամներ կը մասնակցին պետական կրաւորական պաշտպանութեան փորձերուն եւ կը ստանան համապատասխան վկայագիր: Պետութիւնը 2000 ս.ոսկիով կը նպաստէ մասնաճիւղի գանձին: Տարեկան մուտքերու ընդհանուր գումարն է 5123 ս. ոսկի, ելք՝ 2640 ս. ոսկի:

1957 տարուան վարչութիւնը կը ներկայացնէ նոյն կազմը, բացի Յակոբ Արզումանեանէն, որ կը փոխարինուի Աւետիս Տէրմէնճեանով եւ Վաղարշակ Մանոյեանէ՝ փոխարինուած Բ. ատենադպիր՝ Վահէ Գազանճեանով: Այս կազմի կարեւոր իրականացումը կը հանդիսանայ սեփական աւտոմոբիլ մը ապահովումը իր յարակից պարտէզով: Վարձու առնուած այս կեդրոնը Լաթաքիոյ հայութեան նախասիրած ժամադրավայրը պիտի դառնար շուտով: Աւտոմոբիլ բացումը տեղի կ'ունենայ 3 Մարտ 1957ին: Միաժամանակ, Մաքինաճեան-Գուլյումճեան ազգայիններու տրամադրած պասքեթպոլի դաշտը կ'օժտուի յատուկ թրիպիլնով եւ կը լուսազարդուի: Շրջանային վարչութիւնը գնահատանքով կ'արձանագրէ Մաքինաճեան-Գուլյումճեաններու այս կարեւոր ժեստը: Յարութիւն Մաքինաճեանի այս եւ առհասարակ սուրիական պետութեան ընձեռած ծառայութիւնները դահլիճին կողմէ կը գնահատուին յատուկ շքանշանով:

Շինարարական աշխատանքները զգալի բաց մը կը յառաջացնեն վարչութեան գանձին մէջ: 1957ի նիւթական գործառնութիւնն է՝ մուտք՝ 12235 ս. ոսկի, ելք՝ 16694 սուրիական ոսկի:



Յարութիւն Մաքինաճեանի պետական շքանշանի վկայականը

Մնտուկին բացը կը հոգացուի վարչական եղբայրներու կողմէ եղած փոխատուութեամբ: Մարզական գետնի վրայ մասնաճիւղը կը բոլորէ յաջող տարեշրջան մը, մասնակցելով Ֆետերասիոններու կազմակերպած Ֆուտպոլի, պասքեթպոլի, վոլիպոլի եւ փինկ-փոնկի ախոյեանական մրցաշարքերուն: Ունի նաեւ թենիսի եւ լուղորդութեան մասնակցող մարզիկներ: Պասքեթպոլի խումբի աստղերէն են երիտասարդ մարզիկ Գօգօ Գթմերեանը եւ Անթուան Գալուստեանը:

Մասնաճիւղի աթլեթիք մարզիչն է Վաղարշակ Մանոյեան իսկ պասքեթպոլի մարզիչը՝ Պարգեւ Պասմաճեան: Անդամներու ընդհանուր

Թիւն է 116: Մասնաճիւղի գրադարանը կը հաշուէ շուրջ 300 հատոր:

1959ին, Լաթաքիոյ մասնաճիւղի Ֆութպոլի եւ պասքեթպոլի խումբերը յաճախակի այցելութիւնները կ'ընդունին Հալէպի մասնաճիւղի սկաուտական եւ մարզական խումբերուն: Այս մրցումները, որոնք կը վերջանան համակրական ճաշ հաւաքոյթներով, կը նպաստեն Հ.Մ.Ը.Մ.ական միջնորդի զարգացման:

մէջ տեղի ունեցող Արաբ Միացեալ Հանրապետութեան ախոյեանութեան մրցաշարքին- [ԾԴ/40.6]:

1962ի Սեպտեմբերին, Լաթաքիոյ Հ.Մ.Ը.Մ.ի տղոց եւ աղջկանց պասքեթպոլի խումբերը տեղւոյն ախոյեանական մրցաշարքին մասնակցելով կ'ապահովեն Լաթաքիոյ 1962ի զոյգ ախոյեանութիւնները: Այս յաջողութիւնները դուռ կը բանան այցելութիւններով Սուրիոյ այլ քաղաքներ:



1959ի միջ-մասնաճիւղային խաղերու պասքեթպոլի Բ. դասի ախոյեան Լաթաքիոյ Հ.Մ.Ը.Մ.ի խումբը: Ուոքի՝ Ժիրայր Կարպուշեան, Բաֆֆի Ուղուրլեան, Ժան Աբրահամեան, Անթուան Գալուստեան, Վաղարշակ Մանոյեան, Գօգօ Ուղուրլեան, Մարպիչ՝ Պարգեւ Պասմաճեան: Նստած՝ Գօգօ Գթմըրեան, Սարգիս Գալայճեան,

1960ի Օգոստոսին, Լաթաքիոյ մէջ տեղի կ'ունենան Սուրիոյ փինկ-փոնկի ախոյեանական մրցումները: Հ.Մ.Ը.Մ.ական Անթուանէթ Գալուստեան այս մրցումներուն իր յաղթանակով կը դառնայ Սուրիոյ ախոյեանուհի եւ Սեպտեմբերին Սուրիան կը ներկայացնէ Դամասկոսի

րու Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերուն եւ տեղական խումբերու դէմ փոխադարձ բարեկամական մրցումներու:

1967 Յունիսի արաբ-իսրայէլեան պատերազմը խիստ աննպաստ ազդեցութիւն կ'ունենայ մասնաճիւղի գործունէութեան վրայ: Ակումբ-

խաղավայրի ծախսերը դժուարութեամբ կը հոգացուին: Անդամներու թիւը զգալիօրէն նուազած է եւ գործի հանդէպ հետաքրքրութիւնը նոյնպէս: Պետական նպաստը դադրած է: 1967ի նիւթական գործառնութեան պատկերն է մոտօք՝ 3469 ս. ոսկի, ելք՝ 3438 ս. ոսկի:

1968 տարեշրջանին մասնաճիւղի վարչութեան պաշտօնը կը վարեն հետեւեալները.-

- Ատենապետ՝ Պօղոս Ղազարեան
- Ատենադպիր՝ Յարէթ Չուլֆայեան
- Արաբերէնի ատենադպիր՝ Հանրի Հատտատեան

- Գանձապահ՝ Հրաչ Մաքինաճեան
- Ֆուտբոլի պատասխանատու՝ Խաժակ Գաբրիէլեան

Մարզական պատասխանատու՝ Րաֆֆի Ուղուրլեան

Ակումբի պատասխանատու՝ Միհրան Ռուբէնեան:

Մասնաճիւղը կը հաշուէ 100 անդամ, որոնցմէ՝ ֆուտբոլի մարզիկներ՝ 20, պասքեթբոլի մարզիկներ՝ 25 եւ փինկ-փոնկի մարզիկներ՝ 10: Ունի սեփական ակումբ, տարեկան 1660 ս. ոսկի վարձքով: Պասքեթբոլի դաշտը սիրայօժար տրամադրուած է Մաքինաճեան-Գուլումճեան հաստատութեան կողմէ: Սկաուտական խումբ չկայ:

ՀՈՄՍ

Կազմակերպչական, Մարզական եւ սկաուտական գործունէութիւններ

Ինչպէս այլ մասնաճիւղերու պարագային, Հոմսի գործունէութիւնն ալ Բ. Աշխարհամարտի սկզբնաւորութեան հետ գրեթէ կը դադրի: Պէտք էր սպասել մինչեւ 1944ի սկիզբը, երբ նորընտիր վարչութիւնը կը վերսկսի աշխատանքի: Ակումբային կեանքը կը վերակենդանանայ: Մասնաճիւղի կիրարկած մարզական ճիւղը ֆուտբոլն է: Սկաուտական խումբը կը վերակազմուի եւ Հոմսի մասնաճիւղը կրկին ներկայ է Հալէպի Զատկական միջ-մասնաճիւղային հանդիպումներուն:



Հոմսի Մասնաճիւղի ֆուտբոլի խումբը 1956ին

Սակայն Հոմսի մասնաճիւղի հիմնական դժուարութիւնը կը մնայ նոյնը՝ յաճախակի մեկնումներ քաղաքէն, նորեկ անդամներու անբաւարարութիւն եւ նիւթական անձուկ կացութիւն: Այսուհանդերձ, 1948ի վերջաւորութեան մասնաճիւղը կը յաջողի ապահովել նոր հաւաքավայր-ակումբ մը, որուն ծախսերուն կը մասնակցի նաեւ Շրջանային Վարչութիւնը, 200 լ. ոսկի նուիրատուութեամբ: 1948ին, մասնաճիւղը կը հաշուէ 72 անդամ: Առաջին անգամ ըլլալով ֆուտբոլի խումբի կողքին սկաուտներու խումբն ալ կը մասնակցի Զատկական միջ-մասնաճիւղային խաղերու եզրափակման տողանցքին: 1949 տարեշրջանի վարչութիւնը կը գործէ 14 ամիս, եւ 1950ի սկիզբը վարչական աշխատանքները կը փոխանցէ նորընտիր վարչութեան: Վերջինս կը յաջողի զարգացնել մասնաճիւղի գործունէութիւնը՝ դիմելով պետական արտօնագրի ստացման, անդամներու ընդհանուր թիւը բարձրացնելով 93ի եւ ապահովելով քաղաքապետարանի ֆուտբոլի դաշտի օգտագործումը խումբի փորձերուն եւ մրցումներուն համար:

8 Մայիս 1951ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութեան կազմը հետեւեալն է.-

- Ատենապետ՝ Գարեգին Գրիշեան
- Ատենադպիր՝ Սուրէն Տէր Ալեքսանեան
- Գանձապահ՝ Սարգիս Սեբեթեան

Խորհրդականներ՝ Յակոբ Գալայճեան, Սարգիս Տէր Յակոբեան:

Այս վարչութիւնը կը ձեռնարկէ անդամներու ցանկի գտումին եւ կը կանոնաւորէ իր կապերը Շրջանային վարչութեան հետ: Տարեվերջին կը յաջողին սպառել Շրջանային վարչութեան հրատարակած 1952ի օրացոյցէն 40 օրինակներ: Ֆուլթոնի խումբը, կազմուած ամբողջութեամբ Հոմս բնակող Հ.Մ.Լ.Մ.ականներէ, կը մասնակցի 1952ի Զատկական միջ-մասնաճիւղային խաղերուն, հետեւեալ կազմով.- Խմբապետ՝ Աբրահամ Գլըճեան, Գէորգ Պարսումեան, Նժդեհ Պաղտասարեան, Արամ Հեքիմեան, Սարգիս Քամպերեան, Ճորճ Սիմոնեան, Ճորճ Չափրասեան, Յակոբ Մարտիրոսեան, Գէորգ Մըխսեան, Մովսէս Օհանեան, Յովհաննէս Դանիէլեան, Դաւիթ Էօրէնճեան, Մարտիրոս Արիսեան, Փիեռ Սարգիսեան եւ Արա Տէր Սարգիսեան: Ֆուլթոնի խումբին կ'ընկերանայ նաեւ 25 սկաուտներէ եւ Ս.Օ.Խ.ի 20 արժուիկներէ բաղկացած պատուիրակութիւն մը:

1952ի Մայիսին ընտրուած վարչութեան անդամներն են.-

Ատենապետ՝ Յարութիւն Տէր Սարգիսեան

Ատենադպիր՝ Յակոբ Պալեան

Գանձապահ՝ Գէորգ Պարսումեան

Խորհրդականներ՝ Մարտիրոս Յարութիւնեան, Պետրոս Էմիրզեան:

Վերոյիշեալ կազմն ալ կը շարունակէ նախորդի յաջող գործունէութիւնը: Իր գործունէութեան ժամանակաշրջանը կ'երկարի մինչեւ 1954ի Մարտ ամիսը:

20 Մարտ 1955ին, տեղի կ'ունենայ Հոմսի Հ.Մ.Լ.Մ.ի անդամական ընդհանուր ժողով: Ժողովէն ընտրուած վարչական կազմն է.-

Ատենապետ՝ Գուրգէն Պաղտասարեան

Ատենադպիր՝ Ճորճ Սիմոնեան

Գանձապահ՝ Գրիգոր Թաշճեան

Գոյքապահ՝ Գառնիկ Գալայճեան

Խորհրդական՝ Պետրոս Դուրեան:

Զատկական միջ-մասնաճիւղային խաղերուն

մասնաճիւղը կը մասնակցի Ֆուլթոնի խումբով, որուն անդամներն են Աբրահամ Գլըճեան, Հրաչ Եղիայեան, Վարդգէս Գլըճեան, Մովսէս Պետրոսեան, Սիմոն Քէօշկէրեան, Գրիգոր Նալպանտեան, Յակոբ Հեքիմեան, Արա Տէր Սարգիսեան, Սարգիս Մախսուումեան, Մանօ Խրլոբեան, Ալպէր Գօճաքաճայեան, Վարդան Փանպուլքեան եւ Ճորճ Սիմոնեան:

Վարչութիւնը կը ծրագրէ նաեւ Ֆուլթոնի սեփական դաշտ մը վարձել եւ յարդարել, հայերէն լեզուի գիշերային դասընթացք հաստատել եւ գայլիկներու վոհմակը վերակազմել: Այս ծրագիրներու իրականացման համար կը դիմէ Շրջանային վարչութեան: Վերջինս 275 լիբ. ոսկիով կը նպաստէ մասնաճիւղին: Դաշտի հողամասը սիրայօժար կը տրամադրեն Հայկազ Չոքքարեան, Վահան եւ Վարդան Չիլինկիրեաններ, Պետրոս Դուրեան եւ Սարգիս Սեփեթճեան:

Հակառակ վերոյիշեալ իրականացումներուն, 1955ը կ'ըլլայ տեղաբայի տարի մը եւս, քաղաքական պայմաններու բերմամբ ահումբը վեց ամիսով փակ կը մնայ, մինչեւ պետական նորարտօնագրի ստացում: Նոր արտօնագրով, մասնաճիւղը կը կոչուի Նէտի Նճմէ Ռիատի:

8 Փետրուար 1956ին, անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝ մասնակցութեամբ հետեւեալներուն.-

Ատենապետ՝ Մարտիրոս Յարութիւնեան

Փոխ ատենապետ՝ Գառնիկ Գալայճեան

Ատենադպիր՝ Սուրէն Սարգիսեան

Արաբերէնի քարտուղար՝ Հրաչ Եղիայեան

Գանձապահ՝ Սարգիս Սեփեթճեան

Հաշուապահ՝ Աբրահամ Գլըճեան

Խորհրդական՝ Գրիգոր Սասունեան:

Ահումբը, իր վերանորոգ եւ բարեզարդուած վիճակով, կրկին Հոմսի հայ երիտասարդութեան ժամադրավայրը կը դառնայ: Անդամներու ընդհանուր թիւն է 60:

1957ի անդամական ընդհանուր ժողովը՝ Յունուար 12ին, նախկին վարչական կազմը կարելոր համեմատութեամբ փոփոխութեան կ'են-

Թարկէ: Նոր վարչական կազմի անդամներն են.-
Ատենապետ՝ Գրիգոր Թաշճեան
Փոխ ատենապետ՝ Գարեգին Գրիշեան
Քարտուղար՝ Յարութիւն Տէր Սարգիսեան
Արաբերէնի քարտուղար՝ Հրաչ Եղիայեան
Գանձապահ՝ Մարտիրոս Յարութիւնեան
Հաշուապահ՝ Գառնիկ Գալայճեան
Մարզական պատասխանատու՝ Գէորգ Պարսուճեան:

Տարեշրջանի ընթացքին, քարիւղի ընկերութեան Պանիաս փոխադրուելուն առթիւ, շատ մը պաշտօնեայ Հ.Մ.Ը.Մ.ականներ կը ստիպուին տեղափոխուիլ, ինչ որ մեծապէս կը տկարացնէ մասնաճիւղի անդամներու թիւը: Այսուհանդերձ, մասնաճիւղը կը պահէ ֆուլթայոլի խումբը եւ ունի փինկ-փոնկ եւ թենիս կիրարկող մարզիկներ: Ակումբը, ուր կը գործէ նաեւ Հ.Յ.Դ. պատանեկան միութիւնը, ունի 135 հատոր գիրք: 1957 տարուան ելեւմուտքի պատկերն է. մուտք՝ 1827 ս. ոսկի, ելք՝ 1385 ս. ոսկի: Տնտեսական այս հաշիւին հաւասարակշռուած պատկերը ունենալու համար Շրջանային Վարչութեան գործիչ Լուտեր Մասպանաճեանը իր միջոցներով հայթայթած է 300 ս. ոսկի որուն առթիւ մասնաճիւղի վարչութիւնը 19 Նոյեմբեր թուակիր նամակով կը գրէ Շրջանային Վարչութեան. «Այս ձեւով մենք փրկուեցանք ծանր կացութենէն եւ այժմ Հ.Մ.Ը.Մ.ի ակումբը բաց է: Ներկայ տնտեսական եւ քաղաքական ծանր պայմաններու մէջ մենք կ'աշխատինք Հ.Մ.Ը.Մ.ի անունը բարձր պահել»:

Արդարեւ, 1958էն 1961 տարիները անհամեմատ դժուարին կացութեան առջեւ կը դնեն Հ.Մ.Ը.Մ.ի Հոմսի մասնաճիւղի ղեկավարութիւնը:

1961ին, նորընտիր վարչութիւնը հետեւեալ պատկերը կը ներկայացնէ.-

Ատենապետ՝ Միլթիհ Ռասլան
Բ. ատենապետ՝ Գարեգին Գրիշեան
Ատենադպիր՝ Սարգիս Սեփեթճեան
Գանձապահ՝ Ճորճ Չափրաստեան

Հաշուապահ՝ Ճորճ Պատուլեան
Մարզական պատասխանատու՝ ԵՈՒՍՈՒՔ Միհրան

Խորհրդական՝ Յովհաննէս Ջենեան:
Մասնաճիւղը գոյութիւնը կը պահէ փորձելով յարգել պետական նոր պայմանները, որոնք սակայն կը սպառեն Հոմսի հայութեան կարելիութիւնները եւ Հ.Մ.Ը.Մ.ի գոյութիւնը կը դարձնեն անուանական միայն:

ԳԱՄԻՇԼԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

1933էն սկսեալ գործող այս մասնաճիւղը տակաւին 1939ին Շրջանային Վարչութեան վերջնական վաւերացման կը սպասէ, պաշտօնապէս մաս կազմելու համար Միութեան ընդհանուր կառույցին:

16 Փետրուար 1939ին, անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ իր վարչական կազմը հետեւեալ ձեւով.-

Նախագահ եւ գանձապահ՝ Յովսէփ վարդապետ Լեւոնեան

Ատենապետ՝ Ներսէս Պոյաճեան
Ատենադպիր՝ Անդրանիկ Կօչկակարեան
Գանձիչ՝ Հայկազ Փուշուճեան
Գոյքապահ՝ Միքայէլ Զուլհակեան
Խորհրդական՝ Սարգիս Ադամեան
Սկաուտական խմբապետ՝ Զոհրապ Տէր Ղազարեան

Մարզական պատասխանատու՝ Յակոբ Մազլումեան:

Հիմնադրութեան օրերէն սկսած՝ ֆուլթայոլի ճիւղը կը շարունակէ իր գործունէութիւնը եւ կը դիմէ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան մասնակցելու համար Զատկական միջ-մասնաճիւղային խաղերուն: Սկաուտական բաժինը կը բաղկանայ 6 խմբակ սկաուտներէ եւ 4 խմբակ

գայիկներէ: 1939ին մասնաճիւղը կը կազմակերպէ սկաուտներու երդման արարողութիւն:

Համաշխարհային Երկրորդ Աշխարհամարտի պայմանները կը սահմանափակեն մասնաճիւղի ընդհանուր գործունէութիւնը: Այսուհանդերձ, մասնաճիւղը, 1946ին, կը յաջողի տիրանալ իր սեփական ակումբին, որուն 4000 ս.ոսկի փոխարժէքը կը վճարուի կէսով Հ.Մ.Ը.Մ.ի եւ Ս.Օ.Խաչի կողմէ եւ կէսով Ներսէս Թոմասեանի կողմէ, որ այս փոխատուութիւնը կը կատարէ սիրայօժար կերպով:

Նոյն տարուան աշնան, պաշտօնական հանդիսութեամբ մը, մասնաճիւղը կը կազմակերպէ ողիմպիական խաղեր, որուն նիւթական եկամուտը կը յատկացուի նորանկախ Սուրիոյ զինուորական օդուժին: Պաշտօնական անձնաւորութիւններու, յատկապէս Ճէզիրէի նահանգապետի ներկայացուցիչ Գայմաքամ Նաչէտ Պէյի եւ զինուորական բարձրաստիճան սպաներու ներկայութեամբ՝ այս հանդիսութեան կը մասնակցին Հալէպի մասնաճիւղի սկաուտները իրենց նշանաւոր նուագախումբի առաջնորդութեամբ, Ճէզիրէի այլ մասնաճիւղերու մարզական խումբերն ու սկաուտները՝ շուրջ 600 հոգի: Համայնքային կրօնապետներու շարքին է Խորէն Ծ. Վրդ Բարոյեանը, որուն գեղեցիկ ճառը՝ ուղղուած նահանգապետին, արաբերէնով կը կարդայ մուխթար Տիրան Մուրատեան: Ահաւասիկ այդ ճառէն բաժիններ.

«Վսեմութիւն,

Ճէզիրէի Հ.Մ.Ը.Մ.ը երկու ամիսներ առաջ, գեղեցիկ գաղափարը ունեցաւ կազմակերպելու ողիմպիական այս հոյակապ մարզահանդէսը ի նպաստ անկախ Սուրիոյ օդուժին»:

«Այս մարզատօնը առիթ մըն է դարձեալ, արտայայտելու հայ ժողովուրդին երախտագիտական մաքուր զգացումները զորս կը տածէ արաբական ազնիւ եւ հերոսական ժողովուրդին հանդէպ»:

«Նոր է սուրիական անկախ հայրենիքը, փոքր է տակաւին իր ազատութեան ճամբուն վրայ, բայց մեծ է ան իր ստեղծագործ ոգիով,

մեծ է ան իր հերոսութեամբ եւ մտքով: Բոլորուինք անոր շուրջ եւ աշխատինք անոր մեծութեան եւ վերելքին համար»- [ԽԵ/16 Հոկտ. 1946]:

Մասնաճիւղի պետական վաւերացումն ալ կ'ուշանայ եւ ստացուած արտօնագիրը կ'առկախուի մինչեւ 1948 թուականը, երբ վարչութեան ատենապետ Կարպիս Գալայճեանի եւ ատենադպիր Լեւոն Առաքելեանի օրով կը վերանորոգուի:



Գամիշլիի Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի խումբը 1949ին

1949ի Փետրուարին ընտրուած վարչութիւնը կը ստանայ Շրջանային Վարչութեան վաւերացումը եւ կը նախաձեռնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 30ամեակի տօնակատարութեան:

Այնուհետեւ մասնաճիւղի ֆուլթպոլի խումբի եւ սկաուտներու մասնակցութիւնը Զատկական միջ-մասնաճիւղային հանդիպումներուն կը դառնայ մնայուն: 1950ի վերջաւորութեան մասնաճիւղը ունի 204 անդամ, որոնցմէ՝ 27 օժանդակ անդամներ, 27 մարզիկներ եւ 150 սկաուտական շարքերէն: Կը պահէ զոյգ ֆուլթպոլի խումբեր եւ 1 պասքեթպոլի խումբ:

24 Ապրիլ 1951ի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութիւնը կը ներկայանայ հետեւեալ կազմով.-

Ատենապետ՝ Կարպիս Գալայճեան
Փոխ ատենապետ՝ Գեղամ Սիսեռեան
Ատենադպիր՝ Կարապետ Պետրոսեան

Բ. ատենադպիր եւ գոյքապահ՝ Տիրան Աւագեան

Գանձապահ՝ Լեւոն Առաքելեան

Խորհրդականներ՝ Անդրանիկ Հեքիմեան, Յովհաննէս Շահինեան

Սկաուտական ներկայացուցիչ՝ Կարապետ Գալուստեան:

Վարչութիւնը, զօրացնելու համար սկաուտական շարժումը, փոխ խմբապետ Մարտիրոս Նալպանտեանին խմբապետի աստիճան կը շնորհէ: Այս որոշումը Շրջանային Վարչութեան վաւերացման կ'արժանանայ:

1952ի Ապրիլին, առաջին անգամ ըլլալով, մասնաճիւղը Զատկական միջ-մասնաճիւղային խաղերուն կը մասնակցի սկաուտներու եւ Ֆուտպոլի խումբի կողքին նաեւ պասքեթպոլի խումբով մը: Պասքեթպոլի խումբին մաս կը կազմեն Գեղամ Սիսեռեան, Աբրահամ Գասպարեան, Յարութիւն Էքմէքճեան, Յակոբ Ֆերմանեան, Սերոբ Թադէոսեան, Արամ Խաչատուրեան, Անթուան Գասպարեան, Ճորճ Սապունճեան, Միհրան Պետրոսեան, Յակոբ Մալխասեան, Գառնիկ Զարճաֆեան եւ Յովհաննէս Կարապետեան:

Իսկ Ֆուտպոլի խումբին մաս կը կազմեն Աբրահամ Գասպարեան, Արմէն Կարապետեան, Տիգրան Յովսէփեան, Զաւէն Սայրեան, Անդրանիկ Հեքիմեան, Անթուան Գասպարեան, Յակոբ Եմէնեան, Յարութիւն Էքմէքճեան, Պաղտասար Թիւլպենտեան, Մկրտիչ Մկրտիչեան, Յակոբ Մինասեան, Պօղոս Աւետիսեան, Սերոբ Գալայճեան, Վազգէն Գէորգեան եւ Կարապետ Աբրահամեան:

1952-53 տարեշրջանի վարչական կազմի անդամներն են.-

Ատենապետ՝ Կարպիս Գալայճեան

Փոխ ատենապետ՝ Գեղամ Սիսեռեան

Ատենադպիր՝ Զաւէն Սայրեան

Բ. ատենադպիր՝ Մկրտիչ Մկրտիչեան (աւելի ուշ՝ փոխարինուած Աբրահամ Գասպարեանով):

Հաշուապահ՝ Ճորճ Սապունճեան

Խորհրդականներ՝ Անդրանիկ Հեքիմեան, Յովհաննէս Շահինեան, Անթուան Գասպարեան, Աբրահամ Գասպարեան, Տիգրան Յովսէփեան:

Մասնաճիւղը իր մարզական գործունէութեան զարկ տալու նպատակով կը դիմէ Շրջանային Վարչութեան խնդրելով, որ իրեն ուղարկուի պասքեթպոլի նորագոյն օրինազիրքը, նոր պայմաններով մարզելու համար պասքեթպոլի խումբը: Անդամներու թիւը բնական աճ մը արձանագրելով կը բարձրանայ 203ի, հետեւեալ բաժանումներով. մարզիկներ՝ 62, սկաուտներ՝ 67, գայլիկներ՝ 18, օժանդակ անդամներ՝ 56: Իսկ մասնաճիւղի կիրարկած մարզական ճիւղերն են՝ Ֆուտպոլ, պասքեթպոլ, վոլիպոլ, փինկ-փոնկ եւ մարմնամշակում:

Այս վարչութիւնն ալ կը հետապնդէ մասնաճիւղի արտօնագրի ստացման ձեւակերպութիւնները, միաժամանակ փորձելով ապահովել Ֆուտպոլի մարզադաշտ մը եւ օրինականացնելով աւուստի շէնքի իրաւատիրոջ՝ Ներսէս Թովմասեանի հետ կալուածի պատկանելիութեան հարցը: Շրջանային Վարչութիւնը կ'որոշէ, որ կալուածը արձանագրուի Ազգային Առաջնորդարանի անուան, նոտարի մօտ աւուստի շէնքի կալուածի պատկանելիութեան հարցը: Շրջանային Վարչութիւնը կ'որոշէ, որ կալուածը արձանագրուի Ազգային Առաջնորդարանի անուան, նոտարի մօտ աւուստի շէնքի կալուածի պատկանելիութեան հարցը: Շրջանային Վարչութիւնը կ'որոշէ, որ կալուածը արձանագրուի Ազգային Առաջնորդարանի անուան, նոտարի մօտ աւուստի շէնքի կալուածի պատկանելիութեան հարցը: Շրջանային Վարչութիւնը կ'որոշէ, որ կալուածը արձանագրուի Ազգային Առաջնորդարանի անուան, նոտարի մօտ աւուստի շէնքի կալուածի պատկանելիութեան հարցը:

Սուրիոյ, Լիբանանի եւ Յորդանանի 12րդ Շրջանային Պատգամաւորական Ժողովէն վերադարձին, լսելէ ետք ներկայացուցիչներու զեկու-



Գամիշլիի Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի խումբը 1955ին

ցումը, 8 Մայիս 1955ի անդամական ընդհանուր ժողովին ընտրուած վարչութիւնը իր դիւանը կը կազմէ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Գաբրիէլ Սարգիսեան
 Փոխ ատենապետ՝ Կարպիս Գալայճեան
 Ատենադպիր՝ Անդրանիկ Խաչատուրեան
 Բ. ատենադպիր՝ արաբերէնի՝ Պերճ Սանոյեան

Գանձապահ՝ Գէորգ Սապունճեան
 Հաշուապահ՝ Զաւէն Սայրեան
 Խորհրդականներ՝ Աբրահամ Գասպարեան,
 Տիգրան Յովսէփեան, Սարգիս Իսբէնճեան:

Վերոյիշեալ կազմի ութամսեայ գործունէութենէն ետք, 22 Յունուար 1956ի անդամական ընդհանուր ժողովին ընտրուած վարչութեան կազմն է հետեւեալը.-

Ատենապետ՝ Գաբրիէլ Սարգիսեան
 Փոխ ատենապետ՝ Յովհաննէս Շահինեան
 Ատենադպիր՝ Յովսէփ Շմաւոնեան
 Բ. ատենադպիր՝ Պէհճէթ Սանոյեան
 Գանձապահ՝ Աբրահամ Գասպարեան
 Հաշուապահ՝ Ճորճ Սապունճեան
 Խորհրդականներ՝ Զաւէն Սայրեան, Տիգրան Յովսէփեան, Սարգիս Իսբէնճեան:

Այս կազմին գլխաւոր եւ անմիջական գործը կ'ըլլայ ակումբի շէնքի վերաշինութիւնը, որուն համար մասնաճիւղի գանձը ունի շուրջ 8000 ս.ոսկի պատրաստ գումար եւ կը խնդրէ Շրջանային Վարչութեան մասնակցութիւնը, ծրագիրը ամբողջացնելու նպատակով: Վարչութեան նախատեսած ծրագիրը աշխատանքներու ընթացքին կը զարգանայ եւ նորակերտ երկյարկանի ակումբը իր ընդարձակ սրահով եւ մասնակի բաժիններով կ'արժէ շուրջ 60.000 ս.ոսկի: Շրջանային Վարչութիւնը կը նպաստէ այս աշխատանքին նիւթական համեստ մասնակցութեամբ, եւ կը գրէ մասնաճիւղին.-

«Եթէ երբեք վարչութեանս գանձը թոյլ տար, անկասկածօրէն պիտի ուլէինք աւելիով աջակցիլ ձեզի: Ինչպէս կը պարպուի ձեր վեկուցումէն, շէնքը որ սկսած էք բարձրացնել, Հ.Մ.Ը.Մ.ի ակումբի մը սահմաններէն դուրս կու գայ եւ կը դառնայ գաղութիդ մարպական, մշակութային եւ գեղարուեստական շարժումի կեդրոնը, ուր Հ.Մ.Ը.Մ.ի մեր եղբայրներուն հետ, պիտի կարողանան նաեւ ձեր շրջանի մեր բոլոր ապգակիցները իրենց սրտի եւ հոգիի պահանջներու գոհացումը ստանալ»:

1956 Սեպտեմբեր 3էն 22, մասնաճիւղի անդամներէն Զաւէն Սայրեան, Յովսէփ Շմաւոնեան եւ Սարգիս Իսբէնճեան Պէյրութի մէջ կը հետեւին Շրջանային Վարչութեան կազմակերպած մարզական դպրոցին:

3 Փետրուար 1957ին, անդամական ընդհանուր ժողովը փոքր փոփոխութեամբ կը վերընտրէ նախկին վարչական կազմը, ուր Անթուան Գասպուն կը փոխարինէ Պէհճէթ Սանոյեանը եւ Սերոբ Թադէոսեանը՝ Ճորճ Սապունճեանը: Վարչական կազմի այս ընտրութիւնը Շրջանային Վարչութեան հաղորդող 7 Փետրուար 1957 թուակիր նամակը նաեւ կը տեղեկացնէր, թէ շրջանաւարտ վարչութիւնը, մասնաճիւղի 71 անդամներ մեկուսացուցած է իրենց նիւթական եւ բարոյական պարտականութեանց մէջ թերացած ըլլալուն պատճառով: Շրջանային Վարչութեան հակազդեցութեան վրայ, նորընտիր վարչութիւնը կը գրէ, թէ «... իր կարելին պիտի ընէ, որպէսպի օրինապանց այս տղաքը, իրենց պարտականութեանց եւ պարտաւորութեանց գիտակցութեանը բերէ»:

Շրջանային Վարչութեան գործիչը՝ Լուտեր Մասպանճեան կը միջամտէ կացութիւնը փրկելու նպատակով: Միջամտութիւնը կը ձախողի:

Շրջանայինը կը լուծէ ընտրեալ վարչութիւնը եւ 27 Ապրիլ 1957 թուակիր նամակով վեց ամսուայ համար վարչական կը նշանակէ հետեւեալ կազմը.-

Ատենապետ՝ Կարպիս Գալայճեան
 Փոխ ատենապետ՝ Գաբրիէլ Սարգիսեան
 Ատենադպիր՝ Անդրանիկ Խաչատուրեան
 Գանձապահ՝ Միհրան Պետրոսեան

Հաշուապահ՝ Աբրահամ Գասպարեան
Արաբերէնի քարտուղար՝ Ժան Եէմէնեան
Մարզական եւ սկաուտական՝ Զաւէն Սայրեան:

Գաբրիէլ Սարգիսեան, մերժելով գործակցիչ նշանակեալ վարչութեան, աւելի ուշ կը փոխարինուի Անթուան Գասպոյով:

Այս նշանակումը Գամիշլիի բացառիկ անդամական ընդհանուր ժողովին կը հաղորդուի Շրջանային Վարչութեան ատենադպիր Տոքթ. Յակոբ Պերպէրեանի կողմէ, որ յատուկ առաքելութեամբ կը գտնուի Գամիշլի: Շրջանային Վարչութեան այս կարգադրութեան դէմ բողոքողներէն երեք անդամներ կը պատժուին Շրջանային Վարչութեան կողմէ: Մասնաճիւղը այնուհետեւ կը վերագտնէ իր գործունէութեան բնականոն հունը:

Մասնաճիւղը կրթական նախարարութենէն կը ստանայ թիւ 794 արտօնագիրը՝ 21 Յունիս 1957 թուակիր, «Նէտի Գամիշլի Ռիատի» անունով:

26 Յունուար 1958ին, տեղի կ'ունենայ անդամական ընդհանուր ժողով, նախագահութեամբ՝ Յ. Գալուստեանի եւ քարտուղարութեամբ Ա. Առաքելեանի: 95 անդամներ ներկայ են սոյն ժողովին: Կը կարգացուի 1957 տարեշրջանի գործունէութեան տեղեկագիրը, ըստ որուն մասնաճիւղը կը հաշուէ 227 անդամ, բաժնուած հետեւեալ ձեւով, սկաուտներ՝ 60, մարզիկներ՝ 25, օժանդակ անդամներ՝ 142: Մասնաճիւղի կիրարկած մարզական ճիւղերն են Ֆուլթպոլը, պասքեթպոլը, վոլիպոլը եւ փինկփոնկը: Մարզական մրցումներ կը կազմակերպուին Հասիչէի եւ Տէրպէսիէի քոյր մասնաճիւղերու խումբերուն դէմ: Սկաուտական խումբերը կը վարէ Զաւէն Սայրեանը, իր մարզական բաժիններով: Ունին սկաուտական փոքր նուագախումբ մը: Ասոնց կողքին, եւ օժանդակութեամբ Հայէպէն ժամանած Արփիար Վարդեանի, Գամիշլիի Հ.Մ.Ը.Մ.ը կը զարգացնէ թատերական գործունէութիւն, ներկայացնելով յաջորդական զանազան թատերախաղեր: Այս գործու-

նէութեան կը նպաստեն նորակերտ ակումբի ընձեռած դիւրութիւնները՝ ընդարձակ սրահ, բեմ եւայլն: Գամիշլիի հայութիւնը կը խմբուի մասնաճիւղին շուրջ, որ ակումբի շինութեան շուրջ 60.000 սուրիական թղթոսկի ընդհանուր գումարին գլխաւոր բաժինը նուիրած է ինքը: Կը մնայ այդ առթիւ գոյացած 14.000 ոսկի բացի պարագան, որուն մեծ մասը սիրայօժար կերպով փոխտուած է վարչութեան փոխ ատենապետ Անթուան Գասպոն:

Յետ մասնաճիւղի պատգամաւորներու կողմէ տրուած Սուրիոյ, Լիբանանի եւ Յորդանանի 14րդ Շրջանային Պատգամաւորական ժողովի մասին զեկուցումին, 1958 տարեշրջանի համար վարչական անդամներ կ'ընտրուին հետեւեալները.-

Ատենապետ՝ Կարպիս Գալայճեան
Փոխ ատենապետ՝ Անթուան Գասպո
Ատենադպիր՝ Յակոբ Մկրտիչեան
Արաբերէնի ատենադպիր՝ Ժան Եէմէնեան
Գանձապահ՝ Միհրան Պետրոսեան
Հաշուապահ՝ Անդրանիկ Լ. Խաչատուրեան
Սկաուտական պետ՝ Զաւէն Սայրեան
Մարզական պատասխանատու՝ Արմէն Կարապետեան

Խորհրդական՝ Յարութիւն Աճէմեան:
1958 տարին կ'ըլլայ յաջող գործունէութեան տարի մը՝ կազմակերպական, մարզական, սկաուտական եւ հրապարակային ելոյթներու բաժիններով: Անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 300ի: Տարուան ընդհանուր մուտքի գումարն է 8769 ս.ոսկի, ելք՝ 8224 ս.ոսկի:

Լսելէ ետք վերոյիշեալ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը եւ զայն որակելով «գնահատելի», 25 Յունուար 1959ին, անդամական ընդհանուր ժողովը կը վերընտրէ նախորդ տարուան վարչական կազմը բացի Զաւէն Սայրեանէն եւ Յարութիւն Աճէմեանէն, որոնք կը փոխարինուին Թադէոս Յովսէփեանով եւ Ճորճ Սապունճեանով:

1959ի Զատիկական միջ-մասնաճիւղային խաղերուն մասնաճիւղը կը մասնակցի Ֆուլթպոլի

եւ պասքեթպոլի խումբերով: Ֆուտպոլի խումբին մաս կը կազմեն Յովհաննէս Աբրահամեան, Սերոբ Գալայճեան, Անդրանիկ Կիւրճեան, Յովսէփ Պասմաճեան, Յովսէփ Կարապետեան, Լեւոն Կարապետեան, Ղուկաս Սեդրակեան, Լեւոն Հացարարեան, Վարդգէս Նազարէթեան, Մեսրոպ Յովհաննէսեան, Զաւէն Գասպարեան, Երուանդ Միսաքեան, Ժան Եէմէնեան, Սեդրակ Մելքոնեան, Լեւոն Օհանեան, Արամ Ղազարեան, Գէորգ Պետրոսեան, Արմէն Կարապետեան, Յովհաննէս Կարապետեան եւ Արմենակ Խաչատուրեան:

Պասքեթպոլի խումբին մաս կը կազմեն Յարութիւն Մաթֆոնեան, Յակոբ Հացարարեան, Միշել Ասատուրեան, Բաբգէն Մալխասեան, Թոմասեան, Վարդէս Սիմոնեան, Յակոբ Յակոբեան եւ Յակոբ Յովհաննէսեան:

Շրջանային Վարչութեան կազմակերպած ամառնային մարզական դասընթացքին մասնաճիւղին կողմէ կը մասնակցին՝ Մկրտիչ Միրզոյեան՝ ֆուտպոլ եւ Վարդգէս Սիմոնեան՝ պասքեթպոլ:

Միաժամանակ, զոյգ անդամները պիտի հետեւէին սկաուտական աստիճանաւորներու պատրաստութեան բանակումին: Առաջինը՝ իբրեւ աքելլա, իսկ երկրորդը՝ իբրեւ սկաուտ խմբապետ: Մասնաճիւղը իր 150ի հասնող սկաուտական շարքերով մեծ կարիքը ունի պատրաստուած սկաուտ վարիչներու:

1959 եւ 1960 տարիներու վարչութեանց մնայուն մտահոգութիւնն է աւելցնել շինութեան առթիւ ստեղծուած պարտքի փակումը: Շրջանային Վարչութիւնը մասնաճիւղի այս դժուարութեան օժանդակելու համար 1500 ս.ոսկի փոխատուութիւն մը կը կատարէ: Սակայն, տակաւին ճիգ պէտք է ամբողջացնելու համար գոյացած բացը:

12 Մարտ 1961ին, աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարութեան ներկայացուցիչի հովանաւորութեամբ կը գումարուի անդամական ընդհանուր ժողով: Ներկայացուած 7 թեկնածուները ինքնաբերաբար ընտրուած կը

համարուին եւ կը կազմեն դիւանը հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Տոքթ. Սեպուհ Սիսեռեան
Փոխ ատենապետ՝ Կարպիս Գալայճեան
Ատենադպիր՝ Ժագ Շահին
Բ. ատենադպիր՝ Ասատուր Պօղոսեան
Գանձապահ՝ Սերոբ Թադէոսեան
Հաշուապահ՝ Իզգէթ Ապտել Ռազաք
Օգնական հաշուապահ՝ Թադէոս Պաղիկեան:

Վերոյիշեալ կազմի գործունէութիւնը պիտի երկարէր 17 ամիսներու վրայ, երբ, 19 Օգոստոս 1962ին, անդամական ընդհանուր ժողովը, նախագահութեամբ կրթական քննիչ Մահմուտ Ռահապիի, նոր ընտրուելիք վարչական 7 թեկնածուները ինքնաբերաբար ընտրուած կը համարէ: Վարչութեան անդամներն են Ասատուր Պօղոսեան, Ճորճ Սապունճեան, Միհրան Պետրոսեան, Թադէոս Պաղիկեան, Վարդգէս Սիմոնեան, Զաւէն Գասպարեան եւ Անդրանիկ Խաչատուրեան: Մեկնումի կամ հրաժարումի պատճառով փոխարինող վարչականներ կը նշանակուին Յակոբ Մկրտիչեան, Պետրոս Մովսէսեան եւ Զաւէն Ղազարեան:

1963ի սկիզբը պետական դասաւորումներու պատճառով Գամիշլիի Հ.Մ.Ը.Մ.ը եւ Նէտի Արապին կը միացուին որպէս մէկ կազմակերպութիւն «Նէտի Թալիա» անուան տակ: Ակումբի շէնքը կը յանձնուի Ազգային վարժարանին, որու արտօնագրով կը գործէ նաեւ սկաուտական բաժինը: Այս կարգադրութիւններով գործունէութեան երբեմնի ուժը զգալի փոփոխութեան կ'ենթարկուի եւ փորձառական շրջան մը կը բոլորէ մինչեւ 1966 թուականը:

12 Յունիս 1966 թուակիր նամակով Շրջանային Վարչութիւնը Գամիշլիի աւելցնելով վարչութեան անդամ կը նշանակէ հետեւեալները.- Ճորճ Սապունճեան, Տիգրան Խաչատուրեան, Վարդգէս Սիմոնեան, Զաւէն Գասպարեան, Յակոբ Ֆերմանեան, Կարպիս Գալայճեան եւ Կարապետ Աբրահամեան: Ակումբի վարչութեան պարտականութիւն կը տրուի ի մի հաւաքել Գա-

միշտի Հ.Մ.Ը.Մ-ի գոյքերը եւ գանձին պատ-
րաստ գումարը, անձեռնմխելի կերպով պահ
դրուելու համար ցնոր տնօրինութիւն:

Սկսած սկսած քաղաքը, իբրեւ Ազգային վար-
ժարանի ենթակայ միակոր, կը շարունակէ գոր-
ծել վարժարանի թաղականութեան հովանաւո-
րութեամբ:

Այսպէսով, Գամիշի Հ.Մ.Ը.Մ-ը կը դադրի
ընթացիկ հասկացողութեամբ իբր մասնաճիւղ
գործելէ:

Նոր շրջանի գործունէութեան մասին պիտի
լսենք երրորդ հատորին մէջ:

ՌԱՍ ԻԻԼ ԱՅՆ

Հ.Մ.Ը.Մ-ի Ռաս ԻԻԼ Այնի մասնաճիւղի վար-
չութիւնը՝ վաւերացուած Շրջանային Վարչու-
թեան 15 Ապրիլ 1939ի նիստի ընթացքին, իր
գործունէութիւնը շարունակեց մինչեւ 1940ի
աշնան, երբ վրայ հասան Համաշխարհային Ընդ-
հանուր Պատերազմի դժուարին օրերը:

1946-47 տարիներուն, դէպի Հայրենիք ներ-
գաղթի պատճառով, պարտադրեալ հրաժարա-
կանները ժխտական արդիւնքներու պատճառ կը
դառնան: 1946ին, 20 անդամներ կը հրաժարին
Հ.Մ.Ը.Մ-էն: Մնացեալները վերակազմուելով
վարչական անդամներ կը նշանակեն Մկրտիչ
Ասատուրեանը, Կ. Գալայճեանը եւ Տիգրան
Էնոյեանը, որոնք կը վերականգնեն Ռաս ԻԻԼ Այ-
նի մասնաճիւղը:

1947ի վարչութեան դիւանի անդամներն են՝
Յարութիւն Պօղոսեան՝ ատենապետ
Ա. Եղուպեան՝ ատենադպիր:

Մասնաճիւղի Ֆուլթայոլի խումբը կը մաս-
նակցի Զատկական միջ-մասնաճիւղային Ֆուլթ-
այոլի մրցաշարքին, մեծ խանդավառութիւն
ստեղծելով Հ.Մ.Ը.Մ-ի շուրջ: Մասնաճիւղը կը
տօնէ Սուրիոյ անկախութեան տարեդարձը, ինչ-
պէս նաեւ Ապրիլ 24ի սգատօնը: Կը նորոգէ իր
արտօնագիրը՝ Նէտի Ալապ Բիատիէ կոչումով:

Իբր նստավայր 1947ին կը վարձէ սենեակ մը
տարեկան 160 ս.ոսկիով:

1949ին Ֆուլթայոլի կազմը կրկին կը մաս-
նակցի միջ-մասնաճիւղային Զատկական խաղե-
րու Գ. դասակարգի մրցաշարքին: Սակայն
սկսած սկսած կազմը բացակայ է Քեսապի մէջ
կայացող միջ-մասնաճիւղային բանակումէն,
նիւթական անձուկ պայմաններու բերումով:

1950ին, մասնաճիւղը կը հաշուէ ընդհա-
նուրը 32 անդամ, որոնց 16ը սկսած սկսած շար-
քերէն:

Կիրարկուող մարզական ճիւղն է Ֆուլթայո-
լը: Մարզական եւ սկսած սկսած գործունէու-
թեան առընթեր մասնաճիւղը ունի 67 հատոր
հաշուող գրադարան, փոքր սկսած սկսած նուա-
զախումբ, եւ կը կազմակերպէ թատերական
ներկայացումներ:

17 Յունիս, 1951ին, անդամական ընդհանուր
ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ.-
Ատենապետ՝ Ժոզէֆ Տէմիրճեան
Ատենադպիր՝ Հրայր Սարգիսեան
Գանձապահ՝ Տիգրան Էնոյեան
Խորհրդականներ՝ Յակոբ Գէորգեան,
Մկրտիչ Ասատուրեան:

Այս տարեշրջանին մասնաճիւղի անդամա-
կան թիւը զգալի աճ մը կ'արձանագրէ, ընդհա-
նուրը 73 անդամ: Վարձու աւուրի սահմաննե-
րը նեղ ըլլալուն, վարչութիւնը կ'որոշէ աւուրի
մը շինել եւ կը ձեռնարկէ հանգանակութեան:
Հողատէրեր կը նպաստեն այս նպատակին
Հ.Մ.Ը.Մ-ի հաշուոյն ցանքեր կատարելով եւ
հունձքի եկամուտը տրամադրելով մասնաճիւղի
գանձին: Կը կազմակերպեն նաեւ 1000 տոմսա-
կով վիճակահանութիւն՝ իւրաքանչիւր տոմսը 3
սուրիական ոսկինոց: Այս տոմսերը կը ծրագրեն
սպառել քոյր մասնաճիւղերու շրջաններէն ներս
եւ այս նպատակով կը դիմեն Շրջանային Վար-
չութեան: Վերջինս իր կարգին աւուրի շինու-
թեան ծրագրին կը մասնակցի 200 ս.ոսկիով:

1954ի Զատկին, մասնաճիւղի Ֆուլթայոլի
խումբը Հալէպի մէջ կը մասնակցի միջ-մասնա-

ճիւղային ֆուտպոլի Գ. դասակարգի մրցաշարքին: Խուճմբի խաղացողներն են՝ Հրայր Կակէեան (խմբապետ), Հրայր Սարգիսեան, Յարութիւն Խրոյեան, Անդրանիկ Էմերեան, Յովսէփ Պասմաճեան, Կարապետ Քահրեճեան, Անդրանիկ Գրիգորեան, Պետրոս Կարապետեան, Յակոբ Տիգրանեան, Գէորգ Չէմպճեան, Յակոբ Պասմաճեան, Պետրոս Յովհաննէսեան, եւ Ճան Էմերեան: 17 սկաուտներ եւ Ս.Օ.Խաչի 13 արծուիկներ եւս մաս կը կազմեն Հալէպ մեկնողներու խուճմբին:

Տարուէ տարի կը զօրանայ ու հաստատուն կը դառնայ Ռաս Իւլ Այնի Հ.Մ.Ը.Մ-ը: Սակայն աւուճմբի շինութեան ծրագիրը կը ձախողի եւ յաջորդող տարիներուն, այս նպատակով գոյացած 1000 ս.ոսկին կը մնայ անձեռնմխելի գումար:

1954, Մարտ 7ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն կ'ընտրուի հետեւեալ վարչական կազմը.-

- Ատենապետ՝ Մկրտիչ Ասատուրեան
- Ատենադպիր՝ Հրայր Սարգիսեան
- Գանձապահ՝ Տիգրան Էնոյեան

Խորհրդականներ՝ Յակոբ Գէորգեան, Յովսէփ Պասմաճեան:

Շարք մը մեկնումներու պատճառով, 1955ի անդամական պատկերը նախորդէն նուազ թիւերով կը ներկայանայ. օժանդակ եւ մարզիկ անդամներ՝ 17, սկաուտական շարքեր՝ 38: Գրադարանը ճոխացած է նոր գիրքերով՝ 102 հատոր: Իբրեւ նստավայր կ'օգտագործուի Ազգային վարժարանի սրահը:

1954ի վարչական կազմը, վերընտրուելով պաշտօնի վրայ կը մնայ մինչեւ 1957 թուականը, սակայն մասնաճիւղը յատկանշական ոչ մէկ յառաջդիմութիւն կ'արձանագրէ եւ թուլցած պատկեր մը կը ներկայացնէ:

1958ի կիսուն պասքեթպոլի կիրարկումը նոր թափ կու տայ մասնաճիւղի գործունէութեան: Ռաս Իւլ Այնի Հ.Մ.Ը.Մ-ի աղջկանց խումբն է, որ ճամբայ կը բանայ այս մարզախաղին, Աղաճան Թեմեզեանի եւ Աւետիս Մատալեանի նա-



Ռաս Իւլ Այնի Հ.Մ.Ը.Մ-ի պասքեթպոլի աղջկանց խումբը 1959ին

խաձեռնութեամբ: Նոյն տարին կը կազմուի նաեւ տղոց խումբը եւ կը հարթուի պասքեթպոլի դաշտը՝ Ազգային վարժարանի բակին մէջ:

1959ի միջ-մասնաճիւղային հանդիպումներուն պասքեթպոլի աղջկանց կազմը յաղթանակ մը կ'արձանագրէ Թրիփոլի մասնաճիւղի խումբին դէմ: Նոյն աւթիւ ֆուտպոլի նորակազմ խումբը կը տիրանայ Գ. դասակարգի ախոյեանութեան բաժակին: Այս յաղթանակները նպաստաւոր անդրադարձ կ'ունենան մասնաճիւղի մարզական գործունէութեան վրայ: Յաջորդող ամիսներուն Ռաս Իւլ Այնի ֆուտպոլի կազմը հանդիպումներ կ'ունենայ ոչ միայն մօտակայ մասնաճիւղերուն այլ հեռաւոր Հալէպի մասնաճիւղի երկրորդական խումբերուն դէմ՝ հաւասար արդիւնքներով-[ՃԳ/50.14]:

1960ի 15րդ միջ-մասնաճիւղային խաղերուն Ռաս Իւլ Այնի մասնաճիւղի ֆուտպոլի եւ պասքեթպոլի խումբերը իրենց մասնակցութիւնը կը բերեն իբրեւ Բ. դասակարգի խումբեր:

25 Հոկտեմբեր 1961ի նիստին, Շրջանային վարչութեան ատենադպիր՝ Տոքթ. Յակոբ Պերպէրեան ձեզիրէի շրջանին տուած այցելութիւններէն վերադարձին, իր զեկուցումով կը յայտնէ, թէ Ռաս Իւլ Այնի մասնաճիւղն ալ, Սուրիոյ բոլոր փոքր մասնաճիւղերուն նման, դադրած է գործելէ:

ՀԱՍԻՉԻ

Հ.Մ.Ը.Մ-ի Հասիչէի մասնաճիւղը իր հիմնադրութենէն՝ 1939, կարճ ժամանակ մը ետք կը մատնուի ամլութեան, համաշխարհային Բ. Ընդհանուր Պատերազմի պարտադրած պայմաններու բերումով:

1941ի սկիզբը մասնաճիւղի անդամները կրկին կը հաւաքուին կեանքի վերակոչելու համար Հասիչէի մասնաճիւղը: Այսպէս, 15 Յունուար 1941ի անդամական ընդհանուր ժողովին, յաջորդական երեք նիստերով, մասնաճիւղը կ'ընտրէ իր վարչական կազմը հետեւեալ ձեւով:-

- Ատենապետ՝ Յովսէփ Երէցեան
- Ատենադպիր՝ Եփրատ Գուշաքճեան

Խորհրդականներ՝ Աւետիս Երանոսեան, Աւետիս Գալայճեան, Կարապետ Եղիայեան:

Այս կազմին միամեայ գործունէութիւնն ալ դանդաղ կ'ընթանայ, ներքին դժուարութիւններու պատճառով:

1942ի սկիզբը վարչական կազմին կը միանայ Հասիչէի վարժարանի ուսուցիչ Կարպիս Գալայճեանը: Վարչութիւնը կը դիմէ Հալէպի մասնաճիւղին, ստանալու համար մարզական եւ սկաուտական տարազներ եւ գոյքեր: Տարեշրջանի աւարտին մասնաճիւղի գոյգ պատգամաւորները կը մասնակցին Շրջանի 7րդ Պատգամաւորական ժողովին:

1943 տարուան վարչական կազմի անդամներն են Լեւոն Ռշտունի, Կարպիս Գալայճեան, Կարապետ Եղիայեան, Եփրատ Գուշաքճեան եւ Ս. Սերոբեան:

1948ի սկիզբը Հասիչէի Հ.Մ.Ը.Մ-ը կը տիրանայ հողաչերտի մը, որուն վրայ կը ծրագրէ կառուցել մասնաճիւղի ակումբը: Ակումբի շինութիւնը երկար ժամանակ կը մնայ կիսաւարտ, նիւթական միջոցներու անբաւարարութեան պատճառով: 1951ի աշնան տազնապը կը սրի կիսաւարտ ակումբի պետական գրաւման վտանգին պատճառով: Հալէպի վարչութիւնը այս կացութիւնը Շրջանային Վարչութեան ուղարկութեան կը յանձնէ: Շրջանայինը 500 ոսկիով

կը նպաստէ ակումբի շինութեան ծրագրին: Ծրագրին կը նպաստեն նաեւ Հալէպի Ս.Օ.Խաչի մասնաճիւղը 500 ոսկիով եւ Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղը՝ 1000 ոսկիով:

18 Հոկտեմբեր 1951ին, անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչութիւն:-

- Ատենապետ՝ Լեւոն Նաճարեան
- Ատենադպիր եւ գանձապահ՝ Ժան Ետալեան

Մարզական պատասխանատու եւ գոյքապահ՝ Կարապետ Մուրալեան

Խորհրդականներ՝ Կարապետ Ռշտունի, Յովհաննէս Լէպլէպճեան:

Աշխատանքներու այս բաժանումը 1951-1952 տարեշրջանի ընթացքին փոփոխութեան կ'ենթարկուի հետեւեալ պատկերով:-

- Ատենապետ՝ Կարապետ Մուրալեան
- Ատենադպիր՝ Լեւոն Նաճարեան
- Գանձապահ՝ Ժան Ետալեան

Մարզական պատասխանատու՝ Կարապետ Ռշտունի

Խորհրդական՝ Յովհաննէս Ստեփանեան:

Այս կազմը կ'ամբողջացնէ ակումբի շինարարական աշխատանքները, մինչ 1953ը անգործունէութեան վիճակ մը կը բոլորէ:

11 Մարտ 1954ին, կ'ընտրուի նոր վարչական կազմ:-

- Ատենապետ՝ Սերոբ Երէցեան
- Փոխ ատենապետ՝ Թորգոմ Երիտեան
- Ատենադպիր՝ Յակոբ Մկրտիչեան
- Գանձապահ՝ Ժան Ետալեան
- Վերաքննիչ՝ Վիքթոր Մրշօ

Մարզական պատասխանատուներ՝ Կարապետ Ռշտունի, Անդրանիկ Սապունճեան:

Մասնաճիւղը կը վերանուանուի «Նէտի Քաուքապ» անունով եւ կը դիմեն պետական արտօնագրի ստացման:

1955ին անդամներու ընդհանուր թիւն է 40, որոնք կը կիրարկեն ֆութպոլ, պասքէթպոլ եւ փինկ-փոնկ: Կը ծրագրեն աւելցնել նաեւ վոլբպոլ եւ ծանրաբարձութիւն: Կը կազմուին նաեւ 25 հոգինոց սկաուտական կազմ եւ 15 արծուիկ-



Հասիչէի մասնաճիւղի
1955 տարուայ ֆուլթպոլի խումբը

ներ, որոնք պէտք է տարազաւորել: Ակումբի կալուածը ունի 360 քառակուսի մետր տարածութիւն եւ կը պարփակէ 20x5 մ. չափերով սրահ մը, ուր կը կայանան հայկական շրջանակի բոլոր ձեռնարկները: Տարեկերջին անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 56ի: Մասնաճիւղի գործունէութիւնը կը ծաւալի ընկերային եւ մշակութային ձեռնարկներու վրայ՝ գրադարան, հայերէնի գիշերային դասընթացք եւ այլն: Նոյն համեմատութեամբ կը ծաւալի նաեւ նիւթական գործառնութիւնը. 1954-55ի ընդհանուր մուտք՝ 1986 սուրիական ոսկի, ելք՝ 1866 ս. ոսկի:

Երկամեայ բնականոն գործունէութենէ ետք, անդամներու միջեւ կարգ մը տարակարծութիւններու պատճառով, 1957ի անդամական ընդհանուր ժողովը նոր վարչութիւն ընտրելու դժուարութեան կը մատնուի: Տեղւոյն թաղականութեան միջամտութեամբ կարելի կ'ըլլայ նշանակովի վարչութիւն մը յառաջացնել, հետեւեալ կազմով.-

- Ատենապետ՝ Յովհաննէս Լէպլէպճեան
- Փոխ ատենապետ՝ Յովհաննէս Տէր Ներսէսեան
- Ատենադպիր՝ Թորգոմ Երէցեան
- Գանձապահ՝ Ժան Ետալեան

Գոյքապահ-հաշուապահ՝ Յակոբ Շիշոյեան
Ընդհանուր քննիչ՝ Ճոզէֆ Տիլենչեան
Մարզական պատասխանատու՝ Սեդրակ Մորալեան

Շրջանային վարչութիւնը, մօտէն հետեւելու համար կացութեան, իր գործիչը կը գործուղէ Հասիչէ: Ոչ հայ անդամներու մասնակցութիւնը մասնաճիւղի աշխատանքներուն, կը դժուարացնէ գործունէութեան ընթացքը: Այսուհանդերձ, մասնաճիւղը կը պահէ իր ֆուլթպոլի եւ պասթեթպոլի խումբերը եւ անընդմիջաբար կը մասնակցի Շրջանային վարչութեան կազմակերպած Զատկական միջ-մասնաճիւղային մրցաշարքերուն իբրեւ Դ. դասակարգի խումբ, մինչեւ 1960 թուական:

1961ին, քաղաքական ծանօթ կացութիւնը եւ մարզական ակումբներուն պարտադրուած նորագոյն պայմանները չկարենալով դիմագրաւել, Հասիչէի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը միայն անուանապէս գոյութիւն ունի եւ կը դադրի որեւէ գործունէութիւն արձանագրելէ:

ՃԱՐԱՊԼՈՒՍ

Ճարապլուսի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութենէն՝ 1930ի սկիզբէն մինչեւ 1934 թուականը մասնաճիւղը տակաւին պաշտօնական ճանաչում չ'ունէր Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային վարչութեան կողմէ: Այս ճանաչումէն սկսեալ մասնաճիւղը կը գործէ ֆուլթպոլի զոյգ խումբերով եւ սկաուտական կազմով՝ մինչեւ 1939 թուական: 1939ի 4 Ապրիլ թուակիր նամակով մասնաճիւղի վարչութեան ատենապետ Խ. Քէօսէեան եւ ատենադպիր Լ. Այնթապլեան Շրջանային վարչութեան կը յայտնեն, թէ նիւթական անձուկ պայմաններու բերումով մասնաճիւղը պիտի չկարենայ մասնակցիլ 1939ի միջ-մասնաճիւղային խաղերուն:

Համաշխարհային Պատերազմի ստեղծած պայմանները եւ հայրենադարձութեան օրերը եւս դժուարին կացութիւններ կը ստեղծեն Ճարապլուսի մասնաճիւղին համար:

Այսուհանդերձ, մասնաճիւղը ինքզինք կը վերագտնէ իր ֆուտպոլի խումբով եւ սկսուողական բաժինով, եւ առ ի քաջալերանք Շրջանային Վարչութիւնը 5 փողեր կը դրկէ 1949ի Սեպտեմբերին:

1950ին, Վարչութիւնը կը ձեռնարկէ ահումբի մը շինութեան, փոխարինելու համար վարձուած ահումբը: Բացառիկ զոհողութիւններով այս ծրագիրը կը յաջողի:



Ճարապուսի մասնաճիւղի ֆուտպոլի խումբը

5 Մայիս 1951ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ բաղկացած հետեւեալ անդամներէն.-

- Ատենապետ՝ Յարութիւն Նիկողոսեան
- Ատենադպիր՝ Մանուկ Յարութիւնեան
- Գանձապահ՝ Յովհաննէս Տօնապետեան

Խորհրդականներ՝ Խաչիկ Թաշճեան, Անդրանիկ Խտրլարեան, Ներսէս Շ. Թաշճեան, Լեւոն Տէտէեան:

1952ի Մարտին, մասնաճիւղը կ'ընտրէ նոր վարչական կազմ.-

- Ատենապետ՝ Լեւոն Տէտէեան
- Ատենադպիր՝ Լեւոն Թաշճեան
- Գանձապահ՝ Անդրանիկ Խտրլարեան

Ֆուտպոլի պատասխանատու՝ Աբրահամ Կիւզելեան

Սկսուողական խմբապետ՝ Սարգիս Թաթոյեան

Խորհրդականներ՝ Գրիգոր Ղազարեան, Յովհաննէս Տօնապետեան:

Ֆուտպոլի խումբին մաս կը կազմեն Տիգրան Եղմուրթեան, Յակոբ Թաթոյեան, Ճորճ Թաշճեան, Յակոբ Տէտէեան, Լեւոն Ղազարեան, Ալեքսան Ծապոյեան, Վանական Ղուկասեան, Մելքոն Մկրտիչեան, Յարութիւն Ծապոյեան, Յարութիւն Ղազարեան, Յարութիւն Թաշճեան եւ Աբրահամ Կիւզելեան: Այս կազմը կը մասնակցի միջ-մասնաճիւղային ֆուտպոլի մրցաշարքին, Հալէպի մէջ:

1953ին, վերոյիշեալ խումբի հանդէպ Շրջանային Վարչութեան առած կարգապահական արգելքին պատճառով, մասնաճիւղը բացակայ է Ջատկական խաղերէն: 1955ին, կարգ մը խաղացողներ կը փոխարինուին նորեկներով՝ Ներսէս Ղազարեան, Գէորգ Եղուրթեան, Սարգիս Պալպանեան, Սարգիս Տօնապետեան, Սարգիս Ղարիպեան եւ Պաղտասար Դաւիթեան: Խումբին խմբապետն է Յարութիւն Թաշճեան: Այս խումբը Ջատկական միջ-մասնաճիւղային խաղերուն ծանօթներու մօտ տեղաւորուելով կը խնայէ Շրջանային Վարչութեան վերցնելիք կեցութեան ծախսերը: Վերջինս քաջալերական տողերով կ'արձանագրէ մասնաճիւղի այս ժեստը: Վարչութեան ատենապետութեան պաշտօնը կը վարէ Լեւոն Տէտէեան, ատենադպիր՝ Մկրտիչ Պերպէրեան:

12 Յունիս 1955ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կը գումարուի 23 անդամներու ներկայութեամբ: Ժողովին ներկայ է գործիչ Լուտեր Մասպանաճեան, որ տեղւոյն վրայ երեք հոգինոց առժամեայ յանձնախումբ կը նշանակէ փոխարինելու համար շրջանաւարտ վարչութիւնը:

Շրջանային Վարչութեան 20 Նոյեմբեր 1956ի նիստին, իր վերջին այցելութիւններու մասին զեկուցելով գործիչը ճարապուսի Հ.Մ.Ը.Մ.ի մասին կ'արձանագրէ. «Մասնաճիւղ չունինք այլեւս»: Արդարեւ, մեծաթիւ մեկնումներու պատճառով, ճարապուսի հայութեան թիւը կը նուազի եւ մասնաճիւղը կը դադրի գործելէ:

ԱԶԵԶ

Հ.Մ.Ը.Մ-ի Ազգային մասնաճիւղը համեմատաբար մօտ ըլլալով Հայկական մասնաճիւղին յաճախակի առիթներ կ'ունենայ մարզական եւ սկաուտական հանդիպումներ ունենալու Հայկական խումբերուն հետ:

1939ին, Ա. Արմատունի կրկին կը ստանձնէ մասնաճիւղի վարչութեան ատենապետութիւնը, ատենադպիր՝ Յովհաննէս Ակիւլեան: Ֆուտպոլի խումբը, որ տեւական յառաջդիմութեան մէջ է, կը բաղկանայ հետեւեալ խաղացողներէն. Յովսէփ Նշանեան, Սարգիս Իլիասեան, Ղամէկ Կարապետեան, Սարգիս Աթթարեան, Յովհաննէս Պապեան, Գէորգ Ուզունեան, Յակոբ Քէսէօնեան, Գէորգ Քեպապեան, Յարութ Գալայճեան, Յովհաննէս Ակիւլեան, Պետրոս Պերպէրեան, Յակոբ Աթթարեան եւ Արսէն Տէր Ղուկասեան՝ խմբապետ: Այս կազմը կը մասնակցի Պէյրութի մէջ միջ-մասնաճիւղային 12րդ խաղերուն եւ Բ. դասակարգի մրցաշարքի աւարտական մրցումին կը մնայ Ռայաքի ախոյեան կազմին դէմ: Միջ-մասնաճիւղային ֆուտպոլի մրցաշարքերու մասնակցութիւնը կը դառնայ մնայուն՝ յաջորդող տարիներուն:

Բ. Համաշխարհային Ընդհ. Պատերազմի օրերը, ինչպէս ամէն տեղ, Ազգային մէջ ալ տնտեսական եւ ապահովական դժուարին կացութիւններ կը ստեղծեն: Մասնաճիւղը գոյատեւելով հանդերձ չի յաջողիր կարեւոր յառաջդիմութիւններ արձանագրել մարզական գետնի վրայ: Սկաուտական ճիւղը կը յաջողի արձանագրել թուական աճ եւ 1944ին ունի 56 սկաուտ եւ 12 գայլիկ, որոնք ընթացիկ արշաւներէն դուրս բանակում մը կը կազմակերպեն Ազգային մօտակայ վայրի մը մէջ: 1944ին, հիմնադրութեան օրէն ծրագրուած, ակումբ մը շինելու աշխատանքներու սկզբնաւորութիւնը իրականութիւն կը դառնայ շնորհիւ Մակարեան եղբայրներու կարեւոր նուիրաբերման: Սակայն, շինութեան աշխատանքները տակաւին չ'ամբողջացած, վրայ կը հասնին 1946 թուականի՝ դէպի հայրենիք

ներգաղթի օրերը, երբ 20 անդամներ կը մեկնին Հայաստան: Մակարեան եղբայրները մասնաճիւղի գրադարանին առաջին նուիրատուները կ'ըլլան 43 հատոր գիրքերով: Ակումբի կալուածը կ'արձանագրուի Յովհաննէս Պապեանի անունով: Շինութեան աշխատանքները պիտի երկարէին մինչեւ 1950ական տարիներու սկզբնաւորութիւնը:

Ֆուտպոլի կողքին, մարզական երկրորդ կիրարկուող ճիւղը կ'ըլլայ աթլետիզմը: Այս ճիւղին մէջ, 1948ին, մասնաճիւղի աթլետիք խումբը կը մասնակցի Պէյրութի մէջ Շրջանային Վարչութեան կազմակերպած միջ-մասնաճիւղային ողիմպիական խաղերուն եւ կը դասուի 4րդ: Մասնաճիւղի աթլետներէն Սիմոն Վարպետեան երկայնք ցատկելու մէջ կը հանդիսանայ 3րդ:

Ֆուտպոլի խումբը կը պահէ իր գոյութիւնը աւելի տկարացած կազմով: 1950ի միջ-մասնաճիւղային խաղերուն կազմը կը զօրացուի Հայկական մասնաճիւղէն խաղացողով՝ ինչ որ հակաօրինական կը համարուի:

Յարաբերականօրէն թոյլ է նաեւ կապը Շրջանային Վարչութեան հետ: Վերջինս, իր 29 Նոյեմբեր 1951 թուականի նամակով պարագան կը յիշեցնէ Ազգային վարչութեան եւ կը պահանջէ, որ տեղեկագրով զինք տեղեկ պահէ մասնաճիւղի գործունէութեան մասին:

1952ի Յունուարին անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչութիւն՝

- Ատենապետ՝ Սարգիս Իլիասեան
- Ատենադպիր՝ Հրանդ Կիրակոսեան
- Գանձապահ՝ Տիգրան Խանոյեան
- Խորհրդականներ՝ Աւետիս Տէմիրճեան, Գէորգ Ուզունեան:

Այս կազմը կրկին կը լծուի խանդավառ աշխատանքի: Անդամներու ընդհանուր թիւն է 48: Մասնաճիւղը կը կազմէ ֆուտպոլի զոյգ խումբեր:

Տարուան սնտուկի ելեւմուտքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը. մուտք՝ 220 սուրիական ոսկի, ելք՝ 250 ս. ոսկի:

1954ին, մասնաճիւղը կրկին գործունէութեան դժուարութիւններու կը մատնուի: Ատենապետ Տիգրան Խանոյեան եւ ատենադպիր Հրանդ Կիրակոսեան Շրջանային վարչութեան կը տեղեկացնեն մասնաճիւղի տկար կացութեան մասին յայտնելով, որ ի վիճակի չեն միջ-մասնաճիւղային ընդ-բանակումին մասնակցելու:

1956ի ամրան, մասնաճիւղը կ'իմացնէ Շրջանային Վարչութեան, թէ յանձնախումբ մը կազմած են վերակազմելու համար իրենց շրջանը:

Այսպէս հետզհետէ յաճախակի դարձող մեկնումներու պատճառով, Ազգի Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը անհամեմատ կը տկարանայ եւ 1957 տարեշրջանէն ետք մասնաճիւղը կը դադրի գոյութիւն ունենալէ:

ԱՐԱԲ ԲՈՒՆԱՐ

1923ին, թրքական հալածանքներէն փախստական՝ Ուրֆայի հայ զանգուածէն մաս մը կը հասնի հիւսիսային Սուրիոյ Եփրատ գետէն դէպի արեւելք տափաստան մը, ուր հաստատուելով կը հիմնէ Արաբ Բունար զուտ հայկական գիւղը: Արաբ Բունարի (Այն էլ Արապ) մասնաճիւղի հիմնադրութեան (1929) հետեւող տարիները կ'ըլլան դժուարին: Մասնաճիւղը գործնապէս իր գոյութիւնը կը հաստատէ աւելի ուշ՝ 1935ին, երբ Հ.Յ.Դ. Պատանեկան միութեան անդամները ամբողջութեամբ կը փոխանցուին Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին եւ վարչութիւնը պաշտօնապէս կապ կը հաստատէ Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Շրջանային Վարչութեան հետ:

1939-1940 տարեշրջանի վարչութեան անդամներն են.-

Ատենապետ՝ Գէորգ Մանուկեան

Ատենադպիր՝ Սարգիս Եաղուպեան

Գանձապահ՝ Անդրանիկ Առաքելեան

Խորհրդականներ՝ Սարգիս Պողոսեան, Յակոբ Մինասեան:

Մասնաճիւղի կիրարկած մարզական ճիւղն է Ֆութպոլը: Խումբը իր մասնակցութիւնը կը բերէ Հալէպի մէջ կայացող միջ-մասնաճիւղային խաղերուն իբրեւ Բ. դասակարգի խումբ: Սկսուածութիւնը, որ դադրած էր 1939ին, կը դեկավարուի Սեդրակ Քէօզկէրեանի կողմէ՝ միամեայ գործունէութեամբ: Համաշխարհային Բ. Ընդհանուր Պատերազմի օրերուն, հակառակ տնտեսական անյաղթահարելի դժուարութիւններուն, մասնաճիւղը իր գոյութիւնը կը պահէ եւ կը յաջողի նաեւ վերակազմել սկստական խումբը: Պահ մը մասնաճիւղի ակումբը փակ կը մնայ պետական որոշումով: 9 Յունիս 1946ին, մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան 15ամեակը, Սբ. Աստուածածին եկեղեցւոյ սրահին մէջ: Օրուան վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Յարութիւն Պողոսեան, ատենադպիր՝ Աղաճան Եաղուպեան: Այս վարչութեան հետեւողական աշխատանքին շնորհիւ մասնաճիւղի Ֆութպոլի խումբը եւ սկսուածութիւնը կը մասնակցին 1947ի Զատկական միջ-մասնաճիւղային խաղերուն եւ տողանցքին: Այս մասնակցութիւնը նոր թափ կու տայ մասնաճիւղի գործունէութեան, որուն շուրջ կը հաւաքուին նոր անդամներ: Նաեւ ակումբի վերաբացման պետական արտօնութիւնը կը նպաստէ այս յաջողութեան:



Արաբ Բունարի Հ.Մ.Ը.Մ.ի Սկսուական Խորհուրդը 1943ին, Աղաճան Եաղուպեան, Ղալար Յակոբեան, Արախամ Յակոբեան եւ Յարութիւն Պողոսեան

Մասնաճիւղը կանոնաւոր հերթականութեամբ՝ անդամական ընդհանուր ժողովներով կ'ընտրէ վարչական կազմ՝ միամեայ գործունէութեան համար: 1949-1950 տարեշրջանի անդամներու ընդհանուր թիւն է 40, որոնցմէ 30ը սկաուտական շարքերուն մէջ կը գործեն: Սկաուտական աստիճանաւորներ հանդիպումներ կ'ունենան մօտակայ Ճարապլուսի սկաուտական նորակազմ խումբին հետ, անոնց օգտակար ըլլալու նպատակով:

Սկաուտական խումբէն կը կազմուի 9 հոգինոց նուագախումբ մը: Ֆուլթայոյի գոյդ խումբերը իրենց փորձերը կը կատարեն մասնաճիւղի սեփական դաշտին վրայ:

Մարզական երկրորդ ճիւղը փինկ-փոնկն է, որ կը կիրարկուի ակումբի սրահին մէջ: Ակումբի կալուածը եւս սեփականութիւնն է մասնաճիւղին:

Դաշտի եւ ակումբի ընձեռած առաւելութիւնները հետզհետէ աւելի հաստատուն կը դարձնեն Արաբ Բունարի Հ.Մ.Ը.Մ.ի գոյութիւնը գիւղի շրջանակէն ներս:

8 Ապրիլ 1951ին, մասնաճիւղը կը կայացնէ անդամական ընդհանուր ժողով: Ժողովի օրակարգերուն մաս կը կազմեն 11րդ Պատգամաւորական Ժողովի զեկուցումը եւ 1950-51 տարեշրջանի նիւթաբարոյական տեղեկագրերու ընթերցումը: Ներկայ են 20 անդամներ, ժողովին կը նախագահէ Յակոբ Սոլամանեան, քարտուղար՝ Արտաւազդ Պօղոսեան: Յետ օրակարգերու սպառման տեղի կ'ունենայ նոր վարչական կազմի ընտրութիւն: Նորընտիր վարչութեան կազմն է. -

Ատենապետ՝ Աբրահամ Յակոբեան

Ատենադպիր՝ Խաչիկ Խաչատուրեան

Գանձապահ՝ Ղազար Յակոբեան

Խորհրդականներ՝ Արտաւազդ Պօղոսեան, Նասիպ Պոյաճեան:

28 Ապրիլ 1951ի՝ թիւ 1 նամակով, Շրջանային վարչութիւնը կը վաւերացնէ վերոյիշեալ կազմը: Մասնաճիւղը պետական նոր արտօնագրով կ'անուանուի Նէտի Այն Ըլ Արապ:

Հ.Մ.Ը.Մ.ի Արաբ Բունարի մասնաճիւղը մարզական գործունէութեան առընթեր կը նախաձեռնէ ազգային եւ մշակութային գործունէութեան: Այսպէս, 1952ի վարդանանցի տօնի առիթով, մասնաճիւղը կը ներկայացնէ օրուայ խորհուրդը նշող թատերախաղ մը: Նոյնպէս, վարչութիւնը կը կազմակերպէ Ապրիլեան Եղեռնի յիշատակի հանդիսութիւններ: Այս ելոյթներու եկամուտներէն վարչութիւնը բաժին կը հանէ տեղւոյն Ազգային վարժարանին:

Մարզական գլխաւոր ճիւղը կը մնայ ֆուլթայոյր: Մասնաճիւղի կազմը բարեկամական հանդիպումներ կ'ունենայ յատկապէս մօտակայ Ճարապլուսի քոյր մասնաճիւղի խումբին դէմ: Եղբայրական այս հանդիպումները, մարզականի կողքին, մասնաճիւղին շուրջ խանդավառ մթնոլորտ ստեղծելու կը ծառայեն: Խումբը կը մասնակցի նաեւ Հալէպի մէջ կայացող Զատկական միջ-մասնաճիւղային մրցաշարքերուն: 1952ին, խումբին մաս կը կազմեն՝ խմբապետ՝ Պաղտասար Յակոբեան, Արտաւազդ Պօղոսեան, Յակոբ եւ Աբրահամ Յակոբեաններ, Միքայէլ Հալաճեան, Ժոզէֆ Մուրատեան, Յարութիւն Տիշէքէնեան, Խաչիկ Խաչատուրեան, Ղազար Յակոբեան, Աղաճան Եագուպեան, Արմէն Յակոբեան, Աղաճան Գոնիալեան, Խաչիկ Քիլէճեան, Գրիգոր Զիմոյեան, Յակոբ Թաթոյեան, Յովհաննէս Դանիէլեան, Գէորգ Գուլումճեան, Գասպար Յակոբեան եւ Սարգիս Սեմերճեան: Փինկ-փոնկը կը կիրարկուի անդամական ներքին սահմաններուն մէջ:

27 Ապրիլ 1952ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովին կողմէ ընտրուած վարչական կազմը կը մնայ նոյնը, բացի խորհրդական Նասիպ Պոյաճեանէն, որ կը փոխարինուի Սարգիս Գրվրեանով: 1951ի Յունուարէն մինչեւ 1952ի Ապրիլ ամիսը վարչութեան եկամուտներու ընդհանուր գումարն է՝ 548,10 սուրական թղթոսկի, իսկ ելքերը՝ 417,32 ս.ո.: 1952ի վիճակագրական տախտակի համաձայն մասնաճիւղը կը հաշուէ 53 անդամներ, բաժնուած հետեւեալ ձեւով.

Գայլիկներ՝ 10, սկաուտներ՝ 25, մարզիկներ՝ 10, օժանդակ անդամներ՝ 8:

Ունի սեփական աղումք մը՝ արձանագրուած Դաւիթ Ճանոյեանի, Համազասպ Տէր Խաչատուրեանի եւ Սարգիս Գուլումճեանի անուններով, սեփական խաղավայր մը՝ արձանագրուած Տոքթ. Զաքար Քիլէճեանի անուան, 150 հատորներով գրադարան մը եւ նուագախումբի 8 գործիքներ:

31 Մայիս 1953ին, մասնաճիւղը կը գումարէ անդամական ընդհանուր ժողով, նախագահութեամբ Նազար Եագուպեանի եւ քարտուղարութեամբ Տիգրան Օհանեանի: Շրջանաւարտ վարչութեան նիւթաբարոյական գործունէութեան տեղեկագրերու ընթերցումէն ետք, վարչութեան անդամներ կ'ընտրուին հետեւեալները:-

Ատենապետ՝ Ղազար Յակոբեան
Ատենադպիր՝ Արտաւազդ Պողոսեան
Գանձապահ՝ Աբրահամ Յակոբեան
Խորհրդականներ՝ Խաչիկ Խաչատուրեան,
Կարապետ Քիլէճեան:

Մասնաճիւղի եռամեայ գործունէութեան տեղեկագիրը Շրջանի 12րդ Պատգամաւորական ժողովի յատուկ գնահատանքին կ'արժանանայ: Շրջանային վարչութիւնը այս իմաստով յատուկ գրութիւն մը կը յղէ մասնաճիւղի վարչութեան:

21 Մարտ 1954ին, տեղի կ'ունենայ անդամական ընդհ. ժողով նախագահութեամբ Աղաճան Եագուպեանի եւ քարտուղարութեամբ Մանուկ Սարգիսեանի: Վարչական ընտրուած անդամները իրենց դիւանը կը կազմեն հետեւեալ ձեւով:-

Ատենապետ՝ Աբրահամ Յակոբեան



Միջ-մասնաճիւղային 33րդ խաղերուն, Գ. դասի ախոյեան Արաք Բունարի ֆութպոլի խումբը

Ատենադպիր՝ Արտաւազդ Պօղոսեան
 Գանձապահ՝ Կարապետ Քիլէճեան
 Մարզական պատասխանատու՝ Ղազար Յա-
 կոբեան

Խորհրդական՝ Խաչիկ Խաչատուրեան:

Ընթացիկ գործունէութեան կողքին, այս կազմին իրականացումներէն պիտի ըլլար ակումբի նորոգութիւնը: Ակումբը վնասուած էր երկարատեւ ձմրան պատճառով: Շրջանային Վարչութիւնը նիւթական յատկացումով մը կը նպաստէ այս նորոգութեան: Տարեվերջի իր ամփոփ տեղեկագրին մէջ վարչութիւնը կ'ընդունի, որ նախորդ տարիներու գործունէութեան ծաւալը զգալի անկում կրած, անդամներու թիւը պակասած եւ աշխատանքը դժուարացած է, եւ կ'եզրակացնէ հետեւեալ ձեւով.-

«Արդ, հիւսիսային Սուրիոյ հեռաւոր մէկ անկիւնը եւ նաեւ մեր դարաւոր ու ռիւտինայ թշնամի թուրքին կից, շրջապատուած քաղաքակրթութենէ պուրկ քիւրտերով՝ կանգուն է այսօր Հ.Մ.Ը.Մ.ը այս գաղութին մէջ, սերմանելով ապառ հայրենիքի սէրը հայ հոգիներէն ներս»:

1955 տարուան անդամական ընդհանուր ժողովը կը գումարուի Յունիսի 17ին, նախագահութեամբ Յարութիւն Պօղոսեանի եւ քարտուղարութեամբ Աղաճան Եագուպեանի: Նորընտիր վարչութեան կազմը կը մնայ նոյնը բացի Կարապետ Քիլէճեանէն, որ կը փոխարինուի Մկրտիչ Մուրատեանով, նոյնպէս 1956 տարուան վարչական կազմը կը մնայ նոյնը բացի Արտաւազդ Պօղոսեանէն, որ 31 Յունուար 1956ի անդամական ընդհանուր ժողովի ընտրութեամբ կը փոխարինուի Գէորգ Միլոյեանով: Հակառակ հետզհետէ նօսրացող գաղութի կացութեան եւ նիւթական դժուարին պայմաններուն, մասնաճիւղի Ֆուլթոնի խումբը իր մասնակցութիւնը կը շարունակէ բերել Հալէպի մէջ կայացող Զատկական միջ-մասնաճիւղային մրցաշարքին: Կանոնաւոր կերպով կապ կը պահէ Շրջանային Վարչութեան հետ, անսալով անոր բոլոր հրահանգներուն:

27 Յունուար 1957ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝ բաղկացած հետեւեալներէն. Աբրահամ Յակոբեան, Արտաւազդ Պօղոսեան, Խաչիկ Խաչատուրեան, Մկրտիչ Մուրատեան եւ Նուպար Կանանչեան:

Շրջանային Վարչութիւնը վաւերացնելով վարչական կազմը, իր 7 Փետրուար 1957 թուակիր նամակը այսպէս կ'եզրակացնէ. «Արաբ Բունարը, հակառակ փոքր մասնաճիւղ մը ըլլալուն, տարիներ շարունակ, որպէս օրինակելի շրջան, միշտ առաջին գծի վրայ մնացած է եւ իբր այդպիսին արդար գնահատանքի արժանացած: Աշխատեցէք պահել ձեր նախորդներուն բարոյական վաստակը»:

1964ին, դէպի հայրենիք երկրորդ ներգաղթին առիթով, մնացեալ փոքրաթիւ հայ ընտանիքներն ալ կը մեկնին Արաբ Բունարէն եւ այսպէսով կը դադրի նաեւ Ճեզիրէի շրջանի այս մասնաճիւղի գործունէութիւնը, շուրջ երեսունըհինգ տարուայ ծառայութենէն ետք:

ՏԵՐՊԷՍԻԷ

Համաշխարհային Բ. Ընդհանուր Պատերազմի աւարտին աւելի կենսունակ գործունէութեան կը լծուի Հ.Մ.Ը.Մ.ի Տէրպէսիէի մասնաճիւղը: Ֆուլթոնի խումբը կ'ունենայ իր կանոնաւոր փորձերը եւ սկստական շարժումը կը վերակենդանանայ: 1947ին վարչութիւնը կը դիմէ առ որ անկ է, վերստանալու համար պետական արտօնագիրը:

13 Փետրուար 1948ի նիստին, Շրջանային Վարչութիւնը կը վաւերացնէ մասնաճիւղի նորընտիր վարչական կազմը:

1949ին, մասնաճիւղի Ֆուլթոնի խումբը կը մասնակցի Զատկական միջ-մասնաճիւղային 23րդ խաղերուն՝ Հալէպ:

1950 տարեշրջանին մասնաճիւղը կը հաշուէ 53 անդամ, որոնցմէ 30ը սկստական շարքերէն: Մասնաճիւղը կը պահէ Ֆուլթոնի եւ պաս-

քեթպոլի մէկական խումբ: Իբրեւ նստավայր կ'օգտագործէ Ազգային վարժարանի մէկ սենեակը: Տարեշրջանի նիւթական գործունէութեան պատկերն է՝ մուտք՝ 86,5 սուրիական ոսկի, ելք՝ 108 ս. ոսկի:

1951ի վարչական կազմի անդամներն են.-

Ատենապետ՝ Յակոբ Յակոբեան

Ատենադպիր եւ սկաուտական խմբապետ՝ Միհրան Ֆերմանեան

Գանձապահ՝ Պետրոս Տաղճեան

Այս տարեշրջանին կը փորձեն տարազաւորել սկաուտական խումբը:

Նոյն կազմը կը պաշտօնավարէ նաեւ 1952ին: Մարզական գետնի վրայ, Ֆուլթպոլի խումբը կը տկարանայ մեկնումներու պատճառով եւ մասնաճիւղը կը զրկուի Զատկական միջ-մասնաճիւղային խաղերուն մասնակցելէն: Պասքեթպոլի խումբը կը շարունակէ իր փորձերը եւ երեք մրցումներ կը կատարէ, որոնցմէ երկուքը Գամիշլիի մասնաճիւղի խումբին դէմ:

Սկաուտական խումբը կը բաղկանայ 15 հոգիէ՝ ոչ տարազաւոր:

Մեկնումները պատճառ կը դառնան յաջորդող տարիներուն մասնաճիւղի գործունէութեան տեղ քայլ արձանագրելուն:

1955էն սկսեալ մասնաճիւղի գործունէութիւնը կը վերակենդանանայ:

3 Ապրիլի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ հետեւեալ վարչական կազմը.

Ատենապետ՝ Յովհաննէս Ազիզեան

Ատենադպիր՝ Միհրան Ֆերմանեան

Գանձապահ՝ Պետրոս Ասատուրեան

Խորհրդականներ՝ Յակոբ Յակոբեան, Գէորգ Ճալոյեան:

Վերջինս տարուայ ընթացքին կը փոխարինէ Միհրան Ֆերմանեանը իբր ատենադպիր: Հակառակ տարուած ճիգերուն, անդամներու թիւը բնական աճ մը չ'արձանագրեր, ընդհ. թիւ՝ 25 անդամ, սկաուտ՝ 12, մարզիկ եւ օժանդակ՝ 13:

10 Յունուար 1957ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ.-

Ատենապետ՝ Յակոբ Յակոբեան
Ատենադպիր՝ Գէորգ Ճալոյեան
Գանձապահ՝ Պետրոս Ասատուրեան
Խորհրդականներ՝ Մկրտիչ Մուրատեան, Յովհաննէս Ազիզեան:

Կիրարկուող մարզական ճիւղերն են Ֆուլթպոլը, պասքեթպոլը եւ փինկ-փոնկը: Մրցումներ կը կազմակերպուին մօտակայ Ամուտայի, Թել-Պրաքի եւ Հասիչէի մասնաճիւղերու խումբերուն դէմ:

1958ին, Ֆուլթպոլի խումբը կը մասնակցի Զատկական միջ-մասնաճիւղային մրցաշարքին: Մասնաճիւղի գործունէութիւնը կը վերագտնէ իր բնականոն ընթացքը:

Արձանագրելի է 17 Ապրիլ 1959ին կայացած Ֆուլթպոլի մրցումը, տեղւոյն ասորիներու խումբին դէմ, Տէրպէսիէի քաղաքապետին առաջարկով: Մասնաճիւղի խումբը զօրացած Ռասիւ Այնի մասնաճիւղէն երեք խաղացողներով կը յաջողի 2-0 արդիւնքով կարեւոր յաղթանակ մը տանիլ մրցակից խումբին դէմ, խանդավառելով տեղւոյն հայութիւնը:

1960ի Յունուարին մասնաճիւղը կ'ընտրէ նոր վարչական կազմ: 1959ի գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագրի մէկ պատճէնը կ'ուղարկուի Շրջանային Վարչութեան, ուր կը յայտնեն նաեւ մասնաճիւղի նոր հասցէն:

1961ին, մարզական միութիւններու արտօնագրերու վաւերացման հրամանագրի կապակցաբար, Սուրիոյ պետական պայմանները ամբողջացնելու անկարելիութեան դիմաց գտնուելով, Տէրպէսիէի մասնաճիւղը կը դադրեցնէ իր գործունէութիւնը:

ՏԵՐԻՔ

Համաշխարհային Բ. Ընդհանուր Պատերազմի նախօրեակին, Տէրիքի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր անդամներէն, վարչութեան մաս կազմած են հետեւեալները.-

Ատենապետ՝ Միքայել Յովսէփեան
 Փոխ ատենապետ՝ Ռուբէն Քենտիրեան
 Ատենադպիր՝ Կիրակոս Մելքոնեան
 Գանձապահ՝ Տիգրան Պաղտասարեան
 Սկառուտական պետ՝ Յակոբ Սողոմոնեան
 Խորհրդականներ՝ Անդրանիկ Քեզիմեան,
 Թովմաս Պօղոսեան: 1939ին մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 35ի: Մասնաճիւղը կը կիրարկէ սկառուտիզմ եւ ֆուլթպոլ:

Սակայն, պատերազմի, հայրենադարձութեան կամ այլ պատճառներով շրջանէն յաճախակի մեկնումները, 1940ական թուականներու ամբողջ տեւողութեան, մոռցնել կու տան Տէրիքի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը:

Երկար տարիներու այս անգործունէութիւնը, փաստօրէն Տէրիքի մասնաճիւղի դադարած ըլլալու հետեւանքով է: Ոչ մէկ կապ Շրջանային Վարչութեան կամ Հալէպի մասնաճիւղին հետ:

1955ի աշնան Տէրիքի մասնաճիւղը կը վերակազմուի: Շրջանային Վարչութեան գործիչ Լուտեր Մասպանաճեան, այս մասին կը զեկուցէ Շրջանային Վարչութեան 13 Հոկտեմբերի նիստին, յայտնելով, թէ նոր մասնաճիւղ մը հիմնուած է Տէրիքի մէջ եւ երեք հոգինոց նշանակովի մարմին մը կը վարէ աշխատանքները:

Մասնաճիւղը կ'ունենայ միամեայ սահմանափակ գործունէութիւն 1956ի ընթացքին:

Վարչութիւնը իր սկառուտական ճիւղին համար Շրջանային Վարչութենէն կը խնդրէ նուագախումբի գործիքներ: Վարչութիւնը կը փորձէ նաեւ մասնաճիւղի պետական արտօնագրի վերստացումը ապահովել: Առաւելաբար քրտախօս հայերէ բաղկացած այս մասնաճիւղի ճիգերը վերջնական արդիւնքի չեն յանգիր: Բացի սկառուտական ճիւղէն եւ քանի մը օժանդակ անդամներէ, Տէրիքի մասնաճիւղը իր մարզական բաժինով կրկին անգործութեան կը մատնուի: Մասնաճիւղի կողմէ Սարգիս Ադամեան այս տեղեկութիւնները Շրջանային Վարչութեան կը

փոխանձէ 10 Փետրուար 1957 թուակիր նամակով: Յետ մասնաճիւղին տրուած այցելութեան, 31 Մարտ 1957 թուակիր իր տեղեկագրով, Շրջանային Վարչութեան գործիչ Լուտեր Մասպանաճեան անյոյս բառերով կը բանաձեւէ հեռաւոր Տէրիքի մասնաճիւղի ապագան:

13 Փետրուար 1958 թուակիր նամակով Տէրիքի վարժարանի ուսուցիչը նոյնիմաստ բառերով կը ներկայացնէ մասնաճիւղի պատկերը, յայտնելով, թէ երկու անձեր կը վարեն աշխատանքները:

Շրջանային Վարչութիւնը գնահատելով հանդերձ անձնական ճիգերը կը յայտնէ, թէ չի կրնար Տէրիքը մասնաճիւղ համարել նկատելով որ կանոնագրային պայմանները չի լրացներ:

ՏԷՐ ԶՕՐ

1939ի գարնան, Տէր Զօրի մասնաճիւղի վարչականներ՝ Ա. Շահինեան եւ Ղ. Սարգիսեան 25 Ապրիլ թուակիր նամակով Շրջանային Վարչութեան կը տեղեկացնեն, թէ մասնաճիւղը վերսկսած է գործունէութեան: Ունին ֆուլթպոլի զոյգ խումբեր: Վարչութիւնը կը ծրագրէ նաեւ սկառուտական կորիզի մը կազմութիւնը եւ այդ նպատակին համար Շրջանային Վարչութենէն կը խնդրէ Ծրագիր-Կանոնագիր եւ սկառուտական գիրքեր:

Նախաձեռնութիւնը կը յաջողի, Բ. Աշխարհահամարտի պատճառով ստեղծուած դժուարութիւններու յաղթահարումով եւ համեստ արդիւնքներով: Կացութիւնը պիտի երկարէր մինչեւ 1944 թուականը, երբ մասնաճիւղը կ'արձանագրէ անդամական զգալի աճ, հասնելով 115 թիւին:

1944ին, մասնաճիւղի վարչութեան անդամներն են Ղեւոնդ Նալպանտեան, Ճանիկ Առաքելեան, Խորէն Լուսարարեան, Յակոբ Մինասեան եւ Եղիա Ատուրեան:

1950ին, ֆուլթպոլի զոյգ խումբերու կողքին մասնաճիւղը ունի նաեւ պասքեթպոլի եւ վոլի-

պոլի խումբեր եւ փինկ-փոնկ կիրարկող մարզիկներ: Անդամներու ընդհանուր թիւն է 62: Սկաուտական խումբը կը հաշուէ 38 անդամ. 8 գայլիկ, 14 սկաուտ եւ 16 արծուիկ: Մասնաճիւղը իր գործունէութիւնը կը վարէ, իբրեւ աւուար օգտագործելով Ազգային վարժարանի սենեակներէն մէկը: Վարչութեան ատենապետն է Ղեւոնդ Նալպանտեան, ատենադպիրը՝ Գասպար Գասպարեան: Վարչութիւնը կը դիմէ առ որ անկ է, ստանալու համար մասնաճիւղի պետական վաւերացում:

1950ի միջ-մասնաճիւղային խաղերուն Տէր Զօրի մասնաճիւղը կը մասնակցի Ֆուլթպոլի խումբով:

3 Յունիս 1951ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ հետեւեալ վարչական կազմը.-

Ատենապետ՝ Ղեւոնդ Նալպանտեան

Ատենադպիր՝ Գասպար Գասպարեան

Գանձապահ՝ Ղեւոնդ Պապոյեան

Խորհրդականներ՝ Յակոբ Թարխանեան, Կոստան Վարժապետեան:

Այս կազմը կը շարունակէ նախկինին գործունէութիւնը, հետզհետէ աւելի հաստատուն հիմերու վրայ զետեղելով Տէր Զօրի մասնաճիւղը: Ֆուլթպոլի խումբին՝ 1952ի Զատկական միջ-մասնաճիւղային հանդիպումներուն, կը միանայ նաեւ սկաուտներու խումբը:

1952ին մասնաճիւղի սկաուտական կազմը կը ստանայ պետական թիւ 11 եւ 14 Նոյեմբեր 1952 թուակիր արտօնագիրը:

Կարգ մը վարչականներու Տէր Զօրէն մեկնումին պատճառով 1954 տարեշրջանին մասնաճիւղի գործունէութիւնը տեղ քայլ կ'արձանագրէ: Ֆուլթպոլի խումբի խմբապետն է Գէորգ Բարսեղեանը, որու զեկուցումէն ի յայտ կու գայ, թէ խումբը քայքայուած վիճակ մը կը պարզէ: Անդամներու ընդհանուր թիւը իջած է 44ի:

Անդամական ընդհանուր ժողովը, Ղեւոնդ Նալպանտեանի նախագահութեամբ տեղի կ'ունենայ 8 Մարտ 1955ին եւ կ'ընտրուի նոր վարչական կազմ.-



Տէր Զօրի մասնաճիւղի 1955 տարուայ ֆուլթպոլի կազմը

Ատենապետ՝ Ճանիկ Առաքելեան
 Ատենադպիր՝ Պետրոս Հաճեան
 Գանձապահ՝ Յովհաննէս Թիւրպետեան
 Խորհրդականներ՝ Սահակ Տէր Ղազարեան, Գէորգ Բարսեղեան:

Հակառակ վերոյիշեալ կազմի ճիգերուն, հայրութեան Տէր Զօրէն հետզհետէ մեկնումին պատճառով, 1955ի գործունէութիւնը կը մնայ տկար:

1957ի վիճակագրական տախտակին համաձայն, մասնաճիւղը կը հաշուէ միայն 15 մարզիկ, որոնք կը կիրարկեն պասքեթպոլ եւ վոլիպոլ, իսկ Ֆուլթպոլի խումբը պահելու համար ստիպուած են թիւը ամբողջացնել օտար խաղացողներով: Օժանդակ անդամներու թիւն է 12: Սկաուտական խումբը դադարած է գոյութիւն ունենալէ: Նիւթական գործունէութիւնն ալ շատ սահմանափակ է, մուտք՝ 200 ս.ոսկի, ելք՝ 234 ս.ոսկի: Վարչութեան կազմը կը մնայ գրեթէ անփոփոխ. ատենապետ՝ Ճանիկ Առաքելեան ատենադպիր՝ Պետրոս Հաճեան:

Սուրիոյ անապատի հեռաւոր անկիւններուն վրայ գտնուող Տէր Զօրի մասնաճիւղի Ֆուլթպոլի խումբը մրցումի մը համար երկար տարածութիւններ պիտի կտրէ: Նոյնը պիտի ընեն իրեն այցելող խումբերը: 1957 Մայիս 25ին, մեծ խանդավառութիւն կը ստեղծէ Հալէպի մասնաճիւղի Վրէժ խումբի այցելութիւնը Տէր Զօր,

ուր եղբայրական հանդիպում մը տեղի կ'ունենայ Ֆուլթայոլի խումբերուն միջեւ: 10 Նոյեմբերին, քարիւղի թիւ 2 կայանի խումբին դէմ մրցելու համար Տէր Զօրի Հ.Մ.Ը.Մ.ի կազմը 120 քմ. տարածութիւն կը կտրէ եւ յաղթական՝ 3-1 արդիւնքով մը կը վերադառնայ Տէր Զօր:

Հակառակ տարիներու ընթացքին նօսրացող գաղութին, Տէր Զօրի իրերայաջորդ վարչութիւնները մարզականի կողքին կը կազմակերպեն դասախօսական, թատերական, մշակութային ձեռնարկներ եւ ընտանեկան հաւաքոյթներ, մասնաճիւղին շուրջ պահելով հայ երիտասարդութիւնը:

1959ի Զատկական միջ-մասնաճիւղային խաղերուն մասնաճիւղի Ֆուլթայոլի խումբը իր մասնակցութիւնը կը բերէ Բ. դասակարգի մրցաշարքի մասնակցութեամբ եւ տողանցքով: Նոյն տարին մասնաճիւղէն 2 մարզիկներ կը հետեւին Շրջանային Վարչութեան կազմակերպած մարզիչներու պատրաստութեան դասընթացքին:

1960ի գարնան մասնաճիւղի նորընտիր վարչութիւնը կը ձեռնարկէ սկսողական խումբի վերակազմութեան:

1961ին մասնաճիւղը արդէն դադրած է գործելէ, չկարենալով ամբողջացնել պետական պայմանները:

ԹԷԼ ԱՊԻԱՏ

Ազգային վարժարանի ուսուցիչ Գրիգոր Տէր Յարութիւնեանի ճիգերով 1936ին հիմնուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի Թել Ապիատի մասնաճիւղը 1939ին միայն իր պաշտօնական ճանաչումը կը ստանայ Շրջանային Վարչութեան կողմէ: Թել Ապիատի մասնաճիւղէն եռանգամ յանձնախումբ մը վաւերացման խնդրանքի նամակը Շրջանային Վարչութեան կ'ուղարկէ Հալէպի մասնաճիւղին միջոցաւ:

Բ. Աշխարհամարտի սկզբնաւորութեան օրերուն մասնաճիւղի գործունէութեան թափը կը տկարանայ կարգ մը մեկնումներու եւ անդամ-

ներէն ոմանց Ֆրանսական բանակին մէջ զինուորագրուելուն պատճառով:

1942ին աշխատանքները կը վերսկսին Գէորգ Չուլճեանի եւ իր ընկերներուն յատուկ ջանքերով եւ տակաւ կը շարունակուին մինչեւ 1948 թուական: Ճիգերը կը կեդրոնական ահումբի մը ապահովման վրայ:

Սեպտեմբեր 1948ին, անդամներու ընդհանուր թիւն է 56, որոնց մեծամասնութիւնը մաս կը կազմեն սկսողական շարքերուն: Միջանկեալ, մասնաճիւղը կ'ապահովէ սեփական դաշտ եւ կ'աշխատի նաեւ սեփական ահումբ մը ապահովել: Մասնաճիւղէն ներս կը գործեն Ֆուլթայոլի գոյգ խումբեր եւ վոլիպոլի խումբ մը: Մարզական եւ սկսողական գործունէութեան կողքին Թել Ապիատի Հ.Մ.Ը.Մ.ը ունի ընկերային եւ մշակութային հաւաքներ՝ դասախօսական նիւթերով: Վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Գէորգ Չուլճեան, ատենադպիրն է Գեղամ Մելքոնեան: Գործունէութեան ժամանակաշրջանը կը տեւէ 16 ամիս:

1950ի Փետրուարին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ: Մասնաճիւղի աշխատանքները կ'ընթանան բնականոն՝ սկսողական եւ մարզական բաժիններով:

1951ի Մայիսին ընտրուած վարչութեան մաս կը կազմեն հետեւեալները.-

Ատենապետ՝ Մանուկ Մանուկեան

Ատենադպիր՝ Խաչիկ Մութաֆեան

Գանձապահ՝ Սարգիս Յակոբեան

Խորհրդականներ՝ Յարութիւն Խաչատուրեան, Գարեգին Կիրակոսեան:

Տարիներէ ի վեր ահումբ մը ապահովելու ճիգերը ի վերջոյ կը յաջողին, սակայն շուտով ահումբը պետութեան կողմէ կը գրաւուի ծառայելու համար բարձրաստիճան պաշտօնեայի մը որպէս բնակարան: Այս եւ այլ պատճառներ, մասնաճիւղի շուրջ հետաքրքրութիւնը կը պակսեցնեն եւ 1952էն 1955 տարիները անգործունէութեան ժամանակաշրջան մը կ'ըլլան: 1955ի



Թել Ապիատի Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի խումբը
իր պատասխանատուներով

տարեվերջին սկսեալ, մասնաճիւղը կը փորձէ վերագտնել ինքզինքը:

5 Հոկտեմբեր 1956ին, նախագահութեամբ Գէորգ Չուլճեանի եւ քարտուղարութեամբ Ղազար Յակոբեանի, անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ 7 հոգինոց նոր վարչական կազմ.

Ատենապետ՝ Եփրեմ Մելքոնեան
Ատենադպիր՝ Յարութիւն Խաչատուրեան
Գանձապահ՝ Սարգիս Հայրապետեան
Մարզական պատասխանատու՝ Սարգիս Գարակէօզեան

Գոյքապահ՝ Սարգիս Չափարեան
Խորհրդականներ՝ Յովհաննէս Դաւիթեան,
Խաչեր Խաչերեան:

Գրաւուած աւուարը, փլատակ վիճակի մէջ, կը վերադարձուի մասնաճիւղին: Անդամներու թիւը կը բարձրանայ 75ի:

Թել Ապիատի Ս.Օ.Խաչի արծուիկներու խմբապետուհի էլիզ Մուրատեան, որուն հանգուցեալ ամուսնոյն՝ Մ. Մանուկեանի անուան արձանագրուած էր աւուարի շէնքը, զայն Հ.Մ.Ը.Մ.ին փոխանցելով կը նպաստէ մասնաճիւղին վերականգնումին: 1957ի գարնան մասնաճիւղը կը ծրագրէ իր սեփական հողին վրայ աւուար մը շինել: Այս ծրագրին համար կը նախատեսուի 8 հազար ս. ոսկիի ծախս մը:

Այս նպատակին իրագործման համար կը նշանակուի յատուկ յանձնախումբ: Աւուարն ու խաղաւայրը պետութեան մօտ կ'արձանագրուին Արմէն Մելքոնեանի, Մանուկ Մանուկեանի եւ Գրիգոր Շնէօֆօրեանի անուաներուն: 1957ին, վարչութեան ատենապետն է Ներսէս Մխսիարթիւնեան, ատենադպիր՝ Յարութիւն Խաչատուրեան: 30 նորընծայ սկաուտներ արձանագրուած են մասնաճիւղին ներս: 1956ի վարչական կազմը գործի գլուխ կը մնայ նաեւ 1957ի տարեշրջանի ընթացքին:

Աւուարի շինութեան աշխատանքները օրին կը սկսին, սակայն մինչեւ 1959ի վերջաւորութեան տակաւին շինութիւնը կը մնայ կիսաւարտ: 11 Նոյեմբեր 1959 թուակիր նամակով կը դիմեն Շրջանային Վարչութեան եւ կը խնդրեն նիւթական նպաստ շինութեան ամբողջացման համար:

1959ի Զատիկական միջ-մասնաճիւղային խաղերուն, Թել Ապիատի Հ.Մ.Ը.Մ.ը կը մասնակցի իր ֆութպոլի խումբով: Սակայն այս տեղափոխութիւնը վերջինը պիտի ըլլար:

Թել Ապիատի մասնաճիւղն ալ 1961էն սկսեալ կը դադրի գործելէ:

ԱՅՆ ՏԻՈՒԱՐ

Նախապատերազմեան շրջանին հիմնուած Այն Տիուարի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մասին հարկ է պահել հետեւեալ արձանագրութիւնը:

Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Շրջանային Վարչութիւնը, Շրջանային Ծրագրամաւորական ժողովին (10 Յուլիս 1937) ներկայացուցած իր գործունէութեան տեղեկագրին մէջ կը յիշէ Այն Տիուարի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի գոյութիւնը: Ներկայացուցչական ժողովի ատենագրութեան մէջ «Մասնաճիւղերու թուի ճշդում» օրակարգի տակ արձանագրած է հետեւեալը. «Մասնաճիւղերու ընդհ. թիւը ճշդուելով ժողովիս կողմէ, գտնուեցաւ որ Շրջ. Վարչութեան տեղեկագրին մէջ յիշատակուած

Թիւէն պակաս է ան: Եւ այս անոր համար որ կարգ մը շրջաններ, թէեւ ժամանակաւոր գոյութիւն մը ունեցած են, սակայն հետագային լուծուած կամ կիսակազմակերպ վիճակ մը առած են»:

Ապա ժողովը 3 տարբեր դասակարգերու բաժնած է Շրջանի մասնաճիւղերը:

- ա) գոյութիւն ունեցող մասնաճիւղեր՝ 12
- բ) կիսակազմակերպ մասնաճիւղեր՝ 5
- գ) բոլորովին կազմալուծ մասնաճիւղեր՝ 3 մասնաճիւղ:

Այն Տիուարի անունը յիշատակուած է այս վերջին դասակարգի մասնաճիւղերու շարքին:

Ճորդ Պատգամաւորականի ատենագրութենէն սկսեալ եւ յաջորդող ժողովներուն Այն Տիուարի Հ.Մ.Ը.Մ.ի մասին ոչ մէկ արձանագրութեան կը հանդիպինք:

ՔԵՍԱՊ

Քեսապ՝ Թուրքիոյ սահմանամերձ, հիւսիսային Սուրիոյ մէջ հայաբնակ գեղատեսիլ աւան մըն է, շրջապատուած տասնեակ մը հայաբնակ գիւղերով: Հայերը հոս հաստատուած են գլխաւորաբար սուրիական Սանճաքի պարպումէն ետք՝ նախապէս գոյութիւն ունեցող գաղութին կարեւորութիւնը աւելի շեշտելով:

25 Յունիս 1948ին, Հ.Յ.Դ. պատանեկան միութեան քաջալերանքով կը կազմուի Քեսապի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը, որուն շուրջ կը բոլորուին 59 անդամներ, որոնցմէ 32ը՝ սկաուտական տարիքի պատանիներ: 19 Սեպտեմբեր 1948ին, տեղի կ'ունենայ սկաուտներու երդման արարողութիւն, եւ մասնաճիւղի առժամեայ վարչութիւնը 26 Սեպտեմբեր թուակիր նամակով կը դիմէ Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Շրջանային Վարչութեան ստանալու համար անոր վաւերացումը: Տարեվերջէն առաջ կը կազմուին Ֆութպոլի, պասքեթպոլի եւ վոլիպոլի խումբեր: Խումբերը կը մարզուին Ազգային Ուսումնասիրաց վարժարանի դաշտին վրայ: Մասնաճիւղի

նստավայրն է Հ.Յ.Դ. պատանեկան միութեան աւուլը, ուր ունի փինկ-փոնկի յատուկ սենեակ:

1949ի սկիզբը, անդամական ընդհանուր ժողովը կը կատարէ մնայուն վարչութեան ընտրութիւն եւ 20 Մարտ 1949 թուակիր նամակով կը դիմէ Շրջանային Վարչութեան, ստանալու համար վաւերացում: Շրջանային Վարչութիւնը թիւ 28՝ 28 Մարտ 1949 թուակիր նամակով կը վաւերացնէ նորընտիր վարչական կազմը:

Մասնաճիւղի կազմութենէն տարի մը ետք, Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ Քեսապի մէջ կը կազմակերպուի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական տարեկան ընդհանուր բանակումը, որուն յաջողութեան կը նպաստեն մասնաճիւղի վարչութիւնն ու սկաուտական կազմը: Բանակումի ընթացքին Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ կը նշանակուի տեղւոյն ազգայիններէն բժիշկ Աւետիս Ինճեճիքեանը:

Ընդհանուր բանակումին Քեսապի մէջ կազմակերպուելը յաւելեալ խանդավառութիւն կը ստեղծէ տեղւոյն մասնաճիւղի գործունէութեան շուրջ: 1950ին, մասնաճիւղը կը հաշուէ 32 սկաուտ, 7 գայլիկ եւ 61 մարզիկ ու օժանդակ անդամ: Տարեկան մուտքերու գումարն է 1189 սուրիական ոսկի, ելք՝ 999 ս.ոսկի:

1950ի Օգոստոսին, Հ.Մ.Ը.Մ.ի տարեկան ընդհանուր բանակումը կրկին կը կազմակերպուի Քեսապի մէջ: Վարչութիւնը ճիգ չի խնայեր ընդհանուր բանակումի յաջողութեան համար, եւ Քեսապի սկաուտները կ'օգտուին քոյր մասնաճիւղերու փորձառութենէն:

11 Յունիս 1951ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Յակոբ Մկրտիչեան
- Ատենադպիր՝ Ճորճ Լնդեան
- Գանձապահ՝ Արամ Զիւրիւքեան
- Խորհրդականներ՝ Վահան Մանճիկեան, Սողոմոն Սեֆերեան:

Շրջանային վարչութեան 13 Հոկտեմբեր 1955ի նիստին ներկայ կը գտնուի Շրջանային վարչութեան գործիչ Լուտեր Մասպանաճեանը: Վերջինս կը վերադառնար հիւսիսային Սուրիոյ մասնաճիւղերուն տուած իր այցելութենէն: Իւրաքանչիւր մասնաճիւղի մասին իր ամփոփ տեղեկութիւններու շարքին, Քեսապի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մասին Շրջանային վարչութիւնը իր ատենագրութեան մէջ արձանագրած է.-

«Քեսապ՝ մասնաճիւղ գոյութիւն չունի»:

ԱՄՈՒՏԱ

1955ի աշնան, Ամուտայի մէջ կը հիմնուի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը, որուն առժամեայ վարչութեան մաս կը կազմեն երեք անդամներ:

Այս մարմինը կը դիմէ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ, Լիբանանի եւ Յորդանանի Շրջանային վարչութեան խնդրելով, որ իրենց Ֆոլթպոլի խումբը մասնակցի 1956ի միջ-մասնաճիւղային հանդիպումներուն: Վերջինս, քաջալերելու համար Ամուտայի մասնաճիւղի նախաձեռնութիւնը, կ'արտօնէ մասնաճիւղի Ֆոլթպոլի խումբին, մասնակցիլ Զատկական միջ-մասնաճիւղային մրցումներուն, պայմանաւ որ շուտով յարգուին մասնաճիւղը օրինականացնելու եւ անդամական ընդհանուր ժողովի կողմէ ընտրուած վարչական կազմի մը վաւերացումի կանոնագրային տրամադրութիւնները:

Դիմումը ուշանալուն պատճառով, 6 Յունիս 1956 թուակիր նամակով Շրջանային վարչութիւնը կը գրէ մասնաճիւղի պատասխանատուներէն Մանուէլ Մանուչակեանին եւ Գէորգ Գարաօղլանեանին յիշեցնելով, որ պէտք է տեղեկագրեն.-

«1.- Մասնաճիւղին կապութեան պարագաները

2.- Վարչութեան ընտրութեան ձեւը եւ անդամներու անունները

3.- Մարպիկ եւ պարպ անդամներու թիւը

4.- Մասնաճիւղին եւ վարչութեան ցարդ տարած աշխատանքները»:

Վերոյիշեալ պահանջներուն գոհացում տալու համար Ամուտայի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը կ'ուղարկէ 14 Յունիս եւ 11 Յուլիս թուակիր նամակներ: Շրջանային վարչութիւնը, իր կարգին, 16 Յուլիս 1956 թուակիր նամակով կը վաւերացնէ մասնաճիւղը եւ նորընտիր վարչական կազմը հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Կարապետ Կարապետեան

Ատենադպիր՝ Մինաս Մինասեան

Գանձապահ՝ Յակոբ Կիրակոսեան

Արաբերէնի ատենադպիր՝ Յովհաննէս Կարապետեան

Խորհրդականներ՝ Նշան Նշանեան, Յովհաննէս Ֆերմանեան, Սարգիս Գալայճեան:

Մասնաճիւղը, իբրեւ հաւաքավայր, առժամաբար կ'օգտագործէ Ազգային վարժարանի սրահը, սակայն կը հանդիպի ընդիմութեան:

Վարչութիւնը կը ծրագրէ ունենալ իր սեփական աւուլները: Առ այդ կը խնդրէ Շրջանային վարչութենէն, որպէսզի արտօնութիւն ստանայ քոյր մասնաճիւղերու դիմել եւ սեփական աւուլներ մը շինութեան համար անոնց օժանդակութիւնը ստանալ: Մինչեւ հոկտեմբեր, մասնաճիւղը աւուլներ ծրագրին համար կը հանգանակէ 1100 սուրիական ոսկի: Շրջանային վարչութիւնն ալ կ'օժանդակէ այս ծրագրին՝ նիւթական նպաստով: Մասնաճիւղը խանդավառութեամբ կը լծուի այդ աշխատանքին:

1957ի սկիզբը, Ամուտայի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ: Դիւանին մաս կը կազմեն՝ Յ. Յովհաննէսեան՝ Ատենապետ եւ Նշան Նշանեան՝ ատենադպիր: Այս կազմի գլխաւոր դժուարութիւնը կ'ըլլայ Ամուտայի 60 ընտանիք հաշուող հայ բնակչութեան մէկ մասին կողմէ՝ Հ.Մ.Ը.Մ.ի սկստական խումբի մը կազմութեան ծրագրին հանդէպ յարուցուած ընդիմութիւնը դիմագրաւել: Մարզական բաժինը կը յառաջդիմէ բնականօրէն: Ֆոլթպոլի կողքին մասնաճիւղը կը կիրարկէ նաեւ փինկ-փոնկ: Անդամներու

թիւն է՝ օժանդակ՝ 16, մարզիկ՝ 13 եւ սկաուտական կազմ՝ 25:

1959ի Ապրիլին Ամուտայի Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուլթայոլի խումբը կը մասնակցի միջ-մասնաճիւղային 32րդ խաղերուն՝ Հալէպ:

1960ի Փետրուարին, մասնաճիւղը կ'ընտրէ նոր վարչական կազմ եւ կը ստանայ Շրջանային Վարչութեան վաւերացումը:

Ֆուլթայոլի խումբը տարուէ տարի զօրանալով փնտռուած խաղակից մը կը դառնայ իր շրջանի տեղական խումբերուն համար եւ մրցումները կ'աւարտէ պատուաբեր յաղթանակներով: Նոյնպէս, խումբը կը տեղափոխուի Ճէզիրէի շրջանի քոյր մասնաճիւղերուն դէմ եղբայրական հանդիպումներ ունենալու համար:

Ամուտայի մասնաճիւղի խոստմնալից յառաջդիմութիւններն ալ 1961ին կը կասեցուին, երբ մարզական միութիւններու կազմութեան եւ արտօնութեան պետական նոր պայմանները չեն կրնար ամբողջացնել նման փոքրաթիւ հայ գաղութները:

ԱՅՆ ԱՐՈՒՍ

7 Յունիս 1947ին, Սուրիոյ հիւսիսային սահմաններու մօտակայ հայաբնակ Այն Արուս գիւղին մէջ հիմը կը դրուի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին: 20 անդամներ ներկայ կը գտնուին այս հիմնադրութեան ժողովին: Անոնցմէ 6ը արդէն սկաուտներ են, որոնք կը մասնակցին մօտակայ Թել Ապիատի մասնաճիւղի սկաուտական գործունէութեան: Վարչութեան ատենապետն է Պոյաճեան:

Այն Արուսի մասնաճիւղը իր հիմնադրութեան տարին իսկ կ'ապահովէ սեփական դաշտ եւ աղումը, ինչ որ կը դիւրացնէ եւ կ'արագացնէ մասնաճիւղի գործունէութիւնը:

Մարզական կիրարկուող ճիւղերն են Ֆուլթայոլը եւ վոլիպոլը:

1948 տարուան վարչութեան ատենադպիրն է Ա. Գաւաճեան:

Մինչեւ 1948ի աւարտը, մասնաճիւղի նիւթական գործունէութեան պատկերն է մուտք՝ 191 ս.ոսկի, ելք՝ 168 ս.ոսկի: Եկամուտի աղբիւրներն են անդամատուրքերն ու նուիրատուութիւնները: 1948ին, Այն Արուսի Ֆուլթայոլի խումբը կը մասնակցի Զատկական միջ-մասնաճիւղային Ֆուլթայոլի մրցաշարքերուն: Սակայն, յաջորդող տարիներուն, յատկապէս 1950ին, Ֆուլթայոլ խաղացողներու թիւը բաւարար չըլլալուն եւ այլ մասնաճիւղերէ խաղացողներ փոխառնելու արգելքին դիմաց, Այն Արուսի Հ.Մ.Ը.Մ.ը կը գրկուի միջ-մասնաճիւղային հանդիպումներէն: Այս կը հաստատէ նաեւ Շրջանային Վարչութեան կողմէ Հ.Մ.Ը.Մ.ի պատմագիրքի մը պատրաստութեան նպատակով գործուողուած Սարգիս Բախտիկեանի զեկուցումը Այն Արուսի մասնաճիւղին մասին. «7-8 անդամներով տկար կապ մը որ դժուար պայմաններու մէջ հապիւ իրենց գոյութիւնը կը պահեն»:

Զգալի է, որ խանդավառութեամբ սկսուած մասնաճիւղի գործունէութիւնը կարճ ժամանակ գործելէ ետք կը դադրի վերջնականապէս: 1957ի սկիզբը, մօտակայ Թել Ապիատի վարչութիւնը կը գրէ Շրջանային Վարչութեան. «Այն Արուսի մէջ հայութիւն չէ մնացած, հետեւաբար չէ մնացած նաեւ մասնաճիւղ»: Շրջանային Վարչութիւնը Թել Ապիատի վարչութեան կը յանձնարարէ տէր կանգնիլ մասնաճիւղի գոյքերուն եւ սպասել իր ցուցմունքներուն:

ՌԱՔՔԱ

Ռաքքան հիւսիսային Սուրիոյ Ճէզիրէի նահանգի գիւղերէն մէկն է, ուր երկրագործական աշխատանքներու համար հայեր հաստատուած են ժամանակի ընթացքին:

Ռաքքայի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը կազմելու ծրագիրը կը յաջողի 1950 թուականին, երբ ամրան սկիզբը մասնաճիւղի անդամները ընտրելով առժամեայ վարչութիւն մը, Հալէպի մասնաճիւղին միջոցաւ Շրջանային Վարչու-

Թեան կը դիմեն ստանալու համար մասնաճիւղի վաւերացումը: Շրջանային Վարչութիւնը 2 Օգոստոս 1950ի նիստով կը վաւերացնէ մասնաճիւղը:

Մէկ տարի ետք մասնաճիւղի անդամներու թիւը կը բարձրանայ 40ի: Մասնաճիւղը կ'ունենայ իր աւուստը: Շրջանային Վարչութիւնը 200 ս. սկիզբով կը նպաստէ մասնաճիւղի աւուստին բարեզարդման: Վարչութեան ատենապետն է Յ. Սարգիսեան, ատենադպիրը՝ Վ. Նաճարեան: Առաջին հերթին մասնաճիւղը կը կազմէ ֆուտպոլի խումբ:

1952ի միջ-մասնաճիւղային խաղերուն Ռաքքայի ֆուտպոլի խումբը իր մասնակցութիւնը կը բերէ:

1953էն սկսեալ, մասնաճիւղը նիւթական դժուարութիւններու պատճառով կը սկսի կաղալ: Աւուստի վարձք եւ ընթացիկ այլ ծախսեր կը դժուարացնեն ընթացքը:

Անգործունէութեան այս վիճակը պիտի երկարէր մինչեւ 1954ի վերջաւորութիւնը:

15 Մարտ 1955ին, անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ.-

- Ատենապետ՝ Լեւոն Տապաղեան
- Ատենադպիր՝ Խաչեր Ներսէսեան
- Գանձապահ՝ Գառնիկ Թազուրեան
- Գոյքապահ՝ Պետրոս Պետրոսեան

Մարզական պատասխանատու՝ Գրիգոր Գասպարեան:

Միաժամանակ, մասնաճիւղի նորակազմ ֆուտպոլի խումբը կը պատրաստուի մասնակցելու Ապրիլ 9-11ի Զատիկական միջ-մասնաճիւղային խաղերուն՝ Հալէպի մէջ:

Սակայն մասնաճիւղի տնտեսական անձուկ վիճակը չի բարելաւուիր: Կարիքը ունին բակով աւուստի մը, որուն վարձքը հայթայթելու դժուարութեան առջեւ կը գտնուին: Կը դիմեն Շրջանային Վարչութեան: Շրջանային Վարչութիւնը անգամ մը եւս կը նպաստէ մասնաճիւղի դժուարութիւնները հարթելու նպատակով: Վարչութիւնը կ'ապահովէ աւուստ մը: Միջանկ-



Հ.Մ.Մ.ի Ռաքքայի մասնաճիւղի 1955 տարուայ ֆուտպոլի խումբը

եալ, մասնաճիւղը կը ստանայ պետական արտօնութիւն՝ Նէտի Ահտէս էլ Րիատի անունով:

18 Մարտ 1956ի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ.-

- Ատենապետ՝ Լեւոն Տապաղեան
- Փոխ ատենապետ՝ Գրիգոր Գասպարեան
- Ատենադպիր՝ Խաչեր Ներսէսեան
- Գանձապահ՝ Գառնիկ Թազուրեան
- Գոյքապահ՝ Ալեսիս Պետրոսեան
- Ֆուտպոլի պատասխանատու՝ Պետրոս Պետրոսեան

Փինկ-փոնկի պատասխանատու՝ Գէորգ Ղազարեան:

Ֆուտպոլի խումբը կրկին կը մասնակցի միջ-մասնաճիւղային խաղերուն: Ուրիշ ոչ մէկ գործունէութիւն: Տարեվերջին, վարչութիւնը կրկին կը դիմէ Շրջանային Վարչութեան.- «Սիրելի եղբայրներ, այս պայմաններով կարելի չէ աւուստ պահել ներկայի վարձքի պայմանաժամը լրացած է եւ կալուածատէրէն խնդրած ենք (10) օր պայմանաժամ տայ որ ձեզի գրենք, ահաւասիկ եթէ ձեր կողմէն այս վարձքի գումարը վճարէք այն ատեն պիտի կարենանք աւուստը պահել, իսկ եթէ չօգնէք մեզի այն ատեն պիտի ստիպուինք աւուստը փակել»:

Շրջանային վարչութիւնը կ'որոշէ Լուտեր Մասպանաճեանը գործուղել Ռաքքա որպէսզի զեկուցէ մասնաճիւղի վիճակին մասին:

1957ին՝ ահուժը փակուած է եւ գոյքերը փոխադրուած են ատենադպիր Խաչեր Ներսէսեանի բնակարանը, ուր տեղի կ'ունենային վարչական նիստերը: Սակայն մարզական գործունէութիւնը կը շարունակուի յաջորդող տարիներու ընթացքին: 1960ի Զատկական միջ-մասնաճիւղային մրցաշարքին Ռաքքայի մասնաճիւղի Ֆուտպոլի խումբը իր մասնակցութիւնը վերջին անգամ ըլլալով կը բերէ, որպէս Գ. դասակարգի խումբ:

Ռաքքայի մասնաճիւղը հետզհետէ տկարանալով, 1961ին կը դադրի գործելէ:

ԹԵԼ ՊՐԱՔ

1945ի ամրան, հիւսիսային Սուրիոյ Ճէզիրէի շրջանի Թել Պրաք գիւղին մէջ կը կազմուի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ: Շրջանային վարչութիւնը ստանալով մասնաճիւղի հիմնադրութեան նամակը կը վաւերացնէ զայն, ինչպէս նաեւ օրուայ առժամեայ վարչութիւնը:

Շուտով վրայ կը հասնին գիւղի հայութեան տեղափոխման օրերը, եւ 1946էն 1948 ժամանակաշրջանին դէպի Հայրենիք ներգաղթի պատճառով Թել-Պրաքի հայութիւնը կարեւոր համեմատութեամբ կը պարպուի, ջլատելով միութենական եւ ազգային ամէն գործունէութիւն մինչեւ 1949 թուականի կէսերը, երբ մասնաճիւղը վերակազմութեան աշխատանքին կը լծուի: Նորեկ հայեր կը խտացնեն Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը: 1950ի Փետրուարին, անդամական ընդհանուր ժողով գումարելով մասնաճիւղը կ'ունենայ նոր վարչական կազմ:-

- Ատենապետ՝ Սարգիս Դանիէլեան
- Ատենադպիր՝ Արմենակ Նշանեան
- Գանձապահ՝ Մինաս Յարութիւնեան

Մարզական խմբապետ՝ Անդրանիկ Յովհաննէսեան

Խորհրդական՝ Գէորգ Յովհաննէսեան:

Փոքրաթիւ այս մասնաճիւղը գաղափարը կ'ունենայ իբր եկամուտի աղբիւր՝ գարիի ցանքեր մշակել, որուն արդիւնքով պիտի հոգացուի ընթացիկ ծախսերը:

1950ի 24րդ միջ-մասնաճիւղային հանդիպումներուն մասնաճիւղը իր մասնակցութիւնը կը բերէ Ֆուտպոլի խումբով մը, որ ստիպուած կ'ըլլայ զօրացնել Հայէպի մասնաճիւղէն խաղացողներով: Խաղերու կանոնագրութեան դէմ մեղանշող այս արարքը պատճառ կը դառնայ դիտողութեան:

Տարեվերջին անդամներու ընդհանուր թիւն է 30: Իբրեւ ահուժը կ'օգտագործեն ազգային վարժարանի սրահը:

1951ի գարնան վարչական անդամներու միջեւ անհասկացողութիւն մը կը դժուարացնէ մասնաճիւղի գործունէութեան ընթացքը, վարչական եւ անդամական ժողովները չեն գումարուիր: Շրջանային վարչութիւնը կը գրէ վարչութեան ատենապետին եւ բացատրութիւն կը պահանջէ: Նամակը կը մնայ անպատասխան: Շրջանային վարչութիւնը հարցի քննութիւնը կը վստահի Գամիշլիի մասնաճիւղէն Կարպիս Գալայճեանի եւ Արամ Սարգիսեանի: Հարցը կրկին կը մնայ անլոյծ: Առժամաբար, Շրջանային վարչութիւնը մասնաճիւղի աշխատանքները կը վստահի նշանակովի մարմնի մը՝ ատենապետութեամբ Յովհաննէս Կարապետեանի եւ ատենադպրութեամբ Մ. Կարապետեանի: Այս կազմի գործունէութիւնը պիտի երկարէր մինչեւ 1952ի Մայիս ամիսը:

12-14 Ապրիլ, 1952ին, մասնաճիւղի Ֆուտպոլի կազմը կը մասնակցի Զատկական 26րդ միջ-մասնաճիւղային մրցաշարքին եւ 1-0 արդիւնքով կը յաղթէ Ռաքքայի խումբին: Խումբին մաս կը կազմեն Անդրանիկ Յովհաննէսեան, Կիրակոս Խոչքարեան, Յովհաննէս Երամեան, Ժիրայր Երամեան, Աւետիս Դանիէլեան, Միհրան Հապոյեան, Ասատուր Հապոյեան, Կարապետ Կարապետեան, վարդան Կարապետեան,



Թել Պրաքի Հ.Մ.Ը.Մ.ի 1955ի ֆութպոլի խումբը

Յովսէփ Աղպապեան, Աբրահամ Տօնապետեան, Յարութիւն Յարութիւնեան եւ Զոհրապ Կարապետեան:

1952 Մայիսին, անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ.-

Ատենապետ՝ Միհրան Հապոյեան
 Ատենադպիր՝ Յովհաննէս Երամեան
 Գանձապահ՝ Գէորգ Յովհաննէսեան
 Գոյքապահ՝ Յովհաննէս Կարապետեան
 Գանձիչ՝ Մինաս Յարութիւնեան:

Մասնաճիւղը վերագտած է իր գործունէութեան բնական ընթացքը: Կիրարկուող մարզական միակ ճիւղը ֆութպոլն է: Խումբը մրցումներ կ'ունենայ մերձակայ գիւղերու քրտական խումբերուն դէմ՝ յաղթական արդիւնքներով: Շրջանային վարչութիւնը կը քաջալերէ գործի վրայ մնացող վարչական կազմը:

1 Սեպտեմբեր 1954ին, անդամական ընդհանուր ժողովը մասնաճիւղի վարչական կազմը կը նորոգէ հետեւալ ձեւով.-

Ատենապետ՝ Միհրան Հապոյեան
 Ատենադպիր՝ Ալետիս Դանիէլեան
 Գանձապահ՝ Յարութիւն Մինասեան
 Հաշուապահ՝ Աբրահամ Տանայեան:

Տարեշրջանին անդամներու թիւը կը բարձրանայ 30ի: Մասնաճիւղը, ֆութպոլի զոյգ կազմերու ընդհանուր թիւը կը բարձրանայ 20ի:

մերու կողքին, կը կիրարկէ նաեւ աթլետիզմ: Մասնաճիւղը զոյգ պատգամաւորներով կը մասնակցի 1954ի Շրջանային Պատգամաւորական 12րդ ժողովին: Նիւթական գործառնութեան պատկերն է՝ մուտք՝ 375 ս. ոսկի, ելք՝ 276 ս. ոսկի:

1957էն սկսեալ, արտագաղթի պատճառով Թել Պրաքի հայութեան թիւը կը նուազի եւ մասնաճիւղը իր գործունէութիւնը կը դադրեցնէ:

ՊԱՆԻԱՍ

Պանիաս՝ Սուրիոյ ծովեզերեայ շրջանի աւաններէն մէկն է, Լաթաքիայէն դէպի հարաւ գտնուող նաւահանգիստ մը, ուր հայեր հաւաքուած են 1950ական թուականներէն սկսեալ, գլխաւորաբար նաւթային ընկերութեան մէջ գործելու կամ պաշտօններ վարելու նպատակով:

18 Նոյեմբեր եւ 26 Նոյեմբեր 1951ի զոյգ նիստերով Պանիաս բնակող խումբ մը հայ երիտասարդներ, բոլորուելով Գրիգոր Գաբարիկեանի եւ Գրիգոր Շիթիլեանի շուրջ, կը հիմնեն մարզական միութիւն մը եւ կը կազմեն ֆութպոլի խումբ: Միութեան հիմնադիր վարչութեան մաս կը կազմեն Գրիգոր Գաբարիկեան՝ ատենապետ, Ճորճ Հարֆուշեան՝ ատենադպիր, Յովհաննէս Զենեան՝ Գանձապահ, որոնք 3 Ապրիլ 1952 թուակիր նամակով կը դիմեն Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ, Լիբանանի եւ Յորդանանի Շրջանային վարչութեան խնդրելով, որ Պանիասի մարզական միութիւնը անդամ դառնայ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին եւ արտօնուի իրենց ֆութպոլի խումբով մասնակցելու 1952ի Զատկական միջ-մասնաճիւղային խաղերուն:

Շրջանային վարչութիւնը 9 Ապրիլ 1952 թուակիր նամակով Պանիասի մարզական միութիւնը կ'ընդունի իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի Պանիասի մասնաճիւղ:

Վեցամսեայ գործունէութենէ ետք անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 20ի:

Վարչութիւնը իր գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը կը ներկայացնէ անդամական ընդհանուր ժողովին:

Վերջինս տեղի կ'ունենայ 18 Մայիս 1952ին եւ կ'ընտրէ նոր վարչական կազմ:-

Ատենապետ՝ Գրիգոր Գաբարիկեան

Ատենադպիր՝ Մելքոն Եսայեան

Գանձապահ՝ Յովհաննէս Զէնեան

Խորհրդականներ՝ Ճորճ Հարֆուշեան, Գրիգոր Փիլիպոսեան:

1952ի ընթացքին մասնաճիւղը կը ստանայ պետական սկզբունքային վաւերացում՝ թիւ 2911, 28 Օգոստոս 1952 թուակիր հրամանագրով եւ Նէտի Սուրի Լիալապ Ռիատիէ անունով:

Անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 30ի, որոնցմէ 13ը Ֆուլթպոլի խումբին անդամներն են: Ունին նաեւ մէկ լողորդ եւ մէկ հեծելանաւորդ:

Նկատի ունենալով, որ պետական սկզբունքային հրամանագիրը վերջնական ու մնայուն դառնալու համար պայման է ունենալ յատուկ խաղավայր եւ նստավայր, վարչութիւնը կ'ապահովէ I.P.C. LTD-ի դաշտի արտօնութիւնը իբրեւ խաղավայր եւ կը ծրագրէ ունենալ ահումբ մը, որուն իրականացման համար կը նախատեսուի 2000 ս. ոսկիի գումար մը: Այս աշխատանքի իրականացման համար վարչութիւնը կը նշանակէ 7 հոգինոց յանձնախումբ:

Նախատեսուած ահումբի իրականացման համար Շրջանային Վարչութիւնը 300 լիբանանեան ոսկի կը յատկացնէ: Մինչեւ 1953ի Մայիս ամիսը վարձուած ահումբը կը կահաւորուի: Բացումը տեղի կ'ունենայ 31 Մայիս 1953ին, հովանաւորութեամբ շրջանի նահանգապետին եւ պետական բարձրաստիճան անձնաւորութիւններու:

Մասնաճիւղը իբրեւ Պանիասի մէջ գործող միակ հայ կազմակերպութիւն, յանձնառու կը դառնայ նաեւ երիտասարդութեան հայեցի դաստիարակութեան եւ մշակութային ձեռնարկներու կազմակերպումին:

1954ի գարնան, Ֆուլթպոլի խումբէն կարե-

ւոր համեմատութեամբ խաղացողներ պաշտօնի բերմամբ կը տեղափոխուին, ինչ որ պատճառ կը դառնայ խումբի քայքայուելուն եւ Պանիասը կը բացակայի 1954ի Զատիկական միջ-մասնաճիւղային խաղերէն: 1954ին, վարչութեան ատենապետն է Գրիգոր Գաբարիկեանը, ատենադպիրը՝ Զոհրապ Թամզարեան:

1955ին նոր դժուարութիւններ՝ քարիւղի ընկերութեան գործունէութեան ամփոփում, անդամներու մեկնում, նիւթական անձուկ կացութիւն, պատճառ կը դառնան Պանիասի ահումբի փակումին: Գործի վրայ մնացած երեք վարչականներ, 16 Յունիս 1955 թուակիր նամակով այս վիճակը Շրջանային Վարչութեան կը տեղեկագրեն:

Շրջանային Վարչութիւն եւ գործիչ Լուտեր Մասպանաճեան յաջորդաբար Պանիաս կ'այցելեն, անձամբ քննելու համար կացութիւնը:

12 Օգոստոս 1955 թուակիր նամակով, Շրջանային Վարչութիւնը Պանիասի մասնաճիւղի վարչականներ կը նշանակէ հետեւեալ անդամները, Պետրոս Ագրլեան, Ռոստոմ Եղոյեան, Հայկ Աբելեան, Յակոբ Մանուկեան եւ Պետրոս Շահպագեան, աւելցնելով՝

«Կը վաւերացնենք նշանակովի մարմինդ եւ կը յուսանք թէ նիւթական եւ բարոյական կարելի Կոհողութիւնը պիտի չի խնայէք երբեմնի իր առողջ եւ կենսունակ վիճակին հասցնելու համար շրջանդ»: Այս տողերը գրելով հանդերձ, Շրջանային Վարչութիւնը լաւատես չէ մասնաճիւղի ապագայի մասին եւ 13 Հոկտեմբեր 1955ի ժողովական իր արձանագրութեան մէջ կը գրէ. «Հակառակ մեր կարծիքին, մասնաճիւղը գոյութիւն ունի: Թելադրուեցաւ եղբ. Լուտերին կրկին հանդիպիլ Պանիաս եւ աջակցիլ իրենց կապակերպչական աշխատանքին»:

Այս ձեւի անկայուն գործունէութեամբ մասնաճիւղը կը շարունակէ ոտքի մնալ մինչեւ 1956 տարուան վերջաւորութիւնը: 1957ի սկիզբը ան կը դադրի գործելէ եւ գոյքերը կը փոխանցուին Լաթաքիոյ մասնաճիւղին:



1. Հալեպի Հ.Մ.Ը.Մ. իմբապետական կապը տողանցքի պահուն - 2. Բանակում Քեսապի մեջ - 3. Ս.Օ.Խաչի արծուիկները Տիկ. Նապենի Մարտիկեանի հետ - 4. Հարթարում Նաւասարդեան մարվադաշտին - 5. Լաթաքիոյ Հ.Մ.Ը.Մ.ի պապեթպոլի խումբը 1958ին - 6. Համարաբանական Գ. Ընդի. բանակումին մասնակից Սուրբիոյ Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտներ - 7. Ալեպի ֆուրթպոլի խումբը 1949ին - 8. Հալեպի աթլետիք մրցումներու դատական կապը:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

ԱՐԺԱՆԹԻՆ

- ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ
- ԳՈՐՏՈՊԱ

ՈՒՐՈՒԿՈՒԷՅ


- ՄՈՆԹԵՎԻՏԷՅ

ՊՐԱԶԻԼ

- ՍԱՆ ՓԱՈՒԼՕ



Պուէնսու Ալրէսի Հ.Մ.Ը.Մ.ի 1960ական թուականներու վարչութեան կազմը. Ուոքի՝ Անթոնիօ Կիլէճեան, Արշակ Տէր Յակոբեան, Հարի Գունտաքճեան, Գարլոս Մարգարեան: Նստած՝ Տոքթ. Լուիս Ճեկալեան, Ճերարսո Ճերեճեան, Պարգեւ Պարսամեան, Արամ Կիւլեղեան եւ Միսաք Գարամանեան



Պուէնսու Ալրէսի Հ.Մ.Ը.Մ.ի մարզադաշտի լողալու աւազանը

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

1914-18 Համաշխարհային Ընդհանուր Պատերազմի հետեւանքով եւ անոր ավարտէն ետք Հարաւային Ամերիկայի երկիրներուն մէջ հաստատուած հայութիւնը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր՝ Արժանթինի, Պրագիլիոյ եւ Ուրուկուէյի մէջ: 1940էն 1974 տարիներու ժամանակամիջոցին այս մասնաճիւղերու գործունէութիւնները մնացին նոյն քաղաքներուն մէջ, ուր արդէն սկսած էին գործել նախապէս:

Կարեւորագոյն գործունէութիւնը ծաւալեցաւ Արժանթինի մայրաքաղաք Պուէնոս Այրէսի մէջ: Իսկ Գորտոպայի մասնաճիւղի գործունէութիւնը սահմանափակ ծաւալ ունեցաւ:

Պրագիլիոյ մէջ գործեց Սան Փաուլոյի մասնաճիւղը: Իսկ Ուրուկուէյի մէջ Մոնթեվիտոյի Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը սահմանափակուեցաւ սկաուտական գործունէութեամբ:

Ստորեւ, վերոյիշեալ Հարաւ Ամերիկեան երկիրներու մասնաճիւղերու գործունէութեանց մասին պատմական արձանագրութիւններ:

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

Համաշխարհային Բ. Ընդհանուր Պատերազմի անձուկ օրերուն, 1942ին կազմակերպուած Նաւասարդեան տօնի եկամուտի խնայողութեամբ, նաեւ Թագլոր Պագրճեանի 30.000 փեսոյի եւ այլ փոխատուութիւններու շնորհիւ, Ռամոս Մեխիայի շրջանին մէջ Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը կը յաջողի ապահովել իրեն համար այնքան կենսական սեփական դաշտի հողաչերտը: Հողաչերտին վրայ շինարարական ծրագրին զօրավիգ կը կանգնի երախտաշատ հայուհի մը՝ Մարթա Տիարպեքիրեան, որ 15.000 տոլարի նուիրատուութեամբ կարելի կը դարձնէ մասնաճիւղի այս ծրագիրը:

Շինարարական այս հսկայ համալիրը մինչեւ 1946 թուականը արդէն կը պարփակէ թենիսի 3, պասքեթպոլի 1, վոլիպոլի 1 եւ զոյգ մը պոչայի դաշտեր, ինչպէս նաեւ վազքուղի եւ ոստումի հարթակ: Իր մեծագումար նուիրատուութեան համար, Հ.Մ.Ը.Մ.ի անդամական ընդհանուր ժողովի որոշումով, Տիկին Մարթա Տիարպեքիրեանին կը շնորհուի «Հ.Մ.Ը.Մ.ի ՄԱՅՐ» տիտղոսը: Նոյն տարեշրջանի վարչական անդամներն են.-

Նախագահ՝ Արտաշէս Սարգիսեան
Ատենապետ՝ Թադէոս Պէօճենեան
Ատենադպիրներ՝ Արամ Կիւզելեան, Թ. Քէշիշեան

Գանձապահ՝ Ռոլանտօ Պերկամալի
Խորհրդականներ՝ Սիմոն Էմպեքեան, Աստիկ Քելեշեան, Ա. Սարգիսեան, Պարգեւ Պարսամեան, Արմենակ Ֆերեճեան:

Վարչական կազմին կ'օժանդակէ Մարմնակրթական Տնօրէնութիւն մը, որուն կ'անդամակցին.-

Տնօրէն՝ Կարօ Շահինեան
Բ. տնօրէն՝ Րաֆֆի Միրաքեան
Ատենադպիրներ՝ Փաուլօ Ներսէսեան, Ի. Մօրլեան

Գանձապահ՝ Սարգիս Թիւֆենքճեան, Վարդան Շահինեան:

Մարմնակրթական տնօրէնութեան կողմէ իւրաքանչիւր մարզաճիւղի համար նշանակուած յանձնախումբերն են.-

Թենիս՝ Յովհաննէս Թաշճեան, Փետրօ Մակազեան, Արամ Ճենազեան

Պասքեթպոլ՝ Գրիգոր Թիւթիւնճեան, Սարգիս Մինասեան

Վոլիպոլ՝ Սարգիս Թիւֆենքճեան, Արամ Ահարոնեան, Զոհրապ Տէր Խաչատուրեան

Աթլեթիզմ՝ Հայկ Էմիրեան, Ա. Ահարոնեան, Կղմէս Թոսունեան

Կանանց բաժին՝ Մարի Կիւզելեան, Մարի Թաշճեան, Նելլի Պէօճենեան, Էմմա Վարդապետեան, Ալեկրա Տիարպեքիրեան, Շուշան Շահինեան:

Չարկ տալու համար մարմնակրթանքին, Պուէնոս Այրէսի Կրթական Խորհուրդին ենթակայ 14 վարժարաններէն ներս, մասնաճիւղի վարչութեան եւ կրթական խորհուրդի հաւանութեամբ, Հ.Մ.Ը.Մ. նշանակած է մարզիչներ: Այդ վարժարաններէն են՝ Մեսրոպեան, Սահակեան, Կիլիկեան-Լուսինեան, Արսլանեան, Արծրունի, Կրթասիրաց, Նուպարեան, Խաչիկեան, Խրիմեան եւ Վոլոբէսի Ազգ. վարժարանները: Միաժամանակ, Հ.Մ.Ը.Մ.ը կը կազմակերպէ միջ-վարժարանային մարզախաղերու մրցաշարքերը [Ը.198,199]:

Հ.Մ.Ը.Մ.ի Ռամոս Մելիայի համալիրի շինարարական ծրագիրը, ահումբի շէնքի բաժինով, երկարամեայ ճիգեր կը պահանջէ ժրջան եւ հետեւողական աշխատանքին լծուած վարչական կազմերէն:



1949 տարուայ Արժանթինի Ա. դասակարգի ախոյեանութեան մասնակից Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի վոլիպոլի խումբը

1952ի վերջաւորութեան, օրուան վարչութեան ճիգերով ձեռք կը ձգուի սկաուտական գործունէութեան պետական արտօնագիրը: Վարչութեան ատենապետ Յովհաննէս Ստեփանեան այս առթիւ խորհրդակցութեան կը հրաւիրէ սկաուտական շարժումի մասնագէտ անդամները եւ 1953 Յունուար 8ին, կը կազմուի Պուէնոս Այրէսի հայ Արիներու խորհուրդը հետեւեալ կազմով.

Հոգեւոր հայր՝ Ծաւարչ Քհնյ. Մեհրապեան
Ընդհանուր պետ՝ Կարպիս Տէր Մեսրոպեան
Ծեր Գայլ՝ Կարօ Գալիկեան
Թեքնիք խմբապետներ՝ Չարեհ Տէմիրճեան,
Պարոյր Զանիկեան

Քարտուղարներ՝ Յարութիւն Մանուկեան,
Անդրանիկ Մուրատեան:

Աստիճանաւորական կազմի անդամներն են՝ Աքելլա՝ Պետիկ Թեքիրտաղլեան, օգնական՝ Համբարձում Մատթէոսեան, արիներու պատասխանատու՝ Միքայէլ Եմէնիճեան, օգնական՝ Գառնիկ Եմէնիճեան:

Յունուար 25ին, կրտսերներու խումբի կազմութեան առթիւ տեղի կ'ունենայ բացման հանդիսութիւն, որու ընթացքին 38 նորագիրներ կու տան սկաուտական երգում:

Տարուան վարչական կազմի անդամներն են՝

Ատենապետ՝ Յովհաննէս Ստեփանեան
Փոխ ատենապետ՝ Րոլանտօ Պերկամալի
Ատենադպիր՝ Րաֆֆի Միրաքեան
Փոխ ատենադպիր՝ Յովսէփ Ծերեճեան
Քարտուղար՝ Հայկ Լեւոնեան
Գանձապահ՝ Արամ Կիւզելեան
Փոխ գանձապահ՝ Յովհաննէս Աշարճեան
Գոյքապահ՝ Ծորճ Տաղլեան

Խորհրդականներ՝ Պետրոս Մակազեան, Արմանտօ Ֆերեճեան, Արթուրօ Սարգիսեան:

Վարչութեան կ'օժանդակեն հետեւեալ մարզական յանձնախումբերը. վոլիպոլի, պասքեթպոլի, թենիսի, աթլետիզմի, փինկ-փոնկի եւ պոչայի: Վարչութիւնը կը նշանակէ նաեւ հանդէսներու, մշակութային, գրադարանի եւ ընկերային յանձնախումբեր:

1954ի Յունուար 27էն սկսեալ Արիներու Խորհուրդը կը կազմակերպէ սկաուտական առաջին բանակումը, Ռամոս Մելիայի դաշտերուն վրայ, քսանօրեայ խնամուած ծրագրով եւ փակման հաւաքոյթով:

Այս առթիւ կաթողիկոսական պատուիրակ Սիոն Եպիսկոպոս Մանուկեան բանակավայր կ'այցելէ եւ կը քաջալերէ մասնակցողները: Առաջին ընդհանուր բանակումի յաջողութիւնը նպաստաւոր արձագանք կ'ունենայ մասնաճիւղի սկաուտական գործունէութեան համար:

23 Հոկտեմբեր 1954ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ:-

Նախագահ՝ Յովհաննէս Ստեփանեան
 Փոխ նախագահ՝ Յովհաննէս Աշարճեան
 Ընդհանուր քարտուղար՝ Րաֆֆի Միրաքեան

Փոխ քարտուղար՝ Արմանտօ Ֆերեճեան
 Դիւանի քարտուղար՝ Հայկ Լեւոնեան
 Գանձապահ՝ Արամ Կիւզելեան
 Փոխ գանձապահ՝ Արտաշէս Սարգիսեան
 Խորհրդականներ՝ Ճորճ Տաղլեան, Արթուրօ Սեմերճեան, Ռաուլ Պետիկեան:

1954էն սկսեալ, մարզական զանազան ճիւղերու եւ սկաուտական խումբերու օրէ օր զարգացումը մասնաճիւղին շուրջ կը հաւաքէ անդամներու եւ համակիրներու ստուար թիւ մը: Ռամոս Մեխիայի մարզական համալիրը եւ ակումբի շէնքը ժամադրավայրը կը դառնան Պոլէնոս Այրէսի հայ երիտասարդութեան եւ ընտանիքներուն:

1956ի Նոյեմբեր 11ին տեղի կ'ունենայ սկաուտական հրապարակային հանդիսութիւն եւ նորընծայ սկաուտներու երդման արարողութիւն:

1957 տարուան վարչական կազմին կը մասնակցին հետեւեալները.- ատենապետ՝ Պարգեւ Պարսամեան, վարչական անդամներ՝ Արամ Կիւզելեան, Արմենակ Ֆերեճեան, Յակոբ Մսրըլեան, Տոքթ. Հ. Յովակիմեան, Մկրտիչ Նազարէթեան, Սեդրակ Օհանեան, Վազգէն Թիւթիւնճեան, Կարապետ Թոփալեան, Հայկ Լեւոնեան եւ Վահագն Իսրայէլեան:

Մասնաճիւղի մարզական գործունէութիւնը

կը զարգանայ Հ.Մ.Ը.Մ.ի մարզադաշտերուն վրայ կազմակերպուած բարեկամական, միջ-անդամական եւ միջ-վարժարանային մրցաշարքերու կազմակերպութեամբ: Մասնաճիւղի մշակած մարզական ճիւղերն են վոլիպոլը, պասքեթպոլը, թենիսը եւ պոչան: Աթլետիզմի բաժինը կը կիրարկուի համեմատաբար նուազ տարողութեամբ:

Սկաուտական ճիւղը կը յառաջդիմէ տարեկան ընդհանուր բանակումներու շարքի հետեւողական կազմակերպութեամբ, խմբապետական ցանցի ճիգերով եւ Ծնողական Խորհուրդի գործակցութեամբ:

Այսպէս Բ. ընդհանուր բանակումը կը կայանայ 24 Յունուար 1955ին: Գ. Ընդհանուր բանակումը՝ 16 Յունուար 1956ին: Առաջին երեք տարիներու բանակումները կը կայանան Ռամոս Մեխիայի դաշտերուն վրայ: Տարեկան Դ. ընդհանուր բանակումը կը կայանայ 1 Փետրուար 1957ին Մորենօ, Աշարճեան եղբայրներու ամառանոցին մէջ: Սկաուտական Ե. ընդհանուր բանակումը տեղի կ'ունենայ 11 Յունուար 1958ին: Վերոյիշեալ բոլոր բանակումներու աւարտին կը կազմակերպուին փակման հանդիսութիւններ, պաշտօնական հիւրերու եւ ծնողներու ստուար բազմութեան մը ներկայութեան:

1958ին սկաուտական շարժումը կ'ամբողջանայ արենուշական բաժնի կազմութեամբ:

1959 թուականի նորընտիր վարչութիւնը կը բաղկանայ հետեւեալներէն.- ատենապետ՝ Յովհաննէս Ստեփանեան, անդամներ՝ Ճորճ Տաղլեան, Լեւոն Թերզեան, Սեդրակ Օհանեան, Րաուլ Պետիկեան, Յարութիւն Թորգոմեան, Յ. Մսրլեան, Հայկ Լեւոնեան, Պարգեւ Պարսամեան եւ Արամ Կիւզելեան:

Վարչական կազմի ընթացիկ գործունէութեան առընթեր կը շարունակուին կեդրոնի շինարարական աշխատանքները:

Ռամոս Մեխիայի կեդրոնի շինարարական աշխատանքներու լրումով, մարզական, սկաուտական եւ ընկերային բաժիններու աշխատան-

քով Հ.Մ.Ը.Մ.ի Պուլենոս Այրէսի մասնաճիւղը տարուէ տարի իր խտացող շարքերով, կը բոլորէ բեղուն գործունէութեան տասնամեակ մը տարեկան հերթականութեամբ՝ անդամական ընդհանուր ժողովներու կողմէ վերանորոգուող վարչական կազմերու անվերապահ ճիգերով:

1971ին, վարչութիւնը կը յաջողի գլխաւոր կեդրոնին միացնել անոր կից գտնուող 2090 քառ. մ. տարածութեամբ հողաշերտը: Նոյնպէս, արժանթինահայ բարերար Վահրամ Պոյաճեան մասնաճիւղին կը նուիրէ Փիլարի շրջանին մէջ 4 հեքթար տարածութեամբ իր հողաշերտը, վարչութեան համար շինարարական նոր կարելիութիւններ ստեղծելով:

1971ին, Պուլենոս Այրէսի մասնաճիւղի 12 սկաուտներ, իբրեւ հայ Արիներու կազմակերպութեան անդամ, կը մասնակցին Ճափոնի մէջ միջազգային 13րդ ճեմպորին:


28 Ապրիլ 1972ին, մասնաճիւղը կը գումարէ անդամական ընդհանուր ժողով: Տարեշրջանին անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 800ի մարզական եւ սկաուտական բաժիններով: Ռամոս Մեխիայի համալիրը կը մնայ երիտասարդութեան նախասիրած ժամադրավայրը:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

«Նաւասարդ»

1953ին սկաուտական ճիւղի գործունէութեան սկզբնաւորութիւնը կ'ամբողջացնէր Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան նուիրուած մասնաճիւղի ղեկավարութեան ծրագիրները: Կը մնար առաւելագոյն չափերով մարզական եւ սկաուտական շարժումներու մասին իրազեկ պահել արժանթինահայ զանգուածը, ծանօթացնել անոր Հ.Մ.Ը.Մ.ի նպատակը եւ փոխանցել Հ.Մ.Ը.Մ.ի ազգայնաշունչ գաղափարաբանութիւնը:

Այս նպատակով Պուլենոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի վարչութիւնը, 1957ի Յունիսէն սկսեալ լոյս կ'ընծայէ մասնաճիւղի պաշտօնաթերթ «Նաւասարդ»ը, հայերէն եւ սպաներէն բաժիններով:




Նաւասարդ պաշտօնաթերթի կողք

Վարչութիւնը 1954ին կը նշանակէ «Նաւասարդ»ի յատուկ վարչական կազմ, որուն անդամներն են. Կարօ Գալիկեան, Աբրահամ Մազլումեան, Յակոբ Միսիրլեան, Թորոս Յերմանեան եւ Վահրամ Քեքիկեան:

«Արիական Հունձք»

Մասնաճիւղի սկաուտական ընդհանուր պետ՝ Կարպիս Տէր Մեսրոպեան 1960ին կը հրատարակէ «Արիական Հունձք» պատկերազարդ հատորը: Հատորը կը պարունակէ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի եւ Պուլենոս Այրէսի սկաուտական գործունէութիւններու մասին տեղեկութիւններ սկիզբէն մինչեւ 1960 թուականը:



Արիական Հունձքի կողք

ԳՈՐՏՈՊԱ

Արժանթինի Հ.Մ.Ը.Մ.ի երկրորդ մասնաճիւղն է Գորտոպայի մասնաճիւղը, որուն կազմութիւնը ծրագրած է տեղւոյն հայ վարժարանի ուսուցիչ Մ. Կոստանեան վաղ ժամանակէ սկսեալ, վարժարանի աշակերտութեան ներմուծելով Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութիւն - [Ե. 119]:

Սակայն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի հիմնադրութիւնը իրականացած է 1965ին, միայն սկաուտական խումբերու կազմութեամբ:

Այս առթիւ Հ.Մ.Ը.Մ.ի արիներու ծնողաց խորհուրդի ատենապետ՝ Անդրանիկ Մինասեան եւ ատենադպիր՝ Հայկ Տէր Խաչատուրեան, 30

Յունիս 1966 թուակիր հետեւեալ նամակը կ'ուղղեն Պէյրութ, Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան:

«Պատուարժան Կեդրոնական Վարչութիւն Հ.Մ.Ը.Մ.իութեան

Պէյրութ

Յարգելի Տիարք

Շատոնցէ ի վեր պարտք կը պգայինք եղբայրական կապ հաստատել պատուարժան Կեդրոնական Վարչութեանդ հետ, բայց դժբախտաբար ձեր հասցէն չունենալնուս պատճառաւ հնարաւորութիւն չունեցանք իրագործելու:

Սակայն, բարեբախտաբար այս օրերս քաղաքի հիւր եղող վաստակաւոր մտաւորական եւ ազգային գործիչ պարոն Կարօ Սասունիէն ստանալով ձեր հասցէն, կ'իրագործուի մեր փափաքը:

Այս առթիւ պատշաճ կը գտնենք ձեզ տալ համառօտ տեղեկութիւն կազմակերպութեանս մասին:

1965 Մայիս 28ին նախաձեռնութեամբ «Անդրանիկ» ակումբի վարչութեան եւ օգնութեամբ ծովային-արժանթինեան- ենթասպայ պարոն Սուրէն Գատիմեանի ու այժմ իրեն օգնական ունենալով երիտասարդ Էնրիքի Աւագեանի. հիմնուեցաւ քաղաքիս Հ.Մ.Ը.Մ.ը:

Մօտ ժամանակին կրցանք կազմել մրջնիկներու, գայլիկներու, արեւոյշներու - «Արմենուհի» անուամբ -, եւ ծովային արիներու - «Ալմիրանդէ Բիլերսօ պրօվվն» անուամբ ի յարգանս Արժանթինի մեծ ծովային յիշատակին - :

Վերոյիշեալ հայորդիներու բաժանմունքի խումբին իրենց մէջ կը համրեն 90 փոքրիկներ, պատանիներ եւ պարմանուհիներ, կ'ունենան հերթական դասախօսութիւններ, մարզանքներ, սկաուտական արշաւներ ու բանակումներ:

Կը բերեն իրենց մասնակցութիւնը ազգային եւ արժանթինեան բոլոր ազգային տօնակատարութեանց մէջ, բարձր բռնելով Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը եւ անոր նշանաբան «Բարձրացիր - Բարձրացուր»ը:

Իսկ ծնողաց խորհուրդս կ'աշխատի իր կարելիութեան սահմանին մէջ, տալ հայեցի դաստիա-

րակութիւն եւ անոնց մատղաշ հոգիներուն մէջ ներածել հայրենասիրական կայծը:

Սակայն, լաւագոյնս օգտակար ըլլալու միջոցներու չգոյութեան պատճառաւ մեր ճիգերը չեն արդիւնաւորուիր:

Հետեւաբար, պիտի խնդրէինք ձեզմէ մեզ ուղարկել սկաուտական գիրքեր, սկաուտական հայկական երգեր (Նոթագրուած), ու ձեր օրկանի բաժանորդագրումը, ինչպէս նաեւ հաշուեգիրը տոլարի վրայ:

Ծնողաց խորհուրդիս գործունէութիւնը առ այժմ միայն սկաուտիկմն է, կը գործենք անկախ, բարոյական կապ միայն կը պահենք արժանթիւեան սկաուտական կեդրոնին հետ - որ ճանչցուած ենք որպէս հայ սկաուտական ուրոյն կապմակերպութիւն -, Պ. Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի հետ ու Պ. Այրէսի Միութեան վարժարանի արիւններուն հետ:

Կանխապայտ շնորհակալութիւններով եւ

Հ.Մ.Ը.Մ.ականի յարգանօք բարեւներով
Ի Դիմաց

Հ.Մ.Ը.Մ.ի Արիւնքու Ծնողաց Խորհուրդ
Ատենապետ Ատենադպիր

Անդրանիկ Մինասեան Հայկ Տէր Խաչատուրեան»:

Շրջանային Վարչութիւնը 9 Նոյեմբեր 1966 թուականին նամակով կ'ողջունէ Գորտոպայի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի կազմակերպութիւնը եւ քաջալերական տողերով կը յանձնարարէ շարունակել սկսուած աշխատանքը բարոյական կապ պահելով իր հետ:

Սկաուտական բաժնի գործունէութեան առընթեր Գորտոպայի Հ.Մ.Ը.Մ.ի վարչութիւնը հետզհետէ կը կազմակերպէ մարզական զանազան ճիւղերու խումբերը:

ՄՈՆԹԷՎԻՏԷՕ

Մոնթէվիտէոյի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան (1927) հետեւող մարզական կարճատեւ գործու-

նէութենէն ետք, մասնաճիւղի սկաուտական բաժինը միայն պիտի մնար կանգուն, թէեւ առանց կառուցային կապեր պահելու Փարիզի կեդրոնին կամ Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան հետ:

Տարիներու ընթացքին սկաուտական շարժումը շարունակեց իր գործունէութիւնը Հ.Յ.Դ. ՎՌամեան ակումբի շրջանակէն ներս, «Կամք» սկաուտական խումբ անուան տակ:

1974ին, Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառույցի կազմաւորման օրերուն Մոնթէվիտէոյի սկաուտական միաւորը կը գործէր Աբրահամ Պելեանի գլխաւորութեամբ:

1974ի առաջին Պատգամաւորական ընդհանուր ժողովի յաջորդող ամիսներուն, Մոնթէվիտէոյի սկաուտական բաժինը կարճ ժամանակի համար իր կապը պահեց անդրանիկ կեդրոնական Վարչութեան հետ, ապա հաղորդակցութիւնները դադրեցան:

Սկաուտական «Կամք» խումբի վերակազմուած գործունէութեան մասին պիտի տեղեկանանք Հ.Մ.Ը.Մ.ի Պատմութեան հատորներու շարքին Գ. եւ Դ. համարներուն մէջ:

ՍԱՆ ՓԱՈՒԼՕ

Պրագիլիոյ մէջ, Սան Փաուլոյի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի գործունէութիւնն ալ, ինչպէս Ուրուկուէյի պարագային, կարճատեւ պիտի ըլլար: Կապը նախապէս դադրած էր Ֆրանսայի կամ Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան հետ եւ մասնաճիւղը կը գործէր անկախաբար:

1972ին, Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան անդամ Երուանդ Տէմիրճեան զեկուցելով Հարաւային Ամերիկայի մասնաճիւղերուն տուած իր այցելութեան մասին կը տեղեկացնէ, թէ Սան Փաուլոյի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ գոյութիւն չունի եւ անոր գործունէութիւնը փոխանցուած է տեղւոյն Հայ Երիտասարդաց կազմակերպութեան մարզական բաժինին:

ԳԼՈՒԽ ԵՕԹԵՐՈՐԴ

ՊԱՂԵՍՏԻՆ

- ԵՐՈՒՍԱՂԷՄ
- ՀԱՅՖԱ



Երուսաղեմի Հ.Մ.Ը.Մ.ի 1946 տարուան ֆուտպոլի խումբը



Հայֆայի Հ.Մ.Ը.Մ.ի 1953 տարուայ ֆուտպոլի խումբը. Ոտքի՝ Սերոբ Եսփուճեան, Հայկարամ Մանուկեան, Մանասէ Թերզեան, Սարգիս Գաթտէրեան, Ժիրայր Կիրակոսեան, Յարութիւն Կէօզերեան: Նստած՝ Գրիգոր Սողոմոնեան, Բերդապահ՝ Յակոբ Մանուկեան

Ներկայ հատորի ընդգրկած ժամանակաշրջանին, Պաղեստինի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու պատմութիւնը կը բնորոշուի արաբ-հրէական հակամարտութիւններով, որոնց հետեւանքը եղաւ, 1947ին, երկու ժողովուրդներու միջեւ անխնայ պատերազմը եւ իսրայէլեան պետութեան հաստատումը պաղեստինեան տարածքին վրայ՝ 1948ին:

Պաղեստինեան զանազան քաղաքներուն մէջ բնակող հայեր ստիպուեցան արտագաղթել երկրէն: Պարտադիր այս արտագաղթը ինքնաբերաբար ամայացուց պաղեստինեան հայ գաղութը: Երուսաղէմն ու Հայֆան՝ հայութեան գլխաւոր կեդրոնները, ազգային եւ միութենական իրենց կառոյցները երկար տարիներ սառեցուցին, սպասելով աւելի նպաստաւոր օրերու գալստեան:

ԵՐՈՒՍԱՂԵՄ

ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

1939 տարեշրջանին, Հ.Մ.Ը.Մ.ի Երուսաղէմի մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Մեսրոպ Երկաթեան, ատենադիրը՝ Ա. Լուսարարեան: Բ. Աշխարհամարտի սկզբնաւորութեան ամիսները լաւատեսութիւն չէին ներշնչէր մասնաճիւղի գործունէութեան համար:

1940ին կը կազմուի Երուսաղէմի լիկա մը, Պաղեստինի Ֆետերասիոնի հովանաւորութեամբ: Հ.Մ.Ը.Մ.ի անդամներէն Լեւոն Քէշիշեան կը վարէ լիկայի նախագահութիւնը, մինչ Պօղոս Պետրոսեան մասնաճիւղի ներկայացուցիչն է լիկային մէջ:

Մարզական գործունէութիւնը, համեստ սահմաններու մէջ, երկամեակ մը կը բոլորէ:

1943ին, մասնաճիւղը կ'օժտուի գործունեայ վարչական կազմով, ատենապետութեամբ՝ Վահան Ղազարեանի եւ ատենադպրութեամբ՝ Երուսաղէմի Գայայեանի:

Վարչութեան մարզական գլխաւոր իրականացումը կ'ըլլայ Պաղեստինի հայ Միջ-Միութեանական Տարեկան Առաջին Ողիմպիականի կազմակերպումը, մասնակցութեամբ Երուսաղէմի ԱՐԱՔՍ Մարզական Միութեան, Եաֆայի ՀԱՅ-ԿԱՇԷՆ Միութեան, Հայֆայի եւ Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու աթլետիք խումբերուն: Խաղերը տեղի կ'ունենան 10 Հոկտեմբեր 1943ին, Թերա Սանթայի դաշտին վրայ՝ մեծերու, միջակներու եւ փոքրերու զանազան դասակարգերու 26 մրցումներով: Երուսաղէմի Ոստիկան Զօրաց նուագախումբը կը ճոխացնէ օրուան յայտագիրը: Խաղերու վերջաւորութեան տեղի կ'ունենայ մրցանակաբաշխութիւն:

Անդամներու ընդհանուր թիւը, որ պահ մը կը հասնի 230ի, յետ գտումի կը մնայ 150 թիւին վրայ: Կիրարկուող մարզական ճիւղերն են Ֆութպոլը եւ պասքէթպոլը: Հակառակ մեծաթիւ անդամներու մասնակցութեան, անդամատուրքերէ գոյացած գումարները կը մնան համեստ: 1943 տարեշրջանի նիւթական գործառնութեան պատկերն է՝ մուտք՝ 640 պաղեստինեան ոսկի, ելք՝ 656 պ.ո.: Ակումբի տարեկան վարձքն է 63 պ.ո.:

1944ի Շրջանային ճրգ Պատգամաւորական Ժողովին մասնաճիւղը կը ներկայացնեն Երուսաղէմի Գայայեան, Լեւոն Քէշիշեան եւ Հրայր Երկաթեան:

Արաբ եւ Հրեայ հակամարտութիւններու ստեղծած քաղաքական կացութիւնը ծանր կը կշռէ մասնաճիւղի գործունէութեան վրայ:

28 Սեպտեմբեր 1947ին, տեղի կ'ունենայ սկստներու երդման արարողութիւն իսկ 5 Հոկտեմբերին, մասնաճիւղը կը կայացնէ իր ներքին աթլետիք մրցումները:

19 Դեկտեմբեր 1948ի անդամական ընդհանուր ժողովի կողմէ ընտրուած վարչութեան ատենապետութիւնը կը ստանձնէ Երուսաղէմի Գայայեան, ատենադպիր՝ Յովակիմ Պասմաճեան: Համաշխարհային Բ. Ընդհանուր Պատերազմի եւ Պաղեստինի հրեայ-արաբ հակամարտութիւն-

ներու հետեւանքները շեշտուած կերպով զգալի կը դառնան մասնաճիւղին համար: Նիւթական անձուկ կացութիւնը, անդամներու թիւի նօսրացումը յաղթահարելի գլխաւոր դժուարութիւնները կը հանդիսանան: Այսուհանդերձ, մասնաճիւղը, մարզական եւ մշակութային գետնի վրայ կը փորձէ տեղական չափանիշով քայլ պահել այլ կազմակերպութիւններու հետ: Մասնաճիւղի նստավայրը կը սահմանափակուի հայոց վանքի սահմաններէն ներս, ուր Հ.Մ.Ը.Մ.ին տրամադրուած է ընդարձակ սրահ մը միութենական գործունէութեան համար: 1949ին, մասնաճիւղը կը ստանայ պետական նոր արտօնագիր՝ թիւ 49/355/ՄԼ եւ 4 Դեկտեմբեր 1949 թուակիր:

1950ական թուականներէն սկսեալ այս սահմանափակումները կ'ազդեն մասնաճիւղի ընդհանուր գործունէութեան վրայ: Քաղաքի բոլոր կողմերուն հետ գործակցութիւնը, հակամարտութեանց պատճառով, կը դառնայ անկարելի: Իրերայաջորդ վարչութիւնները, պահելով հանդերձ մարզական եւ սկստական շարժումին հանդէպ իրենց ճիգերը, կը ստիպուին կեդրոնանալ մշակութային եւ ընկերային գործունէութեան վրայ: Անդամներու ընդհանուր թիւն է 140: Ունին Ֆութպոլի 3 խումբեր, պասքէթպոլի՝ երկու: Փինկ-փոնկը կը կիրարկուի ակումբէն ներս: Վարչութեան ատենապետն է Երկաթեան, ատենադպիրը՝ Յ. Պասմաճեան:

20 Յունուար 1951ի ընտրութեամբ՝ վարչական կազմի անդամներն են.-

- Ատենապետ՝ Երուանդ Գայայեան
- Ատենադպիր՝ Յովակիմ Պասմաճեան
- Գանձապահ՝ Վարդգէս Թոմպալաքեան
- Սկստական խմբապետ՝ Կարապետ Մարտիրոսեան
- Մարզական պատասխանատու՝ Նազար Մինասեան
- Խորհրդականներ՝ Գրիգոր Չագըրեան, Գէորգ Սեւեան:

Այս կազմին կողմէ նշանակուած օժանդակ յանձնախումբերն են՝ մարզական, երգչախումբի

եւ գոյքապահութեան յանձնախումբերը: Վերջնոյս անդամներն են Հրանդ Տէվէճեան, Կարպիս Դաւիթեան եւ Օննիկ Խաչերեան: Անդամատուրքերու գանձիչ կը նշանակուի Օննիկ Խաչերեան: Այս տարեշրջանին մասնաճիւղը կ'ունենայ 69 նոր անդամակցութիւն, ընդհանուր թիւը բարձրացնելով 170ի: Անդամներուն կը յանձնուի յատուկ անդամատետրեր: Վարչութեան ատենապետը կը ստանձնէ երգչախումբի պատասխանատուութիւնը: Մարզական գործունէութիւնը զգալի տեղատուութիւն կ'արձանագրէ եւ մշակութային եւ ընկերային մարզերն են որ կը յառաջդիմեն:

2 Փետրուար 1952ին, մասնաճիւղի 18րդ անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ տարեշրջանի վարչական կազմ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Կարապետ Մարտիրոսեան
- Ատենադպիր՝ Յովակիմ Պասմաճեան
- Գանձապահ՝ Վարդգէս Թոմպալաքեան
- Խորհրդականներ՝ Գրիգոր Չագըրեան, Գէորգ Սեւեան

Սկստական խմբապետ՝ Օննիկ Խաչերեան
Մարզական պատասխանատու՝ Զաւէն Չաքմաքեան:

Այս տարեշրջանին մարզական եւ սկստական ճիւղերը թուական եւ թեքնիք զգալի յառաջդիմութիւններ կ'արձանագրեն: Մշակութային, ազգային եւ ընկերային բաժինները կը գործեն նախորդ տարիներու խանդավառութեամբ: Տարեշրջանի մուտքերու ընդհանուր գումարն է 295.960 Ֆիլս, ելք՝ 271,265 Ֆիլս:

1953ի վարչական կազմը կը ներառէ չորս նոր վարչականներ: Դիւանը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.-

- Ատենապետ՝ Կարապետ Մարտիրոսեան
- Ատենադպիր՝ Վարդան Վարդանեան
- Գանձապահ՝ Օննիկ Խաչերեան
- Խորհրդականներ Միհրան Գրիգորեան, Անդրանիկ Պուռճեան, Կարապետ Կիւլոյեան, Յովակիմ Պասմաճեան:

Երուսաղէմի քաղաքական կազմութիւնը նախորդ տարիներէն աւելի ձեռնտու է կարգ մը նախաձեռնութիւններու համար: Վարչութիւնը այս իրավիճակէն օգտուելով զարկ կու տայ մարզական եւ սկաուտական ճիւղերու զարգացումին: Մշակութային եւ ընկերային ճիւղերը աւելի կը յառաջդիմեն: Ազգային եւ եկեղեցական տօնակատարութիւններու մասնակցութիւնը կ'իրագործուի ընթացիկ յաջորդականութեամբ: Բացառիկ աճ մը կ'արձանագրեն նոր անդամակցութիւնները՝ ընդհանուր թիւը բարձրացնելով 203ի:

1954ի վարչական կազմի անդամները մեծամասնութեամբ նոյններն են բացի ատենադպիր՝ Գէորգ Սեւանէն եւ Խորհրդական՝ Մելքոն Մինասեանէն, որոնք կը փոխարինեն Օննիկ Խաչերեանն ու Միհրան Գրիգորեանը: Սեպտեմբերին, Գէորգ Սեւանի հրաժարականին հետեւանքով, զինք կը փոխարինէ Միհրան Գրիգորեանը: Մարզական կեանքը կը շարունակէ տկար մնալ: Նոյն ճակատագրին կը մատնուի նաեւ սկաուտական շարժումը: Վարչութիւնը կը ստիպուի լուծել խումբը եւ ձեռնարկել նորի մը կազմութեան: Մշակութային կեանքը՝ գրադարան, ազգային տօնակատարութիւններ եւ ընկերային հաւաքոյթներ կը գործեն յաջողութեամբ:

6 Փետրուար 1955ին, մասնաճիւղի 21րդ անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ:-

- Ատենապետ՝ Անդրանիկ Ստամպուլեան
- Ատենադպիր՝ Յարութիւն Պեհեսնիլեան
- Գանձապահ՝ Անդրանիկ Պուռճեան
- Սկաուտական խմբապետ՝ Վարդան Վարդանեան
- Մարզական պատասխանատու՝ Միհրան Մաթոսեան

Խորհրդականներ՝ Նշան Ինկիլիզեան, Գրիգոր Չազրեան:

Այս տարեշրջանին անդամներու ընդհանուր թիւն է 219՝ հետեւեալ ենթաբաժանումներով՝ սկաուտ 24, գալիկ՝ 48, մարզիկ եւ օժանդակ՝

147: Այս թիւերը սակայն չեն ցոլացներ մարզական եւ սկաուտական գործունէութիւններու պատկերը, որոնք կը մնան տկար:

16 Փետրուար 1956ին, տեղի կ'ունենայ անդամական ընդհանուր ժողով, որմէ կը բխի նոր վարչական կազմ:-

- Ատենապետ՝ Անդրանիկ Ստամպուլեան
- Փոխ ատենապետ՝ Գէորգ Սեւեան
- Ատենադպիր՝ Խաչիկ Տիքպիքեան
- Փոխ ատենադպիր՝ Յովհաննէս Տէր Յովհաննէսեան

- Գանձապահ՝ Մելքոն Սինանեան
- Սկաուտական խմբապետ՝ Յարութիւն Պեհեսնիլեան

Մարզական պատասխանատու՝ Յարութիւն Տէր Պետրոսեան:

Այս կազմը կը գործէ միայն տասնըմէկ ամիս եւ 10 Յունուար 1957ի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ, ուր ատենադպիրի եւ գանձապահի պաշտօնները կը մնան անփոփոխ: Կազմի ատենապետութիւնը կը վարէ Պօղոս Պետրոսեան:

Տարեշրջանի ընթացքին վանքի սահմաններէն ներս եւ վանքի սահմաններէն դուրս բնակող անդամներու միջեւ ներքին տագնապ մը ծայր կու տայ, ինչ որ մեծապէս կը դժուարացնէ վարչութեան գործը: Վերջինս կը դիմէ Շրջանային Վարչութեան միջամտութեան, որպէսզի հարցը չբարդանայ: Հակառակ այս ներքին դժուարութեանց, վարչական կազմը բացառիկ ճիգերով մասնաճիւղի սկաուտական եւ մարզական ճիւղերէն ներս կարեւոր յառաջդիմութիւններ կ'արձանագրէ: Անդամներու ընդհանուր թիւը կը հասնի 300ի սահմանները:

1957ի վարչական կազմի պատկերն է հետեւեալը:-

- Ատենապետ՝ Պօղոս Պետրոսեան
- Փոխ ատենապետ՝ Անդրանիկ Ստամպուլեան
- Ատենադպիր՝ Խաչիկ Տիքպիքեան
- Գանձապահ՝ Մելքոն Սինանեան
- Սկաուտական խմբապետ՝ Յարութիւն Պեհեսնիլեան

Մարզական պատասխանատու՝ Յովհաննէս Շքլանեան

Խորհրդական՝ Նշան Ինկիլիզեան:

Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի դիմագրաւած ներքին անհասկացողութիւնները, որոնք վանքի եւ պատրիարքութեան հետ կ'առնչուին, կը շարունակեն դժուարացնել մասնաճիւղի գործունէութիւնը յաջորդ տարեշրջանին: 1958ի անդամական ընդհանուր ժողովը նախատեսուած թուականներուն չի կայանար: 1957ի վարչական կազմը կը շարունակէ ժամանակ մը եւս գործի վրայ մնալ:

Այս թուականէն սկսեալ Շրջանային վարչութեան հետ մասնաճիւղի կապը կը դժուարանայ: Մասնաճիւղը տակաւ կը վերագտնէ իր գործունէութեան բնականոն ընթացքը, տարիներու ընթացքին աւելի զարգացնելով զայն, գլխաւորաբար մարզական, սկաուտական եւ մշակութային բաժիններով: Տարեկան անդամական ընդհանուր ժողովները, ուր կը լսուին վարչութեան միամեայ գործունէութեանց տեղեկագրերը եւ կը կատարուի վարչական նոր կազմի ընտրութիւն, տեղի կ'ունենան կանոնաւոր հերթականութեամբ իւրաքանչիւր տարեսկիզբին:

1961ին, յապաղումով, մասնաճիւղը կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 40 ամեակը:

27 Փետրուար 1965ին, 16րդ Շրջանային Պատգամաւորական ժողովին մասնաճիւղի ներկայացուցիչներն են Գրիգոր Չազրեան, Յարութիւն Պեհեսնիլեան, Մելքոն Սինանեան եւ Բենիամին Թիւթիւնճեան:

1967ին, մասնաճիւղի պատգամաւորներ Նուպար Չորպաճեան եւ Գրիգոր Չազրեան կը մասնակցին Շրջանային 17րդ Պատգամաւորական ժողովին:

Հակառակ դժուարին պայմաններուն, որոնց մէջ կը գործէ, Երուսաղէմի մասնաճիւղը կը յաջողի Շրջանային վարչութեան հետ իր կապը պահել եւ տեղեկ պահել իր գործունէութեան մասին: Մարզական խումբերը թէեւ չեն մասնակցիր պաշտօնական ախոյեանութեանց մրցա-

չարքերուն, սակայն տեւական շփման մէջ են տեղական խումբերու հետ, կազմակերպելով բարեկամական հանդիպումներ: Անդամական ընդհանուր ժողովները կը գումարուին օրինաւոր հերթականութեամբ: 1971 տարուան վարչական կազմի անդամներն են.-

Ատենապետ՝ Գէորգ Սեւեան

Փոխ ատենապետ՝ Գէորգ Կէօվլեքճեան

Ատենադպիր՝ Կարօ Հեքիմեան

Փոխ ատենադպիր՝ Սարգիս Զիլիֆեան

Գանձապահ՝ Գրիգոր Չազրեան

Փոխ գանձապահ՝ Գէորգ Գահվեճեան

Գոյքապահ՝ Հրաչ Գրիգորեան

Սկաուտական պատասխանատու՝ Աբրահամ Փափազեան

Մարզական պատասխանատու՝ Վարուժան Անտոնեան:

Անդամներու ընդհանուր թիւն է 140, որոնցմէ 70ը սկաուտական շարքերէն: Վարչութեան գործունէութիւնը կը կեդրոնանայ մշակութային ձեռնարկներու շուրջ: Ակումբը ժամադրաւայրն է սաղիմահայ երիտասարդութեան:

1972ին, անդամներու ընդհանուր թիւն է 168, որոնցմէ 90ը սկաուտական շարքերէն: Վանքի սահմաններէն ներս մասնաճիւղը ունի ակումբ եւ կ'օգտագործեն վանքի դաշտերը: Կիրարկուող մարզաճիւղերն են ֆութպոլ, վոլիպոլ եւ փինկ-փոնկ: Վերակազմած են նաեւ պասքեթպոլի ճիւղը:

1973 տարուան վարչական կազմի անդամներն են.-

Ատենապետ՝ Յարութիւն Պենլեան

Ատենադպիր՝ Օհան Կիւրեղեան

Գանձապահ՝ Գրիգոր Չազրեան

Մարզական պատասխանատու՝ Վահէ Անտոնեան

Սկաուտական պատասխանատու՝ Վարուժան Անտոնեան

Խորհրդականներ՝ Սարգիս Զիլիֆեան, Մարտիրոս Գարճեան, Վարդան Տէր Մաթէոսեան:

Մարզական ճիւղերը կը բաւարարուին բարեկամական մրցումներով եւ կը պատրաստուին մասնակցելու Ֆետերասիոնի կազմակերպած ախոյեանական մրցաշարքերուն:

ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի մարզական գործունէութիւնը, Բ. Աշխարհամարտի սկիզբին հետեւող տասնեամեակին, մնայուն ելեւէջներու շրջան մը կը բոլորէ: Սկզբունքով կիրարկուող մարզաճիւղերն են Ֆուլթպոլը, պասքեթպոլը, փինկ-փոնկն ու աթլետիզմը:

1940 տարուան մասնաճիւղի Ֆուլթպոլի խումբին անդամներն են՝ Մեսրոպ Երկաթեան՝ խմբապետ, Յակոբ Տէօքմեճեան, Լեւոն Երկաթեան, Հմայեակ Ուրֆալեան, Յակոբ Պարսումեան, Յովհաննէս Պերպէրեան, Յովսէփ Սանճեան, Թ. Տէր Թորոսեան եւ Խաչիկ Պաղպուտարեան:

1943ի սկիզբը կ'աւարտին Երուսաղէմի 1942-43 եղանակի Ֆուլթպոլի ախոյեանութեան մրցաշարքի մրցումները՝ Հ.Մ.Ը.Մ.ի յաղթանակով: 1944ին, խումբը կը բաւարարուի բարեկամական մրցումներով: 1946ին կրկին Հ.Մ.Ը.Մ. կը տիրանայ լիկայի բաժակին, աւարտական մրցումին յաղթելով «Օրթոտոքս»ին:

Պասքեթպոլի զոյգ խումբերը կը մասնակցին Ֆետերասիոնի մրցաշարքերուն:

10 Հոկտեմբեր 1943ին, Պաղեստինի շրջանի միջ-մասնաճիւղային ողիմպիական խաղերը տեղի կ'ունենան Երուսաղէմի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի Հայֆայի եւ Երուսաղէմի աթլետներու կողքին, խաղերուն կը մասնակցին Եաֆայի Հայկաշէն եւ Երուսաղէմի Արաքս աւումբներու մարզիկները: Յաջորդող տարիներուն այս խաղերը կը շարունակուին փոխն ի փոխ Հայֆայի եւ Երուսաղէմի մէջ: Շարքին հինգերորդը տեղի կ'ունենայ 1947ին՝ Երուսաղէմ:

1944ին, Պէյրութի մէջ կայացած միջ-մասնաճիւղային ողիմպիականին (աթլետիք խաղեր) իր

մասնակցութիւնը կը բերէ Երուսաղէմի մասնաճիւղի խումբը:

1946 տարուան Ֆուլթպոլի խումբին մաս կազմած են Պերճ Պաղտոյեան, Կարապետ Կայծակեան, Սիմոն Պեհեսնիլեան, Մարկոս Քեչեճեան, Յակոբ Յակոբեան, Սարգիս Ազիզեան, Թորոս Տէր Թորոսեան, Գէորգ Գէորգեան, Յովհաննէս Իսրաէլեան, Նազար Մինասեան՝ խմբապետ, Մանուէլ Գաթրճեան եւ Ճոն:

1950ին, մարզական կիրարկուող ճիւղերը կը մնան նոյները, պասքեթպոլ՝ 2 խումբ, Ֆուլթպոլ՝ 3 խումբ: Փինկ-փոնկը կը կիրարկուի երէցներու եւ փոքրերու զոյգ դասակարգերով:

1951 տարեշրջանի մարզական յանձնախումբին մաս կը կազմեն Նազար Մինասեան, Օննիկ Խաչերեան, Յակոբ Տէօքմեճեան, Յարութիւն Պեհեսնիլեան, Վազգէն Մարգարեան, Յովակիմ Պասմաճեան, Յ. Տէր Յովհաննէսեան եւ Վարդան Վարդանեան:

Ժամանակի ընթացքին մարզական գործունէութիւնը անհամեմատ կը տկարանայ: Ֆուլթպոլի խումբը կը բաւարարուի տարեկան քանի մը բարեկամական մրցումներով, իսկ պասքեթպոլի խումբը միայն անուանապէս գոյութիւն ունի: Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկ անդամներ, այլ մարզական խումբերու մասնակցելով, աւելի կը տկարացնեն մասնաճիւղի մարզական գործունէութիւնը:

1952ի Բ. կիսամեայէն սկսեալ մարզական շարժումը կը վերակենդանանայ: Ֆուլթպոլի առաջին կազմը կը մասնակցի լիկայի ախոյեանական մրցաշարքերուն, գոհացուցիչ արդիւնքներով: 1953 տարեշրջանին Ֆուլթպոլի կողքին պասքեթպոլի եւ փինկ-փոնկի ճիւղերն ալ կը սկսին գործել կանոնաւորաբար եւ կը մասնակցին լիկի ախոյեանութեանց մրցաշարքերուն: Սակայն այս վերածնունդն ալ տկար ընթացք մը պիտի ունենար իբր հետեւանք երկրին մէջ տիրող քաղաքական մթնոլորտին, որ կը չհզոքացնէ ամէն կարգի մարզական նախաձեռնութիւն: Ներքին սահմաններու մէջ աթլետիզմի փորձեր

կը շարունակուին եւ մասնաճիւղը կը դիմէ Շրջանային Վարչութեան՝ ստանալու համար գունդ եւ սկաւառակ, որոնք անգտանելի են Երուսաղէմի մէջ: 1954ին, Հ.Մ.Ը.Մ-ի Ֆուլթոնի, պասքեթպոլի, եւ փինկ-փոնկի խումբերը կը մասնակցին լիկայի համապատասխան ախոյեանական մրցաշարքերուն, շատ տկար արդիւնքով:

Երկամեայ տկար ժամանակաշրջանէ մը ետք, 1957ին, կրկին կեանք կ'առնէ մարզական ճոխ գործունէութիւն: Մասնաճիւղը ունի հետեւեալ մարզաճիւղերուն հետեւող անդամներ. Ֆուլթոնի՝ 18, պասքեթպոլի՝ 11, վոլիպոլի՝ 9, փինկ-փոնկի՝ 8, հեծելարշաւ՝ 13:

1972ին, Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղը ունի Ֆուլթոնի զոյգ խումբեր, վոլիպոլի եւ պասքեթպոլի խումբեր, եւ փինկ-փոնկի տասնեակ մը խաղացողներ: Այս խաղերը կը կիրարկուին վանքի ժառանգաւորացի եւ Թարգմանչացի դաշտերուն վրայ ինչպէս նաեւ վանքի տրամադրած սրահներուն մէջ:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Առաջին քառամեակի (1939-43) բացակայութենէն ետք, 1944ին, Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ-ի անդամական ընդհանուր ժողովի որոշումին անսալով, վարչութիւնը կը յաջողի մասնաճիւղէն ներս ստեղծել սկաւառակային շարժում: 34 սկաւառակներէ բաղկացած այս շարքերը ընդհանուր խմբապետն է Կարապետ Մարտիրոսեան: Շարժումի վերսկսումը յաջողցնելու համար մասնաճիւղը պարտադիր կը դարձնէ մինչեւ 20 տարիքը ունեցող անդամներուն սկաւառակային շարքերուն մասնակցութիւնը:

28 Սեպտեմբեր 1947ին, տեղի կ'ունենայ սկաւառակներու երդման արարողութիւն: Սկաւառակային շարժումը հետզհետէ աւելի հիմնականօրէն իր հունին մէջ կը մտնէ: Ամառնային բանակումներ եւ արշաւներ կը դառնան յաճախակի: 1950ին, շարքերու ընդհանուր թիւն է 62, իսկ 1951ին՝ փոքր յաւելումով մը՝ խումբը ունի 32 գայլիկներ եւ 35 սկաւառակներ, բաժնուած երեք

խմբակներու վրայ՝ Առիւծ, Վագր եւ Արծիւ, որոնք կ'ունենան երդման արարողութիւն:

1952ին սկաւառակային Գայլ անունով չորրորդ խմբակ մը կը կազմակերպուի: Սկաւառակային խումբերու հաւաքոյթները կը կանոնաւորուին: 1953ին, կը կազմուի նաեւ Սկաւառակային Խորհուրդը եւ գայլիկներու 6 խմբակները տարուան ընթացքին ամբողջութեամբ կը տարազաւորուին: 1954ին, սկաւառակային շարքերու ընդհանուր թիւն է 100, սկաւառակներ՝ 35 եւ գայլիկներ՝ 65:

Սկաւառակային ճիւղը տակաւ կը յառաջդիմէ շնորհիւ սկաւառակային խմբապետներու ճիգերուն եւ Սկաւառակային Խորհուրդի աջակցութեան:

1957ին, շարքերու պատկերը հետեւալն է. սկաւառակ՝ 48, գայլիկ՝ 50, արենուչ՝ 63: Խումբը ունի նաեւ փոքր նուագախումբ մը:

1972ին, շարքերը կը պահեն 60 արենուչ եւ 30 սկաւառակներ: Մասնաճիւղի սկաւառակային կազմը ունի շուրջ 20 հոգինոց նուագախումբ:

ԱԶԳԱՅԻՆ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ, ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՒ ԱԿՄԲԱՅԻՆ

Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղն ալ մարզական եւ սկաւառակային գործունէութեան կողքին ունեցաւ իր ազգային եւ ընկերային դաստիարակչական ծրագիրները իր անդամներու որակաւորման համար: Գործունէութեան այս մարզը հետզհետէ աւելի կարեւորութիւն ստացաւ մասնաճիւղին համար: Այս նպատակով, 1943-44 տարեշրջաններէն սկսեալ կը կազմակերպուին դասախօսական շարքեր:

Հերթական յաջորդականութեամբ եւ պատշաճ հանդիսութիւններով ամէն տարի կը նշուին Ապրիլ 24ի եւ Մայիս 28ի եւ Խանասորի Արշաւանքի տարեդարձները: Հրապարակային հանդիսութիւնները տեղի կ'ունենան Երուսաղէմի Y.M.C.A-ի հանդիսասարհին մէջ:

Մինչեւ 1950ական թուականներու սկիզբը, քաղաքական պայմաններու պարտադրանքով այս հանդիսութիւններու տարողութիւնը սահ-

մանափակուեցաւ: Մասնաճիւղի նստավայրը վանքի սահմաններէն ներս միայն մնալով, ելոյթները տեղւոյն կարելիութեանց պատշաճեցուեցան:

1952ին, վարչութիւնը կը կազմակերպէ խրախճանքի հինգ երեկոներ, որոնցմէ մէկը՝ Ամմանի Հ.Մ.Ը.Մ.ի այցելութեան առթիւ: Կազմակերպուած են նաեւ Վարդանանցի 1500ամեակի տօնակատարութիւն եւ Սբ. Ծնունդի եւ Սբ. Զատիկուան հաւաքոյթներ: Քաղաքական պայմաններու ընձեռնած դիւրութիւններու հետեւանքով ընկերային բնոյթ կրող այս հաւաքոյթները հետզհետէ աւելի յաճախակի դարձան ու բացի ազգային եւ եկեղեցական տօնակատարութեանց առիթներուն, նաեւ կրկնուեցան պաշտօնական անձնաւորութեանց այցելութիւններուն, գործող յանձնախումբերու քաջալերութեան եւ այլ երախտագիտական հրապարակային արտայայտութիւններու նպատակներով: 1953ին, այս հաւաքոյթներուն ծառայութեան համար կը գնուին սեփական սպասներ, որոնք մինչ այդ վարձու կ'առնուէին ու կը վերադարձուէին:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Մասնաճիւղի մշակութային գործունէութեան իրականացման համար վարչութիւնը 1943ին նշանակեց մշակութային յանձնախումբ: Յանձնախումբը իր յայտագրերու իրականացման ծրագիրը բաժնեց ժամանակաշրջաններու վրայ, որոնք երկարեցան երբեմն մինչեւ 6 ամիսներ: Յայտագիրներու աւարտին, մասնաճիւղի թատերախումբը տուաւ երեք ներկայացումներ՝ «Ինկած Բերդի Իշխանուհին», «Աշխարհի Դատաստանը» եւ «Մարուող Ճրագներ» թատերախաղերով, ինչպէս նաեւ միջազգային գեղարուեստական երեկոյթ մը, մասնակցութեամբ հայ եւ օտար արուեստագէտներու:

Մշակութային գործունէութեան ծիրին մէջ իրագործուած այս հրապարակային ելոյթները նաեւ նիւթական եկամուտի առիթներ ստեղծեցին:

1951ին, մասնաճիւղի երգչախումբը կը յա-


ռաջդիմէ: Երգչախումբի ղեկավարն է Համբարձում Գալայճեան: 39 երգողներ մաս կը կազմեն երգչախումբին: Վարչութիւնը այս առթիւ կ'ապահովէ սեփական դաշնակ մը: 1952ին, երգչախումբը արդէն քառամեայ գոյութիւն է եւ յարմար առիթի կը սպասէ հրապարակային համերգ մը տալու համար: Միւս կողմէ, մասնաճիւղի հայկական պարախումբը կը զարգանայ եւ Ամմանի մասնաճիւղի հրաւէրով ելոյթ կ'ունենայ 1954ի Ամանորի տօնակատարութեան առթիւ:

Մշակութային գործունէութեան ծիրին մէջ կ'իյնայ նաեւ Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի գրադարանը: Երկար տարիներ շուրջ 200 հատոր հաշուող այս գրադարանը 1953ին կը վերակազմուինոր պահարանով եւ նոր ստացուած հատորներով, հետաքրքիր ընթերցողներու հոյլ մը հաւաքելով իր շուրջ: 1957ին, Ամերիկայի գիրքերու բարեկամ միութեան ուղարկած գիրքերով, հատորներուն թիւը կը բարձրանայ 240ի: Գրադարանի օգտագործումի առաւելութիւնները հետագային օգտակար անդրադարձ կ'ունենան Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ականներու մտաւոր եւ ազգային զարգացման վրայ:

Երուսաղէմի մասնաճիւղը ունեցած է «Սկաուտ»-ամսօրեայ Շրջաբերական պարբերաթերթը որուն յաւելուած՝ «Կուփամարտ»ի առաջին թիւը լոյս տեսած է 1941ի Յունուարին: 1946ին մասնաճիւղը հրատարակած է «Փութպոլ» մարզախաղի օրինագիրքը:

ԿՈՓԱՄԱՐՏ

BOXING



ԱՄՍՕՐԵԱՅ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Հ. Մ. Ը. Մ.Ի

ԵՐՈՒՍԱԴԷՄԻ ՄԱՍՆԱՃԻՂԻ

ԿՈՓԱՄԱՐՏԻ ԲԱՅՆԻՆ

Հիմնուած 1918
Կ. ՊՈԼԻՍ

Հասցե՝ HOMENETMEN, P. O. B. 246, JERUSALEM.

ՀԱՅՖԱ

Հ.Մ.Ը.Մ-ի Հայֆայի մասնաճիւղը Պաղեստինի Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքին երկրորդ մասնաճիւղն է, հիմնադրութեան ժամանակագրական կարգով:

28 Դեկտեմբեր 1940ին, տեղի կ'ունենայ Հայֆայի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողով: Վերջինս, լսելէ ետք 1940 տարուայ նիւթաբարոյական տեղեկագիրը, իր վերջին օրակարգով կ'ընտրէ նոր վարչութիւն հետեւեալ կազմով.-

- Ատենապետ՝ Յովհաննէս Պետրոսեան
- Ատենադպիր՝ Մկրտիչ Տիշոյեան
- Գանձապահ՝ Բիւզանդ Պիւլպիւլեան
- Մարզական պատասխանատու՝ Սուրէն Մխսի Աւետիքեան

Սկսած տական խմբապետ՝ Յ. Մասերեճեան
Խորհրդականներ՝ Մնացական Յարութիւնեան, Շաւարշ Պալպալեան:

Վարչութիւնը իր կողքին կը նշանակէ Ֆուլթալի, թատերական եւ լսարանական յանձնախումբեր, ինչպէս նաեւ գոյքապահ եւ գրադարանապետ: Այս նշանակումներէն ի յայտ կու գայ, թէ Հայֆայի Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղը մարզական եւ սկսած տական գործունէութեանց կողքին կը տանի մշակութային կարեւոր գործունէութիւն:

Համաշխարհային Բ. Ընդհանուր Պատերազմի տարիներուն, մասնաճիւղի իրերայաջորդ վարչական կազմերը կը գործեն թէեւ սահմանափակ տարողութեամբ, բայց վերոյիշեալ բոլոր բնագաւառներով: Ակումբի սրահը եւ սենեակները կ'ընձեռնեն ամէն դիւրութիւն տարուած գործունէութեան համար: Ակումբի տարեկան վարձքն է վեց պաղեստինեան ոսկի:

1943-44 տարեշրջանի վարչական կազմն է հետեւեալը.-

- Ատենապետ՝ Յարութիւն Պէօյիւքեան
- Ատենադպիր՝ Մնացական Յարութիւնեան
- Գանձապահ՝ Սուրէն Մխսի Աւետիքեան

Խորհրդականներ՝ Շաւարշ Պալպալեան, Եղիա Տէմիրճեան, Տրդատ Լամպաճեան

Սկսած տապետ՝ Հայկ Ասլանեան:

Մասնաճիւղի կիրարկած մարզախաղերն են՝ Ֆուլթալի, աթլետիզմ, ճիմնասթիք, փինկ-փոնկ եւ կուփամարտ: Ֆուլթալիի գոյգ խումբերը կը գործեն կանոնաւորաբար, կազմակերպելով բարեկամական մրցումներ: Առաջին խումբը կը մասնակցի արաբական Ֆետերասիոնի ախոյեանական մրցաշարքին: Տարեկան գլխաւոր մրցումներէն կը հանդիսանայ Սբ. Զատիկուան տօնին առթիւ Երուսաղէմի մէջ կայացող միջմասնաճիւղային մրցաշարքը:

Փինկ-փոնկը եւ կուփամարտը կը գործեն միջ-անդամական սահմաններու մէջ:

10 Հոկտեմբեր 1943ին, մասնաճիւղը կը կազմակերպէ Պաղեստինի շրջանի միջ-միութեանական աթլետիք մրցումները մասնակցութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ-ի Երուսաղէմի մասնաճիւղին, Եաֆայի Հայկաշէն Կրթասիրաց Միութեան, Երուսաղէմի Արաքս Միութեան եւ իր խումբերուն: Արդիւնքները կ'ըլլան աւելի քան գոհացուցիչ:

27 Նոյեմբեր 1943ին, մասնաճիւղը արժանավայել շուքով եւ հոծ բազմութեան ներկայութեամբ կը կազմակերպէ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 25ամեակը:

1943-44 տարեշրջանի նիւթական գործառնութեան պատկերն է՝ մուտք՝ 432 պաղեստինեան ոսկի, ելք՝ 475 պ.ոսկի:

23էն 25 Դեկտեմբեր 1944ին, Հայֆայի Հ.Մ.Ը.Մ-ի պատգամաւոր Մնացական Յարութիւնեան մասնաճիւղը կը ներկայացնէ Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Շրջանային Ցրդ Պատգամաւորական Ժողովին՝ Պէյրութ:

1944-45 տարեշրջանի վարչական կազմը կը մնայ գրեթէ նոյնը: Միայն Տիրան Պալպալեանը կը փոխարինէ Շաւարշ Պալպալեանը, իսկ Յովհաննէս Պետրոսեանը՝ Հայկ Ասլանեանը: Այս կազմն ալ կը գործէ նախորդին նախագիծով: 1943էն 1945ի միջեւ մասնաճիւղը կ'արձանագրէ

անդամներու թիւի կարեւոր աճ՝ 32 նոր անդամներու արձանագրութեամբ: Ընդհանուր թիւ՝ 86, որուն վրայ կ'աւելնան սկաուտական շարքերու 67 անդամները՝ 45 սկաուտներ եւ 22 գայլիկներ: Զգալի է մասնագէտ սկաուտ վարիչներու պակասը:

Աշնանային աթլետիք միջ-միութենական խաղերը կրկին տեղի կ'ունենան Հայֆայի Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպութեամբ՝ 1 Հոկտեմբեր 1944ին:

Մարզական եւ սկաուտական գործունէութեան առընթեր, Հայֆայի մասնաճիւղը կազմակերպած կամ մասնակցած է աւանդական կարգ մը հրապարակային կամ միջ-անդամական ձեռնարկներու: Այդ առիթներն են՝ Ամանոր, Բարե-

կենդան, Ապրիլ 24, դասախօսութիւններ, թատրոն, թեյասեղան եւ այլն:

Յիշատակութեան արժանի է Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն Հայկ Ճիզմէճեանի այցելութիւնը Հայֆայի մասնաճիւղին եւ այդ առթիւ տուած դասախօսութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներուն մասին:

Հայկ Ճիզմէճեան իր խօսքը եզրափակած է ըսելով. «Ուրախ են Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրները տեսնելով իրենց երապներուն իրականացումը»:

26 Նոյեմբեր՝ 1944ին, տեղի կ'ունենայ սկաուտական հանդէս, ուր 9 նորընծայ սկաուտներ կու տան իրենց երդումը եւ 22 գայլիկներ՝ իրենց խոստումը:



Հայֆայի մասնաճիւղի Սկաուտական կապը 25 Դեկտեմբեր 1950ի Երդման արարողութեան առթիւ: Ուոքի՝ Վարչականներ՝ Տաւտեան, Գէորգ Մանճիկեան, Սկաուտապետ՝ Հայկ Ասլանեան, Տրդատ վարդապետ, Աբրահամ Լաբաճեան, Վարդիվառ Տէյիրմէնեան եւ ձորճ Թաշճեան

1944 տարեշրջանի նիւթական գործառնու-
թիւնն է՝ մուտք՝ 261 պաղեստինեան ոսկի, ելք՝
354 պ.ո.:

1945ին վերջ կը գտնէ Համաշխարհային Բ.
Ընդհանուր Պատերազմը, սակայն Պաղեստինի
մէջ տակաւին եւ աւելիով կը տիրեն արաբ-հրէ-
ական հակամարտութիւնները, որոնք իրենց գա-
գաթնակէտին կը հասնին 1947ին: Հայֆայի հա-
յուութիւնը, մեծամասնութեամբ, ինչպէս տեղացի
արաբները, ձեռք կ'առնեն գաղթականի ցուպը,
հաստատուելով գլխաւորաբար Սուրիոյ եւ Լի-
բանանի զանազան քաղաքներուն մէջ:

Այս դժուարին կացութիւնը երկար տարիներ
անգործունէութեան կամ՝ լաւագոյն պարագա-
յին՝ շատ զգուշաւոր գործունէութեան կը մատ-
նէ Հայֆայի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը, որ գրե-
թէ կը դադրի գործելէ:

1950ի սկիզբը, իր 13 Յունուար 1950 թուա-
կիր նամակով, Հայֆայի Հ.Մ.Ը.Մ.ի ատենադ-
պիր՝ Շնորհք Միսաքեան, Նազարէթ քաղաքը
բնակող Ստեփան Գափանճեանին կ'աւետէ Հայ-
ֆայի մասնաճիւղի վերակազմութեան լուրը:

12 Յունուար 1960ին, մասնաճիւղի 11րդ
անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած
վարչութիւնը իր դիւանը կը կազմէ ետեւեալ
ձեւով.-

- Ատենապետ՝ Հայկ Գուլյումճեան
- Ատենադպիր՝ Յակոբ Մանուկեան
- Գանձապահ՝ Պետրոս Պիտոյեան
- Հաշուապահ՝ Սարգիս Պոյաճեան
- Գոյքապահ՝ Սերոբ Եափուճեան:

Վարչութիւնը իր կողքին կը նշանակէ օժան-
դակ յանձնախումբեր:

Մշակութային յանձնախումբ՝ Պօղոս Վար-
ժապետեան, Գուրգէն Սարգիսեան, Վարդգէս
Տէմիրճեան, Երրաքսէ Մանուկեան, Արմենուհի
Պիտոյեան: Յանձնախումբի գործունէութեան
համար Կիրակի օրերը ազգային ամբողջու-
թեամբ կը տրամադրուի իրենց:

Սկստական Խորհուրդ, որուն գործունէ-
ութեան համար ազգային կը տրամադրուի Զո-
րեքշաբթի եւ Շաբաթ օրերու յետ միջօրէնները:

Սկստական Խորհուրդին մաս կը կազմէ Աւե-
տիս Մարկորեան: 1961ին վարչութիւնը կ'որոշէ
մարզիչ-ուսուցիչ մը ապահովել գայլիկները աթ-
լեթիք խաղերու վարժեցնելու համար:

1960ական թուականներէն սկսեալ, մասնա-
ճիւղի գործունէութիւնը հետզհետէ աւելի կը
կեդրոնանայ ընկերային եւ մշակութային մար-
զերուն վրայ: Մարզական գործունէութիւնը
գրեթէ դադրած է: Ֆուտպոլի, աթլեթիզմի եւ
ճիմնասթիքի խումբեր գոյութիւն չունին, այլ
միայն փինկ-փոնկը կը կիրարկուի ազգային
ներս միջ-անդամական ելոյթներով:

16 Յունուար 1961ի 12րդ անդամական ընդ-
հանուր ժողովէն ընտրուած վարչութեան կազմն
է.-

- Ատենապետ՝ Հայկ Ասլանեան
- Ատենադպիր՝ Աւետիս Մարկորեան
- Գանձապահ՝ Վարդգէս Տէմիրճեան
- Գոյքապահ՝ Յարութիւն Բանոյեան
- Խորհրդական՝ Աբրահամ Լաբաճեան:

Ըստ օրինի, այս կազմը պաշտօնապէս կը
տեղեկարգուի պետական գրասենեակներուն,
միութեան արտօնագրի վերանորոգման համար:

Այս եւ յաջորդող բոլոր կազմերը իրենց գոր-
ծունէութեան տարեշրջանի կիսուն կը կազմա-
կերպեն զեկուցական անդամական ընդհանուր
ժողովներ:

Հայֆայի Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը
մարզականէն կը թեքի դէպի ազգային, մշակու-
թային եւ ընկերային գործունէութիւն՝ մշակու-
թային յանձնախումբերու անմիջական գործակ-
ցութեամբ: Տարեկան հերթականութեամբ, եւ
կարելի է ըսել ժամացոյցի մը կանոնաւորու-
թեամբ, տարեսկիզբներէն սկսեալ հետեւեալ
ելոյթները հիմը կը կազմեն Հայֆայի մասնա-
ճիւղի գործունէութեան.- Բարեկենդանի հաւա-
քոյթ, Վարդանանց տօնակատարութիւն, Ապրիլ
24ի հանդիսութիւն, Խանասորի արշաւանքի տօ-
նակատարութիւն (դաշտագնացութիւն), եւ
Ամանորի հաւաքոյթ:

Այս ելոյթները, որոնք գրեթէ ամբողջու-
թեամբ կը կայանան ազգային սրահէն ներս,

մեծ հետաքրքրություններով եւ անվերապահ քաջալերանքով կը դիմաւորուին համակիր եւ ազգային շրջանակներու կողմէ, միաժամանակ ապահովելով նիւթական եկամուտ:

Մշակութային, թատերական, ակումբի եւ գրադարանի յանձնախումբեր կանոնաւորաբար կ'օժանդակեն վարչական կազմերուն: Վերոյիշեալ ականդական ելոյթներու շարքին տեղւոյն Հայ Կարմիր Խաչի՝ ՀՕՄի մասնաճիւղի գործակցութեամբ, կը կազմակերպուին դասախօսութիւններ, թատերական երեկոյթներ, փոքրիկներու հայերէնի դասընթացք, երգի ու պարի խումբերու ելոյթներ, որոնք յաճախ կը կրկնուին Երուսաղէմի, Եաֆայի կամ Նազարէթի հայ շրջանակներուն համար:

Ակումբային կեանքը ունի մշտական եւ եռուն ընթացք, ընկերային հաւաքոյթներ, թեյասեղաններ եւ պաղպաղակասեղաններ յաճախակիօրէն կը յաջորդեն իրար: Բացի միութենական ձեռնարկներէ, ակումբի սրահը վարձու կը տրուի հայ կամ տեղացի անհատներու, ընտանեկան առիթներու համար:

Ակումբի պիւֆէն բաց է մնայուն կերպով եւ ակումբ յաճախողները՝ բազմաթիւ:

Ակումբի շէնքը՝ թէեւ հին սակայն կեդրոնական դիրքի վրայ գտնուելուն պատճառով իր նպատակին լաւապէս կը ծառայէ: Յաջորդական վարչական կազմերու աշխատանքներուն մաս կը կազմէ ակումբի շէնքի նորոգութիւններ, կահաւորումներ, բարեգարդումներ: Շէնքը կը պատկանի Սանթ Լուքս անգլիական կրօնական հաստատութեան, որուն հետ յաջորդական վարչութիւնները հաղորդակցութեան մէջ կը մնան եւ պաշտօնական ձեւակերպութիւնները յարգե-

լով, Հ.Մ.Ը.Մ.ի վարչութիւնը ամէն տարի կը վերանորոգէ վարձակալական համաձայնագիրը:

1962էն 1974 Հ.Մ.Ը.Մ.ի Հայֆայի մասնաճիւղի վարչական կազմերու ատենապետութիւնը վարած են՝ Հայկ Ասլանեան, Արամ Մանուկեան, Յարութիւն Բանոյեան եւ Աբրահամ Լաբաճեան:

Նոյն ժամանակաշրջանի յաջորդական տարիներուն, մէկ կամ աւելի տարեշրջանի ընթացքին, վարչական այլ պաշտօններ (փոխ ատենապետ, ատենադպիր, գանձապահ, գոյքապահ, հաշուապահ կամ խորհրդական) վարած են՝

1962էն սկսեալ՝ Յակոբ Մանուկեան, Վարդգէս Տէմիրճեան, Զոհրապ Պոյաճեան, Պետրոս Պիտոյեան:

1963էն սկսեալ՝ Աւետիս Մարկորեան, Յարութիւն Բանոյեան եւ Վահէ Տէմիրճեան:

1964էն սկսեալ՝ Արամ Մանուկեան, Ծորճ Թաշճեան եւ Պօղոս Վարժապետեան:

1965էն սկսեալ՝ Գրիգոր Սողոմոնեան եւ Յովհաննէս Բանոյեան:

1966էն սկսեալ՝ Աբրահամ Լաբաճեան:

1967էն սկսեալ՝ Պետրոս Տէմիրճեան, Մաթէոս Մարկորեան եւ Սարգիս Պօտիկեան:

1968էն սկսեալ՝ Արմենակ Բանոյեան եւ Կայծակ Տէմիրճեան:

1969էն սկսեալ՝ Հայրապետ Լաբաճեան:

1970էն սկսեալ՝ Զոհրապ Եափուճեան:

Վարչական կազմերը ընտրուած են կատարեալ հերթականութեամբ, ամէն տարուայ Յունուար ամսուայ ընթացքին կայացած անդամական ընդհանուր ժողովներէն, որոնց ընթացքին կարգացուած են նախորդ տարեշրջանի գործունէութեան տեղեկագրութիւնները եւ քննուած՝ նիւթական հաշիւները:

13. Հունիս 1950
Կայծա

Վերջին
Ստորագրություններ
Վարչություն

Վերջին Առկառու և արտադրող հիշատակ
ունի քի առկառու և արտադրող հիշատակ
Առկառու Վ. Ս. Ս. Ս. 4 Հունիս 1950 թ. համար
կողմից հանդիսանալով հիշատակի մասին հարց
կարգի շեքի մասին էլ

Մասնավորապես հարցադրված թեպետ
հարցադրված և հարցադրված ժողովուրդի
"Կարգի" հարցի վերաբերյալ հարցադրված
Հարցադրված հարցադրված հարցադրված
Հարցադրված հարցադրված և հարցադրված
Հարցադրված հարցադրված

Մասնավորապես 45 անգամից հարց
այժմ հարցադրված հարցադրված հարցադրված
հարցադրված հարցադրված հարցադրված
հարցադրված հարցադրված հարցադրված
հարցադրված հարցադրված հարցադրված

Հարցադրված հարցադրված հարցադրված
Հարցադրված հարցադրված հարցադրված
Հարցադրված հարցադրված հարցադրված
Հարցադրված հարցադրված հարցադրված

Մասնավորապես հարցադրված հարցադրված
5. Հունիս 1950-ի հարցադրված հարցադրված
հարցադրված հարցադրված հարցադրված
հարցադրված հարցադրված հարցադրված
հարցադրված հարցադրված հարցադրված
հարցադրված հարցադրված հարցադրված
հարցադրված հարցադրված հարցադրված

Մասնավորապես հարցադրված հարցադրված
հարցադրված հարցադրված հարցադրված

Ի. Հարցադրված հարցադրված հարցադրված
Հարցադրված հարցադրված հարցադրված
Հարցադրված հարցադրված հարցադրված



Ամանի մասնաճիղ ֆութպոլի եւ պասքեթպոլի խումբերը
նկարուած 1955ի 28րդ միջ-մասնաճիղային հանդիպումներու ընթացքին



1937ի Հ.Մ.Ը.Մ-ի Ամմանի մասնաճիւղի հիմնադրութեան առաջին փորձը, երկամեակ մը ետք, կարեւոր մեկնումներու պատճառով, ամլութեան կը մատնուի: Օրին, տեղւոյն Հ.Մ.Ը.Մ-ը կը գործէր իբրեւ Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ-ի ենթամասնաճիւղ-[Խ. 409]:

1940ի վերջաւորութեան Ամմանի մասնաճիւղը կը վերակազմուի Յակոբ Խուլլումեանի, Ասատուր Պոյաճեանի եւ Նազար Ալաճաճեանի նախաձեռնութեամբ: Վերակազմութեան առաջին ընտրեալ վարչութեան անդամներն են Յակոբ Խուլլումեան, Ասատուր Պոյաճեան, Նազար Ալաճաճեան, Գէորգ Գէորգեան եւ Յարութիւն Սերայտարեան, որոնք մասնաճիւղը կը վարեն 1941 տարեշրջանին: Մասնաճիւղի վերակազմութեան հետ կը կազմակերպուի Ֆուլթպոլի խումբը, որ ունի իր վարձուած դաշտ եւ կը կազմակերպէ բարեկամական մրցումներ: Անդամներու ընդհանուր թիւն է 30:

Ամմանի հայութիւնը շուտով կը բոլորուի Հ.Մ.Ը.Մ-ի շուրջ եւ կը քաջալերէ անոր նախաձեռնութիւնները, որոնց նիւթական հասոյթները կը յատկացուին Հեթումեան Ազգային Վարժարանին: Մասնաճիւղի առաջին հաւաքավայրը կ'ըլլայ Ազգային Վարժարանի մէկ սրահը:

Բ. Աշխարհամարտի տեւողութեան մասնաճիւղը հետզհետէ իր գործունէութիւնը կը տարածէ մարզական եւ մշակութային բաժիններուն վրայ: Ֆուլթպոլի խումբը մնայուն հաղորդակցութեան մէջ է տեղացի ակումբներուն հետ, որոնց ուժերը թէեւ գերազանց են Հ.Մ.Ը.Մ-ի խաղացողներու ուժերէն, սակայն Հ.Մ.Ը.Մ-ի մարզիկները առանց յուսահատելու կը շարունակեն իրենց բարեկամական հանդիպումները:

Այս ուղղութեամբ, 1944ին, Ամմանի կառավարիչին նախագահութեամբ հիմնուած մարզական Ֆետերասիոնի մասնակցող չորս միութիւններէն մէկն է Հ.Մ.Ը.Մ-ը, որուն ներկայացուցիչն է Յովիկ Էթիեմէզեան: Այսպէսով, Ամմանի Հ.Մ.Ը.Մ-ը կ'ունենայ իր պետական ճանաչումը «Նէտի Շեպեպ Էլ Րիատի» անունով: Ամմանի մարզիկները կը մասնակցին Երուսաղէմի

մէջ կազմակերպուած Պաղեստինի միջ-մասնաճիւղային ողիմպիականներուն:

Նոյն ժամանակաշրջանին, մասնաճիւղը դժուարութիւններ կ'ունենայ Ամմանի հոգեւոր տեսուչին հետ իր գործակցութեան մէջ: Հ.Մ.Ը.Մ-ին տրամադրուած Ազգային վարժարանի սրահը կը մերժուի տրամադրուելէ: Տոքթ. Սուրէն Էթիեմէզեան եւ Յովիկ Էթիեմէզեան կը յաջողին այս դժուարութիւնները շրջանցել, եւ Հ.Մ.Ը.Մ-ի վարչութիւնը, քաղաքի կեդրոնը անհարթ հողաշերտ մը վարձելով, անդամներու եւ մարզիկներու ձեռքով մարզադաշտի կը վերածէ:

Մարզադաշտին վրայ առաջին պաշտօնական ելոյթը կ'ըլլայ Հեթումեան վարժարանի մարզահանդէսը, մեծ խանդավառութիւն ստեղծելով Ամմանի հայութեան մօտ: Միաժամանակ, Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութիւնը Ամմանի հայութեան մեծ վարկ կ'ապահովէ, յաջս պետական շրջանակներուն:

1946ի սկզբնաւորութեան, Ամմանի մասնաճիւղը ուղղակի կը կապուի Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Շրջանային Վարչութեան, դադրելով Երուսաղէմի ենթամասնաճիւղ համարուելէ: Շրջանային Վարչութիւնը, 9 Մայիս 1946 թուակիր նամակով Ամմանի Հ.Մ.Ը.Մ-ը կը վաւերացնէ իբրեւ Յորդանանի մայրաքաղաքի մասնաճիւղ: Մասնաճիւղի պետական արտօնութեան թիւն է 1/4/3 836՝ 17 Մարտ 1946 թուակիր:

Առաջին անգամ ըլլալով, 15 Փետրուար 1947ին, Ամմանի մասնաճիւղը կը մասնակցի 9րդ Շրջանային Պատգամաւորական Ժողովին: Մասնաճիւղի ղեկուցումը, իր գործունէութեան մասին, կը դիմաւորուի մեծ գոհունակութեամբ եւ քաջալերական արտայայտութիւններով:

Ամմանի մասնաճիւղի պատգամաւոր Յովիկ Էթիեմէզեան մասնաճիւղը կը ներկայացնէ Շրջանային 10րդ Պատգամաւորական Ժողովին եւ բերանացի տեղեկութիւններ կու տայ մասնաճիւղի գործունէութեան մասին: 1949ին Պաղեստինէն՝ կարեւոր թիւով Ամման հաստատուած հայերէն Հ.Մ.Ը.Մ-ականներ կը միանան

Ամմանի մասնաճիւղին, կրկնապատկելով մասնաճիւղի անդամներու թիւը:

Մասնաճիւղի մարզական ճիւղերը զգալի յառաջդիմութիւններ կ'արձանագրեն: 16 Ապրիլ 1949ին, Հալէպի մէջ, մասնաճիւղը կը մասնակցի Շրջանի 23րդ միջ-մասնաճիւղային խաղերուն:

1949-1950 տարեշրջանի տեղեկագրութեան համաձայն մասնաճիւղը ունի Ֆուտպոլի զոյգ խումբեր, պասքեթպոլի երեք խումբ եւ փինկ-փոնկի 2 խումբ: Սկաուտական բաժինը կը բաղկանայ 19 գայլիկներէ եւ 26 սկաուտներէ: Անդամներու ընդհանուր թիւն է 170:

1951 տարեշրջանի վարչական կազմին մասնակցած են. Սուրէն Յարութիւնեան, Ալպեր Փելթեքեան, Ճորճ Յակոբեան, Մկրտիչ Թոմիկեան, Իսահակ Շաքարեան եւ Յակոբ Խուլուժեան:

Մեկնումի պատճառով Յովսէփ Գաթրճեան եւ Սերոբ Մանուկեան, իսկ հրաժարականով Աւետիս Սարգիսեան տարեշրջանի աւարտէն առաջ դադարած են վարչական կազմին իրենց մասնակցութենէն: Վարչութիւնը խստապահանջութեամբ կը հսկէ անդամական կարգապահութեան, տնօրինելով պատժական որոշումներ:

Մարզական գետնի վրայ, մասնաճիւղը 1951ին կ'ունենայ Ֆուտպոլի, պասքեթպոլի եւ փինկ-փոնկի երկուքական կազմեր, ինչպէս նաեւ լուղորդներու խումբ մը: 1951ի Զատկական միջ-մասնաճիւղային խաղերուն առթիւ Ֆուտպոլի եւ պասքեթպոլի մէկական խումբ կը մեկնին Հալէպ: Պասքեթպոլի խումբը այս խաղերուն Բ. դասի մրցաշարքի աւարտական հանգրուանին կը հասնի: Ֆուտպոլի առաջին կազմը կը մասնակցի նաեւ Ամմանի ախոյեանութեան մրցաշարքին եւ կը կազմակերպէ բազմաթիւ բարեկամական մրցումներ Ամմանի եւ յորդանանեան այլ քաղաքներու խումբերուն դէմ: Բարեկամական մրցումներ ունեցած է նաեւ պասքեթպոլի եւ փինկ-փոնկի յորդանանեան կազմերու դէմ՝ յաճախ յաղթական արդիւնքներով:

Փինկ-փոնկի միջ-անդամական մրցաշարքին երէցներու ախոյեանութեան կը տիրանայ Գրիգոր Ծատուրեան, իսկ սկաուտական բաժնին մէջ՝ Յովհաննէս Մարտոյեան:

Սկաուտական բաժինը ունեցած է բեղուն գործունէութիւն՝ սկաուտական թեքնիք եւ մարզական զոյգ բաժիններով: Երէցներու փաղանգը մասնակցած է նաեւ մասնաճիւղի թատերական գործունէութեան:

Մշակութային մարզը եւս գործած է յաջողութեամբ՝ դասախօսական, թատերական, երաժշտական եւ գրադարանային բաժիններով:

Ընկերային գետնի վրայ՝ ազգային տօներու, Սբ. Ծննդեան, միջ-անդամական խրախճանքներու, արտասահմանէն այցելուներու հիւրասիրութեան եւ նման հաւաքոյթները պսակուած են յաջողութեամբ: Մասնաճիւղի տարեկան հասութարքեր ձեռնարկը եղած է «Ամման Քլապ»ի մէջ տրուած պարահանդէսը:

24 Փետրուար 1952ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ բաղկացած հետեւեալներէն.-

Ատենապետ՝ Յակոբ Զօլաքեան
Ատենադպիր՝ Յակոբ Արըգեան
Գանձապահ՝ Մկրտիչ Թոմիկեան

Մարզական պատասխանատու՝ Յակոբ Խուլուժեան

Սկաուտապետ՝ Հրանդ Իշխանեան

Խորհրդականներ՝ Ալպէր Փելթեքեան, Սուրէն Յարութիւնեան:

Մարզական գետնի վրայ, 1952 տարեշրջանին վարչութիւնը յատուկ խնամքի կ'արժանացնէ պասքեթպոլի ճիւղը, ուր զոյգ խումբեր իրենց կանոնաւոր փորձերով զգալի յառաջդիմութիւն կ'արձանագրեն: Ֆուտպոլը նոյն քաղաքական վիճակը չի ներկայացներ: Այս ճիւղի մարզիկները իրենց ընթացքով յուսախափ կ'ընեն վարչութիւնը, որ իր նամակներէն մէկուն մէջ կ'արձանագրէ. «... մեր մարպիկները <Մ.Ը.Մ.էն ներս պատրաստուելէ ու մարպուելէ վերջ ... դարձած են ու դասալիք եղած»:

Սկառուտական ճիւղը՝ աւելի յուսադրիչ՝ նոր նուաճումներ կ'արձանագրէ խմբապետ Հրանդ Սիմոնեանի առաջնորդութեամբ եւ Սկառուտական Խորհուրդի մնայուն հոգաժողովեամբ:

Տարեշրջանի նորագոյն յաջողութիւնն է «Կոմիտաս» երգչախումբի կազմութիւնը, որուն կը մասնակցին 40 անդամ-անդամուհիներ, պատրաստելու համար աննախընթաց համերգ:

Վարչութեան հիմնական աշխատանքներէն է նաեւ սեփական հողաչերտ մը գնելու փորձը, որուն յաջողութիւնը ապահով կը համարուի:

1 Մարտ 1953ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչութիւն՝

- Ատենապետ՝ Ալպէր Փելթեքեան
- Ատենադպիր՝ Յարութիւն Տէօքմեճեան
- Գանձապահ՝ Միքայէլ Սագաճեան
- Սկառուտապետ՝ Յովհաննէս Ստամպուլեան
- Մարզական պատասխանատու՝ Արամ Ծատուրեան:

Այս կազմի գործունէութիւնը կ'ըլլայ կարճատեւ: Կազմը իր հաւաքական հրաժարականը կու տայ հազիւ կիսամեայ գործունէութենէ ետք: 21 Օգոստոսին կ'ընտրուի նոր վարչութիւն.-

- Ատենապետ՝ Յակոբ Զաքեան
- Ատենադպիր՝ Բարսեղ Սվազլեան.
- Գանձապահ՝ Ճորճ Տաքեսեան
- Գոյքապահ՝ Յակոբ Յակոբեան
- Խորհրդական՝ Յակոբ Պետեվեան
- Մարզական պատասխանատու՝ Գրիգոր Ծատուրեան

Սկառուտապետ՝ Օննիկ Խաչերեան:

Նոր վարչական կազմը կը յաջողի 1952 տարեշրջանին սկսուած սեփական հողաչերտի վրայ կառուցուող աղուամբի շինութիւնը ամբողջացնել: Այս հիմնական իրականացման վերջնական աշխատանքները կը տանի, 21 Մարտ 1954ին ընտրուած նոր վարչական կազմը բաղկացած ինը անդամներէ.-

- Ատենապետ՝ Յակոբ Զաքեան
- Փոխ ատենապետ՝ Յակոբ Պետեվեան
- Ատենադպիր՝ Բարսեղ Սվազլեան

- Գանձապահ՝ Ճորճ Տաքեսեան
- Հաշուապահ՝ Պողոս Գազեան
- Գոյքապահ՝ Յակոբ Յակոբեան
- Խորհրդական՝ Մանուէլ Քէօյլեան
- Մարզական պատասխանատու՝ Գրիգոր Քէօզկելեքեան

Սկառուտապետ՝ Օննիկ Խաչերեան:

18 Ապրիլին, տեղի կ'ունենայ նոր աղուամբի բացման հանդիսութիւնը: Նոր աղուամբի ընձեռած առաւելութիւնները օգտակար կը դառնան յառաջիկայ տարուան մարզական եւ մշակութային գործունէութիւններուն: Անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 198ի, որոնցմէ 30ը՝ սկառուտական շարքերէն:

1955ին, նախորդ վարչական կազմի առաջին հինգ անդամները կը մնան պաշտօնի գլուխ, ատենապետի եւ փոխ ատենապետի տեղափոխութիւններով: Վարչութեան երկու նոր անդամներն են Յարութիւն Հեթումեան՝ մարզական պատասխանատու եւ Հայկազ Խշվաճեան՝ սկառուտապետ:

Յուլիսին, Եգիպտոսէն Գրիգոր Նիզիպլեան կը հրաւիրուի պատրաստելու համար Ամմանի Հ.Մ.Ը.Մ.ի խումբերուն մարզիչները: Գրիգոր Նիզիպլեանի ներկայութիւնը մեծապէս կը նպաստէ մարզական խումբերուն, յատկապէս պասքեթպոլի յառաջդիմութեան:

17 Փետրուար 1956ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովի ընտրած վարչութեան կազմն է հետեւեալը.-

- Ատենապետ՝ Ճորճ Յակոբեան
- Փոխ ատենապետ՝ Ալպէր Փելթեքեան
- Ատենադպիր՝ Պարգեւ Փելթեքեան
- Գանձապահ՝ Օննիկ Խաչերեան
- Խորհրդական՝ Յովհաննէս Ստամպուլեան
- Սկառուտական խմբապետ՝ Մինաս Այնթապլեան

Մարզական պատասխանատու՝ Յարութիւն Հեթումեան:

31 Մարտին, Ամմանի պասքեթպոլի եւ ֆութպոլի խումբերը կը մասնակցին, Հալէպի

մէջ, միջ-մասնաճիւղային խաղերուն: Նոյն մասնակցութիւնը կը կրկնուի 1957ին, Ֆուլթայոլի խումբով՝ գլխաւորութեամբ Վարուժան Էթիեմէզեանի եւ սկաուտական խումբով՝ առաջնորդութեամբ Յովհաննէս Մարտոյեանի:

1957ին, անդամներու ընդհանուր թիւն է 207 հետեւեալ ստորաբաժանումներով. օժանդակ անդամներ՝ 60, մարզիկներ՝ 40, գայլիկներ՝ 40, արենոյչներ՝ 40, սկաուտներ՝ 27:

Մասնաճիւղը ունի վարձու ահումբ եւ խաղավայր տարեկան 250 տինար գումարով: Ունին 500 հատորով գրադարան: Վարչութեան ատենապետն է Ալպէր Փելթեքեան, ատենադպիրը՝ Պարգեւ Փելթեքեան:

1959 տարուան վարչական կազմի անդամներն են.-

- Ատենապետ՝ Ալպէր Փելթեքեան
- Փոխ ատենապետ՝ Ճորճ Տաքեսեան
- Քարտուղար՝ Յովհաննէս Սթամպուլեան
- Գանձապահ՝ Զոհրապ Սուրճեան
- Հաշուապահ՝ Վարուժան Էթիեմէզեան
- Սկաուտական խմբապետ՝ Յովհաննէս Մարտոյեան:

Այս տարեշրջանին սկաուտական կազմը յատուկ խնամքի կ'արժանանայ եւ շարքերու ընդհանուր թիւը կը բարձրանայ 125ի, կազմելով մասնաճիւղի անդամական ընդհանուր թիւի 50 առ հարիւր տոկոսը: Սկաուտական շարքերէն աստիճանաւորներ կը մասնակցին Լիբանանի մէջ Շրջանային Վարչութեան կազմակերպած դպրոց-բանակումին:

1960ի վարչական կազմը կը բաղկանայ միայն հինգ անդամներէ. Յակոբ Պետեւեան, Մկրտիչ Տէրտէրեան, Զոհրապ Սուրճեան, Յակոբ Փելթեքեան եւ Գուրգէն Պալեան:

Մասնաճիւղը կը կիրարկէ Ֆուլթայոլ, պասքեթպոլ եւ փինկ-փոնկ: Մարզականի կողքին կը տարուի մշակութային աշխատանք, պարախումբի եւ նուագախումբի կազմերով Ամմանի հայութեան հետաքրքրութիւնը կը կեդրոնանայ Հ.Մ.Ը.Մ-ի շուրջ:

1961 տարեշրջանին վարչութեան անդամներու թիւը կը բարձրանայ եօթի, հետեւեալ կազմով.-

- Ատենապետ՝ Ալպէր Փելթեքեան
- Փոխ ատենապետ եւ հաշուապահ՝ Յակոբ Պետեւեան

Ատենադպիր եւ գանձիչ՝ Յովհաննէս Ստամպուլեան

- Գանձապահ՝ Անդրանիկ Պարսամեան
- Խորհրդականներ՝ Ճորճ Տաքեսեան, Վարուժան Էթիեմէզեան:

Մարզական եւ մշակութային գործունէութիւնը կը շարունակուի նոյն թափով: Սկաուտական աշխատանքները կը վարէ յատուկ Սկաուտական Խորհուրդը: Տարեկան աւանդական տօնակատարութիւնները Ապրիլ 24 եւ Մայիս 28 կը նշուին պատշաճ շուքով:

10 Փետրուար 1962ին, աւանդական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութեան կազմն է.-

- Ատենապետ՝ Ալպեր Փելթեքեան
- Փոխ ատենապետ՝ Յակոբ Զաքեան
- Ատենադպիր՝ Ճորճ Տաքեսեան
- Գանձապահ՝ Մկրտիչ Տէտէրեան
- Գանձիչ՝ Նուպար Խաչատուրեան
- Մարզական ընդհանուր խմբապետ՝ Վարդգէս Կիրակոսեան
- Սկաուտապետ՝ Յովհաննէս Մարտոյեան
- Խորհրդականներ՝ Յակոբ Պետեւեան, Վարուժան Էթիեմէզեան:

Կազմի գլխաւոր իրականացումն է Էշրէֆիէ բլուրի ազգային վարժարանին կից 1495 քառակուսի մեթր տարածութեամբ հողաչերտի սեփականացումը եւ անոր արձանագրութիւնը չորս անդամներու անուան. Ալպէր Փելթեքեան, Յակոբ Զաքեան, Ճորճ Տաքեսեան եւ Տիրան Ոսկերիչեան: Հողաչերտի թիւերն են՝ 33/335-336-337-338: Ընդհանուր փոխարժէք 2481 յորդանանեան տինար, որու վճարման համար դրամատունէն փոխ առնուած վճարելի գումար կը մնայ տակաւին 765 Յ.Տ.: Վարչութիւնը իր տարեկան

գործունէութեան տեղեկագրութեան մէջ յիշելով վերոյիշեալ մանրամասնութիւնները լիայոյս է թէ յաջորդ տարեշրջանին փոխառութեան հաշիւը պիտի փակուի եւ ժողովին կը ներկայացնէ հողաչերտին վրայ կառուցելի 9000 Յ.Տ. արժողութեամբ ակումբի եւ խաղավայրի ծրագրին համար նիւթական ապահովելու միջոցները:

Տարեվերջին անդամներու ընդհանուր թիւն է 113:

Վերոյիշեալ ծրագիրներու յանձնառումով, 15 Փետրուար 1963ի անդամական ընդհանուր ժողովը 1963 տարուան վարչական անդամներ կ'ընտրէ հետեւեալները.-

- Ատենապետ՝ Ալպէր Փելթեքեան
- Ատենադպիր՝ Պարգեւ Փելթեքեան
- Գանձապահ՝ Ճորճ Տաքեսեան
- Գանձիչ՝ Գրիգոր Թիւթիւնճեան

Սկառու խմբապետ՝ Յովհաննէս Մարտոյեան

Մարզական ընդհանուր խմբապետ՝ Վարդգէս Կիրակոսեան

Խորհրդական՝ Յակոբ Զաքեան:

Զգալի բաց մը կը գոյանայ անդամական ցանցին մէջ, երբ գործօն կարեւոր ուժեր վերջնականապէս կը մեկնին Ամմանէն: Այսուհանդերձ մնացող անդամները հաւատքով կը փարին մեկնողները փոխարինելու աշխատանքին, յատկապէս սկառուտական բաժինէն ներս:

Պասքեթպոլի եւ փինկ-փոնկի խումբերը կը մասնակցին պատկան Ֆետերասիոններու ախոյեանական մրցաշարքերուն:

Ազգային եւ եկեղեցական տօները կը նշուին նախկին յաջորդականութեամբ: Տարեկան հասուցեքներ ձեռնարկը՝ պարահանդէսը տեղի կ'ունենայ 28 Դեկտեմբերին պանդոկ Ֆիլատելֆիայի սրահներուն մէջ: Վարչութիւնը հետամուտ է ակումբի շինութեան ֆոնտը զօրացնելու: Սեփական հողաչերտը վարչական անդամներու անունէն կը փոխանցուի Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հ.Օ.Մ.ի մասնաճիւղերու անունան 3/4 եւ 1/4 համեմատութեամբ:

20 Փետրուար 1964ին, անդամական ընդհանուր ժողովը, լսելէ ետք շրջանաւարտ վարչութեան նիւթաբարոյական գործունէութեանց տեղեկագրերը, կը վերընտրէ նախկին վարչականներէն վեցը, կազմին վրայ աւելցնելով Մկրտիչ Տէրտէրեանն ու Վարուժան Էթիեմէզեանը, իսկ Արչակ Դաւիթեան կը փոխարինէ քաղաքէն մեկնած սկառու խմբապետ Յովհաննէս Մարտոյեանը:

Վարչութիւնը, Յուլիսին կը դիմէ Շրջանային Վարչութեան խնդրելով որ Ամման ուղարկէ պասքեթպոլի մարզիչ մը մէկ ամսուան ժամանակամիջոցի համար, մասնաճիւղի խումբի թեքնիք մակարդակը զօրացնելու նպատակով:

1965ին նշանակեալ պատգամաւոր Սարգիս Եկենեան մասնաճիւղը կը ներկայացնէ Մերձաւոր Արեւելքի Շրջանային 16րդ Պատգամաւորական ժողովին: Մասնաճիւղի տեղեկագրէն ի յայտ կու գայ թէ վարչութիւնը յաջողած է ամբողջացնել սեփական հողաչերտի գնման առթիւ փոխառութեան գումարի վճարումը:

1965ին անդամներու ընդհանուր թիւն է 153, որոնցմէ 73ը մաս կը կազմեն սկառուտական շարքերուն հետեւեալ ենթաբաժանումով. սկառուտ՝ 16, գայլիկ՝ 25, արենուչ՝ 12, արծուիկ՝ 20: Մասնաճիւղի պասքեթպոլի, փինկ-փոնկի եւ վոլիպոլի կազմերը անդամ են յորդանանեան պատկան Ֆետերասիոններուն:

1966 եւ 1967 տարիները շինարարական տարիներ են: Վարչութեան դիւանը . ատենապետ՝ Ճորճ Տաքեսեան եւ քարտուղար՝ Պարգեւ Փելթեքեան, 20 Մայիս 1967 թուակիր նամակով Շրջանային Վարչութեան կը հաղորդեն, թէ ակումբի շինութիւնը աւարտած է: Շինարարական աշխատանքները արժած են 7000 Յորդանանեան Տինար եւ վարչութիւնը այս առթիւ կը գտնուի 5000 Տինարի պարտքի մը տակ, որ լիայոյս է քանի մը տարուան ընթացքին հայթայթելու զանազան ձեռնարկներով:

Ակումբի բացումը տեղի կ'ունենայ 20 Մայիս 1967ին, հովանաւորութեամբ Երուսաղէմի Պատրիարք Եղիշէ Սրբ. Արք. Տէրտէրեանի:

Ամմանի մասնաճիւղը յառաջդիմութեան նոր շրջանի մը սեմին կը գտնուի: Նորակերտ ակումբի բաժանմունքները ձեռնտու կ'ըլլան մասնաճիւղի կազմակերպական, սկստական, մշակութային եւ ընկերային բաժիններու նոր թափով զարգացման:

Յաջորդական վարչական կազմերը հետեւողական աշխատանքով կը յաջողին զարգացնել եւ արդիականացնել մասնաճիւղի գործունէութեան բոլոր բաժինները:

1967էն 1970ական թուականներու առաջին տարիները արաբ-իսրայէլեան պատերազմին պատճառած գրաւումներու հետեւանքով զգուշաւոր գործունէութեան կը մղեն մասնաճիւղի վարչական կազմերը: Շրջանային վարչութեան հետ ալ կապերը գրեթէ կը դադրին, հասկնալի պատճառներով:

1972ին, մասնաճիւղը ունի 90 անդամներ,


կազմակերպչական, մարզական, սկստական եւ ընկերա-մշակութային լայն գործունէութեամբ: Նիւթականօրէն ինքնաբաւ վարչութիւնը ճիգ չի խնայեր աւելի բարելաւելու համար գործունէութեան վերոյիշեալ բոլոր մարզերը: Վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէ Ճորճ Տաքեսեան, որ Ռոստոմ էթիեմէզեանի ընկերակցութեամբ կ'այցելէ Պէյրութ Շրջանային վարչութեան 25 Մայիսի նիստին զեկուցելու համար Ամմանի Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան մասին: Եօթը հոգինոց վարչական կազմ մը կը վարէ մասնաճիւղի աշխատանքները:

1973-74 տարեշրջաններուն, վարչական պաշտօններ վարած են. Ճորճ Տաքեսեան, Արշակ Դաւիթեան, Լեւոն Եփրեմեան, Աւետիք Դաբինեան, Նուպար Գուլյումճեան, Սեպուհ Երկաթեան եւ Կարօ Մուրատեան:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԻՐԱՔ

- ՊԱՂՏԱՏ
- ՔԵՐՔՈՒՔ
- ՄՈՒՍՈՒԼ



Հակառակ վաղ ժամանակներէն սկսեալ Իրաքի մէջ հայ մարզական եւ սկաուտական գործունէութեան գոյութեան, Հ.Մ.Ը.Մ.ի կազմութիւնը մայրաքաղաք Պաղտատի, ապա Մուսուլ եւ Քերքուք քաղաքներուն մէջ իրականութիւն կը դառնայ Համաշխարհային Բ. Ընդհանուր Պատերազմի աւարտէն սկսեալ:

1948ին, կը կազմուի Պաղտատի արուարձան Նորաշէն շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը: Շուտով երկրորդ մասնաճիւղը կը հիմնուի մայրաքաղաքի կեդրոնական թաղամասին մէջ: Աւելի ուշ, կը կազմուին Քերքուքի եւ Մուսուլի մասնաճիւղերը, եւ 1962էն սկսեալ Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի կեդրոնական վարչութիւնը կը կազմակերպէ Իրաքի միջ-մասնաճիւղային մրցաշարքեր եւ կապեր կը հաստատէ դրացի երկիրներու՝ Սուրիոյ եւ Լիբանանի մասնաճիւղերուն հետ, մրցումներ կազմակերպելով տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու խումբերուն դէմ:

Ստորեւ, Իրաքի Հ.Մ.Ը.Մ.ի կազմութեան եւ մասնաճիւղերու զանազան բաժիններու գործունէութիւններու մասին արձանագրութիւններ:

ՊԱՂՏԱՏ

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

Պաղտատաբնակ հայ ազգայիններու քաջալերանքին անսալով Արշակ Եսայեան եւ կարգ մը երիտասարդներ 23 Սեպտեմբեր 1948ին, հիմը կը դնեն Պաղտատի Նորաշէն հայաշատ աւանի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին՝ տղոց եւ աղջկանց յատուկ զոյգ վարչութիւններով:

Այս հիմնադրութեան շուտով կը հետեւի մայրաքաղաքի կեդրոնական հայկական թաղամասերու, Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի կազմութիւնը՝ կրկին զոյգ վարչութիւններով:

Հ.Մ.Ը.Մ.ի կազմութիւնը օրինականացնելու նպատակով առաջին հերթին կը դիմուի պատկան իշխանութեանց, ստանալու համար պաշտօ-

նական արտօնագիր: Արտօնագիրը ստանալէ ետք, 3 Յունուար 1950 թուակիր նամակով Արշակ Եսայեան կը դիմէ Սուրիոյ, Լիբանանի եւ Յորդանանի Շրջանային վարչութեան, տեղեկացնելով Պաղտատի Հ.Մ.Ը.Մ.ի կազմութիւնը եւ կը խնդրէ բարոյական աջակցութիւն մասնաճիւղի յաջողութեան համար: Շրջանային վարչութիւնը պատրաստակամութիւն կը յայտնէ ամէն աջակցութիւն առաջարկելով, որ Պաղտատի Հ.Մ.Ը.Մ.ը միանայ Մերձաւոր Արեւելքի Հ.Մ.Ը.Մ.ի կառոյցին: Սակայն, հակառակ իր փափաքին եւ պետական պայմաններու պարտադրանքով, Պաղտատի Հ.Մ.Ը.Մ.ը չի կրնար օրինաւոր կերպով մաս կազմել կառոյցին, շարունակելով հանդերձ իր բարոյական կապերը անոր հետ:

1952ի սկիզբը, Սուրիոյ եւ Լիբանանի կարգ մը մասնաճիւղերէն գործի բերմամբ Իրաք հաստատուած Հ.Մ.Ը.Մ.ականներ կ'անդամակցին Պաղտատի մասնաճիւղին, իրենց փորձառութեամբ օժանդակելով Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի գործունէութեան: Մինչ այդ, Շրջանային վարչութիւնը իր շրջաբերականներու եւ թղթակցութեան միջոցաւ հաղորդակցութեան մէջ կը մնայ Պաղտատի Հ.Մ.Ը.Մ.ի վարչութեան հետ, հրաւիրելով նաեւ զիրենք մասնակցելու իր կազմակերպած միջ-մասնաճիւղային խաղերուն եւ ողիմպիականներուն:

Տարեվերջին, Պաղտատի զոյգ մասնաճիւղերը՝ Նորաշէն եւ կեդրոն իրենց զոյգ բաժիններով իւրաքանչիւրը կը հաշուեն 140 եւ 160 անդամներ: Լիբանանէն Շրջանային վարչութեան միջոցաւ կը ստանան 240 օրինակ Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր Ծրագիր-կանոնագիր, լաւապէս ծանօթանալու համար Միութեան նպատակներուն եւ գործելակերպի օրինական միջոցներուն:

Զոյգ մասնաճիւղերը ունին իրենց ահուճները ու վարձուած մարզադաշտերը, կեդրոնը կը մշակէ ֆութպոլ եւ պասքեթպոլ, իսկ Նորաշէնը՝ վոլիպոլ՝ զանազան դասակարգի խումբերով:

1956ին, Արշակ Եսայեան կ'այցելէ Հայէպի Հ.Մ.Ը.Մ-ին եւ Պէյրուսի Շրջանային Վարչութեան, յայտնելով, թէ Պաղտատի Հ.Մ.Ը.Մ-ը կը փափաքի մասնակցիլ Զատկական միջ-մասնաճիւղային խաղերուն: Սակայն այս ծրագիրը չիրականանար նիւթական անձուկ պայմաններու բերումով:

1959ի Օգոստոսէն սկսեալ Պաղտատի Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղը գործունէութեան նոր շրջան մը կը սկսի փոխադրուելով Պաղտատի Կեդրոնական Վարչութեան նախագահ Յովհաննէս Սեմերճեանի նուիրաբերած եւ կառուցած ընդարձակ եւ արդիական ահումբը իր յարակից բոլոր խաղավայրերով:

Նորակառոյց ահումբին եւ մարզադաշտերուն ընձեռած առաւելութիւնները առիթ կը ստեղծեն որ Պաղտատի Հ.Մ.Ը.Մ-ը Գ. դասակարգի աստիճանէն բարձրանայ Ա. դասակարգ:

Գործնականօրէն մարզադաշտերու ստեղծած առաւելութիւններու պատճառով Հ.Մ.Ը.Մ-ական մարզիկներու թեքնիք յառաջդիմութիւնները օրէ օր աւելի զգալի կը դառնան եւ յաղթանակի փայլուն արդիւնքներ հետզհետէ ի յայտ կու գան: Մարզական ճիւղի ցանցին մաս կը կազմեն Ֆութպոլ, պասքեթպոլ, վոլիպոլ, փինկ-փոնկ, աթլետիզմ, ծանրաբարձութիւն եւ թենիս:



Իրաքի վոլիպոլի աղջկանց խումբերու ախոյեան՝ Պաղտատի Հ.Մ.Ը.Մ-ի կապմը, 1962ին

Շուտով Պաղտատի ախոյեանութեան առաջնակարգ դիրքը կը յաջողին ապահովել վոլիպոլի աղջկանց կազմը, փինկ-փոնկի երկսեռ մարզիկները եւ աթլետիզմի մարզիկները: Ախոյեան աթլետներ կը յաջողին բարելաւել իրաքեան եւ արաբական երկիրներու աթլետիզմի մրցանիշեր, տիրանալով յաղթանակի մետալներու եւ բաժակներու:

Մասնաճիւղի մարզական մակարդակի այս բարձրացումը առիթ կը ստեղծէ, որ Հ.Մ.Ը.Մ-ական ղեկավարներ 1960ին ընտրուին Իրաքի ծանրաբարձութեան, վոլիպոլի, թենիսի եւ փինկ-փոնկի Ֆետերասիոններու անդամներ, իրենց ծառայութիւնը բերելով իրաքեան հայրենիքին:

1961ին, Պաղտատի Հ.Մ.Ը.Մ-ը կը հաշուէ 725 երկսեռ անդամ-անդամուհիներ: Մարզական ճիւղի կողքին մասնաճիւղը իր ծիրին մէջ կ'առնէ մշակութային գործունէութիւն զանազան բաժիններով: Պէյրուսի Շրջանային Վարչութեան միջոցով կը խնդրեն սկաուտական դասագիրքեր, սկաուտական շարժումն ալ սկսելու համար մասնաճիւղէն ներս: Մարզական բաժիններու յաւելեալ զարգացման համար կը խնդրեն նաեւ մարզիչներ կամ կը ծրագրեն Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան կազմակերպած մարզիչներու ամառնային դասընթացքներուն իրենց կողմէ անդամներ ղրկել հետեւելու համար վերոյիշեալ դասընթացքներուն:

1962ին, Պաղտատի Հ.Մ.Ը.Մ-ը կ'ունենայ նաեւ սկաուտական խումբ, որուն թիւը հետզհետէ կը բազմանայ, ամբողջացնելով Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութեան ցանցը:

1963էն սկսեալ, մարզական խումբերու յաջողութիւնները աւելի հաստատ հիմերու վրայ կը դրուին: Պասքեթպոլի տղոց երկրորդական դասերու խումբերը կը շահին իրենց դասի ախոյեանութիւնները: Աղջկանց վոլիպոլի խումբը, յաջորդաբար երրորդ տարին ըլլալով կը շահի Պաղտատի ախոյեանութիւնը: Փինկ-փոնկի հինգ մարզիկներ կ'ապահովեն տարուան կարգ մը ախոյեանութիւնները: Երեք Հ.Մ.Ը.Մ. ականներ՝

Ս. Քէօշկէրեան, Ե. Մելիքեան եւ Ա. Սահակեան մաս կը կազմեն Իրաքի ոստիկանական Ֆուլթպոլի խումբին մասնակցելով միջազգային հանդիպումներու:



Իրաքի Փինկ փոնկի ակումբի Վ.Լ.Մ.-ականներ՝ Բաբկէն Ասատուրեան, Վիոլէթ Մարթըն եւ Նոդէհ Թորոսեան

1968ին, գործունէութեան բաժինները նոր թափ կը ստանան: Մասնաճիւղը կը վարձէ նոր արդիական ակումբ: Վարչական անդամներէն՝ Մելիքեան այս մասին զեկուցելով Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան, փափաք կը յայտնէ մաս կազմելու անոր կառոյցին: Մասնաճիւղը ունի պետական նոր արտօնագիր, կը մշակէ ֆուլթպոլ: Ֆուլթպոլի խումբը այս եղանակին կ'այցելէ Պէյրութ, ուր հիւրը կ'ըլլայ տեղւոյն մասնաճիւղին:

1974էն սկսեալ Պաղտատի մասնաճիւղը պետական նոր դասաւորումներու դրութեամբ կը կրէ «Սաատուն» անունը:

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ

Պաղտատի Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական գործունէութիւնը սկսած է համեմատաբար ուշ՝ 1960-61 տարիներուն, երբ մասնաճիւղը նոր կառուցուած ակումբի կողքին կ'ունենայ նաեւ տարածուն խաղավայրեր:

Առաջին տարին, երէց սկաուտներու փառանգի մը կազմութենէն ետք, աստիճանաւորա-

կան խմբակի մը յայտնութեամբ կը կազմուի մասնաճիւղի անդրանիկ Սկաուտական Խորհուրդը: 1962ին, թիւով 10 երէց սկաուտներ կը մասնակցին Լիբանանի մէջ սկաուտական Շրջանային Խորհուրդի կազմակերպած դպրոց-բանակումին: Դպրոց-բանակումի մասնակցութեամբ, աստիճանաւորական կազմը աւելի մասնագիտացած սկաուտներով կը վերադառնայ մասնաճիւղի սկաուտական բաժնի ծառայութեան: Հետզհետէ կը կազմուին գայլիկներու, մրջնիկներու եւ սկաուտներու կորիզներ: 1963ին, սկաուտական շարքերու ընդհանուր թիւն է 58:

Սկաուտական գործունէութիւնը կը վարէ մասնագէտներէ բաղկացած Սկաուտական Խորհուրդը, որուն մաս կազմած են Երջանիկ Պապայեան, Յարութիւն Բարսեղեան, Վարդգէս Օհաննէսեան, Սողոմոն Իշխանեան, Աննա Քիւրքճեան եւ Հրայր Արզումանեան: Վարչութիւնը յատուկ գուրգուրանքով կը հետեւի սկաուտական բաժնի գործունէութեան, այն ամբողջական գիտակցութեամբ, թէ մասնաճիւղի գործունէութեան հետեւողականութիւնը պիտի ապահովուի անոր շարքերուն նոր սերունդի մասնակցութեամբ:

Վարչութիւնը, այլապէս ծառայելու համար նոր սերունդի մարմնակրթանքին, սկիզբէն ի վեր հայ վարժարաններէ ներս կ'ուղարկէ մարզիչներ սիրայօժար կերպով ծառայելու համար անոնց մարզական դասերուն եւ գայլիկական կորիզներու կազմութեան:

1972ին, Պաղտատի մէջ կայացող համա-արաբական սկաուտական ճեմպորիին, Պաղտատի Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտներէն ոմանք մաս կը կազմեն իրաքեան պատուիրակութեան:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ

1960ական թուականներու սկզբնաւորութեան Պաղտատի Հ.Մ.Ը.Մ-ը կը նախաձեռնէ մշակութային գործունէութեան, իր երաժշտական, թատերական եւ գրական ենթաբաժանումներով: Մեծ թիւով անդամ-անդամուհիներ

իրենց գործնական եւ արդիւնաբեր մասնակցութիւնը կը բերեն մշակութային գործունէութեան զանազան բաժիններուն, բարձրացնելով անոնց մակարդակը եւ նրբացնելով անդամներու ճաշակը: Իրաքահայ ընտրանին նիւթապէս կ'օժանդակէ եւ կը յաջողցնէ Հ.Մ.Ը.Մ-ի ամէն կարգի նախաձեռնութիւնները: Վարչութիւնը տարեկան պարահանդէսներու եկամուտով կը հաւասարակչուէ նիւթական գործառնութիւնը:

Մշակութային գործունէութեան թատերական բաժնի ներկայացումներու միջոցաւ ապահովուած եկամուտները կը յատկացուին հայկական վարժարան յաճախող սաներու կրթաթոշակին:

Մասնաճիւղի «Մասիս» նուագախումբը իր նուագներով կ'առաջնորդէ, միջ-մասնաճիւղային խաղերու առթիւ, մարզիկներու եւ սկսողներու ընդհանուր տողանցքները:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

Պաղտատի Հ.Մ.Ը.Մ-ը, որ կը կրէ կեդրոնական մակդիրը զանազանուելու համար Պաղտատի Նորաշէնի մասնաճիւղէն, կը հրատարակէ տարեկան պատի օրացոյցներ՝ նկարազարդուած մասնաճիւղի գործունէութիւնն ու խումբերը ներկայացնող նկարներով: Օրացոյցներու վաճառքի հասոյթը կը ծառայէ մասնաճիւղի նիւթական կարիքներուն:

ՔԵՐՔՈՒՔ

Պաղտատի Հ.Մ.Ը.Մ-ի վերազարթման տարիներուն առընթեր 9 Ապրիլ 1960ին, կը հիմնուի Քերքուքի Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղը: Կարճ ժամանակի ընթացքին Քերքուքի Հ.Մ.Ը.Մ-ի շուրջ կը բոլորուի հայ երկսեռ երիտասարդութիւնը: Շուտով կը կազմուին պասքեթպոլի եւ վոլիպոլի խումբեր, ինչպէս նաեւ փինկ-փոնկ

եւ աթլետիզմ կիրարկող մարզիկներ: 1961ին, անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 160ի:

Քերքուքի մասնաճիւղը շուտով կ'ունենայ իր շքեղ ու արդիական մարզական ակումբը, որ եզակի յարմարութիւններ կը ստեղծէ նպաստելով մարզախաղերու յառաջդիմութեան:

1963ին, մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն է 183:

Բացի տեղական խումբերու դէմ կազմակերպուած բարեկամական մրցումներէն, Քերքուքի մասնաճիւղի մարզիկները ամէն տարի կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ-ի Պաղտատի կեդրոնական վարչութեան կազմակերպած միջ-մասնաճիւղային մարզական մրցաշարքերուն եւ փակման ընդհանուր տողանցքին - [ԶԱ.]:

ՄՈՒՍՈՒԼ

Իրաքի հայաշատ քաղաքներէն՝ Մուսուլի մէջ 25 Հոկտեմբեր 1960ին, կը հիմնուի Հ.Մ.Ը.Մ-ի Մուսուլի մասնաճիւղը: Շուտով մասնաճիւղին շուրջ կը հաւաքուին տեղւոյն հայ երկսեռ երիտասարդութիւնը, անդամներու ընդհանուր թիւը 1962ին բարձրացնելով 104ի:

Հետզհետէ Մուսուլի Հ.Մ.Ը.Մ-ը կազմած է պասքեթպոլի, վոլիպոլի, փինկ-փոնկի եւ աթլետիկներու խումբեր:

Տեղւոյն վրայ բարեկամական մրցումներու կողքին, խումբերը կը մասնակցին Մուսուլի ախոյեանութեանց մրցաշարքերուն ապահովելով պատուաբեր արդիւնքներ: Մուսուլի աթլետիկներէն ոմանք շահած են քաղաքի ախոյեանութիւններ եւ բարելաւած արաբական մրցանիշեր - [ԶԱ.]:

Հ.Մ.Ը.Մ-ի Մուսուլի մասնաճիւղը տարիներու յառաջդիմութեամբ կ'արժանանայ տեղւոյն հայ գաղութի անվերապահ գնահատանքին:

ԳԼՈՒԽ ՏԱՍԵՐՈՐԴ

ԵԳԻՊՏՈՍ

- ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ
- ԳԱՀԻՐԵ



Աղեքսանդրիոյ «Կամք»ի պասքեթպոլի տղոց խումբը, 1955ին



Աղեքսանդրիոյ «Կամք»ի պասքեթպոլի աղջկանց խումբը, 1956ին

Հ.Մ.Ը.Մ.ի Եգիպտոսի մասնաճիւղերը, ծնունդով անկախ կազմակերպութիւններ՝ չըջանային կառոյց ստեղծելու կարելիութիւնները չեն ունեցած: Այս ուղղութեամբ փորձերն ալ կարճատեւ կեանք ունեցած են եւ իւրաքանչիւր քաղաքի մէջ՝ Գահիրէ թէ Աղեքսանդրիա գործած են անջատաբար:

1946ին, Հելիոպոլսոյ Հ.Մ.Ը.Մ.ի եւ Գահիրէի Արարատի միացումով Մասնաճիւղը կը ստանայ Հ.Մ.Ը.Մ.-Արարատ անունը: Այս նպատակին կը նպաստեն Հելիոպոլիսէն՝ Հայկ Ճիգմէճեան եւ Գահիրէէն Ստեփան Ամիրայեան, Գրիգոր Նիզիպլեան, Գարեգին Շամլեան, Թորոս Խաչատուրեան եւ Վարդան Գազանճեան:

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

1940ին, Աղեքսանդրիոյ «Կամփ»ը արդէն 28 տարուայ կեանք մը ունի, արժեւորուած՝ միութենական եւ պետական մակարդակներու վրայ մարզական կարեւոր յաղթանակներով, յատկապէս աթլետիզմի ճիւղին մէջ: 1974ին «Կամփ»ը Հ.Մ.Ը.Մ.ի անունը կցեց իր անուան դառնալով «Հ.Մ.Ը.Մ.-Կամփ» համագաղութային կառոյցին ենթակայ Աղեքսանդրիոյ մասնաճիւղ:

Միջանկեալ, Աղեքսանդրիոյ «Կամփ»ը ամբողջական գործակցութեամբ հետեւած է Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան հովանաւորած աշխատանքներուն եւ ըստ կարելոյն մասնակցած է միջ-մասնաճիւղային հրապարակային ելոյթներուն, իր մարզական խումբերով եւ սկաուտներով:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

1940էն 1947ի միջեւ, Բ. Աշխարհամարտի ժամանակաշրջանին եւ դէպի հայրենիք ներգաղթի տարիներուն, «Կամփ»ի շարքերը զգալիօրէն կը նօսրանան եւ մասնաճիւղը կը գործէ համեմատաբար տկար պայմաններու տակ: Այսու-

հանդերձ, մասնաճիւղը ունի Ֆութպոլի, պասթբոլի եւ թենիսի խումբեր: Վարչական պաշտօններ կը վարէ Հրաչ Հեքիմեան: Թենիսի խումբի պատասխանատուն է Մաքսուտ Սարաֆեան: Պասթբոլի խումբերու մարզիչներ՝ Յովհաննէս Գանոնճեան եւ Հրաչ Հեքիմեան:

1948ը վերածնունդի տարի մը պիտի ըլլար, երբ Աղեքսանդրիոյ «Կամփ»ի նախագահ կը նշանակուի Մելքի Գըլըճեան: Գըլըճեան ամբողջական ճիգերով կրկին ոտքի կը հանէ մասնաճիւղի կազմակերպական, մարզական եւ մանաւանդ սկաուտական բաժինները, որոնք կը ղեկավարուին սկաուտական վերին մարմնի մը միջոցաւ:

1952ին, «Կամփ»ը կը տօնէ իր հիմնադրութեան քառասնամեակը մարզական ելոյթներով եւ հանդիսաւոր ընդհանուր տողանցքով, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն եգիպտահայ բոլոր մարզական կազմակերպութիւնները: Այս առթիւ Սուրիոյ, Լիբանանի, Պաղեստինի եւ Յորդանանի Շրջանային Վարչութիւնը կը գրէ Աղեքսանդրիոյ «Կամփ»ին. «Քաջալերուած այս երեւոյթէն Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ-Լիբանանի Շրջանային Վարչութիւնը, Յունաստանի քոյր Շրջանային Վարչութիւնէն ստացած առժամեայ Կեդրոնական Վարչութեան հանգամանքով, մամուլի միջոցաւ հրապարակ կու գայ կոչ ուղղելու, որ Եգիպտոսի մարզական միութիւնները միանան Եգիպտոսի Շրջանային Վարչութեան մը ընդհանուր հովանիին տակ բարոյա-եղբայրական կապերով միանալու համար Հ.Մ.Ը.Մ.ի մարզական մեծ ընտանիքին»:

1953ին, Ֆութպոլի խումբի ղեկավարն է Նշան Գրիգորեանը: Նոյն տարին, Լիբանանի մէջ կայացած միջ-մասնաճիւղային արտասահմանեան Դ. սկաուտական բանակումը առիթ կը հանդիսանայ որ Աղեքսանդրիոյ «Կամփ»ի եւ Սուրիոյ ու Լիբանանի Շրջանային Վարչութեան միջեւ նոր կապեր հաստատուին:

1954ին վարչութեան ատենապետի պաշտօնը կը վստահուի Աւետիս Օհանեանին: Վարչու-

Թիւնը, Գահիրէի Արարատի պասքեթպոլի եւ աթլեթներու խումբերու խառն պատուիրակութեամբ մը կը ծրագրէ Պէյրութի եւ Հալէպի մէջ մարզական ելոյթներ ունենալ եւ այս նպատակով կը գրէ Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան, ուսումնասիրելու համար առաջարկը: 1955ին, ատենադպիր՝ Վահան Գաւուքճեանի եւ վարչական՝ Գարեգին Մելքոնեանի ճիգերով «Կամք»ի շարքերուն կը վերադառնայ «Հայ Արի»ներուն միացած սկաուտական ճիւղը, կրկին վերամկրտուելով «Կամք» մարմնամարզական ակումբ եւ Հայ Հետազօտիչներու Ընկերակցութիւն»: Յաջորդող տարիները նոր յաջողութիւններու ցանկ մը կ'արձանագրեն յատկապէս պասքեթպոլի ճիւղին մէջ: Արիս Քիփէլեանի մարզիչութեամբ զօրացած խումբի անդամներէն Պերճ Թօսունեան մաս կը կազմէ Եգիպտոսի ազգային հաւաքականին, իսկ Գէորգ Դարմանեան եւ Վարուժան Քիփէլեան, Աղեքսանդրիոյ հաւաքականին: 1956ին այս զօրաւոր կազմը կը մասնակցի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան կազմակերպած 29րդ միջ-մասնաճիւղային խաղերուն Հալէպի մէջ:

1957ին, Աղեքսանդրիոյ «Կամք»ի անդամներու ընդհանուր թիւն է 426, որոնցմէ օժանդակ անդամներ՝ 110, մարզիկ եւ սկաուտ՝ 145, գայլիկ՝ 50 եւ մարզիկուհի եւ արենոյ՝ 120: Մասնաճիւղը կ'օգտագործէ իր սեփական մարզադաշտը:

1958ին նորընտիր վարչութեան անդամներն են.-

Ատենապետ՝ Գարեգին Մելքոնեան
 Փոխ ատենապետ՝ Վազգէն Եսայեան
 Ատենադպիր՝ Վահան Գավուքճեան,
 Գանձապահ՝ Նշան Գրիգորեան

Խորհրդականներ՝ Յակոբ Տէր Պետրոսեան, Բիւզանդ Մուրատեան, Մարտիրոս Շատախցեան, Նշան Պետրոսեան:

Մարզական բոլոր ճիւղերը աննախընթաց յառաջդիմութիւն կ'արձանագրեն: Հիմնադրութենէն սկսեալ ամէն տարի կազմակերպուող

աթլեթիք մրցումները կը կրկնուին յատուկ բժախնդրութեամբ: Մասնաճիւղի աթլեթներէն ոմանք կը միանան եգիպտական պատկան Ֆետերասիոնի թեքնիք բաժիններուն եւ կը մասնակցին Աղեքսանդրիոյ եւ Եգիպտոսի ախոյեանական մրցումներուն: Աթլեթիզմի ճիւղը, երկար տարիներ վարած է Կարպիս Քիփէլեանը: Եգիպտահայ աթլեթիք մրցումներուն ընթացքին մրցանիշեր հաստատած աթլեթներ են՝ Համօ Դարմանեան, Զաւէն Բրուտեան, Ալեքս Զարմանեան, Արմենակ Ասլանեան, Գէորգ Տէր Սիմոնեան, Վարդգէս Աստուածատուրեան եւ Կարօ Մոմճեան:

Ֆուտպոլը երկրորդ ճիւղն է, ուր եգիպտահայ միակ խումբը կը պահէ Աղեքսանդրիոյ «Կամք»ը: Խումբը կը մասնակցի Ֆետերասիոնի Բ. դասի ախոյեանութեան մրցաշարքին:

Պասքեթպոլը կը մնայ մասնաճիւղի մարզական գործունէութեան գլխաւոր առանցքը: Հակառակ զօրաւոր երեք մարզիկներու մեկնումին, Պերճ Թոսունեանի եւ Եդուարդ Ֆրունճեանի ճիգերով խումբը կը պահէ իր բարձրորակ մակարդակը, մասնակցութեամբ մարզիկներ՝ Անտոն Թօփուզեանի, Վարդգէս Յակոբեանի, Աբրահամ Արծրունեանի, Արմենակ Ասլանեանի եւ Ճոնի Ունճեանի: Երէցներու այս կազմի կողքին կը գործեն Բ. խումբը եւ կրտսերներու խումբը: Երեք խումբերն ալ կը մասնակցին Աղեքսանդրիոյ ախոյեանութեանց մրցաշարքերուն- [Խ. 158]:

1959ի Օգոստոսին, «Կամք» կը փոխադրուի Իպրահիմիէ թաղամասի իր սեփական մարզադաշտը աւելի նպաստաւոր դասաւորումներով:

Սակայն, 1956էն 1962 տարիներուն, Եգիպտոսի քաղաքական պայմաններու բերումով բազմաթիւ Հ.Մ.Ը.Մ.ականներ վերջնականապէս կը փոխադրուին երկրէն, ապրուստի աւելի ձեռնտու պայմաններու պրպտումով: «Կամք»ի շարքերը անհամեմատ կը տկարանան: Այս ժամանակամիջոցին վարչական պատասխանատու պաշտօններ վարած են՝ Արամ Մանուկեան, Յա-

կոբ Չիլինկիրեան, Գարեգին Մելքոնեան, Նշան Գրիգորեան, Վահան Գալուքճեան: Մարզական զանազան բաժիններու վարիչ-մարզիչներն են՝ Գրիգոր Նիզիպլեան, Պերճ Թոսունեան, Արիս Քիւփեյեան, Եղուարդ Ֆրունճեան, Ճոնի Ունճեան, Արա Կէպեչեան, Կարպիս Քիւփեյեան եւ Նշան Գրիգորեան- [ՀԸ]:

1965էն սկսեալ «Կամք»ը կը վերակազմակերպէ իր գործունէութիւնը իր շուրջ հաւաքելով հրապարակի վրայ մնացած ուժերը: Մասնաճիւղի պասքեթպոլի խումբերը իրենց թեքնիք զարգացումով իւրաքանչիւր տարի կը մասնակցին կամ կը հիւրընկալեն եգիպտահայ պասքեթպոլի մրցաշարքերը, յաճախ տիրանալով ախոյեանութեան տիտղոսներուն: Այս ժամանակաշրջանին վարչական երկարատեւ պաշտօններ վարողներէն է Վահան Գալուքճեան:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Աղեքսանդրիոյ «Կամք»ի կամ Աղեքսանդրիոյ Հայ Հետազօտիչներու Ընկերակցութեան սկաուտական գործունէութիւնը համեմատաբար աւելի մնայուն շարունակականութիւն մը կը վայելէ 1940էն 1974 ժամանակամիջոցին: Սկիզբը որպէս անջատ կազմակերպութիւն գործելով նոյն յարկին տակ, աւելի ուշ սկաուտական շարժումը կը ղեկավարուի սկաուտական վերին մարմնի մը միջոցաւ, որպէս «Կամք»ի ենթակայ բաժին: Երկու պարագաներուն ալ Աղեքսանդրիոյ սկաուտական բաժինը վայելած է գաղութի հայութեան անվերապահ գուրգուրանքը:

Հետազօտիչներու արտասահմանեան Ա. բանակումին՝ Յունաստան, կը հետեւին համաշխարհային պատերազմի տարիները: «Կամք»ի սկաուտական բաժինը չի դադրիր գործելէ եւ կը շարունակէ իր տարեկան սկաուտական ծրագիրներու գործադրութիւնը: 1944ին, ունին 35 հոգինոց սկաուտական նուազախումբ, որ ներկայ է ազգային եւ եկեղեցական ամէն ելոյթներուն:

1945ին աստիճանաւորական ցանցին մաս կը կազմեն՝ Գէորգ Պեյլէրեան, Վահան Գալուքճեան, Ա. Յոխիկեան, Եղուարդ Ղազիկեան եւ Երուանդ Պաքրճեան: 1946ին այս ցանցին կը միանան աւագ խմբապետներ՝ Աւետիս Սալլաքեան եւ Եղուարդ Պարոնիկեան:

1948ին դէպի հայրենիք ներգաղթի տարիներէն ետք, Մելքի Գրյըճեանի «Կամք»ի նախագահութեան ստանձնումը վերածնունդի առիթ մը պիտի ըլլար «Կամք»ի սկաուտական շարժումին համար: 1949ին մասնաճիւղի սկաուտութեան նախագահն է Յովսէփ Եոլսուֆեանը, ատենապետի պաշտօնը կը վարէ Լեւոն Արփատեան: Արենոյշներու շարժումը, որ դադրած էր, կրկին կեանքի կը կոչուի: Շարժումի ղեկավարութիւնը կը ստանձնեն՝ Նինա Գրյըճեան, Անահիտ Տօլապճեան եւ Ժանէթ Փափազեան:

1950ին «Կամք»ը կը վերսկսի արտասահմանեան բանակումներու շարքը իրականացնելու: Սկաուտական երկրորդ բանակումը տեղի կ'ունենայ Իտալիոյ մէջ:

1951ին արտասահմանեան Գ. բանակումը կը կայանայ Կիպրոսի մէջ:

Սկաուտական վերին մարմնի ատենապետութիւնը 1952ին կը ստանձնէ Զարեհ Դերձակեանը, ատենադպրութեամբ եւ վարիչ-առաջնորդութեամբ Կարօ Անսուրեանի: Վերջինս աշնան կը փոխարինուի Դաւիթ Աւետեանով: Արենոյշական շարքերու ընդհանուր խմբապետուհին է Սոնա Յոխիկեան, օժանդակութեամբ էլիզ Ծօլապճեանի, Ազնիւ Սապունճեանի եւ Շաքէ Պետրոսեանի:

1953ին արտասահմանեան Դ. բանակումը տեղի կ'ունենայ Լիբանանի մէջ, ընդհանուր խմբապետութեամբ Սիրուն Չայիրճեանի: Այս բանակումի յաջողութեան կը նպաստեն Լիբանանի մասնաճիւղերու սկաուտ խմբապետները: Սկաուտական վերին մարմինը երախտագիտութեան գիր մը կ'ուղղէ շրջանին: Շրջանային վարչութիւնը առիթը օգտագործելով, կը գրէ Աղեքսանդրիոյ սկաուտական վերին մարմնին,

որ իր ճիգերը միացնելով Աղեքսանդրիոյ «Կամֆ»ի եւ Գահիրէի Արարատին գործնական քայլերու դիմեն, որպէսզի իրականանայ Մերձաւոր Արեւելեան Հ.Մ.Ը.Մ.ներու մէկ դրօշի տակ կեդրոնացումը:

Արտասահմանեան Ե. բանակումը կը կայանայ Յունաստանի մէջ 1955ին: Մասնաճիւղը կը վերստանայ «Կամֆ» Մարզական Ակումբ եւ Հայ Հետազօտիչներու Ընկերակցութիւն անուանումը:

Արտասահմանեան այս բանակումներու շարքը խայծ կը հանդիսանայ որ 1957ի Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերու ընդհանուր թիւը բարձրանայ իր առաւելագոյնին: 1959ին, Սուրիոյ Քեսապ գիւղին մէջ կը կայանայ արտասահմանեան Զ. բանակումը, 24 օրերու տեւողութեամբ 6 Օգոստոսէն 29 Օգոստոս: Նոյն տարուայ Յուլիսին մասնաճիւղի սկաուտական բաժինը կը կազմակերպէ իր հիմնադրութեան Արծաթեայ Յորելեանը:

Մարզականին նման, 1960ական թուականներու սկիզբը, սկաուտական շարքերն ալ կը նօսրանան մեծաթիւ Հ.Մ.Ը.Մ.ականներու Եգիպտոսէն մեկնումին պատճառով:

ԳԱՀԻՐԷ

Հիմնադրութեան կարգով, Եգիպտոսի Հ.Մ.Ը.Մ.ի երկրորդ մասնաճիւղն է Գահիրէի «Արարատ»ը, որուն հետ կը գործէ հայ հետազօտիչներու ընկերակցութիւնը, մերթ կապուած Ֆրանսայի Հայ Արիներու կազմակերպութեան:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

1940ական թուականներուն, Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ի կիրարկած մարզական գլխաւոր ճիւղերն են պասքեթպոլը եւ աթլետիզմը տղոց եւ աղջկանց զոյգ բաժիններով:

Պասքեթպոլի խումբերը աւանդական ձեւով ամէն տարի կը մասնակցին եգիպտահայ պասքեթպոլի մրցաշարքերուն:

Աթլետիզմի բաժինն մէջ, եգիպտական մակարդակի վրայ յաջող արդիւնքներ կ'արձանագրեն Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ի մարզիկները: Ճիւղի գլխաւոր ղեկավարներէն են Գրիգոր Նիզիպլեան եւ Գարեգին Շամլեան:


9 Յունուար 1946ին, «Արարատ»ի եւ «Հայ Արիներ»ու վարչութիւնները համաձայնագրով մը վերջնականապէս կը վերամիանան Հ.Մ.Ը.Մ. «Արարատ եւ Հայ Արիներու Ընկերակցութիւն» անուան տակ: Ըստ այդ համաձայնագրին, «Հայ Արիներ»ու խորհուրդը կ'ընդունի Հ.Մ.Ը.Մ.ի վարչութեան գերակայութիւնը եւ կը վայելէ անոր նիւթական եւ բարոյական ամբողջական զօրակցութիւնը:

Նոյնպէս, 1946ին, Գահիրէի «Արարատ»ին կը միանայ Հելիոպոլսոյ Հ.Մ.Ը.Մ.ը, ենթարկուելով միեւնոյն վարչութեան տնօրինումին:

Վերոյիշեալ միացումները զգալիօրէն կը զօրացնեն Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ի հեղինակութիւնը եւ գործունէութեան դաշտը:

1950ի Յունուարին, Գահիրէի «Արարատ»ը կը հիւրընկալէ Պէյրութի Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի տղոց խումբը: Այս այցելութեան առթիւ, պատուիրակութեան կը միանար Սուրիոյ, Լիբանանի եւ Յորդանանի Շրջանային Վարչութեան ատենապետ՝ Տօքթ. Ատուր Գապաքեան: Վերջինս իր զեկուցումի ընթացքին կը տեղեկացնէ, թէ Գահիրէի «Արարատ»ը եւ Աղեքսանդրիոյ «Կամֆ»ը փափաք յայտնած են մաս կազմելու Շրջանային Վարչութեան ենթակայ կառոյցին: Նոյեմբերին այս փափաքը գործնականացնելու նպատակով Շրջանային Վարչութիւնը յատուկ նամակով հետեւեալ ձեւով կը բանաձեւէ առնուելիք քայլերը.

1- «Իւրաքանչիւր երկրի մարպական միութիւնները կ'ունենան իրենց կանոնադրութեան տրամադրութեան համաձայն ընտրուած Շրջանային Վարչութիւնը, վերին մարմինը այդ երկրի սահմաններուն մէջ գործող մասնաճիւղերուն»:



Գահիրեի Արարատի բազմամեայ վարչականներ Ուոքի՝ Մարտիրոս Քեչիշեան, Կարո Մուճեան, Գարեգին Շամլեան, Գրիգոր Նիպիպլեան, Անդրանիկ Արթինեան, Վարդգես Քիլիպեան: Նստած՝ Երուանդ Թումայեանց, Վարուժան Գապանճեան, Կարպիս Ֆրունճեան, Վրէժ Քէօհնեյեան, Կարպիս Ալահվերտեան

2- «Շրջանային վարչությունները բարոյական կապերով կապուած եւ ենթակայ կ'ըլլան Մերձաւոր Արեւելեան երկիրներու Կեդրոնական վարչութեան եւ անկէ կը ստանան ընդհանուր ուղղութիւնը միութենական գործունէութեան»:

1951ի Դեկտեմբերին «Արարատ»ի վարչութիւնը կը յայտնէ թէ կ'աշխատին նախատեսուած ծրագիրը իրականացնել եւ թէ կը յուսան Եգիպտոսի համար շուտով ունենալ Շրջանային վարչութիւն մը, Հ.Մ.Ը.Մ. անունը կրող բոլոր կազմակերպութիւններու մասնակցութեամբ:

Այս թուականին վարչութեան ատենապետն է Մ. Տէր Սարգիսեան, իսկ ատենադպիրը՝ Յարութիւն Շըքլանեան:



Գահիրեի «Արարատ»ի աղջկանց պաքեթպոլի խումբը 1955ին

Պասքեթպոլը, տղոց եւ աղջկանց բաժիններով, մասնաճիւղի մարզական գործունէութեան գլխաւոր առանցքը կը կազմէ: Կարեւոր ուշադրութեան արժանի է նաեւ աթլետիզմը:

1954ին, մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան քառասնամեակը:

1955ին, վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէ Լ. Կիւզելիմեանը, իսկ ատենադպիրն է Գ. Թիւֆենքճեանը: 1955ին, պասքեթպոլի խումբերը կը մասնակցին Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան կազմակերպած 28րդ միջ-մասնաճիւղային խաղերուն:

1956ին, մասնաճիւղի դիւանին մաս կը կազմեն.-

- Ատենապետ՝ Վարուժան Մինասեան
- Ատենադպիր՝ Ա. Համբարձումեան
- Գանձապահ՝ Գարեգին Շամլեան:

Մասնաճիւղի մարզական ճիւղերու ընդհանուր պատասխանատուն է Գրիգոր Նիզիպլեանը: Տղոց առաջին խումբը մաս կը կազմէ Եգիպտոսի Ա. դասի խումբերուն եւ եղանակի ախոյեանական մրցաշարքի մրցումները մեծամասնութեամբ յաղթանակներով կ'աւարտէ:

1956ին, «Կամք»ի եւ «Արարատ»ի մասնակցութեամբ, Եգիպտոսը կ'ունենայ իր Շրջանային Վարչութիւնը, ատենապետութեամբ՝ Լեւոն Յովհաննէսեանի: Մասնաճիւղի տղոց եւ աղջկանց պասքեթպոլի խումբերը կը մասնակցին Սուրիոյ, Լիբանանի եւ Յորդանանի Շրջանային Վարչութեան կազմակերպած 29րդ միջ-մասնաճիւղային Զատկական խաղերուն, Հալէպի մէջ:

26 եւ 27 Ապրիլ 1958ին, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան քառասնամեակին առթիւ, Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ը կը կազմակերպէ եգիպտահայ 12րդ աթլետիք մրցումները, հովանաւորութեամբ Եգիպտոսի Առաջնորդ Մամբրէ Արք. Սիրունեանի եւ նախագահութեամբ, Եգիպտոսի աթլետիզմի ֆետերասիոնի նախագահ Միրալայ Ապպաս Ղամրաուիի:

Խաղերը տեղի կ'ունենան «Նասիոնալ»ի դաշտին վրայ, մասնակցութեամբ՝ Աղեքսանդրիոյ «Կամք»ին եւ Հ.Մ.Ը.Մ.ին, Գահիրէի

Հ.Մ.Ը.Մ. «Նուպար»ին, «Նիր Իսթ»ին եւ Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ին: Երկու սեռի 110 մարզիկներ կը ճակատին այս մրցումներուն վազքերու, ոստումներու եւ արձակումներու բաժիններով:

Խաղերը կը փակուին «Յուսաբեր»ի դալար տանիքին վրայ կազմակերպուած ընտանեկան խրախճանքով:

1961ին, մասնաճիւղի վարչութեան անդամներն են.-

- Ատենապետ՝ Կարպիս Յրունճեան
- Փոխ ատենապետ՝ Վարդան Գազանճեան
- Քարտուղար՝ Գրիգոր Նիզիպլեան
- Փոխ քարտուղար՝ Վարդգէս Քիւփելեան
- Գանձապահ՝ Գարեգին Շամլեան
- Հաշուապահ՝ Վրէժ Քէօհնելեան
- Գոյքապահ՝ Կ. Ալահվերտեան

Սկաուտական ընդհանուր պետ՝ Անդրանիկ Արթինեան
Մարզիչ՝ Կարօ Մոմճեան



Գահիրէի Արարատի պասքեթպոլի խումբը 1965ին: Նստած՝ Ալեքս Գալուստեան, Վաղարշակ Պուտաքեան,, Առաքել Ոսկերիչեան, Հրայր Պենկեան: Ոտքի՝ Լեւոն Պենկեան, Անդրանիկ Միրպալեան, Ժերոմ Լաչինեան, Վարուժան Չեչեան, Մարպիչ՝ Միհրան Չերտեյեան, խումբի պատասխանատու՝ Բաֆֆի Թիւֆէնքճեան, իմբապետ՝ Արմանտօ Տերհաստեան, Սարգիս Արթինեան, Փասքալ Կիւպէլ:

Խորհրդական՝ Երուանդ Թումայանց:

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան քառասնամեակին նուիրուած 14րդ ախոյեանական մրցումները տեղի կ'ունենան բացառիկ շուքով եւ ճոխ յայտագրով: Արդարեւ 13 եւ 14 Մայիս 1961ին կայացած այս աթլետիք մրցումներուն կը մասնակցին Աղեքսանդրիոյ «Կամք»ի, Գահիրէի «Նիրիսթ»ի, Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ի եկսեռ խումբերը, Սուրիոյ Հ.Մ.Ը.Մ.ի տղոց հաւաքականը եւ Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի տղոց հաւաքականը:

Բազմաթիւ եգիպտահայ, Լիբանանի եւ Սուրիոյ Հ.Մ.Ը.Մ.ներու նոր մրցանիշեր կը հաստատուին այս խաղերու ընթացքին: Մրցումներու ընդհանուր ախոյեանութեան կ'արժանանան երէցներէն՝ Վարուժան Զուրիկեան, կրտսերներէն՝ Նուպար Ղազարոսեան, իսկ աղջկանց բաժինէն՝ Անահիտ Սարգիսեան: Խաղերու հովանաւորութիւնը կը ստանձնէ Աւետիս Չազըճեան՝ պատուակալ նախագահ Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ին: Իսկ նախագահութիւնը կը վստահուի Արաբ Միացեալ Հանրապետութեան աթլետիք միջոցաւ Ֆետերասիոնի նախագահ Միրալայ Ապպաս Ղամրաուիի:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹԻՒՆ

Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ի սկսածական բաժինը իր հիմնադրութենէն սկսեալ ծանօթ էր Հայ Հետազօտիչներ անուանով: 1940ական թուականներուն այս բաժինը կը կապուի Փարիզի «Հայ Արիներ»ու կազմակերպութեան եւ կը կոչուի Հայ Արիներու Ընկերակցութիւն, գործելով Փարիզի կեդրոնի հիմնական ծրագիրներու համաձայն: Սակայն այս գործակցութիւնը պիտի տեւէր տասնամեակ մը միայն: 1957ին, «Հայ Արի»ներու ընկերակցութիւնը կը վերամիանայ Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ին: Կազմակերպութեան ատենապետ՝ Վարուժան Մինասեան, շրջանային

պետեր՝ Անդրանիկ Արթինեան եւ Հայկ Պէլլէրեան այս վերամիացման ակնարկելով կը յայտարարեն. «Հոն ուր Հ.Մ.Ը.Մ. կանոնաւոր եւ աշակուղջ հսկած է իր սկսածական բաժինն վրայ, յաջողած է աւելի լաւ քան այն շրջաններուն, երբ սկսածական բաժինը անտեսուած է»: «Նկատի ունենալով Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ի վարիչներուն անկեղծութիւնը եւ այն իրողութիւնը, որ երկու երիտասարդական շարժումները զիրար կը լրացնեն, որոշեցինք այս երկուքը միացնել եւ հրապարակ գալ մէկ ընդհանուր կազմակերպութեան անունով» - [ԾԲ/15.7]:

1958ին, Հ.Մ.Ը.Մ. «Արարատ» եւ «Հայ Արիներու Ընկերակցութիւն»ը միասնաբար կը կազմակերպեն Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան քառասնամեակի հանդիսութիւններ 26 եւ 27 Ապրիլին «Նասիոնալ»ի մարզադաշտին վրայ:

Զոյգ կազմակերպութիւններու գործակցութիւնը կը նուիրականանայ 9 Յունուար 1961ին կայացած խառն ժողովով մը, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»էն՝ Կ. Յուրնճեան, Վ. Գազանճեան, Ե. Թումայանց եւ Գրիգոր Նիզիպլեան, իսկ «Հայ Արիներու Ընկերակցութեան» կողմէ՝ Անդրանիկ Արթինեան, Մ. Քէշիշեան եւ Մ. Թիւթիւնճեան: Այս ժողովէն կը բխի համաձայնագիր մը, որով կը ճշդուին Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ի վարչութեան եւ «Հայ Արիներու Ընկերակցութեան» եւ Սկսածական Խորհուրդի կանոնադրային կապերը իւրաքանչիւրի կազմին մէջ փոխադարձ ներկայացուցիչի մը մասնակցութեամբ:

Այս ձեւով Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ի սկսածական բաժինը կը զարգացնէ իր զուտ սկսածական եւ ազգային գործունէութիւնը, նորանոր յաջողութիւններ արձանագրելով:

1960ական տարիներուն Սկսածական Խորհուրդի մէջ ծառայած են. Անդրանիկ Արթինեան, Մ. Թիւթիւնճեան, Վ. Մալխասեան, Նշանեան, Քէշիշեան, Սերոբեան, Գալեմճեան եւ ուրիշներ:


ԳԼՈՒԽ ՏԱՄՆԸՄԷԿԵՐՈՐԴ

ԳԱՆԱՏԱ

- ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ
- ՄՈՆԹՐԷԱԼ
- ՀԱՄԻԼԹԸՆ
- ԹՈՐՈՆԹՕ



Մոնթրեալի Հ.Մ.Ը.Մ.ի Արմենիա ֆուլթալի խումբը Քեպեք նահանգի 1959ի ախոյեան



ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Գանատահայ մարզական շարժումի արձագանքը մեզի կը հասնի 1950-ական թուականներէն սկսեալ, երբ գաղութը հազիւ 400 հայ ընտանիք կը հաշուէր: Շարժումը կարեւորութիւն կը ստանայ Գանատահայ հաստատուող նորեկ հայերու մասնակցութեամբ, որոնք կը նախաձեռնեն ազգային կառոյցներու կազմութեան:

Հայերը կու գային գլխաւորաբար Մերձաւոր Արեւելքի երկիրներէն Եգիպտոսէն եւ Յունաստանէն, հետզհետէ հայահոծ գաղութներ կազմելու համար զանազան քաղաքներու մէջ: Այսպէս է որ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր պիտի կազմուէին, ժամանակագրական շարքով, հետեւեալ քաղաքներուն մէջ.

- Մոնթրէալ՝ 1957ին
- Համիլթըն՝ 1968ին
- Թորոնթօ՝ 1969ին
- Գամպրիճ՝ 1979ին
- Սենթ Գաթրինզ՝ 1986ին:

Ներկայ հատորի բաժնին մէջ կ'իյնան առաջին երեք մասնաճիւղերը, իրենց կազմակերպչական, մարզական եւ սկաուտական գործունէութիւններով:

30 Յունիս 1973ին, հրաւերովը Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան լիազօր ներկայացուցիչ Լուտեր Մասպանաճեանի, Գանատայի երեք մասնաճիւղերու մասնակցութեամբ Թորոնթօյի մէջ տեղի ունեցաւ, խորհրդակցական ժողով մը: Ժողովին մասնակցեցան՝ Մոնթրէալէն՝ Վարուժան Սերոբեան, Գրիգոր Գոլյոմճեան, Յակոբ Թորոսեան, Տիգրան Մելքոնեան եւ Տոքթ. Վիգէն Մասերեճեան, Համիլթընէն՝ Արամ Էրջանեան, Պօղոս Սէֆերեան, Պերճ Թուրուճիկեան, իսկ Թորոնթօյէն՝ Ժիլպէր Թարգի, Ատրուշան Պոյաճեան, Ժան Արթինեան, Երուանդ Շահինեան եւ Մարի Մարտիրոսեան: Այս ժողովի օրակարգերուն ընդհանուր նպատակն էր համադրել միջ-մասնաճիւղային կազմակերպչական, մարզական եւ սկաուտական

գործունէութիւնները, ապագային հող պատրաստելու համար Գանատայի Շրջանային Վարչութեան մը կազմութեան:

1974ին կազմուեցաւ Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջանը, կեդրոն ունենալով Մոնթրէալ քաղաքը: Այս Շրջանի գործունէութիւնը պիտի տեւէր երեք տարի:

1977ի գարնան, զոյգ շրջաններու բաժանումով կը կազմուի Գանատայի Շրջանը եւ կ'ընտրուի Գանատայի Շրջանային Վարչութիւն:

ՄՈՆԹՐԷԱԼ

Գանատայի շրջանի անդրանիկ մասնաճիւղն է Մոնթրէալի մասնաճիւղը, որ իր կառուցային ուժով եւ լայնատարած գործունէութեամբ, ժամանակի ընթացքին զօրանալով հանդիսացած է Հիւսիսային Ամերիկայի կարեւորագոյն մասնաճիւղերէն մին:

ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

1958ի Մարտ 8ին, գլխաւորութեամբ Պետրոս Գաբրիէլեանի, Վարուժան Պոյաճեան, Գէորգ Սեւակեան եւ Վահագն Սավուլեան կը դիմեն Հ.Յ.Դ. Միհրան Փափագեան կոմիտէութեան հերթապահ Լեւոն Տէր Ասատուրեանին եւ կը յայտնեն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը հիմնելու իրենց ծրագիրը:

Այս դիմումը դրական ընթացք ստանալով, մասնաճիւղի հիմնադիր վերոյիշեալ անդամները անմիջապէս կը ձեռնարկեն ֆութպոլի խումբի մը կազմութեան: Ֆութպոլի խումբի կազմութիւնը առաջին քայլը պիտի հանդիսանար մասնաճիւղի մարզական գործունէութեան: Խումբը տեղական շրջանակներուն կը ներկայանայ ԱՐՄԷՆԻԱ անունով:

Հ.Մ.Ը.Մ.ի ԱՐՄԷՆԻԱ խումբի յաջողութիւնները շատ արագ ընթացք ստացան եւ մասնաճիւղին շուրջ բոլորուեցաւ հաւատաւոր եւ մարզասէր երիտասարդներու խումբ մը: Ֆութ-

պոլի խումբի փորձերը կը կատարուէին PARK AVENUE-ի քաղաքապետարանի դաշտերուն վրայ:

1959ին, ST. ZOTIQUE թաղի Սբ. Յակոբ եկեղեցւոյ նեքնամասին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի խումբին կը տրամադրուի մթերանոցէն խուց մը իբր նստավայր եւ այս ձեւով Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը հաստատուն հանգամանք կը ստանայ: Այնուհետեւ, մարզական եւ սկաուտական զոյգ ճիւղերու գործունէութեամբ, ինչպէս նաեւ ազգային եւ պետական ելոյթներու իրենց մասնակցութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթրէալի մասնաճիւղը յաջող հնգամեակ մը կը բոլորէ եւ յաջորդող տարիներուն հետզհետէ հաստատուելով Մոնթրէալի հայ գաղութի կարեւորագոյն գործօններէն մին կը հանդիսանայ:

Հիմնադրութեան օրերէն սկսեալ նախաձեռնող վարչութեան նպատակը եղաւ կապ պահել Մերձաւոր Արեւելքի Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային վարչութեան հետ, սակայն այս նախաձեռնութիւնը կ'ուշանար որովհետեւ յաջորդական վարչութիւններու առաջնահերթ մտահոգութիւնն էր հաստատ հիմներու վրայ դնել Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը: Մինչ այդ մասնաճիւղը կը գործէր Հ.Մ.Ը.Մ.ի ծրագիր կանոնագրի ոգով եւ գործելակերպով:

Այդ ժամանակամիջոցէն մինչեւ 1964ի Նոյեմբեր ամիսը, իրերայաջող վարչական կազմերուն մէջ իրենց կարեւոր ներդրումը ունեցած են հետեւեալ անդամները. Հրայր Արչակունի, Պետրոս Գաբրիէլեան, Պատուական Գասարճեան, Յակոբ Գասարճեան, Բարիլուր Թոսճեան, Մկրտիչ Թորոսեան, Մանուէլ Մարտիրոսեան, Սերգօ Յովհաննէսեան, Արմէն Ուլուսեան, Վահագն Սավուլեան, Գուրգէն Սարգիսեան, Գէորգ Սեւակեան, Տիգրան Սեւակեան, Մանուկ Տէմիրճեան, Յարութիւն Տէրտէրեան, եւ Գաբրիէլ Գիւսէեան:

1962ին, մասնաճիւղը կը շարունակէ իր ընթացիկ գործունէութիւնը եւ կը յաջողի ֆութպոլի կողքին աւելցնել պասքէթպոլի եւ աթլէթիզմի ճիւղերը, վերջինս իր երկու սեռերու բաժիններով:

1963 տարեշրջանի վարչական կազմը իր գործունէութեան ժամանակաշրջանէն առաջ հրատարած ըլլալով, մասնաճիւղի բացառիկ անդամական ընդհանուր ժողովը կը գումարուի 19 Նոյեմբեր 1964ին ուր վարչական անդամներ կ'ընտրուին հետեւեալները. -

Ատենապետ՝ Գրիգոր Նիզիպլեան
Փոխ ատենապետ՝ Գէորգ Սեւակեան
Ատենադպիր՝ Յակոբ Գասարճեան
Գանձապահ՝ Յարութիւն Տէրտէրեան
Հաշուապահ՝ Վարուժան Սերոբեան
Գոյքապահ՝ Վահրամ Դանիէլեան
Խորհրդական՝ Սերգօ Յովսէփեան
Սկաուտական պատասխանատու՝ Հայկ Պէյլեբեան:

Այս տարեշրջանին անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 170ի, որոնց 60ը սկաուտական շարքերէն:

1965 տարին անկիւնադարձային նշանակութիւն պիտի ունենար Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին համար: Արդարեւ, այս տարեշրջանին է, որ վարչութիւնը պիտի դիմէր Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային վարչութեան մաս կազմելու համար անոր ցանցին ենթակայ մասնաճիւղերուն: Այս ձեւով պիտի իրականանար սկիզբէն ի վեր Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.ի ղեկավարներու հիմնական ծրագիրը: Այսպէս, 3 Մայիս 1965 թուակիր իր գրութեամբ Մոնթրէալի վարչութիւնը կը դիմէ Մերձաւոր Արեւելքի Շրջանային վարչութեան խնդրելով, որ Մոնթրէալը ճանչցուի Սփիւռքի հայ մարզական մեծագոյն կազմակերպութեան իբրեւ լիրաւ անդամ: Այս գրութիւնը կը ստորագրեն գործող վարչութեան բոլոր անդամները:

Վերոյիշեալ դիմումին դրական պատասխանը չ'ուշանար եւ 11 Մայիս 1965 թուակիր իր թիւ 22 նամակով, Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային վարչութիւնը կը շնորհաւորէ Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.ի կազմութիւնն ու տարած գործունէութիւնը եւ կը վաւերացնէ գործող վարչական կազմը - [ԽԸ/15.6.1965]:

Միւս կողմէ, 1965ի սկզբնաւորութեան մաս-

նաճիւղի անդամակցութիւնէն անջատուելով եւ նոյն վայրը իբր կեդրոն ունենալով, Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքի ԿԱՄՔ մարզական միութեան նախկին անդամներ կը կազմեն նոյնանուն մարզական միութիւն մը, իրենց գործունէութեան գլխաւոր առանցք ունենալով պասքեթպոլի ճիւղը: ԿԱՄՔի պասքեթպոլի խումբը եւս կ'ունենայ յաջող գործունէութիւն եւ իր շուրջ կը հաւաքէ երիտասարդ եւ խոստմնալից ատլետներու կարեւոր թիւ մը:

Սակայն Հ.Մ.Ը.Մ.ի եւ ԿԱՄՔի նոյն վայրին մէջ գործելու պարագան ժխտական հետեւանք պիտի ունենար՝ գաղափարակից զոյգ կազմակերպութիւններու անդամներուն միջեւ բախումներ ստեղծելով:

Այս դրութիւնը մտահոգիչ սահմաններու հասնելուն պատճառով, Միհրան Փափագեան Կոմիտէութեան միջնորդութեամբ, օրուայ զոյգ միութիւններու ղեկավարները համախոհութիւնը ունեցան ծրագրելու եւ իրականացնելու զոյգ կազմակերպութիւններու միացումը « Հ.Մ.Ը.Մ.-ԿԱՄՔ » անունով միեւնոյն կազմակերպութեան մէջ, որդեգրելով Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր ծրագիր կանոնագիրը:

Այս միացման նախաձեռնողներէն կազմուեցաւ նշանակեալ վարչութիւն մը, իւրաքանչիւր կազմակերպութիւնէն չորսական անդամներու մասնակցութեամբ եւ սկաուտական խորհուրդի մէկ ներկայացուցիչով: Այս առժամեայ վարչութեան դիւանը կազմուեցաւ 27 Յունիս 1966ի անդրանիկ նիստի ընթացքին, հետեւեալ ձեւով.

- Ատենապետ՝ Բիւզանդ Մելքոնեան
- Ատենադպիր՝ Վարուժան Սերոբեան
- Գանձապահ՝ Վարդգէս Յակոբեան
- Հաշուապահ եւ սկաուտական խորհուրդի ներկայացուցիչ՝ Հայկ Պէյլերեան
- Գոյքապահ՝ Վարուժան Զուրիկեան
- Մարզական պատասխանատու՝ Գրիգոր Նիզիպլեան
- Խորհրդականներ՝ Արմէն Կէօնճեան, Վահագն Սափուլեան

Ֆուտպոլի պատասխանատու՝ Գէորգ Սեւակեան:

Այս նոյն նիստի ընթացքին որոշուեցաւ զոյգ կազմակերպութիւններու սնտուկներու պատրաստ գումարները միացնել: Հ.Մ.Ը.Մ.ը տրամադրեց 1433 Գանատական Տոլար, յանձնուելու համար վարչութեան գանձապահին: Կը միացուին նաեւ երկու միութեանց գոյքերը: Հետագային նոր անդամատետրեր պիտի յանձնուին Հ.Մ.Ը.Մ.-ԿԱՄՔի անդամներուն:

Վարչութիւնը կը կազմէ նաեւ եռամեայ գործունէութեան նախագիծ մը՝ դաշտագնացութիւն, մարզական օր եւ պարահանդէս:

Անդամներու արձանագրութեան արշաւը բաց կը մնայ եւ վարչութիւնը կը հետաքրքրուի օտար վարժարաններ յաճախող հայ աշակերտներու կացութեամբ: Այս ուղղութեամբ, տասնըհինգէն վար տարիքով անդամներուն կը պարտադրուի մաս կազմել սկաուտական շարքերուն:

Վերոյիշեալ հիմնական համաձայնագրի մանրամասնութիւնները պարզող 29 Յունիս 1966 թուակիր իր նամակով, Հ.Մ.Ը.Մ.-ԿԱՄՔի վարչութիւնը կը դիմէ Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան՝ Պէյրութ, խնդրելով վարչական կազմի վաւերացում: 12 Յունիս 1966ին, Շրջանային Վարչութիւնը կը վաւերացնէ փոխանցման շրջանի վարչական կազմը: Նոյնպէս զոյգ կազմակերպութիւններու միացման մասին Մոնթրէալի հայութեան կը յղուի 26 Յունիս 1966 թուակիր հետեւեալ յայտարարութիւնը.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

« Հ.Մ.Ը.Մ. - Մոնթրէալ -
Հ.Մ.Ը.Մ.-Մոնթրէալի մասնաճիւղը իր 13 Յունիս 1966-ի Անդամական ընդհանուր ժողովին, վաւերացուց Հ.Մ.Ը.Մ. եւ Կամք մարզական միութիւններու միացումը լսելի յետոյ վարչութեանս պեկոյցը եւ Հ.Մ.Ը.Մ.-Կամք միութեան փոխանցման

վարչութեան համար Հ.Մ.Ը.Մ.ի կողմէ անդամներ ընտրեց,- Եղբայրներ, Գ. Նիպիպլեան, Վ. Սերոբեան, Վ. Սավուլեան, Գ. Սեւակեան, եւ Հ.Մ.Ը.Մ. Սկաուտական խորհուրդի կողմէ Եղբայր Հ. Պէյլէրեան»

Հ.Մ.Ը.Մ. Վարչութիւն - Մոնթրէալ

«Կամք - Մ.Ա.Հ.Հ. Ընկ. - Մոնթրէալ -

Կամք իր Յունիս 20, 1966 Գ. Ընդհանուր ժողովին լսելէ վերջ վարչութեանս Ատենապետի պեկոյցը Հ.Մ.Ը.Մ. եւ Կամք մարպական միութեանց միացման հարցին ուղութեամբ, վաւերացուց միացումը եւ ընտրեց Հ.Մ.Ը.Մ. - Կամք միութեան փոխացման վարչութեան համար չորս անդամներ, Պարոններ Վ. Չուրիկեան, Ա.Կ. Կէոնճեան, Բ. Մելքոնեան եւ Վ. Յակոբեան»:

Կամք Վարչութիւն - Մոնթրէալ

Հ.Մ.Ը.Մ.- Կամք - Մոնթրէալ -

Փոխանցման Շրջանի Վարչութիւնս գումարելով իր առաջին ժողովը, կու գայ յայտարարել Մոնթրէալի հայ գաղութին որ յետ այսու Հ.Մ.Ը.Մ. եւ Կամք Մոնթրէալի մարպական միութիւնները միաձուլուած են մէկ անուան տակ « Հ.Մ.Ը.Մ.- Կամք, Մոնթրէալ» նկատի ունենալով սփիւռքահայ երիտասարդ սերունդին ապգային ու մարպական կրթութիւնը, եւ բարգաւաճ Գանատահայ կեանք մը, ստեղծելու համար:

Ի Դիմաց Հ.Մ.Ը.Մ.-Կամքի

- Վարուժան Չուրիկեան
- Արմէն Կէոնճեան
- Բիւզանդ Մելքոնեան
- Վարդգէս Յակոբեան
- Գրիգոր Նիպիպլեան
- Հայկ Պէյլէրեան
- Վահագն Սավուլեան
- Վարուժան Սերոբեան
- Գէորգ Սեւակեան

Մոնթրէալ, 26 Յունիս 1966

Հ.Մ.Ը.Մ.ի եւ ԿԱՄՔի միացումէն ետք, 1 Յունիս 1966 - Փետրուար 1967 ժամանակաշրջանի նիւթական գործառնութեան ընդհանուր գումարը աւելի քան կը կրկնապատկուի կիսամեայ գործունէութեան մը ընթացքին: Անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 116ի, որուն վրայ կ'աւելնան սկաուտական շարքերու 60 անդամները:

1966ին մասնաճիւղը կը հրաւիրուի մասնակցելու Սբ. Յակոբ Եկեղեցւոյ եւ վարժարանին կից մարզարանի մը կառուցման աշխատանքին, նիւթապէս օժանդակելով անոր իրականացման: Այս նպատակով համաձայնութիւն կը գոյանայ եկեղեցւոյ հոգաբարձութեան Հ.Մ.Ը.Մ.-ԿԱՄՔի միջեւ: Օժանդակութեան ընդհանուր գումար կ'որոշուի՝ 50000 Գանատական Ծովար, որուն հինգ հազարը կանխիկ վճարելի իսկ մնացեալը քսան տարուայ ժամանակաշրջանի մը վրայ երկարող մասնավճարներով: Մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովն ալ կը վաւերացնէ նոյն համաձայնութիւնը, պարտք դնելով յաջորդ վարչութիւններուն վրայ համաձայնութեան լրիւ յարգանքը: Սակայն, կեդրոնի շինարարական ծրագրի առաջին հանգրուանին մաս կազմող այս բաժինը չիրականանար: Մարզասրահի շինութիւնը հետագային մաս պիտի կազմէր շինարարական ծրագրի երկրորդ հանգրուանին:

20-28 Փետրուար 1967ին, Պէյրութի մէջ տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի 17րդ. Պատգամաւորական ժողովը, ուր մասնաճիւղի անդամներէն Սարգիս Թապագեան Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.-ԿԱՄՔը կը ներկայացնէ:

2 Ապրիլ 1967ին, Հ.Մ.Ը.Մ.-ԿԱՄՔի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր տարեշրջանի վարչութիւն, որուն անդամներն են.-
Ատենապետ՝ Բիւզանդ Մելքոնեան
Ատենադպիր՝ Վարուժան Սերոբեան
Գանձապահ՝ Վարդգէս Յակոբեան
Հաշուապահ՝ Նշան Մելքոնեան
Գոյքապահ՝ Յակոբ Թորոսեան
Մարզական պատասխանատու՝ Վարուժան Չուրիկեան

Սկսած սկսած խորհուրդի ներկայացուցիչ՝
Կարպիս Գալեմճեան

Խորհրդականներ՝ Գէորգ Սեւակեան, Յարուսթիւն Տէրտէրեան:

Վերջինս աշխատանքներուն չկրնար մասնակցիլ բանաւոր պատճառներով:

30 Յունուար 1968ին, Հ.Մ.Ը.Մ.-ԿԱՄՔի մասնաճիւղը կը ստանայ քաղաքապետական վաւերացում: Անդամներու ընդհանուր թիւն է 215, հետեւեալ բաժանումով.

Սկսած սկսած շարքեր՝ 72, մարզիկներ՝ 65, օժանդակ անդամներ՝ 78:

Վարչութիւնը մարզիկներու յատուկ կանոնադրութեամբ մը կ'օժտէ մասնաճիւղը: Կ'որդեգրուի նաեւ Հ.Մ.Ը.Մ.-ԿԱՄՔ յիշատակութեամբ մասնաճիւղի վահանի յատուկ ձեւը, գծագրութիւն՝ Աշոտ Սերոբեանի:

31 Մարտ 1968ին, անդամական ընդհանուր ժողովի կողմէ ընտրուած վարչութիւնը աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Բիւզանդ Մելքոնեան
- Փոխ ատենապետ՝ Գէորգ Սեւակեան
- Ատենադպիր՝ Վարուժան Սերոբեան
- Գանձապահ՝ Գէորգ Զատոյեան
- Հաշուապահ՝ Նշան Մելքոնեան
- Բ. Հաշուապահ՝ Յակոբ Սեւակեան
- Գոյքապահ՝ Յակոբ Թորոսեան

Մարզական պատասխանատու՝ Վարուժան Զուրիկեան

Սկսած սկսած խորհուրդի ներկայացուցիչ՝ Կարպիս Գալեմճեան: Սեպտեմբերին, Յակոբ Սեւակեանին կը փոխարինէ Յակոբ Գասարճեանը իբրեւ խորհրդական:

Վերոյիշեալ պաշտօններու կողքին, վարչական անդամները վերցուցած են նաեւ իրենց յատուկ ճիւղերու մարզիչի պարտականութիւններ: Մարզական բոլոր ճիւղերը եւ սկսած սկսած շարքերը զգալի յառաջդիմութիւն կ'արձանագրեն: Մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւը կը հասնի 225ի:

Վարչութիւնը իր օրինական կապը կը պահէ Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան հետ, ինչպէս նաեւ սիրալիր կապեր կը հաստատէ Հ.Ե.Դ. Լեւոն Շանթ ուխտի, Սբ. Յակոբ Եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ այլ քոյր կազմակերպութիւններու հետ: Օգոստոսին, մասնաճիւղը կ'ընդունի Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ Յովհաննէս Շահինեանի այցելութիւնը:

1969, Մարտ 23ի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութիւնը, 1 Ապրիլին կ'ընտրէ իր դիւանը հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Վարուժան Սերոբեան
- Բ. ատենապետ՝ Գէորգ Սեւակեան
- Ատենադպիր՝ Սարգիս Յովսէփեան
- Գանձապահ՝ Նշան Մելքոնեան
- Հաշուապահ՝ Գէորգ Զատոյեան
- Գոյքապահ՝ Զարեհ Էքմեքճեան
- Մարզական պատասխանատու՝ Վարուժան Զուրիկեան

Սկսած սկսած խորհուրդի ներկայացուցիչ՝ Տոքթ. Վիգէն Մասերեճեան

Խորհրդական՝ Վարդգէս Բաբախեան:

Տարուայ ընթացքին, մեկնումներու պատճառով, Զարեհ Էքմեքճեանն ու Սարգիս Յովսէփեանը փոխարինուեցան՝ Հրաչ Տէր Սարգիսեանով եւ Լեւոն Պենկեանով:

Նախորդող տարիներու աւանդական ձեռնարկները՝ դաշտագնացութիւն, մարզական խաղեր, պարահանդէս, ազգային եւ պետական տօնակատարութեանց մասնակցութիւն նոյն ջանքերով կանոնադրութեամբ եւ յաւելեալ արդիւնաբերութեամբ կը կրկնուին: Այս տարեշրջանի նորութիւնը պիտի ըլլար 1970ի սկիզբը կայացած միջ-մասնաճիւղային պասքեթպոլի մրցաշարքի կազմակերպումը:

19 Ապրիլ 1970ին ընտրուած վարչութեան կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Գէորգ Սեւակեան
- Փոխ ատենապետ՝ Աւետիս Պալապանեան
- Ատենադպիր՝ Լեւոն Պենկեան
- Փոխ ատենադպիր՝ Տիգրան Մելքոնեան

Գանձապահ՝ Նշան Մելքոնեան
Հաշուապահ՝ Գէորգ Զատոյեան
Գոյքապահ՝ Վարդգէս Բաբախեան
Խորհրդական՝ Արա Կեպեչեան
Սկառուտական խորհուրդի ներկայացուցիչ՝
Տոքթ. Վիգէն Մասերեճեան:

Մասնաճիւղի վարչութեան ներկայացուցիչ՝
Սարգիս Յովսէփեան եւ պատգամաւոր Վարուժան Սերոբեան 9 եւ 10 Յունուար 1971ին, կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի 19րդ Պատգամաւորական ժողովին: Մասնաճիւղի կողմէ բերուած առաջարկներու շարքին է Հ.Մ.Ը.Մ.ը կեդրոնական կառոյցով օժտելու ծրագիրը:

1971 տարուան վարչութեան կազմն է հետեւեալը.-

Ատենապետ՝ Վարուժան Սերոբեան
Փոխ ատենապետ՝ Աւետիս Պալապանեան
Ատենադպիր՝ Յակոբ Արեւեան
Գանձապահ՝ Տիգրան Մելքոնեան
Հաշուապահ՝ Նշան Մելքոնեան

Սկառուտական խորհուրդի ներկայացուցիչներ՝ Աւետիս Ապրաքեան, Արամ Նշանեան

Խորհրդականներ՝ Վարուժան Զուրիկեան, Արա Կէպեչեան, Յակոբ Թորոսեան:

7 Մայիս 1972ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը լսելէ ետք 1971-72 տարեշրջանի վարչութեան նիւթաբարոյական գործունէութեան տեղեկագիրը, կ'ընտրէ Հ.Մ.Ը.Մ.-ԿԱՄՔի 1972 տարուան վարչութիւն հետեւեալ կազմով.-

Ատենապետ՝ Վարուժան Սերոբեան
Փոխ ատենապետ՝ Գէորգ Սեւակեան
Ատենադպիր՝ Տիգրան Մելքոնեան
Գանձապահ՝ Նշան Մելքոնեան
Հաշուապահ՝ Արթօ Գապասաքալեան
Գոյքապահ՝ Յակոբ Թորոսեան

Պասքեթպոլի ներկայացուցիչ՝ Գրիգոր Գոլյումճեան

Աթլետիզմի պատասխանատու՝ Վարուժան Զուրիկեան

Սկառուտական Խորհուրդի ներկայացուցիչ՝ Արամ Նշանեան:

Այս տարեշրջանի գլխաւոր իրականացումը հանդիսացաւ Հ.Մ.Ը.Մ.-ԿԱՄՔի մասնակցութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի 35ի միջ-մասնաճիւղային խաղերուն՝ 1-3 Ապրիլ 1972ին՝ Պէյրութի մէջ: Աւանդութիւն դարձած եւ Մոնթրէալի մէջ միակը ըլլալով վարչութիւնը իրագործեց հայերէն պատի օրացոյցի հրատարակութիւնը մեծ յաջողութեամբ, սպառման թիւ՝ 700 օրինակ: Մասնաճիւղը ունեցաւ փինկ-փոնկի կիրարկումը եւ համապատասխան խումբ: Հայ կեդրոնէն ներս վարչութեան տրամադրուեցաւ յատուկ գրասենեակ: Կազմակերպչական աշխատանքները աւելի հիմնաւորուեցան: Կեդրոնի հասցէն է՝ 3401 OLIVAR ASSELIN, MONTREAL:

1973 տարուան վարչութեան մաս կը կազմեն հետեւեալները.-

Ատենապետ՝ Վարուժան Սերոբեան
Փոխ ատենապետ՝ Գէորգ Սեւակեան
Ատենադպիր՝ Տոքթ. Վիգէն Մասերեճեան
Գանձապահ՝ Տիգրան Մելքոնեան

Գոյքապահ եւ Ֆութպոլի պատասխանատու՝ Յակոբ Թորոսեան

Աթլետիզմի պատասխանատու՝ Վարուժան Զուրիկեան

Պասքեթպոլի պատասխանատու՝ Գրիգոր Գոլյումճեան

Սկառուտական խորհուրդի ներկայացուցիչ՝ Արամ Նշանեան:

Պէյրութի մէջ կայացած Հ.Մ.Ը.Մ.ի 20րդ Պատգամաւորական ժողովի զոյգ նստաշրջաններուն, մասնաճիւղը ներկայացուեցաւ իր պատգամաւորներով՝ Հայկարամ Առաքելեան, Սարգիս Յովսէփեան եւ Սարգիս Փանոսեան (վերջինս՝ Լիբանանէն):

1974 տարեշրջանի վարչական կազմի անդամներն են.-

Ատենապետ՝ Վարուժան Սերոբեան
Փոխ ատենապետ եւ Ֆութպոլի պատասխանատու՝ Գէորգ Սեւակեան
Ատենադպիր՝ Տոքթ. Վիգէն Մասերեճեան
Գանձապահ՝ Տիգրան Մելքոնեան
Հաշուապահ՝ Արթօ Գապասաքալեան

Աթլեթիզիմի եւ հոքիի պատասխանատու՝
Վարուժան Զուրիկեան

Մարզարանի շինութեան յանձնախումբի
ներկայացուցիչ՝ Գրիգոր Գուլյումճեան

Պասքեթպոլի պատասխանատու՝ Ռուբէն
Գալայճեան

Սկստական խորհուրդի ներկայացուցիչ՝
Յովսէփ Զերտելեան:

Մասնաճիւղի կազմակերպչական դրուժիւնը
տարուէ տարի կը զօրանայ: Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանա-
յին Վարչութեան հետ կապերը օրինական են:
Հոկտեմբերին, Շրջանային Վարչութեան ատե-
նապետ Յովհաննէս Շահինեան երկրորդ անգամ
ըլլալով կ'այցելէ Մոնթրէալ:

Մասնաճիւղը կը յաջողցնէ Գանատայի միջ-
մասնաճիւղային ճրգ խաղերը: Աւանդութիւն
դարձած ձեռնարկները՝ պարահանդէս, պատի
օրացոյց կը գործադրուին նոյն յաջորդականու-
թեամբ: Մարզական ճիւղերը կը յառաջդիմեն
արձանագրելով թեքնիք զգալի բարելաւում:
Մասնաճիւղի վարչութիւնը ամբողջական ճիգով
կը լծուի Հ.Մ.Ը.Մ-ը համագաղութային կազմա-
կերպութեան վերածելու՝ 20րդ. Պատգամաւո-
րական ժողովի որոշումին գործադրութեան:

ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Մոնթրէալի մասնաճիւղի մարզական գոր-
ծունէութեան իրականացման համար իրերայա-
ջորդ վարչութիւններու մնայուն մտահոգու-
թիւնը եղաւ մարզախաղերու յատուկ դաշտերու
ապահովումը: Ֆուտպոլի համար օգտագործուե-
ցան քաղաքապետութեան թաղային դաշտերը,
իսկ պասքեթպոլի եւ վոլիպոլի համար վարձ-
ուեցան պետական վարժարաններու սրահ-մար-
զադաշտերը, համաձայն իրենց տրամադրելու-
թեան:

Մարզական խումբերուն փորձերու դասաւո-
րումները մերթ մօտակայ մերթ հեռաւոր դաշ-
տերու վրայ, փոխադրական մեծ դժուարու-
թիւններու առջեւ դրին վարչութիւններն ու

յանձնախումբերը: Նոյնպէս, մրցումներու առ-
թիւ քաջալերող համակիրները միշտ ալ չկրցան
մեծ թիւով ներկայ գտնուիլ մարզական ելոյթ-
ներուն:

Այս դրուժիւնը իր մասնակի լուծումը
գտաւ, Հայ Կեդրոնի կառուցման առընթեր,
մարզասրահի իրականացումով:

Ֆուտպոլ

1958ին Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ-ի մարզական
գործունէութիւնը կը սկսի ֆուտպոլի խումբի
կազմութեամբ: Ֆուտպոլի խումբի խմբապե-
տութիւնը կը վարէ Պետրոս Գաբրիէլեանը,
որուն կը յաջորդէ Գէորգ Սեւակեանը:

1960 թուականի եղանակէն սկսեալ, ֆուտ-
պոլի ԱՐՄԷՆԻԱ խումբը մաս կը կազմէ քաղա-
քի մարզական լիկին եւ կը մասնակցի Ա. դա-
սակարգի պաշտօնական մրցաշարքերուն, նոյն
եղանակին իսկ, տիրանալով ախոյեանութեան
տիտղոսին:

Մինչեւ 1962, իբրեւ մասնաճիւղի մարզա-
կան միակ ճիւղ, ֆուտպոլը կ'արժանանայ վար-
չական կազմերու առօրեայ խնամքին, հետզհե-
տէ թեքնիքօրէն յառաջդիմելով եւ իր պատուոյ
դիրքը գրաւելով:

1966ի եղանակը անյաջող վախճան մը կ'ու-
նենայ, երբ վարչութիւնը կ'որոշէ Լիկի ախոյեա-
նութեան մրցաշարքէն հրաժարիլ, մարզիկներու
անբաւարար թիւին եւ անկանոն հետեւելնուն
պատճառով:

1967ին խումբի կազմը ինքզինքը կը վերա-
գտնէ եւ լրիւ կը մասնակցի Լիկի մրցաշարքի
16 մրցումներուն: Ֆուտպոլի խումբին խմբա-
պետն է Լեւոն Շեքերեան: Մարզիչի պաշտօնը
կը վարէ Գէորգ Սեւակեան, որուն կը յաջորդէ
Սարգիս Յովսէփեանը, օգնական՝ Դանիէլ
Դանիէլեան: Ֆիզիքական պատրաստութիւնը կը
վարէ Վարուժան Զուրիկեան: Լիկի մօտ մաս-
նաճիւղի ներկայացուցիչն է Արմենակ Ուլուս-
եան: Այս եղանակին խումբի մարզիկները ձմեռ-
նային շրջանին իրենց փորձերը կը կատարեն

փակ դաշտի վրայ, առ ի պատրաստութիւն ամառնային եղանակին Լիկի մրցաշարքերուն մասնակցութեան:

1968 տարեշրջանի Ֆուլթոնի խումբին մարզիչն է Սարգիս Յովսէփեանը, որուն կը յաջորդէ Գէորգ Սեւակեան, օգնական՝ Սերգօ Եփուճեան:

Առաջին խումբի բերդապահն է Յարութիւն Յարութիւնեան, Յակոբ Տիմիթեանի որ Լեւոն Շէքերճեանի կողքին, մաս կը կազմէ Մոնթրէալի Լիկի իր դասակարգի հաւաքականին:

Խումբը կը շարունակէ գործել ԱՐՄԷՆԻԱ անունին տակ: Բացի Բ. դասակարգի ախոյեանութեանց մրցաշարքի մրցումներէն, ան կը մասնակցի նաեւ լիկի եւ միջ-ակումբային մրցաշարքերու:

1969ի ընթացքին մասնաճիւղը կ'ունենայ նաեւ Ֆուլթոնի երկրորդ կազմ մը: Առաջին կազմը կը մասնակցի Քէպէքի Լիկին առաջին դասակարգի ախոյեանական մրցաշարքի 18 մրցումներուն, իսկ Բ. կազմը կը մասնակցի պահեստի դասակարգի մրցաշարքին: Մասնաճիւղի ներկայացուցիչը գործնական մասնակցութիւն կը բերէ Լիկի աշխատանքներուն եւ մնայուն կապը կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.ի եւ Լիկի միջեւ:

Այս տարեշրջանի Ֆուլթոնի յանձնախումբի անդամներն են Յակոբ Թորոսեան, Յակոբ Գասարճեան, Յակոբ Յովհաննէսեան, Յարութիւն Կէմիճեան եւ Տիգրան Յակոբեան: Խումբի մարզիչն է Սերգօ Եփուճեան, օժանդակ՝ Գառնիկ Գալֆայեան:

1972ի Ֆուլթոնի յանձնախումբի անդամներն են՝ Վարդգէս Մաթէոսեան, Սերգօ Յովսէփեան՝ Մարգիչ, Գէորգ Գարապօղոսեան՝ փոխ մարզիչ, խումբերու պատասխանատուներ՝ Արսէն Մարաչեան եւ Յովսէփ Զերտելեան: Հակառակ խանդավառ սկզբնաւորութեան, թեքնիք արդիւնքները կը մնան տկար: Քէպէքի Լիկին մօտ ներկայացուցիչն է Արմենակ Ուլուսեան:

1973ի եղանակը ալ աւելի տկար արդիւնքներու կը յանգի եւ վարչութիւնը կ'որոշէ դադ-

րեցնել Լիկի ախոյեանութեան մրցաշարքին իր մասնակցութիւնը, յաւելեալ բարդութիւններու առաջը առնելու մտահոգութեամբ:

Պասքեթպոլ

Մոնթրէալի մասնաճիւղէն ներս պասքեթպոլի կիրարկումը կը սկսի 1962էն սկսեալ, իբրեւ մասնաճիւղի կիրարկած երկրորդ մարզաճիւղ: Այս ճիւղի զարգացումը կ'ըլլայ դանդաղ: Մարզիկ անդամներու մեծամասնութեան նախընտրութիւնը կ'երթայ դէպի Ֆուլթոնը:

1963ին, պասքեթպոլի երէց տղոց խումբը մաս կը կազմէ Մոնթրէալ քաղաքի լիկին եւ կը մասնակցի ախոյեանութեան մրցաշարքերուն:

1966ին, Հ.Մ.Ը.Մ.-ԿԱՄՔ միացումով պասքեթպոլի ճիւղը կը սկսի մեծաքայլ յառաջդիմել:

Այս թուականին, պասքեթպոլի խումբին մարզիչի պաշտօնը կը վարեն Միհրան Զերտելեան եւ Եղուարդ Ֆրունճեան: Առաջին խումբը կը մասնակցի Մոնթրէալի Senior B դասակարգի ախոյեանութեան, իսկ Բ. խումբը Junior դասակարգի մրցաշարքին: Երկրորդ խումբի մարզիչն է Հրաչ Տէր Սարգիսեան, խումբը ունի շուրջ 40 մարզիկներ 12-20 տարեկան:

1967ին, մասնաճիւղը կը պահէ չորս խումբեր՝ երէցներ, Բ. խումբ եւ փոքրեր, ինչպէս նաեւ աղջկանց նորակազմ խումբ մը: Յաջորդաբար՝ այս խումբերու մարզիչներն են՝ Ճոնի Ունճեան, Գէորգ Գարապօղոսեան, Վարդգէս Յակոբեան եւ Միհրան Զերտելեան: Լիկի մօտ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչն է Տիգրան Սեւակեան:

Մասնաճիւղի առաջին կազմի եւ Հ.Ե.Դ. Լեւոն Շանթ երիտասարդականի հաւաքական խումբը կը մեկնի Բրովիտէնս, ուր բարեկամական մրցում մը կ'ունենայ տեղւոյն Հ.Ե.Դ.աշնակցութեան խումբին դէմ: Այս պիտի ըլլար խումբի առաջին ելոյթը Գանատայի սահմաններէն դուրս:

1968 տարեշրջանին պասքեթպոլի չորս խումբերու մարզիչները կը մնան անփոփոխ:

Երէց տղոց խումբի խմբապետութիւնը կը վարէ Գէորգ Զատոյեան:

1969ին, պասքեթպոլի խումբերը կը մարզեն Եդուարդ Ֆրունճեան՝ երէց տղոց խումբ, օգնական՝ Յակոբ Խաչատուրեան: Գէորգ Գարապօղոսեան՝ կրտսերներ եւ փոքրեր: Ն. Ուստայեան՝ աղջիկներու խումբ, օգնական՝ Յովակ Պետրոսեան: Բացի փոքր տղոց խումբէն, մնացեալ երեք կազմերը կը մասնակցին Մոնթրէալի Լիկի ախոյեանութեան մրցաշարքերուն: Երէցներու խումբէն՝ Ռոպէր Թուխմանեան կը հանդիսանայ ախոյեանութեան մրցաշարքին առաւելագոյն կէտ նշանակող մարզիկը: Պաշտօնական ախոյեանութեանց մրցաշարքերու կողքին, խումբերը բարեկամական մրցումներ կ'ունենան տեղական խումբերու եւ Թորոնթոյի նորակազմ մասնաճիւղի խումբերուն դէմ:

Պասքեթպոլի լիկի մօտ մասնաճիւղի ներկայացուցիչն է Տիգրան Մելքոնեան:

1971ին, մասնաճիւղի առաջին խումբը կը տիրանայ GOLDEN BALL մրցաշարքի բաժակին:

1972 տարուան պասքեթպոլի երէց տղոց խումբին մաս կը կազմեն Արմէն Գալեմճեան, Վարուժան Կիւրիւնլեան, Րաֆֆի Աբանեան, Օհաննէս Մկրտիչեան, Գէորգ Զատոյեան, Զաւէն Մոմճեան, Ստեփան Քէօլէյեան, Մանուկ Փիլիկեան, Պօղոս Խաչատուրեան, Գէորգ Գարապօղոսեան եւ Ռոպէր Թուխմանեան: Խումբի մարզիչն է Յակոբ Խաչատուրեան: Զանազան դասակարգերու վրայ բաժնուած երկսեռ մարզիկներու թիւը կը հասնի 70ի: Ա. խումբը երկրորդ տարին ըլլալով կը տիրանայ GOLDEN BALL մրցաշարքին բաժակին:

1973 տարեշրջանին մասնաճիւղի կիրարկած յաջողագոյն մարզախաղը պասքեթպոլը կը մնայ՝ 95 երկսեռ մարզիկներու մասնակցութեամբ: Խումբերը կը մարզուին Հրաչ Տէր Սարգիսեանի, Ժիրայր Դաւիթեանի, Յովակ Պետրոսեանի, Լեւոն Նաճարեանի եւ Անահիտ Նաճարեանի հսկողութեամբ: Մասնաճիւղի երէցներու խումբը կը մասնակցի Համիլթընի մաս-

նաճիւղի կազմակերպած միջ-մասնաճիւղային մրցաշարքին: Երէց տղոց խումբը Լիկի ախոյեանութեան երկրորդ դիրքին կը տիրանայ:

Աթլետիզմ

1964ին կազմուեցաւ Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.ի աթլետիզմի անդրանիկ խումբը:

Համեմատաբար փոքրաթիւ աթլետներէ կազմուած այս խումբը, կարճ ժամանակի ընթացքին զգալի յառաջդիմութիւն արձանագրեց: 1966ին՝ Հ.Մ.Ը.Մ.ի եւ ԿԱՄՔի միացումէն ետք, աթլետիզմի ճիւղը յաւելեալ կարեւորութիւն ստացաւ՝ գլխաւորութեամբ Վարուժան Զուրիկեանի: Հետզհետէ, որակաւոր աթլետներ եւ մարզիչներ եկան խտացնել աթլետիզմի խումբի շարքերը:

1967ին, աթլետիզմի խումբին մարզիչն է Հրաչ Տէր Սարգիսեանը, որուն օժանդակեցին Վարուժան Զուրիկեան եւ Գրիգոր Նիզիպլեան: Խումբին թեքնիք արդիւնքները կը մնան համեստ: Խումբի փորձերը կը կատարուին Երկուշաբթի եւ Ուրբաթ օրերը Jarry Parkի դաշտին վրայ:

1968ին, աթլետիզմի խումբը կը վարէ Վարուժան Զուրիկեան, գործակցութեամբ Գէորգ Զատոյեանի եւ Անտոն Զատոյեանի: Այս եղանակին խումբը միջ-ակումբային ելոյթներ չ'ունենար եւ կը բաւարարուի միջ-անդամական մրցումներու կազմակերպութեամբ, առ ի պատրաստութիւն յաջորդ եղանակին:

1969ին եւ 1970ի սկիզբը, մասնաճիւղի աթլետները թեքնիք յառաջդիմութիւններ կ'արձանագրեն պատրաստուելով Թորոնթոյի միջ-մասնաճիւղային մրցումներուն եւ Մոնթրէալի Հ.Ե.Դ.ի խաղերուն: Աթլետիզմի փորձերը կը վարեն Վարուժան Զուրիկեան եւ Հրաչ Տէր Սարգիսեան: Փորձերը տեղի կ'ունենան ՍԻՆՔ-ԼԸՐ ԼԵՅՏ եւ ՍԵՆ ՍԻՄՈՆ ԱՓՈԹՐ մարզասրահներուն մէջ:

1972 տարեշրջանին աթլետիզմի խումբը աւելի կը զօրանայ եւ միջ-մասնաճիւղային խա-

ղերու են կ'ապահովէ առաջնութեան բազմաթիւ տիտղոսներ: Նոյն արդիւնքները ձեռք կը բերուին 1973ի եղանակին, սակայն այս ճիւղի կիրարկման համար նոր ուժերու մասնակցութիւնը կը մնայ տկար:

Լուղորդութիւն

1966ի աշնան, մասնաճիւղի կարգ մը մարզիկները կը սկսին հետեւիլ լուղորդութեան փորձերու, առաջնորդութեամբ ժիրայր Շատախցեանի եւ Արմենակ Գալեմճեանի: Վարչութիւնը կը ծրագրէ օժանդակել այս ճիւղի զարգացման:

Փիճկ-փոճկ

Հակառակ 1968էն ի վեր փորձուած նախաձեռնութեանց, 1972ին միայն, փիճկ-փոճկը մաս կը կազմէ մասնաճիւղի կիրարկած մարզախաղերու ցանցին: Մինչ այդ, մասնաճիւղը զուրկ էր փիճկ-փոճկի կիրարկման յարմարութիւններէ:

ՄԱՐՁԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

1966էն սկսեալ, Մոնթրէալի մասնաճիւղը հրապարակ կու գայ մարզական ձեռնարկներով: Հրապարակային ելոյթները մեծապէս կը քաջալերեն մասնաճիւղի մարզիկներն ու ղեկավարները, իրենց կարգին ժողովրդականութիւն ստեղծելով Միութեան շուրջ: Մարզական այս ձեռնարկներէն են՝ միջ-անդամական խաղերը, տարեկան մարզական շաբաթները, Մոնթրէալէն դուրս այցելութիւններն ու փոխադարձ ընդունելութիւնները եւ միջ-մասնաճիւղային խաղերը:

Միջ-անդամական առաջին խաղերը կը կազմակերպուին 13 Օգոստոս 1966ին, քաղաքապետութեան մարզադաշտին վրայ: 400 հանդիսականներ ներկայ կ'ըլլան այս խաղերուն, որոնց աւարտին 100է աւելի մարզիկներ եւ սկաուտներ կը տողանցեն թմբկահարներու նուագով:

12 Օգոստոս 1967ին, նոյն խաղերը կը կրկնուին նոյն վայրին մէջ:

11 Նոյեմբեր 1967ին, պասքեթպոլի խումբը, զօրացուած Հ.Ե.Դ.ի մարզիկներով, այցելութիւն մը կու տայ Միացեալ Նահանգներ՝ Փրովիտէնսի Հ.Ե.Դ. խումբին:

1968ի միջ-անդամական խաղերը աւելի պաշտօնական բնոյթ կ'ունենան, նշելու համար Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան յիսնամեակը: Չեռնարկը կը հովանաւորէ Տիգրան Քհնյ. Խոյեան, նախագահութեամբ Դանիէլ Դանիէլեանի: Խաղերու աւարտին կը կատարուի մրցանակաբաշխութիւն: Վարչութիւնը յիշատակի մետալներով կը պատուէ պաշտօնական հիւրերը:

1969էն սկսեալ, Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.-ԿԱՄ-Քի նախաձեռնութիւնը եղող այս խաղերը կը վերածուին միջ-մասնաճիւղային մարզական հանդիպումներու:

1972ի Ապրիլին, Մոնթրէալի պասքեթպոլի խումբը կը մասնակցի Պէյրոութի մէջ կայացող Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան կազմակերպած միջ-մասնաճիւղային 35րդ խաղերուն: Նոյն տարուան Օգոստոս 5ին, Թորոնթոյի մէջ, Ֆուլթոնի խումբը կը մասնակցի տեղւոյն մրցաշարքին: Իսկ 3 Սեպտեմբեր 1972ին, աթլետիք խաղեր կը կազմակերպուին Մոնթրէալի մէջ:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

1957ին, Մոնթրէալի Արմէնիա Ֆուլթոնի խումբի գործունէութեան առընթեր կը նախաձեռնուի նաեւ սկաուտական գործունէութեան, Սուրիայէն եւ Եգիպտոսէն փոխադրուած սկաուտ խմբապետներու գործակցութեամբ: Սկաուտական նախնական կորիզի կազմութեան կը նպաստէ Պերճ Աճէմեան, որուն՝ 1959ին կը յաջորդէ Մկըր Թորոսեանը, գործակցութեամբ Խաչիկ Սերայտարեանի:

Սկաուտական այս կորիզը կը բաղկանար տասնեակ մը անդամներէ եւ կը գործէր St.

ZOTIQUE թաղի եկեղեցւոյ ներքնայատակի մէկ խուցին մէջ, նախնական պայմաններու տակ:

1959ի ամրան, առաջին անգամ ըլլալով այս խմբակէն 4 սկառուտներ մասնակցեցան Գանատայի Սկառուտական Կեդրոնի Մոնթրէալի Anderson Northern Districkի, կազմակերպած միօրեայ աստիճանաւորական դպրոց-բանակումին: Այս ձեւով Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտական շարժումը, իբրեւ Հայ Սկառուտական միաւոր ճանաչում ստացաւ նահանգի սկառուտ պետին կողմէ, իբր միայն հայերէ բաղկացող սկառուտական խումբ (Close Group): Նոյն ժամանակ կազմուեցաւ սկառուտական խորհուրդ մը, բաղկացած հետեւեալներէն.-

- Ատենապետ՝ Հրանդ Պաստրմաճեան
- Ատենադպիր՝ Եդուարդ Պերպէրեան
- Գանձապահ՝ Գաբրիէլ Քէօսէեան
- Խորհրդականներ՝ Գաբրիէլ Գաբրիէլեան,
- Խորէն Սեւակեան:

1964-1965 տարեշրջանի Սկառուտական Խորհուրդի կազմը կը ներկայացնէր հետեւեալ պատկերը.-

- Ատենապետ՝ Հայկ Պէյլէրեան
- Ատենադպիր՝ Հրանդ Բաստրմաճեան
- Գանձապահ՝ Խորէն Սեւակեան
- Քարտուղար՝ Աշոտ Սերոբեան
- Բանակումներու պատասխանատու՝ Գէորգ Թաւրիզեան

Ծանուցումներու պատասխանատու՝ Կարօ Նշանեան

Փոխադրութեանց պատասխանատու՝ Պերճ Աճէմեան

- Աւագ խմբապետ՝ Վարուժան Սերոբեան
- Վարչութեան ներկայացուցիչ՝ Կարպիս Գալէմճեան:

Սկառուտներու հաւաքոյթները կը կայանան Շաբաթ օրերը, Սբ. Յակոբ եկեղեցւոյ յարակից շէնքի մէկ սենեակին մէջ՝ տրամադրուած հոգաբարձութեան կողմէ:

14 Նոյեմբեր 1964ին, խումբէն 6 արիներ կատարեցին իրենց նորընծայի երգումը:

Խումբին մաս կը կազմեն 23 սկառուտներ, խմբապետ՝ Ուալթըր Շայն, փոխ խմբապետ՝ Յովսէփ Զերտելեան, որոնք իրենց աստիճանները պաշտօնապէս ստացան, ձեռամբ Գանատայի հիւսիսային շրջանի ներկայացուցիչին՝ 17 Ապրիլ 1965ին: Գայլիկներու վոհմակը կը վարեն աքելա Վահագն Փաթուկեան եւ պալու Ռուբէն Նշանեան: Վոհմակի անդամներու թիւը տարեշրջանի ընթացքին 13էն կը բարձրանայ 19ի: Գայլիկներու հաւաքոյթներ տեղի կ'ունենան Կիրակի առաւօտները: 16-18 Յուլիս 1965ին, 11 գայլիկներ իրենց պատասխանատուներով կը մասնակցին Camp Anderson-ի միջ-ակումբային բանակումին, արժանանալով «Լաւագոյն վրան»ի տիտղոսին:

Տարեշրջանի երդման արարողութիւնը տեղի կ'ունենայ 30 Հոկտեմբեր 1965ին: Խումբը կ'ունենայ աստիճանաւորական բանակումներ, եւ 6 ներկայացուցիչներով կը մասնակցի Քէպէք նահանգի անդրանիկ ճամբարին՝ 4-9 Յուլիսին:

Սկառուտական գործունէութեան կողքին խումբը մասնակցած է Մեծ Եղեռնի, յիսնամեակին նուիրուած հանդիսութեանց, ինչպէս նաեւ Outremontի մէջ կայացած Remembrance Dayի տողանցքին՝ 35 սկառուտներով: Յիշատակի նուիրուած այս ելոյթներուն Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտներու մասնակցութիւնը աւանդութիւն կը դառնայ եւ կը կրկնուի յաջորդող տարիներու ընթացքին:

1966 տարեշրջանի սկառուտական խորհուրդի անդամներն են.-

- Ատենապետ՝ Հայկ Պէյլէրեան
- Փոխ ատենապետ՝ Հրանդ Բաստրմաճեան
- Գանձապահ՝ Կարպիս Գալէմճեան
- Քարտուղար՝ Աշոտ Սերոբեան
- Բանակումներու պատասխանատու՝ Գէորգ Թաւրիզեան

Ծանուցումներու պատասխանատու՝ Պերճ Աճէմեան

Սկառուտական դաստիարակ՝ Վարուժան Սերոբեան

Խորհրդականներ՝ Կարօ Նշանեան, Արա Պետրոսեան:

Այս տարեշրջանի սկստական շաբաթերու ընդհանուր թիւն է 55՝ սկստներու եւ գայլիկներու բաժիններով:

Շաբաթը, ազգային տօնակատարութեանց մասնակցութեան կողքին, կազմակերպած են ծնողական հաւաքոյթներ, սեմինարներ, արշաւներ, բանակումներ եւ դպրոց-բանակումներ:

1967 տարեշրջանին, սկստական խորհուրդին կազմը հետեւեալ պատկերը կը ներկայացնէ.-

Ատենապետ՝ Հրանդ Բաստրմաճեան

Գանձապետ՝ Կարպիս Գալեմճեան

Քարտուղար՝ Աշոտ Սերոբեան

Բանակումներու պատասխանատու, գոյքապահ՝ Գէորգ Թաւրիզեան

Ծանուցում-փրփականտ՝ Պերճ Աճէմեան

Խորհրդական՝ Արա Պետրոսեան

Աւագ խմբապետ՝ Վարուժան Սերոբեան:

23 Սեպտեմբեր 1967ին երեկոյեան, յատուկ հաւաքոյթի մը ընթացքին տեղի ունեցաւ նորընծայ սկստներու եւ գայլիկներու երգման արարողութիւնը: Նոյն պահուն կատարուեցաւ աստիճաններու տուչութիւն: Աստիճանաւորներու ցանցին մաս կը կազմեն.- Խմբապետ՝ Ուալթըր Շայն, փոխ խմբապետ՝ Յովսէփ Չէրտելեան, վարիչ առաջնորդ՝ Յակոբ Պուլկարեան, աքելա՝ Ռուբէն Նշանեան, պալու՝ Պօղոս Սիմոնեան, գայլիկ դաստիարակ՝ Թորոս Ասատուրեան, առաջնորդներ՝ Նորայր Շալճեան եւ Արմէն Սերոբեան:

Սկստական կազմը կը բաղկանայ 54 անդամներէ՝ 28 սկստ եւ 26 գայլիկ:

Խումբը կը կազմակերպէ պտոյտներ, արշաւներ եւ բանակումներ: Խմբապետ Ուալթըր Շայն այս տարեշրջանին կը նշանակուի Քեպէք նահանգի հիւսիսային շրջանի Scout Commissioner:

1968 տարեշրջանի սկստական խորհուրդի կազմը հետեւեալն է.

Նախագահ՝ Հրանդ Բաստրմաճեան

Ատենապետ՝ Վարուժան Սերոբեան

Քարտուղար՝ Աշոտ Սերոբեան

Գանձապետ՝ Արամ Նշանեան

Վարչութեան ներկայացուցիչ՝ Կարպիս Գալեմճեան

Ֆետերասիոնի մօտ ներկայացուցիչ՝ Պերճ Գարապաճեան

Փրփականտիստ՝ Վիգէն Մասէրեճեան

Բանակումի պատասխանատու՝ Պերճ Աճէմեան

Խորհրդական՝ Արա Պետրոսեան:

Այս տարեշրջանին կը կազմուի մասնաճիւղի երէց սկստներու փաղանգը:

Սկստական շաբաթերուն մաս կը կազմեն 14 երէց սկստ, 18 արի եւ 28 գայլիկ, ընդհ. թիւ՝ 60:

Աստիճանաւորական ցանցին մաս կը կազմեն նախորդ շրջանի պատասխանատուները: Խումբերու շաբաթական հաւաքոյթները տեղի կ'ունենան կանոնաւորաբար Սբ. Յակոբ եկեղեցւոյ սրահին մէջ, Շաբաթ եւ Կիրակի օրերը:

Սկստական խումբերը կ'ունենան պտոյտներ, արշաւներ, տարեկան ընդհանուր բանակում: Անոնք կը մասնակցին Northern District-ի կազմակերպած ձեռնարկներուն եւ Mont Royal Chalet-ի մէջ հայկական Եռագոյնի բարձրացման պաշտօնական արարողութեան: Հ.Մ.Ը.Մ.-ԿԱՄՔի թմբակահարները կ'առաջնորդեն Ֆետերասիոնի կազմակերպած Remembrance Day-ի սկստական ընդհանուր տողանցքը, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան յիսնամեակի առթիւ կազմակերպուած ընդհանուր տողանցքը:

1969ի սկստական խորհուրդին մաս կը կազմեն.-

Նախագահ՝ Հրանդ Պաստրմաճեան

Ատենապետ՝ Տոքթ. Վիգէն Մասերեճեան

Քարտուղար՝ Աշոտ Սերոբեան

Գանձապետ՝ Արամ Նշանեան

Գոյքապահ՝ Պերճ Աճէմեան

Խորհրդականներ՝ Ալեստիս Ապրաքեան, Արա Պետրոսեան, Վահան Տէր Ասատուրեան, Կարպիս Գալէմճեան

Ֆետերասիոնի մօտ ներկայացուցիչ՝ Պերճ Գարապաճեան

Ալագ խմբապետ՝ Վարուժան Սերոբեան

Սկաուտական շարքերու զանազան բաժինները կը վարեն՝

Երէջներ՝ Ուալթըր Շայն, օգնական՝ Պօղոս Սիմոնեան

Արիներ՝ Յովսէփ Զերտելեան, օգնական՝ Յակոբ Պուլկարեան

Գայլիկներ՝ Ռուբէն Նշանեան, օգնական՝ Նորայր Շալճեան:

Սկաուտական շարքերը կ'ունենան դասախօսութիւններ, ծնողական հաւաքոյթներ, պտոյտներ, ազգային եւ պետական հանդիսութիւններու առթիւ կը ստանձնեն կարգապահութեան հսկողութիւն:

25 Յունուարին, 3 Մայիսին եւ 29 Նոյեմբերին տեղի կ'ունենան երդման արարողութիւններ, աստիճաններու եւ մասնագիտական պէճերու բաշխում: Խումբը իր լրիւ կազմով կը մասնակցի մարզական ելոյթներու տողանցքներուն:

1969, Օգոստոս 17-25ին Morrison Island-ի մէջ տեղի ունեցաւ մասնաճիւղի տարեկան ընդհանուր բանակումը: Բանակումը վարեցին Պօղոս Սիմոնեան եւ Նորայր Շալճեան:

1970ի սկաուտական խորհուրդի կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Նախագահ՝ Հրանդ Պաստրմաճեան

Ատենապետ՝ Տոքթ. Վիգէն Մասերէճեան

Փոխ-ատենապետ՝ Կարպիս Գալէմճեան

Քարտուղար՝ Աշոտ Սերոբեան

Գանձապահ՝ Արամ Նշանեան

Հաշուապահ՝ Ուիլֆրիտ Շայն

Գոյքապահ՝ Ալեստիս Ապրաքեան

Բանակումի պատասխանատու՝ Պերճ Աճէմեան

Վարչութեան ներկայացուցիչ՝ Յարութիւն Մարգարեան

Թղթակից՝ Վահան Տէր Ասատուրեան

Խորհրդականներ՝ Անահիտ Մարգարեան, Սեդա Մասերէճեան:

Այս տարեշրջանի կարեւոր իրականացումներէն կ'ըլլայ արժուիկներու խումբի կազմութիւնը՝ 36 անդամներով: Արժուիկներու խումբի կազմութեան մեծապէս կը նպաստեն Անահիտ Մարգարեան-Տէր Կարապետեան, Անի Բապուճեան, Սոնիա Շայն, Աստղիկ Մելիքեան եւ Փօլին Սիմոնեան:

1973 տարեշրջանի սկաուտական խորհուրդի կազմն է.-

Նախագահ՝ Հրանդ Պաստրմաճեան

Պատուոյ անդամ՝ Տոքթ. Վիգէն Մասերէճեան

Ատենապետ՝ Պերճ Աճէմեան

Փոխ ատենապետ՝ Կարօ Թունճեան

Քարտուղար՝ Աշոտ Սերոբեան

Գանձապահ՝ Սեդրակ Պուրսալեան

Գոյքապահ՝ Յովսէփ Զերտելեան

Վարչութեան ներկայացուցիչ՝ Արամ Նշանեան

Զեռնարկներու պատասխանատու՝ Կարպիս Գալէմճեան

Խորհրդականներ՝ Վարուժան Սերոբեան, Գէորգ Մխթիկեան, Տոքթ. Սեդա Մասերէճեան, Լիւսի Պոյաճեան:

Սկաուտական շարքերու ընդհանուր թիւն է 168 որոնցմէ 15 աստիճանաւորներ, գլխաւորութեամբ ալագ խմբապետ Ուալթըր Շայնի:

Օգոստոս 18էն 26 Morrison Island-ի մէջ կը կայանայ մասնաճիւղի տարեկան ընդհանուր բանակումը: Բանակումը կը վարէր Պերճ Աճէմեան: Բանակող սկաուտները այս առթիւ իրենց մասնագիտական պէճերու քնութիւնները անցուցին յաջողութեամբ: Քէպեքի սկաուտական պատասխանատուներ գովեստով արտայայտուեցան այս տիպար բանակումի մասին:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան առաջին օրերէն սկսեալ համակիրներու կարեւոր թիւ մը կը բոլորուի մասնաճիւղին շուրջ: Անդամակցութեան առընթեր, նոր եկուոր հայեր իրենց անցեալի Հ.Մ.Ը.Մ.ական մթնոլորտի պրպտումով կը քաջալերեն ու կը մասնակցին վարչութեան կազմակերպած ընկերային ելոյթներուն:

Հ.Մ.Ը.Մ.-ԿԱՄՔ միացումը աւելի խթան կը հանդիսանայ ընկերային գործունէութեան զարգացումին: Տարեկան դաշտագնացութիւններ եւ զբօսապտոյտներ աւանդութիւն կը դառնան: Վարչութիւնը, զանազան առիթներով մարզիկներու խումբերը ի մի կը հաւաքէ, փոխադարձ ծանօթացման եւ Հ.Մ.Ը.Մ.ական ընկերային մթնոլորտի զարգացումին նպաստելով: 1968էն սկսեալ ընկերային հաւաքոյթները հերթական կը դառնան՝ ամէն Չորեքշաբթի երեկոները, Սբ. Յակոբ եկեղեցւոյ ներքնասրահին մէջ:

Սկառուտական Խորհուրդն ալ իր կարգին ընկերային հաւաքոյթներ կը կազմակերպէ: Այսպէս, 6 Դեկտեմբեր 1969ին, նախկին սկառուտներու յատուկ մտերմիկ երեկոյ մը կը սարքէ, վերակենդանացնելու համար սկառուտական հին յուշեր եւ սկառուտական գործունէութեան մօտեցնելու համար ներկաները:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵԼՈՅԹՆԵՐ, ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.-ԿԱՄՔը, մարզական եւ սկառուտական ելոյթներու կարգին, աւանդութիւն դարձուցած է տարեկան պարահանդէսի եւ տարեկան դաշտագնացութեան ձեռնարկները, որոնք, նիւթականի ապահովման կողքին, ծառայած են Միութեան փրօփականտին: Այս կարգի ձեռնարկներէն՝ 1966ի տարեկան պարահանդէսը մրցանիշ մը կը հաստատէ՝ 550 մասնակցողներով:

1968ին, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան յիսնամեակին նուիրուած հանդիսութիւններու կազմակերպութեան համար կը նշանակուի կեդրոնական յանձնախումբ՝ մասնակցութեամբ Դանիէլ Դանիէլեանի, Գ. Մելքոնեանի, Գրիգոր Նիզիպլեանի, Հրաչ Մանուկեանի եւ Վարուժան Պոյաճեանի: Կեդրոնական յանձնախումբի կողքին կը գործեն մամուլի, մարզական, մշակութային եւ յարաբերական չորս ենթախանձնախումբեր: 27 Յուլիսին տեղի կ'ունենան Ֆուլպոլի մրցումներ, աթլետիք խաղեր եւ ընդհանուր տողանցք՝ մասնակցութեամբ սկառուտական խումբերուն եւ մարզիկներուն: Երեկոյեան տեղի կ'ունենայ ընտանեկան խրախճանք, այս ձեռնարկի յաջողութեան կը նպաստեն, ի միջի այլոց, Սարգիս Գարողյանեան, Բ. Գալայճեան, Յակոբ Մանուկեան, Վարուժան Պոյաճեան եւ Պերճ Աճեմեան: Յաջորդ օրը՝ 28 Յուլիսին Սբ. Պատարագի վերջաւորութեան հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի ի յիշատակ հայ մարզական շարժումին նուիրեալ ննջեցեալներուն:

Աւանդութիւն կը դառնայ նաեւ ազգային եւ եկեղեցական տօներու մասնակցութիւնը՝ Ապրիլ, 24, Մայիս 28 եւ եկեղեցական տօներ, ուր մասնաճիւղը կը մասնակցի ղեկավարներով եւ սկառուտական շարքերով:

ՆԻՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Անդամատուրքերու եւ մասնաճիւղի կազմակերպած հրապարակային ձեռնարկներու հասոյթներէն դուրս, գանձին եկամուտ ապահովելու ծառայած են վարչութեան պատրաստած ինքնաշարժներու յատուկ պիտակ-նշանակներ, Հ.Մ.Ը.Մ.ի վահանն ու նշանակը կրող ապակեայ գաւաթներ, բանալիներու շղթայ օղակներ եւ տպագրուած շապիկներ:

Սկառուտական Խորհուրդը, զատկական տօներու առթիւ, ձեռնարկած է շոքոլայէ հաւկիթներու վաճառքի, ինչպէս նաեւ զանազան առիթներով ինքնաշարժներ լուալու արշաւի:

Ստորեւ, կարգ մը տարիներու նիւթական գործունէութեան պատկերը՝ ուրկից ի յայտ կու գայ ժամանակի ընթացքին մասնաճիւղի գործունէութեան աճը:

Մուտք՝ Գանատական Տոլար	Ելք՝
1965՝	5591
1969՝	9571
1972՝	14515
1973՝	19554

ՄԱՄՈՒԼ

Առաջին տարիներէն սկսեալ, Մոնթրէալի մասնաճիւղի վարչութիւնը կը հրատարակէ Հ.Մ.Ը.Մ-ի պատի օրացոյցը: Օրացոյցի ներկայութիւնը հայ յարկերէն ներս միաժամանակ կը ծառայէ Միութեան փրոփականտին եւ կ'ապահովէ տարեկան որոշ եկամուտ: Օրացոյցի էջերուն ընկերացող Հ.Մ.Ը.Մ-ի գաղափարաբանութեան ծառայող նիւթերը սեփականութիւնը կը դառնան ժողովրդական լայն խաւերուն: Յաջորդական տարիներուն՝ գեղագիտական զարգացումը եւ անթերի տպագրութիւնը կը հասնին արհեստավարժութեան սահմաններուն:

Տարիներու ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.-ԿԱՄՔի գործունէութեան արձագանգած է Սբ. Յակոբ եկեղեցւոյ պարբերաթերթ ԼՐԱՔԱՂը, ուր մասնաճիւղը ունեցած է յատուկ էջ: Պոսթըն հրատարակուող ՀԱՅՐԵՆԻՔ օրաթերթը պարբերաբար յօդուածներ հրատարակած է մասնաճիւղի գործունէութեան զանազան երեսներու մասին:

1968ին, մասնաճիւղի մամլոյ յանձնախումբի իրականացուցած մարզական պարբերաթերթ ՄԱՐՄՆԱՄԱՐԶի առաջին թիւը իր յաջորդները չ'ունեցաւ:

Իր կարգին, Մոնթրէալի Համագգային Մշակութային Միութեան ռատիօժամը ծառայած է մասնաճիւղի մասին ձայնասփռումներու:

ՀԱՄԻԼԹԸՆ

ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ-ի Համիլթընի մասնաճիւղը հիմնուած է 1968ին, յունահայ խումբ մը երիտասարդներու նախաձեռնութեամբ: Նորակազմ մասնաճիւղը առաջին հերթին կը կազմէ Ֆուլպոլի խումբ մը, որուն մարզիչի պաշտօնը կը վստահուի Արամ Էրջենեանին: Ֆուլպոլի անդրանիկ այս կազմը յաջորդ եղանակին կը մասնակցի Համիլթընի Լիկի մրցաշարքերուն, ապահովելով պատուաբեր արդիւնքներ:

1970ին, մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն կ'ընտրուի տարեշրջանի վարչական կազմը, որուն անդամներն են՝ Մարտիկ Վարդանեան, Արա Թուրաճիկեան, Արմէն Մանուկեան, Ճոն Մաքրէտի եւ Չարլի Սիմիկեան: Այս կազմը նոր թափով կը լծուի աշխատանքի, բարձրացնելով Ֆուլպոլի խումբին թեքնիք մակարդակը եւ Լիկի մրցաշարքին ուշադրութիւն կեդրոնացնելով իր վրայ:

1971 տարեշրջանին մասնաճիւղի վարչութեան մաս կը կազմեն Պերճ Թուրաճիկեան՝ ատենապետ, Միհրան Քէօրհանեան, Արամ Էրջենեան, Անդրանիկ Շարապխանեան եւ Հայկ Գիզիրեան: Մասնաճիւղը հետզհետէ աւելի հաստատ ներկայութիւն կը դառնայ Համիլթընի հայ գաղութէն ներս եւ վարչութիւնը կը ծրագրէ նոր մարզախաղեր աւելցնել իր գործունէութեան վրայ:

25 Ապրիլ 1972ին, Հայ կեդրոնի սրահին մէջ մասնաճիւղը կը կայացնէ անդամական ընդհանուր ժողով եւ կ'ընտրէ նոր վարչութիւն հետեւեալ կազմով.

- Ատենապետ՝ Պերճ Թուրաճիկեան
- Փոխ ատենապետ՝ Արամ Էրջանեան
- Ատենադպիր՝ Պօղոս Սեֆերեան
- Անգլերէնի քարտուղար՝ Անդրանիկ Շարապխանեան

Հաշուապահ՝ Ասատուր Մաքսուտեան:

Այս կազմի ճիգերով Ֆուլթայոլի կողքին Համիլթոնի Հ.Մ.Ը.Մ.ը կ'ունենայ պասքեթպոլի եւ աթլետիկայի խումբեր, որոնք նոյնպէս յաջողելոյթներով ուշագրաւ կը դառնան Համիլթոնի մարզական շրջանակներու մօտ:

1973ին, վերոյիշեալ կազմին կը յաջորդէ անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած նոր կազմ մը, ատենապետութեամբ Պօղոս Սեֆերեանի: Այս տարեշրջանին կը կազմուի նաեւ պասքեթպոլի աղջկանց խումբը: Վերջինս, պասքեթպոլի տղոց կազմին, Ֆուլթայոլի եւ աթլետիկայի խումբերուն կողքին կը մասնակցի Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու միջ-մասնաճիւղային հինգերորդ խաղերուն, Մոնթրէալի մէջ:

Նոյնպէս, նորակազմ վարչութեան ատենապետ Պօղոս Սեֆերեան, 1973ի սկիզբը նամակով մը կապ կը պահէ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան հետ, Լիբանան, տեղեկացնելով Համիլթոնի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի կազմութեան մասին եւ յայտնելով որ մասնաճիւղը կը կիրարկէ Ֆուլթայոլի եւ պասքեթպոլի: Նոյն գրութեամբ կը խնդրուի Շրջանային Վարչութենէն ծրագրականոնագրի օրինակներ, անդամատետրեր եւ մարզական տարագներու կուրծքի համար կերպասեայ պեճեր:

Շրջանային Վարչութիւնը, 18 Յունուար 1973 թուակիր պատասխան նամակով կը վաւերացնէ Համիլթոնի մասնաճիւղի կազմութիւնը, զայն ընդունելով իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին նորագոյն անդամը, պայմանով որ մասնաճիւղը ամբողջացնէ կանոնագրային ձեւակերպութիւնները:

ԹՈՐՈՆԹՕ

ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

1969ի աշնան, Թորոնթօ հաստատուած խումբ մը Հ.Մ.Ը.Մ.ականներ, քաջալերութեամբ

տեղւոյն Հ.Յ.Դ. Սողոմոն Թեհլիրեան կոմիտէ-ութեան, ի մի հաւաքուելով հիմը կը դնեն տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին:

27 Նոյեմբեր 1969 թուակիր նամակով Թորոնթոյի Հ.Մ.Ը.Մ.ի առժամեայ վարչութիւնը Պէյրութ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան կը տեղեկացնէ, թէ մասնաճիւղ հիմնած է, որ կը բաղկանայ 55 անդամներէ եւ նշանակած վարչական կազմ մասնակցութեամբ հետեւեալներուն.-

Ատենապետ՝ Սերոբ Տէր Պօղոսեան
Քարտուղար՝ Աբրահամ Սվաճեան
Գանձապահ՝ Մկրտիչ Փափազեան
Խորհրդականներ՝ Գրիգոր Շիթիլեան, Ատրուշան Պոյաճեան:

Վարչութիւնը միաժամանակ կը խնդրէ մասնաճիւղի վաւերացում եւ Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր ծրագիր կանոնագրի օրինակներ:

18 Դեկտեմբեր 1969 թուակիր պատասխան նամակով Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութիւնը Թորոնթոյի մասնաճիւղը սկզբունքով կ'ընդունի Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքէն ներս թելադրելով, որ յարգուին նորակազմ մասնաճիւղերու կապակցաբար կանոնագրային տրամադրութիւնները՝ անդամական ընդհանուր ժողովի կողմէ ընտրուի նոր վարչութիւն, 6 ամիսէն մինչեւ մէկ տարուան ժամանակաշրջանի ընթացքին:

Մասնաճիւղը անյապաղ կը գործադրէ Շրջանային Վարչութեան թելադրանքը եւ 18 Յունուար 1970ի անդամական ընդհանուր ժողովը 59 անդամներու ներկայութեան կ'ընտրէ իր անդրանիկ վարչական կազմը, հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Հայկ Ճըլտըրեան
Փոխ ատենապետ եւ գոյքապահ՝ Աբիկ Սվաճեան

Ատենադպրուհի՝ Բէննա Թարգի
Գանձապահ՝ Կարապետ Փաշայեան
Սկառուտական պատասխանատու՝ Գրիգոր Մալեգեան

Մարզական պատասխանատու՝ Սերոբ Տէր Պօղոսեան

Խորհրդական՝ Յակոբ Աթիկեան:

Շրջանային վարչութեան կողմէ, վերոյիշեալ կազմի վաւերացումը կ'ուղարկուի թիւ 35 եւ 25 Փետրուար 1970 թուակիր նամակով: Այնուհետեւ վարչութիւնը կը լծուի կազմակերպական եւ մարզական աշխատանքներու զօրացման: Հայ կեդրոնէն մասնաճիւղին կը տրամադրուի սենեակ մը իբր նստավայր:

8 Օգոստոս 1970ին, Գանատայի մասնաճիւղերու մասնակցութեամբ, Թորոնթոյի Հ.Մ.Ը.Մ.ը կը կազմակերպէ միջ-մասնաճիւղային խաղեր եւ ընդհանուր տողանցք: Մասնաճիւղի խումբերու կողքին, ֆութպոլի եւ աթլետիզմի մրցումներուն կը մասնակցին, Մոնթրէալի եւ Համիլթընի Հ.Մ.Ը.Մ.ներու մարզիկները:

Սկսած սկսած ընդհանուր տողանցքը կ'առաջնորդէ Մոնթրէալի սկսած սկսած նուագախումբը: Այս մասին հետեւեալը կը զեկուցուի Շրջանային վարչութեան.

«Հոգիի անհուն ուրախութեամբ ու անբացատրելի պարծանքով կը տեղեկացնենք, թէ վերջին տասնեակ տարիներու Միջին Արեւելքի հայութեան ցաւը, զրկուելով իրենց աւանդական միջ-մասնաճիւղային խաղերու հրաշալի հանդիպումներէն, մասամբ անոքեցինք այս տարի, մենք այս օտար աստիճան վրայ, ունենալով մէկ փոքր մանրանկարը այդ խաղերուն ու գեղեցիկ տողանցքին... ֆութպոլի առաջին խաղէն վերջ ու աթլետիզմի մրցումներէն առաջ տեղի ունեցաւ տողանցքը: Երբ Մոնթրէալէն եկած ֆանֆարին ձայնը լսուեցաւ դաշտի հեռաւոր անկիւնէն, հանդիսատեսներուն պոռթկացող յուլումն ու ուրախութիւնը հասած էր գագաթնակէտին. անդադար ծափահարութիւններով մնացին ուղի տողանցքի տեսողութեան»:

Խաղերէն ետք, Սուրէն Վրդ. Գաթարոյեան կ'օրհնէ սկսած սկսած խումբերուն դրօշակները: Տեղի կ'ունենայ երգման արարողութիւն եւ փողկապներու տուչութիւն: Հանդիսութեան ներկայ կը գտնուի պետական պատասխանատուն, որ կը դրուատէ Հ.Մ.Ը.Մ.ի նորանոր յաջողութիւնները:

31 Յունուար 1971ին, կը կայանայ մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողով: Շրջանաւարտ վարչութեան տեղեկագրի ընթերցումէն ետք, կ'ընտրուի նոր վարչութիւն հետեւեալ ձեւով.-

*Ատենապետ՝ Կարապետ Բաշայեան
Փոխ ատենապետ՝ եւ սկսած սկսած Գրիգոր Մալեգեան*

*Ատենադպրուհի՝ Արփի Աւագեան
Գանձապահ՝ Հրատ Փոլատեան
Գոյքապահ՝ Գէորգ Սարխանեան
Խորհրդականներ՝ Յակոբ Գասպարեան, Յակոբ Աթիկեան:*

Տարուէ տարի մասնաճիւղի գործունէութիւնը կը ծաւալի եւ Հ.Մ.Ը.Մ.ի դերը Թորոնթոյի հայ գաղութէն ներս հետզհետէ տիրական կը դառնայ: Այս տարեշրջանին անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 107ի, անկախ սկսած սկսած շարքերու թիւէն:

9 Յունուար 1972ին, մասնաճիւղի նորընտիր վարչութիւնը անդամական Գ. ընդհանուր ժողովի աւարտին կը կատարէ աշխատանքներու բաժանում հետեւեալ ձեւով.-

*Ատենապետ՝ Հայկ Ծլտրեան
Փոխ ատենապետ եւ հաշուապահ՝ Հրատ Փոլատեան*

*Քարտուղար՝ Գրիգոր Պեքարեան
Նամակագրութիւն եւ գոյքապահ՝ Վրէժ Աւագեան*

*Սկսած սկսած պատասխանատու՝ Գրիգոր Մալեգեան
Մարզական պատասխանատու՝ Վրէժ Մելքոնեան*

Պասքեթպոլ եւ աթլետիզմ՝ Արմէն Գասապեան:

Վերոյիշեալ վարչական կազմի գործունէութիւնը կը տեւէ միայն ինը ամիս, ներքին դժուարութիւններու պատճառով: Անոր արձանագրած յաջողութիւնները կը մնան շատ սահմանափակ: Ամբողջացնելու համար տարեշրջանը 13 Հոկտեմբեր 1972ին, Թորոնթոյի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչութիւն հետեւեալ կազմով.-

Ատենապետ՝ Ժիլպէռ Թարզի
Փոխ ատենապետ՝ Գէորգ Սարխանեան
Ատենադպիր՝ Ժիրայր Գաթարոյեան
Գանձապահ՝ Միհրան Գալալեան
Մարզական պատասխանատու՝ Վրէժ Մելքոնեան

Սկստական պատասխանատու՝ Երուանդ Շահինեան

Ֆուտբոլի պատասխանատու՝ Յովհաննէս Տէր Պետրոսեան:

Այս կազմի գործունէութիւնը նաեւ կը յատկանշուի ընթացիկ աշխատանքներու հսկողութեամբ եւ մասնաճիւղը 1972 տարուան ընթացքին տեղքայլ միայն կ'արձանագրէ:

28 Յունուար 1973ին, կ'ընտրուի նոր վարչութիւն, որուն դիւանի կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Ժիլպէռ Թարզի
Փոխ ատենապետուհի եւ քարտուղար՝ Մարի Մարտիրոսեան

Ատենադպիր՝ Ժիրայր Գաթարոյեան
Գանձապահ՝ Ատրուշան Պոյաճեան
Սկստական պատասխանատու՝ Երուանդ Շահինեան

Մարզական պատասխանատու՝ Ժան Արթինեան

Ֆուտբոլի պատասխանատու՝ Միհրան Գալալեան:

Նախորդող կազմերուն նման, վերոյիշեալ կազմի գործունէութիւնը եւս կը մնայ սահմանափակ, եւ բացի ընթացիկ աշխատանքներու հսկողութենէն եւ մարզական խումբերու փոքր թիւով ելոյթներէն, մասնաճիւղը նոր յառաջդիմութիւն չարձանագրեր: Շրջանային վարչութիւնը նկատելով Թորոնթոյի Հ.Մ.Ը.Մ.ի այս իրավիճակը, մասնաճիւղի գործունէութիւնը հսկելու վերին պաշտօնը կը յանձնէ Լուտեր Մասպանաճեանին: Այսուհանդերձ, վարչութիւնը կը կազմակերպէ զոյգ պարահանդէսներ՝ 24 Մարտ եւ 3 Նոյեմբեր, 1973ին: Առաջին ելոյթը կը պսակուի յաջողութեամբ: Օգոստոս 19ին կը կազմակերպուի դաշտագնացութիւն, իսկ

յաջորդ շաբաթ՝ Օգոստոս 25ին երիտասարդական խրախճանք, ընկերային այս ձեռնարկներով հետաքրքրութիւն ստեղծելու համար մասնաճիւղի գործունէութեան շուրջ:

Հ.Մ.Ը.Մ.ի 20րդ Պատգամաւորական Ժողովին, Պէյրութի մէջ, որպէս պատգամաւոր մասնաճիւղը կը ներկայացնէ Բաբգէն Տատոյեանը, սակայն վարչութեան փոխ յարաբերութիւնները, ըլլայ Գանատայի այլ մասնաճիւղերուն թէ Շրջանային վարչութեան հետ, կը մնան թերի:

Երկամեայ վերոյիշեալ դժուարին կացութենէն դուրս գալու նպատակով, Թորոնթոյի Հ.Մ.Ը.Մ.ի անդամական հինգերորդ ընդհանուր ժողովը, գրեթէ ամբողջութեամբ նոր անդամներէ բաղկացած հետեւեալ կազմին կը վստահի մասնաճիւղի աշխատանքները, ցանկալով 1974 տարուան համար ներքին համերաշխ գործակցութիւն.

Ատենապետ՝ Կարօ Փաշայեան
Փոխ ատենապետ եւ քարտուղար՝ Վրէժ Աւագեան

Գանձապահ՝ Աւօ Ասայիլեան
Մարզական պատասխանատու եւ գոյքապահ՝ Արմէն Կէտիկեան

Սկստական պատասխանատու՝ Վարդ Զաքարեան

Խորհրդականներ՝ Արթօ Գասապեան, Վրէժ Մելքոնեան:

ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Իր հիմնադրութենէն սկսեալ Թորոնթոյի Հ.Մ.Ը.Մ.ի մարզական գործունէութեան առանցքը կը կազմեն ֆուտբոլի եւ աթլետիզմի ճիւղերը: 1970էն սկսեալ, մասնաճիւղը հետզհետէ կը կիրարկէ նաեւ պասքետբոլ, վոլիպոլ, փինկփոնկ եւ պոլինկ: Մարզական այս ճիւղերու խումբերուն փորձերը կը կատարուին վարձուած մարզադաշտերու վրայ: Մասնաճիւղի մարզական գործունէութիւնը մէկ վայրի մէջ կեդրոնացած չըլլալուն, ինչպէս նաեւ կարգ մը վայրերու

հեռաւորութեան անպատեհութիւնները, պատճառ կը դառնան, որ վարչական կազմերը չկարենան հետեւիլ կեդրոնախոյս այս գործունէութեան: Նոյնպէս, մարզիկներու մասնակցութիւնը կը դառնայ անկանոն: Վերոյիշեալ դժուարութիւնները կը հարթուին կարգ մը մարզիկներու եւ մարզիչներու յարատեւ ճիգերով:

Մասնաճիւղի անդրանիկ մարզական յանձնախումբի անդամներ կը նշանակուին.- Սերոբ Տէր Պօղոսեան, Աբրահամ Սվաճեան, Վահան Գոլոլեան, Գրիգոր Շիթիլեան եւ Բեննա Թարգի: 1973ին, մարզական ճիւղերու ընդհանուր պատասխանատուն է ժան Արթինեան:

Առաջին օրերուն, Ֆուլթոնի խումբի մարզիչի պաշտօնը կը վստահուի Գէորգ Սարխանեանին: 1971ի Յունիսէն սկսեալ խումբը կը մասնակցի Թորոնթոյի Լիկի ախոյեանութեան մրցաշարքին:

1972ին, Ֆուլթոնի յանձնախումբին մաս կը կազմեն Արփի Աւագեան, Վրէժ Մելքոնեան, Յովհաննէս Տէր Պետրոսեան եւ Միհրան Գոլոլեան: Վերջինս նոյն պաշտօնին վրայ կը մնայ նաեւ 1973ին: Ժամանակի ընթացքին, Ֆուլթոնի յանձնախումբերուն մաս կազմած են Բաբկէն Տատոյեան, Անդրանիկ Տէր Պետրոսեան եւ Բիւզանդ Վարդանեան:

Փինկ-փոնկի ճիւղն ալ սկիզբէն սկսեալ մեծ հետաքրքրութիւն կը ստեղծէ իր շուրջ: Արդարեւ, 1969ի վերջաւորութեան մասնաճիւղի առժամեայ վարչութիւնը կը կազմակերպէ միջ-անդամական մրցաշարք մը, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն 11 անդամուհիներ եւ 25 անդամներ: Աղջկանց բաժնի ախոյեանուհի կը հանդիսանայ Արտեմիա Ճըլտըրեան, տղոց բաժնին՝ Ժիլպէռ Թարգի:

Փինկ-փոնկի ճիւղին իրենց նպաստը բերած են Լեւոն Հասրըճեան եւ Սոնա Ճըլտըրեան:

Պոլինկի ճիւղի առաջին մարզիչներէն է Արթօ Գասապեանը: 1971 Ապրիլ 18ին, վարչութիւնը կը կազմակերպէ միջ-անդամական առաջին մրցաշարքը, մասնակցութեամբ 10 մարզիկ-

ներու: Տղոց բաժնի ախոյեան կը հանդիսանայ Սամ Մանուկեան, աղջկանց ախոյեանուհի՝ Մարի Մարտիրոսեան:

Յաջորդաբար այս ճիւղի պատասխանատուութիւնները կը ստանձնեն ժան Յարութիւնեան, Ալեքս Մարտիրոսեան, Մարի Մարտիրոսեան եւ Արմէն Գասապեան:

Ժան Յարութիւնեան եւ Յակոբ Արթինեան ստանձնած են նաեւ աթլետիկ միջոցի մարզիչի եւ պատասխանատուի պաշտօնները:

Սկիզբէն մշակուած պասքեթպոլի ճիւղը կը շարունակուի կիրարկուիլ նոյն կարեւորութեամբ: 7 Մարտ 1970ին, Մոնթրէալի մասնաճիւղի հրաւէրով երէց տղոց, կրտսեր աղջկանց եւ տղոց կազմերը կը փոխադրուին Մոնթրէալ, հանդիպումներ ունենալու տեղւոյն համապատասխան խումբերուն դէմ: Այս ձեւի բարեկամական հանդիպումներ կը կազմակերպուին Համիլթընի Հ.Մ.Ը.Մ.ի, Թորոնթոյի չինացիներու, Լայֆ Ինչուրընսի եւ նման կազմերու դէմ: Մրցումները կ'աւարտին Թորոնթոյի Հ.Մ.Ը.Մ.ի խումբերու յաղթանակով, ինչ որ կը քաջալերէ պատասխանատուները, որպէսզի 1970ի վերջաւորութեան տղոց երէցներու խումբը մասնակցի Թորոնթոյի Լիկի ախոյեանական մրցաշարքին:

Տարիներու ընթացքին պասքեթպոլի ճիւղի խումբերը մարզած են Աբրահամ Սվաճեան, Ժիլպէռ Թարգի, Արմենակ Գասապեան եւ ուրիշներ: Յանձնախումբերու կազմերուն իրենց մասնակցութիւնը բերած են Արմէն Գասապեան, Վիգէն Գրիգորեան, Պարոյր Տէր Պօղոսեան եւ Սիմոն Հասրըճեան՝ 1972ին եւ Գրիգոր Շիթիլեան, Ժիլպէռ Թարգի՝ 1973ին:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Թորոնթոյի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական կորիզի կազմութիւնը կը նախաձեռնուի մասնաճիւղի վարչութեան կողմէ, 4 Փետրուար 1970ի նիստի ընթացքին: Հազիւ երկու շաբաթ անց, 35 դայլիկներ կ'արձանագրուին մաս կազմելու գայ-

լիկական վոհմակին: Վարչութիւնը սկսածական աշխատանքները կը վստահի սկսածական խորհուրդի մը, որուն անդամներ կը նշանակուին Ժան Պապայեան, Յակոբ Արթինեան, Հուրի Տէրտէրեան եւ Սիւզի Գաւասեան: Վարչութեան ներկայացուցիչն է Գրիգոր Մալեգեան: Սկիզբը, սկսածական հաւաքոյթները կը կազմակերպուին ամսական հերթականութեամբ: Սկսածական խորհուրդի առաջին գործը կ'ըլլայ խումբը արձանագրել Գանատական ֆետերասիոնին մօտ:

Սկսածական առաջին բանակումները կը կազմակերպուին 1971ին, իսկ սկսածական հաւաքոյթները կը սկսին կայանալ շաբաթական հերթականութեամբ՝ 1971ի Դեկտեմբերէն սկսեալ:

1972ի Յունուարին, Սկսածական խորհուրդի անդամներ կը նշանակուին Անդրանիկ Արթինեան, Հրատ Փոլատեան, Յակոբ Գասարձեան, Երուանդ Շահինեան, Վրէժ Աւագեան, Հուրի Տէրտէրեան, Յակոբ Արթինեան եւ

Տոքթ. Կարպիս Մերձանեան: Վարչութեան ներկայացուցիչն է Գրիգոր Մալեգեան: Այս տարեշրջանէն սկսեալ սկսածական աշխատանքները կ'ընթանան կազմակերպչական եւ թեքնիք պատրաստութեան հիմունքներով: Հետզհետէ, աւելի փորձառու աստիճանաւորական կազմ մը կը ստանձնէ սկսածական շարքերու ղեկավարութիւնը:

1973ին, մինչեւ Հոկտեմբեր ամիսը, սկսած խմբապետի պաշտօնը կը վարէ Գէորգ Գաթարոյեան որմէ ետք նոյն պաշտօնը կը վստահուի Ալեքս Մարտիրոսեանին:

1974 տարուան վարչական կազմի սկսածական ներկայացուցիչն է Վարդ Զաքարեան: Վարչութիւնը ինք կը վարէ տարուան սկսածական աշխատանքները՝ քայլարշաւ, սկսածական արշաւներ, բանակում, խարուկահանդէս, դպրոց բանակում եւ յարակից աշխատանքներ: Սկսածական միաւորը կը գործէ չորս բաժամունքներով՝ սկսած, գայլիկ, արենուշ եւ արծուիկ:

ԳԼՈՒԽ ՏԱՄԵԸԵՐԿՐՈՐԴ

ԱԻՍՏՐԱԼԻԱ

- ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ
- ՍԻՏՆԻ
- ՄԵԼՊՈՒՌՆ
- ՖԵՅՐՖԻԼՏ
- ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ ԽԱՂԵՐ



Աստրալիոյ անդրանիկ նախաարդեան խաղերուն մասնակից Սիտնիի եւ Մելպուռնի ֆութպոլի խումբերը, 1968ին



Սիտնիի աւագ մասնաճիւղի առաջին սկաուտական աստիճանաւորական կապմը



Սկաուտական յատուկ դասընթացի մասնակից Սիտնիի սկաուտ խմբապետներ

ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Աւստրալիոյ գլխաւոր ոստան Սիտնիի մէջ, կարեւոր թիւով հայեր կայք հաստատած են 1960ական թուականներէն սկսեալ, գալով գլխաւորաբար Մերձաւոր Արեւելքի երկիրներէն: Նախապէս գտնուող շատ փոքրաթիւ հայեր ազգային կազմակերպուած կեանք չեն ունեցած:

Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ մասնաճիւղը Սիտնիի մէջ հիմնուած է 1965ին: Յաջորդ տարին հիմնուած է նաեւ երկրորդ կարեւորագոյն մասնաճիւղը՝ Մելպուռնի Հ.Մ.Ը.Մ.ը:

Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառոյցի կազմութեան շրջանին այս երկու մասնաճիւղերը՝ իբրեւ մեկուսի մասնաճիւղեր միացան կեդրոնին: Աւելի ուշ հիմնուեցան 1974ին, Արեւմտեան Սիտնիի Ֆէյրֆիլտի շրջանի մասնաճիւղը, 1979ին հիմնուեցաւ մայրաքաղաք Գամպերայի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը, կարճատեւ ժամանակի մը համար, շատ սահմանափակ պայմաններու մէջ, 1981ին՝ Սիտնիի արեւելեան շրջանի մասնաճիւղը եւ 1989ին, նորագոյն մասնաճիւղը՝ «Արարատ»:

Աւստրալիան իր շրջանային կառոյցը ունեցաւ 1979ին:

Ներկայ հատորի սահմաններուն մէջ կ'իյնան աւագ մասնաճիւղ՝ Սիտնիի (հիւսիսային Սիտնի), Մելպուռնի եւ Ֆէյրֆիլտի (արեւմտեան Սիտնի) մասնաճիւղերու գործունէութիւնները:

ՍԻՏՆԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ առաջին մասնաճիւղն է Սիտնիի հիւսիսային շրջանի հայաշատ կեդրոնի մասնաճիւղը: 5 Մարտ 1965ին, 40 անդամներու ներկայութեամբ մասնաճիւղի հիմնադիր ժողովը կ'ընտրէ անդրանիկ վարչութիւնը, որուն մաս կը կազմեն.-

Ատենապետ՝ Արսէն Հեքիմեան
Ատենադպիր՝ Պերճ Մոմճեան
Գանձապահ՝ Յակոբ Քորթեան
Սկաուտ խմբապետ՝ Յովհաննէս Մարտոյեան

Մարզական պատասխանատու՝ Ճորճ Աբոշեան

Ֆուտպոլի պատասխանատու՝ Զաւէն Սարգիսեան

Գոյքապահ՝ Սիմոն Քիւրտոզլեան:

Այս կազմը առաջին հերթին կապ կը հաստատէ Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան հետ, տեղեկացնելու համար մասնաճիւղի կազմութիւնը:

Շրջանային Վարչութիւնը 21 Մարտ 1965 թուակիր նամակով կը վաւերացնէ մասնաճիւղի կազմութիւնը եւ նորընտիր վարչական կազմը:

Շուտով մասնաճիւղին շուրջ կը հաւաքուի շրջանի հայ մարզասէր երիտասարդութիւնը կազմելու համար մարզական խումբեր՝ ֆուտպոլ եւ պասքեթպոլ: Միաժամանակ կը նախաձեռնուի սկաուտական կորիզի մը կազմութեան, խմբապետութեամբ Յովհաննէս Մարտոյեանի:

Յետ միամեայ գործունէութեան անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ 1966-67 տարեշրջանի վարչական կազմը հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Արսէն Հեքիմեան

Փոխ ատենապետ՝ Արդուշ Աղամալեան

Ատենադպիր՝ Պերճ Մոմճեան

Գանձապահ՝ Քրիս Յակոբեան

Գոյքապահ՝ Պօղոս Պօղոսեան

Մարզական պատասխանատու՝ Սահակ Եղոյեան

Սկաուտական խմբապետ՝ Յովհաննէս Մարտոյեան

Խորհրդականներ՝ Վազգէն Փայլակեան, Աւետիս Գասապեան:

Վարչական այս երկրորդ կազմը յատուկ խնամքի կ'արժանացնէ սկաուտական բաժինը, որու անդամներու թիւը արագօրէն կը բազմա-

նայ: Մարզական ճիւղերուն վրայ կ'աւելնայ նաեւ փինկ-փոնկը եւ զանազան դասակարգի աթլետներու խումբի կազմութիւնը: Վարչութիւնը բարոյապէս կը նպաստէ Մելպուռնի նորակազմ մասնաճիւղի կազմութեան: Մարզական եւ սկաուտական խումբերը կը ստանան պետական վաւերացում արձանագրուելով պատկան Ֆետերասիոններու անդամակցութեան:

Սկաուտական վերին մարմին մը կը գործակցի վարչութեան: Մարմինն մաս կը կազմեն Յովհաննէս Մարտոյեան, Վազգէն Փայլակեան, Պերճ Մոմճեան, Գրիգոր Խաչատուրեան եւ Տիգրան Չորլեան:

Սկաուտական բաժնի ընդհանուր թիւն է 42, որոնցմէ 8 աստիճանաւորներ, 15 սկաուտ եւ 19 գայլիկ ամբողջապէս տարազաւորուած: Խումբը կը կազմակերպէ բանակումներ եւ կը պատրաստուի նորընծայի քննութեան:

19 Մարտ 1967ին, տեղի կ'ունենայ միաւորներու երդման արարողութիւն:

1967-68ի եղանակին վարչական կազմի անդամներու թիւը կը սահմանափակուի 7ի, դիւանի անդամները կը մնան իրենց պաշտօններուն վրայ: Գանձապահի պաշտօնը կը փոխանցուի Ջաւէն Բրուտեանին, իսկ Կարօ Մոմճեան կը ստանձնէ գոյքապահի պաշտօնը:

Մասնաճիւղը արդէն հաստատուած է Սիտնիի մէջ եւ հրապարակային, մարզական եւ սկաուտական բոլոր ձեռնարկները կը պսակուին յաջողութեամբ:

1968-69 տարեշրջանի վարչական կազմը զգալի փոփոխութիւններու կ'ենթարկուի մասնաճիւղի նորագոյն կարիքներու բաւարարութեան համար երիտասարդ ուժերու մասնակցութեամբ: Վարչական կազմին անդամներն են.-

- Ատենապետ՝ Արսէն Հեքիմեան
- Փոխ ատենապետ՝ Կարօ Մոմճեան
- Ատենադպիր՝ Սարգիս Տէր Պետրոսեան
- Գանձապահ՝ Ճորճ Աբոշեան
- Փոխ գանձապահ՝ Պերճ Մոմճեան

Մարզական պատասխանատու՝ Սահակ Եղոյեան

Գոյքապահ՝ Պօղոս Պօղոսեան
Սկաուտական խմբապետ՝ Յովհաննէս Մարտոյեան

Խորհրդականներ՝ Աբրահամ Նալպանտեան, Յարութ Ղազիկեան:

Յուլիսի խումբը 1968ի եղանակի աւարտին իր դասակարգի ախոյեանութեան բաժակին կը տիրանայ: Պասքետբոլի եւ փինկ-փոնկի խումբերը կը մասնակցին պատկան Ֆետերասիոններու ախոյեանութեանց մրցաշարքերուն: Սկաուտական երեք խումբեր՝ Առիւծ, Վագր, Անդրանիկ եւ գայլիկներու վոհմակը կը գործեն Սկաուտական Խորհուրդի հսկողութեամբ, կը կազմակերպեն շաբաթական հաւաքոյթներ, ծնողական հաւաքոյթներ, արշաւներ, կը մասնակցին ազգային եւ պետական պաշտօնական հանդիսութեանց:

Այս տարեշրջանին գլխաւոր իրականացումը պիտի ըլլար սեփական հողաչերտի մը գնումը, ուր պիտի կառուցուի մասնաճիւղի մարզական, սկաուտական եւ վարչական կարիքները հոգալու յարմար ահումբ-մարզադաշտ:

Տարուան նիւթական ընթացիկ գործառնութեան պատկերն է. մուտք՝ 2991 Աւստրալիական Տոլար, ելք՝ 2346 Ա.Տ.:

24 Օգոստոս 1969ին, անդամական ընդհանուր ժողովը կը գումարուի 47 անդամներու ներկայութեամբ: Լսելէ ետք շրջանաւարտ վարչութեան նիւթաբարոյական եւ սկաուտական գործունէութեանց տեղեկագրութիւնները, ժողովը զայն կը գտնէ «գնահատելի» եւ կ'ընտրէ 1969-1970 տարեշրջանի վարչական կազմ.-

- Ատենապետ՝ Արսէն Հեքիմեան
- Փոխ ատենապետ՝ Կարօ Մոմճեան
- Ատենադպիր՝ Յակոբ Մկրտիչեան
- Գանձապահ՝ Կոստիկ Մանուէլեան
- Փոխ գանձապահ՝ Գրիգոր Խաչատուրեան
- Մարզական պատասխանատու՝ Սահակ Պետրոսեան:

Այս կազմի գլխաւոր մտահոգութիւնն է նախապէս գնուած հողաչերտին վրայ կառուցուե-

լիք ակումբ-խաղավայրի շինութիւնը: Հողաշերտի ընդհանուր փոխարժէքն է 22.000 աւստրալիական տուար, որուն 17.000ը վճարուած է Հ.Մ.Ը.Մ.ի, Հ.Օ.Մ.ի եւ Հայ Մշակութային Միութեան միացեալ ճիգերով: Մնացեալ 5000 ա. տուարը վճարելի 5 տարիէն:

Մարզական եւ սկաուտական գործունէութիւնները կը զարգանան բնականոն աճով: Տարեշրջանի անդամներու ընդհանուր թիւն է 150, որոնցմէ 47 սկաուտական բաժինէն: Նոր հասնող հայ եկուորներ կը բոլորուին Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան շուրջ:

1970-71 տարեշրջանի վարչութեան մաս կը կազմեն.-

Ատենապետ՝ Արսէն Հեքիմեան
 Փոխ ատենապետ՝ Զաւէն Բրուտեան
 Ատենադպիր՝ Քրիս Փիլիպոսեան
 Գանձապահ՝ Կոստիկ Մանուէլեան
 Գոյքապահ՝ Գրիգոր Խաչատուրեան
 Խորհրդական՝ Պերճ Մոմճեան:

1971ի Հոկտեմբերին կը հիմնուի մասնաճիւղի արծուիկներու երամը, խմբապետութեամբ Ալիս Մոմճեանի եւ Անի Տէր Թադէոսեան: Ծնողական յանձնախումբը լայնօրէն կ'օժանդակէ սկաուտական աշխատանքներուն: Յանձնախումբի անդամներն են. Մարի Բաթարանեան, Լեւոն Շահինեան, Յակոբ Սողոմոնեան, Նազարէթ Վարդուկեան եւ սկզբնական շրջանին Խաչատուր Խաչատուրեան:

Աստիճանաւորական ցանցի անդամներն են.-
 Ընդհանուր խմբապետ՝ Յովհաննէս Մարտոյեան

Երէց սկաուտապետ՝ Վազգէն Փայլակեան
 Գայլիկապետ՝ Պերճ Մոմճեան

Փոխ երէց սկաուտապետ՝ Գրիգոր Խաչատուրեան:

Սկաուտական շարքերը կը մասնակցին ազգային եւ պետական տօնակատարութիւններու եւ տողանցքներու սկաուտական նուագախումբի առաջնորդութեամբ, արժանանալով քաղաքապետութեան եւ պաշտօնական անձնաւորութեանց գնահատանքին:

Մարզական գործունէութիւնը կը կեդրոնանայ նոյն մարզախաղերուն եւ տարեվերջի միջմասնաճիւղային խաղերու կազմակերպութեան շուրջ:

Այս կազմի գործունէութեան շրջանը պիտի երկարէր 17 ամիսներու վրայ: Տարեվերջին անդամներու ընդհանուր թիւն է 248, որոնցմէ 78ը սկաուտական շարքերէն:

Նկատի ունենալով շրջանի հետզհետէ բազմացող կարիքները եւ զօրացնելու համար Սիտնիի եւ Մելպուռնի մասնաճիւղերու գործակցութեան հիմերը, 1972ի վարչական կազմին կը տրուի աւագ վարչութեան հանգամանք: Այս դասաւորումը կ'ենթարկուի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան հաւանութեան: 6 Յունուար 1972ի ծրագրով անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութեան անդամներն են.-

Ատենապետ՝ Արսէն Հեքիմեան
 Փոխ-ատենապետ՝ Պողոս Պողոսեան
 Ատենադպիր՝ Էտի Վեցմատեան
 Փոխ ատենադպիր՝ Րաֆֆի Գրիգորեան
 Գանձապահ՝ Քրիս Փիլիպոսեան
 Փոխ գանձապահ՝ Ժիրայր Մոմճեան
 Գոյքապահ՝ Ժիրայր Կիրակոսեան
 Խորհրդականներ՝ Ժան Գէորգեան, Յովհաննէս Կիրակոսեան:

Տարեշրջանի ընթացքին Արսէն Հեքիմեան եւ Յովհաննէս Կիրակոսեան մեկնումի պատճառով կը դադրին վարչութեան մաս կազմելէ: Մասնաճիւղի անդամներու թիւը կ'արձանագրէ բացառիկ աճ 41 նորագիրներու մասնակցութեամբ: Վարչութիւնը զտումի եւ բիւրեղացման կ'ենթարկէ անդամական ընդհանուր ցանկը:

Վարչութեան նշանակած օժանդակ յանձնախումբերն են.-

Ֆուլթոլի յանձնախումբ՝ Ժիրայր Կիրակոսեան, Սահակ Եղոյեան, Վ. Մոմճեան, Յ. Էկիլեան, Ս. Վարպետեան եւ Գ. Խաչատուրեան:

Պասքեթպոլի յանձնախումբ՝ Էտի Վեցմատեան, Ժիրայր Մոմճեան, Շանթ Աւագեան, Գ. Գարտաշեան, Տ. Շապրճեան եւ Մ. Տայեան:

Փինկ-փոնկի յանձնախումբ՝ Րաֆֆի Գրիգորեան, Յ. Յովհաննէսեան, Է. Փամպուքեան, Ս. Մկրտիչեան եւ Ն. Սամուէլեան:

Աթլեթիզմի յանձնախումբ՝ Ժան Գէորգեան, Գ. Պիպերեան, Տ. Շապրճեան, Ն. Տէմիրճեան եւ Վ. Պօղոսեան:

Թենիսի յանձնախումբ՝ Րաֆֆի Գրիգորեան, Ն. Արսէնեան եւ Պ. Արսէնեան:

Ակումբի գնման խառն յանձնախումբի Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցիչներն են՝ Յակոբ Գորթեան, Պօղոս Պօղոսեան, Գ. Բրուտեան: Տարեշրջանի ընթացքին սոյն յանձնախումբի տեղեկագրէն ի յայտ կու գայ, թէ նախապէս գնուած Ryde շրջանի հողը ծախուած է 46.000 տոլարի, փոխարէնը գնուած է Terry Hillsի շրջանէն 4,75 էյքըր հողաշերտ մը 42.500 տոլարի: Խառն յանձնախումբը ներկայիս կը ծրագրէ այս հողաշերտին վրայ ակումբի եւ մարզադաշտի կառուցումները զոյգ հանգրուաններով: Այս ծրագրի իրականացման համար կը նախատեսուի շուրջ 100.000 ամստրալիական տոլար ծախս մը: Մասնաճիւղի կազմակերպական, մարզական եւ սկաուտական գործունէութիւնները կը յառաջդիմեն մեծաքայլ՝ հրապարակային, ընկերային զանազան ձեռնարկներ կ'ընդլայնեն վարչութեան գործունէութեան դաշտը: Տարեշրջանի նիւթական գործունէութեան պատկերն է. մուտք՝ 3931 տոլար, ելք՝ 2018 տոլար:

Ներկայ վարչական կազմի գործունէութիւնը պիտի երկարէր մինչեւ 4 Մարտ 1973:

1973 տարուան վարչական կազմի անդամներն են.-

- Ատենապետ՝ Կարօ Մոմճեան
- Փոխ ատենապետ եւ սկաուտական ներկայացուցիչ՝ Պերճ Մոմճեան
- Ատենադպիր՝ Սարգիս Տէր Պետրոսեան
- Գանձապահ՝ Շանթ Աւագեան
- Գոյքապահ եւ մարզական ներկայացուցիչ՝ Ժիրայր Կիրակոսեան
- Խորհրդականներ՝ Սարգիս Տէր Վարդանեան, Գէորգ Թաշճեան:

Նախորդ տարեշրջանի կազմակերպչական, մարզական, սկաուտական եւ շինարարական աշխատանքները կը զարգանան նոյն թափով: Վարչութիւնը կը ծրագրէ Fairfieldի հայաշատ թաղամասին մէջ կազմել Սիտնիի երկրորդ մասնաճիւղ մը, նկատի ունենալով որ հեռաւորութեան պատճառով շրջանի հայութիւնը զուրկ կը մնայ Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութեան անմիջական մաս կազմելէ:

1974ի վարչական կազմը կը մնայ նոյնը, բացի Ժիրայր Կիրակոսեանէն, որ կը փոխարինուի Հրանդ Զուրիկեանով:

Սիտնիի մասնաճիւղի գոյութիւնը եւ յառաջիկայ տարիներու գործունէութեանց հեռանկարները հաստատ հիմերու վրայ դրուած են:

ՄԵԼՊՈՒՌՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

1966ի գարունէն սկսեալ Մելպուռնի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղ մը հիմնելու ծրագիրը հող կը գտնէ Աւստրալիոյ անդրանիկ մասնաճիւղի՝ Սիտնիի գործակցութեամբ: Մասնաճիւղը պաշտօնապէս գործի կը ձեռնարկէ 22 Յունուար 1967ի հիմնադիր ժողովէն սկսեալ:

Մելպուռնի մասնաճիւղի կազմութեան պետական արտօնագրի դիմումը կը կատարուի նոյն տարին հետեւեալ անդամներու անունով. Պերճ Թաշճեան, Գալուստ Իբրաճեան եւ Վահան Եղիայեան:

Անդամական անդրանիկ ընդհանուր ժողովը 1967 տարեշրջանին համար կ'ընտրէ վարչական կազմ, որուն կ'անդամակցին Վարուժան Տաղալարեան, Կարօ Ատոմեան, Ա. Թօփալեան, Կ. Իբրաճեան, Ժան Ասալեան, Գալուստ Իբրաճեան եւ Նշան Խաչատուրեան: Վերոյիշեալ տարեշրջանը մասնաճիւղի վերջնական հաստատման շրջանը պիտի ըլլար: Մարզական գործունէութիւնը արագօրէն զարգանալով, Մելպուռնի մէջ

Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը կազմութիւնը գրա-
ւականը կը հանդիսանայ տեղւոյն ազգային
կեանքի զօրացման:

1968ի սկիզբը մասնաճիւղի անդամական
ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական
կազմ հետեւեալ ձեւով.

- Ատենապետ՝ Ժիրայր Ատոմեան
- Քարտուղար՝ Վահան Եղիայեան
- Գանձապահ՝ Ժան Ասալեան
- Գոյքապահ՝ Նշան Խաչատուրեան

Խորհրդականներ՝ Ասատուր Խաչատուրեան,
Կարօ Ատոմեան, Վարդան Մելքոնեան:

Այս կազմը կը յաջողի զարգացնել մարզա-
կան խումբերու թեքնիք կարողութիւնները:
Ֆուտպոլի տղոց խումբը, պասքեթպոլի եւ վոլի-
պոլի երկու սեռերու խումբերը շուտով կը յա-
ջողին կարեւոր մրցակիցները դառնալ Սիտնիի
քոյր մասնաճիւղի համապատասխան խումբե-
րուն եւ կը մասնակցին Մելպուռնի պատկան
Ֆետերասիոններու մրցաշարքերուն: Մելպուռ-
նի մասնաճիւղը իր գործունէութեան մասին
տեղեկագրութիւններ կ'ուղարկէ Սիտնիի մաս-
նաճիւղին:

1969 տարեշրջանին վարչական կազմը հիմ-
նովին փոփոխութեան կ'ենթարկուի: Նորակազմ
վարչութեան անդամներն են.-

- Ատենապետ՝ Գալուստ Իբրաճեան
- Ատենադպիր՝ Տիգրան Շապտճեան
- Գանձապահ՝ Պետրոս Ադամեան
- Հաշուապահ՝ Եսայի Շէօհմելեան
- Գոյքապահ՝ Ալպեր Գերեան:

Կազմակերպչական եւ մարզական բաժիննե-
րը կը գործեն բնականոն ընթացքով մինչեւ
1970 թուականի կէսերը, երբ 21 Յունիս 1970ի
անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած
վարչութիւնը առաջին անգամ ըլլալով ուղղակի
կապ կը հաստատէ Մերձաւոր Արեւելքի Շրջա-
նային Վարչութեան հետ, խնդրելով նորընտիր
վարչական կազմի վաւերացում:

Նորընտիր վարչութեան մաս կը կազմեն.-
Ատենապետ՝ Եսայի Շէօհմելեան

- Փոխ ատենապետ՝ Պերճ Թաշճեան
- Ատենադպիր՝ Սեպուհ Գուզունեան
- Գանձապահ՝ Պետրոս Ադամեան
- Փոխ-գանձապահ՝ Օննիկ Պաղտիկեան
- Գոյքապահ՝ Ժան Ասալեան
- Խորհրդական՝ Գալուստ Իբրաճեան:

Այս կազմի ծրագրած կարեւորագոյն ձեռ-
նարկն է ցարդ կազմուած խնայողութեամբ սե-
փական նստավայր-ակումբ մը ունենալ եւ ստա-
նալ պետական պաշտօնական վաւերացում:
Առաջինի պարագային մասնաճիւղը կը գոր-
ծակցի Մելպուռնի Հայ Մշակութային Միու-
թեան հետ, որուն անդամներու մեծամասնու-
թիւնը նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի անդամներ են, իսկ պե-
տական արտօնութեան պարագային հարկ է ու-
նենալ նուազագոյնը 200 անդամ ինչ որ կարելի
կրնայ դառնալ միայն Հայ Մշակութային Միու-
թեան անդամներու միացումով իբրեւ մէկ
Մարմնի ենթակայ կազմակերպութիւն:

Այս ուղղութեամբ Շրջանային Վարչութեան
թեւադրանքն է որ պետական արտօնագիրը
առնուի Հ.Մ.Ը.Մ.ի անունով որ նաեւ կրնայ
մշակութային գործունէութիւն ունենալ:

1971 Հոկտեմբերին մասնաճիւղը կ'ունենայ
նշանակովի վարչական կազմ, Սիտնիի մասնա-
ճիւղի դասաւորումով, նկատի ունենալով որ
Շրջանային Վարչութիւնը Սիտնիի մասնաճիւ-
ղին կու տայ Աւստրալիոյ աւագ մասնաճիւղի
հեղինակութիւնը:

Նշանակովի վարչութիւնը կարճ ժամանակ
մը գործելէ ետք, 12 Մարտ 1972ին, գումար-
ուած անդամական ընդհանուր ժողովը 1972 տա-
րեշրջանի վարչական կազմի անդամներ կ'ընտրէ
հետեւեալները.-

- Ատենապետ՝ Գալուստ Իբրաճեան
- Փոխ ատենապետ՝ Րաֆֆի Խրլոբեան
- Ատենադպիր՝ Սեպուհ Գուզունեան
- Գանձապահ՝ Ժան Ասալեան
- Գոյքապահ՝ Նշան Խաչատուրեան

Խորհրդականներ՝ Վահան Եղիայեան, Վա-
րուժան Մանճեան:

Այս վարչական կազմի գլխավոր աշխատանքը պիտի ըլլար մասնաճիւղի կազմակերպական գործունէութեան զօրացումը նկատի ունենալով որ ներքին անհասկացողութիւններ նշանակովի վարչութեան օրով արգելք հանդիսացած էին մասնաճիւղի բնականոն գործունէութեան:

1 Յունիս 1973ին, մասնաճիւղը կ'ընտրէ նոր վարչական կազմ:-

Ատենապետ՝ Վարուժան Մանճեան

Ատենադպիր՝ Քրիստափոր Իբրաճեան

Գանձապահ՝ Գրիգոր Խաչատուրեան

Մարզական պատասխանատու՝ Վարուժան Մարտիրոսեան

Պասքեթպոլի պատասխանատու՝ Օննիկ Եսայեան:

1973ին, մասնաճիւղը կը հաշուէ 70 անդամ: Պասքեթպոլի տղոց կազմը կը մասնակցի Ֆետերասիոնի Բ. դասակարգի մրցաշարքին, իսկ աղջկանց կազմը Գ. դասակարգի մրցաշարքին: Ֆուտբոլի եւ ատլետիկայի խումբերը մաս չեն կազմեր պատկան ֆետերասիոններուն:

Մելպուռնի մասնաճիւղը փոխն ի փոխ Սիտնիի մասնաճիւղին հետ երկու տարին անգամ մը կը կազմակերպէ Աւստրալիոյ շրջանի Նաւասարդեան խաղերը իւրաքանչիւր տարուան Դեկտեմբերի վերջաւորութեան:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՍԻՏՆԻ - ՖԷՅՐՖԻԼՏ

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ԵՒ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

1973ի տարեվերջին, Սիտնիի արեւմտեան շրջանին Ֆէյրֆիլտի մէջ Հ.Մ.Ը.Մ.ականներու նախաձեռնութեամբ կը հիմնուի Աւստրալիոյ երրորդ մասնաճիւղը: Նախաձեռնութեան կը նպաստէ Սիտնիի աւագ մասնաճիւղի ղեկավարութիւնը, որ այս մասին տեղեակ կը պահէ Մերձաւոր Արեւելքի Շրջանային վարչութիւնը եւ կը ստանայ անոր քաջալերանքը:

Հիմնադրութեան նախապատրաստական աշխատանքներուն համար կը նշանակուի յանձնախումբ մը, որուն մաս կը կազմեն. Կարօ Արուշեան, Ռաֆայէլ Յակոբեան, Զարեհ Գարատաղեան, Գէորգ Պալպալեան, Արմէն Արսէնեան, Մանուկ Օհաննէսեան եւ Վազգէն Միրզոյեան: Յանձնախումբը առաջին հերթին կը կազմակերպէ թէյասեղան մը, ուր կը հրաւիրուի շրջանի հայ երիտասարդութիւնը: Տեղւոյն վրայ կ'ըլլան անդամագրուողներ: Ապա յանձնախումբը կը կազմակերպէ պարահանդէս մը, որուն յաջողութիւնը կը նպաստէ նաեւ մասնաճիւղի հաստատման: Յանձնախումբի երրորդ նախաձեռնութիւնը կ'ըլլայ սրահ մը վարձել իբրեւ աղումընստավայր:

Նախապատրաստական այս աշխատանքներէն ետք, 6 Մարտ 1974ին, կը կայանայ մասնաճիւղի անդրանիկ անդամական ընդհանուր ժողովը, որմէ կ'ընտրուի առաջին վարչութիւնը հետեւեալ կազմով:-

Ատենապետ՝ Յովհաննէս Մարտոյեան

Փոխ ատենապետ՝ Կարօ Արուշեան

Ատենադպիր՝ Ռաֆայէլ Յակոբեան

Գանձապահ՝ Վազգէն Միրզոյեան

Գոյքապահ՝ Մանուկ Օհաննէսեան

Խորհրդականներ՝ Ժողէֆ Գուլյումճեան, Արմէն Արսէնեան:

Հետզհետէ անդամներու թիւը բազմանալով կը կազմուի սկաուտական խումբը, որուն ղեկավարութիւնը կը վստահուի աստիճանաւորական կազմին՝ ընդհանուր խմբապետ՝ Յովհաննէս Մարտոյեան, օգնականներ՝ Զարեհ Օհաննէսեան եւ Արմէն Պոտիկեան:

Կը կազմուին նաեւ պասքեթպոլի, վոլիպոլի եւ այլ մարզական խումբեր, որոնք կ'արձանագրուին պետական պատկան ֆետերասիոններուն մօտ:

Ֆէյրֆիլտի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը իր ներդրումը կ'ունենայ շրջանի ազգային կեանքէն ներս:

1974ի տարեվերջին Ֆէյրֆիլտ կը մասնակցի

Աւստրալիոյ Հ.Մ.Ը.Մ.ի միջ-մասնաճիւղային 7րդ խաղերուն:

Գործունէութեան լայն հորիզոններ կը բացուին նորակազմ եւ աշխոյժ մասնաճիւղին առջեւ:

Միջ-մասնաճիւղային տարեվերջի խաղեր

1968էն սկսեալ Սիտնիի եւ Մելպուռնի մասնաճիւղերը աւանդութիւն դարձուցած են իւրաքանչիւր տարեվերջին, Դեկտեմբերի 25-30ի միջեւ կազմակերպել Աւստրալիոյ Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան խաղերը: Այս խաղերը կը կազմակերպուին յաջորդաբար տարի մը Սիտնիի յաջորդ տարին Մելպուռնի մէջ, մարզական նոյն յայտագիրներու գործադրութեամբ:

5 Յունուար 1968ին, առաջին Նաւասարդեան խաղերը կը կայանան Սիտնիի մէջ: Յայտագրին մաս կը կազմեն Ֆուլթայոլի, պասքէթպոլի, փինկ-փոնկի եւ աթլէթիզմի մրցումներ: Խաղերու աւարտին տեղի կ'ունենայ ընդհանուր տողանցք: Այս առաջին ելոյթի օրուան նախագահն է Յարութիւն Փափագեան:

Յաջորդող տարիներուն, աւանդական բնոյթ ստացած այս Նաւասարդեան խաղերը, Աւստրալիոյ շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերուն տարեկան գլխաւոր ձեռնարկը պիտի հանդիսանային միատեղելով շրջանի հայութիւնը երկօրեայ խանդավառ ելոյթներու շուրջ. հանդիպումները կ'աւարտին ճաշկերոյթ-պարահանդէսներով:



Սիտնիի Հ.Մ.Ը.Մ.ի պասքէթպոլի խումբը, 1969ին



Մելպուռնի եւ Սիտնեյի Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի խումբերը, 1969ին



Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական խումբերը կը տողանցեն Սիտնեյի թաղերուն մէջ:

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ՄԵՔՍԻՔԱ

– ՄԵՔՍԻՔՕ

Մեքսիքոյի մէջ 1925 - 1934 տասնամեայ գործունէութենէն ետք Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղը կը դադրի գոյութիւն ունենալէ:

Պէտք էր սպասել մինչեւ 1951 թուական, որպէսզի Մեքսիքոյի Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութիւնը վերսկսէր այս անգամ այլ դիմագիծով եւ «Հայ Մարմնակրթասիրաց Միութիւն» անուանակոչումով:

Արդարեւ Մեքսիքաբնակ Քերոբ Առաքելեան այդ թուականէն սկսեալ կը նախաձեռնէ Հ.Մ.Ը.Մ-ի ծանօթացման եւ տարածման Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Գանատայի մէջ, միաժամանակ նիւթական օժանդակութիւն ապահովելու համար Մերձաւոր Արեւելեան երկիրներուն մէջ գործող Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերուն:

Հայ Մարմնակրթասիրաց Միութեան հիմնադիր եւ գործադիր անդամները կ'ըլլան պատուոյ նախագահութեամբ Ճորճ Մարտիկեանի.

Ատենապետ՝ Քերոբ Առաքելեան

Գանձապահ՝ Կարապետ Հեքիմեան

Խորհրդականներ՝ Գասպար Առաքելեան, Տիրան Ինճէյեան

Ատենադպիր՝ Լեւոն Պօտոսեան:

Այս մարմինը առաջին հերթին կապ կը հաստատէ Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան հետ, տեղեկանալու համար անոր ենթակայ մասնաճիւղերու կարիքներու մասին: Ապա մարմնի դիւանը կը խնդրէ Շրջանային Վարչութենէն, Մերձաւոր Արեւելքի մասնաճիւղերէն

Միացեալ Նահանգներ հաստատուած նախկին Հ.Մ.Ը.Մ-ականներու հասցէներ անոնց միջոցաւ կազմակերպական աշխատանք տանելու համար իրենց գտնուած շրջաններուն մէջ:

Շրջանային Վարչութիւնը, խանդավառուած, իր բարոյական կշիռը կը դնէ Մարմնակրթասիրացի տրամադրութեան տակ: Այս նպատակին կը ծառայեն նաեւ Պոսթընի մէջ հրատարակուող «Հայրենիք» օրաթերթի եւ «Հայրենիք» շաբաթաթերթի, ինչպէս նաեւ Լոս Անճելըսի «Ասպարէզ» օրաթերթի սիւնակները, Մարմնակրթասիրացի նպատակները արտայայտող յօդուածներով:

Մասնաճիւղը սպաներէնով կը կոչուի Union Fisico Cultural Armenia եւ իբրեւ կեդրոնական մարմին Հիւսիսային Ամերիկայի զանազան շրջաններուն մէջ գինք ներկայացնող անդամներ կը նշանակէ հետեւեալ ձեւով.

Թորոնթօ՝ Գ. Մակարեան

Տիթրոյիթ՝ Տէր Սուրէն Փափազեան

Գլիվըլէնտ՝ Խոսրով Եսայեան

Շիքահօ՝ Խորէն Հիւսիսեան

Ուաշինկթըն՝ Մարք Քէշիշեան

Նիւ Ճըրզի՝ Սարգիս Սիմոնեան

Պրոնքս՝ Ճոն Ակինեան

Ալպընի՝ Խաչիկ Խաչատուրեան

Սիրաքիւզ՝ Աբիկեան եղբայրներ

Սոլթ՝ Վարդան Գոստիկեան

Համիլթըն՝ Ճոն Մուրատեան

Յրէզնօ՝ Վ. Խաչերեան
Շիքալօ՝ Տոքթ. Ռոզ Մենենտեան
Նիւ Եորք՝ Տիկ. Զ. Սերոբեան
Ֆիլատելֆիա՝ Վահրամ Քելքեկեան
Թիխոուանա՝ Գիսակ Աւագեան
Տալաս՝ Ռէճէպեան

Սուրիոյ, Լիբանանի եւ Յորդանանի Շրջանային Վարչութիւնը վերոյիշեալ բոլոր հասցէներուն կ'ուղարկէ նկարներ, տեղեկագրեր եւ կառուցային բացատրողականներ, իր շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու եւ Շրջանային Վարչութեան գործունէութեան մասին, ծառայեցնելու համար իրենց շրջաններու մէջ Հ.Մ.Ը.Մ.ի ծանօթացման:


1953ին, Քերոբ եւ Գասպար Առաքելեաններ Նիւ Եորք կ'այցելեն նոյն նպատակի իրագործման համար:

Յունիսին Տիթրոյիթի մէջ կը կազմուի Միացեալ Նահանգներու անդրանիկ մասնաճիւղը, որ կապ կը հաստատէ Հայ Մարմնակրթասիրացի եւ Շրջանային Վարչութեան հետ: Նոյնպէս

1953ին, Լոս Անճելըսի մէջ կը կազմուի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ:

Հակառակ այս միացեալ ճիգերուն Մարմնակրթասիրացը 1954ին կը յանգի այն համոզումին, թէ Միացեալ Նահանգներու մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերը երկար կեանք չեն կրնար ունենալ եւ թէ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերը կրնան հակադրուիլ Հ.Ե.Դ.ի մարզական գործունէութեան:

1956ին, «Հայրենիք» օրաթերթը իր 5, 6 եւ 7 Յունիսի թիւերով յատուկ ներբողականը կը հիւսէ Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպութեան: Իսկ Հայ Մարմնակրթասիրաց Միութեան ղիւանը նամակով մը կը տեղեկացնէ Շրջանային Վարչութեան, թէ կը ծրագրեն Միացեալ Նահանգներու մէջ 2-3 ամիս տեւողութեամբ շրջապտոյտով մը նուիրահաւաք կատարել Մերձաւոր Արեւելքի Հ.Մ.Ը.Մ.ներու ծրագիրներուն ի նպաստ: Սակայն 1957էն սկսեալ Մարմնակրթասիրացի գործունէութիւնը կը դանդաղի, աւելի ուշ, վերջնականապէս դադրելու համար:



Գ. ՄԱՍ

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՌՈՅՑՆԵՐ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ

- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ
- ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ
- ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
- ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի մէջ, յետ պատերազմեան առաջին կազմակերպչական յաջողութիւնը կ'ըլլայ Գառլօ Շահինեանի եւ Գրիգոր Մերճանօֆի գլխաւորութեամբ կազմուած Առժամեայ Կեդրոնական Մարմինը, որուն նպատակն է Հ.Մ.Ը.Մ.ի Ֆրանսայի շրջանի վարչամեքենայի վերակազմութիւնը, հին ու նոր մարզական բոլոր հայակումբներու միացումով: Այս նպատակով կը ծրագրուի մօտ ապագային կազմակերպել Հ.Մ.Ը.Մ.ի Ֆրանսայի շրջանի պատգամաւորական ժողով, ընտրելու համար մնայուն կեդրոնական վարչութիւն: Մինչ այդ կը վերահրատարակուի «Հայ Սկսուտ» պաշտօնաթերթը «Հ.Մ.Ը.Մ.» անուան տակ:

1946ի Մայիս ամսուան ընթացքին, Ֆրանսահայ Երիտասարդաց Միութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Առժամեայ Կեդրոնական Մարմնի միջեւ կը կնքուի համաձայնութիւն մը, ըստ որում Ֆ.Ե.Մ.ը կը ձուլուի Հ.Մ.Ը.Մ.ի մէջ: Այս համաձայնագիրը Ֆ.Ե.Մ.ի կողմէ կը ստորագրեն, նախագահ՝ Պ. Մուրատեան եւ քարտուղար՝ Ժ. Տէր Թովմասեան, իսկ Հ.Մ.Ը.Մ.ի կողմէ նախագահ՝ Գառլօ Շահինեան եւ քարտուղար՝ Քերոբէ Ժպտունի: Այս ձեւով Հ.Մ.Ը.Մ.ի Առժամեայ Կեդրոնական Մարմնի ծրագիրներու առաջինը կը սկսի կեանք ստանալ:

Միւս կողմէ, Առժամեայ Կեդրոնական Մարմինը կը նշանակէ սկսուողական վերին մարմին մը, որուն կը վստահի սկսուողական բաժնի աշխատանքները:

Նոյն թուականներուն Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն սկսուող ազգային պետ՝ Գրիգոր Յակոբեան նշանակած էր սկսուողական վերին մարմին մը, որուն անդամներէն ոմանք մաս կը կազմէին Առժամեայ Կեդրոնական Մարմնի նշանակած սկսուողական վերին մարմնին: Այս ձեւով զոյգ սկսուողական վերին մարմինները կը գտնուէին Ֆրանսայի Հ.Մ.Ը.Մ.ի վարչամեքենային կապուած: Գրիգոր Յակոբեան, 1945էն սկսեալ

ծրագրած էր Հ.Մ.Ը.Մ.ի սկսուողական բաժինը անջատել մարզականէն, նկատելով որ գործի վրայ եղող ղեկավարները միայն ֆուտպոլով կը զբաղէին: Սակայն այս տրամադրութիւնը չէին բաժներ Գրիգոր Յակոբեանի անմիջական գործակիցները:

1946-47 տարեշրջանը Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու վերակազմութեան շրջանը պիտի հանդիսանար, բոլորուած գլխաւոր երեք կեդրոններու շուրջ: Առաջին՝ Փարիզ եւ շրջակայքը, երկրորդ՝ հարաւային Ֆրանսա, Մարսէյ եւ շրջակայքը եւ երրորդ՝ կեդրոնական Ֆրանսա, Լիոն եւ մօտակայ հայաշատ քաղաքները:

1946ի Ապրիլ ամիսէն սկսեալ, Առժամեայ Կեդրոնական Մարմինը լոյս կ'ընծայէ «Հ.Մ.Ը.Մ.» անունով իր ամսաթերթ պաշտօնաթերթը որպէս շարունակութիւնը 1936ին դադարած «Հայ Սկսուտ» պաշտօնաթերթին, ծանօթացնելու համար իր գործունէութիւնը:

Առժամեայ Կեդրոնական Մարմինը կը ծրագրէ ի մի հաւաքել Ֆրանսայի մէջ գործող բոլոր Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերը, Հ.Մ.Ը.Մ.ին միացնել հայ մարզական այլ խումբեր, ապա պատգամաւորական ժողով գումարելով ընտրել կեդրոնական վարչութիւն:

Տարեվերջին՝ 26 եւ 27 Դեկտեմբեր 1946ին, կը գումարուի Ֆրանսայի Շրջանային Պատգամաւորական ժողովը: Ժողովին կը հրաւիրուին բոլոր մասնաճիւղերու մարզական եւ սկսուողական բաժիններու ղեկավարներն ու խմբապետները: Ժողովի 26 Դեկտեմբերի առաջին նիստի բացումէն ետք եւ ժողովը վարող դիւանի ընտրութենէն առաջ, Վիէնի պատգամաւոր Տէրմոյեան, Վիէնի, Լիոն-Տէսինի եւ Մարսէյի պատգամաւորներու անունով յայտարարութիւն մը կը կարդայ որով, ըստ կարգի, կը մերժէ Հ.Մ.Ը.Մ.ի կառույցին նորօգ միացած «Նորք»ի, Ֆրանսահայ Երիտասարդաց Միութեան եւ Հայ Մարմնամարզական Միութեան զանազան մասնաճիւղերու պատգամաւորներու օրինականութիւնը:

Ա. նիստի փակումէն ետք, Տէրմոյեան եւ 8 այլ պատգամաւորներ կը քաշուին ժողովէն եւ

«Յառաջ» օրաթերթի մէջ տրուած յայտարարութեամբ մը հակաօրինական կը նկատեն պատգամաւորականի գումարումը - [Ը/9-10. 8,9,10,11]:

27 Դեկտեմբերին Բ. նիստը կը գումարուի հետեւեալ մասնաճիւղերու պատգամաւորներով.

Փարիզի շրջանէն՝ Փարիզ քաղաք, Առնուվիլ, Անիեռ, Պուա Գոլոմպ, Ալֆորվիլ, Արաքս մասնաճիւղ, Իսէ լէ Մուլինո, Իթալի, Պանիէօ, Մէօտոն, Գլամար, Շափիլ եւ Վիրոֆլէ:

Հարաւային շրջանէն՝ Պուշ Տիւ Ռօն, Սէնթ Անթոն, Պուլլար Օտտօ, Պօմոն, Գան, Ֆրէզ, Կարտան, Լա Սիոթա, Սէն Ժէրօմ, Վալպատէլ, Սէնթ Մարկրիթ, Սէն Լու, Էքս Ան Բրօվանս, Լիոն-Սեւան մասնաճիւղ, Վիէն Արարատ մասնաճիւղ, Տրակինյան, Նիս, Ինչպէս նաեւ Առժամեայ Կեդրոնական Վարչութեան Սկառուական Վերին Մարմնի ներկայացուցիչներ եւ կարգ մը հրաւիրեալներ եւ սկառու խմբապետներ - [Ը/9-10. 12, 13, 14, 15]:

Օրակարգի հարցերու լուծումէն ետք, Դ. նիստի վերջին օրակարգով, ձեռամբարձ քուէարկութեամբ, Ֆրանսայի Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան անդամներ կ'ընտրուին՝ Սպանդար Սարաֆեան, Ժիրայր Մինթանճեան, Վահրամ Սանոյեան, Յ. Գարայեան, Հայկազ Սինանեան, Վաղարշ Քիւփճեան, Ծերօն Ասատուրեան, Գարկայեան, Թագլորեան, Ուզունեան, Յովակիմեան, Հապէշեան եւ Վահրամ Խանճեան: Այս կազմին վրայ կ'աւելցուին հարաւային շրջանէն՝ Հրանդ Աթթարեան, Սարգիս Ալթունեան, Տաճատ Խաչիկեան, Անդրանիկ Պաղտասարեան, Համբարձում Մկրտիչեան եւ Չաքմաքճեան: Կեդրոնական Ֆրանսայի շրջանէն՝ Մամբրէ Ալթունեան, Յ. Պաղտասարեան, Եղիայեան եւ Մանուկեան - [Ը/9-10. 16, 17]:

Պատգամաւորական ժողովի փակումէն եռամսեայ մը ետք, 7 Ապրիլ 1947ին, մահկանացուն կը կնքէր յետ պատերազմեան վերակազմութեան ոգին ներշնչող՝ Գառլօ Շահինեանը, իսկ 22 Սեպտեմբեր 1949ին կը մահանար Գրիգոր Յակոբեան աւելի քան տասնամեակ մը պայքարելէ ետք անողոք հիւանդութեան դէմ:

Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադիրներէն զոյգ կարկառուն դէմքեր կ'անհետանային առ յաւիտ:

Առաջինը Ֆրանսայի Հ.Մ.Ը.Մ-ի յետ պատերազմեան վերակազմութեան ակնարկելով կը գրէր. «Պահը ուրեմն, ամէն ատենէ աւելի կը պահանջէ սերտ գործակցութիւն, ուժերու համախմբում, ամէն մէկը իր յատուկ գործունէութեան շրջանակին մէջ՝ զիրար լրացնելով, իրարու պօրավիգ կանգնելով:» «Այդ պայմանով միայն, ան կրնայ մնալ հաւատարիմ իր նշանաբանին՝ ԾԱՌԱՅԵԼ ԱԶԳԻՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ»:

Երկրորդը, նոյն նպատակով, 7 Մայիս 1945ին, կը շրջաբերէր.

«Սիրելի Տղաք...

..... Մի մոռնաք մեր երդումը կրկնել. ԾԱՌԱՅԵԼ ԱԶԳԻՍ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ»: Միութեան նպատակը նուիրագործող բառերու կրկնութիւն, որոնց տէրերը սակայն այնուհետեւ երբեք իրար չպիտի հանդիպէին....:

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Ֆրանսայի Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան յետ պատերազմեան հրապարակային գլխաւոր ելոյթը պիտի ըլլար 1968ին կազմակերպուած Յիսնամեայ Յոբելեանի հանդիսութիւնները Փարիզի մէջ: Այս առթիւ հրաւէրներ ուղղուած էին արտասահմանի մէջ գործող բոլոր Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերուն: Ճոխ յայտագրով հանդիսութիւնը տեղի ունեցաւ պատշաճ շուքով, 13 Հոկտեմբեր 1968ին, Միլիթիլալիթէի մեծ հանդիսասրահին մէջ:

9էն 11 Նոյեմբեր 1968ին Յիսնամեակի տօնակատարութիւն տեղի ունեցաւ Մարսէյի մէջ Հ.Մ.Ը.Մ.-Արծիւի կազմակերպութեամբ: Այս առթիւ Յիսնամեակի յատուկ յանձնախումբ մը կազմուեցաւ մասնակցութեամբ՝ Պ. Գալենտերեանի, Մկրտիչ Փափազեանի, Հրանդ Աթթարեանի, Տիգրան Փափազեանի եւ մասնաճիւղի հիմնադրութեան օրերու կարգ մը անդամներուն:

Ֆրանսահայ մամուլը այս գոյգ հանդիսութեանց եւ առհասարակ Հ.Մ.Ը.Մ-ի, Ֆրանսայի մէջ գործունէութեան մասին անդրադարձաւ քաջալերական սիւնակներով:

ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ

1946ին, Շրջանային նախկին խմբապետ Վազգէն Անդրէասեան (Ծեր Արծիւ) լոյս կ'ընծայէ «Հայ Սկաուտին Առաջնորդը» գործի Ա. հատորը օգտագործուելու համար սկաուտներու եւ պատասխանատուներու կողմէ: 18x13 սմ. ծաւալով 314 էջերէ բաղկացած այս հատորի առաջին մասը կը պարունակէ սկաուտութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի համառօտ պատմութեան բաժինը, մինչեւ էջ 86:

էջ 87էն սկսեալ Սկաուտական շարքերու կազմակերպչական բաժնի (organigramme) դասաւորումներն են գայլիկներու, սկաուտներու եւ երէցներու բաժանմունքներով:

էջ 107էն սկսեալ նորընծայ եւ Բ. կարգի սկաուտներու թեքնիք գիտելիքներու բաժինն է կազմակերպչական, աստիճաններու, արշաւներու եւ բանակումներու յատուկ օրէնքներով:

էջ 251էն սկսեալ հատորը կը պարունակէ հայոց պատմութեան հնագոյն ժամանակներէն մինչեւ Հայաստանի հանրապետութեան հաստատման շրջանի պատմութիւնը:

Պատկերազարդ այս հատորը մեծ ընդունելութիւն գտաւ Ֆրանսայի եւ արտասահմանի Հ.Մ.Ը.Մ-ի բոլոր մասնաճիւղերուն կողմէ, իբրեւ կարեւոր պակաս մը ամբողջացնող աշխատասիրութիւն եւ հայերէն լեզուով իր տեսակին մէջ հրատարակուած նորագոյն եւ ամբողջական հատոր:

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ

«Հ.Մ.Ը.Մ.» անուան տակ, 1946ի Ապրիլ ամիսէն սկսեալ, Գառլօ Շահինեանի եւ Գրիգոր Մերճանօֆի մղումով կը սկսի վերահրատարակուիլ նախկին Հայ Սկաուտ պաշտօնաթերթը,

որպէս չորրորդ շրջանի վերսկսում: Նախկին ծաւալով (27x18 սմ.), ամսաթերթի իւրաքանչիւր թիւը կը բաղկանայ 48 էջերէ: Թերթի արտօնատէրն է Քերովբէ Ժպտունի:

Պաշտօնաթերթի հրատարակութեան գլխաւոր նպատակն է Բ. Աշխարհամարտէն ետք միութենական գործունէութեան վերսկսում, արտասահմանի բոլոր մասնաճիւղերուն միջեկապի վերահաստատում: Այս նպատակով Գառլօ Շահինեան եւ Գրիգոր Մերճանօֆ պաշտօնաթերթի առաջին թիւի առաջնորդող յօդուածով որպէս Միութեան հիմնադիրներ «Յայտարարութիւն» վերտառութեամբ կը յայտնեն իրենց ծրագիրը:


- 1.- Պատերազմի դադարէն ետք Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութեան վերսկսում
- 2.- Առժամեայ կեդրոնական մարմնի մը նշանակում
- 3.- Հ.Մ.Ը.Մ-ի չէզոք եւ մարզական ոգիի վերահաստատում
- 4.- Հ.Մ.Ը.Մ-ի դրօշին տակ միացում բոլոր հայ մարզական շարժումներու
- 5.- Պաշտօնաթերթի վերահրատարակում
- 6.- Պատրաստութիւն պատգամաւորական ժողովի, ընտրելու համար Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական Վարչութիւն:

«Հ.Մ.Ը.Մ.» Հայ Սկաուտը, 1946ին լոյս տեսաւ 8 թիւերով: Ապա Գառլօ Շահինեանի մահէն ետք, 1947ի Ապրիլին լոյս տեսաւ 9-10 միացեալ թիւը, որ նաեւ պիտի ըլլար պաշտօնաթերթի վերջին թիւը:

1968ին Միութեան Յիսնամեակին առիթով, Ֆրանսայի Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ լոյս տեսաւ «Մարզաշխարհ» պարբերաթերթի առաջին թիւը:

Ֆրանսայի մէջ, Հ.Մ.Ը.Մ-ի վերականգնումը նպատակադրող 27x22 սմ. ծաւալով եւ 32 էջերէ բաղկացող այս հրատարակութիւնը իր յաջորդ թիւը պիտի չունենար:

Ֆրանսայի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի վերամիացեալ եւ կեդրոնացած գործունէութիւնը, հրատարակութեան ճամբով եւս, հասած էր իր վախճանին:



ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ
- ՄԱՐԶԱԿԱՆ
- ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ
- ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի յետ պատերազմ-
եան վերածնունդի գլխավոր առանցքը կը կազմէ
Շրջանային Վարչութեան գործունէութիւնը:
Անկախ իրենց կենսունակութիւնը վերագտնող
մասնաճիւղերուն տրուած աջակցութիւններէն,
իրարայաջորդ Շրջանային Վարչութիւնները
կ'ունենան կազմակերպչական, մարզական,
սկստական եւ հրապարակային լայն գործու-
նէութիւն, մնայուն ներկայութիւն դառնալով
մայրաքաղաք Աթէնքի մէջ եւ յաճախակի այցե-
լութիւններ տալով, հիւսիսային եւ հարաւային
Յունաստանի, ինչպէս նաեւ Կրէտէ կղզիի մաս-
նաճիւղերուն:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
ԵՒ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

1944ի վերջաւորութեան ու մանաւանդ 1945ի
գարունէն սկսեալ, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի
18րդ Պատգամաւորական ժողովէն ընտրուած
վարչութիւնը գործի անցաւ եւ աշխատանքի
լծուելու ազդանշանը տուաւ մասնաճիւղերուն:
Պատերազմի պատճառով նկուղը զետեղուած
գոյքերն ու տարագները լոյս աշխարհ բերուե-
ցան ու կրկին ծածանեցաւ «Բարձրացի՛ր -
Բարձրացո՛ւր» նշանաբանը կրող դրօշակը՝
առաջնորդելու համար 25 Մարտի հելլէն անկա-
խութեան տօնին առթիւ կազմակերպուած տո-
ղացքը - [ՀԱ. 175]:

Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի 19րդ Պատգամա-
ւորական ժողովի Ա. նիստը տեղի ունեցաւ 2
Փետրուար 1946ին, Յունաստանի Ֆուլթոնի
Ֆետերասիոնի սրահին մէջ: Ժողովին ներկայ
էին 18 պատգամաւորներ եւ հրաւիրեալներ:
Ժողովի օրակարգի գլխավոր նիւթն էր Յունաս-
տանի շրջանի նոր կանոնադրութեան մշակումն
ու վաւերացումը:

Ժողովի նախագահութիւնը վարեց Վարդ-
գէս Շահինեանը, իսկ քարտուղարութիւնը՝ Բա-
րելուր Թոսճեան: Օրակարգի նիւթերու քննու-
թենէն ետք Ա. նիստը փակուեցաւ: Բ. նիստը

գումարուեցաւ նոյն վայրին մէջ 8 Փետրուա-
րին: Ժողովի վերջին օրակարգով ընտրուեցաւ
նոր Շրջանային Վարչութիւն: Վերջինս իր դիւա-
նը կազմեց հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Գէորգ Յաբէթեան
- Փոխ ատենապետ՝ Յակոբ Տամլամայեան
- Ատենադպիր՝ Վարդգէս Շահինեան
- Գանձապահ՝ Կարապետ Մարութեան
- Խորհրդականներ՝ Դանիէլ Դանիէլեան, Լե-
ւոն Խաչատուրեան, Սուրէն Ճէնայեան, Յովհան-
նէս Յովհաննէսեան:

Այս կազմի գլխավոր իրականացումը եղաւ
Ֆուլթոնի մայր խումբի կազմութիւնը, պաս-
քեթպոլի մայր խումբի գործունէութիւնը, ինչ-
պէս նաեւ «Մարմնամարզ» պաշտօնաթերթի
հրատարակութիւնը: Իր երկամեայ գործունէու-
թեան աւարտէն առաջ Շրջանային Վարչու-
թիւնը կազմակերպեց, մասնաճիւղերու պատ-
գամաւորներուն, խմբապետներուն եւ բնութա-
պաշտներու վարչութեան ներկայացուցիչներուն
միջեւ խորհրդակցական ժողով մը քննելու հա-
մար երկամեայ գործունէութեան արդիւնքը:

Շրջանի 20րդ Պատգամաւորական ժողովը
տեղի ունեցաւ 15 Փետրուար 1948ին, Ազգային
Առաջնորդարանի սրահին մէջ: Ժողովին մաս-
նակցեցան՝ Սելանիկի, Սինկրուի, Ռէթիմոյի,
Գոքինիոյ, Ֆիքսի, Կրէտէի եւ բնութապաշտնե-
րու պատգամաւորները: Ժողովի օրակարգերն
էին՝

- ա. Զեկոյց Շրջ. Վարչութեան
- բ. Զեկոյց Պատգամաւորներու
- գ. Ընտրութիւն Շրջանային Վարչութեան
Պատգամաւորական ժողովի դիւանը կազմ-
ուեցաւ հետեւեալ ձեւով.-
- Նախագահ՝ Վարդգէս Շահինեան
- Քարտուղար՝ Համազասպ Մեհրապեան
- Ժողովի յաջորդող նիստերը տեղի ունեցան
20 եւ 25 Փետրուարին:

Վերջին օրակարգով ընտրուեցաւ Յունաս-
տանի նոր Շրջանային Վարչութիւն բաղկացած
հետեւեալներէն.-

- Գէորգ Յաբէթեան

Կարօ Մարութեան
Դանիէլ Դանիէլեան
Վարդգէս Շահինեան
Յակոբ Տամլամայեան
Համօ Մեհրապեան

Լեւոն Էօտէմիշեան- [ԽԵ/11.4.1948]:

Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանի 21րդ Պատգամաւորական ժողովին մասնակցեցան Սելանիկի, Ֆիքսի, Գոքինիոյ եւ Սինկրուի մասնաճիւղերու պատգամաւորները, կը բացակայէին Կրէտէի պատգամաւորները:

Ժողովի առաջին նիստը տեղի ունեցաւ 15 Մայիս 1949ի Կիրակի օրը, Աթէնքի Հայոց առաջնորդարանի սրահին մէջ: Ժողովին կը նախագահէր՝ Դանիէլ Դանիէլեան, քարտուղարութեամբ Համօ Մեհրապեանի, օրակարգի նիւթերն էին՝ մասնաճիւղերու գործունէութեանց զեկուցում, Շրջանային Վարչութեան գործունէութեանց զեկուցում, Ծրագիր-Կանոնագրի բարեփոխում եւ նոր Շրջանային Վարչութեան ընտրութիւն:

Երկրորդ նիստը գումարուեցաւ 18 Մայիսին, նախագահութեամբ Լեւոն Գայեանի: Այս նիստի ընթացքին լուծուեցան առկախ մնացած օրակարգերը եւ կատարուեցաւ նոր Շրջանային Վարչութեան ընտրութիւն: Վերջինս իր դիւանը կազմեց հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Գէորգ Յաբեթեան
Ատենադպիր՝ Սեդրակ Բարաղամեան
Յունարէնի ատենադպիր՝ Արամ Փափագեան
Գանձապահ՝ Լեւոն Խաչատուրեան
Սկաուտական ներկայացուցիչ՝ Վարդգէս Շահինեան
Գոյքապահ՝ Նազար Գալայճեան:

Տասը ամսուայ վրայ երկարող իր գործունէութեան միջոցին, այս կազմի գլխաւոր իրականացումը պիտի ըլլար մասնաճիւղերու ներքին կեանքի վերակազմակերպումը: Դէպի հայրենիք ներգաղթի պատճառով մասնաճիւղերու անդամական թիւի նօսրացումը ծանր պիտի կշռէր գործունէութեան ընթացքին վրայ: Առ այդ

Շրջանային Վարչութիւնը այցելեց մասնաճիւղերը եւ համերաշխութեան միջոցով մէջ վերակազմակերպեց եւ շարունակեց հսկել առանձնաբար իւրաքանչիւրին գործունէութիւնը:

19 Մարտ 1950ին, տեղի ունեցաւ Շրջանի 22րդ Պատգամաւորական ժողովը, Աթէնքի Ազգ. Առաջնորդարանի սրահին մէջ, ներկայութեամբ՝ Գոքինիոյ, Ֆիքսի, Սինկրուի, Սելանիկի, Նէա Ջմեռնիի, Բաթրասի մասնաճիւղերու եւ Բնութասէրներու պատգամաւորներուն, ինչպէս նաեւ Շրջանային Վարչութեան եւ սկաուտական խնամակալութեան ներկայացուցիչներուն եւ շարք մը հրաւիրեալներու:

Օրուայ նախագահ ընտրուեցաւ Վարդգէս Շահինեանը, քարտուղար՝ Բարելուր Թոսճեան:

Մասնաճիւղերու պատգամաւորներն էին.- Գոքինիայէն՝ Կարօ Մինասեան, Ս. Մովսէսեան, Յ. Բաթրուկեան, Յ. Գուլյումճեան, Պերճ Գրիգորեան, Ս. Թեպերիկեան:

Ֆիքսէն՝ Կ. Պալթայեան, Բ. Գալքճեան, Կ. Ճամուզեան եւ Ն. Եսայեան:

Սելանիկէն՝ Համբարձում Կիւտենեան եւ Բարելուր Թոսճեան:

Նէա Ջմեռնիէն՝ Յ. Պողոսեան:
Բաթրասէն՝ Անդրանիկ Էրջէնեան:

Շրջանային Վարչութիւնը կը ներկայացնէր Գէորգ Յաբեթեանը, իսկ սկաուտական խնամակալութիւնը՝ Վարդգէս Շահինեանը:

Մասնաճիւղերուն եւ Շրջանային Վարչութեան գործունէութեանց տեղեկագրութիւններու ընթացումէն ետք տեղի ունեցաւ նոր Շրջանային Վարչութեան ընտրութիւն: Վերջինս 21 Մարտի իր անդրանիկ նիստի ընթացքին կազմեց իր դիւանը հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Գէորգ Յաբեթեան
Փոխ ատենապետ՝ Համբարձում Կիւտենեան
Ատենադպիր՝ Բարելուր Թոսճեան
Գանձապահ՝ Լեւոն Խաչատուրեան
Սկաուտ. պատասխանատու՝ Վարդգէս Շահինեան

Խորհրդականներ՝ Ժ. Ճանիկեան, Յարութիւն Սվազլեան:

8 Ապրիլ 1951ին, տեղի ունեցաւ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի 24րդ Պատգամաւորական Ժողովը մասնակցութեամբ 7 մասնաճիւղերը ներկայացնող պատգամաւորներու: Ժողովի նախագահ ընտրուեցաւ Ա. Ճամճեան:

Կարդացուեցաւ եւ քննուեցաւ Շրջանային Վարչութեան եւ մասնաճիւղերու գործունէութեանց տեղեկագրեր, որոնցմէ ի յայտ կու գայ թէ 1950ի ընթացքին Յունաստանի Շրջանը կարելոր յառաջդիմութիւններ արձանագրած է: Անդամներու ընդհանուր թիւը բարձրացած է 800ի, իսկ հաւաքական պիւտճէն է 90 միլիոն տրախմի:

Ժողովը անցնող տարեշրջանի գործունէութեան համար «գոհացուցիչ» որակումը քուէրակեց, ապա ընտրուեցաւ նոր Շրջանային Վարչութեան կազմը, բաղկացած հետեւեալ անդամներէն. Գէորգ Յաբեթեան, Համբարձում Կիւտենեան, Վարդգէս Շահինեան, Լեւոն Խաչատուրեան, Ստեփան Նշանեան, Գ. Պետրոսեան եւ Դանիէլ Դանիէլեան: Նոր տարեշրջանի գործունէութեան նախագծին մաս կը կազմեն.-

ա) Միջ-մասնաճիւղային ողիմպիական խաղերու կազմակերպում

բ) Տղոց եւ աղջկանց պասքեթպոլի մայր խումբերուն արտասահմանէն մարզիչի մը ապահովում

գ) Միջ-մասնաճիւղային բանակումի կայացում

դ) Արտասահմանի քոյր մասնաճիւղերու այցելութիւն եւ մրցումներու կազմակերպում:

Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանի 25րդ Պատգամաւորական Ժողովը տեղի ունեցաւ 25 Մայիս 1952ին, Ֆիքսի կաթողիկէ հայոց հաստատութեան սրահին մէջ: Ներկայ էին 9 մասնաճիւղերը ներկայացնող 21 պատգամաւորներ, ինչպէս նաեւ Շրջանային Վարչութեան եւ սկաուտական խնամակալութեան մէկական ներկայացուցիչները: Ժողովի դիւանի կազմն էր. նախագահ՝ Վահագն Աբրահամեան, քարտուղար՝ Յակոբ Գաբթանեան:

Շրջանային Վարչութեան տեղեկագրէն ի

յայտ կու գայ որ շրջանը արձանագրած է միամեայ բեղուն գործունէութիւն եւ մասնաճիւղերու թիւը 7էն բարձրացած է 9ի:

Նոր տարեշրջանի համար գործունէութեան նախագիծի ուսումնասիրութենէն ետք, Շրջանային Վարչութեան անդամներ ընտրուեցան. Գէորգ Յաբեթեան, Դանիէլ Դանիէլեան, Ստեփան Նշանեան, Արամ Փափագեան, Յարութիւն Սվազլեան, Արամ Էսկիճեան եւ Լեւոն Խաչատուրեան:

Նորընտիր Շրջանային Վարչութիւնն ալ իր գործունէութեան գլխաւոր առանցքը դարձուց մասնաճիւղերու ներքին կազմակերպումը: Մարզական գետնի վրայ Շրջանային Վարչութեան մեծագոյն յաջողութիւնը եղաւ Ֆութպոլի մայր խումբի բարձրանալը՝ երրորդէն երկրորդ դասակարգ:

27 Սեպտեմբեր 1953ին, Գոքինիոյ «Զաւարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Շրջանի 26րդ Պատգամաւորական Ժողովը, Սելանիկի, Կրէտէի, Ֆիքսի, Գոքինիոյ, Աթէնքի, Նէա Զմիռնիի, Սինկրուի, Բնութասէրներու եւ սկաուտ խնամակալութեան պատգամաւորներուն ներկայութեամբ: Ժողովի վերջին օրակարգով ընտրուեցաւ 1953-54 տարեշրջանի համար նոր Շրջանային Վարչութիւն, որ իր դիւանը կազմեց հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Պատրիկ Սարգիսեան

Ատենադպիր՝ Ա. Օննիկեան

Գանձապետ՝ Յարութիւն Սվազլեան

Սկաուտական խմբապետ՝ Լեւոն Գայեան

Խորհրդականներ՝ Համբարձում Կիւտենեան, Ստեփան Նշանեան, Լեւոն Խաչատուրեան:

Այս կազմը շարունակելով նախորդներու ծրագիրը, յաւելեալ ուշադրութիւն ընծայեց մասնաճիւղերու յատուկ գործունէութեան: Մնայուն ներկայութիւն եղաւ անոնց ձեռնարկներուն եւ բարոյապէս օժանդակեց անոնց յաջողութեան, յաւելեալ ճիգ ընծայեց Հ.Մ.Ը.Մ.ի յունական պաշտօնական կազմերու եւ ազգային կեդրոնական Վարչութեանց միջեւ մշակուող փոխ յարաբերութեանց: 24 Մարտ 1954ին, յա-

տուկ շուքով նշեց Հելլեն ազգային տօնի տարե-
դարձը, ազգային առաջնորդարանի սրահին մէջ
սարքելով յարգանքի երեկոյ մը, ուր խօսք առին
բանաստեղծ գրագէտ Ե. Թէոտորիտիս, Ազգ-
Կեդրոնական Վարչութեան տանապետ՝ Պատ-
րիկ Սարգիսեան: Գեղարուեստական ճոխ յայ-
տագիր մը գործադրուեցաւ սոյն պաշտօնական
հանդիսութեան ընթացքին - [ԽԵ/8.2.1954]:

Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանի 27րդ
Պատգամաւորական ժողովը նոր գործունէու-
թեան ժամանակաշրջան մը բացաւ յաջորդող
Շրջանային Վարչութեանց առջեւ: Արդարեւ այս
ժողովէն սկսեալ որոշուեցաւ Շրջանային Վար-
չութեանց գործունէութեան ժամանակաշրջանը
բարձրացնել երկու տարիի, փոխան մէկի:

Ժողովը տեղի ունեցաւ 10 Հոկտեմբեր
1954ին, 26 պատգամաւորներու ներկայու-
թեամբ, բաժնուած հետեւեալ ձեւով.-

Շրջանային Վարչութիւն՝ Պատրիկ Սարգիս-
եան

Սելանիկ՝ Գէորգ Յաբեթեան, Դանիէլ
Դանիէլեան, Խաչիկ Բարթեմեան

Կրէտէ՝ Մկրտիչ Յաբեթեան, Աւետ Խաչա-
տուրեան

Ֆիքս՝ Վրէժ Գալայճեան, Գեղամ Սեֆեր-
եան, Կարպիս Գուլումճեան

Գոքինիա՝ Կարօ Մինասեան, Անդրանիկ Գո-
ճայեան, Սարգիս Շանկայեան

Բնութասէրներ՝ Անթառամ Մանուկեան,
Պօղոս Պօղոսեան, Գալուստ Գոհարունի, Զաւէն
Թոքաթլեան

Աթէնք՝ Ժիրայր Կիւզելեան, Արամ Փափագ-
եան, Հրայր Քէօթլեան.

Կեսարիանի՝ Երուանդ Քեմենչէճեան, Վար-
դուհի Սերեան, Զապէլ Մելքիսեան.

Նէա Զմիռնի՝ Վարուժան Պոյաճեան

Սկառուտական խնամակալութիւն՝ Պերճ
Գրիգորեան, Աբրահամ Գոճայեան, Խաչիկ Սեւ-
տայեան:

Պատգամաւորական ժողովի նախագահ
ընտրուեցաւ՝ Դանիէլ Դանիէլեան, Քարտուղար՝
Կարօ Մինասեան:

Մասնաճիւղերու եւ Շրջանային Վարչու-
թեան տեղեկագրութիւններէն ի յայտ կու գայ-
1954ի ընթացքին իրականացած բեղուն գործու-
նէութիւն, անդամական ընդհանուր թիւի աճ՝
523էն բարձրացած 607ի, Փութպոլի եւ պասքեթ-
պոլի մայր խումբերու եւ մասնաճիւղային բազ-
մաթիւ խումբերու մասնակցութիւն շրջանային
եւ համահեղինական ախոյեանութիւններու
մրցաշարքերուն:

Նոր զոյգ տարեշրջանի 1954-1956ի կիսուն
պիտի գումարուի Պատգամաւորական ժողով,
նոյն օրակարգերով, բացի Շրջանային Վարչու-
թեան մը ընտրութիւն:

Կիրակի 16 Հոկտեմբեր 1955ին, տեղի ունե-
ցաւ Յունաստանի 28րդ Պատգամաւորական ժո-
ղովը, Ֆիքսի հայ կաթողիկէ հաստատութեան
սրահին մէջ:

Բացի 26 լիազօր պատգամաւորներէն, ժողո-
վին ներկայ էին Շրջ. Վարչութեան անդամներ,
Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամներ՝
Գրիգոր Բարաղամեան եւ Գ. Գրիգորեան, Մար-
գասէրներ եւ Հ.Մ.Ը.Մ.ականներ, վերջինները
ուսկնդիրի հանգամանքով:

Մասնաճիւղերու եւ Շրջանային Վարչու-
թեան տեղեկագիրներու ընթերցումէն ետք
Շրջանային Վարչութեան գործունէութիւնը
«գնահատելի» բանաձեւով որակուեցաւ:

Առնուեցան յառաջիկայ շրջանի համար գոր-
ծադրելի որոշումներ՝ Փութպոլի դաշտի գնում
եւ միացեալ յանձնախումբի մը նշանակում:

Նորընտիր Շրջանային Վարչութեան ատե-
նապետի պաշտօնը կը վարէ Պատրիկ Սարգիս-
եան:

29րդ. Պատգամաւորական ժողովը կայացաւ
21 Հոկտեմբեր 1956ին, Ֆիքսի հայ կաթողիկէ
հաստատութեան սրահին մէջ, ներկայութեամբ
23 լիազօր պատգամաւորներու: Նորընտիր
Շրջանային Վարչութեան մաս կը կազմեն՝
Պատրիկ Սարգիսեան, Դանիէլ Դանիէլեան,
Ստեփան Նշանեան, Յարութիւն Սվազլեան,
Աւետիս Խաչատուրեան, Հրայր Քէօթլեան, Լե-
ւոն Խաչատուրեան, Ա. Գոճայեան եւ Լեւոն
Գայեան:

Վեց մասնաճիւղերու, սկսած խնամակալութեան եւ Բնութասէրներու 30 իրաւասու ձայնով պատգամաւորներու մասնակցութեամբ՝ Շրջանի 30րդ Պատգամաւորական ժողովը տեղի ունեցաւ 3 Նոյեմբեր 1957ին: Ժողովին նախագահեց Ժիրայր Կիւզելեան, քարտուղարութեամբ Կարօ Մինասեանի: Նախ կարգացուեցան Շրջանային Վարչութեան եւ մասնաճիւղերու միամեայ գործունէութեանց տեղեկագրութիւնները, որոնցմէ ի յայտ կու գայ որ Յունաստանի շրջանը կը հաշուէ շուրջ 550 անդամ եւ բոլորած է խիստ գնահատելի գործունէութեան տարեշրջան մը: Ժողովի վերջին օրակարգով, մէկ տարուայ ժամանակաշրջանի համար, նախկին Շրջանային Վարչութիւնը նոյնութեամբ վերընտրուեցաւ:

8 Փետրուար 1959ին, Շրջանի 31րդ Պատգամաւորական ժողովէն ընտրուած Շրջանային Վարչութեան կազմը կը բաղկանայ միայն եօթը անդամներէ՝ Պատրիկ Սարգիսեան, Դանիէլ Դանիէլեան, Ստեփան Նշանեան, Աւետ Խաչատուրեան, Յարութիւն Սվազլեան, Լեւոն Գայեան եւ Եղիա Ճամուկեան: Այս կազմը պիտի գործէր երկու տարի: 13 Մարտ 1960ին, Շրջանային Վարչութիւնը 32րդ Պատգամաւորական ժողովին ներկայացուց իր միամեայ գործունէութեան տեղեկագիրը, որմէ ի յայտ կու գայ որ Շրջանի 7 մասնաճիւղերը յաջողած են բոլորել արդիւնաբեր տարեշրջան մը: Շրջանային Վարչութեան գլխաւոր իրագործումը եղած է Հ.Մ.Ը.Մ.ը օժտել մարզադաշտով: Արդարեւ Հայ Կապոյտ Խաչի Ֆիքսի հողամասին վրայ, Հ.Մ.Ը.Մ.ը պիտի ունենայ, մարզադաշտի կողքին, ակումբ մը գրասենեկային զանազան բաժիններով: Ժողովի դիւանի կազմն է. նախագահ՝ Արչաւիր Ճամճեան, քարտուղարուհի՝ Ն. Քեմենչէճեան: Լսելէ ետք վերոյիշեալ տեղեկագիրը ժողովը իր վստահութեան քուէն կու տայ Շրջանային Վարչութեան, շարունակելու համար իր ժամանակաշրջանի երկրորդ տարին:

19 Մարտ 1961ին, կը գումարուի Յունաստանի 33րդ Շրջանային Պատգամաւորական ժողովը,

Աթէնքի Առաջնորդարանի սրահին մէջ, նախագահութեամբ Արչաւիր Ճամճեանի եւ քարտուղարութեամբ Մատթէոս Աջապահեանի: Լսելէ ետք շրջանաւարտ Շրջ. Վարչութեան եւ մասնաճիւղերու գործունէութեանց տեղեկագիրները, ժողովը քննարկեց զանոնք: Ապա եղան յառաջիկայ շրջանի համար առաջարկներ:

Նորընտիր վարչութիւնը որ պիտի գործէ 18 ամսուայ ժամանակաշրջանի մը ընթացքին կը բաղկանայ հետեւեալներէն. Պատրիկ Սարգիսեան, Դանիէլ Դանիէլեան, Լեւոն Գայեան, Յարութիւն Սվազլեան, Աւետ Խաչատուրեան, Լեւոն Խաչատուրեան եւ Պօղոս Պօղոսեան: Հաշուեքննիչ յանձնախումբի անդամներն են Վահէ Փաթուկեան, Պ. Գաթրճեան եւ Յակոբ Տէր Յովակիմեան:

Այս վարչութեան կարեւոր իրագործումը եղաւ Ֆիքսի Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Վարժարանին կից Առաքելեան պասքեթպոլի մարզադաշտի շինութիւնը Քերովբէ Առաքելեանի մեծագումար նուիրաբերումով: Նոյնքան կարեւոր գումարի նուիրաբերումով, բարերար՝ համբարձում Կիւտենեան յաջողցուց մարզադաշտի շինութեան ամբողջացումը: Մարզադաշտի բացումը տեղի ունեցաւ 15 Ապրիլ 1963ին: Տեղի ունեցաւ տողանցք եւ մրցում Աթէնքի եւ Սելանիկի պասքեթպոլի խումբերուն միջեւ: Մարզադաշտի հողամասը սեփականութիւնն է Յունաստանի Հայ Կապոյտ Խաչին:

1962ի 34րդ զեկուցական Պատգամաւորական ժողովէն ետք, Շրջանի 35րդ Պատգամաւորական ժողովը տեղի ունեցաւ 1 Մարտ 1964ին, Ֆիքսի Լ. եւ Ս. Յակոբեան վարժարանի «Հայաստան» ակումբին մէջ, ներկայութեամբ 19 իրաւասու ձայնով պատգամաւորներու: Կարգացուած տեղեկագրութիւններէն ի յայտ կու գայ թէ Շրջանային Վարչութիւն եւ մասնաճիւղեր բոլորած են արդիւնաբեր երկամեայ շրջան մը կազմակերպչական, մարզական եւ սկստական ճիւղերէն ներս: Ելեւմուտքի հաշիւը կը բարձրանայ 170.000 տրախմի: Յետ նոր գործունէութեան նախագիծի վաւերացման, 1964-65 տա-

րեչրջանի համար ընտրուեցաւ նոր Շրջանային Վարչութիւն, որուն մաս կը կազմեն. Պատրիկ Սարգիսեան, Դանիէլ Դանիէլեան, Համբարձում Կիւտենեան, Լեւոն Գայեան, Յարութիւն Սվազլեան, Պօղոս Պօղոսեան եւ Յակոբ Ճելալեան:

1965ի, 36րդ. Պատգամաւորական ժողովէն ընտրուած Շրջանային Վարչութեան կազմը կը մնայ նոյնը բացի Ստեփան Պալեանէն, որ կը փոխարինէ հանգուցեալ Համբարձում Կիւտենեանը, փոխ քարտուղարի պաշտօնով:



Յունաստանի 1965-68 տարեշրջաններու Շրջանային Վարչական կապմը: Ոտքի՝ Լեւոն Գայեան, Յարութիւն Սվազլեան, Ստեփան Նշանեան, Աւետ Խաչատուրեան Նստած՝ Դանիէլ Դանիէլեան, Պատրիկ Սարգիսեան, Համբարձում Կիւտենեան

Յունաստանի Շրջանային 37րդ Պատգամաւորական ժողովը տեղի կ'ունենայ 20 Մարտ 1966ին: Ժողովին ներկայ են 20 լիազօր պատգամաւորներ: Դիւանին մաս կը կազմեն նախագահ՝ Յարութիւն Թազուրեան, քարտուղար՝ Յ. Մխիկեան: Որպէս կազմակերպչական նոր դասաւորում ժողովը կ'որոշէ որ Շրջանային Վարչութեան եւ մասնաճիւղերու վարչութիւններու գործունէութեան ժամանակաշրջանը երկարի երկու տարուայ վրայ, պայմանաւ որ առաջին տարուայ աւարտին վարչութիւնները իրենց տեղեկագրերով ներկայանան Շրջանային կամ անդամական ընդհանուր ժողովներուն եւ ստանան անոնց վստահութեան քուէն: Այս ժողովէն ընտրուած Շրջանային Վարչութիւնը իր դիւանը

կը կազմէ հետեւեալ ձեւով.

Ատենապետ՝ Պատրիկ Սարգիսեան
Փոխ ատենապետ՝ Լեւոն Գայեան
Ատենադպիր՝ Յարութիւն Թազուրեան
Գանձապահ՝ Պօղոս Պօղոսեան

Ֆուլթայոյի պատասխանատու՝ Յ. Գարագաշեան

Խորհրդականներ՝ Լ. Փափագեան, Ստեփան Պալեան:

Վերոյիշեալ կազմը միամեայ գործունէութենէ ետք, 26 Մարտ 1967ի 38րդ. պատգամաւորական ժողովին ներկայացուց իր գործունէութեան տեղեկագիրը եւ ստացաւ վստահութեան քուէ շարունակելու համար իր երկրորդ տարուայ գործունէութիւնը: Սակայն այս ժամանակաշրջանը երկարեցաւ 16 ամիսներու վրայ եւ 39րդ պատգամաւորականը տեղի ունեցաւ 28 Յունիս 1968ին, Ֆիքսի մասնաճիւղի ակումբին մէջ:

Նիւթական եւ բարոյական տեղեկագրերու ընթերցումէն ետք, տեղի ունեցաւ Յունաստանի Կեդրոնական Վարչութեան ընտրութիւն: Կազմի անդամներն են՝ Պատրիկ Սարգիսեան, Լեւոն Գայեան, Պօղոս Պօղոսեան, Յարութիւն Թազուրեան, Յարութիւն Գարագաշեան, Յարութիւն Նալճեան եւ Գեղամ Սեֆերեան:

Այս ժամանակամիջոցին Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ը կ'արձանագրէ մասնաճիւղերու գործօն գոյութեան զտում մը: Արդարեւ, 1971ի 40րդ Պատգամաւորականի բացումին գործունէայ մասնաճիւղերը թիւով միայն չորս են՝ Ֆիքս, Գոքինիա, Գարէա եւ Սելանիկ: Պատգամաւորական ժողովին կը նախագահէ Ժիրայր Կիւզելեան, ներկայ են 22 պատգամաւորներ: Մասնաճիւղերն ալ ունեցած են համեմատաբար ամփոփ գործունէութիւն, մարզական գործունէութիւնը կը գերազանցէ սկաուտականը, նիւթական դժուարութիւններ կ'արգելակեն յառաջդիմութիւնները:

Նորընտիր Շրջանային Վարչութեան գործունէութեան նախաձրագրի մը կազմութենէն ետք 1971-1973 երկամեակին համար ժողովը

չուլթեան հրապարակային անդրանիկ ելույթը կը հանդիսանայ, 1946ի Նաւասարդեան մրցումները որոնք տեղի կ'ունենան 14 Յուլիսին:

Նախորդող շաբաթներու ընթացքին Շրջանային Վարչուլթեան ներկայացուցիչները կ'այցելեն Ֆիքսի, Սինկրուի, Գոքինիոյ, Ամարուսի եւ Լիբազմայի մասնաճիւղերուն, խառն ժողովներով պատրաստելու համար յետ պատերազմեան այս առաջին միջ-մասնաճիւղային խաղերը եւ ընդհանուր տողանցքը՝ 400 սկաուտներու, մարզիկներու եւ դպրոցականներու մասնակցութեամբ: Խաղերը եւ ընդհանուր տողանցքը տեղի կ'ունենան Նէա Զմիռնիի «Բանէոնոս» մարզադաշտին վրայ, հովանաւորութեամբ Յունահայոց Առաջնորդ Մազլըմեան Արքեպիսկոպոսին եւ հասոյթը ամբողջութեամբ կը յատկացուի դէպի Հայաստան ներգաղթի կազմակերպիչ յանձնախումբի ֆոնտին:

Յաջորդող տարիներուն նոյն մարզահանդէսները տեղի կ'ունենան հերթական շարքով Շրջանի բոլոր մասնաճիւղերու սկաուտական շարքերուն եւ մարզիկներուն մասնակցութեամբ:

18 Հոկտեմբեր 1964ին, Էթնիքոսի մարզադաշտին վրայ՝ հետեւեալ յայտագրով.-

1. Տողանցք սկաուտներու եւ մարզիկներու
2. Երդման արարողութիւն
3. 100 մ. վազք՝ մեծերու
4. 80 մ. վազք՝ փոքրերու
5. 400 մ. վազք՝ մեծերու
6. 800 մ. վազք՝ մեծերու
7. Մէկ քայլ ոստում
8. Բարձրութիւն ցատկել
9. Գունդ արձակել
10. Սկաւառակ արձակել
11. 4x100 մ. դրօշարշաւ մասնաճիւղերու միջեւ
12. Մրցանակներու բաշխում:

Ներկայ հատորի ժամանակաշրջանին, վերջինը կը կայանայ 21 Հոկտեմբեր 1973ին, մասնակցութեամբ Ֆիքսի, Գոքինիոյ եւ Գարէայի մասնաճիւղերուն, Ֆիքսի Առաքելեան - Կիւտենեան

մարզադաշտին վրայ: Ընդհանուր տողանցքէն ետք Յունահայոց Առաջնորդ Սահակ Արքեպիսկոպոս Այվազեան, որ կը հովանաւորէր օրուայ հանդիսութիւնը, ոգեւոր ճառով մը քաջալերեց Հ.Մ.Ը.Մ.ը շարունակելու իր հայակերտ առաքելութիւնը եւ... «փարած մնալ այն աւանդութիւններուն, որոնց միջոցով պիտի կարենանք պահել մեր ազգային գոյութիւնը՝ հիւրընկալ այս ափերուն վրայ»- [ԽԵ/24.10.1973]:

Ֆուրսով

Յետ պատերազմեան մարզական գործունէութեան առաջնահերթ ճիւղը կը հանդիսանայ Շրջանային Վարչութեան հովանաւորութիւնը վայելող Ֆուլթպոլի կազմի մրցումները: Արդարեւ 1944-45ին, խումբը կը տիրանայ Յունաստանի երկրորդ դասակարգի ախոյեանութեան բաժակին: 1946-47 եղանակը նուազ բախտաւոր կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի համար, երբ խումբը կ'իջնէ Գ. դասակարգ: Այս ձախողութիւնը պատճառ կը հանդիսանայ որ Շրջանային Վարչութիւնը, 1948էն սկսեալ, կազմէ Ֆուլթպոլի մայր խումբը, բաղկացած Ֆիքսի եւ Գոքինիոյ մասնաճիւղերու լաւագոյն մարզիկներէն եւ կրկին Հ.Մ.Ը.Մ.ի կազմը կը մասնակցի Յունաստանի Բ. դասակարգի խումբերու ախոյեանական մրցաշարքերուն:

1949ին, խումբի տկարացման պատճառով, Շրջանային Վարչութիւնը յաւելեալ ճիւղերով կը վերակազմէ Ֆուլթպոլի մայր խումբը եւ 1950-51ի եղանակի նախատեսութեամբ, մարզիկները շուետական մարզանքով կը մարզուին պասքէթպոլի մարզիչ Մկրտիչ Պեյլերեանի կողմէ: Ֆուլթպոլի մայր խումբին կը մասնակցին՝ Վ. Էլմեսեքեան, Գ. Սեֆերեան, Ն. Եափուճեան, Վ. Գալայճեան, Ս. Սաղիրեան, Բիւզանդ ժամկոչեան, Յ. Տէմիրճեան, Յ. Գրչիկեան եւ Յովհաննէս Տանձիկեան:

Յատկանշական է արձանագրել թէ 1952ի Յուլիսին, երբ Ֆուլթպոլի խաղացողները ազատ կը կացուցուին իրենց ազգութենէն, առանց բացառութեան բոլոր խաղացողներն ալ կապ-

ուած կը մնան Հ.Մ.Ը.Մ.ի մայր խումբին: 1953ի եղանակին մայր խումբը կրկին կը բարձրանայ Բ. դասակարգ:

1956ին Փոլթապոլի խումբի անդամներն են Մ. Փիլիպոսեան, Հ. Վարդանեան, Յ. Իզմիրլեան, Նորայր Միքայելեան, Գէորգ Սեւակեան, Յ. Եզեկիէլեան, Հ. Մկրտիչեան, Մ. Սարաֆեան, Ս. Եափուճեան, Գուրգէն Սեֆերեան եւ Հ. Հաճեան:

1957ին, խումբին կը միանան Վահագն Սափուլեան, Տ. Յակոբեան, Ղ. Թոփճեան, Գ. Սեւակ, Ղ. Գասպարեան, Իսիրիկեան, Տ. Յակոբեան եւ Տոշոյեան:

Խումբը կը մասնակցի Ֆետերասիոնի կազմակերպած բաժակի մրցաշարքերուն եւ ախոյեանութեան:

Պասքերպոլ

1951ի Յունուարին, Սբ. Ծննդեան տօներուն առթիւ, Շրջանային Վարչութիւնը Աթէնք կը հրահրէ Սելանիկի մասնաճիւղի տղոց եւ աղջկանց պասքեթպոլի խումբերը, մրցումներ ունենալու համար Ֆիքսի մասնաճիւղի խումբերուն դէմ: Այս մրցումները յատուկ խանդավառութիւն կը ստեղծեն Աթէնքի շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի համակիր շրջանակներուն մօտ: Այս հանդիպումները ճամբայ կը բանան աւանդութեան մը որ յաջորդող տարիներու Սբ. Ծննդեան եւ Սբ. Զատիկուայ տօներուն առթիւ փոխադարձ այցելութիւններով Սելանիկի կամ Աթէնքի շրջանի մասնաճիւղերու խումբերուն միջեւ կը կրկնուին յոյն խանդավառութեամբ: Մրցում - այցելութիւնները կ'աւարտին Հ.Մ.Ը.Մ.ական միջոցառումով տիրապետուող խրախճանքներով: Անխափան յաջորդականութեամբ շարունակուող այս այցելութիւնները որոնք երբեմն եռանկիւն կամ քառանկիւն մրցաշարքերու կը վերածուին Ֆիքսի, Գոքինիոյ, Աթէնքի եւ Սելանիկի խումբերուն միջեւ, փնտռուած առիթներ կը դառնան Հ.Մ.Ը.Մ.ականներուն եւ համակիրներուն համար:

Ծանօթ է որ յունական պասքեթպոլի մակարդակը, եւրոպական չափանիշներու բաղդատմամբ, իր կարեւոր տեղը ունի: Հ.Մ.Ը.Մ.ի մայր խումբի կազմերը կը յաջողին քայլ պահել Յունաստանի զանազան դասակարգերու կազմերուն դէմ շատ պատուաբեր արդիւնքներով:

1954ի եղանակին, մայր խումբին մաս կը կազմեն՝ խմբապետ Սերգօ Իսկահատեան, Գ. Գաւատիաս, Մ. Տիոնեան, Յարութիւն Գոհարունի, Մ. Թորոսեան, Հ. Քէօթելեան եւ ուրիշներ: Առաջին անգամ ըլլալով եւ Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ Պոլսոյ կեդրոնականի պասքեթպոլի խումբը կ'այցելէ Աթէնք: 1959ի զատկական տօներու առթիւ Սելանիկի մէջ կազմակերպուած մրցաշարքին կը միացուին նաեւ Միութեան հիմնադրութեան քառասնամեակի տօնակատարութիւնները, որոնց ընթացքին մասնաճիւղին բազմամեայ ծառայութիւններ մատուցած անդամները յատուկ մետալներով կը վարձատրուին - [ԽԵ/12.5.59]:

1967ին մայր խումբը կրկին այցելութիւն կու տայ Սելանիկ, առաջնորդութեամբ՝ Սերգօ Իսկահատեանի: Այս մրցաշարքերուն յաղթանակները, գրեթէ միշտ, կ'երթան Սելանիկի մասնաճիւղի խումբին, բայց ձեռնարկներու յաջողութիւնը կը կայանայ անոր կանոնաւոր հերթականութեամբ կրկնուելուն եւ խումբերուն ընկերացող համակիրներու քաջալերանքներուն ու խաղերուն յաջորդող հակախաղերու կամ պարանցիկներու յաջողութեան մէջ:

Լոդ

Այս ճիւղի առաջին մրցումներուն, 1946ի Սեպտեմբերին, իրենց մասնակցութիւնը կը բերեն Ֆիքսի, Գոքինիոյ, Սինկրուի եւ Լիբազմայի մասնաճիւղերու լողորդները: Օրուայ լաւագոյն մարզիկը կը հանդիսանայ Գոքինիոյ մասնաճիւղէն Գառնիկ Ժամկոչեանը: Նոյն կարգի մրցումներ կը կազմակերպուին Շրջանային Վարչութեան կողմէ 1947ի ամրան եւ այս ձեւով շարունակաբար ամէն տարի Յունաստանի զա-

նազան վայրերուն մէջ: Յայտագրին մաս կը կազմեն 50մ, 100մ, 200մ, եւ դրօշարչաւի մրցումները տղոց եւ աղջկանց բաժիններով: 1954ի մրցումները յատուկ կարեւորութեամբ տեղի կ'ունենան Գալամոսի ծովափին: 1957էն սկսեալ լողի մրցումներուն կը մասնակցին նաեւ կրտսերները: Լողի մրցումներուն համար, Շրջանային Վարչութեան ընտրած ծովափները, իրենց գրաւչութեամբ պատճառ կը դառնան որ բազմաթիւ համակիրներ մասնակցին այս տեղափոխութեանց եւ մրցումներէն անդին նաեւ հաճելի օր մը անցնեն բնութեան մէջ: Այս կարգի յաջողութիւն մը պիտի ըլլար 10 Օգոստոս, 1958ի լողարչաւը դէպի Բորթո-Ռաֆթի - [ԽԵ/14.8.58]: 1962ին նոյնօրինակ ձեռնարկ մը կը կրկնուի, նոյն վայրին մէջ Աթէնքէն փոխադրելով 250 մարզիկներ եւ համակիրներ: 1964ին Ֆաներոմէնիի ծովափը:

Փինկ-փոնկ

Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան կազմակերպած առաջին միջ-մասնաճիւղային մրցաշարքը տեղի կ'ունենայ 1953ի Մարտ ամիսէն սկսեալ: Այս խաղերուն իրենց մասնակցութիւնը կը բերեն Ֆիքսէն՝ Գեղամ Սեֆերեան, Գուրգէն Սեֆերեան եւ Գրիգոր Հարոնեան:

Գոքինիայէն՝ Կ. Գնաճեան, Պ. Տայեան եւ Պետրոս Գաբրիէլեան:

Աթէնքէն՝ Յարութիւն Գոհարունի, Գրիգոր Տապանեան եւ Կարպիս Պապեան:

Սինկրուէն՝ Անդրանիկ Սիվրիկեան, Մանուէլ Յովհաննէսեան եւ Գէորգ Սիվրիսարեան:

Փինկ-փոնկի մրցաշարքն ալ կը կազմակերպուի պարբերական յաջորդականութեամբ: 1966ի ախոյեանն է Գարէայի մասնաճիւղէն՝ Արմենակ Ֆերմանեան:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Յունաստանի 19րդ Պատգամաւորական ժո-

ղովէն ընտրուած Շրջանային Վարչութիւնը, իր առաջին նիստին կը նշանակէ Սկաուտական Վերին Մարմինը հետեւեալ կազմով.

Վարդգէս Շահինեան՝ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ

Լեւոն Գայեան՝ Ֆիքսի վարիչ-խմբապետ

Կարպիս Տէր Մեսրոպեան՝ Գոքինիոյ խումբի պատասխանատու

Տիօնիկ Յարէթեան՝ յունական 34րդ խումբի պատասխանատու

Համօ Մեհրապեան՝ քարտուղար:

Սկաուտական Վերին Մարմինը նախ կը կազմակերպէ Գոքինիոյ, Ֆիքսի եւ Սինկրուի մասնաճիւղերու սկաուտական խումբերու աստիճանաւորական ցանցերը, ապա միջ-մասնաճիւղային արշաւներ եւ բանակումներ:

Միօրեայ արշաւներու ընթացքին կը կազմակերպէ զուտ սկաուտական գիտելիքներու յատուկ մրցանքներ եւ մարզական խաղեր: Բանակումները առիթ կը ստեղծեն բնութեան ծոցին մէջ գործնականապէս կիրարկելու սկաուտական գիտելիքները իրենց ընդհանուր սահմաններուն մէջ, բացօթեայ կեցութեան ճամբով զարգացնելու համար սկաուտներու չարքաչուութիւնը, միաժամանակ կազդուրելով զանոնք Ֆիզիքապէս:

Այս կարգի ընդհանուր բանակումներէն եղաւ 1949ի Օգոստոս 16էն Սեպտեմբեր 18 եւ 2էն 19 Սեպտեմբեր երկու բաժանումներով կայացած ամառնային քէմքը հփալի սարալանջին:

Աթէնքէն եւ Բիրէայէն ծնողներ եւ այցելուներ այս ժամանակամիջոցին գտնուեցան բանակողներու կողմէ պատրաստուած հանդէսներու, եկեղեցական արարողութիւններու եւ վայելեցին զուտ հայկական միջնորդի մէջ ընթացող բանակումներուն ազգօգուտ առաւելութիւնները: Այս նպատակին համար Շրջանային Վարչութիւնը նիւթական եւ բարոյական ամէն աջակցութիւն ընծայեց նախաձեռնութիւնները յաջողութեամբ պսակելով:

1950էն սկսեալ, Հ.Մ.Ը.Մ.ի կողմէ, Վարդգէս Շահինեան մաս կը կազմէ յունական Սկաուտական Վերին Մարմին, որուն նախա-

գահութիւնը կը վարէ Յունաստանի Բաւլոս թագաւորը: Շրջանային վարչութեան կողմէ ամառնային բանակումներու կազմակերպումը կը դառնայ աւանդութիւն մը եւ ամէն տարի Օգոստոս ամսուայ շուրջ կը կայանայ Յունաստանի զանազան շրջաններուն մէջ:

Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու կիրարկած սկաուտական աշխատանքները ուշագրաւ կը դառնան նաեւ Հելլէն Սկաուտական կեդրոնին կողմէ: Կեդրոնի ներկայացուցիչները ներկայ են մասնաճիւղերու կազմակերպած հանդիսութիւններուն եւ գովեստով կ'արտայայտուին Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան մասին: 1959ին Հելլէն կեդրոնը պաշտօնական հաւաքոյթով մը կը պատուէ Հ.Մ.Ը.Մ.ի Սկաուտական Շարժումի քառասնամեակը - [ԽԵ/ 9 Յունուար 1959]:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԱՍՈՒԹԱԲԵՐ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ

1946ի վերակազմութեան օրերէն սկսեալ Շրջանային վարչութիւնը կը կազմակերպէ իր առաջին պարահանդէսը իբրեւ հրապարակային գլխաւոր հասութեաբեր ձեռնարկ: Այս ձեռնարկը ամէն տարի կը կրկնուի բարոյական եւ նիւթական յաջողութիւններով: Պարահանդէսները առիթներ կը ստեղծեն Հ.Մ.Ը.Մ.ական եւ համակիր երիտասարդութեան հայկական միջնորդի մէջ վայելքի ժամեր անցնելու, ծանօթանալու իրարու եւ աւելի ուժգին կապուելու Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներուն:

Կազմակերպչական եւ մարզական գործունէութեան զուգահեռ, Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային վարչութեան ձեռնարկներէն են նաեւ Ազգային եւ պետական տօներու առթիւ կազմակերպուած հանդիսութիւնները: Իրենց կարգին մասնաճիւղերու սկաուտները կը մասնակցին պետական տօներու առթիւ ֆետերասիոնի կազմակերպած ելոյթներուն, ծաղկեպսակ զետեղելով Անժանօթ Ջինուորի յուշարձանին վրայ:

Այսպէս, 24 Մարտ 1954ին, Ազգային Առաջնորդարանի սրահին մէջ Շրջանային վարչու-

թիւնը կը նախաձեռնէ Յունաստանի, 25 Մարտի, Ազգային տօնի նշումին, պաշտօնական հանդիսութեամբ մը, որուն ընթացքին խօսք կ'առնեն Շրջանային վարչութեան ատենապետ՝ Պատրիկ Սարգիսեան, Ազգային կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Գրիգոր Բարաղամեան եւ բանաստեղծ-գրագէտ Ե. Թէոտորիտես: Վերջինս շեշտը կը դնէ հայ եւ յոյն ժողովուրդներուն համանման ճակատագրի եւ ազատ ապրելու կամքին վրայ: 1957ի հաւաքոյթին կը նախագահէ Առաջնորդական տեղապահ Իսահակ Վրդ. Ղազարեանը: Յունաստանի Ազգային տօնի նշումի հաւաքոյթները յաջողականօրէն կը կրկնուին ամէն տարի նաեւ մասնաճիւղերու նախաձեռնութեամբ: Այս կարգի ձեռնարկներ են նաեւ Շրջանային վարչութեան կազմակերպած թէյապարերը, որոնք կը ձգտին ի մի հաւաքելու յունահայ նոր սերունդի ներկայացուցիչները:

16 Նոյեմբեր 1958ին Յունաստանի Շրջանը կը կազմակերպէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան քառասնամեակի փառատօն: Հանդիսութիւնը տեղի կ'ունենայ Աթէնքի «Պառնասոս» սրահին մէջ, հովանաւորութեամբ՝ Ազգային կեդրոնական վարչութեան եւ նախագահութեամբ՝ Յունահայոց Առաջնորդ Սահակ Եպիսկոպոս Այվազեանի: Օրուայ յայտագիրին մաս կը կազմեն յունական եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգներ (Համագայինի երգչախումբ), յունարէն եւ հայերէն լեզուներով Հ.Մ.Ը.Մ.ի 40 տարիներու գործունէութեան մասին բանախօսութիւններ (Պատրիկ Սարգիսեան եւ Վ. Սարաֆեան), Հ.Մ.Ը.Մ.ի նահատակներու յիշատակի ոգեկոչում (Դանիէլ Դանիէլեան եւ Լեւոն Գայեան), Փա՛ռք Հ.Մ.Ը.Մ.ի (Մ. Շարապխանեան), խօսք Ազգ. կեդր. վարչութեան եւ Հելլէն սկաուտական կեդրոնի կողմէ, գեղարուեստական բաժին եւ գնահատանքի մետալներու բաշխում:

Շրջանային վարչութեան նախաձեռնութիւնները կը կազմակերպուին այլազան առիթներով՝ Ապրիլ 24, վարդանանց, յունահայ աւագանիի ներկայութեամբ եւ գեղարուեստական ճոխ յայտագիրներով:

1968ի Նոյեմբեր ամիսը պիտի ըլլար Միու-

Թեան հիմնադրութեան յիսնամեակը նշող ամիս: Այսպէս 24 Նոյեմբերին, Աթէնքի «Պառնասոս» սրահին մէջ տեղի կ'ունենայ Յոբելեանական հանդիսութիւն հետեւեալ յայտագրով.

Ա. մաս

Յունական եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգներ՝ Ա. մաս. կատարողութեամբ Համազգայինի երգչախումբին, ղեկավար՝ Յ. Փափագեան

Կենդանի պատկեր

Հ.Մ.Ը.Մ.ի 50 տարիները՝ Պատրիկ Սարգիսեան

Տալուրիկ՝ երգչախումբ

Խօսք՝ պատուոյ նախագահ Գէորգ Յաբէթեան

Խօսք՝ Ազգ. Կեդր. Վարչութեան՝ Ն. Յակոբեան

Խօսք՝ Երիտասարդաց Միութեան

Յունարէն երգ:

Բ. մաս

Հայ սկաուտիզմը՝ Աւագ խմբապետ Լեւոն Գայեան

Արտասանութիւն՝ Յ. Սարաճեան

Երգ, Երեւան՝ երգչախումբ

Մետալներու եւ վկայականներու բաշխում

Ծափ ու ծնծղայ՝ երգչախումբ

Խօսք՝ Առաջնորդ Սրբազան

Փակման խօսք

«Յառաջ Նահատակ»:

Միութեան յիսնամեակին առթիւ Շրջանային Վարչութիւնը յատուկ գրութիւններով կը դիմէ յունահայ ազգայիններուն որպէսզի օժանդակեն Հ.Մ.Ը.Մ.ին իրենց նիւթական նուէրներով:


ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

1946ի Փետրուարին ընտրուած Շրջանային Վարչութեան առաջին գործերէն կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի օրկանի հրատարակութիւնը: Արդարեւ, Մարտի վերջաւորութեան, լոյս կը տեսնէ

«Մարմնամարզ» պարբերաթերթի առաջին թիւը: Թերթի արտօնատէրն է Դանիէլ Դանիէլեան, իսկ խմբագիրը՝ Համօ Մեհրապեան: 16 էջերէ բաղկացած այս պարբերաթերթը կը պարունակէ սկաուտական եւ մարզական նիւթեր, տեղեկութիւններ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու գործունէութեան մասին, տեղեկութիւններ մայր հայրենիքի մարզական շարժումի մասին, նիւթեր Հ.Մ.Ը.Մ.ի անցեալի գործունէութեան մասին, որոնք բոլորը կ'առաջնորդուին խմբագրական յօդուածով մը: Պարբերաթերթի հատավաճառի գինն է 1000 տրախմի: Թերթը կը տպուի «Ազատ Օր» օրաթերթի տպարանին մէջ:

Պաշտօնաթերթի կողքին Շրջանային Վարչութիւնը ամէն տարի կը հրատարակէ պատի օրացոյցը, որոնցմէ օրինակներ կը դրկուին մասնաճիւղերուն, անոնց վաճառքով ապահովելու համար նիւթական եկամուտներ:

1948ին լոյս կը տեսնէ Համօ Մեհրապեանի հեղինակութեամբ՝ Սկաուտական երգերու գիրքը:



ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԵՒ ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

- ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ.Ն
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԵՒ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

1971ին, Ամերիկայի Միացեալ Նահանգներու տարածքին, արդէն կը գործէին Հ.Մ.Ը.Մ.ի եօթը մասնաճիւղեր պաշտօնապէս վաւերացուած Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան կողմէ: Գործնական նպատակներով այս թիւը աւելի քան բաւարար էր Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան մը կազմութեան համար:

21 Հոկտեմբեր 1971ին, Շրջանային Վարչութեան 36րդ նիստին ներկայ կը գտնուի Գէորգ Տօնապետեան որ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ հանրային գործունէութիւն ունի եւ տեղեակ է պետական օրէնքներուն եւ միութենական կեանքին: Յետ կարգ մը տեղեկութիւններու փոխանցման եւ հարցումներու պատասխաններուն, Գէորգ Տօնապետեան տակաւին կանխահաս կը համարէ Միացեալ Նահանգներու մէջ Շրջանային Վարչութեան մը կազմութեան պարագան:

1973ին նկատի կ'առնուի նաեւ Միացեալ Նահանգներու արեւելեան եւ արեւմտեան շրջաններու իրարմէ աշխարհագրականօրէն հեռաւորութեան պարագան: Իր կողմէ, Հ.Մ.Ը.Մ.ը Համագաղութային կազմակերպութեան վերածելու կոչուած Մարմինը այս մասին կը լսէ Գէորգ Տօնապետեանի զեկուցումը իր 14 Օգոստոս 1974 նիստի ընթացքին, եզրակացնելով թէ Միացեալ Նահանգներու արեւելեան շրջանին մէջ գործող Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերը՝ Տիթրոյիթ, Ուաշինկթըն, Ֆիլատելֆիա եւ Պոսթըն, իրենք պէտք է քննեն իրենց շրջանին մէջ առանցին Շրջանային Վարչութիւն մը ունենալու կարելիութիւնները եւ եզրակացնեն այդ մասին:

1974ի Օգոստոսին, Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանը կ'այցելէ Անդրանիկ Ուրֆալեան որ լիազօրուած էր Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան կողմէ այդ շրջանի մասնաճիւղերու կացութեամբ հետաքրքրուելու եւ ըստ կարելոյն առանցին Շրջանային Վարչութիւն մը կազմելու հարցը քննելու: Անդրանիկ Ուրֆալեանի նախաձեռնութեամբ եւ տեղւոյն ղեկավարութեան հաւանութեամբ խորհր-

դակցական նիստի մը ընթացքին կը կազմուի Հ.Մ.Ը.Մ.ի Գալիֆորնիոյ Առժամեայ Բարձրագոյն Խորհուրդ մը բաղկացած Լոս Անճէլըսի, Ֆրեզնոյի եւ Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղերու հետեւեալ անդամներէն.

Ատենապետ՝ Նշան Սարաֆեան

Փոխ ատենապետ՝ Վարուժան Պուլութեան

Ատենադպիր՝ Արտուշ Ծատուրեան

Գանձապահ՝ Ճորճ Պաղտոյեան

Խորհրդականներ՝ Տիգրան Սարգիսեան, Հրայր Սարգիսեան, Կարպիս Գաթարոյեան:

Բարձրագոյն Խորհուրդի պարտականութիւնն էր Գալիֆորնիոյ շրջանի պատգամաւորական ժողով կազմակերպել ընտրելու համար Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւն: Բարձրագոյն Խորհուրդի առաջին գործը պիտի ըլլար փորձել Մոնթեպելլոյի մէջ գործող Հ.Մ.Ը.Մ.ի եւ գաղափարակից United Armenians ֆուլթայոլի գործունէութեամբ հակադրուող զոյգ կազմերը միացնել, ինչ որ անյուծելի դժուարութեանց կը բաղխի:

29 եւ 30 Նոյեմբեր 1974ին, Բարձրագոյն Խորհուրդը կը կազմակերպէ Գալիֆորնիոյ անդրանիկ Շրջանային Ներկայացուցչական Ժողով մասնակցութեամբ հետեւեալ ներկայացուցիչներուն՝ ընտրուած մասնաճիւղերու անդամական ընդհանուր ժողովներէն.

Լոս Անճէլըսի մասնաճիւղէն՝ Յարութիւն Բարսեղեան, Յակոբ Օվայեան, Թորոս Բարսեղեան, Արմէն Տէյիրմենճեան եւ Յուլիա Յովսէփեան:

Ֆրեզնոյի մասնաճիւղէն՝ Վարուժան Պուլութեան, Մհեր Շխրրտմեան եւ Սերոբ Վարդանեան:

Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղէն՝ Արմէն Մարգարեան, Վարանդ Գասպարեան եւ Լուսին Գասպարեան:

Մոնթեպելլոյի մասնաճիւղէն՝ Մինաս Մարգարեան, Քերոբ Առաքելեան, Պետրոս վարդապետ Պերպէրեան, Վաղինակ Մնացականեան եւ Աղաւնի Փլաք:



Բարձրագոյն Խորհուրդի ներկայացուցիչ՝ Նշան Սարաֆեան:

Օրակարգի նիւթերը քննարկող երկօրեայ նիստերու աւարտին կ'ընտրուի Գալիֆորնիոյ առաջին Շրջանային վարչական կազմը հետեւեալ ձեւով.

- Ատենապետ՝ Յակոբ Օվայեան
- Փոխ ատենապետ՝ Մհեր Շխրրտմեան
- Ատենադպիր՝ Արմէն Տէյիրմենճեան
- Գանձապահ՝ Տիգրան Սարգիսեան

Մարզական պատասխանատու՝ Հրայր Սարգիսեան

Սկսուտ պատասխանատու՝ Զարեհ Էքմէքճեան

Խորհրդական՝ Վարուժան Պուլուժեան:

Ժողովը կ'ընտրէ նաեւ Շրջանի պատգամաւորը, Դեկտեմբեր 13ին Պէյրուժի մէջ կայանալիք Հ.Մ.Ը.Մ.ի առաջին պատգամաւորական

ընդհանուր ժողովին՝ յանձին Մհեր Շխրրտմեանի:

1 Դեկտեմբեր 1974ին, Հ.Մ.Ը.Մ.ը կ'ուսնենայ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջան: Արեւելեան շրջանի կազմութեան մասին պիտի անդրադառնանք իր ժամանակին:

ԳԱՆԱՏԱ - ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՆԹԻՒՆ

Գանատայի առանցին Շրջանի կազմութենէն առաջ, Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.- ԿԱՄՔը որպէս Գանատայի երիցագոյն մասնաճիւղը, հիմը կը դնէ միջ-մասնաճիւղային ամառնային խաղերու շարքին:

1969ի Օգոստոս 15ին, Jarry Parkի մէջ կազմակերպուած խաղերուն իրենց մասնակցութիւնը կը բերեն Համիլթընի եւ Թորոնթոյի մասնաճիւղերը: Խաղերը կը հովանաւորէ Սուրէն Վարդապետ Գաթարոյեան, նախագահութեամբ՝ Աւետիս Պալապանեանի:

Այս նախաձեռնութեան պիտի հետեւէին հինգ միջ-մասնաճիւղային խաղեր հետեւեալ կարգով.-

- Բ. Օգոստոս 1970ին, Թորոնթօ
- Գ. Յուլիս 1971ին, Մոնթրէալ
- Դ. Սեպտեմբեր 1972ին, Մոնթրէալ
- Ե. Օգոստոս 1973ին, Մոնթրէալ
- Զ. Օգոստոս 1974ին, Մոնթրէալ

1972ի Օգոստոսին, Թորոնթոյի մէջ կը կազմակերպուի միջ-մասնաճիւղային Փուլթպոլի մրցաշարք, մասնակցութեամբ Մոնթրէալի, Համիլթընի, Տիթրոյիթի մասնաճիւղերը խումբերուն եւ Պոսթընի Արմենց խումբին:

Այս խաղերու յաջողութիւնները առիթ կը հանդիսանան որ Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու մէջ գործող մասնաճիւղերը աւանդութեան վերածեն ամառնային եղանակին կազմակերպուող խաղերը:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ՍՈՒՐԻՈՅ ԼԻՔԱՆԱՆԻ ՊԱՂԵՍՏԻՆԻ
ԵՒ ՅՈՐԴԱՆԱՆԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

- ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ
- ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ



Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Շրջանային 6րդ պատգամաւորական ժողովի խմբանկար



Հ.Ս.Ը.Մ.-ի սոհրիոց, Լիբանանի, Պաղեստինի եւ Անդր-Յորդանանի
9-րդ Պատգամաւորական ժողով.

31 Մարտ եւ 1 Ապրիլ 1929ին գումարուած Պատգամաւորական անդրանիկ ժողովէն ետք, 1930ին, կեանքի կոչուեցաւ «ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԼԻՒԲԱՆԱՆԻ Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ»ը: Այս անդրանիկ կազմին յաջորդեցին պատգամաւորական ժողովներով նորոգուած կազմեր: 1937էն սկսեալ, Երուսաղէմի մասնաճիւղն ալ ներառուելով Շրջանային Վարչութիւնը կոչուեցաւ «ՍՈՒՐԻՈՅ ԼԻՒԲԱՆԱՆԻ ԵՒ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ» 1946ին, Ամմանի մասնաճիւղը իբրեւ Երուսաղէմէն անջատ մասնաճիւղ ճանաչումէն ետք, կազմը կոչուեցաւ «Սուրիոյ, Լիբանանի, Պաղեստինի եւ Անդրյորդանանի Շրջանային Վարչութիւն»: 1960էն սկսեալ, 15րդ Պատգամաւորական ժողովի որոշումով եւ գործնական պատճառներով, Շրջանային Վարչութիւնը կը կոչուի « Հ.Մ.Ը.Մ.Ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութիւն»: Առանց յիշելու անոր ենթակայ բոլոր երկիրներու անունները:

Իսկ 9 եւ 10 Յունուար 1971ին գումարուած 19րդ Պատգամաւորական ժողովի առաջարկով «Մերձաւոր Արեւելք»ի բաժինն ալ զեղջուելով կազմին տրուեցաւ «Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային Վարչութիւն» անունը, նկատի ունենալով որ Միացեալ Նահանգներու եւ Գանատայի մասնաճիւղերն ալ ենթակայ էին նոյն կազմի հեղինակութեան:

Հետեւաբար, այս Դ. մասի յաջորդող երեք գլուխներով, պիտի տանք 1940էն 1974 ժամանակաշրջանի ընթացքին անուանումի վերոյիշեալ հոլովոյթին ենթակայ Շրջանային Վարչութեանց կազմակերպական, մարզական եւ սկաուտական գործունէութիւններու պատկերը:

ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ,
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ
ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի Շրջանի 6րդ Պատգամաւորական ժողովը տեղի ունեցաւ,

Պէյրութի մէջ 14, եւ 15 Դեկտեմբեր 1940ին, հետեւեալ օրակարգով.

1. Ընթերցում Շրջանային Վարչութեան եռամեայ գործունէութեան
2. Զեկուցում մասնաճիւղերու
3. Աթլետիզմ եւ Ֆութպոլ
4. Սկաուտական գերագոյն խորհուրդի հարց
5. Պիւտճէ
6. Առաջարկներ եւ որոշումներ
7. Հ.Մ.Ը.Մ.Ի յարաբերութիւնները հայ մարզական միութեանց հանդէպ
8. Շրջանային Վարչութեան ընտրութիւն: Այս ժողովէն ընտրուած Շրջանային Վարչութիւնը իր դիւանը կազմեց հետեւեալ ձեւով. - Ատենապետ՝ Տոքթ. Բենիամին Գուլաքեան Ատենադպիր՝ Վահրամ Կիւրճեան Գանձապահ՝ Ալպէր Յակոբեան Խորհրդականներ՝ Յովհաննէս Շահինեան եւ Խորէն Սուքիասեան:

Պատերազմական օրերուն գործող այս Շրջանային Վարչութիւնը, հասկնալի պատճառներով, ունեցաւ սահմանափակ գործունէութիւն: Մասնաճիւղերու հետ մնայուն կապը գլխաւորաբար նպատակ ունեցաւ բարոյական օժանդակութեամբ զանոնք կանգուն պահել, հակառակ տնտեսական խիստ անցուկ պայմաններուն: Շրջանային Վարչութեան գլխաւոր իրականացումները եղան 1941ի եւ 1942ի զատկական միջ-մասնաճիւղային հանդիպումները, որոնց կարեւոր եկամուտով կարելի եղաւ հոգալ ընթացիկ ծախսերը: Մասնաճիւղերը չյաջողեցան յարգել իրենց ձեռնարկներու պարտաւորութիւնները: Նիւթական երկամեայ գործունէութեան պատկերն է՝

Մուտք՝ 32.834 սուրիական դահեկան,
Ելք՝ 8.874 սուրիական դահեկան:

*
* *

Շրջանի 7րդ Պատգամաւորական ժողովը

տեղի ունեցաւ Պէյրուսի Սբ. Նշան Ազգային Վարժարանի սրահին մէջ 2 եւ 3 Դեկտեմբեր 1942ին, ներկայութեամբ միայն 8 մասնաճիւղերէ եկած 23 լիազօր պատգամաւորներու: Ժողովին կը նախագահէր Լուտեր Մասպանաճեան, քարտուղարութեամբ՝ Եղիշէ Մանուկեանի:

Ժողովի օրակարգին վրայ կը գտնուին.

- 1.- Դիւանի ընտրութիւն
- 2.- Նախորդ պատգամաւորական ժողովի ատենագրութեան ընթերցում եւ վաւերացում
- 3.- Ընթերցում Շրջանային Վարչութեան նիւթաբարոյական տեղեկագրին
- 4.- Դատական հարց
- 5.- Մասնաճիւղերու տեղեկագրերու ընթերցում
- 6.- Հաշուեքննիչ յանձնախումբի զեկուցում
- 7.- Առաջարկներ
- 8.- Շրջանային Վարչութեան նստավայրի եւ անդամներու ընտրութիւն:

Օրակարգի լուծումներէն ի յայտ կու գայ որ 12 մասնաճիւղեր չեն ներկայացուած այս ժողովին: Բոլոր մասնաճիւղերն ալ անդամավճարներու գանձումի դժուարութիւններ ունին: Սկսած սկսած Բաթինը, Բացի Հալէպի մասնաճիւղէն, մնացեալ վայրերուն մէջ կը կաղայ մասնագէտ խմբապետներու պակասին պատճառով:

Ժողովի առաջարկներու բաժնին մէջ նկատի կ'առնուին ամսաթերթի մը հրատարակութիւն, սկսած սկսած գիտելիքներու գրքոյկի պատրաստութիւն, միջ-մասնաճիւղային խաղերու եւ միջ-մասնաճիւղային ողիմպիականներու տարեկան կազմակերպում:

Ժողովի վերջին օրակարգով կ'ընտրուի նոր Շրջանային Վարչութիւն: Վերջինս իր դիւանը կը կազմէ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Օննիկ Պէօճեքեան
- Ատենադպիր՝ Վահրամ Կիւրճեան
- Գանձապահ՝ Ալպէր Յակոբեան
- Սկսած սկսած պատասխանատու եւ Բ. ատենադպիր՝ Օննիկ Մելիքսէթեան

Ֆուտպոլի պատասխանատու՝ Յովհաննէս Շահինեան

Խորհրդական՝ Մամբրէ Հիսարեան:

Այս վարչութեան գլխաւոր իրականացումը պիտի ըլլար Շրջանի առաջին ողիմպիական (իմա՝ աթլետիք) մրցումներու կազմակերպումը, Պէյրուսի քաղաքապետարանի դահլիճին մէջ 29 Հոկտեմբեր 1944ին, մասնակցութեամբ՝ Պէյրութի, Հալէպի, Երուսաղէմի, Պուրճ Համուտի եւ Ջահլէի մասնաճիւղի մարզիկներուն: Անդրանիկ այս ելոյթը ինչպէս նաեւ 1943ի եւ 1944ի 16րդ եւ 17րդ միջ-մասնաճիւղային խաղերը նիւթական եւ բարոյական մեծ յաջողութիւններով պսակուեցան: Կազմակերպուեցաւ, նաեւ, սկսած սկսած ընդհանուր բանակում:

Շրջանային Վարչութիւնը նախաձեռնեց նաեւ սկսած սկսած գիտելիքներու գիրքերու տպագրութիւն եւ հրատարակեց 1943 տարուայ պատի օրացոյցը սպառելու համար բոլոր մասնաճիւղերէն ներս:

*
* *

Սուրիոյ, Լիբանանի, Պաղեստինի եւ Յորդանանի Շրջանային Տրդ Պատգամաւորական Ժողովը տեղի ունեցաւ 23էն 25 Դեկտեմբեր 1944ին, Պէյրուսի Սբ. Նշան Ազգային Վարժարանի եւ Ժողովրդային Տան մէջ, մասնակցութեամբ Հալէպի, Պէյրութի, Դամասկոսի, Պուրճ Համուտի, Երուսաղէմի, Հայֆայի, Տէր Զօրի, Թրիփոլի, Պալպէքի, Լաթաքիոյ եւ Ջահլէի մասնաճիւղերու 36 լիազօր պատգամաւորներուն: Ժողովին նախագահութիւնը վարեց Տօքթ. Ատուր Գապաքեան, քարտուղարութեամբ՝ Հրանդ Մուրատեանի եւ Կարօ Պատուհասեանի: Յաջորդական երեք օրերու վրայ երկարող այս ժողովի օրակարգն էր.-

- 1.- Դիւանի ընտրութիւն
- 2.- Լիազօրագրերու ստուգում
- 3.- Դրդ պատգամաւորական ժողովի ատենագրութեան վաւերացում

4.- Զեկուցում մասնաճիւղերու գործունէութեան

5.- Շրջանային վարչութեան երկամեայ գործունէութեան տեղեկագիր եւ հաշուետուութիւն

6.- Սկաուտական կազմակերպութիւն

7.- Մարզական եւ այլ հարցեր

8.- Նոր վարչութեան ընտրութիւն:

Շրջանային վարչութեան եւ մասնաճիւղերու տեղեկագրութիւններէն ի յայտ կու գայ որ բոլոր մասնաճիւղերու գործունէութիւնները ծաւալած են կարեւոր համեմատութեամբ: Դժուարութիւնները՝ նիւթականի, դաշտերու չգոյութեան, մասնագէտ մարզիչներու եւ մասնագէտ սկաուտական խմբապետներու պակասին պատճառով կը յարուցուին:

Նոր տարեշրջանի գործունէութեանց համար եղած առաջարկները գլխաւորաբար կազմակերպական են եւ կը հիմնուին կանոնագրութեան յօդուածներու տրամադրութեանց ամբողջական յարգանքին վրայ:

Վերջին օրակարգով նախորդ Շրջանային վարչութեան կազմը նոյնութեամբ վերընտրուեցաւ եւ նոյն պաշտօնները պահուեցան:

*

**

15էն 17 Փետրուար 1947ին, Սուրիոյ, Լիբանանի, Պաղեստինի եւ Յորդանանի Զրդ Շրջանային Պատգամաւորական ժողովը գումարուեցաւ Պէյրութի Հ.Մ.Ը.Մ.ի ակումբին մէջ, ներկայութեամբ՝ 15 մասնաճիւղեր ներկայացնող, 56 պատգամաւորներու: Նախագահութեամբ՝ Տօքթ. Ասուր Գապաքեանի, քարտուղարութեամբ՝ Անդրանիկ Ծառուկեանի եւ Եղիշէ Մանուկեանի: Այս ժողովէն ընտրուած Շրջանային վարչութեան կազմի անդամներն են.-

Ատենապետ՝ Վահրամ Կիւրճեան

Ատենադպիրներ՝ Տօքթ. Յակոբ Պերպէրեան, Եղիշէ Մանուկեան

Գանձապահ՝ Մամբրէ Հիսարեան

Խորհրդականներ՝ Տօքթ. Արամ Պաղտասարեան, Յովհաննէս Շահինեան, Մանուկ Տէտէեան, Օննիկ Փիլիկեան:

1947-48 զոյգ տարեշրջաններուն, Երուսաղէմի եւ Հայֆայի մասնաճիւղերը պարտադրաբար կը դադրին գործելէ, փոխարէնը Քէսապի եւ Այնճարի նոր հիմնուած մասնաճիւղերը կը գործեն խանդավառութեամբ:

Սուրիոյ, Ճեզիրէի շրջանի բազմացող մասնաճիւղերուն հետ ուղղակի կապեր հաստատելը կամ այցելութիւնները, հեռաւորութեան պատճառով, կը դժուարանան: 1948ին, Շրջանային վարչութիւնը վճարովի գործիչի պաշտօն կը յանձնէ՝ Գամիշլիի ազգային վարժարանի տնօրէն Յովհաննէս Պետրոսեանին, այցելելու մասնաճիւղերը եւ զեկուցելու անոնց մասին:

Շրջանը իր 21 մասնաճիւղերով յարաճուն վերելքի մէջ է մարզական եւ սկաուտական բաժիններով:

Սակայն պատգամաւորական ժողովին ներկայացուած տեղեկագրէն ի յայտ կու գայ թէ հակառակ Շրջանային վարչութեան հսկողութեան, կարգ մը մասնաճիւղեր կանոնագրային շեղումներ արձանագրած են այս երկամեակին եւ թէ միութենական նուիրապետական կարգի եւ ժողովական որոշումներու հանդէպ ընդհանուր տկարութիւն մը կը տիրէ: Հետեւաբար, Շրջանային վարչութիւնը հետեւեալ ձեւով կը բանաձեւէ պատգամաւորներուն ուղղուած իր թելադրանքը. «Իւրաքանչիւրը Ձենէ եւ Ձեր շրջաններէն լիպօրուած եկած էք հոս միութեան ուժեղացման եւ տեսականացման համար աշխատանքի ձեր բաժինը բերելու, աւագ պարտականութիւն պիտի նկատէք պատգամաւորական այս ժողովին հիմնական դարման մը գտնել մատնանշուած ցաւերուն»:

*

**

21էն 23 Յունուար 1949ին, Պէյրութի մէջ գումարուած Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ եւ Լիբանանի

10րդ պատգամաւորական ժողովէն ընտրուած Շրջանային Վարչութեան կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Տօքթ. Ատուր Գապաքեան
Փոխ ատենապետ՝ Տօքթ. Արամ Պաղտասարեան

Ատենադպիր՝ Յակոբ Աշճեան
Գանձապահ՝ Մանուկ Տէտէեան
Հաշուապահ՝ Միսաք Պժեան
Մարզական պատասխանատու՝ Վահրամ Կիւրճեան:

1949-1950 տարիներու ընթացքին, Շրջանա-

յին Վարչութիւնը կ'իրականացնէ նախորդ շրջաններուն աւանդութեան կարգ անցած աշխատանքները՝ միջ-մասնաճիւղային խաղեր, ողիմպիականներ, սկաուտական միջ-մասնաճիւղային ընդհանուր բանակումներ, ինչպէս նաեւ 10րդ պատգամաւորականի առաջարկներէն՝ շրջանային մարզիչի մը ապահովումը յանձին՝ Եգիպտոսի Հ.Մ.Ը.Մ.ի մարզիչներէն Գրիգոր Նիզիպլեանի:

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան երեսնամեակի առթիւ «Յուշարձան»ի պատրաստութեան համար Շրջանային Վարչութիւնը սկսած է աշխատանքի:



Հ.Մ.Ը.Մ.ի 10րդ Շրջանային Պատգամաւորական ժողով, 1951

*
* *

31 Մարտ 1951ին, Հալէպի Ազգ. Քառէն Եփփէ Ճեմարանի սրահին մէջ տեղի կ'ունենայ 11րդ Շրջանային Պատգամաւորական Ժողովը: Շրջանի 21 մասնաճիւղերու կարգին այս ժողովին կը մասնակցին Յունաստանի շրջանէն՝ Վարդգէս Շահինեան եւ Գահիրէի Արարատէն՝ Գրիգոր Նիզիպլեան:

Ժողովի դիւանի նախագահութիւնը կը վարեն՝ Լուտեր մասպանաձեան եւ Հրանդ Մուրատեան, իսկ քարտուղարներ են՝ Գրիգոր Շահինեան եւ Վարդգէս Տէր Կարապետեան:

Ժողովի օրակարգի գլխաւոր նիւթերն են մասնաճիւղերու եւ Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութեան տեղեկագրերը, որոնց ընթերցումներուն կը հետեւի ըստ հովութեան քննութիւն ճշդելու եւ աւելի յաջող հիմերու վրայ դնելու ապագայ երկամեակի գործունէութիւնները:

Օրակարգի վերջին բաժինով կ'ընտրուի նոր Շրջանային վարչական կազմ.-

- Ատենապետ՝ Տօքթ. Ատուր Գապաքեան
- Փոխ ատենապետ՝ Ալպէռ Յակոբեան
- Ատենադպիր՝ Տօքթ. Յակոբ Պերպէրեան
- Գանձապահ՝ Մանուկ Տէտէեան
- Հաշուապահ՝ Հրանդ Մուրատեան

Մարզական պատասխանատու՝ Յովհաննէս Շահինեան

Խորհրդական՝ Միսաք Պժեան:

Այս կազմի գործունէութեան ժամանակաշրջանը պիտի երկարէր մինչեւ Յունուար 1954: Այս միջոցին, բացի աւանդական ձեռնարկներէն, Շրջանային Վարչութիւնը յատուկ քննութեան կ'ենթարկէ հայ վարժարաններէ ներս մարմնակրթական դաստիարակութիւնը ներմուծելու կարելիութիւնները: Այս նպատակով կը կազմակերպուին մարզանքի մասնագէտ ուսուցիչներու հետ ուսումնասիրութեան հաւաքոյթներ: Այս նիւթի զարգացումին արդիւնքը պիտի ըլլար հետագային կազմակերպուելիք միջ-վար-

ժարանային մարզահանդէսները Լիբանանի ազգային վարժարաններու աշակերտութեան մասնակցութեամբ:

Շրջանային Վարչութիւնը հետաքրքրութեամբ կը հետեւի Մեքսիքոյի մէջ Քերոբ Առաքելեանի նախաձեռնութեամբ կազմուած յանձնախումբի աշխատանքներուն, որոնց նպատակն է Ամերիկայի զանազան քաղաքներուն մէջ Հ.Մ.Ը.Մ.ական շարժում ստեղծել եւ Միութեան գաղափարաբանութիւնը տարածել:

Ի հետեւումն նախորդ շրջանի նախաձեռնութեան, Շրջանային Վարչութիւնը իր կապերը կը վերանորոգէ Սարգիս Բախտիկեանի հետ, որուն պարտականութիւնն էր յանձնուած Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան պատրաստութիւնը:

*
* *

15էն 17 Յունուար 1954ին, Պէյրութի Հ.Մ.Ը.Մ.ի աւուստիստներուն մէջ տեղի կ'ունենայ Շրջանային 12րդ Պատգամաւորական Ժողովը: Ժողովին կը նախագահէ Կարապետ Աղճայեան:

Ժողովի քննարկման ենթակայ գլխաւոր հացերէն է Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան հրատարակութիւնը: Խմբագիր՝ Սարգիս Բախտիկեան, այս նպատակով կը հրաւիրուի իր զեկուցումը տալու ժողովին:

Ժողովը լսելէ ետք, Շրջանային Վարչութեան եռամեայ գործունէութեան տեղեկագիրը կը մշակէ յաջորդ երկամեայ շրջանի գործունէութեան ծրագիր եւ կ'ընտրէ նոր Շրջանային Վարչութիւն, որուն կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Տօքթ. Յակոբ Պերպէրեան
- Փոխ ատենապետ՝ Միսաք Պժեան
- Ատենադպիրներ՝ Հրանդ Մուրատեան եւ Յակոբ Խուպեսերեան
- Գանձապահ՝ Մանուկ Տէտէեան
- Մարզական պատասխանատու՝ Յովհաննէս Շահինեան

Խորհրդականներ՝ Արամ Անթիքաճեան, Անդրանիկ Երամեան:

Շրջանային վարչութեան առաջին գործերէն կ'ըլլայ Ազգակ Մարգականի խմբագրութեան օժանդակող, Հ.Մ.Ը.Մ.ի կողմէ եռանդամ յանձնախումբի մը նշանակումը: Շաբաթաթերթի հրատարակութիւնը դրուած էր Շրջանային վարչութեան բարոյական հսկողութեան տակ, որպէս միութեան կիսապաշտօն օրկան: 1954-55 երկամեակին, Շրջանային վարչութեան ընթացիկ աշխատանքները՝ միջ-մասնաճիւղային զատկական խաղեր, միջ-մասնաճիւղային ընդհանուր բանակում, հայ վարժարաններէ ներս մարմնամարզի դասապահերու ներմուծում, Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան պատրաստութեան հետապնդում եւ յատկապէս մասնաճիւղերու գործունէութեանց մօտէն հսկողութիւն, կ'իրագործուին կանոնաւոր հերթականութեամբ: Շրջանային վարչութիւնը իբրեւ նիւթական հասութարբեր ձեռնարկ, 4 Սեպտեմբեր 1954ին, Տհուր Շուէր գիւղի քասուֆ պանդոկին մէջ, կը կազմակերպէ ճաշկերոթ-պարահանդէս: Նոյն ձեռնարկը կը կրկնուի 3 Սեպտեմբեր 1955ին նոյն վայրին մէջ:

1955ի միջ-մասնաճիւղային խաղերուն առընթեր, տեղի կ'ունենայ խորհրդակցական ժողով մը, մասնակցութեամբ Հայէպ գտնուող մասնաճիւղերու ներկայացուցիչներուն: Շրջանային վարչութիւնը կու տայ իր գործունէութեան մասին զեկուցում եւ կը լսէ առաջարկներ:

Դիւրացնելու համար իր կապը հեռաւոր մասնաճիւղերու հետ, ուղղակի այցելութիւններով, Շրջանային վարչութիւնը, չըջուն գործիչի պաշտօն կը յանձնէ Լուտեր Մասպանաճեանին:

*
**

Հ.Մ.Ը.Մ.ի 13րդ Շրջանային Պատգամաւորական ժողովը կը գումարուի 7էն 9 Յունուար 1956ին, Պէյրութի մասնաճիւղի ակումբին մէջ:

Ժողովին ներկայ են հետեւեալ մասնաճիւղերու պատգամաւորները համապատասխան թիւերով. Հայէպ՝ 6, Գամիշլի՝ 3, Լաքաթիա՝ 3, Արաբ-Բուսնար՝ 1, Հոմս՝ 1, Դամասկոս՝ 5, Պէյրութ՝ 7, Պուրճ Համուտ՝ 8, Թրիփոլի՝ 3, Ջահլէ՝ 1, Ճիւնի՝ 2, Հատէթ՝ 2, Երուսաղէմ՝ 2, Ամման՝ 2 եւ Շրջանային վարչութեան լիազօր ներկայացուցիչը՝ Տոքթ. Յակոբ Պերպէրեան:

Ժողովի նախագահութիւնը կը վարեն Տոքթ. Ատուր Գապաքեան եւ Լուտեր Մասպանաճեան, քարտուղարութեամբ՝ Վահէ Դանիէլեանի եւ Յովհաննէս Տէր Յարութիւնեանի:

- Ժողովի օրակարգի նիւթերն են.-
- Ժողովի բացում
- Առժամեայ դիւանի ընտրութիւն եւ լիազօրագրերու ստուգում
- Մնայուն դիւանի ընտրութիւն
- Քննիչ յանձնախումբերու ընտրութիւն
- Մասնաճիւղերու տեղեկագրերու ընթերցում
- Շրջանային վարչութեան նիւթաբարոյական տեղեկագրի ընթերցում եւ քննութիւն:
- Յանձնախումբերու զեկուցումներ՝ արխիւային, հաշուեքննիչ, նախահաշիւի, բանաձեւերու
- Սկաուտական ծրագիր-կանոնագրի վերամշակում
- Առաջարկներ նորընտիր վարչութեան
- Ընտրութիւն Շրջանային վարչութեան
- Ժողովի փակում:
- Նորընտիր Շրջանային վարչութեան անդամներն են.-

Ատենապետ՝ Յովհաննէս Շահինեան
 Ատենադպիր՝ Տոքթ. Յակոբ Պերպէրեան
 Բ. Ատենադպիր՝ եւ սկաուտական պատասխանատու՝ Յակոբ Խուլպեսերեան
 Գանձապահ՝ Մանուկ Տէտէեան
 Հաշուապահ՝ Լեւոն Պապիկեան
 Ֆութպոլի պատասխանատու՝ Արամ Անթիքաճեան
 Աթլէթիք պատասխանատու՝ Անդրանիկ Երամեան:

Այս կազմը կ'իրականացնէ Շրջանային աւանդական ձեռնարկները՝ զատկական միջ-մասնաճիւղային խաղեր, ամառնային մարզիչներու պատրաստութեան դասընթացք, միջ-մասնաճիւղային մարզահանդէսներ, միջ-մասնաճիւղային ընդհանուր բանակումներ եւ հասութեաբեր ձեռնարկ՝ պարահանդէսներ: Շրջանային վարչութիւնը կը հետեւի նաեւ Սարգիս Բախտիկեանի վստահուած Հ.Մ.Ը.Մ.ի պատմագիրքի աշխատանքներուն:

*
* *

7 եւ 8 Յունուար 1958ին, Պէյրութի Հ.Մ.Ը.Մ.ի ահումբին մէջ տեղի կ'ունենայ Շրջանային 14րդ Պատգամաւորական ժողով, ներ-

կայութեամբ 15 մասնաճիւղեր ներկայացնող, 48 լիազօր պատգամաւորներու եւ կարգ մը հրաւիրեալներու: Ժողովին զոյգ նախագահներն են՝ Լուտեր Մասպանաճեան եւ Արամ ԱՖարեան:

Յաջորդական հինգ նիստերու գումարումէն ետք, ուր կը քննուի Շրջանային վարչութեան նիւթաբարոյական գործունէութիւնը, ժողովը կ'առնէ հետեւեալ որոշումները.-

- Շարունակել ամառնային մարզական դասընթացքները
- Հաստատել սկստական դպրոց բանակումներ
- Զարկ տալ վարժարաններէ ներս մարզական գործունէութեանց
- Կայացնել միջ-մասնաճիւղային աթլետիք հանդիպումներ



Մերձաւոր Արեւելքի Շրջանային 14րդ. Պատգամաւորական ժողովի խմբանկար

- Մեծ շուքով տօնել Միութեան հիմնադրութեան յիսնամեակը

- Նիւթապէս եւ բարոյապէս նպաստել «Ազդակ Մարզական» եւ «Արեւելք Մարզաշխարհ» կիսապաշտօնաթերթերու բովանդակութեան ճոխացումին եւ տարածումին

- Վերահաստատել գործիչի պաշտօնը

- Վերոյիշեալ նպատակներու իրագործման համար մասնաճիւղերու ցենզերը շօշափելի համեմատութիւններով բարձրացնել:

Ժողովի վերջին օրակարգով կ'ընտրուի 1958-59 երկամեակի գործունէութեան համար նոր Շրջանային Վարչական կազմ: Վերջինս 12 Յունուար, 1958ի անդրանիկ նիստով կը կատարէ պաշտօններու բաժանումը հետեւեալ կերպով.-

- Ատենապետ՝ Յովհաննէս Շահինեան
- Ատենադպիր՝ Տոքթ. Յակոբ Պերպէրեան
- Բ. ատենադպիր՝ Յիլիփ Զաքարեան
- Գանձապահ՝ Մանուկ Տէտէեան
- Հաշուապահ՝ Լեւոն Պապիկեան
- Ֆուտպոլի պատասխանատու՝ Արամ Անթիքաճեան

Աթլէթիք պատասխանատու՝ Անդրանիկ Երամեան:

Տոքթ. Յակոբ Պերպէրեան կը վարէ նաեւ սկստական ճիւղի պատասխանատուի պաշտօնը:

Հազիւ չորս ամսուայ գործունէութենէ ետք, կը ծագի Լիբանանի քաղաքացիական պատերազմը, որ ամբողջութեամբ ամլութեան կը մատնէ Շրջանային Վարչութեան 1958ի եղանակին համար նախատեսուած աշխատանքները, բացի 31րդ միջ-մասնաճիւղային խաղերէն, որոնք կ'արձանագրեն իրենց աւանդական յաջողութիւնը: Շրջանային Վարչութիւնը կը վերսկսի քառասնամեակին նուիրուած Յուշամատեանի հրատարակութեան աշխատանքներուն:

1959ին, Շրջանային Վարչութեան գործունէութիւնը իր բնականոն ընթացքը կը գտնէ: 32րդ միջ-մասնաճիւղային խաղերը, որոնց կը մասնակցի Թէհրանի Արարատ Մշակութային

Միութեան ֆուտպոլի խումբը, կը կայանան բացառիկ յաջողութեամբ: Կը կազմակերպուին նաեւ մարզական ամառնային դասընթացքը, սկստական աստիճանաւորական դասընթացքը եւ տարեկան պարահանդէսը՝ ապահովելու համար նիւթական եկամուտը: Տարեվերջին Յուշամատեանի հրատարակութեան աշխատանքները իրենց լրումին կը հասնին: Գործունէութեան ժամանակաշրջանը կ'երկարի մինչեւ 1960ի զատկական օրերը:

*
* *

13էն 15 Ապրիլ 1960ին, Հալէպի մէջ գումարուեցաւ 15րդ Շրջանային Պատգամաւորական ժողով, ներկայութեամբ 19 մասնաճիւղերու լիազօր պատգամաւորներուն:

Ժողովի օրինականութեան հաստատումէն ետք, կարդացուեցան մասնաճիւղերու երկամեայ գործունէութիւններու տեղեկագրերը եւ հետզհետէ լուսաբանական հարցումներով ժողովականները ստացան իրենց հետաքրքրութիւնները բաւարարող պատասխաններ: Մասնաճիւղերէն ետք կարդացուեցաւ նաեւ Շրջանային Վարչութեան 3 Մայիս 1957էն 6 Ապրիլ 1960ի գործունէութեան տեղեկագրերը, որմէ ի յայտ եկան հետեւեալ իրականացումները.-

Սկստական - Գայլիկներու եւ նորընծայ սկստներու գիտելիքներու գրքոյկներու տպագրութիւն

- Սկստական դպրոց-բանակում
- Սկստական նուագախումբի կազմակերպում (Լիբանան)
- Մարզական - Զատկական միջ-մասնաճիւղային գոյգ հանդիպումներ
- Միութեան քառասնամեակին նուիրուած Յուշամատեանի սպառում
- Միջ-վարժարանային մարզահանդէսներ (Լիբանան)
- Մարզիչներու ամառնային դասընթացք: Տնտեսական գետնի վրայ, մասնաճիւղերն

ու Շրջանային Վարչութիւն ունեցած են բեղուն գործունէութիւն, նիւթական կարեւոր ելեւ-մուտքերով:

*
* *

Յաջորդող օրակարգերով, բարեփոխումներ մտցուեցան ծրագիր-կանոնագրի կարգ մը յօդ-ուածներուն մէջ եւ առնուեցան որոշումներ յա-ջորդող երկամեակին ընթացքին գործադրելի:

Գլխաւոր որոշումներն են՝

- ա) Զարկ տալ աթլեթիզմին, բոլոր մասնա-ճիւղերէն ներս եւ միջ-մասնաճիւղային աթլեթիք մրցումներ կայացնել Պէյրութի մէջ:
- բ) Մասնաճիւղերու կողմէ Շրջանային Վարչութեան վճարուելիք ցենզերու յաւելում, 50% համեմատութեամբ, որպէսզի Շրջանային Վարչութիւնը կարենայ նպաստել փոքր մասնաճիւղերու շինարարական ծրագիրներուն:
- գ) Շրջանային Վարչութեան օժանդակելու նպատակով գործիչի մը ապահովումը:

Ժողովի վերջին օրակարգով կատարուեցաւ նոր Շրջանային Վարչութեան ընտրութիւն: Նոր կազմի անդամներն են.-

- Ատենապետ՝ Յովհաննէս Շահինեան
- Ատենադպիր՝ Տոքթ. Յակոբ Պերպէրեան
- Գանձապահ՝ Մանուկ Տէտէեան
- Հաշուապահ՝ Հրանդ Մուրատեան
- Խորհրդականներ՝ Օննիկ Մելիքսէթեան, Յակոբ Գատեան եւ Անդրանիկ Ուրֆալեան:

Վերոյիշեալ կազմը, 1960ի միջ-մասնաճիւղա-յին խաղերու կազմակերպութենէն ետք, կը զբա-ղի քառասնամեակի Յուշամատեանի սպառու-մով, վերամշակուած ծրագիր-կանոնագրի հրա-տարակութեամբ եւ Շրջանային Վարչութեան աւանդական ձեռնարկներով՝ սկսուողական ընդ-հանուր բանակում, միջ-մասնաճիւղային աթլեթիք խաղեր, մարզական դասընթացք եւ պարա-հանդէսներ: Գլխաւոր իրականացում մը պիտի ըլլար նաեւ Սուրիոյ եւ Լիբանանի աթլեթիք հա-ւաքականներու մասնակցութիւնը, Գահիրէի Արարատի կազմակերպած եգիպտահայ 14րդ ախոյեանական մրցումներուն:

Պէյրութի մասնաճիւղի սրահին մէջ, 27 Փետրուար 1965ին, կը բացուի Սուրիոյ եւ Լիբա-նանի Շրջանային 16րդ Պատգամաւորական Ժո-ղովը: Քառասուն լիազօր պատգամաւորներ կը ներկայացնեն Սուրիոյ եւ Լիբանանի մէջ գոր-ծող մասնաճիւղերը: Երկօրեայ հինգ նիստերով կը սպառին նախատեսուած օրակարգի բոլոր բաժինները:

Ժողովի ընթացիկ նիւթերու շարքին, գլխա-ւոր տեղը կը գրաւէ շրջանաւարտ վարչութեան շուրջ հինգ տարուայ վրայ երկարող գործունէ-ութեան տեղեկագրի քննարկումը: Երկամեայ գործունէութեան ժամանակաշրջանը երկարած էր 16 Ապրիլ 1960էն մինչեւ 1965 տարուայ Փետրուար ամսուայ վերջաւորութիւն:

Նոր երկամեակի գործունէութեան նախաժ-րագրի եւ նախահաշիւի վաւերացումէն ետք, Շրջանային Վարչութեան անդամներ կ'ընտր-ուին.-

- Ատենապետ՝ Յովհաննէս Շահինեան
- Փոխ ատենապետ՝ Տոքթ. Միսաք Արզուման-եան
- Ատենադպիր՝ Յակոբ Պերպէրեան
- Բ. ատենադպիր՝ Անդրանիկ Ուրֆալեան
- Գանձապահ՝ Արամ Անթիքաճեան
- Հաշուապահ՝ Հրանդ Մուրատեան
- Սկսուողական ներկայացուցիչ՝ Նշան Թիւյ-սիւզեան
- Աթլեթիզմի ներկայացուցիչ՝ Յակոբ Գատեան
- Ֆութպոլի ներկայացուցիչ՝ Ժողէֆ Նալ-պանտեան:

*
* *

Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի 17րդ Շրջա-նային Պատգամաւորական Ժողովը տեղի կ'ունե-



Հ.Մ.Ը.Մ.ի 17րդ. Պատգամաւորական Ժողով, 1951

նայ 25 եւ 26 Փետրուար 1967ին, Պէյրուժի մասնաճիւղի ակումբի սրահին մէջ, ներկայութեամբ՝ 35 լիազօր պատգամաւորներու, 18 խորհրդակցական ձայնով հրաւիրեալներու, 8 սկաուտ խմբապետներու եւ Շրջանային Վարչութեան անդամներուն:

Ժողովի դիւանին մաս կը կազմեն նախագահներ՝ Տիգրան Ոսկունի եւ Սիմոն Թերճանեան:

Ժողովի օրակարգերն են.-

- Բացում Պատգամաւորական ժողովի եւ առժամեայ դիւանի ընտրութիւն
- Լիազօրագրերու ստուգում
- Մայր դիւանի ընտրութիւն
- Յանձնախումբերու նշանակում
- Ընթերցում 16րդ Պատգամաւորական ժողովի ատենագրութեան

- Ընթերցում մասնաճիւղերու տեղեկագրերուն

- Ընթերցում Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկաուտական Խորհուրդի տեղեկագրերուն

- Սկաուտական եւ մարզական ընդհանուր հարցեր

- Միջ-մասնաճիւղային մարզական հանդիպումներ

- Քննութիւն Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկաուտական Խորհուրդի գործունէութեանց

- Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան յիսնամեակի սօնակատարութիւն

- Մասնաճիւղերէ եկած առաջարկներ

- Յանձնախումբերու զեկուցում

- Ընտրութիւն նոր Շրջանային Վարչութեան:

Յաջորդական հինգ նիստերու ընթացքին, վերոյիշեալ բոլոր օրակարգերը իրենց լուծումները ստացան եւ Շրջանային Վարչութեան 1965-66 երկամեակի գործունէութիւնը որակուեցաւ «գնահատելի»:

Օրակարգի վերջին բաժինով ընտրուած Շրջանային Վարչութիւնը իր դիւանը կազմեց հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Յովհաննէս Շահինեան
- Փոխ ատենապետ՝ Տօքթ. Միսաք Արզումանեան
- Ատենադպիրներ՝ Տօքթ. Յակոբ Պերպէրեան, Անդրանիկ Ուրֆալեան
- Գանձապահ՝ Արամ Անթիքաճեան
- Հաշուապահ՝ Հրանդ Մուրատեան
- Սկսուտ պատասխանատու՝ Նշան Թիւսիւզեան

Ֆուլթայոլի պատասխանատու՝ Ժողէֆ Նալպանտեան

Աթլէթիք պատասխանատու՝ Յակոբ Գատեան:

1967-68 երկամեակին Շրջանային Վարչութեան գլխաւոր իրականացումներէն եղաւ, 1968ին Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան յիսնամեակի տօնակատարութիւնը հրապարակային հանդիսութեամբ: Սակայն քաղաքական պայմաններու բերումով, յիսնամեակին նշումին յատուկ՝ նախատեսուած մարզական մեծ ելոյթը հակառակ նախապատրաստական աշխատանքներուն, չիրականացաւ:

*
* *

Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելեան շրջանի պատգամաւորական 18րդ ժողովը գումարուեցաւ 1 եւ 2 Մարտ 1969ին, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի

ակումբին մէջ: Ժողովին կը մասնակցէին միայն Լիբանանի վեց մասնաճիւղերու ներկայացուցիչները, Մոնթրէալի մասնաճիւղի լիազօրած ներկայացուցիչները, հրաւիրեալ վեթերան Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ մամուլի ներկայացուցիչներ:

Նիստերուն նախագահութիւնը վարեցին Վահէ Դանիէլեան եւ Յովհաննէս Պերպէրեան, իսկ քարտուղարներն էին Եփրեմ Քենտիրճեան եւ Բիւզանդ Թորիկեան:

Մասնաճիւղերու տեղեկագրերուն, Շրջանային Սկսուտական Խորհուրդի եւ Շրջանային Վարչութեան գործունէութեան տեղեկագրերուն ընթերցումէն ետք, լուսաբանական հարցումներով եւ ըստ հոլթեան քննութեամբ, ժողովը ընթացաւարտ Շրջանային Վարչութեան գործունէութիւնը որակեց «գնահատելի»:

Ժողովի վերջին օրակարգով ընտրուած Շրջանային Վարչութեան անդամները, իրենց աշխատանքներու բաժանումը կատարեցին հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Յովհաննէս Շահինեան
- Փոխ ատենապետ՝ Տօքթ. Միսաք Արզումանեան
- Ատենադպիր՝ Երուանդ Տէմիրճեան
- Գանձապահ՝ Ժիրայր Խաչատուրեան
- Հաշուապահ՝ Հրանդ Մուրատեան

Խորհրդականներ՝ Յովհաննէս Տէր Յարութիւնեան, Ժողէֆ Նալպանտեան, Վահէ Դանիէլեան, Տօքթ. Վարդգէս Կիւրեղեան:

Այս կազմի գլխաւոր իրականացումներէն պիտի ըլլար Պէյրութի եւ Պուրճ Համուտի մասնաճիւղերուն միջեւ ֆուլթայոլի Ա. խումբի եւ Պուրճ Համուտի խումբերուն միջեւ փոխ յարաբերութիւնները ճշդող գրաւոր համաձայնագրիկանոնագրի մը մշակումը, բաղկացած 14 կէտերէ եւ այդ համաձայնագրի գործադրութեան համար յատուկ յանձնախումբի մը կազմութիւնը, մասնակցութեամբ Շրջանային Վարչութեան մէկ ներկայացուցչին:



Մերձաւոր Արեւելքի 18րդ. Պատգամաւորական Ժողովի խմբանկար

*

**

9 եւ 10 Յունուար 1971ին, Պէյրութի մասնաճիւղի ակումբին մէջ գումարուեցաւ Հ.Մ. Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային 19րդ Պատգամաւորական ժողովը, մասնակցութեամբ՝ Մոնթրէալի, Լոս Անճելըսի եւ Լիբանանի եօթը մասնաճիւղերուն: Ժողովին նախագահութիւնը ստանձնեցին, Տիգրան Ոսկունի եւ Քերոբ Առաքելեան, քարտուղարութեամբ՝ Արմէն Տօնոյեանի եւ Բիւզանդ Թորիկեանի: 44 լիազօր պատգամաւորներու կողքին, ժողովին մասնակցեցան 25 խորհրդակցական ձայնով հրաւիրեալներ, ի պաշտօնէ 10 սկաուտ խմբապետներ, ընթացաւարտ Շրջանային Վարչութեան անդամներ եւ մամուլի ներկայացուցիչներ:

Ժողովի օրակարգի նիւթերն են.-

- Բացում Պատգամաւորական ժողովի եւ առժամեայ դիւանի ընտրութիւն
- Լիազօրագրերու ստուգում
- Մայր դիւանի ընտրութիւն
- Յանձնախումբերու նշանակում
- Ընթերցում 18րդ Պատգամաւորական ժողովի ատենագրութեան
- Ընթերցում մասնաճիւղերու տեղեկագրերուն.
- Ընթերցում Շրջանային Սկաուտական Խորհուրդի եւ Շրջանային Վարչութեան տեղեկագրերուն
- Քննութիւն Շրջանային Սկաուտական Խորհուրդի եւ Շրջանային Վարչութեան գործունէութեանց



Հ.Մ.Ը.Մ.ի 19րդ. Շրջանային Պատգամաւորական Ժողով

- Սկսուտական եւ մարզական ընդհանուր հարցեր
- Ծրագիր-կանոնագրի կարգ մը յօդուածներու փոփոխութիւն
- Մասնաճիւղերէ եկած առաջարկներու քննութիւն
- Յանձնախումբերու զեկուցում
- Ընտրութիւն նոր Շրջանային Վարչութեան:

Ժողովը յաջորդական հինգ նիստերով սպառեց օրակարգի բոլոր նիւթերը եւ ընտրեց նոր վարչական կազմ: Վերջինս իր պաշտօններու բաժանումը կատարեց հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Յովհաննէս Շահինեան
 Փոխ ատենապետ՝ Տոքթ. Միսաք Արզումանեան

Ատենադպիր՝ Երուանդ Տէմիրճեան եւ Վարուժան Մուրատեան

Գանձապահ՝ Վարդգէս Ալահայտոյեան
 Հաշուապահ՝ Բիւզանդ Թորիկեան
 Խորհրդականներ՝ Վարդիվառ Յովհաննէսեան, Յովհաննէս Տէր Յարութիւնեան, Տոքթ. Յարութիւն Գազանճեան (Գեղարդ):

*

**

Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային 20րդ պատգամաւորական ժողովը տեղի ունեցաւ Պէյրութի մէջ զոյգ հանգրուաններով: Առաջին հանգրուանը կայացաւ 10 եւ 11 Փետրուար 1973 ին, իսկ երկրորդ հանգրուանը 10 եւ 11 Մարտ 1973ին:



Հ.Մ.Ը.Մ.ի 20րդ. Շրջանային Պատգամաւորական Ժողով

Այս զոյգ նստաշրջաններուն ժողովի դիւանին մաս կազմեցին նախագահներ՝ Տիգրան Ոսկունի եւ Յովհաննէս Պերպէրեան, իսկ քարտուղարներ՝ Բենօ Թոնդեան եւ Յարութիւն Պերպէրեան:

Հետեւեալ մասնաճիւղերը իրենց պատգամաւորներով մասնակցեցան այս ժողովներուն. Լիբանանէն՝ Պէյրութ, Պուրճ Համուտ, Թրիփոլի, Ճիւնի, Անթիլիաս, Չահլէ եւ Այնճար: Գանատայէն՝ Մոնթրէալ եւ Թորոնթօ: Խորհրդակցական ձայնով մասնակցեցան նաեւ Կիպրոսի Հ.Ե.Մ.ի եւ Աղեքսանդրիոյ Կամքի ներկայացուցիչները:

Առաջին նստաշրջանի օրակարգի բաժիններն են.-

1.- Բացում 20րդ Պատգամաւորական ժողովի եւ առժամեայ դիւանի ընտրութիւն

2.- Լիազօրագրերու ստուգում

3.- Մնայուն դիւանի ընտրութիւն

4.- Յանձնախումբերու ընտրութիւն. բանաձեւի, հաշուեքննիչ եւ նախահաշիւ, արխիւային

5.- Ընթերցում եւ վաւերացում 19րդ Պատգամաւորական ժողովի ատենագրութեան

6.- Ընթերցում մասնաճիւղերու երկամեայ գործունէութեանց տեղեկագրութիւններու

7.- Ընթերցում Շրջանային Սկաուտական Խորհուրդի տեղեկագրութեան

8.- Ընթերցում Շրջանային Վարչութեան տեղեկագրութեան

9.- Քննութիւն Շրջանային Սկաուտական Խորհուրդի գործունէութեան

10.- Քննութիւն Շրջանային Վարչութեան գործունէութեան

11.- Սկստական ընդհանուր հարցեր

12.- Մարզական ընդհանուր հարցեր:

Բ. նստաչրջանի օրակարգով քննուեցան հետեւեալ նիւթերը.-

12.- Շարունակութիւն 12րդ օրակարգի

13.- Սկստական Ծրագիր-Կանոնագրի քննութիւն եւ վաւերացում

14.- Կեդրոնական Վարչութիւն

15.- Բանաձեւերու քննութիւն եւ վաւերացում

16.- Առաջարկներ

Իսկ վերջին օրակարգով ընտրուեցաւ նոր վարչական կազմ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Յովհաննէս Շահինեան

Փոխ ատենապետ՝ Տոքթ. Միսաք Արզումանեան

Ատենադպիրներ՝ Տոքթ. Յարութիւն Գազանճեան (Գեղարդ) եւ Կարօ Պետրոսեան

Գանձապահ՝ Վարդգէս Ալահայտոյեան

Հաշուապահ՝ Բիւզանդ Թորիկեան

Մարզական պատասխանատու՝ Յովհաննէս Տէր Յարութիւնեան

Սկստական պատասխանատու՝ Յակոբ Համամճեան

Խորհրդական՝ Վահէ Դանիէլեան

Այս կազմը ընթացիկ գործունէութեան կողքին յաջողցուց Հ.Մ.Ը.Մ.ի նորագոյն ժամանակաշրջանի Պատգամաւորական անդրանիկ ընդհանուր ժողովի պատրաստութիւնը, գործակցելով Հ.Մ.Ը.Մ.ը Համագաղութային Կազմակերպութեան վերածելու Կոչուած Մարմնի եռանդամ յանձնախումբին աշխատանքներուն:

*
* *

Շրջանային Պատգամաւորական ժողովներու կազմակերպչական այս շղթան վերջ պիտի գտնէր այս 20րդ ժողովով: Աւելի ուշ եւ նոր Ծրագիր-

Կանոնագրի սահմանումով, Լիբանանի շրջանը շարքը պիտի շարունակէր 21րդով եւ «Շրջանային Ներկայացուցչական Ժողով» կոչումով:

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանի կազմաւորման եւ զօրացման օգտակար եղած են, բացի իրերայաջորդ Պատգամաւորական ժողովներէն, նաեւ յատուկ հարցերու շուրջ եւ միակ օրակարգերով գումարուած համագումարները: Իսկ Միութեան նպատակներուն եւ արձանագրած յաջողութիւններուն արձագանգ հանդիսացած են, ամեակներ ու հրապարակային տօնակատարութիւններ, նպաստելով հանրային լայն խաւերու մօտ, Հ.Մ.Ը.Մ.ի ժողովրդականացման:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ

Շրջանային Վարչութեան կողմէ ծրագրուած 10 Յունիս 1945ին, Հալէպի մէջ կայանալիք սկստական հարցերու յատուկ սեմինարը անորոշ ժամանակով կը յետաձգուի: Սեմինարի նիւթերն էին՝

- Շրջաններու սկստական ընդհանուր գործունէութեան ներդաշնակում
- Սկստներու եւ աստիճանաւորներու դաստիարակչական ծրագիրներ
- Տարագներու նոյնացում
- 1945ի ամրան միջ-մասնաճիւղային ընդհանուր բանակումի կազմակերպում
- Շրջաններէն եկած սկստական զանազան հարցեր:

Յետաձգուած այս ժողովը տեղի կ'ունենայ 15 Մարտ 1946ին, Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի ակումբին մէջ, մասնակցութեամբ՝ Պէյրութի, Պուրճ Համուտի, Դամասկոսի, Ջահլէի, Արաբ Բունարի եւ Հալէպի մասնաճիւղերու լիազօր ներկայացուցիչներուն եւ խորհրդականներուն: Ժողովը կը վարէ Նշան Թիւյսիւղեան, քարտուղարութեամբ՝ Արսէն Դանիէլեանի: Օրակարգի նիւթերն են՝

- 1) Լիազօրագրերու ճշդում
- 2) Զեկուցում շրջաններու
- 3) Ընթերցում Ծրագիր-Կանոնագրի
- 4) Սկսուտական դաստիարակութիւն
- 5) Տարագներու հարց
- 6) Հ.Մ.Ը.Մ.ի սկսուտներու դիրքը արաբ եւ այլ հայ սկսուտներու վերաբերմամբ
- 7) Սկսուտական գերագոյն խորհուրդ
- 8) Միջ-մասնաճիւղային ընդհանուր բանակում
- 9) Պարբերաթերթ
- 10) Սկսուտի Օր
- 11) Սկսուտական անդամատետրերու միօրինակութիւն:

Զոյգ նիստերով գումարուած այս ժողովի գլխաւոր աշխատանքը պիտի ըլլար Սկսուտական Ծրագիր-Կանոնագրի մշակումը, որուն պատճէնը կը յղուի Շրջանային Վարչութեան առ ի վաւերացում: Ժողովը գնահատանք կ'արձանագրէ Նշան Թիւյսիւզեանի խմբագրութեամբ եւ Շրջանային Վարչութեան հովանաւորութեամբ նոր հրատարակուած «Հայ Սկսուտին Գիրքը» ի լոյս ընծայման առթիւ եւ կը թելադրէ շրջաններուն օգտուիլ այդ հրատարակութեան ընձեռած գործնական եւ դաստիարակչական առաւելութիւններէն:

*
* *

12-րդ Պատգամաւորական ժողովը կ'որոշէ Շրջանային Վարչութեան գործունէութեան ժամանակաշրջանի ընթացքին միջ-մասնաճիւղային վարչականներու խորհրդակցական ժողով մը գումարել: Առ այդ Շրջանային Վարչութիւնը յատուկ շրջաբերականով կը ճշդէ նախատեսուած ժողովի թուականը՝ 12 Ապրիլ 1955, Հալէպի մէջ, Զատկական միջ-մասնաճիւղային հանդիպումներուն յաջորդող երեքշաբթի օրը:

Խորհրդակցական ժողովը տեղի կ'ունենայ մասնակցութեամբ մասնաճիւղերու վարչական

կազմերուն մէկ կամ երկու ներկայացուցիչներուն: Մասնաճիւղեր եւ Շրջանային Վարչութիւն կու տան ամփոփ զեկուցումներ իրենց գործունէութեան մասին: Կը ներկայացուին առաջարկներ գործունէութեան մնացեալ ժամանակաշրջաններուն համար:

1960ական թուականներէն սկսեալ, Սուրիոյ մասնաճիւղերու մեծամասնութեան գործունէութեանց դադրելէն ետք: Միութիւնը հետաքրքրող յատուկ հարցերու քննութեան համար, միայն Լիբանանի մասնաճիւղերու մասնակցութեամբ, կայացան խորհրդակցական համագումարներ յատկապէս սկսուտական ճիւղի պարագային:

Այս կարգի խորհրդակցական ժողովներէն կը բխին մասնաճիւղերու փոխ յարաբերութիւնները սահմանող ներքին կանոնագրութիւններ Ֆութպոլի, աթլետիզմի կամ սկսուտական բաժիններու գործունէութեան համար: Շրջանային Վարչութիւնը կը հովանաւորէ եւ կը հսկէ նման համագումարներու որոշումներուն գործադրութեան երբեմն իր ներկայացուցիչն ալ ունենալով անոնց յատուկ Շրջանային յանձնախումբերուն մէջ:

Այսպէ՛ս, 28 Յունուար 1968ին կայացաւ սկսուտ խմբապետներու համագումար Պէյրութի ահումբին մէջ, հրաւերով Լիբանանի Սկսուտական Շրջանային Խորհուրդին:

Համագումարի օրակարգի վրայ կը գտնուէին հետեւեալ կէտերը.

Բացման խօսք

Զեկուցում մասնաճիւղերու

Զեկուցում Շրջանային սկսուտ ընդհանուր խմբապետի

1968 տարեշրջանի ընդհանուր գործունէութեան ծրագրի մշակում

Կազմակերպչական հարցեր

Թելադրանք եւ նկատողութիւններ սկսուտ, գայլիկ եւ արենոյ՝ պատասխանատուներուն

Փակման խօսք:

Խմբապետական կազմերը, յատկապէս նոր աստիճանաւորներ, մեծապէս օգտուեցան այս համագումարներու մասնակցութենէն:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՍՈՒՐԻՈՅ ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՂԵՍՏԻՆԻ ԵՒ ՅՈՐԴԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

- ՄԻՋ-ՄԱՍՆԱՃԻԻՂԱՅԻՆ ԽԱՂԵՐ
- ՄԻՋ-ՄԱՍՆԱՃԻԻՂԱՅԻՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆՆԵՐ
- ՄԻՋ-ՎԱՐԺԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՐԶԱՀԱՆԴԷՍՆԵՐ
- ԼԵՎԱՄ
- ՄԱՐԶԻՉՆԵՐՈՒ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ



1971-1972 տարեշրջանի Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան կազմը.
Նստած՝ Երուանդ Տէմիրճեան (Ատենադպիր), Տոքթ. Միսաք Արզումանեան (Փոխ ատենապետ), Յովհաննէս
Շահինեան (Ատենապետ), Վարդգէս Ալահայտոյեան (Գանձապահ), Բիւզանդ Թորիկեան (Հաշուապահ):
Ուղի՝ Տոքթ. Յարութիւն Գապանճեան - Գեղարդ, Յովհաննէս Տէր Յարութիւնեան, Վարդիլառ Յովհաննէսեան
(Խորհրդականներ), Վարուժան Մուրադեան (Բ. ատենադպիր):

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Սուրիոյ, Լիբանանի, Պաղեստինի եւ Յորդանանի մասնաճիւղերու եւ Շրջանային Վարչութեան գործունէութեան գլխաւոր առանցքը կազմած են մարմնամարզն ու մարզախաղերը:

Առաջինի պարագային արդիւնքները եղած են համեմատաբար համեստ, գլխաւորաբար ակթիւթիզմի կիրարկումով, հետաքրքրուող եւ մասնագէտ մարզիչներու բացակայութեան պատճառով: Փոխարէնը, մարզախաղերը ծաւալած են յաջողութեամբ Ֆութպոլի, պասքեթպոլի, թենիսի, փինկ-փոնկի եւ հեծելարշաւի կիրարկումով: Մասնաճիւղերու կողմէ վերոյիշեալ խաղերու կիրարկումի կողքին, Շրջանային Վարչութիւնը կազմակերպած է միջ-մասնաճիւղային խաղեր կամ հանդիպումներ, միջ-մասնաճիւղային Ողիմպիականներ, միջ-վարժարանային մարզահանդէսներ եւ մարզիչներու ամառնային դասընթացքներ, որոնց ամբողջութիւնը կը կազմէ Շրջանային Վարչութեան մարզական գործունէութիւնը:

ՄԻՋ-ՄԱՍՆԱՃԻՒՂԱՅԻՆ ԽԱՂԵՐ

1940էն սկսեալ մինչեւ 1974 թուականը, Շրջանային Վարչութիւնները նախաձեռնած են թիւով քսաներկու միջ-մասնաճիւղային մրցաշարքերու, որոնք կայացած են Զատկական սոնական օրերու ընթացքին եւ ծանօթ են Միջ-մասնաճիւղային Զատկական Հանդիպումներ անունով: Խաղերը տեղի ունեցած են Հալէպի մէջ տեղւոյն մասնաճիւղի կազմակերպութեամբ բացի 1972ի 35րդ միջ-մասնաճիւղային խաղերէն, որոնք տեղի ունեցան Պէյրութի մէջ, Լիբանանի մասնաճիւղերու գործակցութեամբ:

*

* *

13րդ միջ-մասնաճիւղային հանդիպումը տե-

ղի ունեցաւ 24 եւ 25 Մարտ 1940ին, սահմանափակուած Պէյրութի եւ Հալէպի մասնաճիւղերու միջեւ Ֆութպոլի մրցումով մը եւ սկսուածական խումբերու մասնակցութեամբ ընդհանուր տողանցքով:

Օրուայ թագուհին էր Տիկին Գառնիկ Ազիրեան, պատուոյ օրիորդներ՝ Ճիկէրեան, Վ. Պետիկեան, Գ. Տէմիրճեան, Գունտաքճեան, Շիթիլեան, Ազիրեան, Գալեմքերեան, բաժակներ տրամադրած էին՝ Լէօբոլտ Կասչիկ եւ Լեւոն Պեքեարեան:

Հակառակ պատերազմական օրերու պատճառով ստեղծուած դժուարին պայմաններուն Հ.Մ.Ը.Մ.ը կը յաջողէր աւանդական ձեռնարկի մը շարունակականութիւնը:

*

* *

13 եւ 14 Ապրիլ 1941ին, Հալէպի մէջ կայացած 14րդ միջ-մասնաճիւղային խաղերը, Շրջանային Վարչութեան որոշումով կը սահմանափակուին Ա. դասակարգի, Պէյրութի եւ Հալէպի մասնաճիւղերու Ֆութպոլի խումբերուն միջեւ մրցումով: Մնացեալ մասնաճիւղերը բացակայ են, փոխադրական ծախսերու անհամեմատ սղութեան պատճառով: Բ. դասի մրցումը կը կատարուի Հալէպի մասնաճիւղի պահեստի խումբին եւ Նոր Գիւղի խումբերուն միջեւ: Մրցաշարքը կը հովանաւորէ Սուրիոյ զինուորական ընդհ. հրամանատար Colonel Roffier:

Մրցումները տեղի կ'ունենան երկու հանգրուանով: Առաջին օրուայ յաղթականներն են Ա. դաս Հալէպ 6-3 արդիւնքով եւ Բ. դաս Նոր Գիւղ 4-2 արդիւնքով: Բ. օրուայ մրցումներուն յաղթականները նոյններն են այս անգամ 2-1 եւ 4-0 արդիւնքներով:

Խաղերը կը փակուին մարզիկներու եւ սկսուածներու ընդհանուր տողանցքով, առաջնորդութեամբ զինուորական նուագախումբին: Խաղերու ընդհանուր եկամուտն է 39.205 սուրիական դահեկան:

*
* *

1942ի 15րդ միջ-մասնաճիւղային խաղերը տեղի կ'ունենան Հալէպի մէջ, կրկին սահմանափակուած միայն Ֆուլթպոլի մրցումով մը Պէյրուսի եւ Հալէպի կազմերուն միջեւ:

Պատերազմական օրերու պարտադրած այս սեղմումները հետզհետէ շրջանցուեցան օրուայ դեկավարութեանց կողմէ եւ Հ.Մ.Ը.Մ.ի ձեռնարկները սկսան վերագտնել երբեմնի իրենց գրաւչութիւնը՝ արժանանալով հալէպահայութեան անվերապահ գնահատանքին: Մարզական խումբերուն միացող սկաուտական շարքերու անդամները միշտ ալ գրկաբաց եւ սիրայօժար ընդունուած էին Հ.Մ.Ը.Մ.ական ընտանիքներու յարկերէն ներս Ջատկական օրերուն Հալէպի մէջ իրենց կեցութեան ընթացքին:

*
* *

25 եւ 27 Ապրիլ 1943ին, 16րդ միջ-մասնաճիւղային Ֆուլթպոլի մրցումները տեղի ունեցան Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի դաշտին վրայ, մասնակցութեամբ 11 մասնաճիւղերու խումբերուն: Օրուան թագուհին էր Տիկին Ալիս Երուանդ Տէմիրճեան:

Ֆուլթպոլի Ա. դասի ախոյեանութեան տիրացաւ Հալէպի մասնաճիւղը 3-2 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Պէյրուսի կազմը: Բ. դասի ախոյեանն էր Ճարապլուսի մասնաճիւղի կազմը, որ 8-2 արդիւնքով պարտութեան մատնեց Լաթաքիոյ խումբը: Յաղթական խումբերը ստացան Երուանդ Սարգիս Տէմիրճեանի տրամադրած բաժակը: 10.000էն աւելի հանդիսականներու ներկայութեամբ, Երկուշաբթի 27 Ապրիլին, տեղի ունեցաւ փակման ընդհանուր տողանցքը, առաջնորդութեամբ Հալէպի մասնաճիւղի սկաուտական նուագախումբին: Տո-

ղանցքին, առաջին անգամ ըլլալով, մասնակցեցան Ս.Օ.Խաչի 100 արծուիկները:

*
* *

Հովանաւորութեամբ՝ Ջարեհ Եպս. Փայասլեանի, 17րդ միջ-մասնաճիւղային խաղերը տեղի ունեցան 9 եւ 10 Ապրիլ 1944ին Հալէպի մէջ: Ա. դասակարգի Ֆուլթպոլի մրցաշարքին ախոյեանութեան տիրացաւ Պէյրուսի մասնաճիւղի խումբը, ստանալով Գէորգ Չաթալպաչեանի տրամադրած բաժակը, իսկ Բ. դասի մրցաշարքին ախոյեանն էր Պուրճ Համուտի կազմը:

17րդ միջ-մասնաճիւղային խաղերուն Պէյրուսի եւ Հալէպի մասնաճիւղերուն միջեւ տեղի ունեցան հետեւեալ մրցումները.

Պասքեթպոլ՝ ախոյեան Հալէպ
Վոլիպոլ՝ ախոյեան Հալէպ
Թենիս՝ ախոյեան Պէյրուս (Հանրի Թելեան)

Փինկ փոնկ՝ ախոյեան Հալէպ (Համազասպ Արզումանեան)

Օրուայ թագուհի՝ Տիկին Վահէ Սեթեան յանձնեց յաղթանակի բաժակները:

*
* *

18րդ միջ-մասնաճիւղային խաղերը տեղի ունեցան 31 Մարտ, 1 եւ 2 Ապրիլ 1945ին: Առաջին անգամ ըլլալով Ֆուլթպոլի 13ական խաղացողներէ բաղկացող խումբերու կողքին այս խաղերուն մասնակցեցան պասքեթպոլի խումբերը, 7ական խաղացողներով եւ թենիսի կազմերը 5ական մրցողներով: Ֆուլթպոլի Ա. դասի մրցաշարքին մասնակցեցան՝ Պէյրուս, Հալէպ, Դամասկոս եւ Երուսաղէմ:

Այս բազմաճիւղ հանդիպումներու յաջողութեան համար, Շրջանային Վարչութիւնը մասնաճիւղերուն կը պարտադրէ աւելի բժախնդիր

մօտեցում, պայմաններու լրիւ յարգանք ու մանաւանդ հրապարակային ելոյթներու առթիւ Հ.Մ.Ը.Մ.ավայել կեցուածք, դաշտերու վրայ փոխադարձ եղբայրական հանդուրժողութիւն եւ մարզական ազնիւ ոգիի ցուցաբերում:

*
* *

19րդ միջ-մասնաճիւղային Զատկական հանդիպումները տեղի կ'ունենան Հալէպի մէջ 20էն 22 Ապրիլ 1946ին: 14 մասնաճիւղեր իրենց մարզական եւ սկաուտական կազմերով կը մասնակցին այս խաղերուն:

Ա. դասակարգի Ֆուտպոլի մրցումը, կայացած Պէյրուտի եւ Հալէպի մասնաճիւղերու խումբերուն միջեւ, կ'աւարտի 2ի դէմ 2 հաւասար արդիւնքով: Բ. դասակարգի մրցաշարքի աւարտական մրցումին կը ճակատին Պուրճ Համուտի եւ Տէր Զօրի մասնաճիւղերու կազմերը: Մրցումը կ'աւարտի առաջինի յաղթանակով՝ 2-0 արդիւնքով:

Պասքեթպոլի մրցաշարքերուն Պէյրուտի տղոց եւ աղջկանց կազմերը կ'ապահովեն յաղթանակի բաժակները: Վոլիպոլի եւ թենիսի մրցաշարքերուն ախոյեաններն են Հալէպի մասնաճիւղի կազմերը:

Փակման հանդիսութեան առթիւ ընդհանուր տողանցքին կը մասնակցին մասնաճիւղերու 2500 սկաուտներն ու մարզիկները:

*
* *

1947ին, միջ-մասնաճիւղային խաղերու շարքի թիւը վերատեսուութեան ենթարկուելով, 1927ի Հալէպ-Պէյրուտ առաջին հանդիպումը շարքին մէջ կը մտնէ եւ 1947ի 20րդ միջ-մասնաճիւղային խաղերը կը դառնան 21րդ: Հետեւաբար, 6 Ապրիլ 1947ին միջ-մասնաճիւղային 21րդ հանդիպումները տեղի կ'ունենան Հալէպի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ականներու անձնական աշխատանքով

հարթուած՝ Նոր Գիւղ թաղամասի «Նաւասարդեան» մարզադաշտին վրայ, նկատի ունենալով որ հակառակ տասնեակ տարիներու աւանդութեամբ Հ.Մ.Ը.Մ.ին վերապահուող Հալէպի քաղաքապետարանի դաշտը, վարձու տրուած էր Հ.Մ.Մ.ին, դժուար կացութեան մատնելով կազմակերպիչ յանձնախումբը:

Հալէպի մասնաճիւղի բոլոր բաժիններու անդամները, մարզիկներ եւ սկաուտներ, խաղերու բացումէն քանի մը օրեր առաջ փրկուելու համար վերոյիշեալ դժուարին կացութենէն, բահ ու բրիչ ձեռին, իրենց աշխատանքի ժամերէն զոհելով կը դիմեն Նաւասարդեան մարզադաշտ եւ գերմարդկային ճիգերով դաշտը կը հարթեն, թրիպիւն կը շինեն եւ ցանկապատը կը կազմեն: «Նաւասարդեան» մարզադաշտը պատրաստ է ընդունելու միջ-մասնաճիւղային խաղերուն մասնակցող խումբերու մարզիկները:

*
* *

Միջ-մասնաճիւղային 22րդ հանդիպումները տեղի կ'ունենան 27,28 եւ 29 Մարտ 1948ին Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի եւ քաղաքապետարանի դաշտերուն վրայ, հովանաւորութեամբ՝ Բերիոյ Թեմի Առաջնորդ Զարեհ եպիսկոպոս Փայասլեանի (հետագային՝ Զարեհ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ) եւ նախագահութեամբ Փարիզի «Յառաջ» օրաթերթի հանրածանօթ խմբագիր՝ Շաւարշ Միսաքեանի (երբեմնի խմբագիր Պոլսոյ Հ.Յ.Դաշնակցութեան օրկան՝ Ազատամարտի):

Թենիսի Ֆուտպոլի, պասքեթպոլի, փինկփոնկի, վոլիպոլի մրցումները տեղի ունեցան քաղաքապետարանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի դաշտերուն վրայ: Ֆուտպոլի Ա. դասակարգի բաժակը ստացաւ Պէյրուտի խումբը 1-0 արդիւնքով յաղթելով Հալէպի կազմին: Բ. դասի ախոյեան հանդիսացաւ Պուրճ Համուտը: Թենիսի ախոյեանութիւնը շահեցան Պէյրուտի թենիսիստները, իսկ փինկփոնկի եւ վոլիպոլի բաժակները ապահովեցին Հալէպի կազմերը:

25000 հանդիսականներ ներկայ եղան փակման հանդիսութեան եւ ընդհանուր տողանցքին, որուն մասնակցեցան 3000 սկաուտներ, արենոյշներ, գայլիկներ եւ մարզիկներ: Մրցաշարքերը եւ հանդիսութիւնները ամբողջութեամբ նկարահանուեցան ժապաւէնի վրայ:

*
* *

16-18 Ապրիլ 1949ին, Հալէպի քաղաքապետարանի դաշտին վրայ տեղի կ'ունենան 23րդ միջ-մասնաճիւղային խաղերը: Նախորդ տարիներու յայտագիրներէն զեղջուած էին փինկ-փոնկը, թենիսը եւ վոլիպոլը, խճողումներու առաջքը առնելու նպատակով: Այս մարզախաղերու մրցաշարքը փոխադրուած էին յաջորդ ողիմպիականին միացուելու համար:

Ֆուտբոլի մրցաշարքերը տեղի ունեցան մասնաճիւղերու երեք դասերու բաժանումով:

Ա. դասակարգի ախոյեան հանդիսացաւ Հալէպի խումբը

Բ. դասակարգի ախոյեան՝ Պուրճ Համուտ

Գ. դասակարգի ախոյեան՝ Հատէթ:

Պասքեթպոլի տղոց եւ աղջկանց խումբերու Ա. դասակարգի ախոյեան՝ Պէյրուժի կազմերը:

Ախոյեան բոլոր խումբերը ստացան յաղթանակի բաժակներ 18 Ապրիլի Երկուշաբթի օրուայ խաղերու փակման հանդիսութեան ընթացքին:

Առաջնորդութեամբ Հալէպի մասնաճիւղի սկաուտական նուագախումբին, տողանցեցին մասնաճիւղերու սկաուտական խումբերն ու մարզիկները:

*
* *

9, 10 եւ 11 Ապրիլ 1950ին, Հալէպի քաղաքապետարանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի դաշտերուն վրայ տեղի կ'ունենան միջ-մասնաճիւղային 24րդ խաղերը, մասնակցութեամբ Սուրիոյ, Լիբանանի եւ

Յորդանանի Հ.Մ.Ը.Մ.ի 21 մասնաճիւղերու պատուիրակութիւններուն:

Գ. դասի ֆուտբոլի մրցաշարքը կ'աւարտի Հոմսի մասնաճիւղի յաղթանակով: Տեղի կ'ունենան պասքեթպոլի տղոց եւ աղջկանց խումբերու մրցաշարքերը: Բայց տեղատարափ անձրեւի պատճառով կարելի չըլլար կայացնել Ա. եւ Բ. դասակարգի ֆուտբոլի աւարտական մրցումները եւ փակման հանդիսութեան ընդհանուր տողանցքը: Բ. դասակարգի աւարտական խումբերուն իւրաքանչիւրին կը յանձնուի բաժակ մը:

Շրջանային Վարչութեան գանձը, այս պատճառով, 3500 Լ. ոսկի բացի մը առջեւ կը գտնուի:

Ա. դասակարգի առկախուած աւարտական մրցումը տեղի կ'ունենայ 28 Մայիսին, Հալէպի մէջ, վերջնոյս մասնաճիւղի 3-1 յաղթանակով Պէյրուժի կազմին վրայ:

*
* *

Սուրիոյ, Լիբանանի եւ Յորդանանի միջ-մասնաճիւղային 25րդ հանդիպումները տեղի ունեցան 24, 25 եւ 26 Մարտ 1951ին Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի եւ քաղաքապետարանի դաշտերուն վրայ:

Խաղերուն մասնակցեցան ֆուտբոլի, պասքեթպոլի Ա., Բ. եւ Գ. դասի 24 մասնաճիւղերու խումբերը: Օրուայ հովանաւորութիւնը ստանձնած էր Հալէպի նահանգապետ Ֆուատ Պէյ Հալէպի: Աւելի քան 25.000 հանդիսականներ ներկայ եղան խաղերուն:

Ֆուտբոլի Ա. դասի ախոյեանութիւնը շահեցաւ Պէյրուժի մասնաճիւղի աւարտական մրցումին 4-1 յաղթելով Հալէպին: Բ. դասի ախոյեան հանդիսացաւ Գամիշլիի կազմը յաղթելով Տէր Զօրին 2-1, իսկ Գ. դասի բաժակը ստացաւ Հոմսի մասնաճիւղի խումբը:

Պասքեթպոլի տղոց եւ աղջկանց Պէյրուժի խումբերը տիրացան ախոյեանութեան, յաղթե-

լով Հալէպի մասնաճիւղի խումբերուն: Բ. դասի տղոց ախոյեանութիւնը ապահովեց Պուրճ Համուտի կազմը 13ի դէմ 14 կէտով յաղթելով Ամմանի մասնաճիւղի խումբին:

Երկուշաբթի կէսօրէ ետք քաղաքապետարանի դաշտին վրայ Ֆութպոլի աւարտական մրցումէն ետք տեղի ունեցաւ աւանդական տողանցքը մասնակցութեամբ շուրջ 2500 մարզիկներու եւ սկաուտներու:

*
* *

12էն 14 Ապրիլ 1952ին, Հալէպի մէջ կայացան միջ-մասնաճիւղային 26րդ խաղերը մասնակցութեամբ հետեւեալ 21 մասնաճիւղերու մարզական եւ սկաուտական պատուիրակութիւններուն. Պէյրուտ, Պուրճ Համուտ, Թրիփոլի, Զահլէ, Հատէթ, Դամասկոս, Հալէպ, Հոմս, Լաթաքիա, Քեսապ, Ազէզ, Տէր Զօր, Գամիշլի, Այն Արուս, Ճարապլուս, Ռաքքա, Այն Արապ, Հասիչէ, Թել Պրաք, Ռաս Իւլ Այն, Ամման, Ինչպէս նաեւ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի Ֆութպոլի ներկայացուցչական խումբին եւ Ս.Օ.Խաչի արծուիկներուն:

Փակման հանդիսութեան եւ ընդհանուր տողանցքին ներկայ եղան օրուան թագուհի՝ Տիկին Նինա Ճիտեճեան եւ պատուոյ օրհորդներ՝ Անահիտ Տումանեան, Զարուկ Փիրանեան, Վարդուհի Պոզդուրտեան, Սանդուխտ Տաղտեվիրեան եւ Նանիկ Ազիրեան:

Վերոյիշեալ խաղերու մասին Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Տօքթ. Յակոբ Պերպէրեան ի միջի այլոց կը զեկուցէ. «Իմ զեկուցումը թերի պիտի ըլլայ եթէ Հալէպի մեր վարչական եղբայրներուն, շարքային տղոց, սկաուտներու եւ արենոյշներու, Ինչպէս նաեւ Օգն. Խաչի մեր քոյրերուն ցուցադրած զոհաբերող ոգիի եւ բոլորանուէր աշխատանքի մասին յատուկ յիշատակութիւն չընեմ: Սեւ աշխատանք մը սպառիչ, որու արդար վարձատրութիւնն է մեր ձեռնարկներու արձանագրած փայլուն յաղթանակը»:

*
* *

1953ի ապամայ դադարէն ետք միջ-մասնաճիւղային խաղերու շարքին 27րդը տեղի ունեցաւ Ապրիլ 1954ին, մասնակցութեամբ 24 մասնաճիւղերը ներկայացնող պատուիրակութիւններու: Փակման հանդիսութեան ներկայ գտնուած են շուրջ 15.000 հանդիսականներ: Զեռնարկը Շրջանային Վարչութեան գանձին ապահոված է շուրջ 1500 սուրիական ոսկի զուտ շահ:

*
* *

Հալէպի մէջ, 1955ի 28րդ միջ-մասնաճիւղային հանդիպումները տեղի ունեցան աննախընթաց յաջողութեամբ:

Խաղերը կայացան 11էն 13 Ապրիլին, Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի «Նաւասարդ» եւ քաղաքապետարանի դաշտերուն վրայ:

Ֆութպոլի Ա. դասակարգի ախոյեան հանդիսացաւ Պէյրուտի մասնաճիւղի խումբը 2-0 արդիւնքով պարտութեան մատնելով Հալէպի կազմը: Ա. դասակարգի պատուոյ բաժակը ստացաւ Պուրճ Համուտ 5-0 արդիւնքով յաղթելէ ետք Դամասկոսի կազմին: Բ. դասակարգի ախոյեանութիւնը շահեցաւ Գամիշլիի խումբը, իսկ Գ. դասակարգի ախոյեան հանդիսացաւ Թէլ Պրաքի կազմը:

Պասքէթպոլի Ա. դասակարգի տղոց եւ աղջկանց մրցումներուն յաղթական հանդիսացան Պէյրուտի խումբերը: Նոյնպէս փինկ-փոնկի եւ հեծելարշաւի ախոյեաններ հանդիսացան Պէյրուտի մասնաճիւղի մարզիկները: Պասքէթպոլի Բ. դասակարգի յաղթականն է Թրիփոլի մասնաճիւղի խումբը:

Երկուշաբթի 13 Ապրիլին, քաղաքապետարանի դաշտին վրայ տեղի ունեցաւ փակման հանդիսութիւն եւ ընդհանուր տողանցք մասնակցութեամբ 1500 մարզիկներու եւ սկաուտներու:

րու: Հանդիսութիւնը կը հովանաւորէր Հալէպի նահանգապետը: Ներկայ գտնուեցան նաեւ զինուորական կառավարիչը եւ Բերիոյ Թեմի Առաջնորդ Ջարեհ Եպիսկոպոս Փայասլեան: Շուրջ 20.000 հանդիսականներ ներկայ եղան այս հանդիսութեան:

Օրուայ թագուհի՝ Տիկին Գարուն Քիլեճեան, շրջապատուած պատուոյ օրիորդներու հոյլով, կատարեց յաղթանակի բաժակներու տուչութիւնը:

*
* *

29րդ միջ-մասնաճիւղային հանդիպումները տեղի ունեցան 31 Մարտ, 1 եւ 2 Ապրիլ 1956ին, Հալէպի մէջ: Այս հանդիպումներուն առաջին անգամ ըլլալով կը մասնակցին Եգիպտոսէն՝ Գահիրէի Արարատ եւ Աղեքսանդրիոյ Կամք միութիւններու պասքեթպոլի խումբերը:

*
* *

20-22 Ապրիլ 1957ին, միջ-մասնաճիւղային 30րդ զատկական հանդիպումները տեղի ունեցան Հալէպի քաղաքապետարանի Նոր Գիւղի Նաւասարդ եւ Հ.Մ.Ը.Մ.ի Ազիզիէի նորակառոյց դաշտերուն վրայ, մասնակցութեամբ՝ 26 մասնաճիւղեր ներկայացնող պատուիրակութիւններու: Մասնակցող խումբերու շարքին էին Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ի եւ Աղեքսանդրիոյ «Կամք»ի սղոց եւ աղջկանց պասքեթպոլի կազմերը: Խաղերու հովանաւորութիւնը ստանձնած էր Հալէպի Մուհամմէդ Իսմայիլ Պէյ Քուլի, նախագահութեամբ՝ Բերիոյ Թեմի առաջնորդ Ղեւոնդ Արքեպիսկոպոս Չեպէյեանի: Օրուայ թագուհին էր Ջապէլ Մ. Գուլյումճեան: Շուրջ 30.000 հանդիսականներ հետեւեցան փակման հանդիսութեան եւ մարզիկներու եւ սկաուտներու ընդհանուր տողանցքին:

*
* *

31րդ միջ-մասնաճիւղային Չատկական հանդիպումները տեղի ունեցան 5-7 Ապրիլ, 1958ին, Հալէպի մէջ, հովանաւորութեամբ՝ Հալէպի նահանգապետ՝ Իսմայիլ Քուլիի, նախագահութեամբ՝ Բերիոյ Թեմի առաջնորդ՝ Ղեւոնդ Արքեպիսկոպոս Չեպէյեանի: Օրուայ թագուհին էր Տիկին Անահիտ Էպիլիդաթեան, պատուոյ օրիորդներ՝ Ազնիւ Գոնտուրաճեան, Շաքէ Էպրիլչիւմեան, Մաքրուհի Խաչատուրեան, Մարի Չաղլասեան, Անժէլ Ասատուրեան, Հռիփսիմէ Բրուտեան, Այտա Աճէմեան, Մարթա Սարգիսեան, Սօնա Փիրանեան, Անահիտ Պապիկեան, Մարի Տէր Ղուկասեան, Արփինէ Օհանեան, Մէյրի Նալպանտեան, Մարալ Պապիկեան, Սեդա Լեփէճեան եւ Լուսին Տօնապետեան:

Ֆուտպոլի մրցումները տեղի ունեցան քաղաքապետարանի եւ Նաւասարդ մարզադաշտերուն վրայ, պասքեթպոլի մրցումները Հ.Մ.Ը.Մ.ի դաշտին վրայ:

Ֆուտպոլի Ա. դասակարգի մրցումը վերջացաւ Պէյրութի եւ Հալէպի մասնաճիւղերուն միջեւ հաւասար արդիւնքով 2-2: Պատուոյ դասակարգի ախոյեան հանդիսացաւ Պուրճ Համուտի կազմը, Բ. դասակարգի՝ Տէր Զօր, Գ. դասակարգի՝ Հատէթ: Պասքեթպոլի սղոց Ա. դասակարգի ախոյեանութիւնը շահեցաւ Պէյրութի կազմը, Բ. դասակարգի՝ Ճիւնիի մասնաճիւղի խումբը: Պասքեթպոլի աղջկանց մրցաշարքի Ա. դասակարգի ախոյեան՝ Պէյրութ, Բ. դասակարգի՝ Պուրճ Համուտ: Փինկ-փոնկի մրցաշարքի ախոյեան հանդիսացաւ Պէյրութի խումբը, երկրորդ՝ Հալէպ: Հեծելարշաւի մրցումը շահեցաւ Հալէպ, երկրորդ՝ Պէյրութ:

Փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ 7 Ապրիլին, 25 մասնաճիւղեր ներկայացնող շուրջ 3000 մարզիկներու եւ սկաուտներու խիտ շարքերու տողանցքով, առաջնորդութեամբ Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական 75 հոգինոց նուագա-

խումբին: Տողանցողներու շարքին էին Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.ի Արարատի գոյգ սկառուտ խմբապետները իսկ հազիւ քառամեայ գայլիկներու տողանցքը յուզումի արցունքներ խլեց թրիպիւններու վրայ հաւաքուած 30.000 հանդիսատեսներու աչքերէն, անոնք, գայլիկներու հաստատ քայլերուն ընդմէջէն, կը տեսնէին վաղուայ սերունդներու յաղթանակները, իսկ բանաստեղծը հետեւեալ տողերով կ'ողջունէր զանոնք.- [ԾԲ/33.5]:

«Հրաշք ցեղիդ.-
Դեռ երէկի՛ նահատակ,
Ա՛խ խնդութեան, ուրախութեան
Արցունքին տակ
Ու ծափերուն՝
Քալէ՛ գայլիկ...
.....
.....

Հազարներու, հազարներու
Ծափերուն տակ,
Ու արցունքին,
Ու աղօթքին,
Թե՛ւ առ, քալէ՛,
Գայլի՛կ անգին»։ Վ. Նաւասարդ-[ԾԲ/33.5]:

*
* *

28-30 Մարտ 1959ին, Հալէպի մէջ կայացան Հ.Մ.Ը.Մ.ի միջ-մասնաճիւղային 32րդ հանդիպումները, հովանաւորութեամբ՝ Հալէպի նահանգապետ՝ Ռիֆաաթ Ջըրէյքի եւ նախագահութեամբ՝ Բերիոյ Թեմի առաջնորդ Ղեւոնդ Արք. Չէպէյեանի: Բացի Սուրիոյ եւ Լիբանանի 25 մասնաճիւղերու խումբերէն այս ելոյթին մասնակցեցան Թեհրանի Հայ Մշակութային Արարատ կազմակերպութեան, Գահիրէի Արարատին եւ Աղեքսանդրիոյ կամքի մարզական խումբերը:

Ֆուտպոլի Ա. դասակարգի մրցաշարքի ախոյեան հանդիսացաւ Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի խումբը 3-2 արդիւնքով, յաղթելով Պէյրութի Հ.Մ.Ը.Մ.ին: Բ. դասակարգի ախոյեան՝ Գամիշլիի Հ.Մ.Ը.Մ.ի խումբը, իսկ Գ. դասակարգի ախոյեան՝ Թէլ Պրաքի Հ.Մ.Ը.Մ.ի կազմը:

Պասքեթպոլի աղջկանց մրցաշարքի ախոյեան՝ Հ.Մ.Ը.Մ. Պէյրութ, 42-23ով յաղթելով Պուրճ Համուտի կազմին: Տղոց Ա. դասակարգի աւարտական մրցումը կիսաւարտ մնաց Թեհրանի Արարատին եւ Պէյրութի Հ.Մ.Ը.Մ.ի խումբերուն միջեւ: Բ. դասակարգի ախոյեանութիւնը ապահովեց Լաթաքիոյ կազմը 54-50ով յաղթելով Պուրճ Համուտի կազմին:

Փինկ-փոնկի ախոյեան՝ Հալէպ խմբական 9 մրցումներէն 5 յաղթական վերջացնելով:

Հեծելարշաւի ախոյեան՝ Պէյրութ:
Երկուշաբթի՝ Մարտ 30ին, հակառակ տեղացող անձրեւին Հալէպի Քաղաքապետարանին դաշտը կը յորդի ծով բազմութեամբ: Օրուայ թագուհին է Տիկին Նազիկ Ճորճ Մարտիկեան: Ի վերջոյ կը սկսի ընդհանուր տողանցքը մասնակցող խումբերը ներկայացնող երկիրներու դրօշակներու առաջնորդութեամբ ու Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտական նուագախումբի կշռոյթով: Բարձրաճակատ շարքերով կ'անցնին աւելի քան 2500 սկառուտներն ու մարզիկները շուրջ 30.000 հանդիսատես հայորդիներու ծափողջոյնին ներքեւ ու կրկին կը ներշնչեն հայ մտաւորականը:

«Հալէպի դաշտերուն վրայ Միութեան դրօշը պտըտցնող Հ.Մ.Ը.Մ.ական շարքերը, աներեւոյթ բայց յաւերժօրէն իրական ուրիշ դրօշ մըն ալ կը պտըտցնէին իրենց բարձր ճակատներուն վրայ. Հայրենիքի երկու միլիոն հայ ժողովուրդի փառքը: Այն փառքը, որ՝ լուռ բայց խոր երկունքով մը՝ կը խմորուի, իբրեւ ազատութեան եւ ինքնօրէն գոյութեան պաշտամունքով ապրող ժողովուրդի մը դարաւոր ուխտը: Եւ մենք, բազմահազար ներկաներս, մանաւանդ ա՛յդ դրօշն էր որ կ'ողջունէինք մեր արցունքը մեր հաւատքին խառնած»։ Մինաս Թէօլէօլեան

*
* *

*
* *

Միջ-մասնաճիւղային 33րդ Չատկական հանդիպումները տեղի ունեցան Հալէպի մէջ 16,17, եւ 18 Ապրիլ 1960ին մասնակցութեամբ Սուրիոյ եւ Լիբանանի 25 մասնաճիւղերուն, ինչպէս նաեւ Գահիրէի «Արարատ»ին, Աղեքսանդրիոյ «Կամֆ»ին եւ Նիկոսիոյ Հ.Ե.Մ.ին:

Եւօրեայ մրցումները տուին հետեւեալ արդիւնքները.

Ֆուտպոլի Ա. դասակարգի ախոյեան՝ Հ.Մ.Ը.Մ. Հալէպ, Պատուոյ բաժակի ախոյեան՝ Դամասկոս, «Բարեկամական բաժակ»ի յաղթական Հ.Ե.Մ. Նիկոսիա: Ֆուտպոլի Գ. դասակարգի մրցաշարքի ախոյեաններ՝ Թել Ապիատ եւ Արաբ Բունար (հաւասար), Բ. դասակարգի ախոյեան՝ Լաթաքիա:

Տղոց պասքեթպոլի Ա. դասակարգի ախոյեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի կազմը, Բ. դասակարգի ախոյեան՝ Լաթաքիա: Պասքեթպոլի աղջկանց խումբերու մրցաշարքի ախոյեան՝ Հ.Մ.Ը.Մ. Պէյրուս:

Փինկ-փոնկի Ա. դասակարգի ախոյեան՝ Հ.Մ.Ը.Մ. Պէյրուս, Բ. դասակարգի ախոյեան՝ Հ.Մ.Ը.Մ. Դամասկոս, Բարեկամական բաժակ Հ.Մ.Ը.Մ. Հալէպ՝ Բ. կազմ:

Հեծելարշաւի 85 քմ. մրցումի յաղթականներ՝ Հ.Մ.Ը.Մ. Պէյրուսի խումբ:

Հոփանաւորութեամբ Հալէպի նահանգապետին փակման աւանդական տողանցքը տեղի ունեցաւ 18 Ապրիլի Երկուշաբթի օր ,Հալէպի քաղաքապետարանի դաշտին վրայ մասնակցութեամբ՝ բոլոր մարզական խումբերուն եւ մասնաճիւղերու սկաուտական կազմերուն: Հալէպահայութիւնը ամբողջութեամբ անգամ մը եւս հպարտացաւ Հ.Մ.Ը.Մ.ի բարոյական այս մեծ յաղթանակով:

34րդ միջ-մասնաճիւղային խաղերը, Հալէպի մէջ կայացող հանդիպումներու շարքին վերջինը, տեղի ունեցան 1էն 3 Ապրիլ 1961ին, մասնակցութեամբ՝ 19 մասնաճիւղերու մարզիկներու եւ սկաուտներու: Բացառաբար, խաղերու փակման հանդիսութեան մասնակցած են միայն Սուրիոյ մասնաճիւղերու մարզիկներն ու սկաուտները:

Ֆուտպոլի մրցումներու թեքնիք արդիւնքներն են. Պէյրուս-Հալէպ հաւասար՝ 1-1: Պուրճ Համուտ-Դամասկոս հաւասար՝ 2-2, Ա. դասակարգի բարեկամական բաժակին տիրացած է Գամիշլին: Բ. դասակարգի ախոյեաններ Ռասիլ Այն եւ Տէր Զօր: Գ. դասակարգի ախոյեան Ռաքքա: Կարգապահութեան բաժակին տիրացած է Լաթաքիան:

Պասքեթպոլի մրցաշարքի արդիւնքներ՝ Ա. դասակարգի, տղաք եւ աղջիկներ, ախոյեան՝ Պէյրուս, Բ. դասակարգի տղոց ախոյեան՝ Պուրճ Համուտ:

Հեծելարշաւի եւ փինկ-փոնկի բաժակներուն տիրացած են Պէյրուսի խումբերը: Փինկ-փոնկի, Բ. դասակարգի ախոյեանութեան տիրացած է Լաթաքիան:

Այս խաղերը, Հալէպի մէջ, վերջին անգամ բարոյական յաղթանակի մը առիթը ստեղծեցին ապահովելով նաեւ նիւթական յաջողութիւն:

*
* *

Հ.Մ.Ը.Մ.ի յաջորդական Շրջանային Վարչութիւններու կազմակերպած Չատկական հանդիպումներուն 35րդը ու վերջինը, տեղի ունեցաւ Պէյրուսի մէջ, 1էն 3 Ապրիլ 1972ին:

Նախապատրաստական աշխատանքները բաժնուեցան հետեւեալ տասը գլխաւոր յանձնախումբերուն վրայ. ընդունելութեան, տեղաւոր-

ման, յարաբերական, փոխադրական, տպագրական, փրոփականտի, հաշուական, կիշեներու, դաշտի հսկողութեան եւ բժշկական: Լիբանանի մասնաճիւղերու աւելի քան յիսուն վարչականներ, մնայուն ներկայութեամբ, զօրաշարժի ենթարկուեցան խաղերուն նախորդող շաբաթներէն սկսեալ մինչեւ մասնակցող պատուիրակութիւններու Լիբանանէն մեկնումը:

Բացառիկ ու աննախընթաց տարողութեամբ կազմակերպուած այս խաղերուն մասնակցեցան Միացեալ Նահանգներէն՝ Լոս Անճելըսի մասնաճիւղը, Գանատայէն՝ Մոնթրէալի մասնաճիւղը, Եգիպտոսէն՝ Աղեքսանդրիոյ «Կամք»ը, Թեհրանի Արարատը, Կիպրոսէն՝ Հ.Ե.Մ.ը, Սուրիայէն՝ Հալէպի, Դամասկոսի եւ Լաթաքիոյ մասնաճիւղերը եւ Լիբանանի եօթը մասնաճիւղերը՝ Պէյրութ, Թրիփոլի, Այնճար, Պուրճ Համուտ, Զահլէ, Ճիւնի եւ Անթիլիաս:

Խաղերու յայտագրին մաս կազմեցին՝ Ֆութպոլի Ա. եւ Բ. դասակարգի մրցաշարքեր, պասքեթպոլի տղոց եւ աղջկանց մրցաշարքեր, փինկ-փոնկի մրցաշարք:

Ֆութպոլի գտումի մրցումները կատարուեցան Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ, իսկ պասքեթպոլի եւ փինկ-փոնկի մրցումները Պէյրութի Հ.Մ.Ը.Մ.ի դաշտին եւ սրահներուն մէջ:

Խաղերը դրուած էին Լիբանանի Հանրապետութեան նախագահ Ն.Վ.Սլէյման Ֆրանժիէի բարձր հովանաւորութեան տակ: Օրուայ թագուհին էր Տիկին Մարկօ Խաչիկ Պապիկեան, պատուոյ օրիորդներ՝ Արփի Պապիկեան, Անի Տէտէեան, Սօնա Գոլանճեան, Ժողէֆին Աշճեան, Զուարթ Սարհատեան, Իրմա Ալահայտոյեան, Սեդա Յովնանեան, Անի Պարսումեան, Սալբի Որբերեան, Թագուհի Թահան, Սօսի Էմմիլեան, Թամար Գալայճեան, Վարդուհի Հարպոյեան, Անժէլ Սարգիսեան, Մայտա Սէթեան, Հայկօ Տէրտէրեան:

Մրցանակաբաշխումը եւ փակման հանդիսութիւնը տեղի ունեցան Քամիլ Շամուն մարզաւանի գլխաւոր մարզադաշտին վրայ, սկառ-

տական եւ մարզական շարքերու աւելի քան 3000 անդամներու փառահեղ տողանցքով, առաջնորդութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի սկառտական նուագախումբին:

Ձեռնարկը Շրջանային Վարչութեան գանձին ապահովեց շուրջ 20.000 լ. ոսկի գուտ շահ: Այս աննախընթաց յաջողութեան համար Շրջանային Վարչութիւնը 1971ի Հոկտեմբեր ամիսէն սկսեալ վեց ամսուայ նախապատրաստական աշխատանքներու լծուեցաւ:

ՄԻՋ-ՄԱՍՆԱՃԻՒՂԱՅԻՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆՆԵՐ

Ողիմպիական խաղեր կամ հանդիպումներ բացատրութեամբ պէտք է հասկնալ գլխաւորաբար աթլետիզմի զանազան մրցումներու՝ վազքեր, ոստումներ եւ արձակումներ յայտագրով կազմակերպուած միջ-մասնաճիւղային հրապարակային ելոյթները որոնց վրայ երբեմն աւելցած են կարգ մը մարզախաղեր, միայն քանի մը մասնաճիւղերու խումբերուն մասնակցութեամբ:

Պատգամաւորական ժողովներու եւ Շրջանային Վարչութեան կողմէ 1938էն ի վեր Պէյրութի մէջ կայանալի Ողիմպիական խաղերը առաջին անգամ իրականութիւն կը դառնան 1944ին, երբ բաւարար թիւով մասնաճիւղեր եւ աթլետներ պատրաստ կ'ըլլան այս մասնակցութեան:

Այս անդրանիկ ելոյթը տեղի կ'ունենայ 29 Հոկտեմբեր 1944ին, Պէյրութի քաղաքապետարանի դաշտին վրայ, մասնակցութեամբ հետեւեալ մասնաճիւղերու աթլետներուն. Պէյրութ, Հալէպ, Երուսաղէմ, Պուրճ Համուտ եւ Զահլէ:

Շրջանային Վարչութեան կազմակերպած միջ-մասնաճիւղային Բ. Ողիմպիական խաղերը տեղի կ'ունենան 28 Հոկտեմբեր 1946ին կրկին Պէյրութի քաղաքապետարանի դաշտին վրայ: Նախորդ խաղերու փորձառութենէն մեկնած Շրջանային Վարչութիւնը նախապէս պայման դրած էր որ այս խաղերուն կարենան մասնակ-

ցիլ միայն նուազագույնը վեց ամսուայ անդամակցութիւն ունեցող Հ.Մ.Ը.Մ.ականներ:

1947ի Գ. Ողիմպիական խաղերը տեղի կ'ունենան Պէյրուսի քաղաքապետարանի դաշտին վրայ 21 եւ 22 Յունիսին:

Տեղի կ'ունենայ 100 մ., 200 մ. եւ 110 մ. արգելարչաւ վազքի մրցումներ, երկայնք, բարձրութիւն, երեք քայլ եւ ձողով բարձրութեան ուսումներ, գունդ, նիզակ եւ սկաւառակի արձակումներ: Առաջնորդութեամբ Հալէպի սկաուտական նուազախումբին փակման ընդհանուր տողանցքը տեղի կ'ունենայ 22 Յունիսին, հանդիսութեան կը հովանաւորէ Լիբանանի վարչապետ Ռիատ Պէյ Սուհ: Օրուայ թագուհին է Անահիտ Տէր Գալուստեան, պատուոյ օրիորդներ՝ Բ. Չաթալպաշեան, Ա. Հայրապետեան, Ա. Զիտէճեան եւ Յ. Թեվրիզեան: Շուրջ 15000 հանդիսատեսներ ներկայ կ'ըլլան փակման հանդիսութեան: Աթլետիզմի կողքին այս ողիմպիական խաղերուն յայտագրին մաս կը կազմեն պասքեթպոլի, վոլիպոլի, թենիսի եւ փինկ-փոնկի միջ-մասնաճիւղային կարգ մը հանդիպումներ:

*
* *

1948ի Հոկտեմբեր 23 եւ 24ի շաբաթավերջին, չորրորդ անգամ ըլլալով, Պէյրուսի մէջ կը կայանան միջ-մասնաճիւղային չորրորդ ողիմպիական խաղերը: Խաղերը դրուած են Լիբանանի կրթական նախարար Համիտ Ֆրէնճիէի հովանաւորութեան տակ: Օրուայ թագուհին է Տիկին Նինա Զիտէճեան: Պատուոյ օրիորդներն են Լիլի Պէօճեքեան, Թահան, Սօնա Պիլեզիկճեան, Օլկա Դրօ Կանայեան, Սեդա Գապաքեան եւ Շաքէ Տէյիրմենճեան:

Խաղերուն կը մասնակցին հետեւեալ մասնաճիւղերու աթլետները. Պէյրուսի, Հալէպ, Դամասկոս, Հոմս, Լաթաքիա, Չահլէ, Պուրճ Համուտ, Ազեզ եւ Թրիփոլի: Աթլետիք խաղերու կողքին յայտագրին մաս կը կազմեն հեծելարչաւի եւ պասքեթպոլի մրցումներ:

Փակման հանդիսութեան ընդհանուր տողանցքը կ'առաջնորդէ Հալէպի մասնաճիւղի սկաուտական նուազախումբը: Օրուան ախոյեան կը հանդիսանայ Ազեզի մասնաճիւղէն Սիմոն Վարպետեան:

*
* *

Միջ-մասնաճիւղային հինգերորդ ողիմպիական մրցումները տեղի կ'ունենան 23 Հոկտեմբեր 1949ին, Հալէպի քաղաքապետարանի դաշտին վրայ: Հովանաւորութեամբ Զարեհ Եպս. Փայասլեանի: Օրուայ թագուհին է տիկին Սաթենիկ Սելեան:

Մրցումներու դատական կազմի անդամներն են՝ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներ՝ Վահրամ Կիւրճեան եւ Յակոբ Աշճեան: Հալէպի մասնաճիւղի անդամներ յանձն կ'առնեն իրաւարարութեան պաշտօնը:

Հինգ նոր մրցանիշեր կը բարելաւուին այս խաղերու ընթացքին: Խաղերու առաջնութիւնը կը խլէ Հալէպի մասնաճիւղի խումբը: Օրուայ ախոյեանն է Յարութիւն Ինճէյեան: Մասնակցող մասնաճիւղերը կը ստանան յաջորդաբար հետեւեալ կէտերը. Հալէպ՝ 78, Պէյրուսի՝ 37, Պուրճ Համուտ՝ 26:

Խաղերը կը փակուին աւանդական ընդհանուր տողանցքով:

*
* *

Միջ-մասնաճիւղային վեցերորդ ողիմպիական խաղերը տեղի կ'ունենան Հալէպի մէջ, քաղաքապետարանի դաշտին վրայ, 28 եւ 29 Հոկտեմբեր 1950ին:

Այս խաղերուն առթիւ Շրջանային Վարչութիւնը գոհունակութեամբ կ'արձանագրէ մասնաճիւղերու աթլետներու թեքնիք յառաջդիմութիւնները: Արդիւնքներէն ի յայտ կու գայ թէ հինգ մրցումներու Հ.Մ.Ը.Մ.ական մրցանիշեր

բարելաւուած են: Խաղերուն մասնակցած են հետեւեալ մասնաճիւղերը. Հալէպ՝ 30 աթլետներով, Պէյրուս՝ 20, Դամասկոս՝ 7, Ազեզ՝ 6 եւ Լաթաքիա՝ 2: Երկրորդ անգամ ըլլալով օրուայ ախոյեան կը հանդիսանայ Յարուսիւն Ինճէյեան: Շահուած կէտերու պատկերն է. Հալէպ՝ 90 կէտ, Պէյրուս՝ 52, Դամասկոս՝ 20, Ազեզ՝ 2:

Նոյն առթիւ հեծելարշաւի Հալէպ-Միւսիւսի միջին երթուղարձի մրցումը կը շահի Հալէպի մասնաճիւղէն Զոհրապ Տէր Պօղոսեան:

*
* *

Եօթերորդ միջ-մասնաճիւղային ողիմպիական խաղերը, նախորդին նման կը կազմակերպուին Հալէպի մէջ 28 Հոկտեմբեր 1951ին: Հետզհետէ զարգացող մակարդակով այս մրցումները յատուկ հետաքրքրութիւն կը ստեղծեն մասնաճիւղերու եւ մարզիկներու մօտ: Խաղերուն կը մասնակցին հետեւեալ մասնաճիւղերու աթլետները. Պէյրուս, Հալէպ, Դամասկոս, Զահլէ, Այնճար, Րաքթա: Օրուայ ախոյեան կը հանդիսանայ Հալէպի մասնաճիւղի աթլետներէն՝ Յարուսիւն Ինճէյեան: Կէտերու առաւելութիւնը կ'ապահովէ Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի խումբը:

Շրջանային Վարչութեան կազմակերպած ողիմպիական խաղերու շարքին վերջինը պիտի ըլլար այս եօթերորդը:

Աթլետիք խաղերը յաջորդող տարիներուն կիրարկուեցան մասնաճիւղերու մարզիկներուն կողմէ, որոնցմէ հաւաքականներ, անջատաբար Հալէպի եւ Լիբանանի մասնաճիւղեր, 1961ին մասնակցեցան Գահիրէի Արարատի միջ-մասնաճիւղային աթլետիք ողիմպիականին:

ԱԹԼԵԹԻՔ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

1964էն սկսեալ Պէյրուսի, Պուրճ Համուտի եւ Ճիւնիի մասնաճիւղերուն միջեւ գոյացած համաձայնութեամբ, աթլետիքի ճիւղի ղեկա-

վարութիւնը կը վստահուի յատուկ յանձնախումբի մը Շրջանային Վարչութեան հսկողութեամբ: Երեք մասնաճիւղերէն մասնագէտ անդամներ մաս կը կազմեն այս յանձնախումբին, որոնց կարգին լիբանանեան աթլետիք Ֆետերասիոնի կազմին մէջ Հ.Մ.Ը.Մ.ը ներկայացնող անդամ մը:

1965ին, Լիբանանի աթլետիք անջատ Ֆետերասիոնի հիմնադիրներու շարքին, Հ.Մ.Ը.Մ.ը կը ներկայացնէ Բիւզանդ Թորիկեանը: Շրջանային Յանձնախումբը իր գործունէութեան մասին կը զեկուցէ Շրջանային Վարչութեան, հերթական կերպով իր նիստերու ատենագրութիւններու պատճէնը փոխանցելով: Բացի Ֆետերասիոնի կողմէ կազմակերպուած ախոյեանական խաղերու մասնակցութենէն, Շրջանային Յանձնախումբը կը նախաձեռնէ միջ-ակմբային աթլետիքի մրցումներու կազմակերպութեան:

1969էն սկսեալ Շրջանային Վարչութիւնը կը կազմէ Մարզական Խորհուրդը, մասնակցութեամբ Յակոբ Գատեանի, Յովհաննէս Տէր Յարութիւնեանի եւ Վարդգէս Էսկիպաչեանի: Լիբանանի մասնաճիւղերու յատուկ՝ Մարզական Խորհուրդը կը կազմակերպէ միջ-մասնաճիւղային մրցաշարքեր, իւրաքանչիւր մասնաճիւղէ ներս յատուկ յայտագրով:

1972էն սկսեալ շրջանային աթլետիք յանձնախումբը կը գործէ Շրջանային Վարչութեան հսկողութեան տակ, իբրեւ շրջանային մարզական խորհուրդի մէկ ճիւղը: 6 Դեկտեմբեր 1973ին, աթլետիք շրջանային յանձնախումբի անդամներ կը նշանակուին Վարդգէս Էսկիպաչեան՝ մարզիչ, Հրանդ Խոզոզեան, Նիկողոս Մարունեան, Վարուժան Գէորգեան, Ճորճ Գալբաքեան, Ալիս Թաշճեան, Արմինէ Պատագեան եւ Յարութիւն Սասունեան:

Շրջանային յանձնախումբը, ուսումնասիրուած յայտագրով, կը դասաւորէ Լիբանանի մասնաճիւղերու աթլետիքի բաժինը: Աթլետները կու գան գլխաւորաբար Պուրճ Համուտի եւ Պէյրուսի մասնաճիւղերէն: Յաջողակ մարզիկ-

ներ կը տրամադրեն Ճիւնիի եւ Այնճարի մասնաճիւղերը: Յանձնախումբը միացնելով ընդհանուրը, Ֆետերասիոնի պաշտօնական մրցումներուն կը ներկայացնէ Պէյրութի, Պուրճ Համուտի եւ Ճիւնիի մասնաճիւղերու անունով, երեք մասնաճիւղերը, որոնք անդամ են լիբանանեան Ֆետերասիոնին, մեծ տղոց, փոքր տղոց եւ աղջկանց հաւաքականներ, որոնց մասնաճիւղային պատկանելիութիւնը յաշտ Ֆետերասիոնին իւրաքանչիւր եղանակի կ'ենթարկուի փոխադարձութեան:

ՖՈՒԹՊՈՒԼԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Իբրեւ մասնաճիւղերու փոխ յարաբերութեանց հսկողութեան պատասխանատու գերագոյն մարմին, Շրջանային Վարչութիւնը 1954էն սկսեալ կը համադրէ Պէյրութի եւ Պուրճ Համուտի Ֆուտպոլի խումբերու զանազան հարցերը կանխելու համար զոյգ մասնաճիւղերու միջեւ ստեղծուող դժուարութիւնները:

Չոյգ մասնաճիւղերու վարչութեանց եւ Շրջանային Վարչութեան մասնակցութեամբ, տարիներու վրայ երկարող խորհրդակցական ժողովներու շարքը, ի վերջոյ 1964 թուականին կը յանգի վերջնական համաձայնագրի մը, որուն մանրամասնութիւնները տուած ենք Պուրճ Համուտի մասնաճիւղի կազմակերպական գործունէութեան բաժնին մէջ:

1973ին, այս համաձայնագրի գործադրութեան եւ Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուտպոլի ներկայացուցչական խումբի գործունէութեան հսկողութեան համար Շրջանային Վարչութիւնը կը նշանակէ Ֆուտպոլի Կեդրոնական Յանձնախումբ հետեւեալ կազմով.

- Ատենապետ՝ Երուանդ Տէմիրճեան
- Ատենադպիր՝ Վարուժան Մուրատեան
- Գանձապահ՝ Կարօ Սեդրակեան
- Հաշուապահ՝ Վարդգէս Հայրապետեան
- Ֆետերասիոնի մօտ ներկայացուցիչ՝ Զաքար Զորպաճեան
- Մարզադաշտի հսկողութեան պատասխանատուներ՝

տուներ՝ Գրիգոր Միսալեան, Լեւոն Փանոսեան, Անդրանիկ Քէօրքիւնեան

Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ՝ Յովհաննէս Տէր Յարութիւնեան:

Այնուհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքի Ֆուտպոլի ներկայացուցչական խումբը պիտի գործէր վերոյիշեալ դասաւորումներով:

ՄԻՋ-ՎԱՐԺԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՐԶԱՀԱՆԴԻՍՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած եւ Լիբանանի հայ վարժարաններու մասնակցութեամբ իրականացած մարզահանդէսներու ծրագիրը ծնունդ կ'առնէ 1951էն սկսեալ, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներու իրագործման համար կանոնադրով նախատեսուած միջոց՝ զարկ տալու համար մարզանքի ուսուցման հայ վարժարաններէ ներս: Այս նպատակով Շրջանային Վարչութիւնը խորհրդակցական հաւաքոյթի կը հրաւիրէ Պէյրութի եւ Պուրճ Համուտի մէջ գործող հայ վարժարաններու ուսուցիչներ: 5 Յունիս 1951ի առաջին հաւաքոյթին ներկայ կ'ըլլան՝ Եղիշ Մանուկեան, Վարուժան Տատեան եւ Յովհաննէս Տէր Յարութիւնեան: Ժողովի որոշումներէն են.

- 1.- Ուսուցիչներու յատուկ մարմնակրթական-մարզակազմական դասախօսութիւններու շարք մը կազմակերպել:
- 2.- Մարզանքը որպէս դասապահ չկիրարկող հայ վարժարաններու հոգաբարձութիւններուն դիմել, որպէսզի այս պակասը դարմանուի ի հարկին մարզիչներ տրամադրելով անոնց:
- 3.- Վարժարաններու յատուկ՝ մարմնակրթանքի միօրինականացման ծրագիր մը պատրաստել:
- 4.- Վարժարաններու աշակերտութեան ծանօթացնել Հ.Մ.Ը.Մ.ը իր երեսնամեայ անցեալով:
- 5.- Մարզական արդիւնքները քաջալերել նուէրներով:

6.- Կազմակերպել միջ-վարժարանային մարզահանդեսներ:

Վերոյիշեալ նախապատրաստական ծրագիրը գործադրութեան կը դրուի մասնակիօրէն յաջորդող տարիներու ընթացքին: 1954ի վերամուտին Շրջանային Վարչութիւնը ուրախութեամբ կ'արձանագրէ թէ Լիբանանի Ազգային վարժարանները իրենց դասացանկերուն մէջ տեղ տուած են մարզանքի պահերու:

20 Ապրիլ 1955ին, Շրջանային Վարչութիւնը կ'որոշէ կազմակերպել միջ-վարժարանային առաջին հանդիպումները, աթլետիք մրցումներու յայտագրով: Այս որոշումը եւ յայտագիրը կը փոխանցուի վարժարաններու տնօրէնութիւններուն: Նախատեսուած ծրագիրը չիրականանար քաղաքապետարանի դաշտին անպատրաստ ըլլալուն պատճառով:

Միջ-վարժարանային առաջին մարզահանդեսը տեղի կ'ունենայ 23 Յունիս 1957ին, Պէյրութի քաղաքապետարանի դաշտին վրայ, հովանաւորութեամբ Լիբանանի Հայոց Առաջնորդ Խորէն Արք. Բարոյեանի: Օրուայ թագուհին է Տիկին Զապէլ Սեթեան, պատուոյ օրիորդներ՝ Հուրի Ազիրեան, Հուրի Թեվրիզեան, Հուրի Շահինեան, Վերա Չերքեզեան, Այտա Պապիկեան եւ էլօ Տէր Մելքոնեան:

Տասը Ազգային վարժարաններու աշակերտութեան աթլետիք մրցումներէն ետք տեղի կ'ունենայ հաւաքական չափական մարզանք շուրջ 1000 աշակերտներու մասնակցութեամբ եւ ղեկավարութեամբ Յովհաննէս Տէր Յարութիւնեանի: Օրուայ ախոյեան հանդիսացաւ Սբ. Նշան Ազգային Վարժարանը: Շուրջ 10.000 հանդիսականներ ծափահարեցին, մասնակցող վարժարաններու աշակերտութեանց այս անդրանիկ ելոյթը:

*
* *

Միջ-վարժարանային երկրորդ մարզահանդեսը տեղի ունեցաւ 28 Մայիս 1961ին հովանաւոր

ութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Զարեհ Ա. Կաթողիկոսին, մասնակցութեամբ՝ Նշան Փալանճեան Ճեմարանի եւ Ազգային վարժարաններ՝ Քառասնից Մանկանց, Աբգարեան, Արամեան, Կիլիկիան, Լուսինեան, Էհրամճեան, Սբ. Յակոբ, Թորգոմեան, Նուպարեան եւ հայ կաթողիկէ Մեսրոպեան վարժարանի աւելի քան 1500 աշակերտութեան: Շուրջ 20.000 հանդիսականներ ներկայ գտնուեցան մարզահանդեսին, որուն ղեկավարութիւնը ստանձնած էին Յովհաննէս Տէր Յարութիւնեան եւ Խաչեր Յակոբեան: Օրուայ թագուհին էր Տիկին Մարկօ Պապիկեան, շրջապատուած պատուոյ օրիորդներով՝ Ալին Ամասեան, Ասդրիտ Աւետեան, Ճենիա Չերքեզեան, Տիանա Սեֆերեան, Նինա Տէմիրճեան եւ Անի Տէտէեան:

Լիբանանեան մամուլը գովեստով արտայայտուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան այս նախաձեռնութեան:

*
* *

26 Յունիս 1962ին, Քամիլ Շամուն մարզականի գլխաւոր մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ միջ-վարժարանային երրորդ մարզահանդեսը: Հանդիսութիւնը հովանաւորեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Զարեհ Ա. Կաթողիկոս Փայասլեան, նախագահութեամբ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Խորէն Արք. Բարոյեանի: Տասներկու ազգային վարժարաններու եւ Ն.Փ. Ճեմարանի աշակերտները մասնակցեցան այս ելոյթին: Օրուայ թագուհին էր Տիկին Մարկօ Պապիկեան: Պատուոյ օրիորդներ՝ Սօնա Այվազեան, Սօնա Ենիգոմշեան, Անահիտ Թիւթիւնճեան, Արշալոյս Կիլիկեան, Ժագլին Կէօվլեքճեան, Փօլին Նաճարեան, Աստղիկ Չերքեզեան, Աշխէն Պէօյլեքեան, Անի Պաղտասարեան եւ Արմինէ Խանճեան:

Ծնողական շրջանակներէ սպասուած այս հանդիսութիւնը, շարքին վերջինը պիտի ըլլար:

ԼԵՎԱՄ

Լիբանանահայ երկրորդական վարժարաններու մարզախաղերու (ԼԵՎԱՄ)ի գործունէութիւնը 18րդ Շրջանային Պատգամաւորական ժողովի որոշումով Շրջանային Վարչութեան կը փոխանցուի 1969էն սկսեալ:

Շրջանային Վարչութիւնը կը նշանակէ ԼԵՎԱՄի յանձնախումբ, որուն մաս կը կազմէ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ՝ Բիւզանդ Թորիկեան: 1969 տարեշրջանի յայտագիրը, որ ընթացքի մէջ էր Պէյրութի մասնաճիւղի տնօրինութեան օրով լրիւ կ'ամբողջանայ:

1969-1970ի եղանակէն սկսեալ ԼԵՎԱՄի Շրջանային Յանձնախումբը կը գործադրէ նախապատրաստուած յայտագիրը, որուն մաս կը կազմեն՝ քրոս-քառնթրի մրցումներ երեք տարիքի դասակարգերու, տղոց եւ աղջկանց յատուկ բաժիններով, պասքէթպոլի, փինկ-փոնկի, ֆութպոլի եւ հեծելարշաւի մրցումներ:

1971ին, Շրջանային Վարչութիւնը կը հրատարակէ ԼԵՎԱՄի մասնակցութեան, մարզախաղերու, դասակարգերու տարիքներու եւ այլ պայմաններ ճշդող կանոնագրութիւնը հաստատ կազմակերպութեան մը վերածելով միջ-վարժարանային մարզախաղերը, որոնք պիտի շարունակուէին երկար տարիներ:

ՄԱՐԶԻՉՆԵՐՈՒ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Դարու սկիզբէն ի վեր, արագօրէն զարգացող մարզախաղերու օրէնքներու փոփոխութեանց եւ կիրարկման միջոցներու արդիականացումներու հետ քայլ պահելու կարիքը, ժամանակի ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի ղեկավարութեան եւ ժողովներու մտահոգութեան առարկան դարձան:

Մերձաւոր Արեւելքի երկիրներուն մէջ այս կարիքը աւելի զգալի կը դառնար մասնագիտական յատուկ ուսումնարաններու բացակայութեան պատճառով: Պէտք էր այս կարիքին գո-

հացում տալ մասնագէտ մարզիչներու պատրաստութեամբ: Համաձայն 13րդ Շրջանային Պատգամաւորական ժողովի որոշումին, Շրջանային Վարչութիւնը 1956ի Սեպտեմբեր 3էն 22ին կը կազմակերպէ մարզիչներու ամառնային առաջին դասընթացքը: Ֆութպոլի եւ պասքէթպոլի խաղերու տեսական եւ գործնական դասերը կը կայանան Պէյրութի ակումբին մէջ: Դասատուներն են վաստակաւոր մարզիչներ Ժողէֆ Նալպանտեան եւ Յակոբ Գատեան: 10 մասնաճիւղերէ եկած 18 մարզիկներ կը հետեւին այս դասընթացքներուն:

Քաջալերուած առաջին փորձի յաջողութենէն, 1957ի Սեպտեմբեր 2էն 25ի միջեւ, Շրջանային Վարչութիւնը կրկին կը կազմակերպէ մարզիչներու ամառնային դասընթացք: Ընթացաւարտ մարզիչներուն կը տրուի յատուկ հաստատագրեր:

1958ի ակամայ դադարէն ետք, 1959ի Օգոստոսի 24էն մինչեւ Սեպտեմբերի 12ը, մարզիչներու ամառնային դասընթացքը անգամ մը եւս կը կազմակերպուի Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ: Այս առթիւ հրաւէր չըջաբերականին մէջ Շրջանային Վարչութիւնը կարեւորութեամբ կը շեշտէ «Թեկնածուն ՊԱՐՏԻ ՍՏՈՐԱԳՐԵԼ ԽՈՍՏՄՆԱԳԻՐ ՄԸ վերադարձին իր շրջանի եղբայրները մարզելու յանձնառումով եւ այս, առանց նիւթական կամ բարոյական ոեւէ ձեւի ակնկալութիւնով»: Զգալի է մարզական խումբերու յառաջդիմութիւնը, մնալով հանդերձ սիրողականի սահմաններուն մէջ:



1960ական թուականներու, Սուրիոյ մասնաճիւղերու մեծամասնութեան գործունէութեան դադրիլը կը կասեցնէ նաեւ մարզիչներու դասընթացքներու ծրագիրը:

1960ի աշնան, Գալուստ կիւլպենկեան կրթական ֆոնտի մարզիչներու մասնագիտացման ծրագիրէն օգտուելով, Շրջանային Վարչութիւնը Լիբանանի շրջանէն զոյգ թեկնածուներ՝ Վարդգէս Էսկիպաչեան եւ Ալիս Գըլգաթեան կ'ուղարկէ Լիզպոն: 1964ին, համալսարանական

մակարդակի քառամեայ մասնագիտացում է ետք ենթակայաները կը վերադառնան Լիբանան, ծառայելու համար միութենական եւ վարժարանային շրջանակներ է ներս:

1971ին, մարզիչներու եւ իրաւարարներու կազմաւորման դասընթացներու օրակարգը կրկին սեղանի վրայ է: Շրջանային վարչութիւնը նախապատրաստական աշխատանքները

կատարել է ետք կը նախատեսէ նաեւ դասընթացներու սկզբնաւորութեան թուական: Հարկ կ'ըլլայ կրկին անգամներ նախատեսուած թուականը փոխարինել: Ի վերջոյ, դասընթացները տեղի չեն ունենար մասնակցող թեկնածուներու անբաւարարութեան պատճառով: Նշելի է թէ միայն Լիբանանի մասնաճիւղերը պիտի կարենային մասնակցիլ այս դասընթացներուն:



ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

**ՍՈՒՐԻՈՅ ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՂԵՍՏԻՆԻ ԵՒ ՅՈՐԴԱՆԱՆԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
ԵՒ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ**

- ՇՐՋԱՆԱՅԻՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
- ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ
- ԴՊՐՈՑ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ
- ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Համաձայն 14 եւ 15 Դեկտեմբեր 1940ի 6րդ Շրջանային Պատգամաւորական Ժողովի որոշման, Շրջանային Վարչութիւնը կը նշանակէ Շրջանային Սկառտական Խորհուրդ 1941-42 տարեշրջանին համար հետեւեալ կազմով.

- Ատենապետ՝ Խորէն Սուքիասեան
- Ատենադպիր՝ Ալպէր Յակոբեան
- Գանձապահ՝ Ժիրայր Պէլլէրեան
- Խորհրդականներ՝ Օննիկ Պէօճէքեան, Յովհաննէս Սերոբեան:

Այս կազմը հիմնական աշխատանք ունի մասնաճիւղերէ ներս սկառտական շարժումը ստեղծելու կարող խմբապետներու պատրաստութեամբ: Նպատակը մասնակիօրէն կ'իրականանայ:

1943-44 տարեշրջանի սկառտական վերին խորհուրդի անդամներ կը նշանակուին Օննիկ Մելիքսեթեան եւ Օննիկ Փիլիկեան:

Այս տարեշրջանը պիտի ըլլար աւելի յաջող, յատկապէս Պէյրութի մասնաճիւղի սկառտական բաժնի վերականգնումով:

Այնուհետեւ, մնայուն կը դառնայ Շրջանային Սկառտական Խորհուրդներու կազմութիւնը եւ անոնց գործակցութիւնը Շրջանային Վարչութեանց հետ:

29 Փետրուար 1956ին, Շրջանային Վարչութիւնը Սկառտական վերին Մարմնի անդամներ կը նշանակէ Յակոբ Խուպեսերեան, Կարպիս Թելեան եւ Սուրէն Մուրատեան: Այս կազմի կարեւոր իրականացումը կ'ըլլայ 13րդ Շրջանային Պատգամաւորական Ժողովի կողմէ վաւերացուած Սկառտական Կանոնադրի հրատարակութիւնը:

1957-58 տարուան Շրջանային Սկառտական Խորհուրդի անդամներ կը նշանակուին.

- Ատենապետ՝ Տոքթ. Յակոբ Պերպէրեան
- Ատենադպիր՝ Յովհաննէս Տէր Յարութիւնեան

Թեքնիք պատասխանատու՝ Յակոբ Խուպեսերեան

Խորհրդական՝ Կարպիս Թելեան:

Պայմաններու բերումով այս կազմի գործունէութեան շրջանը պիտի երկարէր մինչեւ 1960ի Ապրիլ ամիսը:

1960-61 տարիներու Շրջանային Սկառտական Խորհուրդին մաս կը կազմեն.

- Ատենապետ՝ Տոքթ. Յակոբ Պերպէրեան
- Փոխ ատենապետ՝ Հայկ Պէլլէրեան
- Ատենադպիր՝ Սուրէն Մուրատեան
- Գանձապահ՝ Յակոբ Կարապետեան
- Խորհրդական՝ Յովհաննէս Թերճանեան:

Սուրիոյ շրջանի մասնաճիւղերուն մօտ Խորհուրդը իր ներկայացուցիչները կը նշանակէ յանձին Արսէն Դանիէլեանի եւ Սուրէն Նազարեանի:

Անգամ մը եւս սկառտական Ծրագիր-Կանոնագիրը 14րդ Պատգամաւորական Ժողովի որոշումով պէտք է վերատեսութեան ենթարկուի, Շրջանային Վարչութեան հետ խորհրդակցաբար: Կանոնադրութիւնը կը պատրաստուի եւ բազմազրուած կ'ուղարկուի մասնաճիւղերուն, փորձի շրջանի համար գործադրելի:

1962-63 տարեշրջանի գործունէութեան համար Շրջանային Վարչութիւնը կը նշանակէ Սկառտական վերին Խորհուրդը հետեւեալ անդամներու մասնակցութեամբ. Տոքթ. Յակոբ Պերպէրեան, Սուրէն Մուրատեան, Հայկ Պէլլէրեան, Յակոբ Կարապետեան, Յակոբ Ոսկերիչեան, Յակոբ Համամճեան, Յակոբ Մինասեան, Առաքել Առաքելեան եւ Մարի Սարեան: Այս կազմը Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի սկառտութիւնը կը ներկայացնէ յաշս նորօք կազմուած լիբանանեան սկառտական Ֆետերասիոնին: Կազմին կը վստահուի նաեւ սկառտական նուագախումբի յանձանցումը:

Շրջանային Վարչութեան կազմին հետ, Շրջանային Խորհուրդի գործունէութեան ժամանակաշրջանն ալ պիտի երկարէր մինչեւ 1965 թուական:

1971-1972 տարեշրջանին համար Շրջանային Վարչութիւնը կը նշանակէ Շրջանային Սկառտ-

տական Խորհուրդ, որուն կ'անդամակցին՝ Գուրգէն Խանճեան, Սուրէն Մուրատեան, Յակոբ Մինասեան, Յասմիկ Տէմիրճեան, Միհրան Շիմշիրեան, Սարգիս Հաճինազարեան, Կիրակոս Խոչեան եւ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ՝ Յակոբ Համամճեան:

1972ի Սեպտեմբեր 8էն 10, Շրջանային Սկստական Խորհուրդը կը կազմակերպէ ընդհանուր բանակում Պուլա տը Պուլոնյը գիւղի մօտակայ անտառներուն մէջ, մասնակցութեամբ Լիբանանի մասնաճիւղերու սկստական կազմերուն: Բանակումին վերջին օրը յատուկ հանդիսութեամբ կը նշուի հայ սկստութեան հիմնադրութեան վաթսունամեակը: Հանդէսը կը հովանաւորէ վարչապետ Սաէպ Սալամ, նախագահութեամբ երեսփոխան Արա Երեւանեանի: Շրջանային Վարչութեան խօսքը կ'արտասանէ Տոքթ. Միսաք Արզումանեան: Այս առթիւ յիշատակի յատուկ պէճեր կը յանձնուին վեթերան սկստ խմբապետներ՝ Սիմոն Թերճանեանին (Լիբանան), Լեւոն Գայեանին (Յունաստան), Նշան Թիւսիւզեանին, Արսէն Դանիէլեանին եւ Տիգրան Ոսկերիչեանին (Սուրիա):

1973-1974 տարեշրջանին համար կը նշանակուի Շրջանային Սկստական Խորհուրդը հետեւեալ կազմով.-

Ատենապետ՝ Եփրեմ Քենտիրճեան

Փոխ ատենապետ՝ Միհրան Շիմշիրեան

Ատենադպիր՝ Նազարէթ Սապունճեան

Արաբերէնի քարտուղար՝ Էօփէն Ալահայտոյեան

Գանձապահ՝ Պատրիկ Կիւլպէնկեան

Խորհրդականներ՝ Յասմիկ Մուրատեան, Ճոնի Արեւեան, Սարգիս Հաճինազարեան, Ներսէս Գէորգեան:

Տարեշրջանի ընթացքին, կազմի վերանայումով նոր անդամներ կը նշանակուին Արմէն Տոնոյեան եւ Վահագ Ծամլեան:

Միհրան Շիմշիրեան կը վարէ Շրջանային խմբապետի պաշտօնը: Շրջանային խմբապետուհին է Յասմիկ Մուրատեան:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած միջ-մասնաճիւղային սկստական ընդհանուր բանակումներու շղթան կը սկսի 1944ին: Մինչեւ 1955 այս նախաձեռնութեան ութը առիթներ կ'օգտագործուին իրերայաջորդ Շրջանային Վարչութիւններու կողմէ ձեռնարկը աւանդութեան մը վերածելով: Մնացեալ տարիներուն քաղաքական կամ տնտեսական պատճառներով միջ-մասնաճիւղային ընդհանուր բանակումներ չեն կազմակերպուած: Իսկ 1951ի, 1953ի եւ 1956ի միջ-մասնաճիւղային ընդհանուր բանակումները ծրագրուելով հանդերձ, ի վերջոյ տեղի ունեցած են անջատաբար Սուրիոյ եւ Լիբանանի շրջաններուն մէջ:

*

* *

20 Օգոստոսէն մինչեւ 3 Սեպտեմբեր 1944 Ջահլէի մէջ տեղի ունեցաւ միջ-մասնաճիւղային Ա. ընդհանուր բանակումը, մասնակցութեամբ Հալէպի, Պէյրութի, Էշրէֆիէի եւ Ջահլէի 90 սկստներու: Բանակումը վարեց Հալէպի մասնաճիւղի ընդհանուր խմբապետ Լեւոն Պապլուզեան: Իր տեսակին առաջինը ըլլալով Շրջանային Վարչութիւնը որոշ փորձառութիւն ձեռք բերաւ նման ձեռնարկի մը յաջողութեան համար, յատկապէս նշելի դարձաւ թէ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչի մը պարբերական ներկայութիւնը բանակավայրէն ներս մեծապէս կրնայ հարթել ծագելիք անակնկալ դժուարութիւնները: Ջահլէի հայ եւ օտար ժողովուրդը սիրով հիւրընկալեց այս բանակումը իր շրջանէն ներս: Բանակավայրի այցելուներէն եղան Գասպար Իփեկեան, Լիբանանի թեմի առաջնորդ Արտաւազդ Արք. Սիւրմէյեան եւ Պոլսոյ նախկին պատրիարք եւ Հ.Մ.Ը.Մ.ի պատուոյ նախագահ՝ Ջաւէն Արք. Եղիայեան, որուն խօսելու անկարելիութեան պատճառով, գրաւոր ուղերձը կը կարդայ բանակավայրի խմբապետը:

*
* *

Միջ-մասնաճիւղային երկրորդ ընդհանուր բանակումը տեղի ունեցաւ 1947ի Սեպտեմբերին Պեքաա նահանգի Թաանայէլ գիւղին մէջ: Բանակումին մասնակցեցան Պէյրուժի, Հալէպի, Ջահլէի եւ Դամասկոսի սկառտական խումբերը: Տեղւոյն վանքին պատկանող այս բանակավայրին տրամադրուելուն եւ ջուրի ու այլ դիւրութիւններ ընծայուելուն համար Շրջանային Վարչութիւնը յատուկ շնորհակալական նամակ մը կը յղէ Վանահօր:

*
* *

1948ին, Շրջանային Վարչութիւնը կը ծրագրէ Գ. ընդհանուր բանակում մը, որ նաեւ դպրոց բանակում մը ըլլայ, մէկ ամիս տեւողութեամբ, 15 Օգոստոսէն 15 Սեպտեմբերի ժամանակամիջոցին, վայր նկատի ունենալով Քեսապը: Յետ պրպտումներու կ'որոշուի բանակումը կայացնել Էհտէնի մէջ (Լիբանան): Բանակումի ընդհանուր խմբապետն է Արսէն Դանիէլեան: Նախատեսուածէն պակաս թիւով սկառտներ մասնակցած են սոյն բանակումին:

*
* *

1949ի միջ-մասնաճիւղային Դ. ընդհանուր բանակումը տեղի կ'ունենայ 20 Օգոստոսէն 10 Սեպտեմբերի ընթացքին Քեսապի մէջ, մասնակցող մասնաճիւղերու պատասխանատուներու խորհուրդի մը ղեկավարութեամբ, Շրջանային Վարչութիւնը օժանդակութեան եւ հսկողութեան պարտականութիւն կը յանձնէ Տոքթ. Ինճեճիքեանին, որ Քեսապ կը բնակի:

*
* *

1950ին, Շրջանային Վարչութիւնը հինգերորդ ընդհանուր բանակումի մասնակցութեան Փոնտ մը կը բանայ յաւելեալ թիւով սկառտներու առիթ տալու նպատակով: Բանակումը կը կայանայ 28 Օգոստոսէն սկսեալ Քեսապի Չինարճըք գիւղին մէջ, մասնակցութեամբ՝ Պէյրուժի, Հալէպի, Լաթաքիոյ, Դամասկոսի եւ Պուրճ Համուտի սկառտներուն:

*
* *

23 Օգոստոսէն մինչեւ 7 Սեպտեմբեր 1952, Լիբանանի Մէյրուպա գիւղի Այն Ատուր բանակավայրին մէջ տեղի կ'ունենայ միջ-մասնաճիւղային վեցերորդ ընդհանուր բանակումը, ղեկավարութեամբ՝ մասնակցող շրջաններու աստիճանաւորներու խորհուրդի մը:

*
* *

15էն 30 Օգոստոս 1954ին, Լիբանանի Տհուր Շուէյր ամառանոցի Այն Տահտուհ վայրին մէջ կը կազմակերպուի միջ-մասնաճիւղային 7րդ ընդհանուր բանակումը, մասնակցութեամբ Պէյրուժի, Պուրճ Համուտի, Ճիւնիի եւ Հալէպի մասնաճիւղի սկառտներուն եւ գայլիկներուն:

*
* *

Միջ-մասնաճիւղային ութերորդ ընդհանուր բանակումը կազմակերպուեցաւ Այն Սաֆա գիւղի անտառներէն մէկուն մէջ, մասնակցութեամբ Հալէպի, Պէյրուժի, Պուրճ Համուտի եւ Ճիւնիի սկառտական խումբերուն: Բանակումը տեւեց 20 Օգոստոսէն մինչեւ 4 Սեպտեմբեր 1955: Բա-

նակումը վարեց վարիչ մարմին մը, բաղկացած խմբապետներ՝ Սուրէն Մուրատեանէ, Յակոբ Կարապետեանէ, Յակոբ Ոսկերիչեանէ եւ Խորէն Նազարեանէ:

ԴՊՐՈՑ-ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ

1957ին եւ 1958ին երկիցս, քաղաքական պայմաններու բերումով ջնջուելէ ետք, միջ-մասնաճիւղային սկսողական դպրոց բանակումներու շարքը կը սկսի 1959ին:

Առաջին դպրոց բանակումը տեղի կ'ունենայ Ջամառի հայ կաթողիկէ վանքի շրջաբակին մէջ, 12 - 28 Օգոստոս 1959ի ժամանակամիջոցին: Սուրիոյ, Լիբանանի եւ Յորդանանի մասնաճիւղերէն 39 սկսողներ կը մասնակցին այս դպրոց բանակումին: Բանակումի ընդհանուր պատասխանատուն է Լուտեր Մասպանաճեան: Բանակումի ծրագիրը կը գործադրուի 14 դասախօսութիւններով:

13էն 28 Օգոստոս 1960ին Քեսապի մէջ տեղի կ'ունենայ Շրջանային Սկսողական Խորհուրդի կազմակերպած երկրորդ դպրոց բանակումը: Պէյրուկ, Հալէպ, Պուրճ Համուտ, Այնճար, Թրիփոլի եւ Ռաքքա 17 ուսանող աստիճանաւորներով մասնակցեցան դպրոց բանակումին, որուն հսկողութիւնը կատարեց Լուտեր Մասպանաճեան, իսկ թեքնիք բաժինը վարեց Շրջանային Սկսողական Խորհուրդի անդամ Սուրէն Նազարեան:

1961 Օգոստոս 20էն Սեպտեմբեր 4ի միջեւ Այնճարի մէջ տեղի ունեցաւ երրորդ դպրոց բանակումը, ղեկավարութեամբ՝ Լուտեր Մասպանաճեանի եւ խմբապետութեամբ՝ Արսէն Դանիէլեանի: Դպրոց բանակումի յայտագիրը կը մասնաւորուէր Բ. կարգի գիտելիքներուն շուրջ: Նկատի ունենալով որ ուսանող աստիճանաւորները պէտք է լրիւ հետեւին դասընթացքներուն, որոշուեցաւ Պէյրուկի մասնաճիւղէն խումբ մը սկսողներ յանձն առնեն ճաշերու պատրաստութիւնը:

4էն 6 Մայիս 1968ին, Շրջանային Սկսողական Խորհուրդը կը կազմակերպէ գայլիկներու եռօրեայ դպրոց բանակում Ճիւնիի մօտակայ Ատոնիսի բանակավայրին մէջ: Դպրոց բանակումին կրնան մասնակցիլ աստիճանաւոր գայլիկներ:

Դպրոց բանակումներու այս շարքը, ինչպէս նաեւ սկսողական Ֆետերասիոններու կազմակերպած մասնագիտական սեմինարներն ու բանակումները զգալիօրէն բարելաւեցին Հ.Մ.Ը.Մ.ի սկսող աստիճանաւորներու մասնագիտական պաշարը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Բացի մասնաճիւղերու նախաձեռնութեամբ կազմակերպուած հրապարակային հանդիսութիւններէն (Հ.Մ.Ը.Մ.ի Օր, ամեակներ կամ տօնակատարութիւններ), Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութիւնը նախաձեռնած է Միութեան արծաթեայ եւ ոսկեայ յօբելենական հանդիսութիւններու կազմակերպութեան եւ հայ սկսողութեան հիմնադրութեան 60ամեակի նշումին, Լիբանանի մասնաճիւղերու վարչութեանց անմիջական գործակցութեամբ:

Այսպէս, 8 Յունուար 1944ին, Գոլէճ Տը Լա Սալի սրահին մէջ կը նշուի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 25ամեակը: Այս առթիւ «Ազդարար» օրաթերթի խմբագիր Մանուկ Ասլանեան Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը գնահատող խմբագրական յօդուածին մէջ հետեւեալը կ'արձանագրէ.

... «Երբ մէկը կ'ուզէ արեւու ճառագայթներուն նայիլ, պարտաւոր է մաքրել աչքերուն պղտորութիւնը, աղտը, որպէսզի բիբերու մէջ շողացող ճալուր արգելք չըլլայ լոյսը յստակօրէն տեսնելու:

«Այսպէս ալ Հ.Մ.Ը.Մ.ի համար: Ով որ կ'ուզէ չափել անոր գործին մեծութիւնը, պարտաւոր է նախ սրբել իր միտքն ու աչքը ... ակնարկով մը ընդգրկել ոչ միայն ներկան, այլ եւ բաւական հեռաւոր անցեալը: Կարճ՝ հայու մաքուր աչքով դի-

տել պայն: Վասնզի, պահելով համեստութիւնը, եղաւ արեւ մը որ ամբողջ 33 տարի* շող եւ ծիլ տուաւ մեր կեանքին: Վասնզի բացառիկ եղաւ իբրեւ ծնունդ եւ իբրեւ հասակ»:

29 Դեկտեմբեր 1968ին, Շրջանային Վարչութիւնը կազմակերպեց Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան յիսնամեակի շքեղ հանդիսութիւն, հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Խորէն Ա. Կաթողիկոսին Մեծի Տանն Կիլիկիոյ: Հանդիսութիւնը տեղի ունեցաւ Սինեմա Պիպլոսի սրահին մէջ ներկայ էր եւ խօսք առաւ Լիբանանի կրթական նախարարութեան երիտասարդական եւ մարզական բաժնի ընդհանուր տնօրէն Իսամ Հայտար: Օրուան պատգամը փոխանցեցին տոքթ. Բարգէն Փափազեան եւ Մուշեղ Իշխան: Գեղարուեստական բաժնին իրենց մասնակցութիւնը

բերին Ծիա Կէօվճեւեան, Մարի Փելթեքեան, Արփինէ Փեհլիվանեան եւ Պօղոս Ճելալեան: Բերին Ծիա Կէօվճեւեան, Մարի Փելթեքեան, Արփինէ Փեհլիվանեան եւ Պօղոս Ճելալեան:

10 Սեպտեմբեր 1972ին, Պուա Տը Պուլոնյը գիւղին մէջ կայացող ընդհանուր բանակումի ընթացքին, կը կազմակերպուի հայ սկաուտութեան հիմնադրութեան 60ամեակի տօնակատարութիւն: Եռօրեայ Ռալի բանակումին հետեւող այս հանդիսութեան կը հովանաւորէ Լիբանանի կառավարութեան վարչապետ Սաէպ Սալամ խօսք կ'առնեն Շրջանային Սկաուտական Խորհուրդի եւ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչները եւ վարչապետի ներկայացուցիչ տոքթ. Իսամ Հայտար դրուատելով Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան դերը լիբանանեան սկաուտութեան բեմին վրայ:



Հայ Սկաուտութեան հիմնադրութեան 60-ամեակի հանդիսութեան պատուոյ հիւրերը: Կեդրոնը՝ հանդիսութիւնը հովանաւորող՝ Տաճատ Արք. Ուրֆալեան

* Ասլանեան կ'ակնարկէ 1911ից Մարմնամարզի միջոցաւ Զրիսեանի Ասխաճեռնած Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան փորձին:



ՊԱՏԱՐԻՑԻՆ ԶԱՅ ՄԱՐՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՂՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային 20րդ. Պատգմաւորական Ժողովի
Բ. նստաշրջանի իմբանկար

Դ. ՄԱՍ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԿԱՌՈՅՑԻ ԿԱԶՄԱԻՈՐՈՒՄ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

– Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԵՐՁԱԻՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ 20ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ը ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԾԵԼՈՒ ԿՈԶՈՒԱԾ ՄԱՐՄՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Մերձաւոր Արեւելքի Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային 20րդ Պատգամաւորական ժողովի Բ. նստաչրջանը, կայացած Պէյրուսի մէջ, 10 եւ 11 Մարտ, 1973ին, պատմական անկիւնադարձ մը հանդիսացաւ Հ.Մ.Ը.Մ.Ի կառուցային վերակազմութեան համար:

Արդարեւ, վերոյիշեալ ժողովի 14րդ օրակարգի նիւթն էր Հ.Մ.Ը.Մ.Ի կեդրոնական վարչութեան ստեղծման պարագան:

Ծանօթ է, որ Պոլիսէն ետք, Փարիզի մէջ, 1931ին ընտրուած կեդրոնական վարչութիւնը կարճատեւ գործունէութիւն մը ունեցաւ: Այնուհետեւ Փարիզի, Պուլկարիոյ եւ Ռումանիոյ Շրջանային վարչութիւններու նախաձեռնութեամբ նոր կեդրոնի մը ստեղծման փորձեր կատարուեցան առանց իրականացման յանգելու:

1948ին, այս նպատակին շուրջ Յունաստանի շրջանէն եկած առաջարկով, կը նախատեսուէր

որ Սուրբոյ, Լիբանանի, Պաղեստինի եւ Յորդանանի Շրջանային Վարչութիւնը համա-Հ.Մ.Ը.Մ.ական ընդհանուր ժողովի մը գումարման նախաձեռնէր, ստեղծելու համար Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութիւն: Առաջարկը նպաստաւոր ընդունելութիւն գտած չըլլալով, Սուրբոյ եւ Լիբանանի Շրջանային 10րդ Պատգամաւորական ժողովին կողմէ, հարցը մնաց առկախ, իսկ Հ.Մ.Ը.Մ.ը՝ կրկին առանց կեդրոնի:

19րդ Շրջանային Պատգամաւորական ժողովին՝ Մոնթրէալի մասնաճիւղը առաջարկեց Հ.Մ.Ը.Մ.ը օժտել կեդրոնական վարչութեամբ, սակայն առաջարկը որոշումի չվերացուեցաւ:

Ի վերջոյ 20րդ Շրջանային Պատգամաւորական ժողովով, հարցը որոշումի ուժ ստացաւ եւ « Հ.Մ.Ը.Մ.ը Համագաղութային կազմակերպութեան վերածելու կոչուած Մարմին» անունով յատուկ յանձնախումբի մը վստահուեցաւ անոր գործադրութիւնը:

Յաջորդող գլուխներով կու տանք վերոյիշեալ մարմնի կազմութեան, գործունէութեան, ընդհանուր ծրագիր-կանոնագրի մը նախագիծի մշակման եւ Հ.Մ.Ը.Մ.ի նորագոյն շրջանի անդրանիկ Պատգամաւորական Ընդհանուր ժողովի հրաւէրներու առաջման աշխատանքներու գլխաւոր փուլերը:

Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի 20րդ Շրջանային Պատգամաւորական ժողովի օրակարգի 14րդ գլուխը, կը նախատեսէր մասնաճիւղերէ եկած առաջարկներու քննութիւն: Դիւանի կողմէ այս բաժինը արդէն լուծուած համարուելով, օրակարգի 15րդ գլուխը՝ « Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան հարց»ը դարձաւ 14րդ գլուխ:

Այս հարցի քննութեան համար խօսք առաւ Շրջանային Վարչութեան ատենապետ՝ Յովհաննէս Շահինեան, հետեւեալ բանաձեւումով. « Հ.Մ.Ը.Մ.ը ամբողջ գաղթաշխարհի վրայ տարածուած ըլլալով, գործերը համադրող եւ ղեկավարող

Կեդրոնական Վարչութիւն մը պէտք է ստեղծել: Շրջանային Վարչութիւնը, այս առնչութեամբ, արդէն ուսումնասիրութիւններ ըրած է եւ յանգած այն ելրակացութեան թէ՛ Կեդրոնական Վարչութեան մը ստեղծումը կանխահաս է տակաւին, որովհետեւ նախ պէտք է շրջաններուն մէջ Շրջանային Վարչութիւններ ունենայ: Հետեւաբար, ներկայիս պէտք է գոհանալ Շրջանային Վարչութեան անունին մէջէն վերցնելով «Մերձաւոր Արեւելք» բացատրութիւնը, Կեդրոնական Վարչութեան ստեղծումը ձգել յաջորդ Պատգամաւորական ժողովին»:

Յետ խորհրդակցութեանց եւ կարծիքներու փոխանակման, ժողովը հարցը կ'ելրակացնէ հետեւեալ որոշումով. «Պատգամաւորական ժողովս, լսելէ ետք Շրջանային վարչութեան վեկուցումը եւ նկատի առնելով որ Սփիւռքի Հ.Մ.Ը.Մ.ական եւ բոլոր գաղափարակից մարկական միութիւններու կարծիքներուն համադրումը նախապայման է Կեդրոնական Վարչութիւն ստեղծելու եւ մանաւանդ անոր աշխատանքները դիրացնելու համար, կ'որոշէ կապմել եռանդամ մարմին մը, որ Շրջանային Վարչութեան հետ համախորհուրդ վերոյիշեալ մասնաճիւղերուն եւ միութիւններուն հետ կապ հաստատէ, առնէ անոնց կարծիքները եւ ապա թելադրէ անոնց որ իւրաքանչիւրը իր շրջանին մէջ պատգամաւորական ժողովներ գումարէ, այս օրակարգով, եւ ընտրէ պատգամաւորներ: Ընտրեալ պագտամաւորները համասփիւռքեան համագումարի մը ընթացքին, կայանայի մինչեւ երկու տարի, հարցը հիմնականօրէն եւ վերջնական ձեւով կը լուծեն: Գտնուած լուծումը օրէնքի ուժ կը ստանայ համագումարէն ետք, բոլոր շրջաններուն համար»:

Այս որոշումը միաձայնութեամբ քուէարկելէ ետք եռանդամ յանձնախումբի անդամներ կ'ընտրուին՝ Վարդգէս Տէր Կարապետեան, Նշան Թիւյսիւզեան եւ Հրանդ Մուրատեան:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

**Հ.Մ.Ը.Մ.Ը ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ
ՎԵՐԱԾԵԼՈՒ ԿՈԶՈՒԱԾ
ԵՌԱՆԴԱՄ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ**

– ԵՌԱՆԴԱՄ ՄԱՐՄՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.Ը-ը համագաղութային կազմակերպութեան վերածելու կոչուած մարմնի գործունէութիւնը կ'երկարի 23 Մայիս 1973էն 11 Դեկտեմբեր 1974 ժամանակաշրջանին վրայ, որուն ընթացքին Մարմինը գումարած է 35 նիստեր:

Առաջին նիստին, Մարմինը կազմած է իր դիւանը հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Վարդգէս Տէր Կարապետեան
- Ատենադպիր՝ Հրանդ Մուրատեան
- Գանձապահ՝ Նշան Թիւյսիւզեան:

Մարմնի գործունէութեան գլխաւոր բաժինները կը կազմեն.-

Ա.- Հաղորդակցութեան հաստատում Հ.Մ.Ը.Մ.Ը-ի Շրջաններու Մեկուսի մասնաճիւղերու, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.Ը-ի կառոյցէն դուրս գործող գաղափարակից կազմակերպութիւններու հետ:

Բ.- Վիճակագրական տեղեկութիւններու հաւաքում եւ համադրում վերոյիշեալ կազմերու մասին:

Գ.- Ընդհանուր Ծրագիր-Կանոնագրի նախագիծի պատրաստութիւն:

Դ.- Ընդհանուր Ժողովի գումարման կազմակերպութիւն:

Այս բաժիններու յաջորդական փուլերու իրականացման համար եռանդամ Մարմինը վայելած է Հ.Մ.Ը.Մ.Ը-ի Շրջանային Վարչութեան եւ Հ.Յ.Դ. Գերագոյն Մարմնի ամբողջական գործակցութիւնը:

Հաղորդակցութեանց հաստատում

Մարմինը առաջին հերթին կապ հաստատած է հետեւեալ գործօն մասնաճիւղերուն հետ. Լոս Անճելըս, Սան Ֆրանսիսքօ, Պոսթըն, Ուաշինկթըն, Մոնթրէալ, Թորոնթօ, Համիլթըն, Սիտնէյ, Ամման, Տիթրոյիթ, Պուէնոս Այրէս, Մոնթեվիտէօ, Գահիրէ, Աղեքսանդրիա, ինչպէս նաեւ Յունաստանի եւ Սուրիա-Լիբանանի Շրջանային Վարչութեանց, Թեհրանի հայ մշակութային «Արարատ» կազմակերպութեան եւ Կիպրոսի Հ.Ե.Մ.Ը-ի հետ:

Այս շրջաններուն, առաջին հերթին, գրուած է Հ.Մ.Ը.Մ.Ը համագաղութային կազմակերպութեան վերածելու եւ Հ.Մ.Ը.Մ.Ը-ի կեդրոնական Վարչութիւն յառաջացնելու ծրագրի մասին: Այս նպատակով խմբագրուած շրջաբերականը կը յայտնէ նաեւ թէ յաջորդիւ, Մարմինը պիտի պահանջէ վիճակագրական տեղեկութիւններ իւրաքանչիւր մասնաճիւղի կամ կազմակերպութեան մասին եւ պիտի պատրաստուի ընդհանուր ծրագիր-կանոնագրի մը նախածրագիրը յանձնուելու համար անդրանիկ Պատգամաւորական ընդհանուր Ժողովի ուսումնասիրութեան եւ վաւերացման: Վերոյիշեալ շրջաբերական-նամակը կ'ուղարկուի 1973ի Յուլիսին, սակայն մինչեւ Հոկտեմբեր ամիսը որեւէ շրջանէ պատասխան չի ստացուիր այս մասին: Նոյեմբերին, Մարմինը կ'ուղարկէ յիշեցում նամակ մը, խնդրելով որ անյապաղ պատասխանեն առաջին շրջաբերականին:

Միջանկեալ Մարմին եւ Շրջանային Վարչութիւն, յատուկ առաքելութիւններով կը լիազօրեն հետեւեալ դեկավար անդամները, որոնց անձնական ճամբորդութիւնները եւ հաստատած կապերը օգտակար պիտի ըլլային Մարմնի գործունէութեան: Այդ անդամներն են Յովհաննէս Շահինեան, Տօքթ. Բաբգէն Փափազեան, Անդրանիկ Ուրֆալեան, Բիւզանդ Թորիկեան, Վարդգէս Ալահայտոյեան եւ Յակոբ Համամճեան: Փարիզ հաստատուած՝ Սուրէն Մուրատեան եւս աշխատանքներ կը տանի այս ուղղութեամբ:

Վիճակագրական տեղեկութիւններ

Լիազօր անդամները, ճամբորդութիւններէն վերադարձին, կը զեկուցեն այցելուած շրջաններու վիճակագրական կացութիւններու մասին:

Յովհաննէս Շահինեան այցելած է Մոնթրէալ, Պոսթըն, Տիթրոյիթ եւ Լոս Անճելըս, ուր կը գործեն Հ.Մ.Ը.Մ.Ը-ի մասնաճիւղեր բնականոն ընթացքով: Գալիֆորնիոյ շրջանը ունեցած է նոր հիմնուած Ֆրէզնոյի մասնաճիւղը, կան նաեւ

գործող Թորոնթոյի, Համիլթոնի, Ուաշինկթոնի եւ Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղերը:

Բիւզանդ Թորիկեան այցելած է Ֆրանսայի հետեւեալ քաղաքները. Փարիզ՝ ուր գոյութիւն ունի պետական արտօնագիր ունեցող Շրջանային Վարչութիւն մը որ բազմիցս վերակազմուած է սակայն ոչ մէկ մասնաճիւղ չէ գործակցած անոր հետ, հետեւաբար անոր գոյութիւնը միայն անուանական է:

Մարսէյի մէջ Հ.Մ.Ը.Մ.-Արծիւ Ֆութպոլի խումբերը բաժնուած եօթը դասակարգերու, մաս կը կազմեն Ֆրանսական Ֆետերասիոնի Գ. դասակարգին: Միութեան ատենապետն է Բաֆֆի Նազարեան, ունին 120 անդամներ եւ խանդավառութեամբ ընդունած են կեդրոնի մը միանալու գաղափարը: Վալանսի մէջ կը գործէ Union Sportive de Jeunesse d'origine Armenienne տարբեր դասերու պատկանող 10 Ֆութպոլի խումբերով: Կեդրոնական Վարչութեան մը կազմութեան գաղափարը կը գտնեն քաջալերական:

Տէսինի մէջ կը գործէ U.G. Homenetmen զանազան դասակարգի խումբեր գլխաւորաբար բաղկացած ոչ հայ մարզիկներէ: Վարչութիւնը եւս կը բաղկանայ Ֆրանսացի անդամներէ ատենապետութեամբ՝ Ժիլպէռ Յակոբեանի:

Սէնթ Էթիէնի մէջ կը գործէ Union Sportive Armenienne Ֆութպոլի խումբը: Օգտակար կը գտնեն Կեդրոնական Վարչութեան մը գոյութեան գաղափարը:

Կրճնոպլի մէջ հայ մարզական կեանքը՝ երբեմնի Հ.Մ.Ը.Մ.ը դադրած է գործելէ:

Վիէն ունի Union General Armenienne Ֆութպոլի տկար կազմ մը:

Վերոյիշեալ այցելուած քաղաքներէն դուրս կայ նաեւ Նիս քաղաքին մէջ գործող Արիներու եւ Արենոյներու կազմակերպութիւնը:

Յակոբ Համամճեան Փարիզի մէջ ներկայ եղած է հայ Արիներու հիմնադրութեան 43րդ տարեդարձին հանդիսութեան եւ կարճ խօսակ-

ցութիւն մը ունեցած է անոր պետին՝ Տօքթ. Գուրգէն Մեծատուրեանին եւ կարգ մը վարիչներու հետ, որոնք համաձայն եղած են հայ Արիներու գոյատեւման համար Հ.Մ.Ը.Մ.ի կողմէ տարուելիք ճիգերուն:

Տօքթ. Բաբգէն Փափագեան Փարիզի մէջ տեսակցած է Տօքթ. Գուրգէն Մեծատուրեանին հետ եւ երկարատեւ խօսակցութիւն ունեցած: Արդիւնքէն կ'եզրակացուի թէ Հայ Արիներու կազմակերպութիւնը կը խուսափի Հ.Մ.Ը.Մ.ի հետ պաշտօնապէս կապ ունենալէ:

Սուրէն Մուրատեան Փարիզ հաստատուելէն ի վեր, բազմաթիւ առիթներով կապեր հաստատած է Տօքթ. Մեծատուրեանի հետ եւ յանգած այն եզրակացութեան թէ կառուցային իմաստով Հայ Արիներու միացումը Հ.Մ.Ը.Մ.ին անկարելի է ներկայիս: Վալանսի, Մարսէյի եւ Ալֆորվիլի (Փարիզի արուարձան) մէջ գործող մարզական կոմիտեները կրնան միանալ համագաղութային կառույցին դառնալով Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր: Կարելի է նաեւ Փարիզի կեդրոնին մէջ հիմնել Հ.Մ.Ը.Մ.ի նոր մասնաճիւղ մը:

Անդրանիկ Ուրֆալեան, Շրջանային Վարչութեան ուղղուած տեղեկագրով մը, կը զեկուցէ Գալիֆորնիոյ Շրջանին մասին ուր իր նախաձեռնութեամբ նշանակած է ութ հոգինոց Գերագոյն Խորհուրդ մը որ պիտի վարէ շրջանի մասնաճիւղերու գործունէութիւնը եւ կազմակերպէ Շրջանային Ներկայացուցչական ժողով:

Վարդգէս Ալահայտոյեան, Թեհրանի մէջ հաղորդակցութեան մէջ մտած է Հայ Մշակութային Արարատ կազմակերպութեան հետ, որու գործունէութեան մասին զեկուցած է Շրջանային Վարչութեան:

Վերոյիշեալ այցելութիւնները եւ նախաձեռնութիւնները տեղի ունեցած են 1973ի Հոկտեմբերէն, 1974ի Հոկտեմբեր ամսուայ ժամանակամիջոցին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՆԱԽԱԳԻԾ Հ.Մ.Ը.Մ.Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳՐԻ

Մինչեւ 1973 թուականը, Մերձաւոր Արեւելքի Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութիւնն ու մասնաճիւղերը օգտագործած են 1971ին յօդուածներու բարեփոխութեամբ վերամշակուած ընդհանուր ծրագիր-կանոնագիրը, ամբողջացած 1973ի Մարտին, մշակուած Սկստական Ծրագիր-Կանոնագրով: Նոյնպէս Գանատայի, Միացեալ Նահանգներու եւ Աւստրալիոյ մասնաճիւղերը օգտագործած են վերոյիշեալ կանոնագրութիւնները, ամբողջացած՝ իւրաքանչիւր շրջանի յատուկ ներքին կանոնագրութիւններով:

1973ին, Հ.Մ.Ը.Մ.ը համագաղութային կազմակերպութեան վերածելու ծրագրին կը միացուէր նաեւ Հ.Մ.Ը.Մ.ը նորագոյն ընդհանուր Ծրագիր Կանոնագրութեամբ մը օժտելու պարտականութիւնը՝ վստահուած եռանդամ մարմնին:

Հետեւաբար, եռանդամ մարմնին երկրորդ կարեւոր պարտաւորութիւնն էր պատրաստել նախագիծը ընդհանուր Ծրագիր-Կանոնագրի մը, որ ծառայէր Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհատարած բոլոր շրջաններուն ու մասնաճիւղերուն եւ ընդհանու-

րին պարտադիր ըլլալով հանդերձ, թոյլատու ըլլար զանազան երկիրներու մարզական եւ սկստական պետական պարտադրանքներու յարգանքին: Ասոր կողքին, նորագոյն ընդհանուր Ծրագիր-Կանոնագրութիւնը պիտի պարփակէր կառուցային նորութիւն համարուող «Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Ընդհանուր Ժողով» եւ «Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն» գլուխները:

Առ այդ, գործակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան, եռանդամ մարմինը մշակեց 84 յօդուածներէ բաղկացող ընդհանուր Ծրագիր-Կանոնագրի նախագիծը, որուն պատճէնները 1974ի Մայիսին ղրկուեցան առաջին պատգամաւորական ժողովին հրաւիրուած բոլոր շրջաններուն եւ մասնաճիւղերուն, որպէսզի անոնք, իրենց կարգին, նախագիծը ուսումնասիրեն Շրջանային Ներկայացուցչական կամ անդամական ընդհանուր ժողովներով եւ իրենց առաջարկներով ներկայանան Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ՀՐԱԻՏՐ Ա. ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Աւելի քան մէկ ու կէս տարուայ ժամանակաշրջանի ընթացքին իր կատարած ուսումնասիրութիւններու, հաստատած կապերու, թղթակցութեանց եւ կեդրոնի կազմութեան ծրագրի փոխանցումներէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային անդրանիկ պատգամաւորական ժողովի կայացման համար թուական կը ճշդուի 13,14,15 Դեկտեմբեր 1974ը եւ վայր՝ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի ակումբը:

Հրաւեր-չրջաբերականին իրենց լիազօր պատգամաւորներով մասնակցելու հաւանութիւն կու տան հետեւեալ շրջաններն ու մասնաճիւղերը. Շրջանային Վարչութիւն՝ 1 պատգամաւոր, Լիբանան՝ 3 պատգամաւոր, Գալիֆորնիա՝ 2, Գանատա՝ 1, Արեւելեան Մ. Նահանգներ՝ 1, Յունաստան՝ 3, Ամման՝ 3, Թեհրան՝ 1, Արժանթին՝ 1, Գահիրէ՝ 2, Աղեքսանդրիա՝ 1:

Ծրագրին իրականացման իրենց հաւանութիւնը կու տան Աւստրալիոյ Սիտնիի եւ Մելպուռնի մասնաճիւղերը, Մոնթէվիտոյի մասնաճիւղը, որոնք սակայն կը յայտնեն թէ նիւթական պատճառներով պիտի բացակային ժողովէն, ամբողջական յաջողութիւն մաղթելով անոր եւ իր յառաջագունէ յայտնելով անոր բոլոր որոշումներուն ենթարկուելու իրենց պատրաստակամութիւնը:

Պաշտօնական պատասխաններ կը պակսին, Սուրիոյ եւ Պաղեստինի մասնաճիւղերէն:

Յատուկ հեռագիրով Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն միակ վերապրող, հրաւիրեալ՝ Տիգրան Քհն. Խոյեան ցաւ կը յայտնէ թէ առողջական պատճառներով պիտի բացակայի եւ յաջողութիւն կը մաղթէ ժողովին:

Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան գործակցութեամբ Պէյրութի King's պանդոկին մէջ կ'ապահովուի պատգամաւորներու կեցութիւն, Պէյրութի մասնաճիւղը յանձն կ'առնէ ժողովատեղիի դասաւորումները եւ էլ Քասր ճաշարանի մէջ ընթրիք մը ի պատիւ արտասահմանէն ժամանած պատգամաւորներուն, Շրջանային Վարչութիւնն ալ յանձն կ'առնէ ժողովի աւարտին տրուելիք պաշտօնական ճաշկերոյթ մը, Նուպար ճաշարանին մէջ: Կը տպուին ժողովի արձանագրութեանց յատուկ թուղթեր եւ պատգամաւորներու անունն ու շրջանը ճշդող լամբակի այցետոմսեր: Կը բազմազրուին Ծրագիր-Կանոնագրի նախագծի յաւելեալ պատճէններ:

Ժողովին խորհրդակցական ձայնով եւ դէտի հանգամանքով կը հրաւիրուին «Ազդակ» օրաթերթի եւ Հ.Յ.Դ. Լիբանանի կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչները:

Հ.Մ.Ը.Մ.ը Համագաղութային կազմակերպութեան վերածելու կոչուած մարմինը աւարտած էր իրեն վստահուած առաքելութեան գործնական բոլոր փուլերը:

Ե. ՄԱՍ

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ԸՆԴՀԱՆՈՒՐ
- ՆԵՐՔԻՆ
- ՍԿԱՌԻՏԱԿԱՆ
- ՄԱՐԶԱԿԱՆ



Հ. Մ. Ը. Մ.



ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ
ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՆԻ

Վաւերացուած
Հ. Մ. Ը. Մ. Ի ՖՐԱՆՍԱՅԻ ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԷՆ
1946 Դեկտեմբեր
ԲԱՐԻՋ

IMPRIMERIE TURABIAN
227, Bd Raspail

PARIS

Լ Ե Վ Ա Մ

ԼԻԲԱՆԱՀԱՅ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ
ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԱՐՋԱԽԱՂԵՐ

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՊԵՅՐՈՒԹ — ԼԻԲԱՆԱՆ
1971

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
Հ. Մ. Ը. Մ. Ի ՍՈՒՐԻՈՅ, ԼԵՐԱՆԱՆԻ ԵՒ ՅՈՐԳԱՆԱՆԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՋՈՒԹԵԱՆ



Հ. Մ. Ը. Մ. Ի ՍԿԱՌԻՏԱԿԱՆ
ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ



ՊԵՅՐՈՒԹ — 1956

1940ական թուականներէն սկսեալ, Հ.Մ.-Ը.Մ.ական մամուլը զոյգ նպատակներով կը զարգանայ: Առաջին՝ ծանօթացնել Հ.Մ.-Ը.Մ.ի հիմնադիրներն ու հիմնադրութեան տարիներու գործունէութիւնը, շեշտել Միութեան նպատակի գործադրութեան եղանակներուն վրայ եւ Հ.Մ.-Ը.Մ.ի ճամբով ազգային նպատակներու ծառայութիւնը նուիրագործել:

Երկրորդ՝ Հ.Մ.-Ը.Մ.ի արդի գործունէութեան ներբողականը հիւսել, մարզական եւ սկսողական թեքնիք յառաջդիմութիւնները քաջալերել եւ հրաւիրել հայ պատանին ու երիտասարդը Հ.Մ.-Ը.Մ.ին միանալով, ծառայել ազգին ու հայրենիքին:

Այս զոյգ նպատակներու իրականացման համար, զանազան շրջաններու եւ մասնաճիւղերու լրագրական (պաշտօնաթերթեր) իրականացումներու պատկերը կը ներկայացնենք հատորիս այս հինգերորդ բաժինով:

Այս բաժինն մաս կը կազմեն նաեւ նոյն ժամանակաշրջանի կանոնադրութիւններու, հրատարակութիւններու եւ գաղափարակից լրագրական մամուլի ցանկագրումը՝ հպանցիկ ուսումնասիրութիւններով:

Հ.Մ.-Ը.Մ.ի զանազան բաժիններու գործունէութիւնները ենթակայ են համապատասխան կանոնադրութիւններու յօդուածներու տրամադրութեանց: Կանոնադրութիւններու ամբողջութիւնը կը բաղկանայ հետեւեալ չորս բաժիններէն.

- Ընդհանուր կանոնադրութիւններ
- Ներքին կանոնադրութիւններ
- Սկսողական կանոնադրութիւններ
- Մարզական կանոնադրութիւններ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բոլոր ժամանակներու ընթացքին, Հ.Մ.-Ը.Մ.ի Պատգամաւորական Ժողովներու որոշումով հրատարակուած ԸՆԴՀԱՆՈՒՐ կանոնադ-

րութիւնները, ներշնչուած են հիմնադրութեան օրերու առաջին կանոնադրութեան ոգիէն: Անոնց նպատակ եւ Միջոցներ յօդուածները պահուած են նոյնութեամբ: Ժամանակի հոլովոյթին հետ բարեփոխուած են կազմակերպչական, մարզական եւ սկսողական բաժիններու յօդուածները:

Ներկայ հատորի ընդգրկած ժամանակամիջոցին, Պէյրութի մէջ Մերձաւոր Արեւելքի յաջորդական Շրջանային Վարչութիւններու միջոցով հրատարակուած են հետեւեալ Ընդհանուր կանոնադրութիւնները.




ա) Հ.Մ.-Ը.Մ.ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳԻՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ, վաւերացուած Միութեան 11րդ Պատգամաւորական Ժողովին կողմէ, 27 Մարտ 1951: Կը բաղկանայ 83 յօդուածներէ հետեւեալ գլուխներով. 1) նպատակ 2) միջոցներ 3) անդամակցութիւն 4) ժողովներ 5) Շրջանային Վարչութիւն 6) ընդհանուր կանոններ: Տպարան Օնիպար-Պէյրութ 1951:

բ) Հ.Մ.-Ը.Մ.ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳԻՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ, վաւերացուած Մերձաւոր Արեւելքի 19րդ Շրջանային Պատգամաւորական Ժողովին կողմէ, 10 Յունուար 1971: 85 յօդուածներէ բաղկացող կանոնադրութիւն մը նախկինի վեց գլուխներով, յաւելեալ «մասնաճիւղի վարչութիւն» գլուխը: Տպարան Ատլաս-Պէյրութ 1972:

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շրջաններու եւ մասնաճիւղերու ՆԵՐՔԻՆ կանոնադրութիւններէն են.

ա) ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՆԻ, վաւերացուած Հ.Մ.-Ը.Մ.ի Ֆրանսայի Պատգամաւորական Ժողովին, Փարիզ, 27 Դեկտեմբեր 1946: Կը բաղկանայ 70 յօդուածներէ հետեւեալ բաժիններով. 1) նպատակ, 2) միջոցներ, 3) անդամակցութիւն, 4) վարչական, 5) ժողովներ, ընտրութիւն եւ քուէարկութիւն, 6) յաւելուած, 7) սկսողական եւ Հ.Մ.-Ը.Մ., ընդհանուր տրամադրութիւններ, 8) նիւթական աղ-



բիւրներ, 9) կարգապահական, 10) գոյքերու, կալուածներու եւ գումարներու մասին: Տպարան Թիւրապեան Փարիզ:

բ) Հ.Մ.Ը.Մ.Ի ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ, վերջապահ Յունաստանի 25րդ Պատգամաւորական Ժողովին կողմէ, 31 Օգոստոս 1952: Կը բաղկանայ 82 յօդուածներէ հետեւեալ գլուխներով. 1) նպատակ, 2) միջոցներ, 3) անդամակցութիւն, 4) ժողովներ, 5) մասնաճիւղի վարչութիւն, 6) ընդհանուր կանոններ:

գ) Հ.Մ.Ը.Մ.Ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի Ծրագիր-կանոնագիր: Պուէնոս Այրէս 1955:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ա- Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ, վաւերացուած Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբիոյ, Լիբանանի եւ Յորդանանի 13րդ Շրջանային Պատգամաւորական Ժողովին կողմէ, 8 Յունուար 1956: Կը բաղկանայ 22 յօդուածներէ հետեւեալ գլուխներով. 1) նպատակ, 2) միջոցներ, 3) անդամակցութիւն, 4) կազմակերպութիւն, 5) սկաուտական դաւանանքը, 6) վարչական բաժանումներ, 7) կազմակերպչական դասաւորումներ, 8) գործունէութեան դասաւորումներ, 9) Սկաուտական Խորհուրդ, 10) տեղական վարչութիւն եւ սկաուտական ներկայացուցիչ, 11) Շրջանային վարչութիւն եւ Շրջանային Սկաուտական Խորհուրդ, 12) խումբերու կազմութիւն, 13) պաշտօններ եւ աստիճաններ, 14)

կարգապահական եւ պատժական: Տպարան Անահիտ-Պէյրուի 1956:

բ- Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ, 53 յօդուածներէ բաղկացող կանոնագրութիւն հետեւեալ գլուխներով. 1) անուն եւ նպատակ, 2) միջոցներ, 3) անդամակցութիւն, 4) կազմակերպչական, 5) խումբերու կազմակերպութիւն, 6) գիտելիքներ, 7) վարչական բաժանումներ, 8) աստիճանաւորներու նշաններ, 9) տարազներ: Տպարան Ատլաս-Պէյրուի 1960:

գ- Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ, վերջապահ եւ վաւերացուած Հ.Մ.Ը.Մ.Ի 20րդ Պատգամաւորական Ժողովին կողմէ: 94 յօդուածներէ բաղկացող կանոնագրութիւն հետեւեալ գլուխներով. 1) անուն եւ նպատակ, 2) միջոցներ, 3) անդամակցութիւն, 4) դասաւորումներ, 5) խումբերու կազմակերպում, 6) կարգեր եւ գիտելիքներ, 7) վարչական բաժանումներ, 8) աստիճանաւորական կազմ, 9) կարգապահական-պատժական, 10 (գոյքեր, 11) աստիճանաւորներու նշաններ, 12) տարազներ: Տպարան Սեւան- Պէյրուի 1973:

ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԼԵՎԱՄ- 76 յօդուածներով կանոնագրութիւն Լիբանանահայ երկրորդական վարժարաններու մարզախաղեր: Գլուխներու բաժանումներ. 1) ընդհանուր կանոններ, 2) խաղերու կազմակերպական կանոններ: Տպարան Սարգիսեան-Պուրճ Համուտ 1971:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԵՐ

- ԿՌՓԱՄԱՐՏ
- ՄԱՐԶԱՇԽԱՐՀ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ
- Հ.Մ.Ը.Մ. ՀԱՅ ՍԿԱՈՒՏ
- ՄԱՐՄՆԱՄԱՐԶ
- ՀԱՅ ՍԿԱՈՒՏ
- ԱԶԴԱԿ ՄԱՐԶԱԿԱՆ
- ՆԱԻԱՍԱՐԴ
- ԱՐԵՒԵԼՔ ՄԱՐԶԱՇԽԱՐՀ
- ՍԿԱՈՒՏԻՆ ԶԱՅՆԸ
- ՍԿԱՈՒՏԻՆ ԶԱՅՆԸ
- ՄԱՐԶԱՇԽԱՐՀ
- ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

Ներկայ հատորի ընդգրկած ժամանակաշրջանին, միութենական պաշտօնաթերթեր հրատարակուած են հետեւեալ շրջաններուն մէջ. Յունաստան, Երուսաղէմ, Գերմանիա, Լիբանան, Արժանթին, Եգիպտոս, Ֆրանսա եւ Գանատա: Մեծ կամ փոքր տարողութեամբ այս պաշտօնաթերթերը ծառայած են գլխաւորաբար իրենց հրատարակման շրջանի տեղեկատուական, ծանուցական եւ փրոփականտի նպատակներուն: Անոնք արձագանգած են նաեւ մերթ մնայուն, մերթ պարբերական ձեւով, այլ շրջաններու եւ մասնաճիւղերու գործունէութեանց, ըստ աշխատակիցներու հետեւողականութեան:

Ստորեւ այդ պաշտօնաթերթերու մասին ամփոփ նկարագրութիւններ:

Կուփամարտ

Երուսաղէմի մասնաճիւղի «Ամսօրեայ Շրջաբերական»ի կուփամարտի յատկացուած ամսաթերթ: Հրատարակուած է 1941ի Յունուար ամիսէն սկսեալ, 21x33 սմ. ծաւալով, չորս էջերու բովանդակութեամբ: Գլխաւոր խմբագիր Լեոն Քէշիշեան: Ունի հայերէն եւ անգլերէն բաժիններ:

«Մարգաշխարհ» պարբերաթերթ

Հրատարակութիւն Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի: Պարբերաթերթը լոյս տեսած է 1944ին, Աթէնք, խմբագրութեամբ՝ Համօ Մեհրապեանի:

«Հ.Մ.Ը.Մ.-Հայ Սկաուտ»

Հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Ֆրանսայի Առժամեայ Կեդրոնական Մարմնի 19x27 սմ. ծաւալով եւ 48 էջերէ բաղկացող ամսաթերթ՝ իբրեւ շարունակութիւն Պոլիսէն սկսեալ եւ Ֆրանսայի մէջ երկիցս վերահրատարակուած միութենական օրկան «Հայ Սկաուտ»ին: Առաջին թիւը լոյս տեսած է Ապրիլ 1946ին: Արտօնատէրն է Գարլօ Շահինեան, վարիչ խմբագիր՝ Քերոբէ ժպտունի, Տպարան Տէր Յակոբեան, 17 Rue Damesme, Փարիզ:

Ամսաթերթը, առաջնորդող եւ ներբողական յօդուածներով, գլխաւորաբար կը ձգտի յետպատերազմեան Ֆրանսայի Հ.Մ.Ը.Մ.ի վերականգնումին: Նիւթերը ոչ միայն կը բացայայտեն կապուածութիւն Հ.Մ.Ը.Մ.ի ակունքներուն, այլեւ նոր ու կարեւոր բացուածութիւն դէպի Սովետական Հայաստան, անոր վարչակարգի եւ մարզական նուաճումներուն հետ անվերապահ հաղորդակցութեամբ: Մարզական եւ սկաուտական թեքնիք յօդուածներ, Հ.Մ.Ը.Մ.ի Ֆրանսայի շրջանի Առժամեայ Կեդրոնական Մարմնի գործունէութեանց մասին տեղեկագրութիւններ եւ արտասահմանի մասնաճիւղերու գործունէութեանց արձագանգներ կ'ամբողջացնեն ամսաթերթի բովանդակութիւնը:

Ամսաթերթը կը հրատարակուի մինչեւ 1947 թուականի առաջին ամիսները:

«Մարմնամարզ»

Հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան, լոյս տեսած է 1946ի Մարտ ամիսէն սկսեալ: 21x27 սմ. ծաւալով եւ 16 էջերով: «Մարմնամարզ» ամսաթերթը կը պարունակէ առաջնորդող յօդուածի կողքին, շրջանի սկաուտական եւ մարզական գործունէութեանց մասին տեղեկագրութիւններ, Միութեան ներբողականը հիւսող եւ պատմութեան համար խմբագրուած նիւթեր:

Արտօնատէրն է Դանիէլ Դանիէլեան, խմբագրապետ՝ Համօ Մեհրապեան, տպարան «Ազատ Օր»ի, Աթէնք:

«Հայ Սկաուտ»

Գերմանիոյ Շթուլթկարթ քաղաքին մէջ հրատարակուած ամսաթերթ 1947էն սկսեալ:

«Ազդակ Մարզական»

Շաբաթական յաւելուած «Ազդակ» օրաթերթի, հրատարակուած է 1952ի Սեպտեմբերէն

մինչեւ 1958 թուականը, խմբագրութեամբ՝ Տիգրան Ոսկունիի:

«Ազդակ Մարզական»ը 1954էն սկսեալ Շրջանային Վարչութեան որոշումով կը դառնայ Հ.Մ.Ը.Մ.ի կիսապաշտօնաթերթ: Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան անդամներ՝ Յովհաննէս Շահինեան, Հրանդ Մուրատեան եւ Յակոբ Խուպեսերեան կ'աշխատակցին շաբաթաթերթին: Մարզական եւ սկստական բաժիններու կողքին թերթը կը պարունակէ շարժանկարի բաժին:

«Նաւասարդ»

Հրատարակուած 1953էն մինչեւ 1958, «Նաւասարդ» պաշտօնաթերթն է Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղին: 18.5x27 սմ. ծաւալով այս հրատարակութիւնը կը բաղկանայ հաւասար զոյգ մասերէ, առաջինը՝ հայերէն, երկրորդը՝ սպաներէն լեզուով:

Ամսաթերթը սկիզբը կը բաղկանայ 24 էջերէ: 1954ի Մայիսէն սկսեալ էջերու թիւը կը բարձրանայ 40ի:

«Նաւասարդ»ի հայերէն բովանդակութեան մաս կը կազմեն հետեւեալ գլխաւոր բաժինները, համապատասխան աշխատակիցներով.-

Խմբագրական՝ Ռէն Վարդանեան

Բժշկական՝ Տոքթ. Գ. Օ. Գալուստեան, Տոքթ. Օ. Կերկէրեան

Մարզական՝ Սարգիս Թիւֆէնքճեան

Մարզապատմական՝ Կարօ Շահինեան

Սկստական՝ Վազգէն Անդրէասեան

Տեղեկագրական՝ Վահէ Պահատրեան

Պատմական՝ Որսորդ Սկստ, Հ.Վ. Հացունի, Յ.Տ. Խաչատուրեան, Հայկ Ստեփանեան

Հ.Մ.Ը.Մ.ական կեանք՝ Սարգիս Չիլինկիրեան

Յուշեր, վարկածներ եւ խաղեր՝ Տիգրան Չիթունի

Տպարան «Արարատ», Պուէնոս Այրէս:

«Արեւելք» Մարզաշխարհ

Շաբաթական յաւելուած «Արեւելք» օրաթերթի՝ Հալէպ: Առաջին թիւը լոյս տեսած է 30 Յուլիս 1957ին, 30x45 սմ. ծաւալով եւ 8 էջերով, մինչեւ 1958 Յունուարի 30ը (6 ամիս): Բ. կիսամեայէն սկսեալ շաբաթաթերթը կը սկսի հրատարակուիլ 22x30 սմ. ծաւալով եւ 20 էջերով, եւ նոյն ձեւով կը շարունակուի մինչեւ 2 Մարտ 1963, լրիւ հինգ տարի:

«Արեւելք» Մարզաշխարհի պատասխանատու խմբագիրն է Զաւէն Սապունճեան: Թերթի գլխաւոր աշխատակիցներն են.

Հալէպէն՝ Լուտեր Մասպանաճեան (խմբագրականներով), Պարգեւ Միսիրեան, Վ. Նաւասարդ (Երուանդ Տէմիրճեան), Թոմաս Նազարեան, Սուրէն Նազարեան, Արմէն Մարգարեան, Սամուէլ Մկրտիչեան

Յունաստանէն՝ Լ. Խաչատուրեան, Կարպիս Գուլյումճեան

Պոլիսէն՝ Արման Մանուկեան եւ Կարպիս Ե. Մուրատեան

Գահիրէէն՝ Գրիգոր Նիզիպլեան

Պուէնոս Այրէսէն՝ Կարօ Շահինեան

Ֆրանսայէն՝ Վաղինակ Միսքճեան

Նիւ Եորքէն՝ Լեւոն Քէչիչեան եւ այլ երկիրներէ բազմաթիւ աշխատակիցներ մասնագիտական (Սարգիս Խուպեսերեան), տեղեկատուական եւ ներբողական յօդուածներով:

Շաբաթաթերթը կը վայելէ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ, Լիբանանի եւ Յորդանանի Շրջանային Վարչութեան հովանաւորութիւնը եւ տեղեկատուութեան լայն բաժին ունի շրջանի մասնաճիւղերու գործունէութեանց մասին:

«Արեւելք» Մարզաշխարհը ունի շարժանկարի կարեւոր բաժին, Հալէպի պատասխաններուն վրայ ներկայացուող ժապաւէններու վերլուծական գրութիւններով: Այս բաժնի աշխատակիցներէն՝ Մ. Թ. Արտաւազդ, Վաչէ, Ա. Պետիկ եւ ուրիշներ:

«Սկաուտին Ձայն»ը

Հրատակութիւն Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ի մասնաճիւղին:

«Սկաուտին Ձայն»ը

Մատնատիպ բազմագրուած երկշաբաթաթերթ՝ հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղին սկաուտական բաժնին: Լոյս տեսած է 1965 Յունուար 1էն սկսեալ: Պատասխանատուն է Վարուժան Հանէսեան: Խմբագրական կազմի անդամներ՝ Վահէ Ժամագործեան, Կարօ Թիւթիւնճեան, Մակի Բարսեղեան, Վաչէ Մարաշլեան, Ժիրայր Արապեան եւ Սիրվարդ Սապունճեան: 21x30 սմ. ծաւալով, 16 էջերէ բաղկացող հրատարակութիւն մը, որ խմբագրականի կողքին կը պարունակէ Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական կեանքի մասին տեղեկութիւններ, մարզական լուրեր, առողջապահական, գրական յօդուածներ, խաղեր եւ սկաուտներու կողմէ գրութիւններ:

«Մարգաշխարհ»

Մարզական, գեղարուեստական, գիտական պարբերաթերթ: Հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Ֆրանսայի կեդրոնական Վարչութեան: Առաջին թիւը լոյս տեսած է 1968ի Հոկտեմբերին, նուիրուած Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան յիսնամեայ Յոբելեանին:

22x27 սմ. ծաւալով եւ 32 էջերէ բաղկացած հրատարակութիւն մը, որ իր յաջորդ թիւերը չեն ունեցած: Պատասխանատու՝ Ծերոն Ասատուրեան, Փարիզ:

«Մարմնամարզ»

Հրատարակութիւն Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.«Կամք» մասնաճիւղին, «Մարմնամարզ» պարբերաթերթի առաջին թիւը լոյս տեսած է 1968ի Ապրիլին: Խմբագրական կազմի անդամներն են Պերճ Գարապաճեան, Յակոբ Մանուկեան, Գրիգոր Նիզիպլեան, Աշոտ Սերոբեան եւ Յակոբ Սեւակեան:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

- ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ Հ.Մ.Ը.Մ.Ի
- ՖՈՒԹՊՈԼ
- ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻՆ ԳԻՐՔԸ
- ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ
- ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻՆ ԵՐԳԱՐԱՆԸ
- ԳԱՅԼԻԿԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ
- ԳԱՅԼԻԿԻՆ ԳԻՐՔԸ
- ԳԱՅԼԻԿՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԷՆ
- ՍԿԱՌԻՏԻՆ ԳԻՐՔԸ
- ՅՈՒՇԱՐՁԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆ
- ՍԿԱՌԻՏԻՆ ԵՐԳԱՐԱՆԸ
- ՄԵՐ ԱՆՆԸՄԱՆ ՏՂԱՔԸ
- ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱԼՊՈՄ
- ԱՐԻԱԿԱՆ ՀՈՒՆԶՔ
- Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ
- ՍԿԱՌԻՏԻՆ ԱԼՊՈՄԸ



1940-էն 1974 ժամանակաշրջանին Շրջանային Վարչութեանց, մասնաճիւղերու կամ անդամներու անհատական նախաձեռնութեամբ լոյս տեսած են կարգ մը հրատարակութիւններ՝ մարզական եւ սկստական գիտելիքներու գիրքեր, երգարան, ալպոմ եւ յուշամատեան:

Այս կարգի հրատարակութիւններ են՝ Յուշամատեան Հ.Մ.Ը.Մ.ի, Ֆուլթոն, Հայ Սկստատին Գիրքը, Հայ Սկստատին Առաջնորդը, Հայ Սկստատին Երգարանը, Գայլիկին Բարեկամը, Գայլիկին Գիրքը, Գայլիկներու Աշխարհէն, Նորընծայ Սկստատին Գիրքը, Յոբելենական Յուշարձան, Սկստատին Երգարանը, Մեր Աննման Տղաքը, Պատկերազարդ Ալպոմ, Արիական Հունձք, Հ.Մ.Ը.Մ.ական Շարժումը Յունաստանի մէջ:

Ներկայ գլուխին տակ կու տանք կարճ ուսումնասիրութիւններ այդ հրատարակութիւններուն մասին:

Յուշամատեան Հ.Մ.Ը.Մ.ի

Յուշամատեան Հ.Մ.Ը.Մ.ի (1918 - 1958), աշխատասիրութեամբ՝ Ներսէս Աբեղայ Բախտիկեանի, Տպարան կաթողիկոսութեան հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ: 472 էջերէ բաղկացող 17x24 սմ. ծաւալով հատոր մը: Խմբագրական մարմնի անդամներ՝ Տօքթ. Յակոբ Պերպէրեան, Յովհաննէս Շահինեան, Ֆիլիպ Զաքարեան եւ Օննիկ Մելիքսեթեան: Տպագրութիւնը աւարտած է 1960ին:

Հատորը կը պարունակէ նկարներ եւ կը բաղկանայ հետեւեալ բաժիններէ

Կողք, ներածական եւ ներբողական նիւթեր (էջ 1-20):

Ա. գլուխ - «Հայ Մարմնակրթանքը Առաջին Ընդհ. Պատերազմէն Առաջ» (էջ 21-52):

Բ. գլուխ - «Հ.Մ.Ը.Մ.ի Ծնունդը» (էջ 53-162) կը պարունակէ Պոլսոյ եւ Հայաստանի մէջ Միութեան գործունէութիւնները սկիզբէն մինչեւ դադրիլը, նաեւ Սփիւռքի հետեւեալ երկիրներու Հ.Մ.Ը.Մ.ներու գործունէութիւններու պատմութիւնը իրենց հիմնադրութենէն մինչեւ

1958 թուական. Յունաստան, Պուլկարիա, Ռումանիա, Կեդրոնական Եւրոպա, Ֆրանսա, Հիւսիսային, Կեդրոնական եւ Հարաւային Ամերիկաներ, Եգիպտոս, Իրաք եւ Պարսկաստան:

Գ. գլուխ - «Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի մէջ» (էջ 163-420): Գլուխը կը պարունակէ Սուրիոյ, Լիբանանի, Պաղեստինի եւ Յորդանանի մէջ գործած Հ.Մ.Ը.Մ.ի շուրջ 30 մասնաճիւղերու գործունէութեանց համապարփակ պատմութիւնը:

Դ. գլուխ - «Կազմակերպչական Մեքենայ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ, Լիբանանի եւ Յորդանանի Միացեալ Շրջաններու» (էջ 421-472): Արագ թուով մը Շրջանային կառուցային գործելակերպին, ժողովներուն, մարմիններուն եւ շրջանային մարզական գործունէութեան համապատասխան նկարներով:

Ֆուլթոն

Հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Երուսաղէմի մասնաճիւղին՝ 17x24 սմ. ծաւալով 48 էջերէ բաղկացող հրատարակութիւն մը: Տպարան Սրբոց Յակոբեանց 1946, թարգմանութիւն եւ ամփոփում Աւետիս Սարգիսեանի: Գրքոյկը կը բաղկանայ երկու մասերէ 1) Ֆուլթոնի խաղի օրէնքներ եւ 2) Ֆուլթոն խաղալու արուեստը իւրաքանչիւր խաղացողի պարտականութեան թուումով:

Հայ Սկստատին Գիրքը

Հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան, Հալէպ 1946: 16x23 սմ. ծաւալով, 246 էջերէ բաղկացող այս գրքի հեղինակն է սկստատ խմբապետ՝ Նշան Թիւյսիւզեան: Հատորը կը բաղկանայ ամբողջութեամբ սկստական գիտելիքներէ հետեւեալ ենթաբաժանումով.

էջ 9 - 23 Գայլիկի միաստղ եւ երկաստղ աստիճաններու գիտելիքներ

էջ 24 - 111 Նորընծայ սկստատի գիտելիքներ

էջ 112 - 226 Բ. կարգի սկստատի գիտելիքներ

էջ 227 - վերջ Հ.Մ.Ը.Մ.ի համառօտ պատմութիւն:

Վերոյիշեալ բոլոր բաժինները, համապատասխան զարգացումով, կը պարունակեն զուտ սկաուտական, ազգային, առողջապահական, մարզական եւ մասնագիտական պէճերու բաժիններ:

Հայ Սկաուտին Առաջնորդը - Հատոր Ա.

Հեղինակ՝ Վազգէն Անդրէասեան - Փարիզ 1946: 13x18 սմ. ծաւալով, 315 էջերէ բաղկացող պատկերազարդ հրատարակութիւն մը:

Հատորը կը բաղկանայ չորս մասերէ.

Ա. մաս.- Սկաուտութեան յառաջընթացները եւ Հ.Մ.Ը.Մ.ի համառօտ պատմութիւն էջ 19-86

Բ. մաս.- Սկաուտական շարքերը էջ 87-108

Գ. մաս.- Սկաուտական կարգերը եւ պայմանները էջ 109-250

Դ. մաս.- Հայոց պատմութիւն, սկիզբէն մինչեւ մեր օրերը էջ 251-307:

Հատորը մեծ ընդունելութիւն գտած է Հ.Մ.Ը.Մ.ի համասփիւռքեան բոլոր մասնաճիւղերուն մօտ եւ օգտակար եղած աստիճանաւոր սկաուտներու պատրաստութեան:

Հրատարակութեան Բ. հատորը լոյս չէ տեսած:

Հայ Սկաուտին Երգարանը

Տպարան հայ Ճեմարան, Պէյրուզ-1949:

12x17 սմ. ծաւալով եւ 100 էջերէ բաղկացող հրատարակութիւն մը որ կը պարունակէ 54 սկաուտական երգեր:

Գայլիկին Բարեկամը

Սկաուտական գիտելիքներու գրքոյկ մը: Հեղինակ՝ Թումիկ Սետէֆճեան: Տպուած Գահիրէ 1946ին:

Գայլիկին Գիրքը

Հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ, Լիբանանի Շրջանային Վարչութեան Պէյրուզ - 1978, Ե. տպագրութիւն, 14x115 սմ. ծաւալ, 128 էջ կը պարունակէ.

Ա. հատուած. կակուղ թաթիկի գիտելիքներ

Բ. հատուած. միաստղ գայլիկի գիտելիքներ

Գ. հատուած. երկաստղ գայլիկի գիտելիքներ

Դ. հատուած. մասնագիտական նշանակներ եւ գայլիկական երգեր, կոչեր եւ խաղեր:

Գայլիկներու աշխարհէն

Տպարան համազգային 1949, հեղինակ՝ Գրիգոր Շահինեան: 68 էջերէ բաղկացող 12x17 սմ. ծաւալով գրքոյկ մը: Շարժումի նպատակի կողքին հեղինակը մանկավարժական մօտեցումով կը ծանօթացնէ գայլիկութեան կիրարկումի զանազան երեսները «Ծնողք-Աքելլա գործակցութիւնով առողջ վոհմակի մը պահանջն ու տալիք օգուտները զգացնել» ու նպատակով, ինչպէս հեղինակը կը գրէ ներածական բաժինով:

Սկաուտին Գիրքը

120 էջերէ բաղկացող՝ Նորընծայի գիտելիքներ: 11x15 սմ. ծաւալով գրքոյկ մը, հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան տպարան Ատլաս, Պէյրուզ-1978 Դ. տպագրութիւն:

Յոբելեանական Յուշարձան

Արարատ Մարզական Միութեան հիմնարկութեան երեսնամեակին առթիւ հրատարակուած 14x19 սմ. ծաւալով ալպոմ մը որ կը պարունակէ «Արարատ»ի մարզիկներու եւ մարզական խումբերու զանազան տարիներու նկարները: Տպուած 1944ին, Գահիրէ:

Սկաուտին Երգարանը

Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Սկաուտական Խորհուրդի նախաձեռնութեամբ 11x15 սմ. ծաւալով, 158 էջերէ բաղկացող հրատարակութիւն մը: Համազգայինի Վահէ Սեթեան տպարան, Պէյրութ-1972: Կը պարունակէ սկաուտական, ազգային եւ եկեղեցական երգեր որոնցմէ ոմանք ձայնագրուած:

Մեր Աննաման Տղաքը

Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի պասքեթ-պոլի տղոց խումբին Գահիրէի Արարատին եւ Աղեքսանդրիոյ Կամքին տրուած այցելութիւններուն առթիւ՝ Յոսաբեր օրաթերթի 12 Յունուար 1950ի թիւին խմբագրական յօդուածը: Առանձնաբար տպուած է 14x20 սմ. ծաւալով, 17 էջնոց գրքոյկով մը: Մատենաշար «Յոսաբեր» թիւ 45:

Պատկերազարդ Ալպոմ

Հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ. Արարատի: Տպարան Յոսաբեր, Գահիրէ, 1961, Եգիպտահայ 14րդ աթլետիք ախոյեանական մրցումներու առթիւ նուիրուած Հ.Մ.Ը.Մ.ի քառասնամեակին: 15x22 սմ. ծաւալով, 102 էջերէ բաղկացող հրատարակութիւն մը բացուած ներբողական եւ բանաստեղծական վեց էջերով: Կը պարունակէ մրցումներու մասնակցող Սուրիոյ Հ.Մ.Ը.Մ.ի, Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի, Աղեքսանդրիոյ «Կամք»ի, Գահիրէի «Նիր Իսթ»ի եւ Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ի տղոց եւ աղջկանց աթլետներու ցանկերը, եգիպտահայ մրցանիչներու ցանկ, իրաւարարներու անուանացանկ, ախոյեաններու մասին տեղեկութիւններ եւ թեքնիք արդիւնքներու ցանկերը:

Արիական Հունձք

440 էջերէ բաղկացած, 15x23 սմ. ծաւալով պատկերազարդ հատոր մը, ուր դրուագներու եւ յօդուածներու միացումով Կարպիս Տէր Մես-

րոպեան յօդուածագիր եւ օժանդակ խմբագիրներու աջակցութեամբ կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի եւ Արժանթինի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու գործունէութեանց սկաուտական բաժիններու պատմութիւնը, իրենց սկզբնական ժամանակներէն մինչեւ 1960 թուականը:

Հրատարակութիւնը կը հովանաւորէ Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի վարչութիւնը: Առաջնորդող գրութիւններ ունին մասնաճիւղի ղեկավար անդամներ՝ Յովհաննէս Ստեփանեան, Արտաշէս եւ Պարգեւ Պարսամեաններ:

Առաջին մասը (էջ 19-94) կը վերաբերի Յունաստանի շրջանի գործունէութեան, Բ. մասը (95էն 296) Արժանթինի շրջան, Գ. մասը (297էն 350) նամականի, Դ. մասը (351էն 392) սկաուտական յուշեր եւ գրոյց եւ Ե. մասը (393էն 432) սկաուտական ներկայացումներ եւ երգեր:




Տպարան «Արարատ» Ստեփան Տէօքմէճեան, Պուէնոս Այրէս, 1960:

Հ.Մ.Ը.Մ.ական Շարժումը Յունաստանի մէջ

Հեղինակ Ներսէս Մ. Մանուկեան, 24 էջերէ բաղկացող 17x24 սմ. ծաւալով գրքոյկ մը, ուր ամփոփ կերպով տրուած է Յունաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի կազմութեան 1922-1928 տարիներու փուլերը: Տպարան Համազգային, Պէյրութ, 1968:

«Սկաուտին Ալպոմը»

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 30ամեակին եւ Յունաստանի շրջանի կազմութեան 25ամեակին նուիրուած պատկերազարդ հրատարակութիւն: Նախաձեռնութեամբ՝ Ֆիքսի մասնաճիւղի վարիչ խմբապետ Լեւոն Գայեանի եւ խմբագրութեամբ Համօ Մեհրապեանի, գիրքը կը պարունակէ Պոլսոյ «Մարմնամարզ»ի խմբագրականներէն եւ պաշտօնաթերթ «Հայ Սկաուտ»ի զանազան թիւերէն յօդուածներ, սկաուտական շարժումի մասին տեղեկութիւններ, սկաուտական գիտելիքներ եւ Յունաստանի մասնաճիւղերու գործունէութեանց մասին վկայութիւններ եւ տեղեկագրեր: Տպարան՝ Ազատ Օր, Աթէնք, 1948:



ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ԳԱՂԱՓԱՐԱԿԻՑ ՄԱՄՈՒԼ

- ՀԱՅՐԵՆԻՔ
- ԱՍՊԱՐԷԶ
- ՆՈՐ ՕՐ
- ՅԱՌԱԶ
- ՅՈՒՍԱԲԵՐ
- ԱԶԴԱԿ
- ԱԼԻՔ
- ԱՐՄԵՆԻԱ
- ԱՌԱԻՕՏ
- ԱԶԴԱՐԱՐ
- ԱԶԴԱԿ ՇԱԲԱԹՕՐԵԱԿ
- ԱՐԵԻԵԼՔ
- ՄԱՐԶԻԿ

ԳԱՂԱՓԱՐԱԿԻՑ ՄԱՄՈՒԼ

Հ.Մ.Ը.Մ.ի ծնունդէն սկսեալ հայ գաղափարակից մամուլի նպաստը շարունակուեցաւ յաջորդող տասնամեակներու ընթացքին: Մամուլը գնահատելով Միութեան ազգային եւ հայապահպանման նպատակներուն նուիրուած ծառայութիւնները, իր էջերը լայնօրէն տրամադրեց Հ.Մ.Ը.Մ.ի տեղեկագրութեան, փրոփականտին եւ գաղափարաբանութեան տարածման:

1940էն 1974 ժամանակաշրջանը յաւելեալ առիթներ ստեղծեց Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան արձանագրուելուն:

Այսպէս, «Ազդարար» իր 15 Յունուար 1944 համարով նկարագրելով Միութեան հիմնադրութեան 25ամեակի տօնակատարութեան հանդէսը, կը մէջբերէ օրուան բանախօս Նիկոլ Աղբալեանի խօսքը, որմէ կ'արտատպենք.

«Մարմնակրթանքի գաղափարը եւ պահանջը պէտք է արծարծել ու արթնցնել խօսքով ու գործքով: Պէտք է լայնցնել Հ.Մ.Ը.Մ.ի հիմերը, շատերը հրաւիրելով մասնակցելու: Այգային մեծարժէք հաստատութիւն է, կոթնած երիտասարդութեան կորովին: Ան պէտք է ձգտի ապովին վերափոխել հայ ժողովուրդը՝ նկուն վիճակէն հանելով եւ առոյգ բարձունքին տանելով: Ան ունի երկու գործ, իսկ մենք՝ մէկ: Ան պէտք է ամէն պատանի դարձնէ արի եւ ամէն երիտասարդ՝ մարտիկ, իսկ մեր պարտքն է նպաստել անոր նիւթապէս եւ քաջալեր հանդիսանալ բարոյապէս: Ան

պէտք է մարտի երկու սեռը անխտիր եւ երկսեռ հայութիւնը պէտք է դառնայ յենարան անոր»:

Բ. հատորի ընդգրկած ժամանակաշրջանին հայ գաղափարակից մամուլի հետեւեալ ներկայացուցիչները ծառայեցին Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներու ծանօթացման եւ տարածման:

Հրատարակութիւն ժամանակագրական շարքով.

Թերթի անուն	Թուական	Վայր
Հայրենիք	1899	Պոսթրն
Ասպարէզ	1908	Ֆրեզնօ
Ազատ Օր	1924	Աթէնք
Յառաջ	1925	Փարիզ
Յոսսաբեր	1925	Գահիրէ
Ազգակ	1927	Պէյրուսթ
Ալիք	1931	Թեհրան
Արմենիա	1931	Պուէնոս-Այրէս
Առաւօտ	1938	Պէյրուսթ
Ազդարար	1942	Պէյրուսթ
Ազգակ Շաբաթօրեակ	1944	Պէյրուսթ
Արեւելք	1946	Հալէպ
Մարգիկ	1951	Գահիրէ

Հ.Մ.Ը.Մ.ի մասին արձագանգած են նաեւ այլ հրատարակութիւններ, ինչպէս՝ Ամենուն Տարեգիրքը, Պէյրուսթ, խմբագիր Կարօ Գէորգեան: Արեւելք Տարեգիրք, Հալէպ, 1948, Մինաս Թէօլէօլեան:

ՅԱԻԵԼՈՒԱԾԻ ՆԿԱՐՆԵՐ



Արաբ Բունարի մասնաճիւղի 1944 տարուայ ֆութպոլի խումբը իր պատասխանատուներով: Ուղքի՝ Յակոբ Թաթարեան, Յարութիւն Պօղոսեան, Կարպիս Սիմոնեան, Սեդրակ Քէօշկէրեան, Հայրապետ Հայրապետեան, Յովհաննէս Պոլաճեան, Սարգիս Պօղոսեան, Համապասպ Տէր Խաչատուրեան: Ծունկի՝ Պաղտասար Յակոբեան, Յակոբ Մինասեան, Աբրահամ Յակոբեան, Պետրոս Գասպարեան, Կարապետ Մղձի Արթինեան:



Պուրճ Համուտի մասնաճիւղի երկրորդական խումբերու ախոյեան «Մայր Հայաստան» խումբը 1948ին: Չախին՝ Ժոյէֆ Նալպանտեան՝ իրաւարար, աջին Վարդիվառ Յովհաննէսեան՝ մարպիչ պատասխանատու:



Պէյրուքի Հ.Մ.Ը.Մ.ի քառասունը չորս տարիներու վաստակը (1924-1968)



Պէյրուքի Մասնաճիւղի արջիթները 1944-ի Միջ-Մասնաճիւղային ողմպիականին



Պուրճ Հանուտի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական նուագախումբը



Պուրճ Հանուտի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի 33 տարիներու վաստակը



ԿԸ ՔԱԼԵՆ ԴԵՊԻ ՆՈՐ ՅԱՂԹԱՆԱԿ

Լիբանանի ֆուտպոլի 1955ի ախոյեան Պելյուրթի Հ.Մ.Ը.Մ.ի խոււմբը ծաղրանկարիչ Տիրանի գրիչով

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԹԵԼԱԴՐԱՆՔՆԵՐ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Ներկայ հատորի խմբագրութեան համար օգտագործած ենք գլխաւորաբար Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական արխիւները, կեդրոնի, չրջաններու կամ մասնաճիւղերու փոխադարձ նամակագրութիւնները, ինչպէս նաեւ կեդրոնական, չրջանային կամ մասնաճիւղային վարչութիւններու մաս կազմած անդամներու անհատական փոխադարձ թղթակցութիւնները: Օգտագործած ենք նաեւ ժողովի ատենագրութիւններ, անդամական ցանկեր, տեղեկագրութիւններ կամ հաշուեկշիռներ, որոնք վաւերական հանգամանք կը ներկայացնեն: Վերոյիշեալ պարագաներուն մեր պատմական հաստատումներու աղբիւրները յատուկ յիշատակութեան չենք ենթարկած:

Ասոնց կողքին, մեր վաւերական հաստատումներուն եւ տեղեկութիւններուն համար, օգտագործած ենք պաշտօնաթերթերու, պարբերաթերթերու, օրաթերթերու, յուշամատեաններու, յուշագրութիւններու աղբիւրներ, որոնց ներկայ հատորին առընչուող բաժինը տուած ենք առանձին: Այս պարագային, ընթերցողի պրպտումներուն օժանդակելու համար, [] կցագիծի մէջ յիշած ենք աղբիւրներու մասին մեր մատենագիտական ցանկի այբենական թուագրումները հետեւեալ բաժանումներով:

Այբենական թուագրումով կը ճշգուռի հրատարակութեան անունը:

[/] Նշանին հետեւող թուանշանը կը ճշգրէ թերթի հրատարակութեան քանիերրորդ թիւը ըլլալը:

[.] միջակէտը կը նշանակէ հրատարակութեան էջաթիւը:

Կու տանք օրինակներ.

1.- Էջերու շարունակական թուագրումով հրատարակութիւններ.

[Խ.158] կը նշանակէ ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ 1918-1958 էջ 158: (Տէս ներկայ հատորի էջ 264ը):

2.- Մամուլի ընթացիկ թուագրումով հրատարակութիւններ

[ԾԲ/ 33.5] կը նշանակէ Արեւելք Մարգաշխարհ պաշտօնաթերթի Ա. Տարի թիւ 33ի էջ 5ը: (Տէս ներկայ հատորի էջ 355ը):

3.- Հրատարակութեան թուականի յիշատակումով թերթեր:

[ԽԸ/15.6.1965] կը նշանակէ ՀԱՅՐԵՆԻՔ Օրաթերթ 1965 տարուայ Յունիս 15ի թիւը: (Տէս ներկայ հատորի էջ 274ը):

4.- Անտիպ յուշագրութիւններ, վկայութիւններ կամ նօթեր.

[ԶԱ] կը նշանակէ Իրաքի Հ.Մ.Ը.Մ.ի 1963 տարուայ օրացոյցը: (Տէս ներկայ հատորի էջ 260ը):

[ՀԹ.] Կը նշանակէ Յովհաննէս Շահինեանի ԻՄ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐԸ: (Տէ՛ս ներկայ հատորի էջ 90):

Յատուկ անուններու ընդհանուր ցանկ չենք պատրաստած, նկատի ունենալով որ այդ մէկը առանձին՝ վերջին հատորի նիւթը պիտի ըլլայ:

Ըստ կարելոյն, յատուկ անունները յիշած ենք ամբողջութեամբ խոսափելով կրճատումներէ:

Յատուկ անուններու եւ հայատառ օտար բառերու ուղղագրութիւնը, աշխատած ենք

պատշաճեցնել ներկայ արեւմտահայ ուղղագրութեան ընթացիկ ձեւին: Բացառութիւններու պարագային պահած ենք նիւթերու աղբիւրներու օգտագործած ձեւերը:

Խոսափելու համար կրկնութիւններէ, ներկայ հատորի բոլոր նկարներուն անձերու անունները յիշուած են ձախէն-աջ շարքով: Հակառակ պարագաներուն յիշատակութեան շարքը ճշդուած է:

Բ.Թ.

ՅԱԻԵԼՈՒԱԾԻ ՆԿԱՐՆԵՐ

Յաւելուածի բաժնին մէջ Վետեղած ենք նկարներ, որոնք նախատեսուած էին հատորի իրենց յատուկ գլուխներուն համար: Սակայն միայն վերջին պահուն մեր տրամադրութեան տակ դրուելուն՝ կը հրատարակենք առանձնաբար:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

[Ը] Հ.Մ.Ը.Մ., ՀԱՅ ՍԿԱՈՒՏ, Փարիզ, 1946. Տնօրէն Բերովբէ ժպտուներ:

[ԺԵ] ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ, Փարիզ, 1946: Հեղինակ՝ Վազգէն Անդրէասեան, Տպ. Արաքս:

[ԺԸ] ԱՐԻԱԿԱՆ ՀՈՒՆՁՔ, Պոլէնոս Այրէս, 1960: Հեղինակ՝ Կարպիս Տէր Մեսրոպեան: Հրատարակութիւն՝ Պոլէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի:

[ԻԹ] ՄԱՐՄՆԱՄԱՐՁ ԱԹէնք 1946:

[Լ] ԱԶԴԱԿ ՄԱՐԶԱԿԱՆ Պէյրոս 1952-1958 Շաբաթօրեայ Մարզական Հրատարակութիւն Ազգակ Օրաթերթի: Խմբագիր՝ Տիգրան Ոսկունի:

[ԼԱ] ՆԱԻԱՍԱՐԴ Պաշտօնաթերթ Հ.Մ.Ը.Մ.ի Պոլէնոս Այրէսի մասնաճիւղի Խմբագիր՝ Ռէն Վարդանեան Արտօնատէր՝ Րաֆֆի Միրաքեան Յոլանդիս 1953-1957 Հիմնադիր Խմբ.՝ Շ.Քհն. Մեհրապեան:

[ԼԵ] ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱԼՊՈՍ Եգիպտահայ 14րդ Ախոյեանական Մրցումներու նուիրուած Հ.Մ.Ը.Մ.ի Քառասնամեակին: Տպ. Յոլսաբեր Գահիրէ 1961:

[Խ] ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ 1918-1958, Պէյրոս 1958: Հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ, Լիբանանի եւ Յորդանանի Շրջանային Վարչութեան: Աշխատասիրութիւն՝ Ներսէս Աբեղայ Բախտիկեանի:

[ԽԱ] ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ.Մ.Ը.Մ.ի ՅՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՆԻ, 1948-1949 Տարուան Գործունէութեան, ՓԱՐԻԶ 1949:

[ԽԵ] ԱԶԱՏ ՕՐ, օրաթերթ, Աթէնք:

[ԽԶ] ԱԶԴԱԿ, օրաթերթ, Պէյրոս:

[ԽԷ] ԱՐՄէնիա, օրաթերթ, Պոլէնոս Այրէս:

[ԽԸ] ՀԱՅՐԵՆԻՔ, օրաթերթ, Պոսթըն:

[ԽԹ] ԱՍՊԱՐէՁ, օրաթերթ, Լոս Անճէլըս:

[ԾԱ] ՅԱՌԱՋ, օրաթերթ, Փարիզ:

[ԾԲ] ԱՐԵԻԵԼՔ ՄԱՐԶԱՇ ԽԱՐՀ, Ա. Տարի, Հալէպ 1957, Շաբաթաթերթ:

[ԾԳ] ԱՐԵԻԵԼՔ ՄԱՐԶԱՇ ԽԱՐՀ, Շաբաթաթերթ, Բ. Տարի, 1959:

[ԾԴ] ԱՐԵԻԵԼՔ ՄԱՐԶԱՇ ԽԱՐՀ, Շաբաթաթերթ, Գ. Տարի, 1960:

[ԾԵ] ԱՐԵԻԵԼՔ ՄԱՐԶԱՇ ԽԱՐՀ, Շաբաթաթերթ, Դ. Տարի, 1961:

[ԾԶ] ԱՐԵԻԵԼՔ ՄԱՐԶԱՇ ԽԱՐՀ, Շաբաթաթերթ, Ե. Տարի, 1960:

[ԾԹ] ՄԱՐԶԱՇ ԽԱՐՀ Մարզական, Գեղարուեստական, Գիտական Պարբերաթերթ Փարիզ 1968, Ա. Տարի Թիւ 1:

[Կ] Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական արխիւներ:

[ԿԱ] Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան ատենագրութիւններ:

[4Բ] Հ.Մ.Ը.Մ.ի Կեղերոնական վարչութեան Գործունէութեանց Տեղեկագրեր:

[4Գ] Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր ժողովներու ատենագրութիւններ:

[4Թ] Հ.Մ.Ը.Մ.ի ԾՐԱԳԻՐ ԿԱՆՈՆԱԳԻՐՆԵՐ:

[Հ] Պատկան Երկիրներու Ֆէտէրասիոններու Արխիւներ:

[ՀԱ] ԸՆԾԱՅՈՒՄՆ Հ.Մ.Ը.Մ.ի Ա. Բաժին, անտիպ, Հեղինակ՝ Շաւարշ Քհն. Մեհրապեան:

[ՀԲ] Ընծայումն Հ.Մ.Ը.Մ.ի Բ. Բաժին, անտիպ, Հեղինակ՝ Շաւարշ Քհն. Մեհրապեան:

[ՀԴ] ՆՕԹԵՐ՝ Սիմոն Թերճանեան:

[ՀԵ] ՎԱԶԳԻՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆԻ Արխիւներ:

[ՀԶ] ՄԵՐ ՔՍԱՆԱՄԵԱԿԸ- Հ.Մ.Ը.Մ.-Կամք - Մոնթրէալ:

[ՀԷ] ՄԱՐԶԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄ Հ.Մ.Ը.Մ.-Կամք - Մոնթրէալ:

[ՀԸ] ՕՐԱՑՈՅՑ 1962 - Կամք - Աղեքսանդրիա:

[ՀԹ] ԻՄ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐԸ, Յովհաննէս Շահինեան - Անտիպ:

[Զ] ՅԻՄՆԱՄԵԱԿԻ ԱԼՊՈՄ - U.S.G.A. վիէն:

[ԶԱ] 1963ի ՕՐԱՑՈՅՑ - Հ.Մ.Ը.Մ. Իրաք:

[ԶԲ] ԱՐԵՒԵԼՔ, օրաթերթ - Հալէպ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

		էջ
	Յառաջաբան	5
Ա. ՄԱՍ Հայկական Զարթոնքէն Մինչեւ Հ.Մ.Ը.Մ.ի Հիմնադրութիւն		
	Գլուխ Առաջին	Ներածական
		9
	Գլուխ Երկրորդ	Դադրած Մասնաճիւղեր
		11
	Գլուխ Երրորդ	Փոխակերպուած Մասնաճիւղեր
		17
Բ. ՄԱՍ Գործօն Մասնաճիւղեր		
	Գլուխ Առաջին	Ամերիկայի Միացեալ Նահանգներ
		27
	Գլուխ Երկրորդ	Ֆրանսա
		39
	Գլուխ Երրորդ	Յունաստան
		49
	Գլուխ Զորրորդ	Լիբանան
		71
	Գլուխ Հինգերորդ	Սուրիա
		167
	Գլուխ Վեցերորդ	Հարաւային Ամերիկա
		225
	Գլուխ Եօթերորդ	Պաղեստին
		233
	Գլուխ Ութերորդ	Ամման
		247
	Գլուխ Իններորդ	Իրաք
		255
	Գլուխ Տասերորդ	Եգիպտոս
		261
	Գլուխ Տասնըմէկերորդ	Գանատա
		271
	Գլուխ Տասնըերկրորդ	Աւստրալիա
		293
	Գլուխ Տասնըերեքերորդ	Մեքսիկա
		303
Գ. ՄԱՍ Երջանային Կառույցներ եւ Երջանային Գործունէութիւններ		
	Գլուխ Առաջին	Ֆրանսայի Երջանային Գործունէութիւն
		305
	Գլուխ Եկրորդ	Յունաստան
		311

Գլուխ Երրորդ	Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Գանատայի Շրջանային Գործունէութիւն	325
Գլուխ Չորրորդ	Սուրիոյ Լիբանանի Պաղեստինի եւ Յորդանանի Շրջանային Կազմակերպական Գործունէութիւն	329
Գլուխ Հինգերորդ	Սուրիոյ Լիբանանի Պաղեստին եւ Յորդանանի Շրջանային Մարզական Գործունէութիւն	347
Գլուխ Վեցերորդ	Սուրիոյ Լիբանանի Պաղեստինի եւ Յորդանանի Շրջանային Սկաուտական Գործունէութիւն եւ Հրապարակային Հանդիսութիւններ	365

Դ. ՄԱՍ Հ.Մ.Ը.Մ.ի Համագաղութային Կառոյցի Կազմաւորում

Գլուխ Առաջին	Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի 20րդ Պատգամաւորական Ժողովի Երկրորդ նստաշրջան	373
Գլուխ Երկրորդ	Հ.Մ.Ը.Մ.ի Համագաղութային Կազմակերպութեան Վերածելու Կոչուած Եռանդամ Մարմնի Գործունէութիւն	375
Գլուխ Երրորդ	Նախագիծ Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիր	379
Գլուխ Չորրորդ	Հրաւեր Ա. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի	381

Ե. ՄԱՍ Հ.Մ.Ը.Մ.ական Մամուլ

Գլուխ Առաջին	Կանոնագրութիւն	383
Գլուխ Երկրորդ	Պաշտօնաթերթեր	389
Գլուխ Երրորդ	Հրատարակութիւններ	395
Գլուխ Չորրորդ	Գաղափարակից Մամուլ	401

Յանելուած	405
Գործնական Թելադրանքներ Ընթերցողին	409
Մատենագիտութիւն	411